ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՀԱՅԵՐԻ ԵՎ ՆԱԽՐԻՆՔԱՅԻՆ ՄՅՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 1961

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

ТУРЕЦКИЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЕНИИ, АРМЯНАХ И ДРУГИХ НАРОДАХ ЗАКАВКАЗЬЯ

ИЗВЛЕЧЕНИЯ ИЗ ТУРЕЦКИХ ОРИГИНАЛЬНЫХ ТЕКСТОВ В ПЕРЕВОДЕ НА АРМЯНСКИЙ ЯЗЫК С ПРЕДИСЛОВИЕМ, КОММЕНТАРИЯМИ, ТЕРМИНОЛОГИЧЕСКИМ СЛОВАРЕМ И ПРИЛОЖЕНИЕМ

ТОМ I

Составил
А. Х. САФРАСТЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1961

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

ОБМЕН

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՀԱՅԵՐԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՅՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԻՑ,
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՎ, ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ,
ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՈՎ
ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ

Հ Ա Տ Ո Ր Ա

Կազմեց
Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1961

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Այս ժողովածուի մեջ զետեղված են Հայաստանի, հայերի և Կովկասի այլ ժողովուրդների մասին թուրք պատմագրերի և արքունական տարեգրերի գրքերում եղած նյութերը, որոնք ցույց են տալիս Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Կովկասում և մասնավորապես պատմական Հայաստանում: Հատորում հրատարակված նյութերը ընդգրկում են XVI դարի երկրորդ կեսից (թուրքական պատմագրության սկզբից) մինչև XVIII դարի վերջերն ընկած ժամանակաշրջանը: Ժամանակագրական կարգով տրված են նյութեր հետևյալ պատմագրերից և տարեգրերից, Փեչևի, Նայիմա, Ռաշիդ, Չելեբի-Զադե, Սուբհի Սամի, Շարիր, Իզզի, Վասըֆ և Ջևդեթ-փաշաների:

Ժողովածուին կցված է նաև հավելված և գրքում գործածված թուրքական բառերի և տերմինների բառարան:

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ

«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» ժողովածուով Հայկական ՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտորը ձեռնարկում է նման աշխատանքների հրատարակության, նպատակ ունենալով ապագայում հրատարակել Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմական աղբյուրները Հայաստանի, հայերի և Սովետական Միության մյուս ժողովուրդների մասին և հայկական աղբյուրները Մերձավոր և Միջին Արևելքի երկրների մասին:

Մինչև այժմ հայ պատմագրության մեջ այս ուղղությամբ քիչ բան է արված:

Ա. Սաֆրաստյանի այս ժողովածուն երկար տարիների աշխատանքի արդյունք է, նա առաջին անգամ հայ ընթերցողին ծանոթացնելու է թուրքական աղբյուրների հետ: Օգտագործված հարուստ փաստական նյութը ցույց է տալիս Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Կովկասում և պատմական Հայաստանում, անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների համատեղ, ազատագրական պայքարը թուրք զավթիչների դեմ XVI—XVIII դարերում:

Այս բոլորը թուրք պատմագիրները շարադրել են բավական մանրամասնորեն, սակայն լինելով պետական պաշտոնյաներ, պատմական դեպքերի մեկնաբանումը տվել են հիմնվելով Թուրքիայի տիրող շրջանների շահերից:

Ժողովածուում զետեղված նյութերի հրատարակումը անհրաժեշտ ու այժմեական է այն պատճառով, որ թուրք ժամանակակից պատմագրությունը կեղծում է պատմական փաստերը, ճգտում է ցույց տալ, որ իբր թե անցյալում սուլթանական Թուրքիայի դերիշխանության տակ ապրող ժողովուրդներն իրենց պետականության և կուլտուրայի զարգացման ներկա աստիճանին են հասել

Օսմանյան կառավարության հովանավորության և բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ։

Թուրք պատմագիրներից քաղվածաբար բերված հատվածները կարևոր են նաև այն իմաստով, որ նրանք ընթերցողին ծանոթացնում են թուրք միջնադարյան պատմագրության հետ, ցույց են տալիս մեր հարևան ժողովրդի բարքերը, ներքին և արտաքին քաղաքականությունը։

Աշխատանքը թուրքական աղբյուրների վրա շարունակվում է։ Մոտակա տարիներում նախատեսվում է լույս ընծայել ժողովածուի 2-րդ և 3-րդ հատորները։

Արևելագիտության սեկտորը շնորհակալությամբ կընդունի այս հատորի վերաբերյալ ընթերցողների դիտողություններն ու առաջարկությունները։

Ա. Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» աշխատության մեջ մեր հիմնական նպատակն է եղել տալ՝ Հայաստանի և Անդրկովկասի ժողովուրդների մասին եղած բոլոր նյութերը, որոնք տպագրվել են թուրքական պատմագրական աղբյուրներում (պատմագիր, տարեգիր, ուղեգիր և այլն)։ Կարելի է ասել, որ հայ պատմագիրները մինչև օրս չեն օգտագործել թուրքական աղբյուրները։

Թուրք պատմագիրները (արքունական թե ոչ-արքունական) իրենց երկերում, այս կամ այն չափով, խոսել են նաև Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, արձանագրել, բացատրել և վերլուծել հաճախ այնպիսի կարևոր պատմական դեպքեր, որոնք կապված են եղել հայ և այլ ժողովուրդների կյանքի և ճակատագրի հետ։

Կասկածից դուրս է, որ հայ ժողովրդի պատմության լրիվ և բազմակողմանի ուսումնասիրության համար բյուզանդական, իրանական, արաբական, եվրոպական և այլ աղբյուրների հետ միաժամանակ, անհրաժեշտ է ծանոթանալ նաև թուրքական աղբյուրներին։*

** Այդ հասունացած պահանջի արդյունքը կարելի է համարել այն, որ վերջերս մի շարք պատմագրական աշխատություններում, թեև սահմանափակ ձևով, սկսել են օգտագործել նաև թուրքական աղբյուրները, ինչպես՝*

ա) «Հայ ժողովրդի պատմություն», դասագիրք, առաջին հատոր,

բ) Մ. Ներսիսյան, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ», Երևան, 1955։

գ) Саркисян Е. К., Аграрная политика османского правительства в западной Армении, Айпетрат, 1957. *ինչպես նաև նույն հեղինակի թուրքիայի մասին այլ աշխատությունները։*

դ) Երիտասարդ ասպիրանտների մի շարք մոնոգրաֆիական աշխատություններ, հոդվածներ և այլն։

«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» ընդհանուր խորագիրը կրող ժողովածուի մեջ ծրագրել ենք աստիճանաբար և հնարավորության սահմաններում ներկայացնել հայ ժողովրդի պատմության համար կարևորություն ունեցող այն նյութերը, որոնք ցրված են թուրքական աղբյուրներում։ Ներկա առաջին հատորում զետեղված նյութերը վերաբերում են հիմնականում XVI, XVII և XVIII դարերին։ Նախատեսված է երկրորդ հատորում տալ նյութեր՝ այդ նույն դարերի այն պատմագիրներից, որոնք չեն մտել I հատորի մեջ։ Երրորդ հատորը կընդգրկի XVIII և XIX դարերի թուրք պատմագիրներին։

Ժողովածուում պահպանվել է թուրք պատմագիրների տարեգրության ձևը, նյութերի դասավորումը, նրանց վերնագրերը և այլն։ Մեր կողմից թարգմանված նյութերի որոշ մասը հարկադրված ենք եղել կրճատել՝ ավելորդ երկարաբանություններից և մանրամասնություններից խուսափելու համար։ Այսպիսի դեպքերում պատմական հարցերի միջև եղած կապը պահպանելու նպատակով, ավելացրել ենք համառոտ ծանոթություններ։

Թարգմանության մեջ նպատակահարմար ենք համարել պահպանել հատուկ անունների (տեղանուն, անձնանուն), պաշտոնների և տիտղոսների թուրքական ձևն ու արտասանությունը, ինչպես՝ էյալեթ, սանջակ, վեզիր, սադրազամ, սերասքեր, բեյլերբեյի, միրմիրան, միրլիվա և այլն։ Մասնավորապես նկատի ունենալով կառավարական, հոգևորական ու զինվորական կոչումների և տիտղոսների թարգմանության անիմաստ և անհնար լինելը, այդպիսիները տվել ենք նույնությամբ, ավելացնելով առաջին ծանոթություններ (տողատակ) և ծանոթագրություններ (գլխի վերջում)։

Հայ պատմագրության հայտնի ներկայացուցիչներից Լեոն, իր «Հայոց պատմության» 3-րդ հատորում, «Թուրքիա» գլխում (էջ 101) խոսելով թուրքական պատմագրության մասին, ասում է. «Ամենի նշանավոր հաջողություն ունեցավ թուրքական մեծքը պատմության մեջ։ Օսմանյան դրականության այդ ճյուղը շատ հարուստ է և ունի շատ արժեքավոր գործեր...»։ Այնուամենայնիվ Լեոն չի տալիս գոնե համառոտ տեղեկություններ այդ «հարուստ ճյուղի» մասին, բավականանալով հիշել միայն Գյաթիբ-Զելեբիին։ Լեոն հնարավորություն չի ունեցել օգտվելու թուրքական աղբյուրներից, դրա համար Թուրքիային վերաբերող նրա տեսությունը լի է ապատեղված և սխալ անուններով ու տերմիններով։ Մինչև անգամ Գյաթիբ-Զելեբիի, երկրորդ անունը՝ փոխանակ Հաջի-Քալֆայի (կամ Կալֆայի) վերածված է Հաջի-Կուլֆի։

Բացի այդ, գրքի վերջում իբրև հավելված տրված են հետևյալ լրացուցիչ տեղեկությունները.

1. Օսմանյան սուլթանների ժամանակագրական ցուցակը և նրանց իշխանության տարիները (հիջրի և եվրոպական), նկատի ունենալով, որ Թուրքիայի պատմությունը կազմված է ըստ սուլթանների իշխանության շրջանների։

2. Իսլամական հիջրի թվականները մեր թվարկությանը վերածելու աղյուսակ, որը կօգնի տարեթվերը լրիվ ու ճշտորեն եվրոպականի վերածելուն. թարգմանության մեջ հիշված հիջրի տարեթվերի հետ մենք հաճախ հիշել ենք նաև եվրոպական տարեթվերը*։

3. Ջետեղված է գրքում գործածված թուրքական բառերի ու տերմինների փոքրիկ բառարան՝ լատինական տառերով, հայերեն թարգմանությամբ։

Տեքստի տողատակերում հաճախ տրված են որոշ բառերի թարգմանություններն ու նրանց իմաստները։

4. Անձնանունների և տեղանունների ցուցակ համառոտ բացատրություններով։

Յուրաքանչյուր հեղինակից հետո տվել ենք ծանոթագրություններ՝ որոշ պատմական վայրերի, անհատների, դեպքերի և այլ հարցերի մասին։ Թարգմանված նյութերում որոշ բառեր, որոնք առնված են անկյունավոր փակագծերում, ավելացված են մեր կողմից՝ նախադասությունը կամ բառը ավելի ճիշտ հասկանալի դարձնելու համար։

---

* Այդ աղյուսակը մենք կազմել ենք Հ. Օրբելու „Синхронические таблицы для перевода исторических дат по хиджри на европейское летоисчисление“ գրքի հիման վրա, հրատարակություն Լենինգրադի Պետական Էրմիտաժի, Լենինգրադ, 1940։

Հայտնի է, որ Թուրքիայում և առհասարակ իսլամական երկրներում, գործ էր ածվում հիջրեթի (հիջրի) թվականությունը։ Թուրքիայում Քեմալական ռեֆորմների շարքում, 1926 թ. ընդունվեց նաև «Միջազգային օրացույցի և ժամերի օրենքը», որով գործածության մեջ մտան եվրոպական թվականները, ժամերն ու թվանշանները։ Ամբողջական պատմությունը նոր՝ եվրոպական տարեթվով կազմելը մեծ դժվարությունների հետ է կապված, ուստի ժամանակակից թուրք պատմագիրները շարունակում են միաժամանակ գործածել և՛ հիջրի և՛ եվրոպական տարեթվերը։

* * *

«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» աշխատության ներկա՝ առաջին հատորում տալիս ենք նյութեր հետևյալ թուրք պատմագիրների երկերից։*

1. Փեչեվի, *պատմագիր XVI—XVII դդ., «Թարիխ Փեչեվի», 940—1034 ԹԹ. հիջրի, 2 հատոր։*

2. Նայիմա, *պատմագիր-տարեգիր XVII դ., «Թարիխ Նայիմա», 4 հատոր. 1000—1071 ԹԹ. հիջրի։*

3. Ռաշիդ, *պատմագիր-տարեգիր XVII—XVIII դդ., «Թարիխ Ռաշիդ», 4 հատոր. 1090—1071 ԹԹ. հիջրի։*

4. Ջելեբի-Զադե, *պատմագիր-տարեգիր XVIII դ., «Թարիխ Ջելեբի-Զադե»—1134—1141 ԹԹ. հիջրի։ Այս հեղինակի պատմությունը տպագրված է Ռաշիդի պատմության հետ իբրև նրա 6-րդ հատորը։*

5. Սուբհի, Սամի և Շաքիր, *պատմագիր-տարեգիրներ XVIII դ. «Թարիխ Սուբհի, Սամի վե Շաքիր», 1143—1156 ԹԹ. հիջրի։ Այս երեք հեղինակների պատմությունները միացված են երկու հատորում, որը հայտնի է «Թարիխ Սուբհի» անունով։*

6. Սյուլեյման-Իզզի, *պատմագիր-տարեգիր XVIII դ., «Թարիխ Իզզի», 1157—1165 ԹԹ. հիջրի, 2 հատոր։*

7. Վասըֆ, *պատմագիր-տարեգիր XVIII դ., «Թարիխ Վասըֆ», երկու հատոր, 1168—1188 ԹԹ. հիջրի։*

8. Ջևդեթ-Փաշա, *պատմագիր-տարեգիր XVIII դ. և XIX դ. առաջին քառորդի, «Թարիխ Ջևդեթ», 12 հատոր, 1188—1241 ԹԹ. հիջրի։*

Բացի Փեչեվիից, մնացածները պետական-պաշտոնական տարեգիրներ են, وقعه نويس («Վակաա-Նյուվիս»), որոնք գրել են Օսմանյան պետության պատմությունը ժամանակագրական կարգով։ Վերոհիշյալ տարեգիրների պատմությունը սկսվում է հիջրեթի 1000 թ. և հասնում մինչև 1241 թ. (եվրոպական տարեթվերով՝ 1591—1825 ԹԹ.), այսինքն՝ XVI դ. վերջից մինչև XIX դ. առաջին քառորդը։ Տարեգիր Ջելեբի-Զադեից հետո՝ 1142 թ. դեպքերը չեն

---

* *Հայտնի է, որ պատմագիրների երկերը կրում են հեղինակի անունը, ինչպես՝ «Թարիխ Փեչեվի», «Թարիխ Նայիմա», «Թարիխ Ջևդեթ» և այլն։ Պատմագրի անունից հետո հիշված են նրանց «Պատմության» ընդգրկած տարիները։*

մաել օսմանյան տարեգիրների պատմության մեջ, որովհետև հաջորդ տարեգիրը՝ Սուրհին, իր պատմությունը սկսում է 1143 թ. դեպքերից։ Հետագայում 1329 թ. (1911) «Թարիխի-Օսմանի-Էնջյումենի Միջմուասի»-ում* ընկերության աշխատակիցներից Մուհամմեդ-Արիֆը ժուռնալում տպագրած «Օսմանյան պետության [դեպքերի շարքից] պատմության մեջ չարձանագրված 1142 թ. դեպքերը» վերնագրով հոդվածում լրացնում է այդ բացը։ Այդ տարեթիվը զուգադիպում է Սուլթան Ահմեդ III իշխանության վերջին տարիներին։

Այսպիսով թուրքական աղբյուրներից մենք տալիս ենք Հայաստանի և հայաբնակ շրջաններին վերաբերող 300 տարվա պատմական նյութեր (940—1241 թթ.)։

Վերոհիշյալ թուրք պատմագիրների մասին կենսագրական և այլ տեղեկություններ ու նրանց «պատմությունների» համառոտ բնութագրերը տրված են յուրաքանչյուր հեղինակից թարգմանված նյութերի սկզբում։

Սույն աշխատության առաջին հատորում նպատակահարմար համարեցինք օգտվել այն թուրքական պատմագիրներից, որոնք ավելի կարևոր նշանակություն ունեն և կարևոր տեղ են բռնում թուրքական պատմագրության մեջ և երկրորդ՝ որոնց «պատմությունները» ժամանակագրական կարգով հաջորդում են իրար։ Բացի Փեչեվիից, մնացած բոլոր պատմագիր-տարեգիրների «պատմությունները» իրար հաջորդում են ժամանակագրական կարգով։

Մենք նախընտրել ենք արքունական, պաշտոնական տարեգիրներին, որոնք որպես հեղինակավոր և իրենց ժամանակի համար աչքի ընկնող մտավորական անձնավորություններ, մոտ լինելով սուլթանական արքունիքին ու կառավարական օրգաններին, դեպքերը տալիս են ավելի լրիվ, հաճախ պաշտոնական փաստաթղթերի հիման վրա։

Աշխատության մեջ հիշված պատմագիր-տարեգիրներից մի քանիսը նկարագրում են իրենց ժամանակակից և հաճախ ականատես եղած դեպքերը, ինչպես պատմագիր Փեչեվին (որոշ դեպքեր), պատմագիր-տարեգիրներ՝ Ռաշիդը, Ջելեբի-Զադեն, Սոփհին, Իզզին և Վասըֆը։ Անտարակույս այդ հանգամանքը ունի որոշ առավելություններ։

---

* تاريخ عثمانى انجمنى مجموعسى، استانبول ١٣٢٩، برنجى جلد، نومرو ٦—١، صحيفه ٢٦٤—٢٥٩، ٣١٦—٣٠٩.

Նպատակահարմար համարեցինք թուրք պատմագիր-տարեգիրների «պատմությունների» անունները տալ առանց թարգմանելու, ինչպես՝ تاریخ پچوی، تاریخ نعیما، تاریخ جودت پاشا «Թարիխի Փեչեվի», «Թարիխի Նայիմա», «Թարիխի Ջեվդեթ փաշա» և այլն:

Նկատի ունենալով թուրքական պատմագրության մասին հայերեն լեզվով գրականության բացակայությունը, առաջաբանում խիստ համառոտ տրվում է թուրքական պատմագրության կարևոր և բնորոշ գծերը, սույն աշխատության ընդգրկած XVI—XVIII դարերի սահմանում:

Օսմանյան պատմությունը, այնպես ինչպես շարադրել են գրեթե բոլոր թուրք պատմագիրները, ներկայումս կորցրել է իր նշանակությունը, քանի որ Օսմանյան պետության պատմության սկզբնական շրջանը, մինչև Ստամբուլի գրավումը (1453), չի արձանագրվել և եթե արձանագրված էլ լինի, կարևոր նյութերը չեն պահպանվել: Այնպես, որ ըստ ավանդությունների, Օսմանյան պետության հիմնադիրը համարվող Օսման-Ղազիից սկսած, մոտավորապես երկու դարի պատմություն զուրկ է պատմական հաստատ ու ստուգված տվյալներից:

Ժամանակակից թուրքական պատմագրության ներկայացուցիչներից մեկը՝ Իսմայիլ Համի-Դանիշմենդը այս մասին ասում է. «Այս առաջին շրջանի բազմաթիվ դեպքերը մեզ համար բոլորովին անծանոթ են, իսկ քիչ թե շատ հայտնի դեպքերի թե՛ տարեթվերի և թե՛ ավանդության ձևի տեսակետից, պատմագիրների միջև մեծ տարբերություններ կան... Բյուզանդական, արաբական և այլ օտար աղբյուրների հաճախ իրար չհամապատասխանող բացատրություններն էլ այս մութ շրջանը լուսավորելու բնույթը չունեն: Մասնավորապես մեր ներքին դեպքերը օտար աղբյուրներում շատ քիչ են արձանագրված*:

Օսմանյան պետության ծագմանն ու նրա սկզբնական զարգացմանը վերաբերող պատմական հարցերը, բնականաբար, թուրք և օտար պատմագիրներին լուրջ կերպով զբաղեցնող հարցերից են:

Անվիճելի պետք է համարել այն փաստը, որ Օսմանյան պետության հիմնադիրը համարվող Օսմանի և նրան հաջորդողների՝

---

* Ismail Hami Danişmend, Izahlı Osmanlı Tarihi Kronolojisi, Istanbul, 1947, I cilt. sah. VII.

Օրխանի, Մուրադի և Բայազետի (որոնք պաշտոնական Օսմանյան պատմության մեջ կոչվում են Ղազի Սուլթան Օսման, Ղազի Սուլթան Օրխան և Ղազի Սուլթան Մուրադ) անվան և իշխանության հետ կապված դեպքերի մեծ մասը պատմական իրողություններից ավելի պատմական ավանդություններ են, որոնք ինչպես իրավամբ նկատում է հայտնի արևելագետ Հերբերդ Ադամս Գիբբոնսը, «շարադրվել են շատ ավելի ուշ ժամանակներում թուրք պատմագիրների կողմից, իսկ Եվրոպայի թուրքագետ պատմագիրներից շատերը, առանց գիտական ուսումնասիրությունների և ստուգումների, հաճախ նույնությամբ կրկնել են թուրք պատմագիրների կողմից իբրև պատմական փաստ տրված ավանդությունները»*:

Մինչև հիջրեթի XI դարը (1000 թ.=1596 թ.) Օսմանյան պետությունը չի ունեցել պաշտոնական տարեգիրներ: Պատմական որոշ դեպքեր, գլխավորապես Սուլթանների անձի և գործերի վերաբերյալ դեպքերը, գրի են առել «Շահնամե-խան»** անունով հայտնի բանաստեղծները (Շահնամե գրող, ասող), որոնք պարսկական շահերի «պատմագիրների» նման «Շահնամեներ» էին գրում: «Շահնամեխաններից» առաջինը եղել է Ֆեթհուլլահ-էֆենդին, որն Իրանից է եկել. սա սուլթան Սուլեյման-Կանունիի պատերազմական գործողությունների մասին թուրքերեն և պարսկերեն լեզուներով, ոտանավորի ձևով «պատմություններ» է գրել: Թուրք պատմագիրների ասելով Ֆեթհուլլահ-էֆենդիից հետո ապրող «Շահնամեխանների» աշխատությունները չեն պահպանվել, հիշվում են Լոկմանի, Քյաթիբ-Մուհամմեդ, Հյուրմի և այլ անուններ:

Ավելի ուշ, հիջրեթի XI դ. սկզբին, Օսմանյան պետության պատմագրությունը ստանում է ավելի ձևակերպված բնույթ: Պետության կողմից նշանակվում են հատուկ պատմագիրներ-տարեդիրներ՝ «Վակաա-նյուվիսներ»: Այսպես, Սուլթան Մուհամմեդ III-ի կողմից տրված փադիշահական հրամանագրով սահմանվում

---

* Հ. Ա. Գիբբոնսի՝ Օսմանյան պետության ծագման ու զարգացման հարցին վերաբերող աշխատությունը թարգմանված է թուրքերեն լեզվով Ստամբուլի Պետական համալսարանի թուրքագիտության ինստիտուտի կողմից:

هربرت آدامس گیبونس: عثمانلی ایچراطورلغنك قورولوشی، ترجمه ایدن: راغب خلوصی، استانبول دارالفنونی تورکیات انستیتوسی، استانبول ۱۹۲۸، صحیفه ۷.

** Շահնամեխան — شهنامه خوان.

է, որ «Վակաա-Նյուվիսը» պետք է տիրապետի արձակ և ոտանավոր գրելու արվեստին, պիտի իմանա ուղղագրությունը և դեղագրությունը, նրա տրամադրության տակ պիտի լինեն քարտուղարներ, նկարիչներ, ոսկեզօծողներ (գրքի վերնագրերը և կազմը զարդարողներ)։

Ահա այս ձևով տարեգրությունը վերածվում է պետական պաշտոնի. տարեգիրները նշանակվում են Սուլթանի կողմից, հաճախ պետական բարձր աստիճանի և իրենց գրական հմտությամբ հայտնի անձնավորություններից։

Թուրքական պատմության «Վակաա նյուվիս»-ները, թվով 29, գրել են Օսմանյան պետության պատմությունը տարեգրության ձևով, հիջրեթի 1000 թվականներից մինչև XIX դ. կեսը։

«Վակաա նյուվիս»-ների շարքում կան, իհարկե, երկրորդական նշանակություն ունեցող պատմագիրներ, բայց կան և այնպիսիները, որոնք իրենց «պատմություններով» մեծ տեղ են բռնում Օսմանյան պետության տարեգրության մեջ և որոնք թողել են պատմության տեսակետից հիշատակության արժանի գործեր։ Այդ կարգի թուրք պատմագիրներից կարելի է հիշել Նայիմային, Ռաշիդին, Ջելեբի-Ասըմին, Վասըֆին, Ջևդեթ-փաշային, Աբդուրահման-Շերեֆին։ Բացի պաշտոնական (պետության կողմից նշանակված) «Վակաա-նյուվիս»-ներից պետք է հիշել նաև ոչ պաշտոնական պատմագիրներին, որոնք նմանապես ուսումնասիրել են որոշ պատմական շրջաններ և գրել են կարևոր պատմական երկեր։ Դրանցից կարելի է հիշել Փեչեվիին*, բանաստեղծ Նեդիմին**, Թայար-Զադե-Աթաին, Քյաթիբ-Ջելեբիին, Հյուսմի-Ջելեբիին, Խայրուլլահ-էֆենդիին և այլն։

Օսմանյան պատմագիրների այս ցանկը լրացնելու համար պետք է հիշել նաև հայտնի ուղեգիր-պատմագիր Էվլիյա-Ջելեբիին (XVII դ), որի 10 հատորից կազմված «Էվլիյա-Ջելեբիի ուղեգրությունը»*** բացի աշխարհագրական և տեղագրական նշանա-

---

* Փեչեվիի մասին տե՛ս Ներկա աշխատության «Թարիխ-Փեչեվի» գլուխը։

** Նեդիմը թարգմանել է Դերվիշ-Ահմեդ էֆենդիի արաբերեն լեզվով գրված «Սեհաիֆ-ուլ-Ախբար» հատոնի պատմությունը «Մյունէջիմ-բաշի Թարիխ» անունով։

*** اولیا چلبی: اولیا چلبی سیاحتنامهسی، استانبول ۱۳۱٤، ۱۰ جلد.

կությունից, ունի նաև պատմագրական նշանակություն, քանի որ Էվլիյա-Չելեբին իր «Ուղեգրության» մեջ տալիս է մի շարք պատմական և կարևոր դեպքերի նկարագրությունը, հաճախ հետաքրքիր մանրամասնություններով։

Թե պաշտոնական տարեգիրները և թե առհասարակ այլ թուրք պատմագիրները, որոնք շատ հաճախ ուսումնասիրել ու գրել են անցյալ՝ ոչ իրենց ապրած ժամանակաշրջանների պատմությունը, իհարկե, ամենից առաջ օգտվել են պետական, արքունական նյութերից և պաշտոնական փաստաթղթերից։

* * *

Թուրքական պատմագրության հիմնական ձևը, ինչպես ասացինք, տարեգրության ձևն է, որը գործ են ածում բոլոր պատմագիրները, շատ աննշան բացառությամբ։ Թուրք պատմագիրների շարքում խիստ կարևոր տեղ բռնող Ջևդեթ-Փաշան, տարեգրության ձևը հիմնականում պահպանելով հանդերձ, «Թարիխի Ջևդեթի» մեջ երբեմն շեղվում է և որոշ պատմական շրջանների կամ ամբողջ պատմական դեպքերի մասին տալիս է տեղեկություններ, ընդհանրացումներ և վերլուծումներ (3-րդ հատորում Կովկասի, Վրաստանի, Դաղստանի, Չերքեզիստանի և այլնի մասին)։

Կոչի-Բեյը* 1041 թ. (1631) Սուլթան Մուրադ IV ներկայացրած իր հայտնի «Ռիսալեյում» (բրոշյուր) որոշ ժամանակաշրջանի պատմական դեպքերը և երևույթները հանգամանորեն վերլուծում և քննադատության է ենթարկում։

Թուրք պատմագիրների գլխավոր ներկայացուցիչների երկերի ուսումնասիրությունը հնարավորություն կտա, մի քանի հիմնական դծերով, բնութագրել գլխավորապես այս հատորում մեզ հետաքրքրող (XVI—XVIII դդ.) թուրք պատմագրության մակարդակը։

1932—1933 թթ. «Թուրքական Պատմության Ուսումնասիրության Ընկերության»** կոլեկտիվ աշխատությամբ շրջ հատորը[

---

* Կոչի-Բեյի «Ռիսալէի» ռուսերեն թարգմանությունը տե՛ս Смирнов И. Д. Кучи-Бей Гомюрджинский и др. Османск. писатели об упадке Турции.

** Türk Tarihi Tetkik Cemiyeti, ներկայումս կոչվում է Türk Tarih Kurumu (Թուրքական Պատմության Ընկերություն), կազմակերպվել է Մուստաֆա Քեմալի նախաձեռնությամբ 1931 թվականին Անկարայում։

հրապարակված՝ «Թարիհ»-ում «Պատմագրությունը օսմանցիների մոտ» հատվածում, այսպես են բնորոշվում թուրքական պատմագրությունն ու պատմագիրները. «Կուլտուրական առպարեզում օսմանցիների առաջադիմությունից հետո, պատմագիրները հետամուտ են եղել գրելու խրթին ու ճոռոմ լեզվով։ Պատմական որոշ դեպքեր, երբ պահանջվում էր, որ դրանք ընթերցողները չհասկանան, պատմագիրները բացատրել են բազմաթիվ տերմիններով ու խրթին արտահայտություններով, այդպիսով շատ հաճախ նրանցում եղած ճշմարտությունը հասցրել անհասկանալիության։ Հոջա-Սադեդդին-էֆենդիի «Թաջ-ուլ-Թեվարիխ» (Tac-ül Tevarih) անունով աշխատությունը, որն Օսմանյան պետության հիմնումից մինչև Սելիմ III մահը տեղի ունեցած դեպքերի մասին է, խրթին և ճոռոմաբան օսմանյան պատմություններից ամենադժվարն է համարվում։

«Թաջ-ուլ-Թեվարիխ»-ից հետո կանոնավոր կարգով, բավականին ընդարձակ կերպով դրված պատմական երկերի միջոցով կարելի է հետևել օսմանյան պատմությանը մինչև XIX դ. կեսը... իրար հաջորդող պատմությունների հեղինակներից շատերը պաշտոնական տարեգիրներ են („Vakaa-nüvis“)*։

Ամենից առաջ պետք է նշել, որ թուրք պատմագիրները, շատ շնչին բացառությամբ, իրենց ուշադրությունը կենտրոնացնում են գլխավորապես Սուլթանական արքունիքի, պատերազմական գործողությունների վրա։ Այդ բոլորը տալիս են հաճախ անտեղի և անիմաստ մանրամասնություններով։ Դա բացատրվում է, իհարկե ամենից առաջ, այն բանով, որ պատմագիր-տարեգիրը նշանակված է Սուլթանի, արքունիքի կողմից։ Նա ամենից առաջ պիտի բավարարի Սուլթանի, վեզիրների, կրոնական, վարչական և ռազմական գեկավար պաշտոնյաների փառասիրական ձգտումները, նրանց անունների և գործերի հավերժացումով։ Բացի այդ, պատմագիր-տարեգիրը պատկանում է նույն այդ խավերին և նա շահագրգռված չէ դուրս գալ այդ դասի շահերի ու հետաքրքրության սահմաններից։

Ժողովուրդը, հասարակության խոշոր զանգվածները չեն երևում թուրք պատմագիրների երկասիրությունների մեջ, կարծես նրանք չեն տեսնում ժողովրդին, կամ ժողովուրդը մասնակից չէ

---

* Tarih, III, cilt, yeni ve yakın zamanlar, T. T. T. Cemiyeti tarafından yazılmıştır, 1933, Istanbul, sah. 151.

պատմական դեպքերին։ Եթե չխոսենք Օսմանյան պետության մեջ ապրող ոչ-իսլամ ազգությունների՝ բալկանյան ժողովուրդների, հույների, հայերի, հրեաների և այլոց մասին, որոնց նկատմամբ հաճախ կրոնական ֆանատիկ մոտեցում ունեն թուրք պատմագիրները, անգամ իսլամական կրոնին պատկանող ժողովուրդների նկատմամբ ևս նույն անտարբերությունն է նկատվում։ Այդպիսի պայմաններում, իհարկե, ավելորդ կլիներ թուրք պատմագիրներից պահանջել, որ նրանք ուշադրության առարկա դարձնեին ժողովրդի կենցաղը և կուլտուր-կրթական խնդիրները։ Եթե թուրք պատմագիրները չեն զբաղվում ժողովրդով, չեն հետաքրքրվում նրա նյութական-կուլտուրական վիճակով, ապա նրանք իրենց պատմության մեջ առանձին հետաքրքրություն են ցույց տալիս դեպի պետական կյանքը, նրանում առաջ եկած փոփոխությունները, հաճախ մեկնաբանում և քննադատում են պետական կյանքում առաջ եկած երևույթները, նորությունները, մինչև անգամ քննադատում պետության ղեկավար վեզիրներին և այլ բարձրաստիճան անձնավորություններին։ Այդ երևույթն առանձնապես աչքի է ընկնում Օսմանյան պետության արտաքին հարաբերությունների խնդրում։

Երկրի տնտեսական խնդիրները թուրք պատմագիրներին հետաքրքրում են գլխավորապես պետական բազմաթիվ և բազմատեսակ հարկերի և այդ հարկերի գանձման, պետության ֆինանսական դրությունը ապահովելու, տևական պատերազմների հսկա ծախքերը, արքունիքի անսահման շռայլությունները և ճոխություններն ապահովելու տեսակետներից։

Թե ինչ ազդեցություն էին գործում ժողովրդի տնտեսական կյանքի վրա բազմաթիվ, երկարատև և կործանարար պատերազմները, այդ մասին էլ թուրք պատմագիրները գրեթե չեն խոսում։

Թուրք պատմագիրներին հատուկ այս բնորոշ գծերը, իհարկե, ունեն նաև աննշան բացառություններ։ Այսպես, Ահմեդ-Ջևդեթը և մասնավորապես ուղևոր-պատմագիր Էվլիյա-Ջելեբին, հաճախ պատմական, արքունական, պատերազմական դեպքերի շարքում, չեն մոռանում նաև ժողովրդին, զբաղվում են նրա կենցաղով, զբաղմունքով և կուլտուրայով։ Այդ ուղղությամբ շատ արժեքավոր նյութեր է տալիս Ջելեբին, որը Օսմանյան պետության հսկայածավալ տերիտորիան անցել է քայլ առ քայլ, ուսումնասիրել և նկարագրել է մզկիթների, մեդրեսների հետ միասին նաև ժողովրդին, տալով

164—2

ՀՍՍՌ ԳԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

նրա աշխատանքի (արհեստ, առևտուր, տնտեսություն) կարևոր բնագավառները, կենցաղը, սովորությունները, լեզուն և այլն*:

Թուրք պատմագրության բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ պատմագիրների երկերը շատ երկար ժամանակ մնացել են կղզիացած վիճակում, քանի որ նրանց «պատմությունները» չեն տպագրվել և միայն սահմանափակ ձեռագիր օրինակներ են մատչելի եղել խիստ սահմանափակ շրջաններին: Թուրքիայում՝ թուրքական տպագրական արվեստը սկիզբ է առել շատ ուշ, XVIII դ. առաջին քառորդում, այսինքն տպագրության գյուտից մոտ 3 դար հետո (1440 և 1727 թթ.)**:

Թուրքական տպագրության արվեստի հիմքը դրել է ազգությամբ հունգարացի Իբրահիմ-էֆենդի-Մյութեֆերիքեն, որը Վիեննայից բերել է տալիս փորագրիչներ, արաբական տառեր ձուլողներ, տպագրիչներ և ձեռնարկում տպագրության գործին:

Տպագրության գործի հիմնման մասին «Թարիհը» գրում է. «Եվրոպայում XV դարի կեսին տպագրության արվեստի հիմնումը գրքերի քանակի հեշտությամբ բազմացնելու հնարավորություն է ստեղծում, որն իր հերթին նպաստում է գիտության և արհեստների արագ տարածմանը: Իբրահիմ-էֆենդիի „Darültabaatülamire“ (Կայսերական տպագրություն) անունով տպարանում մի շարք գրքեր տպագրվեցին, առաջին տպագրված գիրքը մի թուրքի կողմից գրված բառարանի թուրքերեն թարգմանությունն էր: „Vankulu“ անունով այդ գիրքը տպագրվեց հազար օրինակով: Տպագրված գրքերից շատերը պատմության ու աշխարհագրության էին վերաբերում, որոնցից մեկը „Tarihi Timur Gürgan“-ն էր: Սկզբում տպագրված գրքերից պետք է հիշել նաև Քաթիբ-Չելեբիի حاجى-ն, թուրք պատմագիր-տարեգիրների երկերից՝ Նայիմայի نعيما خ يار-ն, Ռաշիդի راشد خ يار-ը և այլն: Այդ գրքերի խնամքով և առանց գրաշարական սխալների մաքուր տպագրությունը կարելի է տեսնել մինչև օրս պահպանված օրինակներում»***:

---

* Էվլիյա-Չելեբիի ուղեգրությունից «Հայաստանի և հայերի մասին» մեր քաղած և թարգմանած նյութերը պատրաստել ենք տպագրության համար առանձին գրքով,— «Էվլիյա-Չելեբին Հայաստանի և հայերի մասին»:

** Այդ թվականից մեկ և կես դար առաջ, 1567 թ., Աբգար-Դպիրը Իտալիայում ձուլված հայկական տառերը Ստամբուլ է բերում, հիմնում Թուրքիայում հայկական առաջին տպարանը:

*** Tarih. III c. sah. 148.

Երկու խոսք Թուրք պատմագիրներից մեր կատարած թարգմանությունների լեզվի մասին։

Պատմագիրներից շատերը իրենց «պատմությունները» գրել են XVI—XVII դդ. հատուկ, վերին աստիճանի խրթին և ծանր լեզվով, որը արաբերեն, պարսկերեն, թուրքերեն լեզուների խառնուրդ էր։ Բացի այդ, նկատի պետք է ունենալ նաև այդ դարերում պաշտության շարադրության ձևը,— պատմագիրը գրում է մեծածավալ հատորներ, շատ հաճախ առանց գլուխների, վերնագրի և կետադրական նշանների։ Հայտնի է նաև, որ արաբական տառերով շատ դժվար է ճիշտ արտահայտել հատկապես անձնանունները և տեղանունները։

Վերոհիշյալ պատճառներով հասկանալի կլինի նման նյութերի թարգմանության դժվարությունները և անխուսափելի թերությունները։ Թարգմանության մեջ մենք աշխատել ենք, ըստ հնարավորին, պահպանել տեքստերի արտահայտության առանձնահատկությունն ու ոճը և դրանով, բնականաբար, որոշ չափով շեղվել ենք մեր լեզվական կանոններից։

* * *

Թուրք պատմագիրներին չի հետաքրքրել հայ ժողովրդի կյանքն իր տարբեր կողմերով։ Իր պետականությունը և անկախությունը կորցրած հայ ժողովուրդը և նրա հայրենիքը՝ Հայաստանը, որի մի խոշոր հատվածը ընկել էր սուլթանական Թուրքիայի դաժան լծի տակ, ինչպես թուրք տիրակալների, այնպես և պետական ղեկավարների ու թուրք պատմագիրների աչքում՝ չէր ներկայացնում մի այնպիսի ուժ և մեծություն, որին անհրաժեշտ լիներ հաշվի առնել։ Նրանք հաշվի չէին առնում նույնիսկ Օսմանյան կայսրության հիմնական տարրը հանդիսացող իսլամ-թուրք ժողովրդին, իսկ արհամարհանքը դեպի անհավատ (քյաֆիր) ժողովուրդները՝ մասնավորապես դեպի հայերը՝ բացահայտ էր թուրք աշխարհակալների համար։

Հայաստանի աշխարհագրական դիրքը բացառիկ և կարևոր նշանակություն ուներ թուրք աշխարհակալների համար՝ նրանց դեպի Աբևելք և Հարավ ծրագրած նվաճումների իրականացման գործում։ Դեպի Միջագետք, Սիրիա և Եգիպտոս կատարած նվաճումների ընթացքում, թուրքերն ամեն կերպ ձգտում էին գրավել և իրենց ձեռքում պահել Հայկական բարձրավանդակը։ Այստեղ թուրք աշխարհակալների դեմ միակ ուժը Իրանն էր, որն զգալով ու հաշվի առնե-

լով օսմանյան թուրքերից իրեն սպառնացող ահավոր վտանգը, նույնպես ձգտում էր իր ձեռքում պահել Հայկական բարձրավանդակն ու Արևելյան Անդրկովկասը։

Ահա այդ երկու հակառակորդ ուժերի՝ Թուրքիայի և Իրանի բախման ասպարեզ է դառնում Հայաստանը։ Իրանա-թուրքական պատերազմները որոնք սկսվեցին XV դ. առաջին քառորդից և որոշ դադարներով շարունակվեցին մինչև XVIII դ., Հայաստանը վերածեցին պատերազմական թատերաբեմի։ Իրանա-թուրքական այդ արյունալի և անհաշտ պատերազմական գործողությունները, Հայաստանի, հայ ժողովրդի, ինչպես նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդների համար շատ ծանր հետևանքներ ունեցան։ Երկու հզոր և անհաշտ պետությունների կողմից աշխարհակալական նպատակներով բորբոքված այդ կատաղի պատերազմները ստացան կրոնական-դավանական գունավորում։ Թուրքիան, իսլամական կրոնի՝ սյունիի դավանանքի դրոշակով կռվում էր նույնպես իսլամ, սակայն շիա դավանանքին պատկանող կըզլբաշական Իրանի դեմ։ Կրոնական այս գունավորումը երկու պետությունների թշնամությունն ավելի էր ուժեղացնում, բորբոքելով նրանց բանակների կրոնական ֆանատիզմը։

Սեֆյան Իրանի պետության հիմնադիր՝ Շահ-Իսմայիլի և օսմանյան թուրքերի Յավուզ-Սուլթան Սելիմի 1514 թ. Թավրիզի մոտ՝ Չալդրանի մեծ ճակատամարտով սկսված իրանա-թուրքական պատերազմները, գրեթե միշտ, տեղի են ունեցել Հայաստանի և հայաբնակ շրջանների տերիտորիայում։

Իրանա-թուրքական պատերազմներն ավելի կատաղի բնույթ են ստանում օսմանյան հռչակավոր Սուլթան Սյուլեյման-Կանունիի և Իրանի շահ՝ Շահ-Թահմազի իշխանության օրոք։ Այդ և դրանից առաջ տեղի ունեցած պատերազմների հետևանքով Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ անցնում են օսմանցիներին։ 962 թ. (1554) Սուլթան Սյուլեյմանը արշավում է Իրանի վրա, հրով ու սրով ավերում Արարատյան երկիրը, Նախիջևանն ու Սյունյաց աշխարհը։

Որոշ ընդհատումից հետո Իրանա-թուրքական պատերազմները վերսկսվում են Սուլթան Մուրադ III օրոք, ու փոփոխակի հաջողություններով շարունակվում մինչև 991 (1590) թվականը։ Այս վերջին պատերազմների հետևանքը՝ լինում է այն, որ Թուրքերը գրավում են Անդրկովկասի զգալի մասը։

Սրանով ավարտվում է XVI դ.։

XVII դ. սկզբից իրանա-թուրքական պատերազմներում կարևոր դեմք է հանդիսանում Շահ-Աբբասը, որը վերջ տալով Իրանի գահի շուրջը տեղի ունեցած երկարատև կռիվներին, վերակազմում է բանակը և սկսում Թուրքիայից ետ խլել Իրանի կորցրած վայրերը։ Երևանի բերդը, ինչպես միշտ, այս անգամ էլ կարևոր օբյեկտ է հանդիսանում իրանա-թուրքական բախումներում։ Երևանի այդ նշանակությունը պահպանվում է նաև հետագա պատերազմական գործողություններում։ Իրանական բանակը արշավում է դեպի Էրզրում, Կողոպտում, ավերում և 23 հազար մարդ է քշում դեպի Արարատյան դաշտը։ Իսկ թուրքական բանակի հարձակումների պատճառով, երբ իրանական բանակը ստիպված է լինում նահանջել, տեղի է ունենում Շահ-Աբբասի՝ պատմության մեջ հայտնի հայերի գերեվարումը 1604 թ.։ 1021 թ. (1612), Սուլթան Ահմեդի օրոք, Իրանի և Թուրքիայի միջև կնքվում է կարճատև հաշտություն, սակայն 1025 թ. (1616) նորից է բռնկվում պատերազմը։

Իրանա-թուրքական հակամարտությունը սուր կերպարանք է ստանում Սուլթան Մուրադ IV իշխանության վերջին տարիներին, երբ Սուլթանը անձամբ ղեկավարում է Երևանի արշավանքը։ Երևանը, վեցերորդ անգամ գրավվում է թուրքերի կողմից։

1049 թ. (1639) Իրանի և Թուրքիայի միջև կնքվում է Կասր-Շիրինի հաշտության դաշնագիրը, որով վիճելի տերիտորիալ հարցերը հիմնականում հարթվում են։

XVII դ. վերջին քառորդից նորից են սկսվում պատերազմական գործողությունները։ Դրությունը ավելի է ծանրանում ռուս-թուրքական պարբերաբար կրկնվող պատերազմների հետևանքով։

Հայաստանի և հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող այդ պատերազմական գործողություններին ավելանում են, դարձյալ Հայաստանի հողի վրա, հայ ժողովրդի դժբախտության մի այլ աղբյուր հանդիսացող քրդական շարժումները, որոնք շարունակվել են XVI—XVII դդ.։ Քրդերը Իրանի իշխանությունը խորտակելու համար լայն օժանդակություն են գտնում Օսմանյան կառավարությունից։ Քրդական շրջանները մեծ մասամբ անցնում են Օսմանյան կայսրությանը։ Թուրքիայի, երբեմն էլ Իրանի օգնությամբ հաճախ նրանք ստեղծում էին իրենց կիսաանկախ իշխանությունները։ Դրանցից կարևոր է հիշել Բիթլիսի նշանավոր Ավդալ խանի քրդական մեծ խանության հետ կապված դեպքերը*։

---

* Բիթլիսի քրդական խանության այս շարժման ականատես, հայտնի թուրք ուղեգիր Էվլիյա Չելեբին այդ շարժումը մանրամասնորեն նկարագրում է իր «Ուղեգրության» մեջ։ Տե՛ս «Էվլիյա-Չելեբի Սիյահեթնամեսի», հատ. 4, էջ 200—220։

Պատկերը լրիվ լինելու համար անհրաժեշտ է հիշել նաև, որ Թուրքիայի ներքին կյանքում, հատկապես մեզ հետաքրքրող դարերում, խրոնիկական բնույթ են ստանում ներքին շարժումները, որոնցից արժանի են հիշատակման Ջելալիների ու Աբազա փաշայի հակայածավալ ապստամբությունները։ Միանգամայն պարզ է, թե ինչպիսի ահարկու և կործանարար ազդեցություն էին ունենում Հայաստանի հողի վրա ծավալվող այդ պատերազմական գործողությունները։

Մեր ընթերցողների համար, անտարակույս, հետաքրքիր և տեղին է այսպիսի մի հարց,— աշխատության մեջ հիշված թուրք պատմագիրները ի՞նչպես են նայել վերոհիշյալ դեպքերի վրա, ի՞նչպես են պատկերել իրենց երկերում այն բոլոր անասելի տառապանքները, որոնց ենթակա է եղել հայ ժողովուրդը իր սեփական հայրենիքում։

Թուրք պատմագիրները, ինչպես նշել ենք, իրենց սոցիալ-քաղաքական դիրքով, իրենց դասակարգային և հասարակական պատկանելիությամբ ու կրոնական ֆանատիզմի հետևանքով անընդունակ էին հասկանալու ու իրենց երկերում արտահայտելու հայ ժողովրդի ողբերգական վիճակը։ Նրանք այդ բոլորը համարել են բնական, իրերի և դեպքերի անհրաժեշտության արդյունք, հանուն Իսլամի հաղթանակի։ Դարեր շարունակ դեպի Արևմուտք և Արևվելք արշավող, հրով ու սրով իրենց գերիշխանությունը ապահովելու ձգտող թուրք աշխարհակալների՝ սուլթանների, վեզիրների և փաշաների գաղափարախոս և դրվատող ենիչերիական հորդաների բարբարոսությունները գովաբանող թուրք պատմագիրներից կարելի՞ էր սպասել, որ նրանք գոնե երկու խոսք ասեին ժողովուրդների կրած ահավոր տառապանքների մասին։

Մենք տեսնում ենք բոլորովին հակառակը։ Թուրք պատմագիրները հիացմունքով ու առանձնակի գովասանքով են խոսում, բանաստեղծական վառ գույներով նկարագրում սուլթանների և վեզիրների անմիջական ղեկավարությամբ՝ ենիչերիական հորդաների կատարած գաղանությունները, հարյուր հազարավոր անմեղ մարդկանց կոտորածը, անթիվ առևանգումները, հրդեհումները, ավերումներն ու կողոպուտները։

Թուրքական բանակի կատարած անասելի բարբարոսությունները թուրք պատմագիր Փեչեվին նկարագրում է բանաստեղծական լեզվով և ցինիկորեն գովաբանում թուրքական բանակի ղեկավար-

ների և ենիչերիական բարբարոս հորդաների անասնական կրքերը*։

Նման նկարագրություններ Թուրք պատմագիրների մոտ հազվադեպ չեն։ Նրանք բացահայտ արհամարհանքով են խոսում մյուս ժողովուրդների՝ հայերի, վրացիների, ռուսների մասին։

Ա. Տվերիտինովան Թուրքիայում Ջելալիական ապստամբական շարժման ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ Թուրք պատմագիր-տարեգիրներին տալիս է այսպիսի բնութագիր. «Օսմանյան պետության բոլոր տարեգիր-պատմագիրները, իբրև կանոն, ապրում էին Ստամբուլում, ծառայում էին կամ անմիջականորեն Սուլթանական արքունիքում կամ որևէ այլ պետական հիմնարկության մեջ։ Նրանք պատկանելով ուլեմաների կամ չինովնիկների դասին, դրանով իսկ այս կամ այն չափով առանձնաշնորհյալ էին և այդ պատճառով էլ, բնականաբար, տեղի ունեցած դեպքերի մասին նրանց տեսակետները գրեթե միշտ, արտահայտում էին տիրապետող դասակարգի հայացքները»**։

Այս հանգամանքը, այսինքն՝ Թուրք պատմագիր-տարեգիրների նման մոտեցումը դեպի օսմանյան սուլթանների նվաճումներին և ենիչերիական հորդաների բարբարոսություններին ենթակա ժողովուրդները, մեր կարծիքով, երբեք չի նսեմացնում Թուրքական աղբյուրների նշանակությունը հայ ժողովրդի պատմության համար։ Թուրքական պատմագիրների տված նյութերով մենք կարող ենք հակահարված տալ և հերքել ժամանակակից Թուրքական պետական շրջանների և Թուրք պատմագրության այն անհեթեթ պնդումը, որ իբր Թե հայերը, օսմանյան սուլթանների հովանավորության տակ, մշտապես ապրել են ամենաբարենպաստ պայմաններում։

Բացի այդ, ինչպես ասել ենք վերևում, Թուրքական աղբյուրները հայ ժողովրդի պատմության լիակատար ուսումնասիրության համար ունեն բացառիկ նշանակություն։

* * *

Ներկա աշխատության մեջ հայ ժողովրդի պատմությանը վերաբերող նյութերին առընթեր բավականին տեղեկություններ էլ տրվում են մեզ հարևան վրացի և ադրբեջանցի ժողովուրդների պատմության մասին։

---

* Տե՛ս تاریخ پچوی، جلد ۱، ص ۲۸۷։ Մեր աշխատության «Թաբիխ Փեչևիի» գլխում թարգմանված են այդ նյութերը։

** А. Тверитинова, Восстание Кара Языджи—Дели Хасана в Турции, М. Л. 1946, стр. 17.

Հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդները դարեր շարունակ միասին են պայքարել, օտար նվաճողների դեմ, ունեցել նույն պատմական ճակատագիրը։

Հասկանալի է, որ հնարավոր չէ ամհմանագիծ դնել այդ եղբայրական բախտակից ժողովուրդների պատմության և պատմական դեպքերի միջև։

Ահա այդ պատճառով էլ այս աշխատության մեջ մենք քաղել և թարգմանել ենք նաև Վրաստանի և Ադրբեջանի պատմությանը վերաբերող կարևոր նյութերը։ Մեր կարծիքով այդ նյութերը կօգնեն լուսաբանելու Հայաստանի և հայերի հետ կապված մի շարք պատմական դեպքերը։

ՓԵՉԵՎԻ-ԻԲՐԱՀԻՄ, XVI—XVII ԴԴ.

«ԹԱՐԻԽԻ-ՓԵՉԵՎԻ» — تاریخ پچوی

Փեչևվի-Իբրահիմ էֆենդին ականավոր թուրք պատմագիրներից է: Նրա երկու հատորից կազմված պատմությունը ընդգրկում է հիջրի X դ. վերջին քառորդից մինչև XI դ. առաջին կեսը ընկած ժամանակաշրջանը, այսինքն՝ Սուլթան Սյուլեյման-Կանունիի (օրենսդիր) իշխանության վերջից մինչև Սուլթան Իբրահիմի գահակալությունը:

Փեչևվիի կենսագրությունից շատ սակավ տեղեկություններ կան: Պատմության ու աշխարհագրության վերաբերող հայտնի թուրք հանրագիտարանը (Շեմսեդդին-Սամի՝ «Կամուս-ուլ-Ալամ») Փեչևվիի մասին շատ քիչ տեղեկություններ է տալիս. բավականանում է հիշելով, որ «...պատմագիրներից է և սուլթան Մուրադ IV ժամանակ** գրել է երկհատոր օսմանյան պատմությունը: Նա Սերդար Լալա-Մուհամմեդ փաշայի մարդկանցից է»:*

*Պատմագիր Փեչևվին էլ իր պատմության մեջ իր մասին գրեթե ոչինչ չի ասում: Միայն II հատորում, երբ նկարագրում է «Վրաստանի մելիքներից Մավրավի ձեռքով Կարչղայ խանի սպանությունը և Վրաստանի հպատակությունը 1034 թվականին» (1624), հիշում է, որ ինքն անձամբ ներկա է եղել Մավրավի պատգամավորների դիմումին և աշխատել է համոզել Սերասքեր Հաֆըզ փաշային, որ նա ընդունի Մավրավ բեյի առաջարկը՝ վրացիների օժանդակությամբ հարձակվել կըզըլբաշների վրա, բայց փաշան մերժում է այդ առաջարկությունը: Փեչևվին փաշայի այդ քայլը բնորոշում է հետևյալ բառերով՝ «...նա Աստծուց չվախեցավ, արյունից ղդուշացավ և այդպիսի բացահայտ ոճիր գործեց»***: Այս հի-*

---

* ش .سامی: قاموس الاعلام، استانبول ١٣١٤—١٣٠٤

** Սուլթան Մուրադ IV, *1032—1043 թթ. (1622—1640):*

*** *«Թարիխ-Փեչևվի», հատ. II, էջ 406:*

շատակուլյունը ցույց է տալիս, որ Փեչեվին եղել է պետական հեղինակություն ունեցող, բանակին մոտ կանգնած, պատերազմական գործողություններին մասնակցած անձնավորություն։ Հետևաբար իր «Պատմության» մեջ նկարագրած որոշ դեպքերին նա ականատես է եղել։

«Թարիխի Փեչեվին» տպագրված է Ստամբուլում 1283 թ. (1866) «Պետական տպարանում»։ Փեչեվին ունի համեմատաբար պարզ լեզու. նրա պատմության մեջ բանաստեղծական զեղումները քիչ տեղ են բռնում։ Փեչեվիի պատմությունը սկսվում է հիջրի 926 թ. և հասնում մինչև 1048 թ. (1519—1638)։

Ինչպես առհասարակ թուրք պատմագիրները, նմանապես և Փեչեվին իր պատմության մեջ առանձնապես ծանրանում է Ռումելիի (Թուրքիայի Եվրոպական մասի) դեպքերի վրա։ Նա մանրամասնորեն նկարագրում է այդ ժամանակամիջոցում Ռումելիում տեղի ունեցող երկարատև և դաժան պատերազմները։ Սակայն Փեչեվին բավական տեղ է հատկացնում նաև Անադոլուին (Թուրքիայի Ասիական մասը), մասնավորապես Թուրք-պարսկական երկարատև պատերազմական դեպքերին, որոնք անմիջականորեն կապված են Հայաստանի և հայերի հետ։ Փեչեվին այդ պատերազմական դեպքերը նկարագրում է հաճախ մեծ մանրամասնություններով։

Փեչեվիի «Պատմությունից» մեր թարգմանած նյութերը մեծ մասամբ վերաբերում են թուրք-պարսկական այն պատերազմներին, որոնք տեղի են ունեցել XVI դ. առաջին կեսից (1530-ական թվականներից) և ընդմիջումներով շարունակվել են մինչև XVII դ. առաջին քառորդը։ Այդ երկարատև և դաժան պատերազմների հետևանքով մեծապես տուժել են Հայաստանը, Վրաստանը և Անդրկովկասն ամբողջությամբ. այդ երկրները կողոպտվել ու թալանվել են, անխնա կոտորվել և գերվել են նրանց ժողովուրդները։ «Իսլամական» (թուրքական) և «կըզըլբաշական» (պարսկական) բանակների այդ դաժան և բարբարոսական պատերազմական գործողությունները Փեչեվին նկարագրում է իբրև «իսլամական բանակի» օրինական և նվիրական գործողություններ՝ ընդդեմ «անհավատ կըզըլբաշների»[2], Օսմանյան փադիշահի հաղթանակը՝ ընդդեմ Պարսկաստանի «մոլորյալ» շահի։

Փեչեվին, ինչպես նաև բոլոր թուրք պատմագիրները, իր պատմությունը տալիս է ժամանակագրական կարգով, հաճախ կապելով այդ դեպքերը Սուլթանի անձնավորության, վեզիրների կամ սպարապետների իշխանության ժամանակաշրջանի հետ։ Այդ պատճա-

ռով պատմական որոշ դեպքեր ու դործողություններ հաճախ լրիվ պատկեր չեն տալիս։

Նկատի ունենալով այդ հանդամանքը, մենք աշխատել ենք թարգմանված նյութերն իրար հետ կապել որոշ «ծանոթություններով», իհարկե, պահպանելով պատմագրի շարադրության ձևն ու ընթացքը[3]։

Փեչևիից մեր թարգմանած նյութերի առաջին մասը վերաբերում է թուրք-պարսկական այն պատերազմական դեպքերին, որոնք տեղի են ունեցել 940—942 թթ. (1533—1535) սուլթան Սյուլեյման-Կանունիի և Շահ-Թահմասպի միջև։ Գլզլբաշների վրա ուղարկված Մեծ վեզիր Իբրահիմ փաշան նախ գրավում է Հայաստանի մի շարք բերդերը (Վան, Էրջիշ, Ադիլջևազ և Ախլաթ) և այնուհետև նվաճում՝ Թավրիզն ու ամբողջ Պարսկական Ադրբեջանը։ Սուլթան Սյուլեյմանը անձամբ դուրս է գալիս արշավանքի 941 թ.։ Սուլթանը հարձակվում է Բաղդադի վրա և գրավում։ Այնտեղից գնում է Թավրիզ և վերադառնում Ստամբուլ։ Նյութերի մյուս մասը կապված է 955 թ. (1549) պատերազմական գործողությունների հետ, երբ թուրքերը պաշարում ու գրավում են Վանի բերդը և երբ վեզիր Կարա-Ահմեդ փաշան նվաճում է Վրաստանը։*

Մի շարք բերդերի գրավումը Մեծ վեզիրի և Վանեմ Սերասքերի** ջանքերով

*Նույն թվականին*** աշխարհակալ փաշան Հալեպի կլիմայում (ձմեռանոցում) նախապատրաստություն տեսնելով, ձեռնարկեց գրավելու իսլամական**** սահմանի վրա գտնվող կըզըլբաշական բերդերը։ Նա ճարեց մի քանի վստահելի, իրապես սրտեր գրավելու ընդունակ ու հասկացող մարդիկ և նրանց ուղարկեց Ադիլջևազի, էրջիշի, Ախլաթի և Վանի բերդերում գտնվող կըզըլբաշ իշխանների մոտ։ Ուղարկվածներից ամեն մեկին հաջողվեց զանազան միջնորդություններով և սրտագրավ միջոցներով վերոհիշյալների [կըզըլբաշների] սիրտը դեպի փադիշահը գրավել, [բերդերի], բանալիներն

---

* Հայկական Արճեշ, Արծկե և Խլաթ անուններըը թուրքերեն լեզվով կոչվում են էրջիշ, Ադիլջևազ և Ախլաթ։

** Նախապես հիշված Իբրահիմ փաշան է։

*** Նախապես հիշված թվականը — 940 թ. (1533)։

**** «Իսլամական բանակ», «իսլամական երկիր» և այլն գործ է ածվում թուրք պատմագիրների կողմից թուրքական, օսմանյան իմաստով։

ուղարկելու և բերդերը հանձնելու խոստումը ստանալ։ Հետո [նրանք] ապահովելով իսլամական բանակի հաղթական ընթացքը դեպի այդ կողմերը, ետ վերադարձան։

Ադիլջեվազ բերդի գրավումը 940 թ. (1533), էրջիշ բերդի գրավումը նույն թվականին և Ախլաթի գրավումը նույն թվականին

Երբ այդ գարնանը դաշտերը ծաղիկներով զարդարվեցին, փաշան մրջյունի նման բազմաթիվ զինվորներով, ձիու սանձը դարձրեց դեպի այդ կողմերը։ Բարձյալն Աստուծո ողորմությամբ, տեղ հասնելուն պես [բերդերը], ինչպես որ նախապես խոստացված էր, փադիշահի տիրապետությանը ենթարկվեցին։ Երբ վսեմաշուք փաշան իմացավ, որ այդ ժամանակ «մոլորյալ» Շահը որսորդության պատրվակով, Թավրիզից գնացել է Խորասանի կողմերը, մտադրվեց այդ տեղից գնալ դեպի Դիարբեքիր ու Մուսուլ, և հետո դեպի Բաղդատ, սակայն, որովհետև զինվորական քեթխուդայի պաշտոնով հայտնի և պատվասեր Դեֆթերդար Իսքենդեր-Չելեբին խնդրում էր դնալ Թավրիզի կողմը, Սերասքերը չկարողացավ մերժել նրան և որոշեց շարժվել դեֆթերդարի ցանկությամբ...*

Հոչակավոր վանի բերդի գրավումը 940 թ. Զիլհիջջե [ամսի] 11-ին

*Երբ բերդակալ** փաշան, Կափու-կուլի***, Անադոլուի, Կարամանի, Զյուլղադերիեի, Ռումի, Դիարբեքիրի, Հալեպի, Շամի և ամբողջ Քուրդիստանի զինվորներով վերոհիշյալ օրն եկավ հասավ Խան-Սեվատ-Բեյ կոչված վայրը, ուրախահոխ հաղթանակը ծանուցող պատգամավորները [բերդի] բանալիներով շտապ կերպով կայսերական բանակն եկան։ Խուսրեվ փաշան անհապաղ և փութաջանորեն Շամի բեյլերբեյին բերդապահ նշանակեց և ուղարկեց այնտեղ։*

(«Թարիխի-Փեչեվի», հատ. I, էջ 176—177)։

---

* *Քեթխուդա — գործերի կառավարիչ։ Փադիշահն ու վեզիրներն ունեին իրենց քեթխուդաները։*

** *Ուզում է ասել բերդերը գրավելով հռչակված։*

*** *Կափու-կուլի՝ Սուլթանի արքունական գորքը։*

Հարձակում Վրաստանի վիլայեթի վրա

943 թ. (1536) Մուհարրեմ ամսի 15-ին Բայբուրտի կառավարիչը՝ հռչակավոր էմիր-Մուհամմեդ խանը, այդ երկրի հաղթական բանակը հարձակման նախապատրաստելուց հետո մտավ Վրաստանի վիլայեթը։ Երբ նա [փաշան] զբաղված էր կողոպուտով և թալանով, անհավատ (քյաֆիր) վրացիները կազմ ու պատրաստ լինելով, դիմադրություն ցույց տվին իսլամական բանակին։ Մեծ կռվից հետո հաղթության քամին իսլամների կողմից փչեց, անհամար անհավատներ ընկան և ոչնչացվեցին, մնացածներն էլ ցաք ու ցրիվ եղան։ Մեր զինվորներն այնքան մեծ ավարի և հարստության տիրացան, որ դժվար է արտահայտել։ Այս խրատական [դասից] հետո 3—4 սանջակի չափ երկրներ հնազանդություն ցույց տվին և հպատակվեցին. փադիշահի կողմից նրանց վրա վալի նշանակվեց։

(«Թարիխ-Փեչեվի», հատ. I, էջ 191)։

Ինչպես վերևում հիշվեց՝ 940 թ. Վանի բերդը գրավվեց Թուրքական բանակի կողմից։ Պատմագիրը, 955 թ. դեպքերի շարքում հիշում է, որ «...նախապես Վանի բերդը գրավված էր մեծահռչակ սուլթանական բանակի կողմից։ Սակայն մի քանի վատասիրտ և անկարող իշխողների անհոգության և անուշադրության պատճառով [բերդը] նորից ընկել էր կըզըլբաշների ձեռքը»։ Սուլթանական բանակի կողմից զինվորներ են ուղարկվում, որոնք պաշարում են Վանի բերդը։*

Վանի բերդի գրավումը
955 թ. (1548) Ռեջեբ ամսի 10-ին

*Կայսերական օթաքը** Թավրիզից շարժվելով Ռեջեբ ամսի 11-ին հասատավեց Վանի դաշտում։ Սադրազամ Ջելիլ-Ռուստեմ փաշան Ջերման ատացավ՝ սկսել բերդի գրավումը։ Նույն օրը խրամատների և գրավման համար անհրաժեշտ նախապատրաստություններ կատարվեցին։ Ամբողջ մի շաբաթ, գիշեր-ցերեկ [բերդը] գնդակոծեցին։ Կըզըլբաշների գլուխն ազատելու նպատակով՝ պաշարման ինն երորդ օրը, պաշարվածների գլխավոր Ալիխանը, մի քանի կըզըլբաշների բերդից իջեցրեց և էլգաս—Միրզայի միջնորդությամբ փրկություն խնդրեց։ Տասներորդ օրը բերդը գրավվեց և փադիշահին ենթարկվեց։ [Բերդի] բեյլերբեյությունը շնորհվեց Ջերքեզ-Իսքենդեր փաշային, որը Ստամբուլում Անադոլուի դեֆթերդարի պաշ-*

---

* «Թարիխ-Փեչեվի», հատ. I, էջ 273։

** Օթաք — սուլթանական մեծ վրան։

տոնն էր վարում։ [Բերդի] կարիքները և պաշարները շտապ կերպով հոգալուց և լրացնելուց հետո, ձմեռվա ցրտերը մոտեցած լինելով՝ ճանապարհ ընկավ դեպի ձմեռանոց...

Երկրորդ վեզիր Ահմեդ փաշան գնում է դեպի էրզինջան, Ադիլջեվազ և էրջիշ*

*Նույն թվականին, երբ մոլորյալ Շահը[4] իմացավ վանի բերդի գրավումը, գիտենալով, որ ինքն անձամբ չի կարող իսլամական բանակի դեմ դուրս գալ, սկսեց կողոպտել Ադիլջեվազի, Մուշի դաշտի և Ախլաթի շրջաններում ապրող ռայաներին, կոտորել իր ձեռքը ընկած թույլերին, աղքատներին և այրիներին։ Նա [Շահը] չորան դարձած, քշել-տարել էր իր ձեռք բերած [թալանած] ոչխարները, բեռնակիր ձիերը, եզներն ու կովերը։ Կարսի բերդը, որ վաղուց ավերակ էր, բուերի և ագռավների բնակավայր էր դարձել. Նրա նորոգության համար երջանկահիշատակ փադիշահը որոշ միջոցներ հատկացրեց։ Բասենի Միր-լիվա Զյուլղադերլու Ալի բեյի կողմից ուղարկված մի քանի շարագործներ խաբեությամբ հարձակվել էին [բերդի վրա]՝ կողոպտել և կոտորել։ Այս բոլորի մասին փադիշահին տեղեկություն հասավ այն ժամանակ, երբ նորոգում էին Վանի բերդը։ Փադիշահը ծովանման բանակով անմիջապես շարժվեց դեպի Ադիլջեվազ։ Սակայն աղվեսանման շահը, որջից-որջ թաքնվում էր, նրանից ու նրա անվան հետքն անգամ չմնաց։ Եվ որպեսզի իր կողոպտած չորքոտանի կենդանիները իսլամական բանակի ձեռքը չընկնեն, այդ կենդանիներին կոտորելուց բացի՝, ուրիշ քաջություն ցույց չտվեց։ Ինչպես վերը հիշվեց, ցրտերը մոտեցած լինելով, շարժվեցին դեպի Դիարբեքիր։ Երբ նրա [փադիշահի] բախտավոր ստվերը տարածվեց Դիարբեքիրի վրա, լուր ստացվեց, որ [կըզըլբաշները] նորից հարձակվել են Երզընկայի և Թերջանի վրա և Արջիշում, Մուշում ու Ախլաթում սկսել են կրկնել աղքատների ու խեղճերի վրա կատարած բռնություններն ու չարագործությունները։ Երբ այս տարատփելի լուրը հասավ փադիշահի Դերգյահը**, վերոհիշյալ վեզիրն [Ահմեդ փաշան] մեծաթիվ զինվորներով ուղարկվեց չարամիտ թշնամիների վրա։*

(«Թարիխի-Փեչևի», հատ., I, էջ 273—274)։

---

* Երզնկա, Ալջավազ և Արճեշ։

** Դերգյահ — բառացի նշանակում է դուռ, դավիթ, բակ. գործ է ածվում փադիշահի ապարանք իմաստով։

Երկրորդ վեզիր Ահմեդ փաշայի դեպի Վրաստան գնալու և նվիրական պատերազմում նրա ունեցած հաղթության ու ավարի մասին

956 թ. (1549)։ Այս ժամանակ Վրաստանի անհավատները (քյաֆիրները) ապստամբել էին։ Երբ այդ ապստամբական շարժման լուրը փադիշահին հասավ, [նրանց վրա ուղարկվեցին] երկրորդ վեզիր Ահմեդ փաշան, Էրզերումի, Կարամանի, Զյուլղադերլուի և Սվազի բեյլերբեյիները և սանջակների բեյերը, ենիչերիների քեթխուդան՝ մի քանի հազար ենիչերիներով, ինչպես նաև «զարիբների վաշտի»[5] աղաները, որոնք նվիրական Շաբան ամսի սկզբին փադիշահի բարձր հավանությանն արժանանալով, ճանապարհ ընկան։ Ամենից առաջ դրավեցին Թորթումի բերդը. մեծ կռվից հետո Նեջա և Էմիրախոր բերդերը հանձնվեցին։ Ակչա-կալան գրավեցին կռվով, Բեփկերդը, Էշրեղը, մյուս Ակչա-կալան և այլ 15 բերդեր էլ ենթարկվեցին ու հպատակվեցին։ Հետո հարձակում գործեցին Դիվանե դավառակի (նահիյե) վրա, որն արծվատես և կաքավի պես թեթևաշարժ անթիվ երիտասարդ զազիների որսը դարձավ։ Հետո նվաճեցին Փերթքերի բերդը, երկու այլ բերդերի հետ միասին։ Դադ-էլի գավառն իր բարեշեն գյուղերով միացվեց փադիշահական երկրներին։ Վերոհիշյալ գավառում գտնվող բերդերից 15-ը պահպանվեցին, իսկ մնացածները հողին հավասարվեցին։ Հետո Թորթումը, Թելխիսը, Ակչա-կալան, Դիվանե-դերեսին մի առանձին սանջակ կազմեցին և այդ սանջակը շնորհվեց էմիրներից մեկին։ [Բանակն] այստեղից ապահով ու ավարով վերադարձավ և նվիրական Զեվվալ ամսի 2-րդ օրը միացավ կայսերական բանակին։ [Հաղթանակով] վերադարձողները փադիշահի կողմից բարձր աստիճանների, կայսերական շնորհումների և նվերների արժանանալով՝ անհավատների (քյաֆիրների) շրջանում ընտրյալ և բարձրադիր դարձան։

(«Թարիխի—Փեչեվի», հատ. I, էջ 283—287)։

Մոլորյալ շահը հարձակվում է Ադիլջեվազի, էրջիշի և Ախլաթի բերդերի վրա և այդ պատճառով փադիշահը ձեռնարկում է Նախիջևանի արշավանքին

959 թ. (1551) աշխարհակալ փադիշահն էդիրնե մայրաքաղաքումն էր և պրպտված էր էնգերուսի սահմանի բերդերի վրա իսլամա-*

---

* *Էնգերուս — Հունգարիա։*

կան զինվորները ուղարկելով։ Մոլորյալ Շահը՝ լսելով այդ և առիթը նպաստավոր համարելով, իր բանակով գնացել էր դեպի Վանի սահմանը՝ թալանել-կողոպտել էր Ադիլջևազի, էրջիշի ու Ախլաթի գավառների խեղճերին և պաշարել էրջիշի բերդը։ Բերդի կուսակալը՝ քուրդ էմիրներից Միր-Իբրահիմը, որն իր քաջությամբ Ռուստեմի նման մի ազնվական փահլևան էր, թնդանոթներով, հրացաններով և այլ ռազմական դենքերով կըզըլբաշներին բերդից այնքան էր հեռացրել, որ նրանք կորցրել էին այն գրավելու հույսը։ Այդտեղից շարժվեցին Ադիլջևազի վրա. սրա կուսակալը՝ Միր-Մուստաֆան, որը նմանապես հռչակված էր իր քաջությամբ, բերդի դռները չփակեց, պաշարված զազիներից մի խումբ կազմելով դիմավորեց Թշնամու զորագնդերին և այնպիսի մի ահռելի ճակատամարտ տեղի ունեցավ, որ երկնքում հրեշտակներն անգամ գովաբանեցին և հրեշտակեցին [այդ պատերազմը]։ Այսպիսով զզվելին [Շահը] այս բերդից էլ ետ դարձավ իր նպատակին չհասած ու ջարդված։ Հետո հարձակվեց Ախլաթի վրա, որը մի փոքրիկ բերդ էր և նրա բերդապահները դռնից-դուռ ման եկող թափառականներ էին դարձել։ Սակայն սրանք էլ սպասվածից ավելի ջանքեր գործ դրին։ Այն ժամանակ ստոր Թշնամին դիմեց խարդախության, մի քանի ստահոդ նամակներ գրեց, որոնց մեջ հայտնում էր՝ «Ձեր փադիշահը հեռու է, դուք այս թակարդից ողջ դուրս եկեք ու գնացեք. հակառակ դեպքում մինչև ե՞րբ կարող եք դիմադրել»։ Ոմանք վախենալով, ոմանք էլ արտաքուստ բարեկամություն ցույց տալով՝ բերդից դուրս եկան և հանձնվեցին։ Շահը բոլորին անխնա, կանանց և երեխաների հետ միասին, սրի անցկացրեց և բերդը հողին հավասարեցրեց։ Երբ դրությունն այդպիսի վերջավորություն ունեցավ, էրջիշի բերդում գտնվող զինվորները վատ հարաբերության մեջ լինելով Էմիր-Իբրահիմի հետ, սպանեցին նրան և բերդը հողին հավասարեցրեց։ Կըզըլբաշն եկավ և այդ բերդն էլ հողին հավասարեցրեց։ Հետո Շահի որդին՝ Իսմաիլ-Միրզան մի քանի հազար կըզըլբաշ ռաֆըզիներով* գնաց դեպի Էրզրում։ Սա իր մի երկու զորագնդերը երևան հանեց, իսկ մնացածները թաքցրեց, սպասելով հարմար առիթի, որպեսզի թակարդի մեջ գցի և բռնի իր քաջությամբ հռչակված Իսքենդեր փաշային։ Իսքենդեր փաշան, տեսնելով Թշնամուն, անմիջապես կռվի բռնվեց նրանց հետ և մի քանի կըզըլբաշների գետին թավալեց։ Երբ փադիշահին հայտնեցին Ախլաթում և էրջիշում տեղի ունե-

---

* Ռաֆըզի՝ շիա դավանանքին պատկանող կրոնական հերձված։

ցածի մասին, նա անմիջապես որոշ թվով ենիչերիներ և էմիրներ նշանակեց էրզրումի սահմանների պաշտպանության համար...»:

Ձմեռը վրա է հասնում, բերդում ապրելու հնարավորություն չլինելով, Իսքենդեր փաշան զինվորների մի մասին արձակում է: Մնում են գրեթե միայն էմիրները. թշնամին հաղթում է սրանց, ոմանք «նահատակվում» են, ոմանք գերի ընկնում: Փադիշահը գարնան արշավանքի է պատրաստվում: Անադոլուի մի շարք միրիմիրանների և այլ իշխանավորների հրամաններ են տրվում պատրաստվելու: Երբ Պարսից Շահը իմանում է փադիշահի արշավանքի նախապատրաստության մասին, պատգամավորություն է ուղարկում սուլթանի մոտ և առաջարկում՝ հաշտություն կնքել: Փադիշահը մերժում է այդ առաջարկը և գարնանը դուրս է գալիս արշավանքի:

Հաջորդ հատվածներում տալիս ենք փադիշահական այդ արշավանքի մի քանի «դրվագները»՝ Երևանում, Նախիջևանում և Ղարաբաղում Թուրքական բանակի կատարած բարբարոսություններն ու գազանությունները: Փեչեվին այդ բոլորը նկարագրում է «գեղարվեստական» լեզվով, իբրև օսմանյան հաղթական բանակի սխրագործություններ: Պատմագիրը ցինիկորեն տալիս է այդ շրջաններում կատարված անսահման թալանի, կողոպուտների և ավարի նկարագիրը, այդ թվում նաև անթիվ «սիրելկան աղանների» և «սիրուհի աղջիկների և հարսների» գերումը փադիշահական բանակի կողմից:

Երևանի, Ղարաբաղի և Նախիջևանի կողոպուտն ու թալանումը

961 թ. (1533) վերջապես հասան Շորագյալ կոչված մենզիլը և այնտեղ իջևանեցին: Այս երկիրը շատ բարեշեն է եղել, ունեցել է ճշակված հողերով հարուստ բազմաթիվ գյուղեր: Երկիրը լեռնային է: Հաղթական բանակը քանդեց ու ավերեց այդ բարեշեն գյուղերը, շինությունները ոչնչացրեց և հողին հավասարեցրեց: Այնտեղից բանակը շարժվեց դեպի Շարաբխանե կոչված վայրը, այնուհետև Նիլ-Ֆրակ կոչված մենզիլը և ապա՝ Երևան քաղաքը, որն Աջեմների երկրի հոգին է: Նիլիրական Շաբան ամսի 17-ին իջևանեցին [Երևանում]: Շահի, նրա որդու և մի շարք անվանի խաների և սուլթանների հոյակապ և գեղազարդ պալատները, պարտեզներն ու այգիները, մասնավորապես «Սուլթանական բաղ» անունով հայտնի դրախտանման այգին, բոլորը կրակի տվին, այրեցին և հողին հավասարեցրին, 23-րդ օրն անցան հայտնի Արփաչայ գետը, այդ շրջանում էլ ամեն ինչ կողոպտեցին և ավերեցին: Այս մենզիլում Դիարբեքիրի բեյլերբեյին՝ պատահելով մի խումբ կըզըլբաշների, վատաղի կռիվներ տվեց, հետո կըզըլբաշներից մի քանի գերի և

կտրված գլուխներ բերեց։ 24-րդ օրն իջևանեցին էրսի [Արասի] եզերքին գտնվող Կարահիսար կոնաքում։ Կարամանի ղեամեթից և այլ զինվորական խմբերից ոմանք, որոշ հեռավորության վրա մի քանի գյուղեր են տեսնում, հարձակվում ու կողոպտում են. պարզվում է, որ մի քանի հիմար կրզրլբաշներ թակարդ են լարել. նրանց էլ որոշ վնաս հասցնելուց հետո, 25-րդ օրը մտան Ղարաբաղ կոչված երկիրը, որն իր լեռներով և հարուստ այգիներով շատ հայտնի մի գավառ էր Աջեմի երկրում։ Անսպասելի կերպով երկիրն այնպիսի մի փոշով ծածկվեց, որ մարդը-մարդուց չէր կարելի ջոկել, լուսավոր ցերեկը մութ գիշերվա վերածվեց։ Այս գավառի բնակչությունն այն աստիճան ցրվել և ոչնչացվել էր, որ մարդու հետք անգամ չերևաց։ Սակայն գտնվեցին որոշ տեղերում պահված և քարայրներում թաքցված գանձեր ու զանազան ապրանքներ, բանակն անսահման հարստություններ ու ավար ձեռք բերեց. իսկ հարստությունների մի մասը, որ տանելու հնարավորություն չկար, կրակ տվին ու այրեցին։

27-րդ օրը հասան Նախիջևանի դաշտը։ Հաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերը այն աստիճան ամայացել, ավերվել և բուերի ու ագռավների բնակավայր էին դարձել, որ տեսնողներին սարսափ էին պատճառում։ Որսի և ավարի ծարավ «աթ-օղլանները» և այլ զինվորներ հարձակվեցին շահի և նրա որդու պալատների և բնակավայրերի վրա՝ կողոպտեցին թաքցրած հարստությունները, ավերեցին, քանդեցին, քարքարի վրա չթողին։ Բացի այդ, 4—5 օրվա տարածության վրա գտնվող Ճանապարհի բոլոր գյուղերն ու ավանները, դաշտերն ու շինությունները այն աստիճան քանդեցին ու ավերեցին, որ շինության և կենդանության հետքն անգամ չմնաց։ Աջեմի երկրում մեր բանակն ամբողջ ժամանակ հաղթող և տիրապետող հանդիսացավ։ Սպանված ու վիրավորված կրզրլբաշների թիվն ու քանակը հայտնի է միայն բարձրյալն Աստծու։ Բացի այդ՝ անսահման էր նաև թալանված ու կողոպտված բազմատեսակ թանկագին ապրանքների քանակը։ Արտաքինից արծաթի նման մարմին ունեցող նորաբողբոջ սիրեկան տղաների, նորահաս և վարպանման երես ունեցող քնքուշ ու մատղաշ աղջիկների, աննման և չքնաղ գեղատեսիլ ու մանկամարդ հարսների թիվն հորինող գրիչս անգամ անկարող է արտահայտել։ Ոչ մի արշավանքում բանակն այս աստիճան հարստություններ ձեռք չի բերել։

---

* Աթօղլաններ—ձիապաններ։

Չկար մի վրան, որի մեջ գտնվող սիրեկան և սիրուհիների թիվը երեքից պակաս լիներ. հնգից, տասից ավելի ունեցող վրաններն անթիվ էին։ Մուշի դաշտում, Ախլաթում և շրջակայքում [կըզըլբաշների] ցանած չարագործության սերմերը հասունացան, հնձվեցին և խառնելով թույնի հետ, արյան փոխարեն, արյուն խմեցին»։

Հետո փադիշահն իր «հաղթական» բանակով վերադառնում է և իջևանում քանդված Բայազետ բերդի մոտ։ Շահից գրություն է ստացվում, որով նա հաշտություն է խնդրում։ Փեչեվին տալիս է այդ մասին փոխանակված գրությունները։ 962 թ. (1564) Թուրքիայի և Իրանի միջև կնքվում է խաղաղության դաշնագիր։ 985 թ. (1577) վերսկսվում են թուրք-պարսկական պատերազմները։ Պարսկաստանում Շահ-Իսմայիլին հաջորդում է նրա եղբայրը՝ Մուհամմեդ-Խուդաբենդեն՝ անգրագետ և անընդունակ մի անձնավորություն։ Այս հանգամանքը հարմարվում է հարմար առիթ «Քշնամուց վրեժ լուծելու համար»։ Սկսվում է արշավանքի պատրաստությունը. 986 թ. Ներգար Կարա-Մուստաֆա փաշան մեծ բանակով Ստամբուլից դուրս է գալիս՝ ձևացնելով, թե գնում է մի շարք վրացական անհնազանդ իշխաններին հպատակեցնելու։ Երբ բանակն իջևանում է Արդահանում, լուր է ստացվում, որ Թոքմաք խանը մեծաթիվ զորքով ուզում է արգելել իսլամական բանակի վրաստան մտնելը։ Հատուկ գրությամբ Շահին առաջարկվում է հրաժարվել այդ մտքից և հետ նահանջել դեպի Պարսկաստան։ Հետո Փեչեվին նկարագրում է Զըլդըրի դաշտում տեղի ունեցած մեծ հակառամարտը, որը վերջանում է թուրքական բանակի փայլուն հաղթանակով։

Պատերազմական գործողությունները փոփոխակի հաջողություններով շարունակվում են 10 տարուց ավելի։ Օսմանցիները գրավում են գրեթե ամբողջ Անդրկովկասը։ Այդ դեպքերի հետ կապված նյութերը Փեչեվիից թարգմանում ենք գրեթե առանց կրճատումների։

Մեծ պատերազմը Զըլդըրի դաշտում

986 թ. (1578) Ջեմազիյել-ախըր ամսի 5-ին Արդահանից շարժվելով [օսմանյան] բանակը իջևանեց Վեփլե բերդի մոտ, որը հեշտությամբ նվաճեց. դրանից հետո, երկու լեռան միջև գտնվող և բարձր ժայռի վրա կառուցված Ենի-Կալա բերդը գրավելու համար, դիրք բռնեցին նրա շրջակայքում։ Բարձրյալն Աստուծո օգնությամբ մեծ կռվից հետո, դեռ երեկո չեղած, բերդը գրավվեց։ Իմացվեց, որ ատոր Սերդար Թոքմաք-խանը, Իմամ-Կուլի խանն ու Կարա-խանը 30 հազար ընտրյալ կըզըլբաշ զինվորներով եկել և Զըլդըրի բերդի ու մի բարձր լեռան վրա դիրք են բռնել։ Իսլամ զազիներից 40—50 մարդ շրջակայքը հետախուզելու ժամանակ բնկնում են կըզըլբաշ զորա-

գնդերի ձեռքը և քաջաբար կռվում։ Երբ Սերդարն իմանում է այդ, նրանց վրա է ուղարկում առաջապահի պաշտոն ունեցող Դիարբեքրի բեյլերբեյին՝ Դերվիշ փաշային։ Սա մի աննման հերոս և դյուցազն երիտասարդ էր։ Նա առանց հաշվի առնելու թշնամու քիչ կամ շատ լինելը՝ հետապնդած զինվորներին դադար չի տալիս։ Զորագնդից իր հետ առնելով 300—400 զինվոր, քաջաբար կռվում է, հետապնդում է երկու կըզըլբաշ զորագունդ ու ստիպում նրանց նահանջել։ Սակայն կըզըլբաշները նորից ոգեշնչվում են և մի նոր գնդով հարձակվում նրա վրա, նրանց հաջողվում է 30-ից ավելի անվանի աղաներին սպանել և փաշային էլ ձիուց վայր գցել։ Սակայն փաշայի մարդիկ հարձակվում են կըզըլբաշների վրա, 200 մարդ սպանում և նրան նորից ձիու վրա բարձրացնում։ Դրանից հետո փաշան իր ձեռքով երեք կըզըլբաշ է մորթում և հետապնդում կըզըլբաշ զորագնդերը։ Ի վերջո վիրավորված, ձիուց ընկնում է, սակայն հեծյալ մարտիկի հատուկ ճարպկությամբ տեղում կայմ ու պատրաստ կանգնում է... Մինչ այդ Սերդարն [օգնություն] է ուղարկում Օսման փաշային։ Օսման փաշան նմանապես այս կռվում շատ մեծ հերոսություններ է կատարում։ Հետո հասնում են նաև էրզրումի բեյլերբեյի Բահրամ փաշան և Մեվլիթար-զադե-Ահմեդ փաշան։ Առավոտից մինչև երեկո այնպիսի կատաղի մարտեր են տեղի ունենում, որ երկնքում հրեշտակներն անդամ հիանում և զովաբանում են։ Աստուծո կամքով, անձրևն աչք բանալ չի տալիս, բացարձակապես ոչ-ոք թնդանոթի կամ հրացանի ձևոք չի դիպցնում։ Միայն սուսերամարտ է տեղի ունենում։ Վերջապես մայրամուտի մոտ, կըզըլբաշների վերջապահը խորտակվում է և 5—6 հազար կըզըլբաշների գլուխներ տեղն ու տեղը նիզակների վրա են ցցվում, իսկ նրանց կեղտոտ դիակները գետին թափվում։ Իսլամ զաղիներն այնքան ձիեր, ջորիներ, այնքան վրաններ, բեռներ և զանազան իրեր են ձեռք բերում, որ դրանց քանակը հայտնի է միայն բարձրյալն Աստուծո։ Հաջորդ օրը Սերդարի դիվանն են բերում արյան մեջ թաթախված կըզըլբաշների գլուխները։ Նա [Սերդարը] հրամայում է հաշվել. հաշվում են ճիշտ 5 հազար գլուխ։ Այդտեղ են բերում նաև ողջ գերի բռնված 500 անվանի և հայտնի կըզըլբաշների, որոնց նույնպես գլխատում են։

Մեծուջեիր-Իրնի-Քեյխուսրեվի* հնագաղությունը

Վերոհիշյալ իշխանը 600 ինված ազնաուր ընկերներով, հաղթական կողմից օգնության ստանալու հույսով եկել և լեռան հետից դիտում էր, թե ո՞վ պիտի հաղթի և ո՞վ պիտի հաղթվի։

Ծանոթանալով Բորքաք խանի դրության հետ, նա առավոտյան վաղ եկել հասել էր Սերդարի պատկառելի վրանը (օթաղը)։ Այդ պահին մխրմխրանները և մխլխլանները Սերդարի դիվանն են բերում իրենց պինվորների մոտ դտնվող կըզըլբաշների գլուխները և գլխիկոր շղթայված ծներին. փողերի և թմբուկների ձայնն արտահայտում էր [կըզըլբաշների] պարտությունը, իսկ իսլամ զազինները զբաղված էին ողջ բերված կըզըլբաշներին պնդատելով։ Եկող ազնաուրները տեսան Թշնամու այդքան մոտ գլուխների գետնի վրա թափվելուը, որը լավ օրինակ և խրատական հանդիսացավ [նրանց համար]։

(«Թարիխի—Փեչեվի», հատ. II, էջ 39—42)։

Զըլդըր բերդի, Թոմմաք բերդի, Խրթեզ (Խերվիս) բերդի և Ախալքալաքի բերդի գրավումը

Վասեմ Սերդարը Արզահանի առնջակին միրլիվա նշանակված Աբդուրահման-բեյին ուղարկեց հնազանդեցնելու և հպատակեցնելու վերոհիշյալ բերդերը։ [Այդ բերդերի] բնակիչները գլուխ խոնարհեցին և հպատակվեցին։

Փադիշահի կողմից գրավված բերդերի վրա նշանակվեցին կառավարիչներ։

Թիֆլիս բերդի գրավումը

Նույն թվականին, [986] Ջեմազիյել-ախըր ամսի 20-ին իսլամական զինվորները մոտեցան վերոհիշյալ [Թիֆլիս] բերդի դուգահեռականին։ Նրա տերը՝ Դավիթ խանը, որը Վրաստանի մելիքներից հայտնի մի իշխան էր, նախապես հպատակություն ցույց տալով, թագ էր դրել և առաջվա նման իր երկրում տիրություն էր անում։ [Դավիթը] լավ գիտենալով, որ չի կարողանալու դիմադրել իսլամական բանակի հարձակմանը, թողնելով իր երկիրը, բոլոր ռայաններով բերդից փախել էր և ապաստանել դժվարանցանելի լեռ-

---

* *Մեսխեթիայի իշխողն է։*

ներում: Վերոհիշյալ բերդը [Թիֆլիսը] և նրա շրջակայքը թողել էր անմարդաբնակ և ավերակ դրության մեջ: Վասիմ Սերդարն այդ էյալեթը (վիլայեթը) նվիրեց Կաստեմունիի սանջակի բեյին՝ Սոլաք-Ֆերհադ փաշա-Ջադե Մուհամմեդ փաշային, բոլորին [ժողովրդին] արձանագրեց իբրև «կուլ», լրացրեց անհրաժեշտ ռազմական պաշարները և կարգավորեց ամեն ինչ:

Լեվենդ խանի* որդի Ալեքսանդրե խանի հպատակությունը

Նույն թվականին [Սերդարը] դուրս գալով Թիֆլիսից՝ անցավ Քուր գետը և երրորդ մենզիլում՝ իջևանեց Կափուր** գետի ափին: Այդ ժամանակ Ջեքեմ և Քուխմ*** երկու մեծ քաղաքների և Վրաստան երկրի մի քանի այլ վայրերի հայտնի իշխանը**** հանդիսացող՝ Վրաստանի մելիքներից ավագ և անվանի Ալեքսանդրե խանի կողմից հավատարմատար մարդիկ եկան և Սերդարին ուղղված համակրանքի նամակներ բերին. այդ նամակներով [Ալեքսանդրեն] հայտնում էր, որ ինքը երկրի ավագանին իր շուրջը հավաքելով, անվանի ազնվականներից գնդեր է կազմել և պատրաստվում է գալ կայսերական բանակը: Բոլոր իսլամական պինվորները, փադիշահական մեծահոգության և նամուսին համապատասխան, կատարյալ փառքով և պատվով դիմավորեցին նրանց. իսկ երբ նրանք եկան իր հաղթանակներով հռչակված Սերդարի վրանը [Ալեքսանդրեին] մի քանի ձեռք խոսքի, իսկ մնացած մարդկանց՝ իրենց աստիճանին համապատասխան նվերներ շնորհվեցին: Իբրև տուրք տարեկան 30 բեռ մետաքս, 10 սիրական տղա (ղուլամ), 10 բարեկազմ կույս աղջիկ, 10 վայրի բազե, (որսի համար) և 10 ոչ-ազնվացեղ հաջինբալաբան (?) տալու պայմանով, [Ալեքսանդրեին] իր երկրի վրա բեյլերբեյլիի տիտղոսով իշխելու մասին սուլթանական հրովարտակ շնորհվեց:

Շեմի բերդի գրավումը

986 թ. (1598), երբ Ալեքսանդրե խանը հպատակություն ցույց տվեց, նրան հանձնարարվեց Շեքի բերդի գրավումը: Դրա հա-

---

* Լեվենդ — պետք է լինի Լևան:
** Կափուր — Ալազան գետը (այդպես էին անվանում պարսիկները):
*** Քուխմ — հավանաբար Գրեմ (Կախեթիայի քաղաքներից է):
**** Բնագրում — էմիր:

մար ուղարկվեցին զինվորական մասից 200 սիփահի* և էմիր-ներից՝ Միրզա-Ալիբեյն ու Լազոս-Ահմեդ բեյը: Այս հնագույն երկիրը նրա [Ահմեդ բեյի] հայրենիքն էր, որի հայտնի առյուծներից և դայլերից էր ինքը: Բայց նրանց ճանապարհի վրա գտնվող Կընըք գետի խիստ հորդած և տղմոտ լինելու պատճառով՝ մի քանի օր ուշացան: Հետո հարմար առիթ գտնելով գետն անցան և պաշարեցին Շեքիի բերդը: Բարձրյալն Աստուծո բարերարությամբ նրանք բերդը գրավեցին փադիշահական պետության համար: Իր հոր այդ ծառայության փոխարեն Լևլենդի որդին Առաքել-Միրզան նշանակվեց այդ էյալեթի իշխողը: Հետո [բերդի համար] բերդապահ և կադի նշանակվեց. ուրիշ այլ կարիքները լրացնելուց հետո, բերդը կցվեց փադիշահական երկրին:

Երկրորդ պատերազմը ընդդեմ էմիր խանի և Քեմրահանի

986 թ. հաղթական Սերդարը, հետապնդելով Թշնամուն, գնաց դեպի Շիրվան և կանգ առավ Կարուր և Կընըք գետերի միջև: Այդ ժամանակ նա իմացավ, որ Թոքմաք խանը և նրա հետ միասին հաղթված Քեմրահանը՝ իսլամական զինվորներից վրեժ լուծելու հիմար ցանկությամբ ասրված՝ պատերազմական պատրաստություններ էին տեսնում, Շահից խնդրել և արտոնություն էին ստացել, որ Թավրիզի խանը՝ իբրև քաջ և կարող իշխան, իրենց համար Սերդար նշանակվի: Իսկ էմիր-խանը և Նախիջևանի իշխան Շերիֆ խանը, ընդամենը 7—8 կըզըլբաշ սերասքեր, 20 հազարից ավելի զինվոր հավաքելով, Կոյուն-Քեշիդի կոչված գետն անցնելով, հանդիպել են իսլամական բանակի արոտավայրում արածող ուղտերի և այլ անասունների: Երբ այս լուրը հաղթական Սերդարին հասավ, նա անմիջապես նրանց վրա ուղարկեց Հալեբի բեյլերբեյի Մուհամմեդ փաշային և Զյուլղադերլուի բեյլերբեյի Մուստաֆա փաշային: Սրանք տեսան, որ [կըզըլբաշները] մի քանի զորագնդեր կազմած պատրաստվել են կռվի: Բացի էմիր խանից, մնացած բոլորն անցել էին հայտնի Կոյուն-Քեշիդի գետից, իսկ էմիր խանը իբրև հետապահ, մի քանի գնդերով սպասում էր անցքի մոտ: Երբ իսլամական զինվորները տեղ հասան, անմիջապես քաջարար կռիվ սկսեցին և թշնամուն բոլորովին աչք բաց անելու հնարավորություն չտալով, նրա վրա հարձակվեցին: Սակայն նրանք էլ հաստատ և անհողդողդ մնացին և շարունակեցին կռիվը իսլամական զինվոր-

---

* *Սիփահի — հեծելազոր:*

ների դեմ։ Վերջ ի վերջո, բարձրյալն Աստուծո օգնությամբ, իսլամական զինվորները կըզըլբաշ զինվորների երեսները ետ դարձրին և գետանցից անցնող բոլոր զորագնդերը խորտակեցին։ Մեր զինվորներն ուժեղ հարձակում գործելով նրանց վրա՝ մի երկու հազար կըզըլբաշ զինվորների գետին գլորեցին, մնացածներն իրենց կյանքը փրկելու միջոցներ փնտրելով, շտապեցին անցնել գետանցից։ Սակայն իրարանցման պահին, չկարողանալով գտնել գետի ծանոթ անցումը, որի սարսափից շատերը գետը թափվեցին և նրա անանցանելի տեղերում խեղդամահ եղան։ Միայն Էմիր խանը կարողացավ ազատվել մահից իր զորագնդերով միասին, որովհետև նա գետը չէր անցել. [կըզըլբաշներից] նրանք, ովքեր իրենց հագուստները թողնելով կարողացան գետն անցնել ու ազատվել, շատ գոհ մնացին այդ փրկության համար։

Շամախիի իշխող Էրս (Աւրաս) խանի և Շեբիի Ահմեդ խանի պարտության մասին

Վերոհիշյալները [խաները] իրենց աստիճանակից և մոտիկ 7—8 կըզըլբաշ մարդկանց հետ միասին և 12 հազարի չափ կրոնի թշնամի [իրանական] զինվորներով գնում են Էմիր խանին օգնելու։ Պատահական կերպով հասնում են բարձր մի վայր, որտեղից կարողանում են հեռվից դիտել, թե ինչպես Էմիր խանը պարտվում է իսլամական բանակի դեմ մղած մարտում*։ Պարզվում է, որ Շիրվանի սյուննիները, լսելով կըզըլբաշների պարտությունը, գնում են նրանց հետապնդելու և տեսնելով նրանց փախուստը, անմիջապես կռիվ սկսում նրանց դեմ։ Կըզըլբաշները մեծ խուճապով ու իրարանցումով մի հսկա կամուրջից անցնելիս են լինում, երբ կամուրջը նրանց ծանրության տակ խորտակվում է և նրա վրա գտնված բոլոր կըզըլբաշները գետն են թափվում և խեղդվում, իսկ ետ մնացածներին էլ կոտորում են Շիրվանի սյուննիները։

Էրշի** բերդի հիմնադիրների մասին

Երբ իսլամական բանակը եկավ վերոհիշյալ քաղաքը, այնտեղ սննդամթերքի մեծ պակասություն էր զգացվում։ [Բանակի] զինվորները՝ խմբով գալով Սարդարի մոտ, անվայել լեզվով էին խոսել։

---

* Խոսքը վերաբերվում է նախորդ հատվածում նկարագրված պատերազմին։

** Էրշ — հավանաբար Արեշ (Արաշ)։

Արդարև, գարին վեց ոսկով, ալյուրը 11 ոսկով և ամեն մի կերակուրի համար ամենաանհրաժեշտ պարենը՝ երկու ոսկով չէր ճարվում։ Իսկ երբ [բանակը] եկավ էրշ [Արեշ] քաղաքը, զինվորներն որոշ չափով շունչ քաշեցին և հանգստացան, ամեն մեկն իր համար մեկ ամսվա, մինչև անգամ 40—50 օրվա պաշար հավաքեց։ Այստեղ անհրաժեշտ գտան մի բերդ կառուցել։ Քաղաքի մոտ Շահ-Բաղի կոչված մի հիանալի այգի կար՝ ամուր պարսիպներով, որի բոնած տարածությունը բավական էր 20—30 հազար զինվորների բնակության համար։ Երբ այս բանը պարզվեց, միաձայն որոշեցին այդ վայրը բերդի վերածել։ Բոլոր ծառերը կտրեցին և մի շաբաթվա ընթացքում կառուցեցին մի մեծ ամրակուռ բերդ՝ երեք դռներով, ընդարձակ ու խոր խանդակով (փոս) և մի քանի մեծ աշտարակներով։ Բերդի բնակերբեցիի պաշտոնը տրվեց Քեյծոս բեյին, որը Սարուխանի սանջակում վալի էր եղել։

Բաբ-էլ-էբվաբ, այսինքն Թեմուր-Կափու բերդի* գրավումը

986 թ. (1578), երբ այդ երկրում ապրող այուննիները իմացան, որ հռչակավոր Սերդարն իր բանակով նվաճել և իր իշխանության տակ է առել Շիրվանի երկիրը, «մոլորյալ» Շահի կողմից վերոհիշյալ բերդի վրա [Թեմուր-Կափու] իշխող նշանակված Ջըրաղ-Խալիդե անունով անձնավորությանը բռնել ու բանտարկել էին և նրա մարդկանցից 300-ի չափ կըզըլբաշների՝ գլխատել։ Դրանից հետո երկու հազարի չափ այուննիներ՝ կապույտ և սև կալպակներով (գլխարկով), նետ ու աղեղաձգության մեջ հերոսությամբ հայտնի երիտասարդներ, հատուկ դիրքով կայսերական բանակին եկան, նրանցից ազնվատոհմները խալաթներ ստացան, իսկ մնացածներն իրենց սպասածից ավելի պատվի և նվերների արժանացան։ Այստեղ խավարամիտ Ջըրաղի ոճրագործ կյանքին վերջ տրվեց և այլ սպանվածների հետ միասին հանգստարանում թաղվեց։

Օսման փաշան վեզիրի պաշտոնով մնում է Շիրվանի էյալերում

Շիրվանի երկիրը կցելով Օսմանյան պետությանը՝ անհրաժեշտ համարվեց այդ երկրի պահպանության գործը հանձնել քաջարի մի անձնավորության։ Զինվորներից մեծերն ու փոքրերը և առ-

---

* Կասպից ծովի արևմտյան եզերքում գտնվող Դերբենդը, պատմության մեջ հայտնի է նաև Բաբ-էլ-էբվաբ (դռների դուռ) և Թեմուր-Կափու (երկաթյա դուռ) անուններով։

հաստրակ բոլորը լիովին համաձայն էին, որ այդ պաշտոնը տրվի էոզբեմուր փաշայի որդի՝ Օսման փաշային։ Վերջինս վեզիրության և սարդարության տիտղոսով նշանակվեց Շիրվանի կառավարիչ, իշխանության կենտրոնը Թեմուր-Կափու բերդը լինելու պայմանով։ Վեզիրին տրամադրվեցին հազար ենիչերի և «ոչոճէջի վաշտի»[7] աղաներին ու բավական քանակությամբ կափուկուլիներ[8], 60-ից ավելի թնդանոթ և զարբազան, 900 արկղ ռազմամթերք, ինչպես նաև բերդում մնացող կուլերի վեց ամսվա ռոճիկը։ Բացի այդ՝ նորից 3 հազար կուլեր գրի առնվեցին և հարկի ենթարկված ցեղերի թիմարի տերերից 10 հազարի չափ պահակներ նշանակվեցին։

Շիրվանի վիլայեթի ուենցվածքը գրի առնելու մասին

Վերոհիշյալ վիլայեթի դեֆթերդարությունը* տրվեց Քեմեչզադե-Մուստաֆա-Չելեբիին, իսկ կրզըլբաշների սեփականության տարեկան եկամուտը 247 և կես բեռ ակչե լինելու պայմանով, արձանագրվեց կայսերական դեֆթերում։ Ջալ-Մուհամմեդ-Չելեբին նշանակվեց այդ երկրի մարդահամարի պաշտոնին։ Դեֆթերում արձանագրվեցին՝ Շամախիի բեյլերբեյիին—700 հազար ակչե խասով, 14 սանջակի բեյերն իրենց իրավունքի համաչափ խասերով, և ամեն մի սանջակը համապատասխան զեամէթ և թիմարներով, իսկ ընտրյալ դյուզերը, արձանագրվեցին իբրև կայսերական խասեր։ Թեմուր-Կափու էյալեթին նույնպես՝ ըստ նվիրական կանոնի՝ խասեր տրվեցին, իսկ էմիրներին, զեամէթ և թիմարտերերին էլ, ըստ օրենքի՝ դյուզեր։ 7 սանջակ-բեյերին խասեր նշանակվեցին։ Դաղստանի իշխող էմիր-Շամխալին և նրա եղբայր Թուջելու բեյին էլ նմանապես մի սանջակ տրվեց իբրև արփալըք**։ Օսման փաշան հատկապես Դաղստանի իշխանների հետ բարեկամություն և միություն պահպանելու նպատակով, ամուսնացել էր վերոհիշյալի աղջկա հետ, այդ աղջկան էլ մի լավ սանջակ տրվեց իբրև արփալըք։ Դաղստանը ընդարձակ մի երկիր լինելով, նրա մի շարք իշխողների անուններ չեն հիշատակվել. դրանց թվին են պատկանում Կումուքի, Կյուռեկի և Թիզսեմ-

---

* Ֆինանսական բաժնի վարչություն։

** Արփալըք — պետության կողմից իշխանավորներին փոդով կամ ենջքով տրված թոշակ (հատկացում)։

գանեի իշխողները, որոնք այս անգամ Օսման փաշային հպատակություն հայտնեցին և ենթարկվեցին։ Հանգուցյալ Օսման փաշան, այդ խաթունին իր հետ Ստամբուլ էր տարել, որտեղ նա հոշակվել էր իր գեղեցկությամբ։ Այդ ժամանակվա գրասերները «Դաղստանի գեղեցիկը» վերնագրով երգեր էին հորինել և քառյակներ էին կազմել, մի երկու տարվա ընթացքում երգիչների և արտասանողների բերանում մշտապես հիշվում էր նրա (գեղեցկուհու) անունը։ Հետո Բոսնիայում խեղդված հանգուցյալ Հասան փաշան, փադիշահի Ֆերմանով հիշյալ գեղեցկուհուն կնության էր վերցրել և իր հետ միասին տարել Բոսնիա։*

(«Թարիխ—Փեչեվի», հատ. II, էջ 42—50)։

Իսլամական զինվորների ձմռանն էրզրում գնալու մասին

*Երբ իսլամական զինվորները հասան Թիֆլիսի շրջակայքը, Կասբմին**, երկու օր էր մնացել։ Սակայն ձմեռն իր ամբողջ ուժով սկսվել էր և ցուրտն ու սառնամանիքը այն աստիճանի խիստ էին, որ մի քանի հազար վրաններ քամուց պատառ-պատառ էին եղել և խորտակվել. բուն Կասբմի գիշերն այնպիսի մի ձյուն տեղաց, որ վրանների մեծ մասը ձյան տակ թաղվեց և դրա հետևանքով այդ վայրում մի քանի հազար մարդիկ մահացան, իսկ մնացածները մեծ դժվարություններով կարողացան էրզրում մտնել՝ նվիրական Ռամազան ամսի 21-ին։*

Իսլամական բանակը դուրս գալով Սկյուդարից, մենզիլից-մենզիլ անցնելով, մինչև էրզրում հասնելը 134 օր ճանապարհ էր անցել։ Դրանից հետո զինվորներից ոմանց կըշլաք, ոմանց էլ արձակուրդ տրվեց։ Բոլորի կարիքներն էլ բավարարվեցին լիովին։

Իսլամական բանակի վերադարձից հետո, Շիրվանի երկրում տեղի ունեցող դեպքերի մասին

Օսման փաշան իր տրամադրության տակ գտնվող բազմաթիվ զինվորներով էրշի դիմաց, գետի վրա մի ամրակուռ և մեծ կամուրջ կառուցեց, անցավ այդ կամուրջով, կողոպտեց ու թալանեց Դարբաղի և Մուղանի ժողովուրդներին, և նրանց բազմաթիվ ավե-

---

* *Խաթուն — հարգելի կին, տիկին։*

** *Կասբմի օրը — համապատասխանում է նոյեմբեր ամսվա 8-ին, որը քաո ժողովրդական տարեցույցի համարվում է ձմեռվա սկիզբը։*

րումներ պատճառեց ու անսահման ամարով իր երկիրը վերադարձավ։

(«Թարիխի—Փեչեվի», հատ. II, էջ 51—52)։

Կայսերական արշավանքը Մուստաֆա փաշայի վեզիրության և սերդարության երկրորդ տարում

986 թվականի (1578) գարնանը, Ջեմազիյել-էվվել ամսին իսլամական զինվորները, կայսերական ֆերմանով նորից հավաքվեցին էրզրումի գավառում։ Այս նվիրական տարում Անատոլուի բեյլերբեյի Ջաֆեր-փաշան, Շամի բեյլերբեյի՝ Մեծ վեզիր Ջելիլ-Մուհամմեդ փաշայի աչքի լույսը՝ Հասան փաշան, հրամանատարելու կայսերական արշավանքին մասնակցելու՝ իրենց էյալեթի զինվորներով։ Նրանք եկան և հիշյալ վայրի [էրզրումի] գավառում հավաքվեցին։ Այդտեղից մեկնելով Ջեմազիյել—ախըր ամսի երկրորդ օրը իջևանեցին և Կարսի դաշտում ձեռնարկեցին Կարսի բերդի կառուցմանը ու Աստուծո կամքով նույն ամսվա վերջին ավարտեցին։ Հրաշագործ և բարեգործ դասից մի անձնավորություն, մի օր տեսնում է, որ մի լուսափայլ փիր է երևան գալիս, որն ասում է. «Ինձ անվանում են էբու-էլ-Հասան-Հարքունի, ես ապրում եմ այս վայրում, եթե նշան և ապացույց եք ուզում, ահա իմ ոտքերի տակ մի խոր փոս կա» (և ցույց է տալիս այդ վայրը)։ Այդ անձնավորության մասին հայտնում են վեհմաշուք Սերդարին և ցույց տված վայրը փորում են։ Ինչպես ասված էր, գտնում են այդ խոր փոսը և այնտեղ մի գեղեցիկ ուխտատեղի են կառուցում։ Շուտով այս ուխտատեղում անձրևի պես սկսվում են թափվել դիրհեմներ** և դինարներ***, ինչպես նաև ողորմություններ և զոհաբերություններ, որոնց շնորհիվ օգնություն են ստանում մեծ թվով աղքատներ։ Այդ հնագույն հրաշքի դեպքը, Ռումելիի բեյլերբեյի Մուհամմեդ փաշան արաբերեն գրի է առել և պատմության համար փորագրել մի մարմարյա քարի վրա։ 548 թ. Մելիք-Իզեդդին փադիշահի վեզիրը՝ Ֆիրուզը, այդ բերդը նորոգել է. այդ գործում նրան օժանդակել և օգնել է մի հայանի և համեստասիրտ խաթուն [տիկին], Բենդեյի-Քերիմեդդին անունով։ Այդ ծանր քարը մինչև հիմա*

---

* *Փիր — կրոնական ազանդի, կամ օրդենի գլխավորը, դեկավարը։*

** *Դիրհեմ — հին արաբական արծաթյա փող — մոտ մեկ ֆրանկ արժեքով։*

*** *Դինար — հին ոսկե փող։*

էլ դրված է Կարսի բերդի մի վայրում և այդ հնագույն հուշարձանը պահպանվում է։

Թիֆլիսի բերդի պաշարումը և պաշարվածների կրած նեղությունները

Երբ իսլամական բանակն էրզրում եկավ, Թիֆլիսի բնակչությունից մի քանի անգամ օգնություն խնդրող գրություններ ստացվեցին, որոնցով նա [բնակչությունը] հայտնում էր իրենց կրած նեղությունների մասին։ Չնայած միջոցներ ձեռք առան, սակայն հնարավորություն չեղավ սննդամթերքներ ուղարկել։ Կրզլբաշներն իմացան նրանց ծանր դրությունը. Իմամ-Կուլի խանը 10 հազար զինվորով եկավ և լրիվ չորս ամիս շարունակեց [Թիֆլիսի] պաշարումը։ Պաշարվածների մոտ ցորենի քիլեն 10 հազար, գարու քիլեն 8 հազար ակչեով էր ծախվում, երբեմն այդ գնով էլ չէր ճարվում և մոտ էր սպառվելու։ Մի ուղտ ծախվեց 20 հազար ակչեով, ի վերջո շան ու կատվի միս կերան, մինչև անգամ մի շուն ծախվեց երկու հազար ակչեով։ Այս տանջանքների և զրկանքների պատճառով, բերդում մնացել էր միայն 700 մարդ։ Այդ ծանր դրության մեջ, նրանք ամեն ջանք գործ դրին և չնայած [թշնամու կողմից արված] խոստումներին և պնդումներին, բերդը չհանձնեցին. հետո Սերդար Մուստաֆա փաշայի միջոցով [պաշարվածներին] առատ սննդամթերք ուղարկվեց։ Դրանից հետո մի քանի անգամ ևս պաշար ուղարկեց և այդ կերպով թշվառներին կյանք պարգևեց։ Թեև պաշարի որոշ մասը ընկավ վրացի քյաֆիրների ձեռքը, այնուամենայնիվ դրանց մի մասն էլ իսլամներին հասավ։ Հետո Մեծ վեզիրը դարձյալ մեծ քանակությամբ սննդամթերք հայթայթեց և իր աչքի լույս ու սրտակից, Հասան փաշային Սերասքեր նշանակեց։ [Հասան փաշան] սպասվածից ավելի հերոսություն ցույց տալով 16 օրվա ընթացքում եկավ և հասավ [Թիֆլիս]։ Տարօրինակն այն է, որ փաշան երկու օր առաջ իր հորից նամակ էր ստացել, որով (հայրը) հայտնում էր, թե՝ «Գիտեմ Թիֆլիսին սննդամթերք հասցնելու գործը ֆերմանով քեզ պիտի հանձնարարվի, հակառակություն մի ցույց տա, իմաստությամբ շարժվիր, նախապես լավ պատրաստվիր և հետո գնա։ Այդ ծառայությունը ընդունիր իբրև պետական կարևոր և նշանակալից գործ»։ Այս գրության մասին ինքը [փաշան] պատմել էր իր մոտիկ մարդկանց։*

---

* *Քիլե — հացահատիկի չափ, որը հավասար է մոտավորապես 40 լիտրի։*

Իսլամական գինվորների կողմից Երևանի երկիրը կողոպտելու մասին

Երբ կառուցում էին Երևանի բերդը, Թոքմաք խան կոչված ատոր արարածը, իր մի վաշտ ավազակներով հարձակում էր գործում երբեմն պաշար տանողների, երբեմն էլ խոտի գնացողների վրա: Ջնայած դրան, Աստուծո օգնությամբ բերդի շինությունը ավարտվեց: Իսլամական ժողովրդի դժվարին հարցերը լուծող իսլամի նվիրական շեյխերը, կըզըլբաշների երկրի ավերման, կողոպտման, նրանց բնակչության և զավակների գերության մասին նվիրական ֆեթվա են տվել, որը երևում է հետևյալ հարց—պատասխանից.

Հարց — Շարիյաթով թույլատրվո՞ւմ է ծագումով հայ մի անձի իրև գերի ծառայեցնելը:

Պատասխան—Կարելի է, եթե ոճիր չունի:

Հարց — Քանի որ մեծ իմամներից պատմված ավանդության համաձայն, կարելի է գերի վերցնել պատերազմի չմասնակցող, իսլամական կրոնը թողած, այլակրոն դարձած կնոջը [մյուրթեդդե] և եթե կըզըլբաշների կանանց գերի դարձնելը կատարյալ ուժ և արիություն է տալիս իսլամական զինվորներին, իսկ թշնամուն կատարյալ թուլություն և ստորություն պատճառում,— Շարիյաթը թույլատրո՞ւմ է վարվել համաձայն այդ ավանդության:

Պատասխան — Թույլատրում է:

Հարց — Շարիյաթով թույլատրվո՞ւմ է գերի վերցված կանանց հետ միասին, գերել նաև նրանց փոքրահասակ երեխաներին, որոնք անկարող են կրոնը հասկանալ:

Պատասխան — Կարելի է:

Բարձր կարողության տեր Սերդարը, կըզըլբաշների երկրում առաջնորդվելով այդ ֆեթվայով, գիշերային հարձակումներ գործեց և հետամուտ եղավ կողոպտելու և հափշտակելու: Անատոլուի բեյլերբեյի Ջաֆեր փաշան ֆերմանով Սերդար նշանակվեց և Երևանի կողմն ուղարկվեց, նրան ուղեկցեցին երեք բեյլերբեյիներ իրենց զինվորներով: Նրանք [ուղարկվածները] ասում էին. «Երևանի երկրում իշխող Թոքմաք խանը, որը կողոպտում է ձիարած տղաներին և բանակի բեռնատարներին, թող տեսնի թե այդ բանը [կողոպուտը] լա՞վ է»: Այսպես ասելով նրանք սկսեցին կողոպտել և թալանել Երևան քաղաքն ու երկիրը: Այնտեղի [Երևանի] բոլոր ոսկեզօծ և գեղեցիկ կառուցված պալատներն ավերվեցին

և գնանին հավասարվեցին, գեղազարդ և ոսկեփայլ կամարներն ու ծածկերը (չարդախ) խորտակվեցին և 20 հազարից ավելի կանանց ու երեխաների գերի տարան։ Դրանից հետո իսլամական բանակը, մեծ ավարով ուրախ տրամադրությամբ կայսերական բանակատեղը հասավ։

(«Թարիխ—Փեչեվի», հատ., II, էջ 56—59)։

Սերդար երկրորդ վեզիր Սինան փաշայի դեպի Թիֆլիս կատարած ուղևորության մասին

(988 թվականին—1580 թ.)

Երբ կայսերական բանակի Սերասքերը փադիշահական կնիքին արժանացավ, նա իր մենզիլից մեկնելով անցավ մի շարք մենզիլներ և իջևանեց Թիֆլիսի մոտ։ Թիֆլիսի բեյլերբեյիի մասին որոշ դժգոհություններ կային։ Վրաստանի էյալեթի բեյերից ամենից ավելի խելացի Գյորգի-բեյը, որը հպատակություն էր հայտնել նախորդ Սերդարին, այս անգամ իսլամություն ընդունելով, Սերասքերի կողմից Թիֆլիսի էյալեթի [կառավարիչ] նշանակվեց՝ ստանալով Յուսուֆ փաշա անունը։ Վերոհիշյալ մենզիլներում կըզըլբաշ պինվորները հարձակումներ էին գործում իսլամական բանակի պինվորների և իոտ ու պաշար տանողների վրա։ Այդ ժամանակ լուր ստացվեց, որ «մոլորյալ» շահը պատրաստվում է 60 հազարանոց բանակով իսլամական բանակի վրա հարձակվել և նրա փառքն հռչակված Սերդարը դուրս էր եկել շրջակայքը ուսումնասիրելու, հռչակված Սերդարը դուրս էր եկել շրջակայքը ուսումնասիրելու որպեսզի որոշի թե, կըզըլբաշը ո՞ր կողմից պիտի երևա։ Այդ ժամանակ Զեքեմի իշխանը՝ Լեվենդ խանի որդի, Ալեքսանդրե խանը, որն այդ վայրում տեսակցել էր նախորդ Սերդարի հետ, [Սերդարի մոտ] եկավ և հայտնեց իր կարծիքը։ Նախորդ Սերդարը, որ մի պատկառելի փիր էր, նրան չէր հավատացել։ Այժմ լուր էր ստացվել, որ սա [Ալեքսանդրե խանը] մի ինքնահավան երիտասարդ է և նրան չի կարելի վստահել։ Երբ ստոր ոայյաններից մի երկու դժբախտ մարդ տանում էին Շահի կողմից Ալեքսանդրեին ուղարկված նամակները, պինվորների կողմից բռնվում են։ Նամակները բանակում կարդացվում են։ Եվ որովհետև հարցը վերաբերում էր իսլամական բանակի դեմ թակարդ լարելուն, Սերդարը արտաքուստ ոչինչ ցույց չտալով, կտրուկ միջոցներ ձեռք առավ և բանակը տեղից չշարժեց։

Բայց և զգուշության տեսակետից այդտեղ մնալն էլ նպատակահարմար չհամարեց։ Հաջորդ օրը Բայրամ փաշան նշանակվեց բանակի առաջապահ, որն իր զորամասով մի մենզիլ առաջ շարժվեց, իսկ ինքը [Սերդարն] իր ուղղությունը հակառակ կողմը դարձրեց, այսինքն զգուշության ճանապարհը բռնեց, սակայն գլխավոր ճանապարհից չշեղվեց։ Բայրամ փաշայի հետ գնացողները մի այն նամազի ժամանակ կարողացան տեղեկություն ստանալ Սերդարից և շտապ կերպով շարժվելով, հազար նեղություններով կարողացան նրա բանակատեղը գտնել, բայց այդ խավար գիշերին կողոպտվեցին և շատ մեծ վնասների ենթարկվեցին։ Ինչքա՞ն երևելի գեամէթի տերեր և հայտնի չավուշներ* Վրաստանի քյաֆիրներին գերի ընկան և ինչքա՞ն էլ այդ պատճառով կյանքի շնորհից զրկվեցին։ Այդ մենզիլից մեկնելով գնացին դեպի Մենուչեհրի երկիրը։ Նրանց նպատակն էր մի օր առաջ բնակություն հաստատել Կարսի դաշտում, այնտեղից զինվորներ ուղարկել Աջեմների երկիրը կողոպտելու, ավերելու համար։ Այդտեղից գնացին մի անտառոտ վայր։ Վրացի ավազակների ոչ մեկի աչքին քուն չեկավ և ոչ ոք մի ժամ անգամ հանգիստ չունեցավ։ Վերջապես մի երկու օրից բնակություն հաստատեցին Կարսի դաշտում։ Ստամբուլից տրված հրամանի համաձայն պետք էր գնալ Թավրիզը նվաճելու։ Դրա համար էլ ամեն ոք հավաքեց իր սննդամթերքն ու պաշարը։ Մի քանի օր հետո լրտեսները տեղեկացրին, որ Շահն եկել է Արփա-չայիր կոչված վայրը։ Սակայն լսելով իսլամական բանակի Սերդարի հերոսություննների, լավագույն պատրաստությունների մասին, հետ է գնացել։ Իր փառքով հայտնի Սերդարն այս առթիվ շատ ուրախացավ և «մի քանի մենզիլից թշնամու իր առջևից փախչելն էլ բավական է» ասելով, այդ խնդրից հրաժարվեց։

(«Թարիխի—Փեշևի», հատ. II, էջ 66—68)։

Ինչպես նախապես հիշվից, Շիրվանի էյալեթին միրլիվա էր նշանակված Ջալ-Մուհամմեդ բեյը։ Կըզըլբաշներն օգտվելով նրա միամտությունից և անհեռատեսությունից, կեղծ հաշտության առաջարկով, հարձակվել էին և իսլամական բանակից շատերին կոտորել։ Այս պատճառով սուլթանական ֆերմանով, դեպի Շիրվան են ուղարկվում զինվորական մեծ ուժեր։ Քեֆեյի բեյլերբեյին՝ Ջաֆեր

---

* Ջավուշ — Սուլթանի կամ պետական հիմնարկությունների ծառայության մեջ գտնվող հատուկ սպա։

փաշան նշանակվում է Սերդար, որը 990 թվականին Քեֆեից իր բանակով շարժվում է դեպի Թեմուր-Կափու: Պատմագիրը հաջորդ կետում նկարագրում է իսլամական բանակի ուղևորությունը դեպի Շիրվան:

Քեֆեից դեպի Թեմուր-Կափու, Կիչակի դաշտի մենգիլների և կայանների մասին

Քեֆեից դուրս գալով, չորրորդ օրը նրանք հասան Կերչի նեղուցը, որտեղից անցնում են Ազաքի (Ազովի) ծովից Սև ծովը հոսող ջրերը. [նեղուցի] լայնությունը մոտ 20 մղոն է. այդ տարածությունը նավերով 15 օրում դժվարությամբ կարողացան անցնել: Այդտեղից չորրորդ օրն եկան Տամանի դաշտում գտնվող Թեմրեք բերդի մոտ, 5-րդ օրը հասան Կուբան կոչված մեծ գետը. այստեղ չերքեզները լաստեր էին սարքել և [գինվորները] ամեն մի ձիուն հինգ, իսկ սայլերին՝ 12 ակչե փող վճարելով գետն անցան: Այդտեղից 4-րդ մենզիլում հասան Չերքեզների վիլայեթում Քեմրեքի կոչված երկիրը: Տեղական չերքեզներն այնպիսի գողեր են, որ հագուստ չմնաց, որի թև ու քղանցքը չկտրեն: Սրանք մարդու աչքից սուրման անգամ կհանեն: Նրանք ակչեի և ոսկու մասին գաղափար չունեն: Պատմում էին, որ մեկը (մի չերքեզ) 40—50 ոսկի է գտել և տվել է ուրիշին երկու էնդազե* կտավի դիմաց: Այստեղ աղավնու ձվի մեծության կարկուտ տեղաց, որի պատճառով շատ ձիեր խրտնեցին, ձիավորները ցած ընկան: Այդտեղից մեկնելով հասան Հեյհաթ կոչված դաշտը, սա անբլուր, անձոր, անծայրածիր մի դաշտ է, նրա խոտերը մետաքսի են նմանում. այստեղ այծյամները խումբ-խումբ թափառում են, ամեն երկու քայլի վրա մեծ քանակությամբ այծյամի եղջյուրներ են թափված, ...քանի օրում անցնելով այդ անծայրածիր դաշտավայրը, հասան մի գետեղերք: Այնտեղից հինգ օրից հետո հասան Բեշ-Թեփե կոչված վայրը, այնտեղից մեկնելով հինգերորդ մենզիլում իջևանեցին Բերք կոչված գետի եզերքում, որը պրախատանման մի վայր է... այնտեղից եկան Կրթայ կոչված վայրը, ուր չերքեզ բեյերն եկան Թերեք ու Կրթայ գետերի վրա ութ տեղերից կամուրջներ կապեցին, որոնց վրայից բանակն անցավ և երեք օրում հասավ Շամխալի վիլայեթը: Այստեղից մեկնեցին դեպի Թեմուր-Կափու, ուր հասան 80 օրում: Օսման փաշան և Շիրվանի զորքը նրանց դիմավո-

---

* Էնդազե — հին չափ (երկարության), որ մոտավորապես հավասար է 5 սանտիմետրի:

բեցին. մեծ ուրախություն և հանդեսներ տեղի ունեցան։ Մի քանի օրից հետո սկսեցին կշռաքի պատրաստություններ տեսնել, ոմանք մտան թիվտանների մեջ, ուրիշներն իրենց վրանները ծածկեցին մացառներով։ Կենդանիների համար թիվտաներից հյուղակներ շինեցին։ Ուրիշներն էլ սրջեր փորեցին և մեջը մտան, ամեն մեկն ըստ կարելվույն իր պաշարը պատրաստեց, սակայն հացահատիկը պակաս էր, ցորենն ու դարին 200-ով [ակչեով] չէր ճարվում. մարդիկ ստիպված եղան բրինձ ուտել և անասուններին էլ բրինձ ուտեցնել։

(«Թարիխի—Փեչեվի», հատ. II, էջ 77—78)։

Հաջորդ մասում մանրամասն նկարագրվում է 991 թ. Օսման փաշայի և Իմամ-Կուլի խանի միջև տեղի ունեցած կատաղի պատերազմը։ Այս պատերազմում կըզըլբաշները պարտվում են. պատմագիրն ասում է, որ 7500-ից ավելի գլուխներ կտրվեցին, «որոնցից Սերդարի հրամանով մի աշտարակ կառուցեցին»։ Փեչեվին հիշում է նաև հետևյալ բնորոշ երևույթը՝ «Կռվի եկող կըզըլբաշները մեծ մասամբ իրենց կին ու երեխաներով էին եկել։ Նպատակն այն է, որ տղամարդը՝ կնոջ և երեխաների ներկայությամբ ավելի լավ կռվի։ Իսկապես նրանք (կըզըլբաշները) կռվում թուլություն ցույց չտվին, սակայն Աստուծո ողորմությամբ հաղթության քամին իսլամների կողմից փչեց»։

Վրաստանի մի քանի իշխանների գերումը և Շամախի բերդի կառուցումը

Անհավատ Սերասքեր Իմամ-Կուլի խանը նամակներ էր ուղարկել Վրաստանի իշխաններին և առաջարկել, որ նրանք մասնակցեն պատերազմին։ Այս վերջիններն եկել էին այն ժամանակ, երբ Իմամ-Կուլի խանը պարտվում էր։ Նրանք [վրացի իշխանները] Կուբանի նահանգում ճանապարհները չիմանալով ընկել էին լեռները։ Այդ շրջանի ժողովուրդն ամբողջությամբ ավազակներ են. կեղծ բարեկամություն ցույց տալով, եկող վրացիների մեծ մասին կոտորել էին, նրանց ունեցվածքը թալանել, նրանց բեյերից երկուսին և 15-ի չափ հայտնի շների ոտքերը կապած տարել էին։ Դրանից հետո սպանված վրացիների անթիվ գլուխները նիզակների ծայրը ցցած, եկան Սերդարի վրանը։ Վաեմ Սերդարը [Օսման փաշան] անմիջապես դրանց [գլուխները] ուղարկեց Ջեքեմի իշխան Լեվենդ խանի որդուն և հայտնեց՝ «Այն պահին, երբ դուք երջանիկ փադիշահին հարկատու եք, ինչի՞ է նման այս վարմունքը» և խիստ կերպով հանդիմանեց։

Պատերազմից հետո իջևանելով Շափուրա կոչված քաղաքի պիմացը, մի քանի օր հանգստացան. այնտեղից անցնելով մեն-

պլից-մենղիլ հասան Շամախի քաղաքը։ 991 թ. (1583), Ջեմազիյել-էվվել ամսի 15-ին ձեռնարկեցին բերդի կառուցման աշխատանքներին և 45 օրվա ընթացքում վերջացրին։ Նրանից հետո Վրաստանի և Դաղստանի երկրներում կարծես կրակ ընկավ. ամեն կողմից բեյերը բազմատեսակ արմատաններով (նվերներով) դիմումներ կատարելու գործում իրար կանխել էին ուզում. նրանցից ամեն մեկն աչքի զարնող մարդկանց իբրև պատգամավոր ուղարկում էին [Սերդարի մոտ]... Դրանից հետո բարձր վեզիրը ցանկանալով տեսնել Բաքվի բերդի շրջանում գտնվող նավթահանքերը, իր հետ վերցրեց որոշ քանակությամբ զինվորներ, գնաց դեպի Թեմուր-Կափու ու այնտեղ մեծ ուրախությամբ անցկացրեց նվիրական առնը։

(«Թարիխ—Փեչեվի», հատ. II, էջ 82—83)։

Երևանի բերդի և նրա ենթակա բերդերի կառուցումը

991 թ. (1583) իսլամական բանակն անցնելով մենղիլից-մենղիլ հասավ Երևանի երկիրը [քաղաքը] և այնտեղ իջևանեց։ Այդ փաշայի ժամանակ այս կողմերում արշավանքներ էր կատարվել, երկրի մեծ մասը կողոպտվել ու ավերվել էր։ Սակայն մի երկու տարվա ընթացքում այդ բոլորը վերակառուցեցին, ավելի լավ, քան առաջ էր։ Ոչ մի ավերված տեղ չթողին. շրջակայքում գտնվող գյուղերը վերածվեցին մի-մի քաղաքի կամ գյուղաքաղաքի (կասաբա), որոնց բնակչությունը 300—400 տնից պակաս չէր։ Շահ-Կուլի խանի որդին՝ Մուհամմեդ խանը, որը հետո հռչակվեց Թոքմաք խան անունով, ռայաների նկատմամբ ցույց էր տալիս մեծ արդարադատություն և լավ վերաբերմունք. նա իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում խոտակցությամբ և զվարճությամբ։ Երբ նա տեղեկացավ, որ իսլամական բանակը մոտենում է, շփոթվեց և իրեն կորցրեց։ Երբ արդարադատ Սերդարը մտավ վերոհիշյալ քաղաքը [Երևանը], նա անմիջապես ձեռնարկեց բերդի կառուցման աշխատանքներին։ Թոքմաք խանի պալատը մեջտեղ առնելով, նրա շրջակայքում կառուցեց մի լայն և ամրակուռ պարիսպ։ Այդ աշխատանքներն ավարտեց 45 օրում։ Այդ բերդի բեյլերբեյիության պաշտոնը տրվեց Վանի նախկին բեյլերբեյի Ջըղալե-Զադե-Յուսուֆ-փաշային, որը հանգուցյալ սուլթան Սյուլեյմանի հարզելի կնոջ խնամքի տակ մեծացած և իր հերոսությամբ հռչակված մի անձնավորություն էր։

Երևանի բերդի կառուցումից հետո տեղի ունեցած դեպքերի մասին

Վերոհիշյալ էյալեթում պետանի և կարևոր բերդերից Շորագյալի անձնակազմը և անհրաժեշտ կարիքները լրացնելուց հետո մեկնեցին դեպի Կարսի բերդը և այնտեղից՝ Կարա-Արդահան: Այս բերդերի անհրաժեշտ պաշարներն ու դանձարանն առատորեն ապահովեցին և Դիարբեքիրի բեյլերբեյլիի միջոցով Թիֆլիսին պաշար ուղարկեցին: Նրանք ողջ ու ապահով վերադարձան, որից հետո ձմեռը մոտեցած լինելով, շարժվեցին դեպի Արևելք, այսինքն դեպի երջանիկ Էրզրումի բերդը և կըշլաքի պատրաստություններ տեսան: Այս նվիրական տարում իսլամական բանակը հանգիստ և ապահով ժամանակ անցկացրեց: Ոչ Թշնամու վախ զգացին, ոչ էլ մթնքի պակասություն: Ապրեցին կատարյալ առատության և հանգստության մեջ:

Լոռիի և Գորիի գրավումը

993 թ. (1585) գարնանը, կայսերական բանակի արշավանքի համար նախատեսված իսլամական զինվորները հավաքվեցին: Վեզիր Սերդարը գրավեց Լոռիի բերդը, նորոգեց, նրա բոլոր կարիքները լրացնելուց հետո բեյլերբեյի նշանակեց: Հետո այդ կողմերում, այսինքն Վրաստանի սահմանում գտնվող բոլոր բերդերին, ըստ իրենց կարիքի, մեծ թվով կուլեր նշանակեց, որտեղ անհրաժեշտ էր նորոգեց և ոչ մի պակասություն չթողեց:

Մեծ վեզիր Մուհամմեդ փաշայի որդի՝ Հասան փաշայի արշավանքը և կողոպուտները

Նույն թ., երբ Հասան Գորիի բերդը, վերոհիշյալ Հասան-փաշային միացան՝ Սիվասի և Ռումելիի բեյլերբեյի՝ Մեծ վեզիր Սինան փաշայի որդին Մուհամմեդ փաշան, Կարամանի բեյլերբեյի մյուս Մուհամմեդ փաշան իրենց զինվորներով: Կայսերական բանակում քաջարի զապիներին* իրավունք տրվեց դիշերային հարձակումներ կատարելու: Սրանք Գորիից երեք-չորս մենզիլ տարածության վրա արշավանքներ կատարեցին, անսահման քանակու-

---

* Իսլամական բանակի այն զինվորները, որոնք կրոնի պատերազմում հաղթել են, կոչվում են «զապի»:

թյամբ ավար և գերիներ վերցրին, մինչև անգամ 5 հազար տուն ուլուաներ գերի վերցնելով իրենց հետ տարան։ Նրանց ձեռք բերած և թալանած թանկագին ապրանքներն անհաշիվ էին։

Իսլամական վիճակների Թիֆլիս հասնելը և Ալեքսանդրե խանից տուրքեր առնելը

Իսլամական զինվորները կողոպուտով և թալանով հարստանալուց և բավարարվելուց հետո, դնացին դեպի Թիֆլիս. այստեղ իրենց կարիքները և պաշարները հոգացին ըստ ցանկության. նրանք վերցրին նույն Լեվենդի որդի Ալեքսանդրե խանին պարտադրված տուրքը՝ 30 բեռ մետաքս, մի քանի երիտասարդ տղա և աննման գեղեցիկ աղջիկներ, ինչպես նաև մի քանի վայրի բազե և բալաբան (?)։ Հիշյալ Ալեքսանդրե խանն իրեն համարում էր շնորհքի տեր անձնավորություն։ Մինչև անգամ բանաստեղծ Հաֆիզ-Շիրազի Ալեքսանդր Մեծի մասին գրած նշանավոր ոտանավորը՝

Ոչ Խրզըրի կյանքն է մնում, ոչ էլ
Իսքենդերի մյուլքը,
Այս ատոր աշխարհի վրա ինչո՞ւ ես
վիճում, ո՛վ դերվիշ!

իրեն էր վերագրում։ Ընդհանրապես քյաֆիրների լեզվում Իսքենդերին Ալեքսանդրե են ասում։ Այս աստիճան երևակայության մեջ ընկնող մի անձնավորություն էր նա։

(«Թարիխի—Փեչևի», հատ. II, էջ 86—89)։

Այնուհետև Փեչևին նկարագրում է Թուրք-պարսկական պատերազմի հետ կապված հաջորդ դեպքերը։ 993 թ. (1585) օսմանցիները նորից գրավում են Թավրիզը և կոտորում բնակչությանը։ Հետո ձեռնարկում են բերդի վերակառուցմանը։ Շրջակայքի ժողովրդին բերում և բնակեցնում են քաղաքում։ Օսմանյան օրենքով գրի են առնում 80 հազար տուն. բայց գրանցումից հետո մի այդչափ էլ վերաբնակեցնում են։ Քաղաքում կար 19 ջամի, որոնք բոլորը կառուցված էին գունավոր, բազմաոճազարդ և գեղեցիկ քարերով, 21 հիանալի բաղնիք՝ գեղեցիկ շատրվաններով, 200 բարվանսարա, 12 հազարից ավելի խանութ, լավ զարդարված շուկաներ և բազմաթիվ պարտեզներ ու այգիներ, որոնցից ամեն մեկը գրախտի էր նմանում։ Այդ այգիներում կային գեղեցիկ և հիանալի քյոշկեր, ամեն մի քյոշկում բազմաոճազարդ և գեղեցիկ նստարաններ, պարսկական ոճով

---

* *Ուլուս — ժողովուրդ, տոհմ, ցեղ։*

հաստցված ավազաններ և ցնցուղներ։ Սրանք բոլորը հիացմունքի առարկա էին հանդիսանում... Թավրիզում մնացած ամակավաթիվ գինվորները ննջարկվում են պաշարման։ Քաղաքում պաշարի մեծ պակասություն է առաջանում։ Քաղաքը պաշարում է շահի որդին՝ 30 հազարանոց բանակով. շնայած իրենց կրած մեծ նեղություններին, օսմանցիները դիմադրում են և հարձակումներ գործում։ Բերդում երանք ունեին 150 թնդանոթ։ Պաշարումը տևում է մի տարի. կռիվները լինում են խիստ կատաղի։ Յարհատ փաշան պաշարվածներին օգնության է հասնում ու բերդի քանդված մասերը նորոգում։ Զորամասեր են ուղարկվում կըզըլբաշներին կազապատելու և կոտորելու համար։ Գինվորներ են ուղարկվում Վրաստանի կողմերը, նախօրոք հպատակություն ցույց տված [իշխաններից] տուրքեր հավաքելու, որոնց թվում գտնվող Լևվնդ խանի որդին Ալեքսանդրն իսկույն հանձնում է իր տուրքերն ու նվերները։ Տուրքերը ստացվում են նաև Նենգամիա Սիմոնից... Սերդարն առանց հանդիսա առնելու, ամեն կողմ զորամասեր է ուղարկում։ Կըզըլբաշներից նոր գրավված Բհամուր-Կափուի, Շիրվանի, Թիֆլիսի, Երևանի բերդերի պաշարները և կարիքները լրացվում են։ Ձմեռելու համար քաշվում են Էրզրում։

995 թ. (1586) պարսիկներն հաշտության առաջարկ են անում, Սուլթանը համաձայնվում է. բայց այդ խաղաղությունը շատ կարճատև է լինում։ Նույնով վերսկսվում են պատերազմական գործողությունները։ 998 թ. (1589) Ջաֆեր փաշան կըզըլբաշների դեմ սկսում է մեծ ռազմական գործողություններ։ Պարսկական գահին տիրացած Շահ-Աբբաս 1000 թ. (1591) Թուրքերի հետ կնքում է հաշտության պայմանագիր՝ Թավրիզը, Ակրբիջանը, Շիրվանը, Վրաստանը Օսմանյան պետությանը անցնելու պայմանով։ Սակայն որոշ ժամանակից հետո, պարսիկները նորից խախտում են խաղաղության պայմանագիրը, գրավում Թավրիզը և Նախիջևանը։ 1013 թ. (1604) գրավում են նաև Երևանի բերդը։

Երևանի բերդի գրավումը 1013 թվականին (1604)

Երբ դևլքերն այս կերպ դասավորվեցին, «մոլորյալ» շահը, Թավրիզի երկրում [շրջանում] գտնվող բուրդ ժողովրդին խոստումներով սիրաշահեց և իր շուրջը հավաքեց։ Վրաստանի իշխաններից Աղեքսանդրն իսանի որդին՝ Լևվնդ խանը և Սիմոնի որդին՝ Լևասար* խանը իրենց գինվորներով նրա [շահի] մոտ եկան։ Շահը գնաց և Երևանը պաշարեց։ Պաշարումը շարունակվեց 9 ամիս և տասը օր, մի քանի անգամ ակամներ փորեց և հարձակումներ գործեց, բերդի շուրջը վեց հատ «Ցրան» թնդանոթ ձուլել տվեց, որոնցից ամեն մեկը 90 օկկա բարեր էր արձակում։ Տեղական մուսուլմանները, ջրաղացի** կարիք ունենալով, բերդում ընկնող քարերը օգտագործում էին ձեռաղացների համար։ Ամեն մի քար ծախվում էր

---

* Լևասար — Լուարսաբ

** Համանուշտար ուզում է ասել երկանաքար։

ներք դուրուշով։ Բայց պաշարված զորիններն ուժեղ և ձիու միս ուտելով հիվանդացել էին, շատերն անուժ ու անշարժ ընկել էին։ Մի օր անիծյալները [պարսիկները] մուսուլմաններից գաղտնի նորից ական էին դրել. մի քանի հազար կըզըլբաշներ առավոտյան վաղ երևացին ներքին և արտաքին բերդերի միջև. այդ պահին արտաքին բերդում գտնվող անպատրաստ և շփոթված մուսուլմաններին վրա հարձակվելով մի վայրկյանում սրով 1800 մարդ գետին փռեցին։ Իսկ երբ իսլամական բանակի սերդար Սահաքի փաշայի մահվան լուրը տարածվեց, իսլամական զինվորների ձեռքն ու ոտքը կապվեց։ Տասը օր հետո ներքին բերդն էլ հանձնեցին։ Շահը Շերիֆ փաշային մեծ հարգանքներ և պատիվներ տվեց և նրան նշանակեց Իմամ-Ռիզայի մյութևելիության** պաշտոնին. Շերիֆ փաշան մինչև իր կյանքի վերջը, նշանակվելու կամ հեռացվելու հոգսից ազատ, ժամանակ անցկացրեց։ [Շահը] մնացած զինվորներին ասաց՝ «Ով ուզում է, թող ինձ կով լինի, ով ուզում է, թող գնա օսմանցու մոտ»։ Մինչև անգամ խղճի փաշայի որդուն՝ Մուհամմեդ փաշային 300—400 տուն, ընտանիքով և երեխաներով, Շահի մարդկանց ուղեկցությամբ ապահով կերպով Կարս ուղարկեց։ Իսկ Երևանի բերդը ավերեց, այրեց և հողին հավասարեցրեց։

(«Թարիխի—Փեչեվի», հատ. II, էջ 260—621)։

1014 թվականին (1605) կըզըլբաշները գրավում են Գենջեն և Շիրվանը

Նույն թվականին մոլորյալ Շահը շարժվեց Գենջեի վրա։ Գենջեի բեյլերբեյին՝ Մուհամմեդ փաշան յոթ ամիս պաշարված մնաց։ Գիշեր և ցերեկ անդադար կռվեց, բայց է վերջո, երբ պաշարվածներն օգնություն ստանալու հույսը կորցրին «ամանով»*** հանձնվեցին։ Հետո Շահը շարժվեց Շիրվանի վրա, որը նմանապես յոթ ամիս պաշարված և անօգնական մնալով՝ հանձնվեց։ Մոլորյալ Շահը չնայած «ամանն» տվեց, սակայն իսլամական զինվորների կեսից ավելին կոտորեց։ Նույն դավաճանությունը կատարեց նաև Գենջեի զինվորների նկատմամբ։ Տասը-տասներկու տարում իսլամական զինվորներն այս կերպով ոչնչացվեցին և այդ անկրոնն (Շահը) ամենքի վրա հաղթություն տարավ, որի հետևանքով պարզ կերպով երևան եկան նրա բռնություններն ու անգթությունները։

---

* Դուրուշ — հին օսմանյան դրամ, լիրայի $^1/_{100}$-րդ մասը։

** Մյութևելի — վաքֆների կառավարիչ։

*** «Աման խնդրել» կամ «աման տալ» նշանակում է ներողություն և գթություն խնդրել կամ նեբել ու գթալ։

1019 թ. (1610) օսմանյան բանակը նորից շարժվում է պարսիկների վրա, գրավում Թավրիզը, որը նախապես դատարկված էր, թուրքերը նորից ավերում և բանդում են Թավրիզը, դրանից հետո պարսիկները նորից հաշտություն են առաջարկում՝ տարեկան 200 բեռ մեսաքս, 100 բեռ ակշայի արժեքով դանազան տպրանքներ տալու պայմանով։ Սակայն պարսիկները երկու տարի հետո հրաժարվում են այդ տուրքերը վճարելուց և խախտում խաղաղության պայմանագիրը։ Օսմանյան բանակը շարժվում և պաշարում է Երևանի բերդը։ Սակայն շահը խորամանկությամբ նորից կարողանում է ազատվել թուրքերից։ Իսլամական բանակը վերադառնում է։

1027 թվականին (1617) Թարար խանը ձովով անցնում և հարձակվում է կրզրլբաշների երկրի վրա

Սրանից առաջ Թաթար խանին հանձնարարված էր թաթարական զինվորներով արշավանքի գնալու կրզրլբաշների դեմ։ Երբ ձովից անցնելու և արշավանքի ձեռնարկելու ժամանակը հասավ, 30 հազարի չափ թաթարական զինվորներ շարժվեցին դեպի Տրապիզոն և դիմեցին Սերդարին, որպեսզի արտոնի նրանց, ուղղակի հարձակման անցնելու կրզրլբաշների երկրի վրա։ Նրանց թույլատրություն տրվեց։ Խանն իր թաթար զինվորներով սկսեց ավերել և քանդել Զոլմայի (?), Գենջևի, Նախիջևանի և այդ կողմերում գտնվող այլ քաղաքներն ու գյուղերը, ոչնչացնել թշնամուն։ Թաթարները 30 հազարի չափ մի քանի տեղից, մեծ քանակությամբ բեռնատար կենդանիներ և անսահման քանակությամբ ապրանքներ գրավելով, մեծ ավարով եկան միացան Սերդարին, որն այդ ժամանակ գտնվում էր Զոլեքի դաշտում. նրանք Սերդարի և բոլորի կողմից մեծ պատվի և հարգանքի արժանացան։

Այնուհետև պատմագիրը մանրամասնորեն նկարագրում է պարսիկների դեմ արշավանք կազմակերպելու հարցում օսմանյան բանակում գոյություն ունեցող տարբեր կարծիքները, հետո թուրքերի արշավանքը, պարտությունը և հաշտության համար տեղի ունեցած երկարատև բանակցությունները։ Վերջապես 1027 թ. (1618) կնքվում է խաղաղության դաշնագիրը նախկին պայմաններով։

1034 թվականին (1624) Վրաստանի Մելիքներից Մավրավը [Մաղրավ] սպանում է Կարչղայ խանին և Վրաստանը հպատակություն է հայտնում

Վերոհիշյալ Մավրավ անունով իշխանն իրեն ընդհանուր Վրաստանի երկրի քեթխուդա՝ Շահ-Աբբասին օգնող և նրան մտերիմ մեծ

իշխան էր։ Որոշ հանգամանքների բերումով Շահը Մավրավին ուղարկել էր Վրաստան երկու-երեք խանի դինվորներով։ Մավրավը դրդված այն ցեղային հակառակությունից, որ Վրաստանը ցույց էր տալիս դեպի Շահը, ուզում էր կըզըլբաշներից վրեժ լուծել։ Նա նպատակավոր առիթ գտնելով, սպանել էր Կարչղային ու նրա հետ եղած խաներին, նրանց դինվորներից մի երկու հազար կըզըլբաշների գլխատել էր։ Նույն տարվա նվիրական Ռամազան ամսի 27-րդ օրը Մավրավի որդին և Վրաստանի մի քանի իշխաններ իրենց հետ վերցնելով Կարչղայի և այլ կըզըլբաշների գլուխները, գերիներ, արնգափողեր և թմբուկներ, ինչպես նաև 200—300 դրոշակներ, կայսերական բանակ եկան։ Նա [Մավրավը] հայտնեց, որ Ալ-Օսմանին ամեն անգամ այսպիսի պատեհություն չի տրվում։ Առանց ուշացնելու և առանց թուլություն ցույց տալու, պետք է, անմիջապես իսլամական բանակով շարժվել և հարձակվել [կըզըլբաշների] վրա։ «Կասկած չկա, որ ամբողջ Ղարաբաղը, Գենջեն, Եէրուն (?), Շիրվանի երկիրը ձեր երևալուն պես, հպատակություն ցույց կտան. նրանք կըզըլբաշներից երես են դարձրել և կարիք չկա հայտնելու, որ նրանք սյուննի-մուսուլմաններ են։ Այդտեղից շատ հեշտ կլինի գրավել էրդեբիլը և Մեշհեդն, ինչպես նաև կըզըլբաշների երկրում կրակ տարածելը։ Դուք բոլորովին կարիք չունեք մտածելու և հոգալու ուղտերի կամ ջորիների, պաշարի, ինդանոթի, ռազմամթերքի և այլնի փոխադրության մասին։ Ինչ որ ցանկանաք, բոլորն այնտեղ պատրաստ է։ Աստված կամքով իսլամական բանակն այնքան մեծ քանակությամբ հարստություն և ավար ձեռք կբերի, որ մինչև աշխարհի վերջը բերնե-բերան պիտի խոսեն այդ մասին»։

Երբ նրանք ներկայացան Հաֆըզ փաշային, ես ներկա էի*։ Մավրավի խնդիրը, նրա բովանդակությունը և նպատակները բանաստեղծական լեզվով, մանրամասն և պարզորոշ կերպով հայտնեցին։

Հանգուցյալ Հաֆըզ փաշան աստղագիտական բնավորության տեր պետական անձնավորություն էր։ Մենք հաճախ ենք նրա բարիքները վայելելու առաջնորդներին արժանացել։ Իմ գրածները բոլորը համապատասխանում են իրականության, թշնամու-

---

* Պատմագիրը փաշային խոսում է իր մասին. սրանից պարզվում է, որ պատմագիրը իբրև պետական պաշտոնյա, հղել է թուրքական բանակում։

թյուն և զրպարտություններ չեն, վկա է բարձրյալն Աստված։ Մալրաւիի մարդկանց վճռական պատասխան չտրվեց։ Նրանք [վրացիները] մի քանի անգամ եկան-գնացին, պատասխան խնդրեցին։ «Կգամ, կամ՝ ոչ» անգամ չպատասխանեց։ Նվաստս շատ ջանքեր գործադրեցի «Այս առիթը մի անգամ էլ ձեռք չի բերվում», ասացի, սակայն նա [Հաֆըզ փաշան] պատասխանեց՝ «Երջանիկ փադիշահը մեզ հանձնարարել է Բաղդադը գրավել, մենք նշանակված չենք Վրաստան և Շիրվան գնալու համար»։ Ես պատասխանեցի նրան՝ «Եթե մեր երջանիկ փադիշահն իմանա, որ Մալրաւիը երևան կգա և եթե նա [փադիշահը] թշնամու շարքերում այսպիսի մի մեծ գժտության առաջանալը հնարավոր համարեր, ոչ միայն ձեզ կնշանակեր, այլ կասկած չկա, որ ինքն անձամբ արշավանքը կազմակերպելու և այդ արշավանքին մասնակցելու հոգնությունը հանձն կառներ։ Մենք փորձառություն ունենք, որովհետև էնգերուսի* արշավանքի ժամանակ, մինչև որ թշնամու շարքերում պատակառում առաջ չեկավ, մենք քյաֆիրներին հաղթել չկարողացանք։ Եթե այս պատեհ առիթը փախցնենք, մինչև աշխարհի վերջը կզղջանք»։ Բայց տեսա, որ բան դուրս չի գա. նրա վերջին պատասխանն այս եղավ՝ «Դուք գնա իմ խառնվածքին (բնավորության) ծանոթ չեք. ես մինչև հաստատ համոզված չլինեմ մի բանում, չեմ ձեռնարկի, մի քայլ անգամ այդ ճանապարհով չեմ գնա»։ Ես պատասխանեցի՝ «Արդյոք մեր մեծ սուլթանները կամ մեծ վեքիլները**, որոնք այնքան հաղթանակների և պատիվների են արժանացել, նախապես վստահ են եղել իրենց հաջողության և հետո՞ են գնացել։ Սերդարները պետք է իրենց շարժման ու գործի մեջ հաստատակամ լինեն և ապավինեն ամբողջովին Բարձրյալն Աստուծո։ Հիմա, երբ դուք նպատակ ունեք գնալ և Բաղդադը նվաճել, վստա՞հ եք այդ գործի հաջողության»։ Նա պատասխանեց՝ «Աստուծո կամքով ես հավատացած եմ և վստահ, ինձ կհաջողվի [Բաղդադի գրավումը], այդ մասին կասկած անգամ չունեմ»։ Իրականությունն այս է. մենք հաստատ համոզված էինք, որ [Պարսկաստանի] նվաճման համար հնարավորություն կա և նպատակավոր առիթը ներկայացել էր, բայց նա [Հաֆըզ փաշան] կուզմնակից էր այդ արշավանքը հետաձգելուն։ Հետո ես դիմեցի ենիչերիների աղային՝ խոսելով Աղային և ասացի. «Եթե դուք անձամբ չեք գնա, այդ գեպքում

---

* Էնգերուս — Հունգարիա։

** Վեքիլ — փադիշահին փոխարինող մեծ վեզիր կամ մինիստր։

չավ պատրաստությամբ մեծաքիվ զորաբանակ ուղարկելու հոգսը տարեք»։ Նա պատասխանեց՝ «Մենք ենթարկվող ենք. մեր Սերդարը ինչ որ հրամայի, պարտավոր ենք այն կատարել»։ Ես այլևս կասկած չունեի, որ նա [ենիչերիների աղան] չէր ցանկանում Հաֆըզ փաշայի հաղթություն շահելը։ Այս պատճառով ամենակարող Աստվածն էլ նրան հաղթություն չշնորհեց։ Հետո իր սերդարության ժամանակ Մաղրավի, իր որդու և 40-ի չափ մարդկանցով մի անգամից այդ չափ սպանություններ կատարելը տարօրինակ բան է։ Եթե շահը հազար բեռ ակչե, կամ ամբողջ մի երկիր էլ տալու լիներ, նա դարձյալ ոչինչ չէր անի։ Սա [Հաֆըզ փաշան] Աստծուց չվախեցավ, արյունից չզդուշացավ և այդպիսի բացահայտ ոճիր գործեց։

Այդ ժամանակ Շահ-Աբբասի իշխանության 40-րդ տարին էր. իրականությունն այս է, որ նա այդ 40 տարվա ընթացքում այդպիսի դժվար և ծանր դրության մեջ չէր եղել։ Մաղրավի պատճառով ամբողջ կըզըլբաշի երկրում նմանը չգտնվող յոթ նշանավոր խաներ նահատակվեցին և Մաղրավի դեմ մղած կռվում ոչնչացան։ Դրանից մեկը՝ Կարչղայն էր, մյուսը՝ Շիրվանի խան՝ Յուսուֆը, մյուսն էլ Էմիր-Գունեն և այլն։

(«Թարիխի—Փեչևի», հատ. II, էջ 403—406)։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մաղրավ կամ Մավրավ—*բնյ, վրաց հայտնի իշխան և ազգային հերոս Գեորգի Սաակաձեն թուրքական պատմության մեջ հայտնի է իբրև Մաղրավ, Մավրավ-բեյ, հետագայում՝ իսլամական կրոնը ընդունելուց հետո՝ Մուհամմեդ-բեյ։*

Մաղրավ-բեյի մասին ինչպես ընդհանրապես խոսում են այդ դարի պատմագիրները, Փեչևին մեծ գովասանքով է պատմում Մաղրավ-բեյի խիզախության ու քաջագործության մասին՝ պարսիկ Կարչղայ-խանի սպանության և նրա բանակի ոչնչացման գործում։ Փեչևիից հետո տարեգիր Նաիման իր «Թարիխի Նաիմայի» մեջ կարևոր տեղ է հատկացնում Մաղրավ-բեյի հետ կապված դեպքերին և մանրամասներն նկարագրում է դրանք։ Նաիման գտնում է, որ Մաղրավ-բեյը մեծ ծառայություն է մատուցել Օսմանյան պետությանը, իսկ Մաղրավ-բեյի սպանությունը սերասքեր Խուսրև-փաշայի կողմից, Նաիմանն համարում է «պետական դավաճանություն», մի սպանություն, որ կատարված է «սուտ արյուն թափելու ցանկությամբ»։

Մանրամասնությունները Մաղրավ-բեյի գործունեության մասին, տե՛ս «Թարիխի Նաիմայի» 3-րդ հատորից մեր թարգմանած նյութերը, սույն գրքի հաջորդ գլխում։

2. Կըզըլբաշ—բառացի նշանակում է «կարմիր գլուխ»։ Կըզըլբաշ էր կոչվում հին Իրանում այն զինվորական դասը, որ կազմված էր թուրք և թուրքմեն ցեղերից, որոնք մեծ ծառայություն մատուցեցին Սեֆևյան իշխանությունը հիմնելու և ուժեզացնելու գործում։ Այդ անունը («կարմիր գլուխ») նրանց տրվեց այն պատճառով, որ այդ դասի զինվորները իրենց գլխին կապում էին կարմիր փաթթոց (սարըք), իսկ այդ կարմիր գույնը ուներ կրոնական-ավանդական նշանակություն (նվիրական Ալիի բանակի զինվորները պատերազմի ժամանակ կարմիր գույնի փաթթոց էին կապում)։ Ավելի ուշ օսմանյան թուրքերի կողմից «կըզըլբաշ» անվանվեցին շիա դավանանքին պատկանողները, գլխավորապես պարսիկները։

Թուրք պատմագիրները «կըզըլբաշ» տերմինը գործ են ածում ոչ միայն իբրև կրոնական ֆանատիզմի, այլև իբրև ազգային ատելության և արհամարհանքի արտահայտություն։ Թուրք պատմագիրներից Փեչեվին, Նայիման և ուրիշները իրենց «պատմություններում» իրանցիներին հիշում են բացառապես «կըզըլբաշ» անունով, հաճախ այդ խոսքին ավելացնելով «օբաշ» (ատոր, հատարակ, գոհհիկ) բառը—«կըզըլբաշ-օբաշ»։

3. Պատմագիր Փեչեվիի մասին—լրացուցիչ տեղեկություններ։

«Թուրքական պատմության Ուսումնասիրության Ընկերության»* նախագահը՝ պրոֆ. Ակչուրա-Յուսուֆ բեյը, խոսելով թուրք պատմագիրների մասին, Փեչեվիի մասին ասում է. «XVII դարի օսմանյան պատմագիրներից Փեչեվի-Իբրահիմ-էֆենդին իր «Թարիխի Փեչեվիում օգտվել է նաև արևմտյան աղբյուրներից»**։

Փեչեվին, իբրև պատմագիր, հայտնի է իր համեմատաբար ավելի լայն մոտեցումով այնպիսի պատմական և միջազգային բնույթի հարցերի, որոնք զբաղեցրել են XVII դարի թուրքական պետական ղեկավար գործիչներին, որոնց շարքում ինքը՝ Փեչեվին կարևոր տեղ է գրավում։ Նման հարցերից է օսմանյան պատմության մեջ «Էժդերխանի (Ատրախան) արշավանքը» կամ «Էժդերխանի և Կազանի արշավանքը» անունով հայտնի պատմական դեպքը (977 թ.), որի նպատակն է եղել իրականացնել Դոն-Վոլգա գետերի միջև ջրանցք բաց անելու ռազմական-քաղաքական ծրագիրը։

Փեչեվիից բացի այդ հարցով զբաղվել են նաև թուրք պատմագիրներ Քյաթիբ-Չելեբին, Ջևդեթ-փաշան և այլն։

4. «Մոլորյալ» շահը—Օսմանցի թուրքերը պատկանելով իսլամական սյունի դավանանքին շիաներին համարում են «անհավատ», «հերետիկոս», «մոլորյալ» և այլն։ Ահա այդ պատճառով էլ, նույն կրոնական ֆանատիզմից ելնելով Իրանի շահին համարում են «մոլորյալ» (բեմբահ) և հաճախ ասում են «Շահի բեմբահ» (մոլորյալ Շահ)։ Ի հակադրություն պարսիկների, նրանց բանակի և Շահի, օսմանցիները գրեթե միշտ, գործ են ածում «իսլամական երկիր», «իսլամական բանակ», «իսլամական փադիշահ» և այլն, օսմանյան երկիր, բանակ և փադիշահ իմաստով։

5. «Ղարիբների» վաշտը—Ղարիբ (բառացի պանդուխտ) զինվորները հավաքագրվում էին մայրաքաղաքից հեռու շրջաններից և դրա համար էլ կոչվում էին

---

* «Türk Tarih Tetkik Cemiyeti», հետագայում «Türk Tarih Kurumu».

** Birinci Türk Tarih kongresi, konferanslar, müzakereler zabıtları, 1933, Istanbul, sah. 592.

«դարիբներ»։ Այս զորամասը համարվում էր «Զորս վաշտերի» բաղկացուցիչ մասերից մեկը և բաժանվում «աջ» և «ձախ» դարիբների վաշտերի՝ բանակի աջ և ձախ թևերում կանգնելու պատճառով։

6. Զբլդբրի պաշարը—Զբլդբրը բերդաքաղաք է։ Զբլդբրի դաշտում տեղի ունեցած պատերազմը, Թուրքիայի և պարսիկների միջև, Փեչևին նկարագրում է առանձին կարևորությամբ և մանրամասնորեն։ Զբլդբրը այդ ժամանակ եղել է սանջակ։ Սանջակը ուներ երեք կազա—Օլթի, Արդահան և Արտանուշ, որոնք միասին՝ կազմում էին 7 նահիյե։ Հաջորդ դարում (XI դարի հիջրի), երբ ավելի է շեշտվում Զբլդբրի կարևորությունը, բնդարձակվում է և վերածվում էյալեթի՝ Զբլդբրի էյալեթ անունով։

7. «Ոլուֆեջիների վաշտը» «Ոլուֆեջիներ» էին կոչվում «Զորս վաշտերի» որոշ պարտականություն ունեցող զինվորները, որոնք նույնպես կանգնում էին բանակի աջ և ձախ կողմերում։

8. Կափու-Կուլի—*XVI—XVII* դարերում օսմանյան բանակը բաժանվում էր երկու հիմնական մասի՝ «Կափու-Կուլի» զինվորներ և «էյալեթի» զինվորներ։ «Կափու-կուլի» զինվորները համարվում էին փադիշահական զինվոր։ Այդ պատճառով էլ կոչվում էին նաև «խասսա ասքերի». ապրում էին Ստամբուլի զորանոցներում և ստանում որոշ ռոճիկ և օրապահիկ։ «Կափու-Կուլի» զորամասը իր կազմում ուներ 7 օջաք, որոնցից մեկն էր ենիչերիների օջաքը։

9 **Ֆեթվա** (ավելի հաճախ «Ֆեթվահ-Շերիֆ» է գործածվում)—մի որևիցե հարցի կամ դատի մասին մյուֆթիի կողմից, առանց անունը հիշելու, շարիաթի սկզբունքներին համապատասխան տրված բացատրություն։

10. **Քեֆե** (Caffa, Theodasia, Feodosia) Ղրիմի թերակղզու հարավարևելքում, Կերչի նեղուցից 70 կմ հեռու բերդաքաղաք և նավահանգիստ է։ Հնում կոչվել է Կաֆֆե (որը թուրքերեն լեզվում աղավաղված ձևով Քյուֆե-Քեֆե է կոչվել)։ Հույները այս քաղաքը անվանեցին Ֆեոդոսիա։ XV դարում Ֆեոդոսիան գրավվեց ջենովացիների կողմից՝ իբրև առևտրական կենտրոն և ճանապարհ։ Սուլթան-Մուհամմեդ II օրոք օսմանցիները գրավեցին այդ քաղաքը, որը մնաց օսմանցիների իշխանության տակ մինչև 1774 թ., երբ Ղրիմը անցավ Ռուսաստանին։

11. Թաթար-խան, Ղրիմի թաթարական խանն է։ 880 թ., (1475) օսմանյան նավատորմը գրավում է Քեֆեի բերդը և Կերչի նեղուցը, այնտեղից դուրս անելով ջենովացիներին։ Սկսած այդ ժամանակից Ղրիմի թերակղզին ամբողջությամբ դառնում է Օսմանյան պետության ենթակա, սակայն ինքնավար շրջան։ Խաները նշանակվում էին սուլթանական ֆերմանով՝ խանական դինաստիայից։ Խանները պարտավոր էին իրենց բանակով (թաթարական զինվորներով) մասնակցել օսմանյան բանակի պատերազմական գործողություններին։

Ղրիմի խանության կենտրոնը Բաղչե-Սարայն էր։ Խանները կրում էին առաջին և երկրորդ վեզիրների տիտղոսներ և վարում միաժամանակ սերասքերի («կալղայ») պաշտոնը։

Համաձայն թուրք պատմագիր և պետական գործիչ Այնի-Ալի-էֆենդիի տված տեղեկության, XVI դարի վերջերին Ղրիմի թերակղզում Քեֆեն առանձին էյալեթ էր, որն ուներ իր առանձին բեյլերբեյին։ Սրա իշխանությանն էին ենթարկվում Ադովի ծովի շրջակայքում գտնվող մի քանի բերդեր։ Բեյլերբեյին ուներ

679.000 ակչեի խասսեր։ Ղրիմի խաններին տրվող օրական հազար ակչեի «գրպանի ծախսը» Քեֆեից էր ստացվում, էյալեթն ուներ 554 Թիմար և զեամեթ։

12. Խաս, Զեամեթ, Թիմար—*Պետական ծառայության համար տրված ռոճիկն ու հողը, որը կոչվում էր «դիրլիք» (dirlik): Իրրև դիրլիք տրված հողի եկամուտը՝ տասանորդը (üşr. aşar) չէր մտնում պետության գանձարանը, այլ հատկացվում էր դիրլիք ստացողներին։*

Դիրլիքի քանակությամբ էին որոշվում և տարբերվում խասը, զեամեթն ու Թիմարը։

ա) **Խասը**, *ամենաբարձր դիրլիքը, հատկացվում էր փադիշահին, վեզիրներին և այլ բարձրաստիճան պաշտոնյաներին։ Խասի տերը իր ստացած եկամտի յուրաքանչյուր 5000 ակչեի փոխարեն պարտավոր էր մի ջեբելու կոչված հեծյալ զինվոր պատրաստել, զինման բոլոր ծախքերը իր հաշվին լինելու պայմանով։ Փադիշահների և վեզիրների խասերը կառավարում էին բեյլերբեյ կոչված հատուկ և վստահելի պաշտոնյաները։*

բ) **Զեամեթ** *էին կոչվում այն դիրլիքները, որոնց տարեկան եկամուտը 20 հազար ակչեից 100 հազար ակչե էր, քանի որում այդ եկամտի 20 հազարը համարվում էր «սրո իրավունք» (Kılıç hakkı), իսկ մնացած գումարի յուրաքանչյուր 5000 ակչեի համար զեամեթի տերը պարտավոր էր մի ջեբելու տալ՝ վերև հիշված պայմանով։*

գ) **Թիմար** *կոչվում էին այն դիրլիքները, որոնց տարեկան եկամուտը 3000 ակչեից 20 հազար ակչե էր, որի 3000 ակչեն համարվում էր «սրո իրավունք», իսկ մնացած գումարի յուրաքանչյուր 3000 ակչեի փոխարեն Թիմարտերը պարտավոր էր մի ջեբելու տալ։*

ՆԱՅԻՄԱ.—XVII Դ.

«ԹԱՐԻԽԻ ՆԱՅԻՄԱ», تاريخ نعيما

Թուրք պատմագրության մեջ կարևոր տեղ գրավող Նայիման հայտնի է Հալեբլի-Նայիմա-Մուստաֆա-էֆենդի անունով։ Նա եղել է կայսերական պալատի բալթաջիներից, հետո Կուլաբլի-Ահմեդ փաշայի դիվանում բարտուղարի պաշտոն է վարել և մի շարք այլ պետական ծառայություններից հետո նշանակվել թուրքական պատմության պաշտոնական տարեգիր։*

Նայիմայի ծննդյան թվականի մասին հիշատակություն չկա. մեռել է Մորայի պատերազմում, Բալիյե-Բադրե բերդում 1127 թ. (1715)։

Նայիման գրել է նաև բանաստեղծություններ։

Նայիմայի պատմությունը՝ «Թարիխի Նայիմա» (վեց մեծածավալ հատոր) սկսում է հիջրի 1000 թ. և հասնում մինչև 1070 թ. (1591—1659). այսինքն XVI դարի վերջին տասնամյակից մինչև XVII դարի 60-ական թվականները։

Այդ ժամանակամիջոցը ղուպադիպում է հզոր Օսմանյան պետության աստիճանական աճկմանը, ներքին քայքայմանը (janissaires-ների խռովությունները, Ջելալիների, Աբազա-փաշայի ապստամբական շարժումները), Թուրք-պարսկական դաժան պատերազմների, ինչպես նաև Եվրոպայում օսմանցիների գրեթե անընդհատ վարած ռազմական գործողությունների տարիներին։

---

* *Բալթաջի էին կոչվում սուլթանական արքունիքի որոշ դասի ծառայողները։*

Այդ բոլոր կարևոր դեպքերը Նայիման ամենայն մանրամասնությամբ նկարագրել է տարեգրության ձևով: Նայիման ապրած լինելով իր գրած «Պատմության» ընդգրկած ժամանակամիջոցից հետո, չէր կարող ականատես լինել այդ դեպքերին (եթե չհաշվենք վերջին երկու տասնամյակը): Բայց իբրև պետական պաշտոնական տարեգիր, նա, ամենայն հավանականությամբ, հնարավորություն է ունեցել լայն չափով օգտվելու սուլթանական արքունիքի և պետական բոլոր պաշտոնական փաստաթղթերից: Նրա մի քանի հիշատակումներից և գրքի սկզբում զետեղված առաջաբան հոդվածներից երևում է, որ Նայիման օգտվել է նաև այլ պատմագիրներից: Այսպես, նա մեջբերումներ ունի Փեչևիից* (վրացի հայտնի իշխան Մաղրալ-բեյի—Գյորգի Սաակաձեի—օսմանյան բանակի սերասքեր Հաֆըզ փաշային ներկայացրած դիմումը պարսիկների դեմ կռվի գնալու մասին**: Նայիմայի պատմության մեջ շատ մեջբերումներ կան նաև պատմագիր Քյաթիբ-Չելեբիի «Ֆեզլեքեից», որին, ինչպես երևում է, Նայիման տալիս է առանձին նշանակություն: Վերջինիս մասին նա գրում է. «...Հաջի-Խալիֆա անունով հայտնի Քյաթիբ-Չելեբին գրել է Օսմանյան պետության պատմությունը 1000 թ. մինչև 1066 թ. և անվանել է «Ֆեզլեքե»: Արդարությունն այն է, որ [«Ֆեզլեքեն»] իր արտահայտության պարզությամբ և նրբությամբ, երկրաբանությունից զերծ, հիանալի մի պատմություն է»***: Նայիման հիշում է նաև Կարա-Չելեբի-Զադե-Աբդուլ-Ազիզ էֆենդիի «պատմությունը»՝ (սկզբից մինչև 1067 թ.) և այլ պատմագիրների:

Նա հիշատակում և մեծապես դնահատում է նաև արաբական պատմագիրներից մի քանիսին՝ Իբնի-էբի-Խեջելեի «Սեքզդան էլ-Սուլթանը», Հալեբի-իբնի-Սուհնեի «Ռաղյուլ-Մենազիրը» և այլն:

Պատմության մասին Նայիման ունի իր դատողությունները: Մենք կբավականանանք այդ երկարաշունչ հատվածներից միայն մի քանի բնորոշ կետերը հիշելով, որոնց մեջ պատմագիրն արտահայտում է իր տեսակետներն առհասարակ պատմագրության մասին: Ճշմարտախոսության, փաստերի ստուգման, ժողովրդի մեջ տարածված զանազան առասպելներից խուսափելու անհրաժեշտու-

---

* Փեչևին ապրել է Նայիմայից առաջ, իսկ նրա պատմությունը ընդգրկում է 926—1048 թթ:

** «Թարիխի Նայիմա», հատ. I, էջ 6:

*** Նույն տեղում:

թյան և այլնի մասին խոսելուց հետո, նա գրում է. «...չպետք է բավականանալ միայն դեպքերը, պատմական անց ու դարձը պատմելով, նման դեպքերի մասին տրված նկարագրություններն առանձին օգտակարություն չեն ներկայացնում... պետք է ժամանակի պահանջի համաձայն պարզաբանել այդ դարի գեկավարների նպատակներն ու ձգտումները, երկիրը կառավարելու նրանց մտորումներն ու խորհուրդները, պարզաբանել ձեռք բերված արդյունքները, թշնամու հետ տեղի ունեցած կռիվների և հաշտությունների ընթացքում հաղթության կամ պարտության պատճառներն ու հիմունքները: Այս բոլորը ըստ արժանավույն ստուգելուց հետո միայն պատմել և բացատրել, որպեսզի հետագա ժամանակներում, կարդացողները կարողանան որոշ օգուտ և փորձառություն ձեռք բերել: Այս պայմաններից զուրկ պարզ պատմություններն ոչնչով չեն տարբերվում «Համզա-Նամեյից»*: Հետո Նայիման շեշտում է նաև պատմագրի լեզվի և ոճի պարզ և հասկանալի լինելու անհրաժեշտությունը,— որից դժբախտաբար ինքն էլ զուրկ է: Արդարև Հալեբլի-Նայիմանն իր պատմության մեջ կարողացել է որոշ չափով հեռանալ թուրք պատմագիրներին հատուկ սոսկ պատմելու, նկարագրելու և հաճախ գովելու և փառաբանելու դերից: Նա իր պատմության մեջ որոշ չափով տեղ է տալիս երևույթների պատմական լուսաբանության և երբեմն նաև քննադատական մոմենտներին այնքանով, որքանով թույլ են տալիս սուլթանական Թուրքիայի միահեծան իշխանության, ֆեոդալական կարգերի և իսլամական կրոնական ֆանատիզմի պայմանները:

Նայիմայից մեր թարգմանած հատվածները այդ մասին տալիս են որոշ պատկերացում: «Թարիխի Նայիման» տպագրվել է Ստամբուլում և ունեցել է մի քանի հրատարակություն: Մեր ձեռքի տակ է նրա երրորդ հրատարակությունը, որը լույս է տեսել 1238 թ. (1822) «Պետական տպարանում»: Տպագրությունը կատարված է բավականին խնամքով:

* * *

Նայիման, իբրև պատմագիր, գնահատվում է նաև ժամանակակից թուրքական պատմագրության կողմից: Այսպես, «Թարիհ»-ը Նայիմային տալիս է հետևյալ գնահատականը՝

---

* «Թարիխի Նայիման», հատ. I, էջ 7:

«Սամանյան պատմագիրներից ամենից ավելի ուշադրության արժանի դեմքը Մուստաֆա-Նայիմա-էֆենդին է: Հալեբի թուրքերից սերող այս անձնավորությունը ծնվել է XVII դարի երկրորդ կեսին և մեռել 1715 թ.: Նայիմա-էֆենդու պատմությունն ընդգրկում է XVI դարի վերջից մինչև XVII դարի կեսը տեղի ունեցած դեպքերը: Գրքի լեզուն պարզ է, նկարագրված դեպքերը լավ է հասկացել և լավ էլ պատմում է, ցուցաբերելով դրանք կենդանացնելու կարողություն. դեպքերի հաջորդականությունը աշխատում է բացատրել, ուշադրության արժանի դեպքերի մասին ընդհանուր խորհրդածություններ է անում, նկարագրվող դեպքերի առաջացման պատճառները որոշ չափով քննադատության է ենթարկում: Մի խոսքով «Թարիհի Նայիման» բավականին մոտեցել է ժամանակակից պատմագրության մեթոդներին: Մինչև օրս օգտակարությամբ կարդացվող երկերից է»:*

«ԹԱՐԻԽԻ ՆԱՅԻՄԱ»

1008 թվականի (1599) դեպքերից

Վրաստանի իշխաններից Սիմոնի գերությունը վանի էմիր-ուլ-Յումերա Ջաֆեր փաշայի ձեռով

*Վրաստանի իշխանները իրենց, թեև արտաքուստ, [փադիշահական] ֆերմանին հպատակ էին ցույց տալիս, սակայն իրականում նրանց նպատակն ապստամբությունն էր: Դրանցից մեկը՝ ուխտադրուժ Սիմոնը, խախտելով պայմանագրությունը և մեծ խռովություն առաջացնելով՝ անսպասելի կերպով գրավել էր Գորիի բերդը և մասամբ ավերել: Թավրիզի և Վանի էմիր-ուլ-Յումերա Ջաֆեր փաշան, Աստուծո կամքով, նրան [Սիմոնին] գերի վերցրեց: Վրաստանի բեյերից Ալեքսանդրե խանի դլուխը կտրեց, նրա որդիներին բռնեց և Սիմոնի հետ միասին սույն թվի Ռեբի-ուլ-էվվել ամսին ուղարկեց փադիշահի դիրդյահը: [Սիմոնը] բանտարկվեց Եդի-Կուլեում** և որոշ ժամանակ անց ընդունեց իսլամական կրոնը: Մեռավ Սուլթան Ահմեդ*** խանի ժամանակ: Վերոհիշյալ Սիմոնը Եդի-Կուլեում բանտարկված ժամանակ գրել է հետևյալ քառյակը.*

---

* Tarih, III, sah. 152.

** *Եդի-կուլե՝ Ստամբուլի Ասիական մասում հին բերդ է:*

*** *Սուլթան Ահմեդ — 1012—1026 թթ. (1603—1617):*

Ոտաճավոր (ճագմ)

Բախտի կողմից ենթարկվեցի կողոպուտի,
Ժողովրդի աչքում դրա համար փուշ դարձա.
Թեև պետք էր ինձ ձի և ուղտ բեռներով,
Ատուծո փա՜ռք լինի, որ թեթևաբեռ եղա։

Հյուսմի—Զելեբիի[1] պատասխանը

Դու Գորիի մի բերդը գրավեցիր, իսկ հիմա
Տե՛ս, եղի-կուլեում բերդապահ
(դիդդար) դարձար։

(«Թարիխի—Նայիմա», հատ. I, էջ, 230)։

Զելալիների[2] սկզբնական ելույթը և սեկպանների* խմբի պետերից մեկի Աբդուլ-Հալիմ Կարա-Յազըջիի երևան գալը

*Իսլամական բանակը քյաֆիրների բազմաթիվ քաղաքներ ու հանրային շինություններ հողին հավասարեցրեց։ Երբ բանակի մյուս մասը [Ռումելիում] գնացել էր Էնգերուսի նվիրական պատերազմին մասնակցելու, անգիտակից թուրքերից և խավարամիտ քրդերից կազմված ավազակախմբեր էին երևան եկել, որոնք սկսել էին գավաճանել և ապստամբություն բարձրացնել։ Սեկպանների վաշտի պետը՝ Աբդուլ-Հալիմը**, Կարա-Յազըջի կոչվող ավազակների գլուխն անցած ապստամբության դրոշ էր բարձրացրել ընդդեմ Օսմանյան պետության։ Սկզբում Հալեբի բեյլերբեյիի պաշտոնը վարող և 1007 թ. (1598) Անատոլուի քննիչ նշանակված Հյուսեին փաշայի կատարած բռնություննների և ապստամբության պատճառով, կայսերական Ֆերմանով նրա [Հյուսեին փաշայի] դեմ ուղարկվեց Կարամանի տուրքահավաքը՝ Մահմուդ-Զավուշը, որն Աքսարայի մոտ մի երկու ժամ կռվելուց հետո պարտվեց և վերադարձավ Կոնիա... Հետո ավազակների դեմ ուղարկվեց Սինան փաշայի որդին—Մուհամմեդ փաշան։ Հյուսեին փաշան դրանից վախենալով՝ փախավ և ապաստանեց Կարա-Յազըջիի*

---

* Սեկպան — ենիչերիական զորքի մի մասը։

** Աբդուլ-Հալիմ՝ սեկպանների պետը, որը Խաչ-Օվայի պատերազմից փախչելու համար մահվան էր դատապարտված Զղալե-Զադե փաշայի կողմից։

մոտ։ Երկուսն էլ պաշարվում են իրենց ապստամբած բերդում։ Մուհամմեդ փաշան Կարա-Յազըջիին առաջարկում է անջակի բնությունը, այն պայմանով, որ իրեն Հանձնի Հյուսեին փաշային։ Կարա-Յազըջին բերդից ներքև է գցում Հյուսեին փաշային։ Ավազակապետը նշանակվում է Ամասիայի անջակբեյի, իսկ Հյուսեին փաշային տանում են Ստամբուլ, կտրում ոտքերն ու ձեռքերը և բեռնակիր ձիու վրա դրած՝ ման ածում փողոցից-փողոց։ Հետո «ուրիշներին օրինակ տալու համար» կախում են։ Հետագայում Կարա-Յազըջին նորից է ապստամբվում, սակայն պարտվում է, և ներման արժանանալով՝ ստանում Զորումի անջակը...

Պատմագիր Նայիման, հենվելով Հասան բեյ-Զադեի տված տեղեկության վրա, ասում է՝ «Ավազակապետ Կարա-Յազըջիի ներման արժանանալու համար հիմք է հանդիսացել պետական կարևոր անձնավորություններից մեկի Չելեբի-Կադիի միջնորդությունն ու երաշխավորությունը՝ ստացած մեծագումար կաշառքի փոխարեն»։ Սակայն Կարա-Յազըջին քիչ անց նորից է ապստամբվում և պարտության մատնում իր դեմ ուղարկված խոշոր ուժերին...

Նայիման ասում է՝ «...Կայսերիի [Կեսարիա] դաշտում ավազակների խումբը դուրս եկավ բանակի դեմ։ Չելալի գինվորները մոտ 20 հազար հոգի էին։ Պատերազմը շատ կատաղի եղավ։ Հաջի-Իբրահիմ փաշան պարտվեց։ Չելալի գինվորներն իրենց սրերը քաշած դեսին Բափեցին 15-ի չափ չորբաջիների* և հազարից ավելի ենիչերիների։ Դրանից բացի բերդում եղած ողամարդկանց մեծ մասը սպանվեց ավազակների ձեռքով։

Դրանից հետո Կարա-Յազըջին ինքնիշխան է դառնում և ֆերմաններ տալիս։ Նայիման մեջ է բերում նրա ֆերմաններից մեկը։

Կարա-Յազըջիի հրամանը**

«Այս նվիրական հրամանը բերում է Կայսերիի բնակիչներից Մուհամմեդ անունով մեկը, որը՝ Աստուծո ողորմությամբ, Օսմանյան պետության Սերդար՝ Հաջի-Իբրահիմ փաշայի պարտությունը [կրած] պատերազմում, կատարյալ անկեղծությամբ հպատակություն ցույց տալու համար, [նրան] բոլոր տեսակի տուրքերից և պարտքերից ազատել եմ և ներում շնորհել։ Այս կայսերական հրովարտակը նրան տվի և հրամայեցի, որ օսմանցիների իշխանությունը այս կողմերում բոլորովին վերջացած է և սուլթանությունը անվիճելի կերպով ինձ է հանձնված։ Իմ կողմից տրված [այդ] հրամանի և հրովարտակի համաձայն, նա ազատված և ներված

---

* Զորբաջի — ենիչերիական բանակում վաշտապետ։

** Բնագրում գործ է ածված «հյուքմ» բառը։

լինելով, ոչ մի աուրք և վճար չպետք է պահանջվի նրանից. ով չի հպատակվի սույն հրամանին՝ կպատժվի։ Այս նվիրական ֆերմանը ստանալով պետք է վարվել նրա փադիշահական բովանդակության համաձայն։ Գրված է 1009 թ. Ռեբի-ուլ-էվվելի կեսին»։

* * *

Նայիմայի պատմության հաջորդ էջերում տրված տեղեկություններից պարզվում է, որ Բաղդատի բեյլերբեյի Հասան փաշան ուղարկվում է Կարա-Յազըջիի դեմ, որը վերջինի հետ բախվում է Էլբիստանում։ Ջելալիներից կոտորվում է 20 հազար մարդ։ Կարա-Յազըջին փախչում է դեպի Ջանիկի ոանջակը և այնտեղ էլ մեռնում է։ Կարա-Յազըջիի ապստամբական գործը շարունակում է նրա եղբայրը՝ Դելի-Հասանը, որն իր շուրջը հավաքելով մի քանի այլ ապստամբ ավազակապետերի՝ իրենց բազմաթիվ զինվորներով, շարունակում է կռվել Հասան փաշայի դեմ, կատարելով անասելի կողոպուտ, թալան և սպանություններ։ Կռիվներից մեկում Հասան փաշան սպանվում է։ Նայիման ասում է՝ «...Դելի-Հասանը հեշտությամբ իրականացնելով իր նպատակները, անիծյալ զինվորներով շարունակում էր կողոպտել և թալանել Անատոլուի վիլայեթները։ Հետո նրա ձեռքն են անցնում նույն Հասան փաշայի հարստությունները... «փողերը վահանով, իսկ մահուդը, շուխան և այլ թանկագին ապրանքները թրով շափում և բաժանում էին իրար մեջ»։

Նայիման 1012 թ. (1603) դևպքերի շարքում տալիս է Ջելալիների շարժման վերջին շրջանը։ Հետզհետե ընդարձակվող այս ապստամբական շարժման առաջն առնել հնարավոր չլինելով, կեղծ ներման կարգով, Դելի-Հասանին հպատակեցնում և շնորհում են Բոսնիայի էյալեթը։ Դելի-Հասանը ցրում է իր բանակը, անցնում Ռումելի, ապա Բելգրադ, մոնում Սերդար Լալա-Մուհամմեդ փաշայի տրամադրության տակ։ Նրա պատճառով Ղրիմի խանը հետանում է ասելով՝ «Ես ավազակապետի հետ միասին կռվի չեմ գնա»։ Հետո Դելի-Հասանը շարունակում է իր չարագործությունները Բոսնիայի ժողովրդի հանդեպ։ Վերջում, վախենալով տեղական ժողովրդից, փախչում է դեպի Բելգրադ և այնտեղ սպանվում՝ Սառամբուլից տրված ֆեթվայով։ Սակայն Անատոլուում Ջելալիների շարժումը շարունակվում և ընդարձակվում է։ Երևան են գալիս նոր ապստամբական խմբեր՝ Կալենդեր-Օղլու, Կարա-Սեյիդ, Սեկպան-Դերվիշ, Յուսուֆ փաշա, Դելի-Դերվիշ, Բեյ-Ջադե, Առնավուտ-Հասան, Կում-Կափուլու Ահմեդ բեյ և այլն և այլն։ Այս բազմաթիվ և բազմատեսակ ապստամբական խմբերի թվում ամենակատաղի և ամենահեղինակավորը՝ Ջանփոլադ-Օղլու-Ալի բեյն էր։ Նայիման հիշում է հետևյալ բնորոշ դեպքը։ «Այս ավազակապետը [Ջանփոլադ-Օղլին] միանալով այլ ավազակապետների հետ, պաշարում է Շամը (Դամասկոսը) և սոխպում նրա վալիին միանալ իրեն։ Հետո «անկախություն» է հայտարարում, իր անունով խութբե կարդալ տալիս, փող կտրում և... դաշինք կապում Տուրկանայի մեծ Դուբսի հետ, ձեռնարկում նման դաշինքներ կնքելու գործին Եվրոպական այլ պետությունների հետ»։*

---

* *Խութբե՝ Ուրբաթի և բայրամի նամազների ժամանակ կարդացված աղոթքը, որի մեջ հիշվում է խալիֆայի անունը։*

1016 թ. մեծ ուժերով Անապոլուի ապստամբների դեմ է ուղարկում Մուրադ փաշան։ Սա մի քանի կատաղի և արյունալի կռիվներից հետո վերջապես բախվում է Ջանփոլադ-Օղլու հետ, ջարդում նրա բանակից 26 հազար մարդ և փախուստի մատնում նրան։ Ջանփոլադ-Օղլին գնում է դեպի Հալեպ, կողոպտում քաղաքը, բայց հետո այնտեղից էլ է փախչում, վախենալով տեղական ժողովրդից։ Մուրադ փաշային հաջողվում է շատ մեծ դժվարություններով ոչնչացնել ավազակախմբերը։ Ըստ պատմագիրների տված տեղեկությունների, Մուրադ փաշան Անապոլուում ոչնչացրել է 60—100 հազար մարդ...

Պատմագիրն ասում է, որ փաշան ստացավ «հոր փորող» անունը, որովհետև նա սպանած ավազակների դիակները թաղում էր փորել տված հորերում։

* * *

«Ջելալիների» վերաբերող նյութերը Նայիմայի «պատմության» մեջ տրված են խիստ մանրամասն և ըստ տարիների։ Մենք նպատակահարմար համարեցինք այդ բոլորը իրար մի հավաքել և տալ կրճատ ձևով, պահպանելով պատմագրի ոճն ու մտածողությունը։

(«Թարիխ—Նայիմա», հատ. I, էջ 231—234, 245—246, 294—296)։

* * *

«Աջեմի սահմաններում խռովությունների սկիզբը» և «Շահն առաջանում է գեպի Թավրիզ՝ Քուրդ-Ղապի բեյի դրդումով» վերնագրերով հատվածներում Նայիման պատմում է Շահ-Աբբասի Օսմանյան պետության դեմ ձեռնարկած պատերազմական գործողությունների և «դավադրությունների» մասին։ Թավրիզում գտնվող թուրքական պահակազորքը շրջակայքում ասպատակություններ է անում և կողոպտում։ Սուլթանի իշխողը՝ Քուրդ-Ղազի բեյը փախչում է և ապաստան գտնում Շահ-Աբբասի մոտ։ Շահը նրան խանություն է շնորհում։ Օսմանցիները Ղազի բեյին պաշարում են Կարնի-Յարըբ բերդում, բայց նրան հաջողվում է փախչել և գնալ Իսպահան, Շահ-Աբբասի մոտ։ Ղազի բեյի դրդումով Շահը 10 հազարանոց բանակով գնում է Թավրիզը գրավելու։ Սոֆիանում՝ տեղի ունեցած պատերազմում օսմանցիները պարտվում են, Նայիմայի ասելով «բանակի սակավաթիվ լինելու պատճառով»։ Շահ-Աբբասն այս հաղթությունից հետո շարժվում է Թավրիզի վրա։ Նա առաջարկում է բերդապահներին հանձնվել, խոստանալով նրանց չվնասել։ Սակայն Շահն իր խոստումը դրժում է, կողոպտում ու թալանում քաղաքը։

Նայիման ասում է՝ «...խոստումնադրուժ և անգութ [Շահը] նրանց [պաշարվածներին] խաբեց։ Նրանց ունեցվածքն ու հարստությունը թալանել տվեց... Թավրիզի կանանց մեծ մասին, իր զգվելի ստվորության համաձայն, պոռնիկ դարձրեց։ Ամեն մեկին պոռնկության համար որոշ վարձք նշանակել տվեց և մուտուլմաննների պատիվը և բարքն ապականեց...»։

Շահ-Աբբասը Թավրիզը գրավելուց հետո մի քանի օր մնում է Զուլհայում (Ջուլֆայում) և էրզեբիլի կառավարիչ Զյուլֆիկար խանին մեծ բանակով ուղարկում է Նախիջևանի վրա։ Սա պաշարում է Նախիջևանը։ Հետո գալիս է ինքը՝ Շահը, քաղաքը գրավում է և նորից շարունակում կոտորածն ու թալանը։ Նայիման ասում է՝ «...ստոր կրգբլբաշը [Շահ-Աբբասը] իրավունք տվեց մի երկու օր քաղաքում

ազատ շարժվել և բռնություններ կատարել։ Նրանք ամեն մի տնից գրավեցին օսմանցիների ունեցվածքը... մուսուլմանները և բյաֆիրները, ենթարկվեցին միևնույն բռնություններին և տանջանքներին։ Նրանց [կրզըլբաշների] կատարած չարագործություններն ամեն սահման անցան...»։

Այդ ժամանակ մի-երկու ավազակախմբեր, առիթից օգտվելով, գրավում են Օրդուբադը, իսկ Զրաք-Սուլթան անունով ավազակապետը գրավում է Ջուլֆան։ Էլիջեն և Ջիվանշիրը գրավվում են պարսիկների կողմից։ Օսմանցիների դիմադրությունն անհետևանք է մնում։ Նախիջևանի բերդապահները թողնում են բերդը և փախչում Երևան։ Երևանում Շահից ստացվում է հատուկ նամակ, որով նա իրեն հատուկ գոռոզությամբ և մեծախոսությամբ հայտնում է, թե նա արդեն գրավել է Թավրիզը և պատրաստվում է գրավել Նախիջևանն ու Երևանը։ Այնուհետև նա պիտի գրավի իր «ժառանգական երկիրը»՝ Ադրբեջանը և հետո Գիլջեն և Շիրվանը, որից հետո՝ ձմեռելու է Զարաբաղում։ Այդ պատճառով առաջարկում է, իզուր դիմադրություն ցույց չտալ և հանձնվել։ Երևանում Շահի առաջարկը չի ընդունվում։ Շահ-Աբբասի նամակը ուղարկում են Ստամբուլ՝ փադիշահին։ Օսմանցիները ձեռնարկում են Երևանի բերդը ամրապնդելու և շրջակայքից օգնական ուժեր ստանալու աշխատանքներին։

Երևանում նոր բերդի կառուցումը

Այդ ժամանակ հայտնի դարձավ, որ Շահը պատրաստվում է հարձակվել Նախիջևանի և Երևանի վրա։ Երևանի ավագանին ու բնակիչները, տեսնելով, որ եթե Նախիջևանի զինվորները թողնեն իրենց բերդը և Երևանի բերդում տպավորանեն՝ վերջինիս տարածությունը անբավարար է դառնում, որոշեցին հարավային կողմից պարսպի պատերին կից՝ իսլամական տների շրջանում, նոր բարձր պատեր կառուցել և այդ տները թողնել իրենց նախկին վիճակում... Նրանք ձեռնարկեցին պարսպի հարավային, արևելյան և արևմտյան կողմից 500 արշին երկարությամբ բարձր պատերի կառուցմանը։ Մեծ ջանքերով 15 օրվա ընթացքում, մինչև վեզիրի գալը, նրանք աշխատանքի կեսը կատարեցին. սա [վեզիրը] շինության մնացած մասը բաժանեց զինվորների խմբերի վրա, որոնք իրենց անձի պաշտպանության համար ջանքեր չխնայեցին, Աստուծո օգնությամբ, դեռ Շահը չհկած, կարողացան ավարտել բերդի վերակառուցման աշխատանքները։

Աջեմի Շահը գալիս է դեպի Երևան

Ջեմազիյել-ախըրի 11-րդ շաբաթ օրը, առավոտյան Երևանի հարավային կողմից երևացին կարմրագլուխների [կրզըլբաշների] դրոշակները. այդ ստոր ցեղի մարդիկ շար ոգիների նման տարածվեցին Երևանի դաշտում։ Բուն կրզըլբաշները հազիվ 5—6 հազար

մարդ լիներին, նրանցից 3 հազարը, «Ջյուլենջի» և «Գյոք-Դուլաք» կոչված ավազակախմբերից էին. մի մասը բրդական խմբերից՝ Քուրդ-Ղազին և նրա հղբայրներ Գոջին ու Վասիֆ-էդդինը, Քյոր-Կարաշին... մի մասը՝ Քուրդ-Ջեյնալ բեյի վաշտը և Ալաշկերտի Կըլըչ բեյը... Շահը բանակի կենտրոնում փառքով և շքեղությամբ շրջապատված, արևգափողերի հնչյուններով սարսափ էր տարածում. ջորիների և ուղտերի բազմաքանակությունից շրջակայքը սևին էր տալիս։ Երբ պարսիկները երևացին պարիսպների մոտ, նրանք կարծում էին թե բերդի ժողովուրդը, Շահի այդ վեհությունից սարսափահար և նրա անմիտ շքեղություններից ու փայլից արտաբեկ՝ պարտված ճանաչելով իրեն, ստիպված կլինի բերդը հանձնել։ Սակայն իսլամական բանակում կային խելացի և դատողության տեր մարդիկ, նրանք հասկացան, որ այդ վախի ու սարսափի նշաններն անհիմն էն և դուրկ որևէ նշանակությունից. նրանք ուշադրություն չդարձնելով այդ անիմաստ շքեղությանը, բերդում դրված «ալարգա» թնդանոթների կրակոցով հեռվից ողջունեցին պարսիկներին։ Այդ «զվվելինների խումբը» Միհնեդի բլուր կոչվող վայրում հիմնեց շահի վրանը...

(«Թարիխի—Նայիմա», հատ. I, էջ 351—359)։

Պատմագիր Նայիման մանրամասնորեն տալիս է Երևանի պարիսպների տակ տեղի ունեցած մարտերի նկարագրությունը («Առաջին մարտ», «Երկրորդ մարտ» և «Երրորդ մարտ» վերնագրերով)։ Այդ կատաղի մարտերի հետևանքով Շահն իր նպատակին չի հասնում և բերդը գրավելու համար դիմում է խորամանկության։ Յախջի-Ջավուշ անունով մեկին իբրև պատգամավոր ուղարկում է երևանցիների մոտ և փորձում օսմանյան զինվորների դիմադրական ոգին թուլացնել. սակայն ապարդյուն։ Երևանի և Նախիջևանի էմիր-ուլ-Յումերաճ Շերիֆ-փաշան դիմում է ուղարկում Ստամբուլ՝ փադիշահին և օգնություն խնդրում։ Չնայած, Երևանին օգնություն հասցնելու համար հատուկ ֆերմաններ են տրվում, սակայն սուլթան Մուհամմեդի* մահվան և Սուլթան Ահմեդի** գահակալության պատճառով Երևանին օգնություն հասցնելու հրամանները մնում են անհետևանք։ Պաշարումը տևում է 6 ամիս. պաշարվածները ուժասպառ են լինում։

---

* Սուլթան Մուհամմեդ III, 1003—1012 թթ. (1595—1603)։
** Սուլթան Ահմեդ I, 1012—1026 թթ. (1603—1617)։

Ռաֆրզիական (Պարսկական) պատերազմի հաջորդ դեպքերը և Երևանի բերդի գրավումը Շահի կողմից

Շահ-Աբբասը պաշարելով Երևանի բերդը, մի քանի անգամ տեղի ունեցած մարտերից և իր ուղարկած պատգամավորների սպանությունից հետո, երբ տեսավ, որ պաշարվածներն անձնատուր լինելու ցանկություն չունեն, բոլոր ուժերը իր բազկին տալով, սկսեց գնդակոծել բերդը: Նա ճանապարհները քանդեց, բերդում եղողների համար կյանքի միջոց հանդիսացող հոսող ջրերը կտրեց և այդպիսով պաշարվածներին թողեց առանց ջրի: Չնայած պաշարվածները բերդում հորեր և փոսեր փորելով որոշ չափով իրենց ծարավության առաջն առան, սակայն պաշարումը շատ երկար տևեց, դրսից օգնություն ստանալու հույսը կտրվեց, պաշարվածների դրությունը ծանրացավ, որով տոկունությունը և դիմադրական ուժը թուլացավ: Ջիլհիջե ամսին կրզըլբաշ զինվորները ընդհանուր հարձակումով մտան նոր պարիսպները և գրավեցին: Սյուններից շատերին գերեցին և մեծ մասին նահատակեցին: Պաշարման սկզբում եղած 5—6 հազար զինվորներից, յոթ ամսվա ժամանակամիջոցում 1500-ի չափ մարդիկ ընկան մարտում: Մոտ 500 հոգի մահացան, զինվորների կեսը հակառակվելով թողեց հեռացավ, այնպես որ բանակից մնաց միայն 500 մարդ: Այս փոքրաթիվ զինվորները անկարող լինելով պաշտպանելու բերդի ընդարձակ սահմանները, հրաժարվեցին բերդը պաշտպանելուց: Իսկ մեծաթիվ թշնամին ամեն կերպ ձգտում էր հաղթանակ ձեռք բերել: Մուհարրեմ ամսի 10-րդ օրը՝ նրանց սգի օրը լինելով, զգուշացան կռիվներից, որպեսզի հետո ավելի ուժեղացնեն իրենց հարձակումը: Երբ Շահի զինվորները պաշարվածներին օգնություն խնդրելու և անձնատուր լինելու կոչ արին, պաշարվածներն ստիպված շնորհ խնդրելով դիմեցին վեզիրին: Որոշ նկատառումներով այդ խնդրանքը ընդունվեց:

Պատմագիրը «Շահի Միջլիսի պատկերը» վերնագրով հատվածում նկարագրում է Երևանի բերդի գրավումից հետո, Շահ-Աբբասի դառը և դաժան վերաբերմունքը դեպի անձնատուր եղողները: Շահն իր վրանում ընդունում է իր զինվորների պարագլուխներին: Այդ մասին Նայիման ասում է՝ «...Մի անկյունում հատարակ կերպով դորգի վրա նստած էր [Շահը], նրա ձախ կողմում՝ Լեվենդ խանի որդին Իսքենդեր խանը, աջ կողմում՝ Մեհմոնի որդին՝ Գուրգինը [Գուրգենը], որոնք նստած թափառաշրջիկների նման ժողով էին անում: Դրանից հետո նստած էր Թավրիզի բեյլերբեյի Ալի փա-

չան, նրանից հետո Քուրդ-Ղափին և նմանները, Ալեքսանդրեից հետո՝ Շերիֆ փաշան և այլ դիվանագիտական պարագլուխներ ...այդ անկրոն գոռոզը [Շահը] քյաֆիրներին «էհլի-սյուննեթ» մուսուլմաններից գերադաս էր համարում... հետո նախապես գերի վերցրած ուլեմաններին դիմելով ասաց՝ «Դուք ֆեթվա եք տվել, որ կղզըլբաշներից մեկի սպանությունը հավասար է 70 քյաֆիրի սպանության» և հետո նրանց ամորձիքներն ու թոքերը պատռել տալով սպանեց:*

Նայիման հիշատակում է, որ այդ բոլոր մանրամասնությունները նա վերցրել է պեպքերին ականատես Նախիջևանի Կապի Ջերրահ-Ջադեի փաղիշահին ներկայացրած գրությունից:

Երևանի գրավումից հետո Շահ-Աբբասը գրավում է նաև Շամախին ու Շիրվանը:

Կարսի պաշարումը Երևանի գրավումից հետո և կղզըլբաշների մի շարք շարագործությունները

Հասան-Բեյզադեն գրում է, որ Շահ-Աբբասը Երևանի բերդը պաշարած ժամանակ Շերիֆ-Մուհամմեդ փաշան անձնատուր լինելով՝ դուրս էր եկել: Երբ փաշան ներկայանում է Շահին, սա սպանել է տալիս փաշային՝ անհավատարմության ամբաստանությամբ: Պաշարման ժամանակ էմիր-Գյունե խանը մի խումբ կղզըլբաշ-զինվորներով ուղարկվում է շրջակայքը նվաճելու և Ակչա-Կալա բերդը գրավելու: Էմիր-Գյունե խանը պաշարում է Ակչա-Կալան և ինքը բոնությունների հակամետ լինելով, սկսում է կոտորել ու թալանել այդ վայրերը, իսկ հայ ռայաներին ամբողջությամբ քշում է և տանում Իսֆահան... Այդ ժամանակ այս երկրի Ալայ-բեյ՝ Քենան բեյը, որ Կարսի իշխող Օսման-Աղայի կողմից ուղարկված էր գերիներ բռնելու, ընկնում է էմիր-Գյունեի զինվորների ձեռքը: Էմիր-Գյունեն նրան ուղարկում է Շահի մոտ: Շահը նրան՝ «Դու Թավրիզի թնդանոթապետն ես եղել» ասելով, կապում է թնդանոթի բերանին և դեպի Երևան կրակելով պատառ-պատառ անում: Երևանը բռնությամբ գրավելուց հետո, օսմանցիներին ազատություն է տալիս, նրանց պաշար և մթերքներ տալով, հատուկ կարավանով ուղարկում է Կարս: Երևանի պարսիկները բոլորովին քանդում, գետնին է հավասարեցնում և էյալեթը շնորհում

---

* *Էհլի-սյուննեթ կոչվում են Մուհամմեդին և նրա հաջորդներին հավատացող և հավատարիմ մուսուլմանները, այսինքն սյուննի դավանաքին պատկանողները:*

Էմիր-Գյունե խանին։ Շահը այդտեղից վեր է կենում և իր զորքերով գնում Կարս, պաշարում բերդը։ Կարսի զորամասը կազմված էր Երևանից եկած և մեծ մասամբ վիրավոր 400 քաջերից. սրանք աջեմի հետ կռվելու վարժ լինելով, դուրս եկան Շահի դեմ և սկսեցին կռվել։ «Մոլորյալ» Շահը նրանց լուր ուղարկեց և ասաց՝ «եթե Կարսը գրավեմ, այս անգամ ձեզնից ոչ մեկին չպետք է խնայեմ»։ Նրան հաջողվեց Կարսը գրավել։ Էրզրումի էմիր-ուլ-Ումերա՝ Քյոսեյ-Սեֆեր փաշան նրանց [մուսուլմաններին] ապահովեց պաշարով։ Շահը նպատակ ուներ գրավել նաև Ախալցխան [Ախալցխան]։ Այդ ժամանակ Ախալցխայի իշխողը Կարակաշ փաշան այնտեղ էր, և Աստուծո օգնությամբ կարողացավ բերդը պահպանել։ 300 աջեմներ ուղարկված էին մի մեծ խանում և հայ ռայաների կանանց բռնությամբ բերել տալով, զվարճությամբ էին զբաղված։ Հայերը դիմեցին Սեֆեր փաշային, որը Երևանից եկած զինվորներով հարձակվեց խանի (քարվանսարայի) վրա։ Թեթև հրացանային կռվից հետո, Սեֆեր փաշան տանիքը ծակելով ներս մտավ և հարբած աջեմներին ամբողջովին կոտորեց ու նրանց գլուխները ուղարկեց Ստամբուլ։ Ավելի ուշ, Սեֆեր փաշան և Կարակաշ փաշան, Ջղալե-Զադեի պարտության կրած կռվում նահատակվեցին։ Սակայն «Ֆեզլեքեում»* գրված է, որ երբ Շահը Երևանի վրա հաղթություն տարավ, Շերիֆ փաշային պատիվ անելով նրան Իմամ-Ռիզայի մյութեվելիության** պաշտոն տվեց։ Սա իր կյանքի մնացած օրերն անցկացրեց Մեշհեդում։ Շահը մյուս պաշարվածներին ազատ արձակելով, ասաց՝ «Ով ուզում է, թող իմ նոքարը լինի»։ Դրանց Մուհամմեդ փաշային հանձնելով՝ Կարս ուղարկեց։ Էրզրումի բեյլերբեյին ու Սերդարը՝ Սաաթջի-Հասան փաշան, վախճանված էին, այդ պատճառով բանակը ցրվեց և նոր ձեռնարկումները հետաձգվեցին հաջորդ տարվան։

(«Թարիխ—Նայիմա», հատ. I, էջ 388—396)։

* * *

Նայիման 1613 թ. դեկտեմբերի շարքում, շարունակում է պարսկական պատերազմի հաջորդ դեպքերի մանրամասն նկարագրությունը։ Իրանի արշավանքի դեկավար է նշանակվում Ջղալե-Զադե-Սինան փաշան. սա ճանապարհին ուժեր հավաքելով է զբաղվում և միայն ձմռանն է հասնում Կարս։ Երբ օսմանյան բանակը հասնում է Նախիջևան, Շահը հանգստանում էր Թավրիզում։

---

* «Ֆեզլեքե» — թուրք պատմագիր Քյաթիբ-Չելեբիի պատմությունը։
** Մյութեվելիություն — վակըֆների վարչություն, մյութեվելի՝ վակըֆների կառավարիչ։

Նայիման ասում է՝ «...որովհետև գյուղերի և քաղաքների ռայանները նախապես աքսորվել էին, երկիրը մնայել էր անմշակ, քաղցն ու սովը հասել էին ամենածայրահեղ աստիճանի...»։ Ջըղալե-Զադեն հրաժարվելով Շահի հետապնդումից, բաշվում է դեպի վան։ Այստեղ նա իր մոտ է հրավիրում քուրդ բեյերին, նրանց հետ միություն կազմելու նպատակով։ Շահ-Աբբասն Ալլահվերդի խանին մեծ ուժով ուղարկում է Ջըղալե-Զադե-Սինան փաշայի դեմ։ Պարսիկները պաշարում են վանը. փաշան բավարար ուժեր չունենալով, նավակով վանա լճի վրայով փախչում է դեպի Ադիլջևազ և այնտեղից շտապում Էրզրում։ Շահն իմանալով փաշայի փախուստը, վանի բերդի պաշարումը վերացնում է և բաշվում դեպի Թավրիզ։

1014 թ. Սինան փաշան նոր ուժերով արշավանքի է ելնում։ Սալմաստի և Խոյի շրջանում տեղի ունեցած կռվում կըզըլբաշները պարտվում են, բայց հետո, երբ օսմանցիները կըզըլբաշներին հետապնդելով շատ առաջ են գնում, պարսիկները կտրում են նրանց նահանջի ճանապարհը։ Օսմանցիները շարաշար պարտության են մատնվում, Ջըղալե-Զադե-Սինան փաշան ստիպված նորից բաշվում է դեպի Վան։

* * *

1019 թ. (1610) գարնանը Ջելալիների ոչնչացման գործում հայտնի գործած Մուրադ փաշան, Սերդարի պաշտոնով և մեծ ուժերով գնում է դեպի Թավրիզ։ Քաղաքը բոլորովին դատարկված և գրեթե ավերակ վիճակումն էր։ Նայիման գրում է. «...Իսլամական զինվորները մնացած շենքերն էլ քանդեցին ու այրեցին». դրանից հետո Սերդարը հատուկ նամակով դիմում է Շահ-Աբբասին, ու հայտնում, որ նա Շահ-Իսմայիլ II ժամանակ կնքված պայմանագիրը խախտել է։ Շահն իր նամակում հայտնում է՝

«...Ձեր սահմանի վրա եղող իշխանները, մեր վաճառականների ապրանքների վրա աչք ունենալով, մի քանիսին սպանել են։ Այս մասին բազմիցս հայտնել ենք փադիշահին, սակայն նա բոլորովին ուշադրություն չի դարձրել, չնայած որ սուլթանական նամուսը դրան չպետք է հանդուրժեր։ Ատուծո կարգադրությամբ, մենք գրավեցինք մեր ժառանգական կալվածները հանդիսացող երկրները։ Թաթարական զինվորները պարծանքի առարկա են։ Թաթարական զեկավարները՝ Իսլամ-Կիրայը և Ղազի-Կիրայը, Շիրվանի վրա զինվոր տանելով, կըզըլբաշների դեմ մղած կռվում պարտվել են, իսկ խանները իրենք գերի էին ընկել։ Հիմա եթե նորից գան, դարձյալ իրենց արժանի պատիժները կստանան։ Ալ-Օսմանի փադիշահների ուժը, հարստությունը և բանակի մեծաթիվ լինելը մեզ հայտնի է։ Սակայն մեր զորքերը առաջնորդվելով նվիրական Շարիաթի ցուցմունքներով, բոլորովին չեն սարսափում ձեր զորքի շատությունից։ Նորին Վեհափառություն սուլթան Սյուլեյման խանի, իմ հանգուցյալ պապ՝ Շահ-Թահմասբի հետ կնքած պայմանագրի համաձայն սահմաններն որոշելու կարելիության դեպքում, ես եր-

ջանիկ փադիշահի մեկ կուլն եմ. եթե մարդը թշնամության մեջ ուժեղ չինի, նրա բարեկամությանն էլ չի կարելի վստահել: Մեր բարեկամությունը կտևաննենք: Այնպես որ, եթե համաձայն չեք, այդ դեպքում թող տեղի ունենա նախախնամության կարգադրածը, վնասեցամ»:

Մեծ Սերդար Մուրադ փաշայի պատասխանը

«...Դուք հայտնում եք, թե թաթարական զինվորները պարծանքի առարկա են. թաթարները փադիշահի այլ կուլերի նման են: Եթե նրանց խաները զերի են ընկել, դա նախախնամության կարգադրությունն է, մի անգամ հաղթվողը, մի այլ անգամ հաղթող կհանդիսանա: Եթե ձեր կողմից զերի ընկածներին հաշվենք, բացի ավելորդ երկարաբանությունից, ամոթի առարկա կլինի: Այնպես որ, եթե դուք ձեռք քաշեք երջանիկ փադիշահի խութբեն կարդացված երկրներից, այդ դեպքում, ես էլ փադիշահի մի հավատարիմ կուլը լինելով, հույս ունեմ, որ խոսքս կընդունվի. մեր միջև խաղաղություն և ապահովություն ստեղծելու ջանքերը գործ դնելով, ըստ առաջնության սահմաններն որոշելուց հետո, ես կհեռանամ: Իսլամական զինվորները տարիներ շարունակ այս կողմերում են ձմեռում և նախախնամության կարգադրությամբ հաջողության հասնելու համար գործ են դնում ամեն տեսակ ջանքեր: Բարձրյալն Աստուծո ողորմությամբ՝ վրեժխնդիր լինելն անհրաժեշտ է: Սրանից առաջ Շահի ուղարկած նամակով, Շեմսեդդին-Մուհամմեդ աղան եկել և դիմելով Մուրադ փաշային խոսել էր հաշտության մասին: Նրա հետ միասին Խայրեդդին-Չավուշը բերել էր պատասխան-նամակը: Մոտ մի տարի է անցել, բայց պատասխան դեռ չի ստացվել: Սուլթան Մուրադ խանի ժամանակ մեր տիրացած երկրներն ազատելու համար, երբ ես Ջեմազիյել-ախըրի 20-րդ օրը մեծաթիվ զինվորներով էրզրում եկա, վերոհիշյալ Մուհամմեդ աղան և Խայրեդդին-Չավուշն եկան և հանձնեցին իրենց հետ բերած արքայական [Շահական] նամակը, որի մեջ ասված էր, որ դաշնագիրը խախտելու պատճառ է հանդիսացել սահմանի վրա պտնվող իշխողների կողմից ձեր վաճառականների ապրանքների գրավումն ու հափշտակությունը: Երկուստեք խոսքերն երկարում և շարունակվում են. դուք ցանկություն ունեք հաշտության գործը պուխ բերել, անցյալը մոռանալ և նախորդ սուլթանների ժամանակ ընդունվածի հիման վրա խաղաղություն կնքել: Այնքան ժամանակ,

որքան որ Սուլթան Մուրադ խանի օրոք նվաճված երկրները գտնվում են այն կողմը, պարզ է, որ «անցյալը պետք է մոռանալ» նշանաբանը, փադիշահի կողմից հավանության չի կարող արժանանալ։ Եթե խաղաղություն եք ցանկանում, պետք է հանձնեք այն երկրները, որտեղ կարդացվում է փադիշահի խութբեն»։

Այս բովանդակությամբ պատասխան գրվեց և ուղարկվեց։

(«Թարիխի—Նայիմա», հատ. II, էջ 84—86)։

1019 թ. (1610) ձմռանը նորից Շահի կողմից պատգամավորներ եկան։ Շահն առաջարկում էր հաշտություն կնքել, գրավված վայրերի բերքից տարեկան 200 բեռ մետաքս տալու և այդ երկրների վրա փադիշահի կողմից մի բեյլերբեյի նշանակելու պայմանով։ Մուրադ փաշան չի համաձայնվում և արշավանքի է պատրաստվում, սակայն նրա մրցակիցը՝ Նեսուհ փաշան, որը 1020 թ. Մուրադ փաշայի մահվանից հետո նրան էր փոխարինել, հակամետ էր Շահ-Աբբասի հետ համաձայնություն կնքելու։ Նեսուհ փաշան իր հետ վերցնելով Շահի պատգամավորներին և նրանց հետ բերած մեկ տարվա մետաքսը, գալիս է Ստամբուլ։ 1021 թ. երկու երկրների միջև կնքվում է խաղաղության պայմանագիր, Սուլթան Սյուլեյմանկանունիի և Շահ-Թահմասպի միջև որոշված սահմաններով և տարեկան 200 բեռ մետաքս իբրև տուրք վճարելու պայմանով։

Նայիման տալիս է հաշտության պայմանների մանրամասն պայմանները, որոնց մեջ բացի կրոնական և դավանական կետերից, կարևոր է նշել Օսմանյան պետության հավատարիմ Դաղստանի, Շամխալի և այլ խանների պաշտպանությունը և առանձնապես հետևյալ կետը՝ «Անիծյալ ռուսի այդ կողմերում երթևեկության ճանապարհը փակելու համար, նրա կողմից կառուցված Թերեք բերդի կործանման համար տրված ֆերմանին, Շահի գինվորներից ոչ մեկը չպետք է միջամտություն ցույց տա...»։

(«Թարիխի—Նայիմա», հատ. II, էջ 94—95, 113—114)։

1024 թվականի (1615) դեպքերը. Սերդար և Մեծ վեզիր Մուհամմեդ փաշան գնում է դեպի Երևան

Պարսից Շահի հետ նախապես կնքված խաղաղության պայմանագիրը Նեսուհ փաշայի հետ եկած պատգամավոր Կազի-խանը միջոցով 1021 թ. Շաբան ամսին Մուստաֆա Չավուշի ուղեկցությամբ ուղարկվել էր [Շահին]։ Նա [չավուշը] մոտ երկու տարի մնաց Աջեմի երկրում։ Շահ-Աբբասը չնայած որ հանձն էր առել ամեն տարի 100 բեռ մետաքս և 100 բեռ թանկագին ապրանքներ ուղարկել, երկու տարվա ընթացքում ոչինչ չէր տալել, ասելով՝ «Մի՞թե ես հարկատու եմ եղել»։ Խոստումնապանությունը և պայմանագրի խախտումը փադիշահի մեջ զայրույթ առաջացրեց։ Այդ պատճառով Ֆերման տրվեց, որ Վեզիր-Մուհամ-

մեզ փաշան արշավանքի պատրաստվի։ Նա Ֆերմանի համաձայն սկսեց պատրաստություններ տեսնել։ Այդ ժամանակ Աջեմի դեմ արշավանքի դուրս եկան Կափու-կուլիները, Ռումելիի և Անադոլուի զինվորները։ Նույն տարվա Ոկտեմբեր-ախբրի 23-րդ օրը Սերդարը մեծ հանդիսավորությամբ անցավ Սկյուդար... 20 օր հետո առաջ շարժվելով մտավ Հալեպ և ձմեռն այնտեղ անցկացրեց։

Այդ միջոցին Իրանի շահի սուրհանդակը գալիս և հայտնում է, որ Շահը համաձայն է ամեն տարի որոշված մեսաքը տալ։ Սակայն փադիշահն իր որոշումը չի փոխում։ Երբ Սերդարը Հալեպում էր, Շահի պատգամավորը գալիս է Ստամբուլ, սակայն ոչ մի ուշադրության և հարգանքի չի արժանանում։

Մի տարվա ընթացքում ոչ նրա նամակն են ընդունվում և ոչ էլ նրա բերած նվերները։

1025 թ. գարնանը նորից սկսվում են ռազմական պատրաստությունները։ Տարբեր կողմերից եկած ռազմական ուժերը հավաքվում են Էրզրումում և վերջ-նելով 7 թնդանոթ, շարժվում են դեպի Երևան։

(«Թարիխ—նայիմա», հատ. II, էջ, 141—142)։

Կարսի բերդի կառուցումը

Կարսի բերդը մոլորյալ Շահի բռնության հետևանքով քանդված էր։ Այժմ, անհրաժեշտ համարվեց բերդը նորոգել և այնտեղ զինվորներ պահել։ Կափու-կուլիներին և փաշաներին հանձնարարվեց մաս-մաս կատարել շինության աշխատանքները, որոնք մի շաբաթվա ընթացքում բերդը բնակելի դարձրին... բերդի պաշտպանության համար, զինվորներ և թնդանոթներ տալուց հետո, Ջեմազիյել-ախբրի կեսին շարժվեցին դեպի Երևանի դաշտը։ Գիշերը խրամատներ պատրաստելով բերդը պաշարեցին։ Էմիր-Գյունխանը նախապես բերդն ամրացրել, զինվորներով և ռազմամթերքով ապահովել էր։ Շահն իր զինվորներով գտնվում էր Նախիջևանում։ [Բերդի] շրջակայքում թնդանոթներ դրին և 20 օր շարունակ գնդակոծեցին, սակայն ապարդյուն։ Հետո սկսեցին հողը փորելցերեկը փորածը, գիշերը ներս էին տանում։ Փոսերում ձգված տոպրակները ու դարարները* կեռերով ներս էին քաշում։ Ի վերջո իսլամական զինվորներն ամրություններ շինեցին, զարբազաններով անցքեր բացին ու ամեն կողմից առաջացան դեպի բերդը։ Մաղենգերենցի հրացանաձիգները խմբված մեծ և կատաղի մարտեր

---

* Ղարար — թելից գործված խոշոր պարկ։

մղեցին, որի հետևանքով շատերը նահատակվեցին։ Երբ ենիչերիների աղան՝ Մյուսելլի-Աղան նահատակվեց և «Թուրքերեն չիմացողը* վիրավորվեց, բանակը ստիպված եղավ հետ քաշվել։

Հետո պատմագիրը մանրամասնորեն նկարագրում է հաջորդ պատերազմական գործողությունները։ Նախիջևանի պաշարումը տևում է 44 օր, կռիվները լինում են վերին աստիճանի կատաղի։ Ձմեռը վրա է հասնում, և օսմանցիները ստիպված են լինում պաշարումը վերացնել և հաշտություն կնքել՝ նեսուհ փաշայի ժամանակ որոշված մեսաքսի և նվերների կեսը տալու պայմանով։ Բերդի համար օսմանցիների բերած մեծաքանակ պաշարները ոչնչանում են։ Կրզըլբաշները բերդից դուրս գալով առևտուր են անում։ Ենդանիներն ուղարկում են Կարս։ Բանակը ձմեռվա դաժան խստության պատճառով մեծ դժվարություններով հասնում է Էրզրում, ճանապարհին շատերը սառչում են։

Այս անհաջողության պատասխանատուն Մուհամմեդ փաշան էր, որն «այնքան գանձով և զինվորներով անկարող եղավ Երևանի նման մի հողային բերդ գրավելու» [Նայիմա]։ Փաշային հեռացնում են վեզիրության պաշտոնից։ Ստամբուլում գտնվող Շահի պատգամավորը բանտարկվում է Եդի-կուլեում։ Նոր նշանակված Սերդար-խալիլ փաշան պատրաստվում է նոր արշավանքի։ Ղրիմի խանին՝ Ջանիկ-Կիրային ֆերմանով առաջարկվում է մասնակցել արշավանքին։ Սա 40 հազար զինվորներով Քեֆեից անցնում է Գենջե, Նախիջևանը և Ջուլֆան կողոպտում, որի համար արժանանում է փադիշահական շնորհների (500 ալթուն, սուր, խալաթ, ձի և այլն)։

(«Թարիխի—Նայիմա», հատ. II, էջ 142—143)։

1026 թվականի (1617) դեպքերից

Վրաստանի պաշտպանության համար զինվորների առաքումը

Գուրիլի իշխանը նամակ էր ուղարկել և հայտնել, որ կրզըլբաշները նպատակ ունեն Վրաստանը իրենց տրամադրության տակն առնելու։ Այդ պատճառով Վրաստանի պաշտպանության համար, կարգադրություններ ուղարկվեցին Բաթումի բեյլերբեյի Օսման փաշային, Ջըլդրի բեյ Մուրթազա բեյին, Սեֆեր փաշային և Վրաստանի կողմերում եղող այլ իշխողներին և էմիրներին, Գուրիլի, Դադիանի և Աչըք-բաշի բեյերին, Դաղստանի իշխաններին, իրենց տրամադրության տակ եղած զինվորներով, ինչպես նաև Էրզրումում և Տրապիզոնում գտնվող բոլոր ենիչերիներին՝ իրենց սպաներով միասին, անհապաղ հավաքվեն Սերասքերի մոտ և պատրաստ լինեն։

(«Թարիխի—Նայիմա», հատ. II, էջ 151—152)։

---

* Վանի Բեյլերբեյի Հյուսեին փաշային տրված անունը։

* * *

Սերդար Խալիլ փաշան մեծ բանակով գնում է Բավրիզի վրա, նրա հետ էր նաև Թաթար խանը՝ Ջանիկ-Կիրայը։ Շահը էրդեբիլումն էր, Թաթար խանը իր զինվորներով և 10 սանջակ զինվորներով ուղարկվում է Շահի նշանավոր խաներից՝ Կարշղայ խանի դեմ, որը գտնվում էր էրդեբիլի մոտ։ Թաթար խանը 8 կոնաքի ճանապարհն անցնում է երկու և կես օրում և Սերավի դաշտում կռվի մեջ մտնում Կարշղայի հետ։ Կատաղի կռվում խլամշական և Թաթարական բանակի գլխավորներից շատերը սպանվում են, մի մասն էլ գերի է ընկնում։ Ջանիկ-Կիրայը հազիվ է ազատվում և փախչում։ Խալիլ փաշան այս պարտության լուրն առնելով գնում է դեպի էրդեբիլ։ Շահ-Աբբասն էրդեբիլը դատարկում է և հետ քաշվում։ Նորից սկսում են հաշտության բանակցություններ և Նեսուհ փաշայի ժամանակ ընդունված պայմաններով հաշտություն է կնքվում 1027 թ. (1618)։ Նայիման՝ «Սերավի դաշտում երկուսանք կնքված խաղաղություն» վերնագրով հատվածում տալիս է, ի միջի այլոց, հետևյալ մանրամասնությունները. «...խոսքանկ Շահը զինվորների համար ուղարկեց 800 ուղտի բեռ պաշարեղեն... մասնավորապես մեծ վեզիրի համար 9 ուղտի բեռ հալվա և քաղցրեղեն (մուրաբբա), ամեն տեսակի պտուղներ, մասնավորապես լիմոնի և նուռի ամենաընտիր տեսակները, նուրբ և ընտիր մետաքսե գործվածքներ, բրինձ, շաքար (որի ամեն մի դլուխը 5—10 կըյե* էր կշռում), ենիչէրիների աղային, Սադրազամի քեթխուդային, այլ փաշաներին և ավագաններին՝ 2—3—5 ուղտի բեռ նվերներ, որով իր բարեկամություն ու անկեղծություն արտահայտեց։ [Շահի] պատգամավորը՝ Միրզա-Մուհամմեդն այդ բոլորը բերեց և բաժանեց ինչպես որ հատկացված էր...»։ 1029 թ. (1619) Շահ-Աբբասի պատգամավորը՝ Բուռուն-Կասըմ բեյը գալիս է Ստամբուլ, իր հետ բերելով 100 բեռ մետաքս և 4 ուղտի ու մեկ ռնգեղջյուրի բեռ զանազան նվերներ։

Տեղի ունեցած բանակցությունների հետևանքով Ախաթայի էյալեթն ամանցիներին մնալու, իսկ Բաղդատի սահմանում երկու սանջակ պարսիկներին տալու պայմանով, ստորագրվում է խաղաղության պայմանագիրը։

Նայիման հիշում է 1930 թ. (1620) տեղի ունեցած կլիմայական արտակարգ երևույթը։ Ձմռան, Ռեբի-ուլ էվվելի 10-ին, Ստամբուլում մեծ բանակությամբ ձյուն է տեղում և այնպիսի սաստիկ սառնամանիքներ են լինում, որ ծովը սառչում է։ Նույն ամսի 17-ին Ստամբուլի և նրա Ասիական մասի՝ Սկյուդարի միջև ծովը բոլորովին սառչում է, նավագնացությունը կանգ է առնում, որի հետևանքով քաղաքում առաջանում է մեծ թանկություն։

Նայիման ասում է, որ ըստ պատմագիրների տված տեղեկությունների, հիջրեթի 121 թ. Ստամբուլում տեղի է ունեցել նման երևույթ։

Այդ մասին Հաշիմի Չելեբին գրել է չափածոյով,

Ճանապարհ եղավ դեպի Սկյուդար,
Հազար երեսունին Սպիտակ ծովը սառից։

(«Թարիխի—Նայիմա», հատ. II, էջ 164—168, 172—173)։

---

* կըյե կամ օկկա—ծանրության կշիռ է, հավասար է 1 կգ. 284 գրամի։

Աբազա փաշայի ապստամբական շարժման մասին

Նայիմայի «պատմության» մեջ Աբազա փաշայի ապստամբական շարժումը շատ մեծ տեղ է բռնում։ Այդ շարժումը կապված էր Թուրքիայում, մասնավորապես Սամսրուում ծայր առած ենիչերիների հատած ենիչերիական խլրտումների և անկարգությունների հետ։ Աբազա փաշայի ապստամբական շարժումը զուգադիպում է կրզըլբաշների վրաստանում կատարած արշավանքի և Շահ-Աբբասի կողմից Բաղդատի գրավման կապակցությամբ՝ Թուրք-պարսկական պատերազմական գործողությունների ընդարձակման հետ։ Վրաստանում կատարված դեպքերը թարգմանում ենք ամբողջությամբ։ Բաղդատի շուրջը մղվող երկարատև կռիվ ներն անմիջական կերպով կապ չունենալով Հայաստանի հետ, դուրս են մնում մեր նյութից։ Իսկ Աբազա փաշայի ապստամբական շարժման վերաբերյալ նյութերը, որոնք Նայիմայում տրված են ըստ տարեգրության և շատ ընդարձակ մանրամասնություններով, մենք տալիս ենք մի ընդհանուր համառոտ տեսությամբ, թարգմանելով Նայիմայից միայն բնորոշ հատվածները։

Նայիման Աբազա փաշայի մասին ասում է՝ «Աբազա փաշան ինքնատիրության կարող և քաջարի անձնավորություն էր։ Սկզբում գտնվում էր Ջանփոլադ-Օղլուի* ծառայության մեջ։ Մուրադ փաշայի սրից ազատվել էր ենիչերիների աղա Խալիլ փաշայի միջնորդությամբ, որից հետո ծառայել էր Խալիլ փաշային։ Շնորհիվ իր ընդունակության, Խոթինի արշավանքի ժամանակ նշանակվել էր Ռումելիի բեյլերբեյի... հետո ստացել էր Էրզրումի էյալեթը։ 1031 թ. երբ տեղի ունեցավ Սուլթան Օսման II գահընկեցությունը, Աբազա փաշան՝ լսելով այդ, որոշեց փադիշահին սպանողներից՝ ենիչերիներից վրեժ լուծել... զինվոր և հարբուտություն հավաքելու բնդունակ լինելով, մեծ թվով անկքաններ հավաքեց։ Նա հատկապես հարգանք էր ցույց տալիս հայտնի, անվանի քաջ և կարող մարդկանց։ Ենիչերիները խիստ ինքնահավան էին դարձել և գոռոզացել էին, Էրզրումն էլ անկարգ և ապօրինի շարժումներից հետ չէին մնում, Էմիր-ուլ-Ումերայի մարդկանց նեղություններ պատճառում, իրար հայհոյում ու անարգում էին։ Աբազա փաշան խառնակչություններ առաջացնողներին, հայհոյողներին և կռվողներին անխնա կերպով կոտորեց, կախեց իր ձեռքն անցած ենիչերիներին և Էրզրումը նրանցից մաքրեց։ Հետո իր էյալեթին ենթակա Ախալցխայի բերդում եղած բերդապահ ենիչերիներից 70-ի չափ մարդ կոտորեց, Վրաստանի սահմանները նրանցից մաքրեց... այս մասին լուրեր տարածվեցին և շրջակայքում խոսում էին թե՝ Աբազա փաշան ապստամբվել է և Սուլթան Օսմանի արյան համար ենիչերիներին կոտորում է...»։

Այդ պատճառով Աբազա փաշայի Սվազ ուղարկած անկքաններին ենիչերիները կոտորում են։ Փաշան 40 հազարի չափ լավ զինված զինվորներ է հավաքում և շարժվում Սվազի վրա։ Սվազի բնակիչները նրան դիմավորում են մեծ պատվով։ Աբազա փաշան բոլոր ենիչերիներին հաշվառման է ենթարկում։ Մի քանի որ հետո հրամայում է, որ բռնեն և իր մոտ բերեն Սվազի ենիչերիներից երեք հայտնի քաջերին... փաշան երեքին էլ ուղտերի վրա փայտով մեխել է տալիս, ուսերը ծակելով մեղրամոմ լցնում և վառել տալիս, «իրենց փադիշահին չհնազող մարդկանց վիճակն այս է» ասելով՝ քաղաքում ցուցադրե-

---

* Ջանփոլադ-Օղու, Ջելալիների պարագլուխներից էր։

լուց հետո տարբեր ձևերով սպանում է։ Փաշան բոլոր դատի ենթիլերիներին անխընա կերպով կոտորում է, նրանց բնակարանները կողոպտում և թալանում։ Նայիման ասում է՝ «...նրանց ամեն մեկի բերանում կրկնվում էին այս խոսքերը «Ստամբուլ պիտի գնանք, Դար-ուլ-Սուլթանեն* պիտի կողոպտենք ու թալանենք»։ Այս դեպքերի պատճառով շրջակայքի ժողովուրդը շատ սարսափահար էր եղել։ Մարաշի բեյլերբեյին՝ Կլավուն-Յուսուֆ փաշան 10 հազար զինվորներով միանում է Աբազա փաշային։ Աբազա փաշայի ապստամբական շարժումը բնդարձակվում է։ Ստամբուլից Աբազայի վրա է ուղարկվում սերասքեր Մյուրթեզա փաշան, որը 10 հազարի չափ զինվորներով Կարա-Հիսարի-Շարբիյում սպասում է Աբազա փաշային։ Աբազա փաշան գալիս է մեծ ուժերով, կռիվը շատ կատաղի է լինում։ Նայիման ասում է. «Ջելալինները բազմաթիվ լինելու պատճառով, Մյուրթեզա փաշան պարտվեց և քաշվեց Կարահիսարի բերդը։ Աբազան պաշարում է բերդը, Մյուրթեզա փաշան հանձնվում է և ենթարկվում Աբազա փաշային, որը նրան ընդունում է մեծ պատվով։ Ստամբուլից Սվազի վալի նշանակված Բայար փաշան գալիս և դրավում է Սվազը, հետո փաշան միայն խորամանկությամբ կարողանում է ազատվել Աբազայից և փախչում է։ Մեծ վեզիր Մուհամմեդ փաշայի բանակը, որը ուղարկված էր Աբազա փաշայի վրա, Մուհամմեդ փաշան գալիս է շատ խոշոր ուժերով։ Աբազա փաշան,— ասում է Նայիման,— տեսնելով որ Ալ-Օսմանի վեզիրն իր վրա է գալիս, մեծաթիվ զինվորներով օսմանյան բանակին դիմավորելու համար հավաքում է թուրք, քուրդ, թուրքմեն և այլ ցեղերից անթիվ զինվորներ և դուրս գալիս Սվազից Սերդարին դիմավորելու։ Աբազա փաշան Կայսերիի (Կեսարիա) դաշտում տեղի ունեցած կատաղի կռվում պարտվում և փախչում է։ Նայիման հիշում է, որ Քյաթիբ-Չելեբին իր հոր հետ միասին Սերդարի բանակումն է եղել և ինքն ականատես լինելով այդ պատերազմական դեպքերին, իր «Ֆեզլեքեյում» մանրամասն նկարագրել է այդ պատերազմը։ Աբազան նահապետ գնում է Սվազ և այնտեղից էրզրում։ Սերդարը նրան հետապնդում է, ապստամբ փաշան դիմում է սերդարին և «աման» խնդրում։ Սերդարն ընդունում է Աբազայի խնդիրքը և նրան դարձյալ տալիս է Էրզրումի էյալեթը (1033)։

Սակայն Աբազա փաշան հետագայում շարունակում է իր ապստամբական շարժումը։ Այդ ժամանակ պարսիկները պաշարել էին Ախալցխայի բերդը։ Անապոտի վալի՝ Դիլլենդ-Հյուսեին փաշան Սերասքեր է նշանակվում և ուղարկվում է Ախալցխա։ Աբազա փաշան իմանում է, որ Սերդարի կողմից իր ապանության մասին հրահանգներ են տրված, նա հավաքում է իր ուժերը և Դիլլենդ փաշայի դեմ մղած կռվում նրան վիրավորում և բանակը պարտության է մատնում։ Հաբիլ փաշան, Աբազայի ապստամբությանը վերջ տալու նպատակով պաշարում է Էրզրումը։ Այս պաշարմանը մասնակցում է վրացի Մագրալ բեյը, իր հետ բերած ենդանոթով։ 70 օրվա պաշարումից հետո Հաբիլ փաշան սաստիկ ձմեռվա պատճառով ստիպված է լինում պաշարումը վերացնել և նա վերադառնալ։ 1037 թ. (1627) Աբազայի վրա է ուղարկվում նախկին ենիչերիների աղա՝ Խուսրև փաշան, որը մեծ ուժերով և բազմաթիվ ենդանոթներով պաշարում է Էրզրումը։ Աբազան, տեսնելով, որ դիմադրությունն անհնարին է, դիմում է փաշային և հանձնվում։

---

*Դար-ուլ-Սուլթանե՝ բառացի նշանակում է Սուլթանի ապրած վայրը, այսինքն մայրաքաղաք Ստամբուլը։

Պատմագիր Նայիման մեծ դժվարանքներով է խոսում Խուսրեվ փաշայի մասին, որը կարողացավ վերջ տալ տարիներից ի վեր պետության և երկրի համար պատուհաս դարձած Աբազա փաշայի ապստամբական շարժմանը։ Խուսրեվ փաշան Աբազային իր հետ վերցրած գալիս է Ստամբուլ, նրա միջնորդությամբ Աբազան փադիշահի կողմից «ներման» է արժանանում... և նշանակվում է Բոսնիայի բեյլերբեյլիք։

* * *

Նայիման իր պատմության III հատորում՝ 1044 թ. (1634) դեկտեմբերի շարքում նորից վերհիշում է Աբազայի մասին և «Նշանավոր Աբազա-Մուհամմեդ փաշայի սպանությունը» վերնագրով հատվածում տալիս է այդ փաշայի արկածալից սպանության դեպքը, մեծ մանրամասնություններով։

Բոսնիայից հետո Աբազա փաշան Ստամբուլում մեծ դիրք է ձեռք բերում։ Նայիման նրան անվանում է փադիշահի հատուկ «խաս-նեդիմը»*։ Նայիման ասում է, որ Աբազա փաշայի սպանության պատճառի մասին տարբեր և իրար հակասող տեղեկություններ կան։ Առաջին՝ որ նրան չեն վստահել՝ ի նկատի ունենալով նրա արյունոտ ու գավազիր անցյալը։ Երկրորդ՝ որ նա իր բազմաթիվ կողմնակիցների և ենթականների միջոցով կարող էր նորից խլրտումներ առեղծել։ Երրորդ՝ Բոսնիայում վախի եղած ժամանակ հայտնի հարուստ Բագիրգյան-Զադեից փող կորզելու նպատակով՝ նրա նկատմամբ բռնություններ է ցույց տվել, որի համար հարուստը փադիշահին գանգատ էր ներկայացրել։

Պատմագիրն այս վերջին կարծիքը ավելի հավանական է համարում։ Աբազայի սպանության առիթ է հանդիսացել «կարմիր ձվի օրվա» (Զատիկի) առթիվ «բյաֆիր» հայերի և հույների միջև տեղի ունեցող վեճն ու կռիվը, որի համար «...այդ երկու տգետ ամբոխն երկար թշնամությունից և կռվից հետո, վեճը լուծելու համար դիմում են Երուսաղեմի Կամամն եկեղեցուն, այն պայմանով, որ սպասեն մինչև պատարագի առանալը։ Սակայն հայ բյաֆիրներն իրենց կատարյալ հիմարության պատճառով, վեճը մեծացնելով դիմում են Աբազա փաշային և 50 հազար ղուրուշ** տալով՝ նրանից օժանդակություն են խնդրում։ Աբազան անգրագետ և աշխարհաեաեր (նյութապաշտ) անձնավորություն լինելով, առանց հետևանքը նկատի առնելու, իր ժլատության պատճառով այդ գումարը վերցնում և խոստանում է օգնել հայերին։ Լրտեսներն այդ մասին հայտնում են փադիշահին։ Երբ փադիշահն Աբազայից հարցնում է, թե հայերից ինչքա՞ն փող է առել, նա առում է ասելով, որ 12 հազար ղուրուշ։ «...փադիշահը՝ համոզված լինելով Աբազայի ժլատության ու խարեության և «հայերի մոլեռանդության ու հավատության մասին», խիստ զայրանում և մի քանի օր անց գանգատավոր հայերին՝ գլխատում է, իսկ Աբազա փաշային նախապես բանտարկում է Խաս-բաղչայի պալատում, հետո սպանել է տալիս 1044 թ. (1634)։

Տարօրինակն այն է, որ Աբազա փաշային թաղում են մեծ հանդիսավորությամբ։ Պատմագրի առնելով Աբազայի թաղմանը ներկա էին պետական բոլոր դե-

---

* Նեդիմ (նեդիմի-խասս), փադիշահին հետաքրքիր խոսքերով և պատմվածքներով զբաղեցնող ու զվարճացնող անձնավորություն։

** Ղուրուշ — օսմանյան լիրայի 1/100-րդ մասն է, որը հավասար է 40 փարայի (պիաստր)։

կավար անձերը, իսկ ժողովրդից՝ անթիվ մարդիկ։ Այսպիսի արկածալից և արտունալի է եղել Աբաղա փաշայի երկարատև ապստամբական շարժումը։

(«Թարիխ—Նայիմա», հատ. II, էջ 240—241, 253, 254, 298, 314, 320—326, 416—417, 433—434, հատ. III, էջ 224—232)։

1034 թվականի (1634) դեպքերից.

Կրզըլբաշ զինվորների պարտությունը Վրաստանում

Հին ժամանակներից ի վեր Վրաստանի իշխաններն (էմիրները) Օսմանյան դինաստիային հպատակության ցույց տալով ուաֆըզի [հերետիկոս] զինվորների հարձակումներից ապահովված էին։ Բայց մի քանիսը՝ խաբվելով խորամանկ Շահի նենգամտությունից և խարդավանքներից, կեղծավորությամբ մոտիկություն ու բարեկամություն ցույց տվին [Շահին] և նրան հպատակվեցին։ Դրա հետևանքով որքա՜ն բնակավայրեր ենթարկվեցին ավարի և թալանի, որքա՜ն ընտանիքներ գերվեցին և վնասվեցին։ Շահի կողմից կատարված բռնությունները և ճնշումներն օրեցօր ավելանում էին։ Ջեքեմի իշխանը՝ Բեյմուրազ խանը, չկարողանալով տանել նրանց [կրզըլբաշների] բռնությունները, մի քանի անգամ կռվել էր Վրաստանի վրա հարձակվող խանների դեմ և նրանց պարտության մատնել։ Այս անգամ նա [Թեյմուրազը] միանալով Քարթլի իշխան Մաղրաւ խանի, Գուրիլի, Դադիանի, Աչըք-Բաշի և Կարա-Կալքանի մելիքների և Վրաստանի այլ իշխանների հետ, ձեռնարկեց կռվել Վրաստանը նվաճելու դիտավորությամբ եկող Կարչղայ-խանի և ընդհանրապես կրզըլբաշ զինվորների դեմ։ Վերոհիշյալ Մաղրաւ խանը, հնազանդության կարգով, Շահի բանակումն էր գտնվում։ Շահը 30 հազարի չափ կրզըլբաշ զինվորներ և հռչակված խաներ Կարչղայ խանին տրամադրելով, Մաղրաւ խանի հետ միասին ուղարկել էր Վրաստանը թալանելու։ Վերոհիշյալը [Մաղրաւ խանը] նախապես գաղտնի կերպով Բեյմուրազ խանի հետ համաձայնություն էր կնքել, որ Վրաստանում մի նեղ կիրճում պատրաստ պետք է լիներին որոշված ժամանակին՝ հարձակման անցնելու համար։ Մաղրաւն իր զինվորների հետ միասին հետ մնաց, իսկ կրզըլբաշ զինվորները բոլորովին անփույթ կերպով կիրճը մտան, ամեն մեկն իր ուզած ձևով հանգստանում ու քնում էր, մյուսներն էլ խմում, հարբում և զվարճանում էին։ Այդ միջոցին լեռներից դուրս եկան դարան մտած զինվորները, իսկ Մաղրաւը Կարչղային մոտենալով ասաց՝ «Ինչ ես կանգնել, իմ խան, հրամայիր զինվորներին, որ ձի

հեծնեն և պատրաստ լինեն» և իր ձևրքի նիշակով հարված իջեց-րեց Կարչղայ խանին՝ ֆիկունքից ներքև։ Կարչղայը՝ «Ով քյաֆիր, Շահի հացը քեզ հարամ լինի» ասաց և ձիուց վար ընկավ։ Կարչղա-յի տղան, տեսնելով այդ՝ «Ո՛վ Շահի թշնամի, այդ ի՞նչ արիր» ասաց և նրա վրա հարձակվեց։ Մաղրավը սուրը քաշելով նրա գլու-խը և մեկ թևը կտրեց ու ներքև գցեց։ Կըզըլբաշ զինվորներն իրար խառնվեցին, իսկ նրանց խանները շփոթվել էին և չգիտեին, թե ինչ պետք է աներ։ Վրացի բեյերը տարբեր կողմերից նրանց վրա հար-ձակվեցին և այնպիսի մի կոտորած սարքեցին, որ 30 հազար կըզըլ-բաշներից միայն երեք հազարը ազջ մնացին և շտապ ձի նստելով մեծ դժվարությամբ կարողացան փախչել և Շահի բանակում շունչ առ-նել։ Վրացի կտրիճները, թեթևաշարժ, փախչող կըզըլբաշների հե-տևից ընկան և մինչև Դարաբաղի սահմանն իրենց պատահած ու բռնած կըզըլբաշների գլուխները գետին գլորեցին։ Այդ օրը կռիվը շարունակվեց առավոտից մինչև երեկո առանց ընդմիջման և հա-զարավոր մարդիկ սրի քաշվեցին։ Կարչղայի, նրա որդու, էմիր-Գյոնե խանի, Կապղան-խանի որդու, Շիրվանի խան Յուսուֆ-խանի, Մուհամմեդ-խանի, Այուբեյման-խանի և 10 սուլթանների գլուխները կտրելով, նրանցից յուրաքանչյուրի վրա հատուկ պի-տակներ (յաֆթա) դնելով, նրանց դրոշակների, թմբուկների և զին-վորական փողերի հետ միասին 6—7 հազար գլուխ և 20-ի չափ գերիներ, Սերդարին ուղարկեցին։ Ռամազան ամսի 21-ին Մաղրա-վը, նրա որդին և մի քանի վրացական իշխաններ կայսերական բանակն եկան։ Քաղաքում ռայաներին քշելով, կտրված գլուխ-ները մի-մի փայտի վրա ցցած և թմբուկները ու փողերը գլխիվար դարձրած անցկացրին Սերդարի վրանի առաջից։ Հետո այդ բոլորը, Ամասիայի բեյը՝ Մուհամմեդ-բեյի միջոցով ուղարկեց պետության մայրաքաղաքը։

Զինվորների ուղարկումը դեպի Վրաստան

Մաղրավն իր նամակում և դիմումում հայտնում էր՝ «Եթե իս-լամական զինվորներ ուղարկվեն այս կողմերը, հարմար առիթ է, Գենջեի, Դարաբաղի և Շիրվանի ժողովուրդները հպատա-կության ցույց կտան, իսկ էրդեբիլի կողմերը կգրավվեն։ Այդ վայ-րերը աննգամթերքներով և ռազմամթերքներով շատ հարուստ են. դժվարություններ չեն լինի. կըզըլբաշների երկրին կարելի է մեծ վնասներ պատճառել։ Բացի այդ, նրա [Մաղրավի] մարդիկն էլ բն-

բանաձի հայտնեցին և պնդեցին այդ մասին։ Հաֆըզ փաշան նշանակված լինելով Բաղդատի վրա արշավելու դեպի այդ կողմերը, դնալու համաձայնություն չտվեց։ Այ և ձախ վաշտերից երկու հազարի չափ Կուլ-Օղլու* իրենց աղաների հետ միասին գրաւեցվեցին։ Բաթումի բեյլերբեյին՝ էմեր փաշան Վրաստանի սերասքեր նշանակվեց և որոշ քանակությամբ ենիչերիներ և կուլ-օղլուներ ուղարկվեցին վերոհիշյալ Սերդարի տրամադրության տակ։ Այդ բոլորից հետո այդ սահմաններում եղող բեյերին հրամաններ ուղարկվեցին, որ Վրաստանի իշխանների հետ միանան, երբ Սերդարն այդ երկրում երևա, նրանք պետք է կըզըլբաշների երկիրը կողոպտեն ու թալանեն։ Կրնաքլ-իշխան էմի խանին նույնպես գրություն ուղարկվեց և հանձնարարվեց, որ Դաղստանի զինվորներով պատրաստ լինի և այդ կողմից ևս հարվածի կըզըլբաշների բանակին։

Բայց այդ տարում այս կողմերում կարևոր արդյունքներ ձեռք չբերվեցին։ Փեչեվելին** ասում է՝ «Մաղրավի մարդիկ մի քանի անգամ եկան ու գնացին՝ բերանացի համաձայնություն խնդրեցին։ [Հաֆըզ փաշան] պատասխանեց՝ «Երջանիկ փադիշահը մեզ հանձնարարել է Բաղդատը գրավել, մենք չենք նշանակված Վրաստան և Շիրվան գնալու համար։ Ես շատ ջանք գործ դրի, բան դուրս չեկավ։ [Հաֆըզ փաշան] ասաց՝ «Ես վստահ չեմ, որ դրանից նպաստավոր արդյունք կստացվի, հարմար չէ, որ անորոշ գործի համար ժամանակ կորցնենք և մեզ համար կարևոր նշանակություն ունեցող ծառայությունից ետ մնանք»։ Ես նրան հարց տվի՝ «Արդյո՞ք մեր նախկին սուլթանները կամ վեզիրներն իրենց ձեռք բերած հաղթանակների համար նախապես վստահ են եղել, Սերդարն անհրաժեշտ հավանականությամբ պետք է գործի ձեռնարկի և Աստծուն ապավինի (թեվեքքյուլ)։ Հիմա երբ դուք գնում եք Բաղդատը նվաճելու, հաստատ գիտե՞ք, որ այդ ձեզ կհաջողվի»։ Այս հարցին նա պատասխանեց՝ «Բարձրյալն Աստուծո կամքով, հաստատ համոզված եմ, որ այդ [Բաղդատի գրավումը] ինձ կհաջողվի, այդ մասին կասկած անգամ չունեմ»։ Երբ մենք դիմեցինք ենիչերի աղա՝ Խուսրեվ-Ադային, նա պատասխանեց՝ «Մենք ենթակա ենք փաշային, բացի հնազանդությունից ոչինչ չենք կարող անել։ Պարտավոր ենք ենթարկվել Սերդարի հրամանին»։ Սակայն որովհետև Խուսրեվ-

---

* Կուլ-Օղլու՝ գերիներից կազմված բանակ։

** Փեչեվելին — սխալ է, պետք է լինի Փեչեվի (պատմագիր). տե՛ս գրքի «Թարիխ-Փեչեվի» պլուխը։

Աղան ներքուստ չէր ցանկանում, որ Հաֆըզ փաշան հաղթանակ տանի, այդ պատճառով էլ դեպի այդ կողմը շարժվելու հակամետ չեղավ: Եթե Վրաստանի կողմերում ջանքեր գործ դրվեին, մեծ հաղթանակ կարելի էր ձեռք բերել: Սակայն Քյաթիբ-Չելեբին իր «Ֆեղլեքեյում» ասում է՝ փչեվելիի ցանկությամբ շարժվելով, Հաֆըզ փաշայի այդ կողմեր գնալն ապարդյուն էր: Վիլայեթին [երկիրը] ավերելով, միթե՞ Շահը Բաղդատը կհանձներ: Այն պահին, երբ նա [Հաֆըզ փաշան] նշանակված էր Բաղդատը նվաճելու, եթե այդ ուղղությամբ գնար և հաղթանակ ձեռք բերել չկարողանար, հանդիմանության չէ՞ր արժանանա: Անցյալում սուլթան Սյուլեյմանի Նախիջևանի արշավանքի արդյունքը պատմության մեջ արձանագրված է: Թեև Հաֆըզ փաշան Բաղդատի վրա արշավելով արդյունքի չհասավ, սակայն բանակը որոշ փորձառություն ձեռք բերեց և պարզվեց, որ Բաղդատը հեշտությամբ չի կարելի գրավել:

Վրաստանում կըզըլբաշների հետ կատարված դեպքի մանրամասնությունը

Սուլթան Ահմեդ խանի ժամանակ Վրաստանի իշխաններից իր գեղեցկությամբ և վայելչությամբ, քաղցրությամբ և գրավչությամբ մեծ հռչակ էր ստացել Թեյմուրազը: Երբ Շահ-Աբբասը լսեց նրա գեղեցկության և վայելչության մասին, միջոցներ փնտրեց և մի կերպ կարողացավ նրան իր մոտ ծառայության առնել: Երբ նա [Թեյմուրազը] կատարելիության աստիճանին հասավ, [Շահ-Աբբասը] նրան նշանակեց Վրաստանի մայրաքաղաքի՝ Ջեքեմի իշխան՝ Թեյմուրազ-խան անունով: Բայց հետո Թեյմուրազն Աջեմի Շահին հակառակություն ցույց տալով, վանի բեյլերբեյի՝ «Թուրքերեն չիմացող» Հյուսեին փաշայից օգնություն խնդրեց: Բայց դեռ օգնությունը չհասած, շտապ վերցրեց Վրաստանի բանակը և կըզըլբաշների դեմ կռվի ելավ: Շատ սպանություններ և կողոպուտներ կատարեց: Իսկ Շահ-Աբբասը, միանալով վրացի բեյերից Մաղրալ-բեյ անունով ազնաուրի հետ, նրա ուժից օգտվելով, Թեյմուրազից վրեժ լուծելու համար, Վրաստանի վրա բանակ ուղարկեց: Թեյմուրազը փախավ Աչըք-Բաշ կոչված երկիրը: Աջեմի շահը, Վրաստանը կողոպտելով և կոտորելով ավերեց բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ, մասնավորապես վրացիների մայրաքաղաք Ջեքեմն այրեց ու կործանեց: Իսկ երբ Աջեմի բանակը հետ քաշվեց, Շահն իր մարդկանցից [օդնականներից]

Փեյքեր-Սուլթանին Վրաստանի խան նշանակեց և պատվիրեց, որ արդարադատությամբ վարվի և ավերված երկիրը վերականգնի։ Որովհետև Զեքեմն ավերված էր, այդ իսկ պատճառով Փեյքեր-Սուլթանը, կրնըք գետի եզերքում, Քելֆիզ կոչված քաղաքը վերաշինեց, ամրացրեց և մայրաքաղաքի վերածեց։ Երկիրն արդարադատությամբ կառավարելով հայտարարեց՝ «Շահը հրամայել է, որ ամեն մարդ իր տունը նորոգի և արտը մշակի, աշխատանքով ղբաղվի, սերմացու չունեցողներին խազինայից [պետական գանձարանից] սերմացու փոխ տրվի և երեք տարի [ժողովուրդը] պետական պարտքերից ազատվի»։ Լեռներում և դաշտերում ցրված վրացի ռայաները նորից հավաքվեցին և շինարարություն սկսելով երկիրը շենացրին։ Կըզըլբաշների վախից թաքնված և թափառական դարձած վրացիները դուրս եկան և սկսեցին վար ու ցանքսով զբաղվել։ Բոլորը Փեյքեր-Սուլթանին հպատակություն ցույց տվին։ Սակայն Փեյքեր-Սուլթանը, վախենալով վրացիների շատությունից [բազմաթիվ լինելուց] Շահին դիմեց և ասաց՝ «Վրացիները նորից շատացան, կարող են դուրս գալ [ապստամբել], ներկայումս 10 հազար սուր բռնելու կարող վրացիներ հավաքված և պատրաստ են, ի՞նչ ես հրամայում»։ Շահն իր պահակապետներից, վերոհիշյալ Կարչղայ խանին, մի քանի հազար կըզըլբաշ զինվորներով Մազրաավ բեյի հետ միասին, հում մետաքս գնելու պատրվակով, ուղարկեց Վրաստան։ [Շահը] պատվիրեց, որ [Կարչղայը] առանց Մազրաավ բեյի հետ խորհրդակցելու, ոչ մի գործի չձեռնարկի։ Միաժամանակ հայտնեց, որ պետք է իրենից գաղտնի նամակի ու ֆերմանի ապատի և ըստ այնմ վարվի։ Կարչղայ խանը և Մազրաավ բեյը գալիս են Վրաց երկիրը և հայտարարում, որ համաձայն ֆերմանի, Փեյքեր-Սուլթանին հպատակվող և Շահին բարեկամ եղողները պետք է ներկայանան այսինչ տեղը և շնորհի արժանանան։ 12 հազար վրացիներ հավաքվում և գնում են դեպի որոշված վայրը, որպեսզի ստուգվեն և նվերներ ստանան։ Շահը գաղտնի ուղարկած նամակում գրել էր [Կարչղայինը]՝ «Դու որ իմ պահակապետն ես, ստուգման անվան տակ հավաքված վրացիներին բոլորին պետք է կոտորես, Մազրաավին էլ չպետք է ողջ թողնես, ինչ միջոցով էլ լինի, պետք է սպանես»։ Այս բովանդակությամբ գրված նամակը, նամակաբերին տալով պատվիրել էր, որ նամակը Մազրաավին ցույց չտա և ուղղակի հանձնի Կարչղայինը։ Սակայն նամակատարն նախատեսված դավադրությունից անտեղյակ, [Շահի] պատվերը հակառակն հասկանալով, նամակն առանց պահա-

կապետին ցույց տալու, հանձնում է Մաղրավ բեյին։ Մաղրավը նամակը կարդում է և բովանդակության հետ ծանոթանում։ Նա ստուգման պատրաստվող 12 հազար վրացիներին լուր է ուղարկում և իրերի դրության հայտնում, իսկ այդ տգետները անհավանական են համարում և [Մաղրավին] չեն վստահում։ Մաղրավը տեսնելով, որ վրացիներն իրեն չեն հավատում, խնդիրը թաքցնում է ասելով՝ «Տեսնենք գործերն ինչ վախճան կունենան»։ Մաղրավը շուրջը հավաքելով իր զինվորներին, Կարչղայի խմբի հետևից ուշադիր սպասում էր։ Փեյքեր-Սուլթանը հավաքելով վրացիներին ուղարկում է ստուգման. երբ նրանք մի լեռան հետևից դուրս եկան դեպի դաշտը, կըզըլբաշները պատրաստ էին։ Լեռնանցքից (դերբենդ) դուրս եկողներին սրի անցկացնելով 400-ի չափ վրացիների կոտորեցին։ Մի քանի ետ մնացողներ, որոնք փախչելով, իրենց հոգին ազատեցին, պատահածի մասին պատմեցին վրացիներին։ Միայն այդ ժամանակ վրացիները Մաղրավին հավատացին և շատ ցավեցին։ Այդ պահին Փեյքեր-Սուլթանը ու Կարչղայ խանը հավաքվել էին, իսկ մյուս կողմից վրացիների պարագլուխները և Մաղրավը գաղտնի պայմանավորվեցին որ հաջորդ օրը, վաղ առավոտյան հավաքվեն և հարձակվելով խաների վրա, նրանց կոտորեն։ Վրացի քաջերը, բոլորը պատրաստ էին։ Նրանք վաղ առավոտյան հավաքվում են Մաղրավի շուրջը. Մաղրավը ձի է հեծնում, վերցնում իր նիզակը և գնալով դեպի Կարչղայի վրանը ասում է՝ «Իմ խան, ի՞նչ ես կեցել, Թեյմուրազն եկավ ու հարձակվեց»։ Նա [Կարչղայը] դուրս է գալիս և երբ ձի էր նստում, Մաղրավը կողքից հարվածում և սպանում է նրան (ինչպես որ վերևը հիշված է)։ Այս անիծյալ Կարչղայն էրզերիլի դեպքում, Մուհամմեդի ժողովրդի [խալամների] նկատմամբ կատարածների պատիժը ստացավ։ Հիշված ձևով բազմաթիվ խաներ և մի քանի հարյուր կըզըլբաշներ սպանվեցին։ Դրանից հետո Մաղրավ բեյը հետամուտ եղավ անկախության ձեռք բերելու, վրացիներին իրեն հպատակեցնելու, Շահ դառնալու, «Ես, Մաղրավ Շահ, Վիլայեթի Շահ» մակագրությամբ, իր անունով փող կտրել տվեց։ Եվ տարօրինակը սա է, որը [Մաղրավը] մուսուլման լինելով հանդերձ, ընդունեց ռաֆըզիների նշանաբանը։ Երբ Շահն այդ մասին տեղեկություն ստացավ, իր պահակապետ նշանակած Իսհակխանին և Էմիր-Գյունե խանին մի քանի հազար արյունարբու ռաֆըզիներ տալով ուղարկեց Մաղրավի վրա։ Մաղրավը մեծ բանակով դուրս եկավ և կռվի մտավ նրանց դեմ։ Մաղրավը սրի հարված

ասալով էմիր-Գյոնե խանի թևին, նրան ձիուց վայր գցեց և երբ վրացի ազնաուրներից 4 մարդ նրա [էմիր-Գյոնե խանի] գլուխը թռցնելու համար մրցում էին, էմիր-Գյոնե խանի միրախորը*, որը մի կտրիճ երիտասարդ էր, եկավ և այդ չորս ազնաուրի հետ կռվի բռնվելով, մեկին սպանեց, երեքին վիրավորեց և էմիր-Գյոնե խանին իր թևերի վրա վերցրած ձի նստեցրեց ու այդպիսով ազատեց։ Սակայն էմիր-Գյոնե խանն իր երկիրը վերադառնալուց հետո, չապաքինվեց և մեռավ։ Այս կռվում կըզըլբաշ զինվորները շատ մեծ կորուստներ տվին, միայն Սերասքերն ու շատ քիչ զինվորներ ազատվեցին։ Դրանից հետո Մաղրավն իր զորքով գնաց Բերդայի երկրի վրա, սպանություններ կատարեց և կողոպտեց. Գենջե քաղաքը կրակի տվեց և հետո վերադարձավ Վրաստանի երկիրը։ Թեյմուրազը կըզըլբաշի սարսափից ավարա դարձած, թափառում էր Կարսի կողմերը։ Նա իմացավ, որ վրացիներն այս անգամ Մաղրավի շնորհիվ ազատություն ստացան։ Թեյմուրազը գիտեր, քանի որ Մաղրավն իշխանական ցեղից չէ, թագավորությունը նրան չի պատկանում։ Նա [Թեյմուրազը] հավաքելով իր հպատակներին, վերադարձնեց իր իսկական մայրաքաղաքը — Ջեքեմը և այնտեղ նստեց իբրև փադիշահ (թագավոր)։ Քանի որ նա իշխանազուն էր, վրացիները նրան էին ուղում և վստահելով, նրա կողմն անցան ու սկսեցին խումբ-խումբ նրա շուրջը հավաքվել։ Մաղրավը հեռատես անձնավորություն լինելով, կըզըլբաշներից վերցրած ավարից մի քանի ձի և հազվագյուտ ապրանքներ իբրև նվեր ուղարկում է Թեյմուրազին, նամակ գրում, մեծարում նրան և հպատակություն ցույց տալիս։ Սակայն մտածելով, որ ինքը չպիտի կարողանա տանել [Թեյմուրազի] թագավոր լինելը, ներքուստ դժգոհ լինելով նրանից, իրեն հավատարիմ և ենթակա մի խումբ ազնաուրներով փախչում և ապաստանում է Օսմանյան պետության մեջ, դրդելով Հաֆըզ-Ահմեդ փաշային շարժվել այդ կողմերի վրա։

(«Թարիխի—Նայիմա», Հատ. II, էջ 345—352)։

1036 թվականի (1626) դեպքերից Էրզրումի արշավանքի պատճառը և Սերասքերի մեկնումը

Այդ ժամանակ Աջեմի սահմանում եղող Ախալսխա բերդից օգնություն խնդրողներ էին եկել և հայտնել, որ հազարի չափ կըզըլբաշ զինվորներ պաշարել են վերոհիշյալ բերդը։ Այդ պատճառով

---

* Միրախոր — արքայական ախոռապետ։

Դիարբեքիրի բեյլերբեյի՝ Խուսրևփաշան, Հալեբի վալի՝ Նուզայ փաշան, Մարաշի վալի՝ Զոր փաշան, Ռումելիի վալի՝ Սյուլեյման փաշան, Դիարբեքիրի կուլի աղաներ՝ Զալաք-Մուհամմեդ աղան խորհրդակցեցին և որոշեցին 4—5 հազարի չափ զինվորներով հավաքվել։ Այդ բոլոր բեյլերբեյիներին Սերասքեր նշանակվեց Անադոլուի վալի՝ Դիշլենկ-Հյուսեին փաշան։ Սրանք Զիլհիջջե ամսի 5-ին շարժվեցին դեպի Ախասխա։ Մեծ Սերդարն էլ վճռեց նրանց հետևից գնալ դեպի այդ կողմը։ Նախապես Բոստան փաշան ուղարկվեց էրզրում՝ Աբազա փաշայի մոտ, որպեսզի նա էլ գնա Ախասխային օգնության ցույց տալու։ Երբ Բոստան փաշան այնտեղ հասավ, Աբազա փաշան նրան խալաթ հագցրեց և պատիվներ արեց, հետո իր օթաղը հաստատելով Գյուրջի* դռան մոտ, նամակ գրեց Մեծ Սերդար Էբրեմ-Խալիլ փաշային և ասաց՝ «Ես Փադիշահի մի նվաստ ծառան եմ, վիլայեթը ձերն է, սակայն դուք պետք է գիտենաք, որ Լեվենդ** զինվորներից և մանավորապես ենիչերիներից վտանգ է սպառնում։ Դուք շնորհ արեք Կափու-Կուլի զինվորներով Մուշի կողմից շարժվել, որպեսզի նրանք ապահով լինեն, իսկ ես այս կողմից փաշաների հետ միասին կգնամ Ախասխայի վրա. միաժամանակ խնդրում եմ, որ Սերասքերությունն ինձ շնորհեք»։ Մեծ վեզիրն իր պատասխան նամակում հայտնեց, որ «Այդ կողմի զորամասերը քո Սերասքեր լինելուն համաձայն չեն։ Եթե տրված հրամանի համաձայն դուրս գաս արշավանքի և աշխատես մի որևէ գործ կատարել, բարձրյալն Աստուծո ողորմությամբ քո ճակատը կներվի և Փադիշահի աչքում արժեք ու պատիվ կունենաս»։ Այդ ժամանակ Աբազա փաշան մի քանի նամակատարներ բռնեց, որոնք տանում էին Սերդարի կողմից ուղարկված նամակը, որով Սերդարը հանձնարարում էր [Աբազա-փաշային] սպանել։ Այս պատճառով [Աբազան] շատ անհանգստացավ։ Պատրաստություններ տեսնելով, նա դուրս եկավ իբր թե գնում է դեպի Ախասխա։ Երբ հասավ Իլիջա կոչված վայրը, էրզրումի Կապիին ուղարկեց փաշաների մոտ և «Սա ի՞նչ գժտություն է» ասելով, հանդիմանեց նրանց։ Դիշլենկ փաշան, որը, շատ քաջարի բայց վերին աստիճանի բարկացկոտ անձնավորություն էր, «Աբազան ի՞նչ տղա է, ես Ջիննեթ-օղլուի նման ազնաուրի, որը պնդում էր իր փադիշահական սերունդից լինելը, կարողացա հեշտությամբ ձեռք գցել»։ Այսպիսի խոսքերով կապիին դուրս վռնդեց։

(«Թարիխ—Նայիմա», հատ. II, էջ 404—405)։

---

* Էրզրումի պարսպի դռներից մեկը կոչվում էր «Գյուրջի կափուսը»։

** Լեվենդ — հատուկ զինվորական թևթև վաշտեր։

Քանի որ դեպքերն այդպիսի վախճան ունեցան, հնարավորություն չեղավ Ախասխային օգնություն հասցնել. կրզրլբաշն արագ կերպով գրավից Ախասխայի բերդը և ընդհանուր կոտորածի ենթարկեց բերդում եղող խալամ բնակչությունը... Աբազա փաշան կրզրլբաշին գաղտնի լուր էր ուղարկել, նրան շահագրգռել և դրդել էր, որ Ախասխան գրավի, որովհետև Սերդարը նրա [Աբազայի հետ] քաղցր էր խոսել և հանձնարարել էր Ախասխային օգնություն ցույց տալ: Բայց հետո [Աբազան] կրզրլբաշին դրդելու համար գղջացել էր և ցանկություն ուներ Սերասքեր լինելու: Իսկ երբ նրան չթույլատրվեց Սերդար լինել և պարզվեց, որ նրա նկատմամբ դավադրություն է կազմակերպված, այն ժամանակ [Աբազան] այդպիսի դավաճանություն կատարեց: Սակայն Աբազայի կողմից Ախասխան գրավելու կրզրլբաշների դրդումն անհավանական պետք է համարել:

(«Թարիխի—Նայիմա», հատ. II, էջ 411):

Սերդարը գնում է դեպի Էրզրում

Կուրբան բայրամից[8] հետո, Սերդարը խորհրդակցություն հրավիրեց և առաջարկեց, որ անհրաժեշտ է գնալ Էրզրումի վրա: Երբ այդ մասին համաձայնություն կայացավ, [Սերդարը] շարժվեց դեպի Էրզրում: Սակայն բանակը բոլորովին հուսալքվել էր: Զիլհիջջեի վերջերին հասան Էրզրումի մոտ գտնվող Իլիջա վայրը: Անադոլուի բեյլերբեյությունը տրվեց Ջոր փաշային: Սիվասի բեյլերբեյի Մուհամմեդ փաշան եկավ՝ և միացավ կայսերական բանակին: Քյուչուկ-Ահմեդը հազարի չափ պինվորներով կայսերական բանակումն էր: Դիարբեքիրի պաշտոնը տրվեց Գյուրջի Մուհամմեդ փաշային, Շամինը՝ Թայլար-Մուհամմեդ փաշային, Սիվասը՝ Քյուչուկ-Ահմեդին:

Շահի դեսպանը գալիս է Ստամբուլ

Շահ-Աբբասի դեսպանը՝ Թահմասբ-կուլի-Սուլթանը Ստամբուլ եկավ հատուկ գրությամբ, որով նա [շահը] խնդրում էր Բաղդադը տալ իր որդուն: Չնայած որ Սուլթան Սյուլեյմանի ժամանակ ընդունված սահմաններով հաշտության պայմանագիրը էր կնքված, սակայն Չելալի դեպքերի պատճառով [Շահ-Աբբասը] առիթից օգտվելով պայմանագիրը խախտել էր: Բանակ կազմելու և ուղարկելու մասին որոշ միջոցներ ձեռնարկվեցին: «Այդ կողմերի

գործերը հանձնարարված էին բացարձակ լիազոր Սերդար Խալիլ փաշային» նման պատասխանով դեսպանին ետ ուղարկեցին։ Զեքեմի իշխան Գյուրջի Թեյմուրազ խանին հրաման ուղարկվեց, որով հայտնում էին՝ «Այս տարի կլզլբաշների վրա է ուղարկվելու Մեծ վեզիր Խալիլ փաշան իբրև Սերդար, դու էլ քո ունեցած բոլոր ուժերը բազուկիդ տո՛ւր, Վրաստանի մյուս իշխանների հետ միասին և միասան ամեն ջանք գործ դրիք կլզլբաշին հեռացնելու համար»։

(«Թարիխի—Նայիմա», հատ. II, էջ 411)։

1037 թվականի (1627) դեպքերից.

Էրզրումի պաշարումը

Աբազա փաշան եննիչերի պինվորներին և Դիշլենկ-Հյուսեինի փաշային սպանել էր ու բանակը կողոպտել։ Այդ ձևով ապստամբական շարժումը առաջվա նման շարունակում էր։ Այս պատճառով Խալիլ փաշան հրաժարվելով Աջեմի արշավանքից, նախորդ տարվա վերջը շարժվել էր դեպի Էրզրում և իջևանել Իլիջա կոչված վայրում։ Մուհարրեմ ամսի սկզբին գալով դեպի Էրզրումի բերդը, իջևանեց նրա հարավային կողմը գտնվող դաշտում։ Աբազա փաշան, որ առաջներում Խալիլ փաշայի աշակերտը (չրաղ) և պինվորն էր եղել, նրան չհարգեց, շարունակեց իր ապստամբական շարժումը [ելույթը] և բերդի դռները փակելով, թնդանոթներն ուղղեց դեպի նրա վրանները։ Աբազայի պինվորները դուրս գալով բերդից կռվում էին։ Սերդարը բերդը գնդակոծող թնդանոթներ չուներ և բացի Կարչղային սպանող Մաղրավ բեյի բերած մի թնդանոթից, «բալյեմեզ» թնդանոթներ չկային։ Միայն երբեմն զարբազաններով էին գնդակոծում։ Մարդիկ էին ուղարկված, որ Թորթումի բերդից մի քանի «բալյեմեզ» թնդանոթներ փոխադրեն։ Սկսեցին պաշարման պատրաստություններ տեսնել։ Մուհարրեմ ամսի 13-րդ օրն առավոտյան պինվորները դուրս գալով բերդից, ուղղվեցին դեպի վրանները։

Մյուս կողմից էլ պինվորները գործողությունների անցան, մի քանի մարտեր տեղի ունեցան, սակայն Աբազայի պինվորները չկարողանալով դիմադրել, նահանջեցին դեպի բերդը։

Մաղրավ բեյի գալը և մերիս* մտնելը

Սեֆեր ամսի 4-ին նախապես Կարչղայ խանին և նրա պինվորներին սպանող Մաղրավ խանը, որը Վրաստանի հայտնի և կարող

---

* *Մերիս — խրամատ։*

իշխաններից էր, որոշ պատճառներով իր եղբոր հետ հակառակություն ուներ, եկավ կայսերական բանակը։ Նրա գալը զինվորներին նոր ուժ տվեց և ոգևորություն պատճառեց։ Նա իր հետ մի թնդանոթ էր բերել։ Օլթիի բերդից էլ 2 թնդանոթ ստացվեց։ Նույն օրը, անմիջապես, խրամատներ մտան։ Զինվորները Հասան-Կալան գրավելուց հետո յոթ օկկա գնդակ արձակող մի կալենբուռնե (թնդանոթ) և որոշ քանակությամբ վառոդ բերել տվին։ Սեֆեր ամսի 18-ին, նախապես «Կարա-Օղլան» անունով հռչակված «Սերդեն-Գեչդի»[9] ենիչերին, որը հետո վաշտի մեջ մտնելով սիփահի էր դարձել, իր մի քանի ընկերներով հիմարություն ունեցավ արշավելու դեպի էրզրումի պարիսպը, այստեղ հրացանով նրան խփեցին և նահատակեցին։ Երբ տեսան, որ երեք թնդանոթով մի տեղից պարիսպի գնդակոծումն արդյունք չի տալիս, սկսեցին հողը փորել։

(«Թարիխի—Նայիմա», հատ. II, էջ 416)։

Հաջորդ էջերում պատմագիրը մանրամասնորեն նկարագրում է այդ տարվա խիստ ձմեռը, որի հետևանքով Սերդարը ստիպված է լինում պաշարումը թողնել և վերադառնալ Թոկատ։ Ճանապարհին բանակն ենթարկվում է անպատմելի դժվարությունների։ Շատերը սառչում են, կորցնում ձեռքերն ու ոտքերը։ Նայիման ասում է՝ «Նվաստս Տրապիզոնից դեպի Թոկատ և Սվազ գնալու ժամանակ, ինքս ականատես եմ եղել, որ Սև ծովից դեպի Վրաստան և դեպի Քյուրդիստան ձգվող հսկա լեռներում երկու մղոնից ավելի ձյուն էր տեղում։ Լեռան գագաթից դեպի ձորը կուտակված ձյունը սաստիկ սառնամանիքի պատճառով սառչում է։ Փետրվար ամսին, հողի գլորշու տաքությունից ձյան զանգվածի ստորին մասը սկսում էր հալչել։ Ներքևում առաջացած դատարկության պատճառով, լեռան վրա կուտակված երկու մղոնք հաստության ձյան ծանրությունից զանգվածը պոկվում էր և գլորվում դեպի ձորը։ Եթե ճանապարհին հազար ձիավոր էլ պատահի, նրանցից ոչ մեկն էլ չի ազատվի, բոլորը գլորվելու և ձորն են թափվելու։ Շրջակայքի ժողովուրդը դրան «չրղ» անունն է տալիս։ Երբ Տրապիզոնից գնում էինք դեպի Քեհսար, ձորի եզերքով, այնպիսի մի «չրղ» պոկվեց, որ 20-ի չափ մարդիկ իրենց ձիերի հետ միասին գլորվեցին և ձորը թափվեցին։ Մենք այլևս առաջ գնալ չկարողացանք, և մոտակա գյուղերից մարդիկ հավաքելով, փորձեցինք այդ թշվառներին դուրս բերել ձյան տակից։ Միայն չորս հոգի կենդանի դուրս բերվեցին, մնացածները բոլորը, ձիերն էլ խեղդամահ էին եղել։ Ատո՛վ խնայի, սա մի պատահական փորձանք էր, որից չէր կարելի ազատվել»։

(«Թարիխի—Նայիմա», հատ. II, էջ 418—419)։

Շահ Աբբասի մահը

Նայիման իր պատմության 2-րդ հատորի վերջում այս վերնագրով տալիս է մի հատված։ Շահ-Աբբասի մասին պատմագրի ունեցած դատողությունների մասին գաղափար տալու համար, այդ հատվածը թարգմանում ենք կրճատված ձևով։

«995 թ. գահնում է Խորասանի վալի իր հոր՝ կույր Խուդաբենդեի փոխարեն, Նրա կենդանության ժամանակ Աջեմի Շահ է լինում և գահակալում է Կազվինում։ Հայրն անդրագետ լինելով, կրզբլբաշ էմիրները [պետական գործերը] իրենց ձեռքն էին առել և ուզում էին պետությունը բաժանել։ Արբաբը, շահ գահնալուց հետո, նրանց բոլորին կոտորեց և երկիրն իր ձեռքն առավ։ Մնացածները [էմիրները] հրաժարվեցին պետական գործերին միջամտելուց։ Մի քանի տարի [Շահ-Աբբասը] զբաղվեց Օզբեկներով և Ալ-Օսմանով, հետո իր եղբորորդուն՝ Հեյդար-Միրզային Ստամբուլ ուղարկեց և հարմար առիթի սպասեց։ Օզբեկ խանը՝ Աբդուլլահ խանի որդի Աբդել-Միամին խանի մահվանից հետո, մինչև 1030 թ. նրանց Խորասանից գրաված քաղաքները մեկ-մեկ հետ վերցրեց, իր պապերի գրբիշիած բոլոր տեղերն ազատեց, հետո գալով Ռումի փադիշահի* երկրի սահմանները, օգտվելով ջելալիների ապստամբական շարժումից, խախտեց հաշտության պայմանը և գրավեց Թավրիզ, Շիրվան և Երևան քաղաքները։ Երկարատև պաշարումներից և պատերազմներից հետո այուններին կոտորեց։ Հետո գրավեց Հրնդկաստանում Գանդահարը։ Ջղալե-Օղլուի դեպքումն էլ, հաղթություն շահեց։ Էրդեբիլի արշավանքում հաղթեց Թաթար-Խանին և մեծ հարստության տիրացավ։ Խազաղություն կնքելու գործում խարիսխական միջոցներ ստեղծելով, պատգամավորներ ու նվերներ ուղարկեց. հետո գրավեց Բաղդադը։ Իսկ երբ Ռումի բանակը [Օսմանյան] հարձակման անցավ, պաշտպանվելու համար բազմատեսակ միջոցների և խորամանկությունների դիմեց, հետո կախարդական և դյութական միջոցներով բանակի մեջ խռովություններ առաջացնելով հետ մղեց։ Խորեզմի, Գիլանի և Սեհիստանի երկրներն էլ իր ձեռքն անցկացնելով, 43 տարի իշխեց իբրև շահ։ 1038 թ. Ջնմազիել-Էվվելում, Մազանդարանում մեռավ ջրգողության հիվանդությունից և թաղվեց էրդեբիլի գերեզմանատան մեջ, Շեյխ-Սեֆիի թյուրբեյում (շիրիմ)։ Տարիքը 70-ը անց էր։ Նա ապանել է իր որդուն՝ Շահ-Աբբասին հաջորդեց իր թոռը՝ Սեֆի-Միրզան։ Վերոհիշյալ շահը գոռոզ և բռնակալ, վերին աստիճանի արյունարբու, խորամանկ մի անձնավորություն էր։ Նրա իշխանության ժամանակ կրզբլբաշները նրան ենթարկվեցին սարսուռի նման և մոռացան բոլոր իրենց անհնազանդությունները։ Մոլեռանդության բերմամբ ինչքան հազարավոր սյուններ է կոտորել։ Գիտությունն ու արվեստը նրա աչքում անարժեք էին... ռայաներին պաշտպանելու գործում շատ ուշադիր էր և թույլ չէր տա, որ ժողովրդի վրա բռնություն և տանջանքներ գործ դնեն։ Իր հրամաններն անպայման գործադրել էր տալիս։ Այդ պատճառով էլ իր երկիրը բարեշեն էր և իր հարստությունն անսահման...»։

(«Թարիխ—նազիմա», հատ. II, էջ 449—451)։

1038 թվականի (1628) դեպքերից.

Կոնիայում Մաղրավ բեյի հետ պատահած դեպքը

Պատմագիրն ասում է, որ Վրաստանի քաջարի իշխաններից Մաղրավ բեյը, որի Դարչղայ խանի հետ ունեցած կռվի և դրա հետևանքով հայտար կրզբլբաշների ապանության ժամանակ

---

* Ռումի փադիշահ — գործ է ածվում Օսմանյան փադիշահ իմաստով։

նկատի առնելով, որ Աջեմի վաճառականների՝ դեպի նեմեցների նրա ցույց տված հերոսության մասին նախապես հիշվեց, էրզրումի արշավանքի ժամանակ Սերդարին հպատակություն էր ցույց տվել և քաղաքի նվաճմանն էլ մասնակցել էր։ Երբ [Մաղրավը] Ստամբուլ եկավ, նրա կողմից կըզըլբաշին տրված հարվածը ընդունվեց իբրև ծառայություն Ալ-Օսմանին։ Նա [Մաղրավը] ընդունեց իսլամական կրոնը և ստացավ Մուհամմեդ անունը։ Պատիվների և հարգանքի արժանացավ ու նրան տրվեց Կարամանի էյալեթը։ Արդարև, նա վերին աստիճանի քաջարի տղամարդ էր։ Կազմվածքով նման էր փղի...

Մաղրավն իր նախկին մարդկանցից մեկին, բռնություն սիրող մի քահանայի, նշանակեց տուրքերի հավաքիչ (մյութեսելիմ) և մի վաշտ ազնաուրներով ուղարկեց Կոնիա։ Նրա մարդիկ աջեմների նման իրենց գլխին գունավոր թաշկինակ էին կապում։ Օսմանցիների սովորություններին և բարքերին անծանոթ այս մի խումբ վրացիները սկսեցին ժողովրդին նեղություն պատճառել, հափշտակել նրանց ունեցվածքը և նեղել բարձր աստիճանավորներին։ Նրանք մի շարք աղջիկների մազերը կտրել տալով, իբրև անմորուք պատանիներ (դուլամ), ձիու վրա նստեցրած ման էին ածում։ Նրանց կատարած բռնությունները ժողովրդի կոկորդին էր հասել։ Այն պահին, երբ հարկահավաքները Կոնիայի դաշտում էին, Կոնիա քաղաքի հանդուգն ու կատաղի մարդկանց գլխավորողը՝ Սեյիդ-Իբրահիմ-Չելեբին, որն Աքկաշ-էմիր-Օղլու անուն էր ստացել և իր անվախությամբ հայտնի մի ազնիվ սեյիդ էր, հանդիսանում էր ավագ շեյխի (նագիբի) փոխանորդը։ Սա հավաքեց մի խումբ մուսուլմանների, նրանց ոգևորեց և հարձակվեց վրացիների վրանների վրա։ Հիշյալ Սեյիդ-Իբրահիմը տուրքահավաքին բռնեց, դուրս բերեց վրանից և տարավ Կոնիայի բերդում բանտարկեց։ Մյուս վրացիները տեսնելով այս, անկարգ կերպով ցրվեցին։ Դրանից հետո Կոնիայի բնակիչները Սեյիդ-Իբրահիմի առաջնորդությամբ հավաքվեցին և խնդրագիր գրեցին, որով հայտնում էին, թե Մաղրավ բեյին ենթարկվող վրացիները, մուսուլմանների նկատմամբ բռնություններ, անիրավություններ և քաղաքում բռնաբարություններ ու անկարգություններ են կատարել։ Վիլայեթի կազմից թույլտվություն ստանալով, սեյիդներից, ուլեմաններից և աղքատներից մի խումբ դանդաժավորներ գնացին Սաղրազամ Խուսրեվ փաշայի մոտ և իրենց խնդիրը ներկայացնելով, գանգատվեցին կատարված բռնությունների համար և փաշայից օգնություն խնդրեցին։ Խնդրագրում հիշված բռնություններին վերաբերող փաստերից և գանգատ-

164—7

վերների բանավոր բացատրություններից, վրացիների կատարած չարագործությունները և բռնությունները Մարդաբի համար պարզ դարձան։ Իսկ երբ այդ բոլոր բռնություններն ու անկարգություններն ապացուցվեցին, Մաղրավը վախից փախավ։ Նրա դեմ ուղարկեցին Անատոլուի բեյլերբեյի Զոր փաշային։ Նույն ամսի 8-ին Մաղրավ բեյի դեմ ուղարկվեց Նիկիտեի սանջակի բեյը։ Սեֆեր ամսի սկզբին նրանք հասան Հալեպ և իջևանեցին Գյոք-Մեյդանում։ Հինգերորդ օրը Շամի վալի Քյուչուք-Ահմեդ փաշան եկավ և պարահանդես կազմակերպեց։

(«Թարիխի—Նայիմա», հատ. III, էջ 4—8)։

Ռաֆրզիների ճվաճումը Վրաստանում

1042 թ. (1632) Աջեմը Վրաստանի վրա բանակ ուղարկեց։ Թեյմուրազը՝ չկարողանալով դիմադրություն ցույց տալ, հեռացավ։ Կըզըլբաշ զինվորներն ամբողջ Վրաստանը նվաճեցին և ժողովրդին հպատակեցրին։ Հետո Թավրիզում հանգստանալով, պատրաստվեցին Վանի վրա շարժվելու։ Երբ այս մասին մայրաքաղաքում տեղեկություն ստացվեց, կայսերական հրամաններ ուղարկվեցին սահմանների բեյերին. Մյուրթեզա փաշան շարժվելով դեպի Մարդինի մոտ գտնվող Սուլթան-Յայլան, հավաքեց էյալեթի զինվորներին և այլ զինվորական մասերի հետ պատրաստվեց գնալ դեպի Վան։

(«Թարիխի—Նայիմա», հատ. III, էջ 146)։

1034 թվականի (1633) դեպքերից.

Ռաֆրզիների հարձակումը Վանի բերդի վրա և նրանց պարտությունը դպզիների կողմից

Երբ Կըզըլբաշ զինվորները Թավրիզում հավաքվեցին, խաներից խան՝ Թուխտե-խանը մեծաթիվ զինվորներով շարժվեց Վանի վրա։ Մուհարրեմ ամսի վերջին, Մյուրթեզա փաշան Դիարբեքիրի բանակով Մարդինից դուրս եկավ և գնաց ուղղակի դեպի այդ կողմը (Վան)։ Էրզրումի բեյլերբեյի՝ Թեմուր-Կազըք-Խալիլ փաշային Սերդարության հրաման ուղարկվեց, որը Կարամանի, Մարաշի և Սվազի էյալեթների զինվորներով շարժվեց Էրզրումի վրայով։ Ռեբի-ուլ-էվվելում կըզըլբաշ զինվորներն եկան, Վանը պաշարեցին ու նախահանդիսատր դրավեցին։ Ռեբի-ուլ-ախըրի

սկզբին Խալիլ փաշան և Մյուրթեզա փաշան տեսակցեցին և երկու բանակների միացումով ընդամենը 30 հազար զինվորներից բաղկացած բանակ կազմվեց։ Հիշյալ ամսի 10-րդ օրը նրանք հասան Վան։

Կզըլբաշները, երկու օր առաջ այդ մասին տեղեկություն ստանալով, դուրս էին եկել իրենց խրամատներից և Կոսկուն-Կռանի կողմում մի լեռան հենվելով՝ կազմել էին իրենց զորագնդերը և սպասում էին։ Իսլամական բանակը հասավ և այդ օրը մինչև երեկո ուժեղ մարտեր տեղի ունեցան, իսկ երբ գիշերը վրա հասավ, առանց կռիվը դադարեցնելու, ջահերի լուսավորության տակ [օսմանցիները] երկու ուժեղ հարձակում գործելով՝ ստիպեցին ռաֆըզի ամբոխին երեսը ետ դարձնել [նահանջել]. հաղթական զինվորներն իրենց վրաններր վերադարձան։ Հաջորդ օրը կզըլբաշները հեռացան, իսկ փաշաներն իջևանեցին Վանից դուրս։ Խալիլ փաշայի և Մյուրթեզա փաշայի միջև որոշ սառնություն առաջացավ Սերդարության պաշտոնի համար։ Մյուրթեզա փաշայի սրտում այդ հանդույցը մնաց ու միայն ավելի ուշ, երբ փադիշահի հետ միասին քշում էին իրենց ձիերը, այն բաց արեց։ Նրանք մի քանի օր վանում հանգստացան և իրենց կարիքները հոգացին, հետո, սերդարները զինվորներին արձակուրդ տվին։ Երբ Մյուրթեզա փաշան Դիարբեքիր եկավ, Կզըլբաշ Հասան-աղան իր գնդով նրա դեմ դուրս եկավ և Կզըլ-Քյոյի առաջ ընդհարում տեղի ունեցավ, ուր վերջինս սպանվեց և փաշան քաղաք մտավ։ Փաշան քաղաքի դռները փակել տվեց և հայտնի սիփահիներից Գյուրջի-Յուսուֆի, էլհաջ-Մեհմեդի, Շահ Բենդեր-Օղլու, Մուհամմեդ-Չելեբիի սպանության համար ստացված ֆերմանի համաձայն, մունեջիկներին հայտարարել տվեց և քաղաքի կապիին ու ավագանիին հավաքելով հրամանները կարդաց։ Երեկոյան Գյուրջի Յուսուֆը, էլհաջ Մեհմեդն և Շահ-Բենդեր-Օղլուն ձերբակալվեցին և գիշերը սպանվեցին։

(«Թարիխի—Նայիմա», հատ. III, էջ 165—166)։

Վրաստանի վիճակը

Սրանից առաջ էրզրումի բեյլերբեյին, Կարսի բերդին և այլ բերդերին մթերք ու վառոդ էր ուղարկվել, և հրաման էր տրվել Իչ-էլ բերդից 500 մարդ իրրև կուլ ուղարկելու մասին։ Զիլհիջջեի 5-րդ օրը Խալիլ փաշայից նամակ ստացվեց, որից պարզ-

վում էր, որ Դադիանը և Գուրիլը միանալով՝ կըզըլբաշների կողմն են անցել։ Դադիանը իր աղջիկը կնության էր տվել Շահի կողմից Ջեքեմի և Քարթլի վրա իսան նշանակված Խուսրեվ-Միրզային։ Երբ ցանկացել են հիշյալ աղջկան անցկացնել Աչըք-Բաշի երկրից, Աչըք-Բաշը և Թեյմուրազը չեն կամեցել ճանապարհ տալ։ Այդ պատճառով, մեկ կողմից՝ վերոհիշյալ Խուսրեվ խան-Բեյն իր 30 հազարից ավելի կըզըլբաշ զինվորներով, իսկ մյուս կողմից՝ Դադիանն ու Գուրիլը մեծ բանակով հարձակվել են Աչըք-Բաշի վրա։ Սրանց միջև մեծ մարտեր տեղի ունեցան։ Աստուծո հրամանով Դադիանը հաղթանակ ձեռք բերեց, Աչըք-Բաշը պարտվեց։ Թեյմուրազը և Աչըք-Բաշի որդին ապաստանեցին մի անմատչելի վայրում, իսկ Աչըք-Բաշի երկիրը ձեռքից դուրս եկավ։ Կըզըլբաշը, Դադիանը և Գուրիլը միանալով՝ 30 հազարի չափ ռաֆըզիներին ցրեցին Վրաստանի մեջ։ Երբ պարզվեց, որ Դադիանն ու Գուրիլը ուզում են ավերումներ կատարել Սև ծովի եզերքում գտնվող Կունիյեի և Տրապիզոնի սահմաններում, ցամաքից՝ բանակ, իսկ ծովից կայսերական նավատորմ ուղարկվեց։ Երբ Ջըլդրի բեյլերբեյի Սեֆեր փաշան հայտնեց, որ այդ կողմերում կարգ պահպանելու համար անհրաժեշտ է Դադիանի և Գուրիլի վիլայեթները կողոպուտի ենթարկել, սահմանի էմիրներին հրամաններ ուղարկվեցին և էրզրումի սահմանի պաշտպանության համար նշանակվեցին Անադոլուի բեյլերբեյին և ընդհանրապես Կարամանի, Սարուխանի և Կաստեմունիի սանջակները։

(«Թարիխի-Նայիմա», հատ. III, էջ 216—217)։

1045 թվականի (1635) դեպքերից.

Սուլթան Մուրադ* խանը գնում է կայսերական արշավանքի դեպի Երևան

Սուլթան Մուրադ IV Սկյուդարից մեկնում է Երևան՝ «Արևելքի արշավանքին»։ Պատմագիրը մանրամասն նկարագրում է փադիշահի և նրա բանակի շարժումն այդ հսկա տարածության վրա։ 1045 թ. Փադիշահը հասնում է Էրզրում, ուր տեղի է ունենում վերին աստիճանի հանդիսավոր ընդունելություն։

Իսլամական Փադիշահի դեպի Երևան գնալը

Մուհարրեմ ամսի 24-ին որոշ ծանրություններ թողին Էրզրումում... և նախօրոք 25 բայլեմեզ թնդանոթ և թուղեր ուղարկեցին.

* Սուլթան Մուրադ IV—1032—1049 թթ. (1611—1639)։

հաջորդ օրը հաջողությամբ էրզրումից դուրս գալով՝ ուղղվեցին դեպի Երևան։ Սեֆերի սկզբին իջևանեցին Կարսի մոտ, նրանց դիմավորեցին... Փադիշահը եկավ դիտեց Կարսի բերդը և վերադարձավ իր օթաղը։ Երկու օր այստեղ մնացին։ Հրաման տրվեց բեյլերբեյիներին, որ 4 հազար գամբյուղի ծղոտներ պատրաստեն 20-ական ցցով։ Հաջորդ մենզիլում Կարսի ջուրն անցնելով, իջևանեցին... Սեֆեր ամսի 5-ին հասան Մևսիհիյե անցքին։ Հաջորդ օրը ստացվեցին Գուրիլի երկրի տուրքերն ու նվերները... Սեֆեր ամսի 10-ին իջևանեցին Երևանի մոտ. ցանքսերը անասուններին կերակրելու իրավունք տրվեց։ Մյուս օրը հասան Գյոք-Կումբեթ։ Երբ կայսերական բանակը իր շքախմբով մոտեցել էր բերդին, վերջինիս պարիսպներից արձակված թնդանոթների արկերն առանց որևէ վնաս պատճառելու անցնում էին նրա պահեստային ձիերի գլխավերևից։ Պատմում են, որ ուժեղ քամին և խիստ փոշին այդ երկրում սովորական երևույթ է։ Այդ օրն էլ շատ ուժեղ փոշի և մշուշ բարձրացավ, այնպես որ աչք-աչքի չէր երևում։ Այդ ժամանակ հաղթական հնձյալների խումբը հասել էր բերդի պարսպին։ Փադիշահական առաջապահում ուղեցույցի պաշտոն ունեցողը փադիշահին դիմելով ասաց՝ «Իմ վեհափառ փադիշա՛հ, Երևանի բերդն այս հովտումն է, շատ մոտ եք եկել, բայց մշուշի պատճառով չի տեսնվում. շնորհ արե՛ք, սպասեցե՛ք, մինչև որ հետևից բանակը գա հասնի»։ Սուլթան Մուրադն ուղեցույցին հանդիմանելով ասաց՝ «Ո՛վ հիմար, ինչո՞ւ ես վախենում, առանց էջելի* մարդ կլի՞նի»։ Արդարև, փոշին որոշ չափով պակասեց և տեսան, որ եկել հասել են Երևանի բերդի տակը։ Այդ ժամանակ բերդից արձակված թնդանոթի արկերն անցան պահեստի ձիերի և սոլաքների** վրայով՝ առանց որևէ մեկին վնաս պատճառելու։ Փադիշահը ձիու սանձը բաշեց և եկավ միացավ զինվորներին։ Ջանդիի ջուրը [գետը] ոտքով անցան և երբ պարսպից մի քիչ հեռու կանգնել էին, փադիշահը հրամայեց ավելի մոտ գնալ։ Հաջորդ օրը Հյունքար-Թեփեսի անունով հայտնի բլուրի վրա սարքեցին փադիշահական օթաղը։ Վեզիրներն ու այլ պետական բարձր աստիճանավորներն իջևանեցին իրենց հարմար տեղերում։ Ռազմամթերքի պահեստից զինվորներին բահ ու բրիչ, վառոդ և պատրույգ (ֆիթիլ) բաժանվեց և Ֆերհան տրվեց, որ ենիչերիներն այդ գիշեր մտնեն խրամատները։

---

* Էջել (աջալ)՝ մահվան անխուսափելի ժամը, օրհաս։

** Սոլաք — կայսերական հատուկ գորախումբ։

Սեֆեր ամսի 12-ի գիշերը լուսնկա էր և պարսպի առջև վառվող ջահերը լուսավորում էին։ Ժամը 3-ին զինվորները ծովի նման շարժվելով դեպի պարիսպները, մտան խրամատները։ Այն պահին, երբ ենիչերիները զբաղված էին պատվար կառուցելով, նրանցից մի քանի հարյուր հոգի վիրավորվեցին։ Վեհափառ փադիշահը հրամայեց, որ ամեն մեկին 30 դուրուշի արժեքով թանկագին մերհեմ* շնորհվի։ Մի շարք վիրավորների վերքերը իր ներկայությամբ, վիրաբույժներին բանալ և մաքրել տվեց։ Մինչև առավոտ [զինվորները] խրամատներում կատարեցին իրենց տրված ցուցմունքները և ամեն մի խումբը իր տեղում մնաց։

Երևանի բերդի պաշարումը և գրավումը

Գյոզջի-Թեփեսի անունով հայտնի վայրում Կափուդան-Հյուսեին փաշայի և Հալեպի բեյլերբեյի Ահմեդ փաշայի թևից թնդանոթներն ուղղեցին դեպի բերդը և քանդեցին Էմիր-Գյոնե-Օղլուի պալատը ու մի շարք ամրակուռ շինություններ։ Երևանի բերդն ուներ մոտավորապես Էսկի-Սարայի** մեծությունը։ Երբեմն թնդանոթի արկերը բերդի մյուս կողմն էին անցնում։ Դոան առաջ Ռումելիի էյալեթը [զինվորները] և Մեծ վեզիրը վեց հատ թնդանոթ դրին։ Բերդից դեպի վրանների վայրն արձակված թնդանոթների արկից իր վրանում նահատակվեց Մեծ վեզիրի դռնապանների բեթխուդա Ալի-աղան։ Ամսի 13-ին հին Երևանի կողմից ենիչերի զինվորները և Անատոլուի էյալեթի զինվորները խրամատները մտան և այդ կողմից էլ վեց թնդանոթ դրին։ Ամսի 14-ին բերդի հյուսիսային կողմում գտնվող ջրելերքի պաշտպանությունը անհրաժեշտ համարելով՝ էրզրումի բեյլերբեյի Ահմեդ փաշան և Զըլղրի բեյլերբեյի Սեֆեր փաշան ուղարկվեցին վերոհիշյալ վայրը, ուր բերին և երեք թնդանոթ... 16-րդ օրը Կափուդան փաշայի թևում գտնվող Շեմսի-փաշան և իր երեք աղաները միասին պարտեզ էին մտել և այնտեղ քնել, մնացել։ Կըզըլբաշները դուրս գալով բերդից՝ երեքին էլ պլխատում են ու գլուխները տանում բերդ։ 19-րդ օրը Սերդարը՝ ջուրն անցնելով հասավ Գյոզջի-Թեփեի մյուս կողմը գտնվող անցքը և գրավելով տեղի կամուրջը՝

---

* Մերհեմ — վերքեր բժշկելու հատուկ դեղ, սպեղանի։

** Էսկի-Սարայ, Օտտոմբուլում սուլթաննների հայտնի պալատներից է, բառացի նշանակում է հին պալատ։

ձեռնարկեց մի պատի կառուցման՝ նպատակ ունենալով փակել բերդից դեպի գետը ձգված անցքը... Վեհաշուք փադիշահը Դիվան կազմեց և բանակի զեկավարներին իրենց աստիճանի համապատասխան սիրաշահելով մարտի մղող խոսքեր ասաց։ [Փադիշահն] ամենից առաջ դիմելով Քյուչուք-Ահմեդ փաշային՝ ասաց. «Ո՛վ Քյուչուք-Ահմեդ, քաջության օրն այսօր է, քե՛զ տեսնեմ, նվիրական կրոնին ծառայելու և փադիշահի համար ինչպի՞սի արիություն ցույց պիտի տաս»։ Նա գետինը համբուրելով պատասխանեց՝ «Իմ փադիշա՛հ, քո ծառան՝ Ահմեդն իր բոլոր զինվորներով միասին, միշտ պատրաստ է քեզ համար իր անձն ու կյանքը զոհելու»։ Հետո [Փադիշահը] դառնալով Ջանփոլատ-Ջաղեին ասաց. «Ով Քուրդիստանի բեյզադե, ջանփոլատության* ժամանակը հիմա է, քո տղամարդկությունն ապացուցելով վեզիրության խնդիրը լրացնելու համար այսօր քո հոգին պողպատի պես պետք է լինի»։ Հետո դառնալով Մյուրթեզա փաշային ասաց։ «Մյուրթեզա՛, քեզ տեսնեմ, աչքդ բաց արա՛, հիմա է ծառայության ժամանակը»։ Հետո խոսքն ուղղելով ենիչերիների աղային, ասաց. «Ո՛վ աղա, Ստամբուլում հարբած ման գալը և քաղաքացիներին ծեծելը շնորհք չէ. տղամարդկությունն այս գործում երևան կգա, երբ պիտի տեսնեմ թե իմ բոլոր ենիչերի կուլերով խրամատներում ի՛նչպես պիտի կռվեք և Երևանը գրավելու գործում ի՛նչպիսի ծառայություն պիտի մատուցեք, հիմա պետք է ցույց տաք, քեզ տեսնեմ»։

Փադիշահն այս խոսքերն ասաց բոլորի ներկայությամբ, բացարձակ կերպով և ոգեշնչեց ամենքին։ Նրանք խրամատներ մտան և բերդի գրավման համար, իրենց բոլոր ջանքերը լիովին գործի դրին։ Երեք խրամատ փոխելով հասան մինչև խանդակի եզերքը և ամեն կողմից սկսեցին թնդանոթի և հրացանի գնդակներն անձրևի նման տեղացնել։ Մի շաբաթվա ընթացքում, գիշեր-ցերեկ արձակված թնդանոթների հարվածներից քանդվեցին մի քանի աշտարակներ և պարսպի մեծ մասը։ Մասնավորապես ենիչերիների Աղայի և Ռումելիի թևում եղած պարիսպը գետնին հավասարեցրին։ Մի օր կըզըլբաշները, խրամատների վրա հարձակվելու նպատակով, դուրս եկան Ռումելիի բանակի կողմից։ Իսլամ զոդինները կազմ ու պատրաստ լինելով, մեծ կորուստներ պատճառեցին նրանց և ետ մղեցին։ Չերեջիներից մեկը մի անգամ մեծ համարձակությամբ բարձրացավ աշտարակի վրա և հափշտակեց կըզըլբաշների դրոշակներից մեկը,

---

* Ջանփոլատ՝ բառացի նշանակում է պողպատյա մարմին։

որի համար նրան սեփականություն շնորհվեց... պատմում են, որ երեվանի պաշարման կռվում, ինքը վեհաշուք փադիշահն անձամբ ատրճվրա կազմ ու պատրաստ կանգնած, բանակների բերանները բաց արած, ոսկի և արծաթ էր թափում հրապարակի վրա, գլուխ բերողներին՝ 40-ական դուրուշ, այն զինվորներին, որոնց ձիերը սպանվում էին՝ 50-ական ֆլորի, վիրավորվածներին՝ 20-ական դուրուշ, վիրավորներ բերողներին՝ 10-ական դուրուշ, Թշնամու արձակած Թնդանոթի գնդակներ բերողներին՝ 1-ական ֆլորի բախշիշ տալով, ասում էր. «Ո՛վ իմ քաջարի զայլեր, արիության ժամանակն է, իմ զավակներ». այս կերպով նրանց քաջալերում էր և իր նվերներն ու շնորհներն ապրիլյան անձրևի նման առատահոս տեղացնում: Մինչև անգամ զանազան տեսակի խմիչքներ բաժակների մեջ լցված պատրաստ դրված էին: Գլուխ բերողներին և զոհիներին խմացնում էին դրախտի ջրի նմանող խմիչքը և նրանց պապակը հագեցնում: Կայսերական վիրաբույժները շարք-շարք պատրաստ էին ծառայության: Վիրավորներին, որոնք հատուկ վրաններում պետք է բուժվեին, հանձնում էին նրանց: Բոլոր կարիքներն ապահովում էին" կայսերական միջոցներից:

Կըզըլբաշներն ամեն ջանք գործ էին դնում՝ փակելու Թնդանոթների հարվածներից բացված տեղերը: Անցքերում պարկերով և կողովներով հող էին լցնում, բայց որովհետև զինվորները հարձակվում էին այդ տեղերի վրա, նրանք դիմադրության անզոր լինելով՝ պատրաստվում էին բերդը հանձնել: Թնդանոթի հարվածներից մեծ բերդը քանդվել էր, պարսպի մի քառորդը քանդել էր Մուստաֆա փաշան, մյուս քառորդը քանդել էր Ենիչերիների Աղան: Երբ պարսպի վրա բացվեց շատ խոշոր անցք՝ կըզըլբաշներն իրենց կյանքը փրկելու համար ստիպված եղան «էլամա՞ն» կանչել: Սեֆեր ամսի 21-րդ օրը Թահմազ-Կուլի խանի կողմից պատգամավոր եկավ և դիմեց Քյուչուկ-Ահմեդ փաշային: Մի շաբաթվա զինադադարից հետո, հաջորդ շաբաթվա սկզբին պետք է բերդը հանձնեին: Ահմեդ փաշան այդ մասին հայտնեց Մեծ վեզիրին, և երբ, հայտնեցին նաև Վեհափառ փադիշահին, նա իրրև իր կայսերական զայրույթի արտահայտություն, հրամայեց այդ օրն ևեթ հարձակվել ու անպայման բերդը գրավել: Մեծ վեզիրի խնդրանքով պատգամավորն ազատվեց: Երբ պատգամավորը դուրս եկավ բերդից՝ զինվորների մեջ «վիրայի» (հանձնման) աղաղակներ բարձրացան: Նրանք կռիվը դադարեցրին: Այն ժամանակ՝ վատաբարո կըզըլբաշները, առիթից օգտվելով, շտապեցին լցնել պարսպի՝ Թնդա-

նոթաձգությունից առաջացած անցքերը, նորոգել երա ավերված տեղերը։ Զնայած դաղինները զանազան տեղերից կանչում էին՝ «Այս ի՞նչ տեսակ «աման» խնդրել է, անցքերը մի փակեք, հետո ձեզ աման չի տրվի, բայց տեսնում էին, որ այդ ստոր արարածները չեն լսում և շարունակում են անցքերը նորոգել ու փակել։ Այդ անասունների [կզբլբաշների] բերդից անսպասելի կերպով արձակված թնդանոթներից երեք վաշտապետ և մի քանի ենիչերիներ նահատակվեցին։ Իսլամական զինվորները, տեսնելով այս վիճակը, ուժասպացրին պաշարումն ու մարտերը։ Հաջորդ օրը, Սեֆեր ամսի 22-րդ երկուշաբթի օրը Երևանի բեթխուդան՝ Մուրադ աղան, որը հպարտ և իր այուննիությամբ հայտնի անձնավորություն էր, իբրև պաշտոնական պատգամավոր՝ եկավ Ահմեդ փաշայի մոտ, որը նրան ներկայացրեց Մեծ վեզիրին, իսկ սա՝ Նորին Վսեմություն փադիշահին։ Հաղթանակի Դիվան կազմելու ֆերման տրվեց։ Բոլոր զինվորական պետավարները հավաքվեցին։ Վեհափառ փադիշահը բարձրացավ իր վեհ գահի վրա և խոսքն ուղղելով ներկա պատգամավորին՝ ասաց. «Ինչո՞ւ բերդը չհանձնեցիք»։ Պատգամավորն աջեմների խառնվածքին հատուկ նրբությամբ և քաղաքավարությամբ խոսելով, մեղմ արտահայտություններով փադիշահի զայրույթը մեղմացնելու նպատակով ասաց. «Իմ փադիշահի վեհության և փառքի համբավը թող հասնի Շահի ականջը, նրա հերոսության հռչակը թող տարածվի և հասնի իրանական երկրի հողերին»։ Հետո ավելացրեց՝ «Մենք, մրջյուններս, համարձակություն ունեցանք դիմադրել ձեզ նման հսկային, փոխանակ միաբանության մասին խոսելու, բերդը հանձնելու՝ համառություն ցույց տվինք»։ Վերոհիշյալի [պատգամավորի] ողջմական լեզվով տրված պատասխանը և իմաստուն դատողությունը փադիշահին հաճելի թվաց և նա հրամայեց, որ նրան [պատգամավորին] ոսկեզօծ խալաթ տրվի, հետո, ասաց. «Հիմա եթե անկեղծորեն ցանկանում եք, պետք է այս օր ևեթ բերդը հանձնենք»։ Մեծ վեզիրը պատգամավորին իր օթաղը տարավ։ Այդ գիշեր բերդի հանձնման լուրը տարածվեց և մարտիկ տեղի չունեցան։ Սակայն բոլոր զինվորները պատրաստության համար կազմ ու պատրաստ մնացին։ Մուրադ-Աղան իր մարդանցից մեկին ուղարկեց բերդի ներսում գտնվող Երևանի խանի մոտ և հայտնեց՝ «Ամանը ընդունված է»։ Առավոտյան վաղ Մեծ վեզիրը ներկայացավ փադիշահին և խոսեց նրա հետ հաշտության պայմանների մասին...

Սեֆեր ամսի 23-րդ օրը Երևանի իշխող էմիր-Գյունե-Օղլին դուրս եկավ բերդից։ Իսլամական զինվորները, հագած ու զինված շար-

քերով կանգնած էին բերդի դռնից մինչև փադիշահի բարձրագույն դուռը։ Այդ ժամանակ Թահմազ-Կուլի խանը, Մազանդարանի հրացանաձիգների պարագլուխ Միրֆեթահի հետ միասին դուրս եկավ. նրանք սրերն ու պատանքն իրենց վզին առած, բոլոր ունեցվածքով և ենթականերով ներկայացան Մեծ վեզիրին։ Հետո ներկայացան աշխարհակալ վեհափառ Սուլթան Մուրադին, գետինը համբուրելու քաղաքավարական արարողությունից հետո, նրա բարձրագույն դռան առաջ, ձեռքերը կրծքերին կանգնեցին։ Փադիշահն իր շնորհքը ցույց տալով, ասաց. «Ք ո ունեցածները քեզ եմ շնորհում». նա [Թահմազ Կուլի խանը] գետինը համբուրելով, վերին աստիճանի նրբին խոսքերով իր ծառայականությունն արտահայտելով՝ ներողամտություն և ողորմություն խնդրեց։ Նրան մեկը-մյուսի վրա երեք խալաթ հագցրին, վեզիրության աստիճանով ոսկեզօծ և զարդարված թուր ու դաշույն շնորհեցին և վերանվանեցին Յուսուֆ-փաշա։ Խոսակցության ժամանակ փադիշահը հարցրեց. «Ի՞նչ է պատճառը, որ ես չորս ամիս՝ արշավանքի տանջանքները հանձն առած, պատերազմի եմ եկել, մինչդեռ ձեր շահը կնոջ նման փախստական, իր գահի ու թագի պատիվը հողին է հավատարեցրել. նա ի՞նչ շահ է»։ Այս հարցին նա [Թահմազ-Կուլի խանը] պատասխանեց. «Ի՛մ փադիշահ, ք ո կյանքը և իշխանությունն երկա՛ր լինի, ձեր պապերից սկսած, ձեր սուրը հատու և ուժեղ է եղել. նա (շահը) ի՞նչ ուժ ունի, որ դուրս գա Ձեզ նման միշտ հաղթական, վեհ փադիշահի դեմ»։ Փադիշահը պատասխանեց. «Իհարկե. այսօր իմ կուլերը բերդը պիտի գրավեն». և ֆերման տվեց, որին նա պատասխանեց՝ «Գլխի՛ս վրա, կատարյալ հպատակությամբ»։ Միրֆեթահի 12 հազարի չափ հրացանաձիգները, ինչպես նաև նրա 500 հոգուց բաղկացած մարդիկ, իրենց ինչքերով և ունեցվածքով, նրա չորս կանայք, բոլորը ներման արժանացան և բերդից դուրս եկան։ Ենիչերիների Աղան իր ընկերներով բերդը գրավեց և Էմիր-Գյոնե-Օղլուի մարդկանց դուրս արեց։ Էմիր-Գյոնե-Օղլուի տված ցուցակի [դեֆթեր] համաձայն, դեֆթերդարները մտան Երևանի բերդը։ Բոլոր ներսի և դրսի ինչքերը, ինչպես նաև տեսանելի և թաքցված բոլոր հարստությունները հաշվի առան և վերցրին։ Նրանք ստացան այն անապառելի գանձերն ու անթիվ հարստությունները, որոնք Երևանի իշխողը և նրա հայրը՝ Էմիր-Գյոնե խանը կուտակել էին 30 տարվա ընթացքում։ Նրանք մտնելով պետական գանձարանը և պահեստները, այնքան հարստություն և պաշարներ գտան, որ բանակին երկու տարի կբավականանար։ Եվ որովհետև Երևանի

իշխողը պատվի էր արժանացել, ուստի Միր-Ֆեթահ-Օղլուն էլ այդ օրն իր 2 հազար Մազանդարանի հրացանաձիգներով ներման արժանացավ, և դուրս գալով Երևանի բերդից, մեկնեց դեպի Աջեմի շահի մայրաքաղաքը։ Բերդի նվաճման ժամանակ գործադրվող կարգը՝ այսինքն անձնատուր եղող զինվորների զինաթափումը, այս անգամ չգործադրվեց, այնպես որ կրզըլբաշները զնացին զինված վիճակում։ Մի քանի խելացիներ այսպես էին դատում. «Կրզըլբաշների պարծանք հանդիսացող այսքան ընտրյալ կտրիճների ապահով դուրս գալը և գնալը, մանավորապես նրանց զինաթափ չլինելը, հետագայում խլրտումների պատճառ կհանդիսանա, այս ստորները մի որևէ վայրում անտարակույս անկարգությունների և ապստամբությունների կձեռնարկեն։ Գոնե դրանց զինաթափ անեին»։ Բայց փադիշահը չուզեց լսել և ընդունել այդ դատողությունները։ Իսկ երբ լսվեց, որ այդ ստոր սրարածները ճանապարհին պատահած բեռնատար ձիերը գրավում և մարդկանց սպանում են, նրանց հետևից ուղարկվեցին Քյուչուք-Ահմեդ փաշան՝ Շամի էյալեթի բանակով և Մուհամմեդ փաշան՝ Կարամանի էյալեթի բանակով։ Երբ սրանք հասան, հրացանաձիգներն ապաստանեցին ժժվրանցանելի լեռներում և սկսեցին կռվել։ Քյուչուք-Ահմեդ փաշան վիրավորվեց, Բեյ-Շեհիրի բեյը՝ Ռիզվան բեյը նահատակվեց և 15 հոգի վիրավորվեցին, որից հետո նրանք վերադարձան և միացան կայսերական բանակին»։

Հետո պատմագիրը նկարագրում է Երևանի գրավման և պարսիկների պարտության առթիվ Ստամբուլում, Սուլթանի պալատում տեղի ունեցած հանդիսավոր ընդունելությունը։

(«Թարիխի-Նայիմա», հատ. III, էջ 255—273)։

Պարիսպների ռեռոգումը և պահակազորի նշանակումը

Սեպտեմբերի 27-րդ օրը ձեռնարկեցին բերդի քանդված տեղերի նորոգման և խրամատները կարգի բերելու աշխատանքներին։ Գլխավոր ճարտարապետի կողմից չափումներ կատարելուց հետո՝ վանդակավոր (ամֆրենջի) 19280 արմունկաչափ (արշին) տեղից 8 800 արշին տրվեց Ռումելիի և Հալեպի էյալեթներին, սիպահիներին և զինակիրներին (սիլահդար), 8560 արշին Անատոլուի զինվորներին և ենիչերիներին, 1920 արշին էրզրումի, Կարսի և Կարամանի զինվորներին։ Սրանք նորոգման գործը եռանդով առաջ տարան և վերջացրին, որից հետո ենիչերիներից և այլ զինվորներից 12 հազարի չափ զին-

վորներ նշանակվեցին բերդի պահպանության և պաշտպանության համար։ Սրանց թոշակների համար գանձարանից 400 քիսե փող տրվեց. հանձնվեցին նաև անհրաժեշտ զազմամթերք ու բալլեմով թնդանոթներ։

Երևանի գրավումից հետո, Սուլթան Մուրադը գնում է գեպի Թավրիզ, ճանապարհին գետն անցնում է ոտքով։ Ջեյնալի և այլ ցեղեր, հազարի չափ օրաններով գաղթեցնում է՝ Երզինկայի, Բերջանի և Բասենի սանջակներում գտնված ավերակ և անմարդաբնակ վայրերը բնակեցնելու համար։ Այդ մասին հատուկ հրաման է արվում և նրանց բնչերին սանջակ ու գեամթթ է հատկացվում։ [Իսլամական բանակը] ճանապարհին պատահած բերդերը և ամրոցները քանդելով, այգիներն ու պտղատու ծառերը կտրատելով և ձեռն անցած կրզըլբաշներին սպաննելով շարունակում է ճանապարհը։ Այդպես են վարվում նաև Խոյ և այլ քաղաքներում՝ մինչև Թավրիզ հասնելը։ Փադիշահը հրամայում է քանդել և կործանել Շահի պալատը և քաղաքը։ Իսլամական զինվորները Թավրիզի «բարձրադիր շենքերը, բարեշեն ու գեղեցիկ պալատները քանդում են, քյոշկերի և տների պատուհաններն ու վանդակների դռները, որոնք կապույտ ու ոսկեգույն ներկված ու զարդարված էին, պոկում են և իրենց վրանները տանելով՝ փայտի փոխարեն վառում են»։

Թավրիզի շենքերի և պալատների մեծ մասը քանդում են, շուկաները այրում, բայց քաղաքի անսահման՝ ծովի նմանող այգիներն ու պարտեզները այնքան ընդարձակ էին, որ այդքան մեծ թվով զինվորներ երեք օրվա ընթացքում ամեն ջանք գործ դնելով հանդերձ, կարողացան այրել պարտեզների միայն մի տասներորդ մասը...» Սուլթան Մուրադն այդ ավերումները կատարել տալուց հետո, երանի հետ հաշտություն է կնքում և վերադառնում Ստամբուլ։

Թուրք պատմագիրները ասում են՝ «Սուլթան Մուրադ IV գաժան և արյունարբու գործերին պետք է ավելացնել նաև նրա բանդելու, այրելու և ոչնչացնելու արտակարգ ձգտումը»։

(«Թարիխի-Նայիմա», հատ. III, էջ 253—268)։

Աջեմի շաները գրավում է Երևանի բերդը

Այս վերնագրի տակ Նայիման պատմում է, որ Պարսից շահը՝ հավաքելով Թավրիզի և շրջակայքի գորքերը և Իսֆահանից չորս թնդանոթ բերել տալով, պատրաստվում է հարձակվել Երևանի վրա։ Երևանի պաշտպանության և օգնության համար լայն միջոցներ են ձեռք առնվում։ Բայց որովհետև ձմեռվա սաստիկ սառնամանիքները սկսվել էին, այդ միջոցառումներն անցնում են ապարդյուն։ Շահը պաշարում է Երևանը։ Անագորուն տարբեր վայրերում կատարվում է զորահավաք, բայց գրեթե ոչ մի արդյունք չի ստացվում։ Երևանի բերդում պաշարը վերջանում է։ Պաշարվածներն օգնության հույսը կորցրած, բերդը հանձնում են «վիրայով»։ Այդ տարի, ասում է պատմագիրը, ձմեռը և սառնամանիքը ծայրաստիճան ուժեղ են եղել, բոլոր ճանապարհները փակվել են, այդ պատճառով էլ սովը ուժեղ է եղել, «մի սոմար գարին 5 դուրուշով և 20 դիրհեմ հացը մի այչեով 12 էր ծախվում»։

(«Թարիխի—Նայիմա», հատ., III, էջ 281—283)։

1646 թվականի (1636) դեպքերից

Հետո պատմագիրը տալիս է մանրամասնություններ Երևանի վրա ուղարկված ուժերի մասին: Նույն թվին Դիարբեքիրի, Կարամանի, Սիվասի, Անատոլուի և մի քանի սանջակների փաշաները և բեյերն իրենց զինվորներով ուղարկվում են Կարսի պաշտպանության համար: Սրանք ձեռնարկում են Կարսի բերդի քանդված տեղերի նորոգմանը: Անատոլուի բեյլերբեյի՝ Գյուրջի-Մուհամմեդ փաշային հանձնարարվում է Ախալխայի պարսիպների նորոգման գործը:

Ռուստեմ խանը գնում է Ջոր և Գերքուլք քաղաքների վրա, իսկ Աջեմի շահը Երևանի բերդի կառուցման համար 4 հազար «սերախոր» և 10 հազար թուման փող է ուղարկում: Գենջեի Մուհամմեդ խանը և Շիրվանի Յուսուֆ խանը ուղարկում են 3 հազար կըզըլբաշ զինվորներ, Երևանի բերդը նորից նորոգվում է, շրջապատում ջուր է բաց թողնվում և բերդն ամրացվում է: Շահը բերդի իշխանությունը հանձնելով Քելբ-Ալիխանին՝ ինքը գնում է Իսֆահան:

(«Թարիխի—Նայիմա», հատ. III, էջ 287—288):

1047 թվականի (1637) դեպքերից

Շահի կողմից Մաքսուդ խան անունով պատգամավորը գալիս և հայտնում, թե շահը զղջացել է իր կատարած ոճիրների համար և ցանկանում է հաշտություն կնքել: Սուլթանը մերժում է այդ առաջարկը և պատգամավորին բանտարկում: Պատգամավորը գաղտնի երկու մարդ է ուղարկում, որոնք ճանապարհին բռնվում են: Փադիշահը խիստ զայրանում է. թեև այդ քայլի համար պետք էր պատգամավորին սպանել, բայց փադիշահը նրան խնայում է, միայն այդ մարդկանց է կախաղան բարձրացնում՝ պատգամավորի դռան առաջ, կտրում է նրանց քիթն ու ականջները, գաղտնի նամակը նրանց քթի մեջ կոխում և երեք օր այդ վիճակում թողնում կախված: Այդ բոլորը կատարում են պատգամավորին վիշտ պատճառելու համար:

(«Թարիխի-Նայիմա», հատ. III, էջ 322—323):

Կրզըլբաշների պատրաստությունը Քենան փաշայի դեմ մղված կռվում

Էրզրումի վալի՝ Վեղիր Քենան փաշան և Ախալսխայի իշխան՝ Սեֆեր փաշան, Բշնամու երկիրը կողոպտելու պաշտոն ունեցող Թաթարական զինվորներով գնում են Երևանի վրա։ Երևանի իշխողը՝ Քեյբ-Ալի խանը իր բազմաթիվ զինվորներով դուրս է գալիս նրանց [օսմանցիների] դեմ։ Մեծ մարտերից հետո, կըզըլբաշները պարտվում են և Քեյբ-Ալի խանը վիրավորված փախչում է դեպի բերդը. իսլամական բանակը հետապնդում է նրանց, հարյուրավոր կըզըլբաշների գլուխները թողնում, սուլթաններից մի քանիսին և բազմաթիվ կըզըլբաշների գերի է վերցնում ու հափշտակում կովի դաշտում թողնված սրնգափողերը։ Այս հաղթության առթիվ 400 մարդկային գլուխ և 30 գերի, որպիսության նամակով միասին ուղարկում են կայսերական բանակը։ Միաժամանակ և Բաղդատ է հասնում նախապես Ջոր քաղաքը կողոպտելու համար ուղարկված բանակից վերցված մի քանի գերիների և մեծ պաշարեղենի ուղարկման ուրախալի լուրը։

Այդ ուրախառիթ լուրերը համարվում են լավ նշան...։

Այս դեպքերը տեղի են ունենում այն ժամանակ, երբ Սուլթանական բանակը զբաղված էր Բաղդատի պաշարումով, որը գտնվում էր կրզըլբաշների ձեռքում։ Բաղդատի պաշարումը և նրա հետ կապված մարտերը լինում են շատ կատաղի և երկարատև։ Պատմագիր Նայիման տալիս է այդ դեպքերի խիստ մանրամասն նկարագրությունը։ Ի վերջո Բաղդատը գրավվում է Սուլթանի կողմից, ուր տեղի է ունենում ընդհանուր և սարսափելի ջարդ, ավեր, թալան ու կողոպուտ։ Շահը պատգամավոր է ուղարկում և հաշտություն խնդրում։ Երկար բանակցություններից հետո, 1049 թ. (1639) Մուհարրեմ ամսի 14-ին կնքվում է հաշտությունը հետևյալ պայմաններով՝

ա) Բաղդատի էյալեթի մեծ մասը անցնում է Սուլթանին։

բ) Ախալսխայի, Կարսի, Վանի, Ջոր քաղաքի, Բաղդատի, Բասրայի սահմաններում գտնվող բերդերը, գավառները (նահիյե) և հողերը, լեռներն ու բլուրները, Շահի կողմից ոչ մի միջամտության և հարձակման չպետք է ենթարկվեն։

գ) Մենդելջենից մինչև Դերթենգե գտնվող բերդերը, Բիրեջ, Զերդուբեյ (Զումրուդ-Մավա էլ է կոչվում) և Զենջիր-Կալայից դեպի արևելք գտնվող բերդերը, գյուղերը, անտառներն ու նրանց հարակից մասերը Շահի կողմից գրավվելով, նրանց սահմանների մեջ գտնվող վայրերի նկատմամբ Սուլթանի կողմից միջամտություն չպետք է լինի։

---

* Հաշտության պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս «Թարիխի Իզդիխ» ձանոթագրություններում (ծան. 3)։

գ) Ջենջիր-Կալայի (գանվում է լեռան վրա) և Երևանի սահմաններում գտնվող Կոթուր, Մակուր (Մակու) և Կարսի կողմում գտնվող Մուղազբերդ [Մանազկերտ] անունով բերդերը երկու կողմից պետք է քանդվեն։

(«Թարիխի—Նայիմա», հատ. III, էջ 430—431)։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հյուսմի Ջելեբի—X դարի (հիջրի) նշանավոր թուրք բանաստեղծ։

2. Ջելալի, Ջելալիական ապստամբություններ։ *Այս անունով հայտնի դեպքերի մանրամասնությունները ավել ենք տարեգիր Նայիմայից կատարված թարգմանություններում։ Ինչպես Նայիման, այնպես էլ այլ թուրք պատմագիրներ սովորաբար Ջելալիների շարժումը համարում են «ավազակային»։ Հատկանշական է հիշել, որ «Ջելալի» բառը թուրքերեն լեզվում համանիշ է դարձել ավազակ, ապստամբ և ըմբոստ բառերի**։

*Այդ շարժումը Ջելալիական է կոչվել Բոզոքցի Շեյխ-Ջելալի անունով, որը 925 թ. (1519) Անատոլուում առաջին անգամ ղեկավարել է ապստամբական շարժումը։ Թուրք պատմագիրների ասելով Շեյխ-Ջելալը Բոզքատի շրջակայքում աղոթասեր և քարայրաբնակ դերվիշ է եղել, որ ժողովրդին քարոզել է, թե մոտ ժամանակում մի Մեհդի** (Միսիա) երևան պիտի գա։ Շեյխը իր աշակերտների և հետևորդների թիվը հետզհետե ավելացնելով, ի վերջո իրեն Մեհդի է հայտարարում և շուրջը հավաքելով մոտ 20 հազար մարդ, սկսում է շրջակա վայրերը գրավել և Շահ-Ջելի անունով ինքնակամ իշխանություն վարել։ Շրջակա բեյլերբեյիները և այլ պետական պաշտոնյաներ ակամա ենթարկվում են Շեյխին։*

Ստամբուլի կառավարությունը մեծ ուժեր է ուղարկում Շեյխ-Ջելալի դեմ, որն Իրան փախչելու համար գնում է Սվազ և Շարքի-Կարահիսարի մոտ տեղի ունեցած կռվում սպանվում է։ Նրա գլուխը կարում և Ստամբուլ են ուղարկում։

Այս դեպքի կապակցությամբ, ըստ թուրք պատմագիրների, հետագա տարիներին Անատոլուում տեղի ունեցած ապստամբական շարժումները Ջելալիական և մասնակիցները՝ Ջելալի անուն են ստացել։

Թուրք պատմագիրներից ոմանք Շեյխ-Ջելալի ապստամբությունը կապում են իրանական Շիա դավանանքի հետ։

Սակայն XVI և XVII դարերի թուրք պատմագիրներից շատերը (Փեչևին, Նայիման, Քյաթիբ-Ջելեբին և ուրիշներ) Ջելալիների ապստամբական շարժման հիմնական պատճառը համարում են այն, որ Սադրազամ Սինան Փաշան Ավստրիա-

---

* شمس الدين سامى: قاموس تركى، درسعادت ۱۳۱۷، ص. ٤٧٨.

** *Իսլամական 12 իմանները կոչվում էին մեհդիներ, որոնց գալստյանն էին սպասում մուսուլմանները, ինչպես հրեաները սպասում էին Մեսիայի գալստյանը։*

յում, Խաչ-Օվայի պատերազմում պարտության ենթարկված Թուրքական բանակի զինվորներից 30 հազար մարդու իբրև դասալիք («Ֆիրարի») մահվան է դատապարտել, բոլոր վիլայեթներին խիստ հրաման է ուղարկել բռնագրավել*, անխնա սպանել, որտեղ որ նրանց ձեռք անցնեն: Սինան փաշայի այդ դաժան հրամանի հետևանքով, մահվան դատապարտված բազմաթիվ զինվորներ ցրվում են Անատոլուում և բարձրացնում Ջելալիական ապստամբություններ:

Ջելալիական ապստամբական շարժման մասին Թուրք պատմագիրների տված բացատրությունները դուրկ են գիտական և պատմական արժեքից: Թուրք պատմագիրները չեն տալիս և չեն հիշում Ջելալիների ստրիներ տևող ապստամբության սոցիալ-տնտեսական, քաղաքական պատճառները:

Ժամանակակից Թուրք պատմագրության մեջ փորձեր են եղել այդ ապստամբական շարժումը ուսումնասիրելու և նրա շարժիչ ուժերը լուսաբանելու ուղղությամբ: Բայց դժբախտաբար մինչև օրս չկա որևէ արժեքավոր գիտական ուսումնասիրություն: Ժամանակակից Թուրք պատմաբան Իսմաիլ Համի Դանիշմենդը, իբրև այդ շարժման պատճառ հիշում է՝ ա) Անատոլուում Շիա դավանանքի պրոպագանդան, բ) վարչական և քաղաքական որոշ պայմանների պատճառով Անատոլուի՝ Ստամբուլի դեմ դուրս գալը: Դանիշմենդը այդ մասին ասում է՝ «կրոնական ձևերով առաջացած Անատոլուի ապստամբությունները, ամենից առաջ, իրապես ազգային դժբախտությունների շատ բնական մի շարք արձագանքներ են եղել». գ) ապստամբության իբրև կարևոր պատճառներից կարելի է ցույց տալ նաև «Դևշիրմե» և «Դևոնմե»* դեկավարների և պաշտոնյաների Անատոլուի շատ վայրերում կատարած տնտեսական և ֆինանսական բռնությունները: «...Օսմանյան աղբյուրներում իրարից տարբեր և տեղական բնույթի մի շարք շարժումների ձևով ցույց տրված բոլոր ապստամբությունների մեծագույն ժամանակում հրնան գալը և ինչպես պարզվում է դեպքերի ընթացքից, ապստամբների իրար օգնելը ցույց է տալիս, որ այդ շարժումները կանոնավոր կերպով և որոշ ծրագրով են առաջացել և թերևս մեկ ձեռքով կառավարվել»**:

Պատմաբան Դանիշմենդի Ջելալիական շարժման մասին հիշած պատճառները անշուշտ, ուշադրության արժանի են, սակայն անբավարար են նման մասսայական շարժումը լուսաբանելու համար:

---

* Օսմանյան պետության բազմաթիվ սադրազանքներ և վեգիրների ծագումով պատկանում էին այն տարբերին, որոնք «Դեվշիրմեի» (մանկաժողով) կարգով հավաքված էին երկրի քրիստոնյա ժողովուրդների երեխաներից: Այդպիսիները կոչվում էին «դեվշիրմե վեզիրներ և սադրազաններ»: «Դեոնմե» էին կոչվում նրանք, որոնք ծագումով պատկանում էին ոչ-իսլամ ժողովուրդներին, բայց հետո ընդունել էին իսլամական կրոնը: Դանիշմենդի և ժամանակակից Թուրք պատմագրության մի շարք ներկայացուցիչների կարծիքով «Դեվշիրմե» և «Դեոնմե» ծագումով սադրազանները և վեգիրները (որոնց թիվը մեծ է) Թուրքիայի և Թուրք ժողովրդի դժբախտության պատճառ են եղել:

** Ismail Hamî Danişmend, „Izahlı Osmanlı Tarihi kronolojisi", Istanbul, 1948. cilt 2. sah. 120—121.

Սովետական պատմագրությունը, մանավանդ Արևելագիտությունը անհրաժեշտ չափով չեն զբաղվել Ջելալիական շարժումը լուսաբանելու հարցով։ Բրբագետ Ա. Տվերիտինովայի «Կարա Յազըջի-Դելի Հասանի ապստամբությունը Թուրքիայում»* աշխատությունը, անտարակույս, շատ արժեքավոր գիտական ուսումնասիրություն է, սակայն չի ընդգրկում Ջելալիական ապստամբական շարժումը լրիվ կերպով։ Ա. Տվերիտինովան իր եզրակացության մեջ ասում է՝ «Կարա Յազըջի-Դելի Հասանի ապստամբությունը բուն էության գյուղացիական ապստամբություն է, թե՛ այդ շարժման մասնակից հիմնական մասսաների սոցիալական կազմով և թե՛ իր առաջ դրված խնդիրների բնույթով։ Այդ շարժումը գլխավորող փոքր ֆեոդալները և ռազմական «ծառայողների» դասից դուրս եկածները ապստամբությունը օգտագործեցին իրենց նեղ դասակարգային շահերի համար... Շարժումը ղեկավարող փոքր ֆեոդալները, հավանորեն, վախենալով մասսաների ակտիվությունից, անցան Սուլթանի կողմը և օգնեցին նրան ապստամբությունը ճնշելու»**։

Թուրքիայում Ջելալիների ապստամբական շարժման բազմակողմանի, գիտական ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության և արևելագիտության առաջ դրված կարևոր հարցերից է, մանավանդ որ այդ շարժումը սերտորեն կապված է XVI—XVII դարերի հայ ժողովրդի պատմության հետ։ Այդ շարժման մասին գրում և արտահայտվում են այդ ժամանակի հայ պատմագիրները։

3. **Էլբիստան**—Հալեպի վիլայեթում, Մարաշի սանջակում կազայի կենտրոնն է, Մարաշից 70 կմ դեպի հյուսիս-արևելք։ Այս կազան հնում ավելի մեծ է եղել, կարևորություն է ունեցել և Մարաշ քաղաքից առաջ եղել է Զյուլկադերի իշխանության կենտրոնը։

4. **Թոսկանա**, Թոսկանայի Մեծ Դքսությունը (Toscane) Իտալիայի արևմտյան մասում բնագրածակ հերկրամաս է, որը հնում՝ կոչվում էր Էտրուրիա։ Հետո վերածվեց անկախ պետության, դքսության, Ֆլորանս մայրաքաղաքով։

Այս Մեծ Դքսությունը իր անկախությունը պահպանեց մինչև 1860 թ., երբ միացավ Իտալիային։

5. «**Աջեմ**» բառի ծագման և իմաստի մասին թուրք էնցիկլոպեդիստ Շ. Սամին տալիս է հետևյալ բացատրությունը։ Արաբները «Աջեմ» էին անվանում ոչ արաբ ազգություններին ու ցեղերին ընդհանրապես։ Սակայն ավելի ուշ այդ բառը դարձ է ածվում գլխավորապես Իրանի իշխանության տակ ապրող ժողովուրդների համար։ Ի վերջո «աջեմ» անունը մնաց Իրանի ժողովրդին։ Այսպես, «Աջեմիստան» դարձ էր ածվում Իրան, Պարսկաստան իմաստով, իսկ «աջեմը»՝ պարսիկ, իրանցի իմաստով։ Թուրք պատմագիրները ընդհանրապես դարձ են ածում «Աջեմի շահը», «Աջեմի երկիրը», «Աջեմի սահմանները» և այլն։

6. **Էմիր-ուլ-ումերա**. Ումերա էմիր (իշխող) բառից. էմիր-ուլ-ումերա բառացի նշանակում է էմիրների էմիր։ Հատուկ տիտղոս էր, որն տրվում էր միր-միրաններից ավելի ցածր աստիճան ունեցող անձանց։

7. **Ռաֆըզի**— իսլամական շիա դավանանքի սեկտերից մեկը կոչվում է ռաֆըզի, ռաֆըզիլիք։ Թուրք պատմագիրները «ռաֆըզի» անվանում են իրանցի-

---

* *А. Тверитинова,* Восстание Кара Языджи-Дели Хасана, М. Л. 1946

** *А. Тверитинова,* стр. 78.

ներին, նրանց համարելով հերետիկոս։ Ինչպես «կըզլ-բաշ», «մոլորյալ», «անկրոն» և այլ ածականները, ոաֆրդին արհամարհական, անարդական բնույթ ունի։

8. Կուրբան-բայրամի. *Բայրամ նշանակում է տոն, ուրախատիթ, տոնական օր, իսկ զուրբան՝ զոհ, զոհաբերություն, զոհ կտրելը։ Աստուծո մոտենալու և նրա ողորմությունը խնդրելու նպատակով այնպիսի կենդանիների զոհ բերելը, որոնց միսը կրոնական տեսակետից թույլատրված է ուտել։ Կուրբան-բայրամին իսլամական մեծ տոներից է։*

9. «Սեդեն կեչտի» *էին կոչվում այն զինվորական խմբերը, որոնք անսպասելի կերպով մխրճվում էին թշնամու բանակի շարքերը կամ մտնում պաշարված բերդը։ Այդ հարձակումները խիստ ահարկու էին և ընդհանրապես վերջանում էին հաղթությամբ։*

Ակչե, դուրուշ. *Թուրքական ազբյուրներից մեր թարգմանած նյութերում հաճախ հիշվում են Թուրքիայում զանազան դարերում գործածված դրամական միավորներ, չափեր և կշիռներ։ Իրենց տեղերում մենք տողատակ ծանոթություններում որոշ բացատրություններ ավել ենք։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում համառոտակի տալ ավելի լրիվ տեղեկանք, որպեսզի հնարավոր լինի ճիշտ պատկերացում ունենալ, մասնավորապես դրամական միավորների մասին։*

Նախապես պետք է հիշեցնենք, որ Օսմանյան կայսրության մեջ դրամական միավորները, մեզ հետաքրքրող դարաշրջանում, խիստ անկայուն են եղել և մշտական փոփոխության են ենթարկվել։ Բացի այդ, ինչպես Թուրքիայի ընդհանուր ֆինանսական հարցերը, նմանապես նաև նրա դրամական միավորները լուրջ ու գիտական ուսումնասիրության առարկա չեն եղել։ Թուրք պատմագիրները բայի կցկտուր տեղեկություններից, այդ մասին գրեթե ոչինչ չեն տալիս։

Ակչե. *XVI—XVIII դարերում դրամական հիմնական միավորը եղել է ակչեն։*

Ակչե՝ մոնղոլական լեզվից վերցրած բառ է, որ նշանակում է մանր, սպիտակ դրամ։ Սուլթան Օրխան-Ղազիի իշխանության շրջանում կտրված առաջին դրամը կոչվել է «ակչեի-օսմանի»։ Այդ ժամանակ կտրված չորս ակչեն (հետո երեքը) մեկ դիրհեմ արծաթի էր հավասար։ Սկզբում կտրվել են երկու ակչեանոց փողեր, հետո տաս ակչեանոց։ Գալով ակչեի իրական արժեքին, դա շատ փոփոխական և անկայուն է եղել։ Թուրք պատմագիրներից և հեղինակներից ոմանք ասում են, որ սկզբում հավասար է եղել շարիաթական դիրհեմի («դիրհեմի շիրյե» 1/4-ի-ն, ըստ այլ հեղինակների 1/3-ին։ Ըստ Շեմսեդդին-Սամիի՝ Օսմանյան պետության սկզբնական շրջանում մեկ դիրհեմ արծաթը հավասար էր 3—4 ակչեի, 992 թ.՝ 10—12 ակչեի,—մինչև 1050 թ. կայուն վիճակ է ունեցել,—1065 թ. 10 ակչեի, 1131 թ. մեծ անկման հետևանքով՝ 20—21 ակչե, որից հետո կանգ է առել 20 ակչեի վրա։

Դիրհեմ. *այս բառը ծագել է պարսկերեն «դրեմ» բառից, ավելի ճիշտ դիրհեմը պարսկական դրեմ բառի արաբականացված ձևն է։ Շեմսեդդին-Սամին իր բառարանում հակադրվելով մի շարք լեզվաբանների, որոնք պնդում են, թե դիրհեմը հունական ծագում ունի, պնդում է, որ հին հույների դրամական միավորները, դրանց թվում նաև հին արծաթ դրամի միավորը եղող դիրհեմը, պարսկական ծագում ունի**։ *Դիրհեմը Թուրքիայում ընդունված քաշի (ծանրության) հիմ-*

---

* شمس الدين سامى، قاموس تركى، درسعادت ۱۳۱۷، ایکنجی جلد، ص ۱۵۷٤.

նական միավորի, այսինքն օկկայի $^1/_{100}$-ական մասն է (մի օկկան 400 դիրհեմ է, դիրհեմը հավասար է 3.06 գրամի)։ Դիրհեմը իբրև արծաթի գրամի միավոր գոր է ածվել Արաբիայում և Օսմանյան պետության սկզբնական շրջանում՝ մինչև ակչեի երևան գալը։

Ակչեն իբրև գրամական միավոր վերջնականապես դուրս է եկել գործածությունից հանվել 1234 թ. (1818—1819)։

Փարե (փարա), պարսկերեն բառ է, բառացի նշանակում է մաս, հատ։ Հիջրի 818 թ. Եգիպտոսի մամլուքներից Մելիք-Մույեիդի անունով կտրված գրամական միավորը՝ Մույիդին, հետո (1945 թ.) կոչվեց փարե։

Նկատի ունենալով, որ Թուրքիայում ակչեի քանակն ու որակը անկայուն բնույթ էր ստացել, կարիք էր զգացվում ընդունել նոր և ավելի կայուն մի գրամական միավոր։ Հիջրեթի XI դարի սկզբին Թուրքիայում կտրվեց սկզբից ավելի մեծ գրամական միավոր-փարե, որն օսմանյան «ղուրուշ» միավորի առեղծումից հետո ընդունվեց իբրև ղուրուշի մաս։ Մեկ ղուրուշը հավասար է 40 փարայի։

Ղուրուշ. բուն Շ. Սամիի «ղուրուշ» բառը գերմաներեն gro-chen, կամ լատիներեն grossi բառերի աղավաղված ձևն է*։ Սուլթան Սուլեյման 2-րդի ժամանակ (1099—1102 թթ. հիջրի=1687—1691 թթ.) տեղի ունեցած գրամական սիստեմի ռեֆորմի կապակցությամբ, 1099 թ. կտրվեցին եվրոպական գրամների նման ավելի մեծ ծավալով արծաթե գրամներ, ղուրուշը ընդունելով թուրքական վիրայի $^1/_{100}$-րդ մասը; մեկ ղուրուշը 6 դիրհեմ քաշով։

Քիսե—բառացի նշանակում է պարկ, դրամապանակ (փարեքիսեսի)։ Օսմանյան պետության մեջ քիսեն գործ է ածվել հետց ի վեր, բայց խիստ տարբեր և անկայուն գրամական քանակով։ Նախ, քիսեն կարող էր բովանդակել ոսկե կամ արծաթե փողեր։ Բացի այդ, քիսեի բովանդակությունը ևս մշտապես փոփոխվել է։ Թուրք պատմագիրների ասելով, սկզբնական շրջանում քիսեն բովանդակել է 30.000 ակչե կամ 10.000 ալթուն (ոսկի գրամ)։ Այդպես էր Ֆաթիհ-Սուլթան Մուհամմեդի և Սուլթան Բայազիտ 2-րդի շրջանում։ Ավելի ուշ քիսեի բովանդակությունը փոփոխվել է այս կերպով՝ 944 թ.— 20.000 ակչե, 1071 թ.՝ 40000 ակչե, 1100 թ. հետո 50.000 ակչե. հետո գործ է ածվել «Սահմբուլ-քիսեսի», «քիսեհաումի», «քիսե-դիվանիե» և «քրսեի-մրսրի» անուններով տարբեր քիսեներ։ Այսպիսի մշտական փոփոխություններից հետո ի վերջո քիսեն հավասարվել է 500 ղուրուշի։

Յուք—բառացի նշանակում է բեռ, ծանրություն։ Օսմանյան պետության մեջ յուքը գործ էր ածվում նաև իբրև գրամական որոշ գումարի չափ և հավասար է 500.000 ղուրուշի։

Օկկա—(աղավաղված ձևը՝ կիյե). Թուրքիայում ընդունված և երկար ժամանակ գործածության մեջ եղող ծանրության չափը կոչվում էր օկկա։ Մեկ օկկան հավասար էր 2 կիլոգրամ 225 գրամի։ Օկկան բաժանված էր 400 դիրհեմի։

Այս գրամական և ծանրության միավորների մասին մանրամասնությունների տե՛ս Belin M. „Essai sur l'histoire economique de la Turquie", Paris. 1865, *կա նաև թուրքերեն թարգմանությունը (նոր լատինական տառերով)* Türkiye iktisâdî tarihi hakkında tetkikler. Türkçeye çeviren: Istanbul mebusu M. Ziya, Istanbul, 1931.

---

* Նույն տեղում, էջ 965։

ՌԱՇԻԴ — XVII Դ.

«ԹԱՐԻԽԻ ՌԱՇԻԴ» — تاریخ راشد

Նայիմայից հետո Թուրքիայի երրորդ պատմագիր-տարեգիրը («վակաա-նյուվիս») Ռաշիդ-Մուհամմեդ-էֆենդին Քուրք ոլեմա և բանաստեղծներից է: Ռաշիդը Մալաթիացի Մուստաֆա էֆենդիի որդին է: Սկզբում 1104 թվականից, դատախոսությամբ է պարապել: 1134 թ. նշանակվում է Հալեպի մևլևիության պաշտոնում: 1141 թ. (1728) դեսպան է եղել Իրանում: Վերադարձից հետո Ստամբուլում գոդիի պաշտոն է վարել, այնուհետև որոշ ժամանակով ուղարկվել է Բուսա՝ տպրելու: Հետո պատասխանատվությամբ, վերադարձել է Ստամբուլ: Ավելի ուշ նշանակվել է կադ-ասքեր Անատոլուում: Ունի բանաստեղծությունների դիվան: Ռաշիդի պատմությունը («Թարիխի Ռաշիդ») սկսվում է 1071 թ. և հասնում մինչև 1134 թ. (1660—1721): Իրրև արբունական տարեգիր, Ռաշիդը իր «Պատմությունը» սկսում է Նայիմայի վերջացրած թվականից: Նա գրի է առնում և նկարագրում 63 տարվա դեպքեր: Նրա «Պատմությունը» 6 հատոր է, բայց 6-րդ հատորը գրել է մի այլ պատմագիր՝ Չելեբի-Զադեն, իրրև «Ռաշիդի Պատմության» հավելված:*

Ռաշիդի պատմությունը ընդգրկում է XVII դարի երկրորդ կեսից մինչև XVIII դարի առաջին քառորդը: Դա Օսմանյան պետության ներքին և արտաքին դժվարությունների շրջանն էր: Օսմանյան կայսրությունն այդ շրջանում էլ շարունակում էր իր պատերազմական գործողությունները Եվրոպայում, բազմաթիվ պետությունների՝ Ջրանահայի, Ավստրիայի, Հունգարիայի, Վենետիկի, Լեհաստանի,

---

* Տե՛ս «Թարիխ Չելեբի-Զադե» նոր աշխատության հաջորդ գլուխը:

Ռուսաստանի, Մալթայի և Հռոմի պատմի դեմ։ Թաշիդի «Պատմության» մեծ մասը հատկացված է այդ երկարատև և անվերջ պատերազմական գործողությունների և նրանց հետ կապված դեպքերի մանրամասն նկարագրություններին։ Պետական ներքին կյանքում շարունակվում են, մասնավորապես Անատոլուում, խլրտումներն ու ննիչերիների և սիպահիների ապստամբությունները։ Սուլթան Մուրադ IV-ից հետո գահակալող օսմանյան սուլթանները բնորոշվում են իրենց մեղկությամբ, ապիկարությամբ և այլասերվածությամբ, որոնք իրենց ժամանակի մեծ մասը անց էին կացնում հարեմական զվարճություններով, որտղությամբ և այլն։ Պետության գլխավորները՝ վեզիրները, մեծ մասամբ դառնում էին ննիչերիների ազդեցության տակ և հաճախ նշանակվում կամ հեռացվում էին ննիչերիների ցանկությամբ և բմահաճույքներով։ Բացառություն էին կազմում Քեոփրյուլուները՝, Քեոփրյուլու-Մուհամմեդ փաշան և նրա որդին՝ Քեոփրյուլու Ջադե Ֆազըլ-Ահմեդ փաշան (1066—1087), որոնք կարողացել էին գնդի ուժով պետության մեջ ժամանակավորապես որոշ հեղինակություն ձեռք բերել։

Ներքին և արտաքին խիստ կարևոր այս բոլոր հարցերի մասին պատմագիր Թաշիդը տալիս է շոր և հաճախ ավելորդ նկարագրություններ և մանրամասնություններ՝ պաշտոնական նշանակումներ, մահափճիռներ...

Ինչպես այլ թուրք պատմագիրների, այնպես էլ Թաշիդի «պատմության» մեջ ժողովուրդը, մասսաները չեն երևում, կարծես նրանք այդ երկրում չեն ապրում և պատմագրի ուշադրությանը չեն արժանանում։ Թաշիդի համար ժողովուրդը գոյություն չունի։ Պատմագիրը բավականանում է միայն հիշատակելով երբեմն տեղի ունեցող երկրաշարժները, հաճախագեպ հրդեհները (մանավանդ Ստամբուլում), այլ բնական աղետներն ու պատահարները։

Թաշիդի պատմության մեջ շատ քիչ տեղ են բռնում նաև Հայաստանի և հայերի հետ, առհասարակ Անդրկովկասի հետ կապված դեպքերը։ Նրա հինգ հատորանոց պատմության մեջ անմիջականորեն մեզ հետաքրքրող նյութերը շատ սահմանափակ են։

Մեր ձեռքի տակ եղած ու օգտագործած «Թարիխի Թաշիդը» տպագրվել է Ստամբուլում 1282 թ. (1865), «Պետական տպարանում»։

Պատմագիր Ռաշիդը իր պատմության I հատորում, ամբողջովին զբաղվում է Եվրոպայում 1071—1099 թթ. տեղի ունեցած պատերազմական դեպքերով. բացի պաշտոնական նշանակումներից և այլ պետական որոշումներից Հայաստանի, հայաբնակ վայրերի և Անդրկովկասի մասին գրեթե ոչինչ չի հաղորդում։ Դա մասամբ էլ բացատրվում է XVII դարի վերջի թառատունամյակի ընթացքում Թուրքիայի և Պարսկաստանի միջև պատերազմական գործողությունների պատճառով և երկարատև խաղաղության պահպանմամբ։ Թուրք-պարսկական հարաբերությունների մասին խոսելիս՝ պատմագիրը բավականանում է հիշելով մի քանի դեպքանությունների հանդիսավոր այցելությունները և մեծարժեք նվերների փոխանակումները։ Այսպես, Ռաշիդի II հատորում 1103 թ. դեպքերի շարքում հիշվում է, որ Սուլթան Ահմեդ II գահակալությունը շնորհավորելու համար, պարսկական շահը հատուկ պատգամավորություն է ուղարկում Ստամբուլ։

Աջեմի շահի կողմից պատգամավորի գալը

Աջեմի շահի կողմից [Սուլթանի] երջանիկ գահակալությունը շնորհավորելու համար Ստամբուլ է գալիս Գենջեի իշխողը՝ Քեշին-Ալի անունով պատգամավորը։ Սուլթանի կողմից տրված կայսերական ֆերմանով պատգամավորը ընդունվում է Էդիրնեում, Սուլթանական պատվի և նամուսի համաձայն, նրան բնակարան է հատկացվում և հոգացվում են նրա այլ կարիքները։ [Պատգամավորը] մի քանի անգամ ինջուլքներով և բազմատեսակ նվերներով հարգանքի արժանանալուց հետո, Ջեմազիել-ախըր ամսի 8-րդ օրը Նորին վեհափառության սուլթանի կողմից ընդունվելով՝ մատուցանում է [Սուլթանին] դրությունը և հանձնում իր հետ բերած նվերները՝ մեկ փիղ և Աջեմի երկրին հատուկ հինգ արագընթաց ձի, 45 պարսկական ուղտ, ականազարդ վահան, թուր և այլ թանկագին նվերներ։

Կայսերական ճամակի հանձնումը Աջեմի պատգամավորներին Փադիշահի ներկայությամբ

Սրանից առաջ Սուլթանի գահակալությունը շնորհավորելու համար եկած Աջեմի պատգամավոր Քեշին-Ալի խանը, նորից իր երկիրը վերադառնալու համար դիմում էր ներկայացրել։ Սուլթանի կողմից Աջեմի շահի անունով գրված նամակը փադիշահի ներկայությամբ հանձնելու հնագույն սովորության համաձայն, Էդիրնեում, Դունջու գետի ափին Թերափ-Կասրի կոչված վայրում մի հյուպակ

կառուցեցին և նվիրական Ռամազան ամսի 13-րդ օրը [պատպամավորին] իր բնակարանից առանձին թափորով այդտեղ բերին. նա սադրազամի առաջնորդությամբ ներկայացավ Վեհափառ փադիշահին: Նախ, Նորին Վսեմությունն սադրազամը պատվո խաչաթի արժանացավ, հետո վերոհիշյալ պատգամավորին սամույրմուշտակով պարգևատրեցին: Բացի այդ, կայսերական դանձարանից իբրև ճանապարհածախս 12500 դուրուշ, իր մարդկանց համար 5500 դուրուշ ընդամենը 25 հազար դուրուշ նվեր տրվեց և իրենց երկիրը վերադառնալու արտոնության համար ֆերմանն շնորհվեց:

(«Թարիխի Ռաշիդ», հատ. II, էջ 181—199):

էրզրումի վալի էսիրի-խալիլ փաշայի սպանությունը

Սրանից առաջ Ջիդերդելենի պատերազմում քյաֆիրների ձեռքը գերի ընկած խալիլ փաշան, երբ գերությունից ազատվեց, նրան՝ կայսերական ֆերմանով իբրև օժանդակություն [ողորմություն] շնորհվեց էրզրումի էյալեթը և հանձնարարվեց, որ Աստուծո ծառաների [ժողովրդի] հետ գթությամբ վերաբերվի: Սակայն խալիլ փաշան վերոհիշյալ էյալեթի ժողովրդի բազմաթիվ աղքատների նկատմամբ բռնություն և անիրավություններ էր կատարում, որի պատճառով, նրա [փաշայի] այդ վարքից և գործողություններից դժգոհություն արտահայտող հավաքական խնդրագիր ստացվեց. [բացի այդ] արփալըքի կարգով էրզրումի տերը հանդիսացող նախկին Շեյխ-ուլ-Իսլամ Ֆեյզուլլահ-էֆենդին նույնպես մանրամասնորեն հաղորդել էր վերոհիշյալ վեզիրի (խալիլ փաշայի) բռնությունների ու անիրավությունների մասին: Նրան [վալիին] պատժելու համար ֆերման տրվեց և մահվան դատապարտվեց:

(«Թարիխի Ռաշիդ», հատ. II, էջ 191):

* * *

Սուլթան Ահմեդ II գահակալությունը շնորհավորելու համար Աջեմի շահի կողմից ուղարկված պատգամավորի հանդիսավոր և փառավոր ընդունելության մասին վերևում հիշատակվեց: Հայտնի է, որ սուլթան Ահմեդ II փադիշահությունը շատ կարճ տևեց, միայն չորս տարի: Նրան հաջորդող սուլթան Մուստաֆա II գահակալությունը շնորհավորելու համար, Պարսից շահը 1108 թ. նորից պատգամավորություն է ուղարկում, որը նույնքան մեծ շուքով և հանդիսավորությամբ ընդունվում է սուլթանի կողմից: Պատգամավորը՝ Խորասանի նախկին իշխող՝

էրու-էլ-Մուսում խանը շահի շնորհավորական գրության հետ իրեն նվեր է բերում մի փիղ և մի քանի պարսկական ուղտեր՝ ամեն մեկի վրից մետաքսյա նիհալի* կախված, իսկ սուլթանի կողմից Աջեմի պատգամավորին և նրա մարդկանց տրվում են բազմաթիվ և ամենաթանկագին նվերներ, հատկապես շահի համար վերին աստիճանի թանկագին ոսկյա ու արծաթյա, հազվագյուտ թանկագին քարերով զարդարված իրեր։ Պատմագիր Ռաշիդը այդ բոլոր մանրամասնությունները հիշելուց հետո, ավելացնում է, որ Աջեմի պատգամավորի գալու և վերադառնալու կապակցությամբ կատարված ծախքերը՝ տրված նվերների արժեքի հետ միասին, չհաշված կայսերական ախոռից տրված թանկագին զարդերով պճնված ձիերի արժեքը, հասնում էր 261 և կես քիսե** ակչե դումարի։ Պատմագիրը այդ գումարի մասին տեղեկացել է պետական գանձարանին մոտ կանգնած մարդկանցից։

(«Թարիխի Ռաշիդ», հատ. II, էջ 389—390)։

Պատմագիր Ռաշիդն ի միջի այլոց երբեմն հիշում է այնպիսի պետական միջոցառումներ (հարկեր, մաքսեր և այլն), որոնք երկրի տնտեսական կյանքի մասին որոշ պատկերացում են տալիս։ Այդպիսի միջոցառումներից է սուրճի վրա դրված հարկը։

Սուրճի վրա դրված հարկի ավելացումը

Ամեն տարի Եմենից դեպի Ջիդդեի նավահանգիստը մոտ 40 հազար հակ սուրճ է գալիս, որի կեսը գնում է դեպի Եգիպտոս և նրա հարակից երկրները, 15—20 հազար հակը վաճառվում է փադիշահական երկրի սահմաններում։ Դրա [սուրճի] գործածությունը ժողովրդի այլ ծախքերի մեջ ավելի կարևոր տեղ է բռնում և սուրճի ծախքերի համար Օսմանյան պետությունից ամեն տարի չորս հազար քիսե ակչեից ավելի դումար է դուրս գնում։ Ժողովրդի մեջ նրա գործածությունը ոչ մի կերպ հնարավոր չէ արգելել։ Նկատի ունենալով այդ և միաժամանակ պետությանը մեծ եկամուտ ապահովելու հանգամանքները, հանգուցյալ Խուդավենդիկյար-Սուլթան-Սյուլեյման խանի սուլթանության ժամանակ Ֆերման էր տրված Ստամբուլի և նրան հարակից մաքսատներում սուրճ ներմուծողներից «Ռեսմի բիդաթ»*** վերցնելու մասին, ամեն մի օկկայի**** հա-

---

* Նիհալի, մետաքսից կամ ասեղնագործված կաշվից շինված շրջանակաձև զարդ, որը կախում էին ուղտերի վրից։

** Քիսե — մեկ քիսեն (500 դուրուշ) 60,000 ակչեի հավասար լինելով, վերոհիշյալ 261,5 քիսեն հասնում է 15 միլիոն 690 հազար ակչե դումարի։

*** Ռեսմ՝ տուրք, հարկ, բիդաթ, նորմուժություն. ռեսմի-բիդաթ՝ ներմուծության հարկ, ապօրեն հարկ։

**** Օկկա կամ գբյե — 1 կիլոգրամ 225 գրամ։

*մար մուսուլմաններից՝ 8 ակչե, քյաֆիրներից՝ 10 սաղ (ողջ) ակչե**, էդիրնեի քաղաքում ներմուծողներից առհասարակ 50-ական ողջ ակչե։ Այս հաշվով սուրճի օկկան երկու, երկու և կես դուրուշով բարձրացել էր։ Նկատի ունենալով, որ որոշ գումարի հարկի նշանակումը և գնի վրա առաջացրած տարբերությունը հնարավորություն է տալիս այդ հավելումին, հատուկ ֆերմանով որոշվեց՝ Ստամբուլում և նրան ենթակա մարզատներում, ինչպես նաև Օսմանյան պետության որոշ մարզատներում ներմուծվող սուրճից,— որոշ ապրանքների նման,—նախապես սահմանված մաքսային հարկը առնելուց հետո, մի առանձին վայրում ամեն մի օկկայից «սուրճի ներմուծության» անունով հինգական փարա ևս առնել, վերոհիշյալ հարկը գանձելու և հավաքելու համար առանձին էմին և քարտուղար նշանակել. քյաֆիր վաճառականներից իրենց երկրներն ուղարկած սուրճից բացի, մի շարք իսլամական քաղաքներում բերած սուրճից վերևը հիշված կարգով տուրք առնել։

(«Թարիխի Ռաշիդ», հատ. II, էջ 425—426)։

1114 թվականի (1702 թ.) դեպքերից.

Վրաստանի արշավանքի առաջանալը և իսլամական պինվորների նշանակումը

Վրաստանի երկրի բնակիչներից Դադիանի, Գուրիլի և Աբաղայի ավազակները մի քանի տարուց ի վեր իրենց հարկերը վճարել հրաժարվելուց բացի, իսլամական որոշ սահմանների վրա հարձակումներ էին կատարում և բռնություններ դործ դնում։ Երբ այդ մասին տեղեկություն ստացվեց, էրզրումի էյալեթը շնորհվեց նախապես Բաբա-Դադի կողմերում նշանակված վեզիր Քեոսեջ-Խալիլ փաշային, որը միաժամանակ Վրաստանի վրա ուղարկվելու պատրաստվող իսլամական բանակի սերասքեր նշանակվեց...

Այդ բանակի համար նշանակվում են բազմաթիվ էյալեթների և սանջակների բազմատեսակ պինվորական մասերը, դրանց թվում նաև Վրաստանի Թուրքական պինվորական մասերը։

(«Թարիխի Ռաշիդ», հատ. II, էջ 580—581)

Օսմանյան պետության մեջ տեղական արտադրությունը զարգացնելու և արտահանման ներմուծումը կրճատելու նպատակով, միջոցներ են ձեռք առնվում Բրուսայում մանածագործություն հիմնելու ուղղությամբ։ Այդ տեսակետից ուշադրության արժանի է Ռաշիդի հետագա հաղվածը։

---

* *Սաղ ակչե — ողջ դրամ, ոսկյա կամ արծաթյա փող։*

Ասվի՝ (դրապ) և գործվածքների սկիզբը օսմանյան երկրում

Նորին Վսեմություն պետության ղեկավարը Սելանիկից ասվի գործող հրեաներին էմիրնե կանչելով, նրանց հայտնեց՝ «Քրիստոնյա ազգություններն ասվի գործելու համար անհրաժեշտ նյութերը օսմանյան երկրից են գնում, մինչդեռ մեր երկրում, ասվիի արտադրություն գոյություն չունի, որը կարելի է բացատրել միայն անհոգությամբ։ Եթե դուք կարողանաք ասվեգործությունը [մեր երկրում] կազմակերպել, ձեր վարպետներին սպասածից ավելի նվերներ ու պարգևներ կտրվեն։ Սրանից հետո օտար երկրներից ասվի չգնելու համար անհրաժեշտ միջոցներ պիտի ձեռք առնվեն»։ Ասվեգործություն սկսելու համար, Բրուսայից էլ մետաքս ու կերպաս գործողներ հրավիրվեցին, նրանց էլ հայտնեցին, որ մինչև հիմա օտար երկրներից ստացված զանազան տեսակի գործվածքները, սրանից հետո Բրուսայում պետք է գործել։ Այս ուղղությամբ աշխատելու համար նրանց ցանկության համաձայն հրամաններ տրվեցին և կարգեր հաստատվեցին։

(«Թարիխի Ռաշիդ», հատ. II, էջ 587—588)։

1115 թվականի (1703) դեպքերից.

Վրաստանի արշավանքից վերադառնալուց հետո էմիրների Ռիզեում հանգստանալու մասին

Սրանից առաջ Վրաստանի վրա արշավանք սկսելու համար նշանակված բեյերը, իրենց ծառայության գործում սպասված աստիճանի հաջողություն չունենալով և ձմեռվա վրա հասնելու պատճառով, փոթորիկներից վախենալով, իրենց Ջրլկաթանները բերին Ռիզեի նավահանգիստը և մինչև գարուն այդ նավահանգստում հանգստանալու և այդտեղ բնակվելու մասին տեղեկություն տվին։

(«Թարիխի Ռաշիդ», հատ. III, էջ 92)։

Վրաստանի արշավանքի առաջանալը

Երբ Վսեմաշուք փադիշահին հայտնվեց և ղեկուցվեց, որ Վրաստանի կողմերում Աչըք-բաշի, Դադիանի և Գուրիլի վիլայեթներում բնակիչներից որոշ ավազակներ ապստամբության դրոշ են բարձրացրել, հիշյալ ամսի 12-րդ օրը, Տրապիզոնի վալիի և այդ կողմերի մյուս վալիների վրա սերասքեր նշանակված Խալիլ փա-

շային ուղղված բարձր ֆերմանով հրամայվեց, որ ապստամբների ձևռքում եղած բերդերը գրավելուց հետո ավերվեն և կործանվեն, Բաղդադջիկ և Բաթում կոչված վայրերում ըստ կարիքի մի քանի բերդեր կառուցվեն և ամեն մեկում բավականաչափ բերդապահներ նշանակվեն և բնակեցվեն։

(«Թարիխի Ռաշիդ», հատ. III, էջ 130—131)։

1117 թվականին (1705) Սուլթան Ահմեդ III-ի գահակալությունը շնորհավորելու համար պարսկական շահի կողմից նորից հատուկ պատգամավորություն է գալիս Ստամբուլ՝ Նախիջևանի իշխան Մյուրթազա-Կուլի խանի գլխավորությամբ։ Նույն հանդիսավոր և շքեղ ընդունելությունը կրկնվում է, միայն այս անգամ պատմագիրը թանկարժեք և մեծագումար նվերների մասին չի խոսում։

Եվրոպայից օսմանյան երկրի միջոցով Իրանի հետ կատարված տրանզիտային առևտրական հարաբերությունների մասին պատմագիր Ռաշիդը V հատորի, 1131 թ. (1718) դեպքերի շարքում, տալիս է հետևյալ տեղեկությունը։

Աջեմի շահի մոտ պատգամավոր է ուղարկվում

Սրանից առաջ, թե կռվի և պատերազմի, թե խաղաղության և հաշտության ժամանակ, առևտրական կարգով երթևեկող պարսիկ վաճառականները Բելգրադի վրայով անցնելու արտոնություն և իրավունք չէին վայելում։ Այդ պատճառով, նրանք ստիպված լինելով այլ հեռավոր վայրերով երթևեկել, շատ մեծ ծախքերի և բազմաթիվ դժվարությունների էին ենթարկվում։ Բացի այդ, ճանապարհին ոչնչանում էին ապրանքները, մարդկային կորուստներ տալիս և վաստակ ձեռք բերելու փոխարեն վնասներ էին կրում։ Այդ պատճառով, շատերը [վաճառականները], այդ աստիճան մեծ վտանգների չէին ուզում ենթարկվել, որի հետևանքով պարսիկ վաճառականները շատ հազվադյուտ էին երթևեկում դեպի նեմեցների երկիրը [Ավստրիա]. հետևաբար, երկիրը զրկվում էր վաճառականների կանոնավոր երթևեկությունից, ստացված օգուտներից և պարսկական ապրանքների մեծ սուլ [կարիք] էր զգացվում։ Նախորդ տարում, Փռժարոֆչա* [Փաստարոֆչա] կոչված վայրում տեղի ունեցող հաշտության պայմանների վերաբերյալ բանակցության ժամանակ նույնիսկ առաջարկված էր վերոհիշյալ հոդվածը։ Աջեմի շահի, նեմեցների կայսրի [չասար] և Օսմանյան պետության միջև գոյություն ունեցող վեճերն ու թշնամությունը վերանալուց հետո,

---

* Փաստարոֆչայի հաշտության պայմանագիրը կնքվել է Թուրքիայի և Ավստրիայի միջև 1130 թ. (1717)։

նկատի առնելով, որ Աջեմի վաճառականների՝ դեպի նեմեցների երկիրը գնալու ամենակարճ, ապահով և հարմար ճանապարհը Բելգրադով անցնող ճանապարհն է և Օսմանյան պետության համար այդ հանգամանքը ոչ մի անհարմարություն չի ներկայացնում, ինչպես նաև այն, որ երթևեկող վաճառականների ապրանքների վրա դրվող մաքսային տուրքերից Օսմանյան պետությունը մեծ եկամուտ և օգուտ ձեռք կբերի, և որ այդ իրավունքի տրվելը ոչ մի կերպ չի կարող անպատեհություններ առաջացնել, այս կերպով հաշտության պայմանագիրը բարենպատակ կերպով վերջացել էր։ Հետագայում վերոհիշյալ հոդվածը կյանքում իրականացնելու և դրա հետ կապված այլ պայմանները ստուգելու նպատակով Իրանի երկրից [կառավարությունից], հարկերի այժմյան հաշվապետը՝ Դերի էֆենդին պատգամավոր նշանակվեց ու վերոհիշյալ հոդվածի մասին հատուկ փաղիշահական գրություն հանձնվեց նրան, ինչպես նաև բերանացի հանձնարարվեց, որ այդ մասին տեղեկություններ ձեռք բերի։

(«Թարիխի Ռաշիդ», հատ. V, էջ 163—164)։

1134 թ. (1721) Դերի-Մուհամմեդ էֆենդին Իրանից վերադառնում է Սրտամբուլ և Իրանի շահի հետ իր ունեցած բանակցությունների մասին խիստ ընդարձակ գրավոր զեկուցում է ներկայացնում Սուլթանին։ Այդ «զեկուցումը», որը Ռաշիդի պատմության մեջ բռնում է մոտ 30 էջ (արաբական տառերով), զեկուցումից ավելի, խիստ մանրամասն օրագրություն և նկարագրություն է, որի մեջ պատգամավոր Մուհամմեդ—Դերի էֆենդին ավելորդ մանրամասնություններով նկարագրում է Իրանում իր ճանապարհորդությունը, Իրանի վեզիրների և շահի ընդունելությունները, իրենց բոլոր խոսակցությունները, խնջույքները և այլն։

Այդ զեկուցումից մենք բաղվածաբար կտանք մի քանի կետեր, որոնք որոշ նշանակություն ունեն Թուրքիայի և Պարսկաստանի այդ շրջանի քաղաքական և տնտեսական հարաբերությունների պարզաբանման և բնորոշման տեսակետից։

Երբ Դերի էֆենդին տեսակցություն է ունենում Իրանի Մեծ-վեզիր Իթիմատուլ-Դևլեի հետ, այս վերջինը հատկացնում է, թե Երևանի խանի տված տեղեկություններից պարզվում է, որ թուրքերը պատրաստվում են Իրանի վրա հարձակվելու և սահմանամերձ վայրերը գրավելու... Դերի էֆենդին պատասխանում է՝ «...Դրախտաբնակ հանգուցյալ Ղազի Սուլթան Մուրադ խանի կայսերական գահակալած 7 փադիշահներից ոչ մեկը հաշտության և խաղաղության հակառակ՝ ձեզ վրա հարձակվելու ոչ մի վատ դիտավորություն չի ունեցել։ Այնպիսի իմաստուն և կատարյալ, կրոնասեր, առաքինի և հեռատես Սուլթան, ինչպիսին է Սուլթան Ահմեդը, որն իր կայսերական բնավորության բերումով ձգտում է ապահովել երկու կողմերի հանգստությունն ու ապագա բնակության, խնդիրների բարօրությունը, ռայաներ և աշխարհի ապահովն փադիշահը կարո՞ղ է մի այդպիսի ստոր քայլ կատարել...»։

Պատգամավորությունը շահի կողմից ընդունվում է միայն 16-րդ օրը, պարսկական արքունիքին հատուկ շուքով և արարողություններով։ Պատգամավոր Դերբի էֆենդին սուլթանի գրությունը մատուցում է շահին։ Մի շաբաթ հետո նորից Մեծ-վեզիրի հետ տեսակցություն է տեղի ունենում, երբ Դերբի էֆենդին ներկայացնում է օսմանյան Մեծ վեզիրի նամակը։ Երկրորդ անգամ շահը պատգամավորին ընդունելով հայտնում է, որ սուլթանի կողմից ուղարկված գրության բովանդակության համաձայն նա ֆերմաններ է տվել իր երկրին։

Պատգամավոր Դերբի էֆենդին խիստ մեծ մանրամասնություններով տալիս է Իրանի շահի հարցերը Օսմանյան սուլթանի գոքծերի, զբաղումների և առհասարակ նրա ապրելակերպի մասին։ Շահի այդ հարցերին պատգամավորը պատասխանում է ներկայացնելով սուլթանին՝ իբրև «պետական մեծ գնահատար», «գիտության և արվեստի սիրահար», «օրինաստեր և կրոնատեր» մի անձնավորության։

Մի ուրիշ անգամ, Դերբի էֆենդին նորից է ընդունվում շահի կողմից։ Այդ ընդունելության ժամանակ, Պարսկաստանի խաներից մի քանիսին էլ մեծ հանդիսավորությամբ խալաթներ են հագցնում և աստիճաններ տալիս։ «Արևելքի և հյուսիսի միջև գտնվող Դաղստանի մուսուլման և բյաֆիր ժողովուրդների 94 ցեղերից ամեն տարի, ամեն ցեղից մի պատգամավոր է գալիս, նրանցից ամեն մեկը երկու հատ գառան մորթի և երկու հատ յուֆտա (սաֆիոն) է բերում և ստանում իրենց հատկացված ռոճիկը (սալյանե) ու գնում»։

«Այդ ընդունելությունը, ասում է Դերբի էֆենդին, զուգադիպում է իր ընդունելության օրվան։ «Այդ 94 տարօրինակ մարդիկ իրենց արտակարգ հագուստներով և նվերներով (փեշքեշ), ծիծաղելի և տարօրինակ շարժ ու ձևով եկան և այնպես, ինչպես բյաֆիրները կուռքերին են երկրպագում, շահի առաջ երկրպագեցին և թողնելով իրենց նվերները՝ գնացին։ Մի երկու օգրեկ և մոսկով (ռուս) պատգամավորներ էլ կային։ Սրանք էլ այդ ընդունելությանը մասնակցեցին, բայց առանց շահին մուտենալու, հեռվից գետինը համբուրեցին և իրենց բղթերը ստանալով գնացին։ Ճաշից հետո շահն ինձ իր մոտ հրավիրեց և ասաց «Ք ո տեսածները մեր ռայաներից են, շատ աղքատ երկրի մեջ լինելով, մեր պապերից Շահ-Աբբասը նրանց վրա գթալով, տարեկան որոշ գումար ռոճիկ է հատկացրել։ Նրանք ամեն տարի գալով հայտնում են իրենց հպատակությունը, մենք տալիս ենք հատկացված սալյանեն ու ծանոթանում նրանց վիճակի հետ։ Հետո ես ստույգ տեղեկություն ստացա, որ սրանք թաթարների նման մի ժողովուրդ են, մինչև Շահ-Աբբասի ժամանակ, թաթարների նման, մշտապես արշավանքներ էին կազմակերպում և կողոպտում երկիրը, թալանում շրջակայքում եղած գյուղերն ու ավանները, մեծ քանակությամբ տղրանք ու գերի տանում։ Շահ-Աբբասի գահակալության ժամանակ, բարեկամության անվան տակ, սրանք հպատակված են և ամեն մի ցեղին [աշիրեթ] որոշ գումար ռոճիկ է հատկացված։ Նրանք գալիս են շահի արքունական Դիվանում խալաթներ հագնում։ Նրանք խոստումներ են տվել Երկրի ու ռայաների նկատմամբ ոչ մի կերպ բռնություններ չկատարել...»։

Դերբի էֆենդիի այլ նկարագրություններից ուշադրության արժանի է Պարսկաստանի մասին արված տեղեկությունները։ «...Սրանց երկիրը, որը 60 կոնաք երկարություն և 50 կոնաք լայնություն ունի, խիստ բարեշեն և հարուստ է. ամեն մի գյուղ ունի 300, 500 և 1000 տուն։ Նրանք ունեն բաղնիքներ և ամեն մի երկու-երեք գյուղից հետո շուկա և բազար կա, իսկ երկու-երեք ավանից և գյուղաքաղաքից (կասաբա) հետո՝ մի մեծ քաղաք։ Թե բաղաքներում, թե գյուղաքաղաք-

ներում ու գյուղերում մեծ թվով վաճառականներ կան։ Սակայն երկրագործ ռանչպարները քիչ են, այդ պատճառով էլ ցորենը, գարին և առհասարակ պտղամթերքները չեն բավականացնում և մեր երկրի համեմատությամբ երկու անգամ թանկ են վաճառվում։ Սակայն հագուստեղենը համեմատաբար ավելի էժան է։ Ժողովրդի մեծ մասը կարծրության աչք է, պրպատները քիչ են։ Նրանց հագած հագուստները երկրի ուղեկան պրպատներից են, այնպես որ հագուստեղենի մասին նրանք այլ երկրների դիմելու կարիք չունեն։ Բրդեղենը (շալ) առատ է, ինչպես նաև ֆրանսիական կոշտ կերպասը, բայց այդպիսիք գործածողները հազվագյուտ են։ Տան կահավորանքը նույնպես ամբողջովին իրենց արտադրություններից է։ Ամբողջ երկրում միայն երեք բերդ կա, մեկը Հնդկաստանի սահմանի վրա՝ Գանգահարը՝ Միր-Ալիխի հայրենիքը, մյուսը Աժտարխանի կողմն է, իսկ երրորդը՝ Էրզրումի մոտ, Երևանի բերդն է։ Մնացած վիլայեթները, Սկյուդարի նման, բոլորը բաց են։ Բերդերից բացի, սովորական քաղաքներում և գյուղաքաղաքներում Բրնդանոթները խիստ հազվագյուտ են և առհասարակ թնդանոթի և նման ռազմական զենքերին ուշադրություն չեն նվիրում։ Սակայն ազեզաձգության և հրացանաձգության արհեստում վարպետ են և նրանց զինվորներն այդ երկուսին էլ մեծ սեր ունեն։ Վերոհիշյալ Միր-Ալիխը 1118 թ., դուրս գալով Գանգահարի շրջանից, Գյուրջի-Աբդուլլահ խանի ձեռքից Գանգահարը մի կերպ խլելով ու գրավելով, բաղաք մտավ և այնտեղ գահակալեց ու մի քանի կոնաք տարածության վրա քաղաքի շրջակայքը գրավեց և այս կերպով շահի դեմ ապստամբեց։ Միր-Ալիխին պատժելու և նրա նվաճումները ոչնչացնելու համար շահի կողմից ուղարկված կըզըլբաշական բանակը պարսության մատնվեց և ջարդվեց։ Վեց տարվա ընթացքում Միր-Ալիխը այս կերպով իշխանություն վարեց, իր անունով փող կտրեց և խութբեհ կարդալ տվեց ...վեց տարի հետո Միր-Ալիխը մահացավ և նրան հաջորդեց իր եղբայրը, որը սակայն պետական անձնավորություն չլինելով, գահազուրկ եղավ և վեց ամիս հետո Միր-Ալիխի որդին Միր-Մուհամմեդը իշխանության գլուխն անցավ և մինչև հիմա իր հոր նման կըզըլբաշների հետ ամեն տարի կռվի և պատերազմի մեջ լինելով, Գանգահարից մոտ 20 կոնաք դեպի այս կողմը հանում և Մեշհեդի և Քերմանի կողմերը արշավանքներ է կատարում։ Սրանք իսկական ազվանական ցեղից են, բայց աջեմները նրանց «բուրուջ» են անվանում։ Իսլամական կրոնին են պատկանում, ընդհանրապես նամազը հավատական կերպով են կատարում։ Նրանց զինվորների ձիերը և ջորիները քիչ են, 2—3 մարդ մի ուղտի վրա են հեծնում, ոչխարի աղիքները ջրով լեցնում, իբրև գոտի մեջքերից կապում, ծարավելիս աղիքի ծայրը բաց անում, ջուրը խմում են և հետո նորից մեջքերից կապում ...Սրանք օղբեկ խաների հետ բարեկամություն են ստեղծել, որոնք նմանապես կըզըլբաշների վրա արշավանքներ կազմակերպելով, գրավել են մի շարք քաղաքներ ...Մեր դուրս գալու ժամանակ, Մեշհեդի բնակչությունից դիմում էր առացված, որով նրանք հայտնում էին՝ «եթե մեզ չպաշտպանեք, վիլայեթը ներանց կհանձնենք»։ Արևելքի և հյուսիսի միջև գտնվող Դաղստանի և Դերբենդի շրջանները, որտեղ լեզգի ցեղերն են ապրում և որոնք իսլամական կրոնին են պատկանում, մոտ են Աջեմի Շիրվան, Շամախի, Գենջե, Ղարաբաղ շրջաններին։ Այդ վայրերում ներկայումս փողը և խութբեն Ալ-Օսմանի փադիշահների անունով է։ Այդ շրջաններում ապրում են մի շարք աշիրեթներ և ցեղեր, նրանց բաշբուղները, Իբրահիմ Սուլթանը և Հաջի-Դավուդ բեյը, վերջին ժամանակները, մի քանի տարի է, որ հարձակվում են կըզըլբաշների գյուղերին,

քաղաքների վրա և կողոպտում, ավերում։ Այս նվիրական տարում գրավեցին սահմանի վրա գտնվող Շամախի քաղաքը, որը Իրանի պարծանքն էր, արշավեցին Դենջեի վրա ...Աջեմների երկրում այնքան դավանանքին պատկանող իսլամների թիվը խիստ մեծ է, բոլոր քաղաքներում և գյուղաքաղաքներում նրանք մեծ թիվ են կազմում, սակայն վախենալով չեն ցույց տալիս... Հետո Դերի էֆենդին նկարագրում է այն տաք և արտառուշ բնողունելությունը, որը ցույց են ավել այդ շրջանների այնքինները օսմանյան պատգամավորությանը։

Իր զեկուցման վերջում Դերի էֆենդին գրում է՝ «...Վերջապես ներկայումս Աջեմի երկրի գրեթե մեկ երրորդը մուսուլմաններ են, մասնավորապես Երիվանի, Շամախիի, Գենջեի և Ղարաբաղի շրջանները, բոլորը այնքիներ են, հազիվ մեկ հինգերորդը՝ կըզըլբաշներ։ Կըզըլբաշների երկիրը ընդհանրապես բարեշեն է և լավ կառուցված, ավերակները շատ քիչ են։ Ես գաղտնի և բացահայտ կերպով նրանց վիճակը ուսումնասիրեցի,— երկիրը շատ բարեշեն է, սակայն պետական զեկավարներ չկան, կարծես թե պետական զեկավարների սով է այդ երկրում։ Այդ կողմից նրանց օրենքներն ու կարգերը խախտված են, շրջապատից նրանց վրա հարձակվում են, պաշտպանվելու կարողություն չունեն, իրենց հավաքած գինվորները փախչում ու ցրվում են։ Սակայն եթե պետության զեկավարներին խոսեցնես, մեծախոսությունից, չեն հրաժարվում, ասում են Միր-Ալիի որդին մեր ոայաներից է, սակայն մեր շահի հետ որոշ վեճեր ունի, անտարակույս շուտով շահի առաջ գլուխ կխոնարհի, իսկ շահը նրա մեղքերին թողություն կտա... Բայց իրականության մեջ այդպես չէ, նա [Միր-Ալիի որդին] Աջեմների ուժեղ թշնամին է։ Արշավանքի գնացող սերասքերներն անդամ հուսահատած և անտարբեր կերպով են գնում, նրանց երեսը բնավ չի ժպտում, բոլորը համակարծիք են, որ Շեյխի որդու, այսինքն շահի բախտը շրջվել և իշխանությունը վերջացել է։ Այս մասին նրանք բացահայտ կերպով խոսում են...»։

(«Թարիխի Ռաշիդ», հատ. V, էջ 372—398)։

Պատմագիր Ռաշիդը նույնպիսի ավելորդ մանրամասնությամբ տալիս է Աջեմի շահի կողմից ուղարկված պատգամավոր Մյուրթեզա-Կուլի-Խանի Ստամբուլ գալը, սուլթանի կողմից մի քանի անգամ խիստ հանդիսավոր ընդունելությունը, խնջույքները, խոսակցությունը և այլն։ Կարծես Պարսկաստանի և Թուրքիայի արքունիքները մրցում էին ճոխության, փառքի և շքեղությունների ցուցադրության գործում։

Պատմագիր Ռաշիդն անձամբ մասնակցել և ներկա է գտնվել այդ պալատական արարողություններին և այդ պատճառով էլ դրանք նկարագրում է ամենամանրամասն կերպով։

Սուլթան Ահմեդը շահին ուղարկած իր նամակում նորից կրկնում է առևտրական կապերի և կրոնական-դավանական մի քանի խնդիրների վերաբերյալ Թուրքիայի համաձայնությունը և բարենպաստ վերաբերմունքը։ Պատմագիրը հայտնում է, որ Աջեմի բազմաթիվ թանկարժեք նվերներից բացի, դեսպանին առանձնապես 36 քիսե, նրա թեթևուղային 6 քիսե, այսինքն՝ ընդամենը 42 քիսե ակչե է արվում իբրև «ճանապարհածախս»։

(«Թարիխի Ռաշիդ», հատ. V, էջ 399—423)։

IV

ԻՍՄԱՅԻԼ-ԱՍԼՄ ԷՖԵՆԴԻ ՉԵԼԵԲԻ-ՉԱԴԵ

تاریخ چلبی زاده — «ԹԱՐԻԽԻ ՉԵԼԵԲԻ-ՉԱԴԵ»

Ռաշիդի պատմության («Թարիխի Ռաշիդ») 6-րդ հատորը գրել է պատմագիր Չելեբի-Զադե էֆենդին, որի պատմությունը կոչվում է «Թարիխի Չելեբի-Զադե»:

Իր առաջաբանում պատմագիրը գրում է՝ «...Նվաստիս, Քյուչուք Չելեբեի-Զադե անունով հայտնի Իսմայել Ասըմին,... 1135 թ. Ռամազան ամսի 28-րդ օրը վերոհիշյալ պաշտոնում [պատմագրության] ծառայելու, և Շահնամե-գրող [Ռաշիդի] քաղցրախոս գրչի վերջացրած տեղից պատմություն գրելու մասին Ֆերման շնորհված լինելով, 1134 թ. Զիլգադդե ամսի անցքերից գրել սկսեցի»[*]:

Այսպես, ուրեմն, պատմագիրը իր պատմությունը սկսում է 1134 թ. և հասցնում մինչև 1141 թ., այսինքն՝ 7 տարվա անցքեր է տալիս:

Չելեբի-Ասըմը վարել է նաև Շեյխ-ուլ-Իսլամի պաշտոնը:
Մեռել է 1173 թ. (1759):

1135 թվականի (1722) դեպքերից.

Թիֆլիս և Գորի բերդերի գրավումը

Ինչպես նախապես հայտնված էր, Թիֆլիսի գրավման և նվաճման համար նշանակված սերասքեր՝ էրզրումի վալին, վեզիր Սիլահդար-Իբրահիմ փաշան, էրզրումից շարժվելով բնակություն էր հաստատել Կարսի ձմեռանոցում, գրավոր կերպով առաջարկել և դրդել

---

[*] «Թարիխ Չելեբի-Զադե», էջ 7:

 էր Թիֆլիսի խանին՝ Վախթանին [Վախթանգին] հպատակություն ցույց տալու Օսմանյան պետության, միաժամանակ ցույց տվել ապստամբության ծայր աստիճան վտանգավորությունն ու սոսկալի հետևանքները։ Սակայն վերոհիշյալը [Վախթանգը] իր անկապ պատասխան-նամակներում, երբեմն հպատակության և հնազանդության հակամետություն էր ցույց տալիս, երբեմն էլ որոշ պայմաններ էր առաջարկում։ Նախապես Օսմանյան պետության կողմից Շիրվանի խանությունը նվեր ստացած Հաջի-Դովուդ խանին, կայսերական գրություն ու խալաթ ուղարկվեց և նշանակվեց կայսերական կառավարության կողմից։ Ամեուվա ցրտերի պատճառով վերոհիշյալ վեզիրի [Սիլահդար Իբրահիմ փաշայի] հետ միասին Կարսում բնակություն էր հաստատել արքունական Դերգահի Կափուջի-Բաշիներից Միր-Ալեմ-Դերվիշ-Մուհամմեդ աղան։ Սրանք շարժվեցին դեպի Թիֆլիս։ Այդ ժամանակ Մահմուդ-խան-Աֆղանը՝ հարձակվելով Իսֆահանի վրա, Շահ-Հյուսեինին իր ընտանիքով և զավակներով գերել էր և եկել դեպի Կազվին։ Ադրբեջանի երկրում շահության ձգտող գահաժառանգ Թահմասբի կողմից բավական երկար ժամանակից ի վեր, օջաքլըքի կարգով, Կախեթի վիլայեթին տիրացած Մուհամմեդ-Կուլի խանին հանձնարարվել էր Թիֆլիսը գրավել և նվաճել։ Երկու կողմի զինվորները իրար հանդիպեցին, աջեմի զինվորները պարտվեցին, Մուհամմեդ-Կուլի խանը պատերազմի դաշտից փախավ և իր կյանքը փրկեց։ Միայն իր փողի օգնությամբ, վեջար (?) և Թալալի ցեղերից իրեն հպատակ չեզգի ժողովրդից օգնություն ստանալով, նրանց հետ միասին բազմաթիվ զինվորներով անսպասելի կերպով Թիֆլիսի վրա հարձակվեց և գրավեց։ Վախթանգը ստիպված եղավ արագավազ ձի հեծնել և փախչել իր կառավարության սահմաններում գտնվող Գորիի բերդը։ Նա արթուն և ուշադիր հետևում էր դեպքերին և իր նպատակին հասնելու համար ամեն ջանք գործ էր դնում։ Սակայն Վախթանգի հույսերը խորտակվեցին և նրա նախաձեռնությունները անհետևանք մնացին։ Թիֆլիսն անցավ Աջեմների ձեռքը և Մուհամմեդ-Կուլի խանը ապահովեց իր իշխանության անկախությունը։ Վախթանգը ստիպված եղավ վերոհիշյալ սերասքերին հպատակություն հայտնել և Օսմանյան պետության մոտ ապաստան փնտրել։ Երբ սերասքերը Կարսից շարժվելով, Ջլդրի էյալեթին ենթակա Ախալքալաքի սանջակի գյուղերից Փոքս գյուղում մի քանի օր բնակություն էր հաստատել, վերոհիշյալի [Վախթանգի] եղբայրը Իսա-խանը եկավ, հպատակություն հայտնեց և օգնություն խնդրեց։ Իսկ երբ այդ վայ-

164—9

րից շարժվեցին՝ որպին՝ Շահնեվազը եկավ ու նմանապես հպատակություն ցույց տվեց և իր հոր [Վախթանգի] կողմից խնդրեց, որ իր իշխանության տակ գտնվող և Օսմանյան պետության նվիրելու մտադրված Գորիի բերդը գրավելու համար որոշ քանակությամբ ուժեր ուղարկվեն։ Վերոհիշյալ սերասքերն իր աղաներից Ալի-Աղան, մի զրոշակ «սերդէն կեչտի»[3] զինվորներով ուղարկեց դեպի վերոհիշյալ բերդը (Գորի)։ Ճանապարհին Վախթանգից գրություն ստացվեց, որով նա հայտնում էր՝ «Մուհամմեդ-Կուլի խանը՝ տեղեկանալով, որ ես Օսմանյան պետությանը հնազանդություն և հպատակություն եմ հայտնել և Գորիի բերդն անպայման պիտի հանձնեմ, հիշյալ բերդը իսլամական տիրապետության տակն ընկնելուց առաջ նվաճելու և գրավելու նպատակով, իր եղբորը բավականաչափ զինվորներով դեպի այդ կողմն է ուղարկել։ Բերդի պաշտպանությունը թույլ է, եթե ձեզնից առաջ նրանք [Մուհամմեդ-Կուլի խանի զինվորները] հասնեն, անտարակույս բերդը կգրավեն»։

Վերոհիշյալները [Սերասքերի կողմից ուղարկված զորքերը] իրենց ձիերի սանձը քաշելով, խիստ շտապ կերպով, կես գիշերին հասան բերդի պարիսպներին, նրանց հետ եկած Վախթանգի ներկայացուցիչը դրության մասին բացատրություն տվեց և պահապանները բերդի դռները բաց արին և Աստուծո կամքով հիշյալ բերդը այս կերպով սուլթանական երկրին միացվեց։ Դրանից հետո վերոհիշյալ Դերվիշ-Մուհամմեդ-Աղան գնալով դեպի Թիֆլիս, Մուհամմեդ-Կուլի-խանի հետ մի քանի անգամ տեսակցություն ունեցավ, իսկ Մուհարրեմ* ամսին նրան [խանին] համոզեց և դրդեց, որ նվիրական իսլամական կրոնի պաշտպանին և ամբողջ աշխարհի վեհափառ խալիֆային ի սրտե հավատարիմ և հպատակ լինի։

Որովհետև Թիֆլիսի իշխողը՝ Վախթանգը նախապես անգիտակցաբար և անհեռատես կերպով Մոսկովի ցարին հպատակություն էր հայտնել և իրեն քրիստոնեության կողմնակից ցույց տվել, անհրաժեշտ եղավ Ստամբուլում աշխարհի ապավեն փադիշահի կողմից հաղթական զինվորներ նշանակել և ուղարկել Թիֆլիսն ազատելու և գրավելու համար։ Վախթանգը հատուկ գրությամբ դիմելով սերդարին, հայտնեց, որ նա իր այդ անմիտ գործի համար զղջացել է և Օսմանյան պետության հպատակություն ցույց տալով որոշել է

---

* Մուհարրեմ ամիսը, իսլամական նվիրական ամիսներից լինելով, բացառիկ ուժգնությամբ, այդ ամսվա ընթացքում պատերազմական գործողություններին և թշնամություններին զազար է տրվում։

Թիֆլիսի բերդը հանձնել փադիշահի ներկայացուցչին (փոխանորդին)։ Բացի այդ, նա հայտնեց, որ վերոհիշյալ երկիրը [Թիֆլիսը], իրապես աշխարհի ապավեն վեհաշուք փադիշահի սեփական և բարեշեն երկրներից է եղել, որ ռաֆըզիների չարագործ պետությունը, բարձրյալն Աստուծո կամքով, մոտ է կործանման և անհետացման, որ վերոհիշյալ բերդն իզուր պաշտպանելու մտադրություն և նպատակ չունի։ Նրանի հայտնած մտքերը և առաջադրած սկզբունքները պարզ կերպով արտահայտվում էին։ Նա որոշել էր հիշյալ Աղայի անկեղծ խոսքերով և ցուցմունքներով շարժվել, որպեսզի կարողանա ապահովություն և երջանկություն ձեռք բերել։ Այդ նպատակով նա վերոհիշյալ Աղայի միջնորդությամբ շտապեց Թիֆլիսի բերդի բանալիները հանձնել։ Հրամանատարը (սիփահալար) դեռ Թիֆլիսից մեկ և կես օրվան հեռու գտնված ժամանակ, վախթանգը նրան դիմավորելու գնաց և հայտնեց, որ սերասքերն առանց կռվի և պատերազմի կարող է տիրանալ այդ երկրին (Թիֆլիսին)։ Շեվվալ ամսի 6-րդ՝ ուրբաթ օրը, վերոհիշյալ քաղաքի գրավման ավետիսը (մյուժդեն) և բանալիները կայսրության դերգահը հասան։ Այսպիսով մի մեծ երկրի, առանց պատերազմի և սպանության, աշխարհակալ փադիշահի մեծ բախտավորության և Նորին Վսեմություն սադրազամի խելացի և ճիշտ նախապատրաստության շնորհիվ Սուլթանական երկրին միանալու դեպքը, բոլոր իսլամներին մեծ ուրախություն և գոհունակություն պատճառեց։ Հաջորդ շաբաթ օրը Նորին Վսեմություն աշխարհակալ փադիշահն, արքայական հանդիսավորությամբ և մեծ շուքով էդիրնեի դռնով բաղաքից անցավ և վեզիրական խնջույքի վայրը՝ Սեյիդ—Աբատը իր արքայական շուքով և լույսով բախտավոր և նվիրական դարձրեց։ Այդ արտապրավ վայրում Բարձր Վեզիրը և Շեյխ-ուլ-իսլամ Աբդուլահ էֆենդին և ծովակալ վեզիր-Մուստաֆա փաշան շնորհավորեցին այդ մեծ նվաճումն ու հաղթանակը։ Այս հսկա և փառավոր հաղթանակը բոլորին՝ ավագանիին և ժողովրդին («ավամ») ծանուցելու, ինչպես նաև Սեյիդ-Աբադում կառուցված փառավոր պալատը մոմերով և կանթեղներով լուսավորելու մասին ֆերման շնորհվեց... Այդ գիշեր փայլուն և լուսավոր աստղերի պես փայլփլող անթիվ մոմերի և կանթեղների լուսավորությունը, դեպի երկինք արձակված լուսատարած փամփուշտների (ֆիշենգ) սրտառուչ տեսարանը, դիտողների սիրտը հրճվանքով և գոհունակությամբ լցրեց...

(«Թարիխի Ջևլերի-Ջադե», հատ. VI, էջ 45—49)։

Վաղուց ի վեր Աջեմի երկրի վրա իշխող Շահ-Հյուսեին-Սեֆեվիի սոսկալի բռնությունների և դաժանության, ինչպես նաև ռաֆըզիական անհավատության պատճառով նրա պետության հզորությունն ու բախտավորությունը դեպի անկում էր գնում և ամբողջ Իրանական երկիրը խռովության էր մատնված: Մասնավորապես Գանդահարում անկախության հետամուտ Միր-Ալիսի որդին՝ Մահմուդ-Խան-Աֆղանի հորեղբորորդին Միր-Կասըմը Հերաթ քաղաքը գրավել էր և վերոհիշյալ Մահմուդ-խանը, Շահ-Հյուսեինի կողմից իր վրա կռվի ուղարկված կըզըլբաշ զինվորների մեծ մասը սրից անցկացրել և սրից ազատված ռաֆըզիներին հետապնդելով հասել էր Սպահան և պաշարել էր այդ քաղաքը: Այս պատճառով, շահի ծանր դրության մեջ լինելու մասին էրզրումի վալին՝ Վեզիր-Սիլահդար-Իբրահիմ փաշան տեղեկություն էր ուղարկել Ստամբուլ, միաժամանակ ուղարկել էր նաև Թավրիզի, Ջրանսիացի և Աջեմ վաճառականների այն նամակների պատճենները, որոնցով վերոհիշյալներն էրզրումում և Իզմիրում գտնվող իրենց մարդկանց և շահընկերներին հայտնում էին Սպահանի պաշարումն ու Իրանի ծայր աստիճան խռովության մեջ լինելը: Փադիշահի ներկայությամբ պետության ավագանիի վեզիրների ժողով գումարվեց, խորհրդակցություն տեղի ունեցավ: Նկատի առնվեց, որ Աջեմի շահը օրըստօրե կորցընում է իր ուժը, թուլանում է, եթե նրա մայրաքաղաքը Սպահանը ուրիշների ձեռքն անցնի, նա ուժ և կարողություն չի ունենա թշնամու դեմ կռվելու, որով իր երկրի այլ մասերն էլ կարող են օտարների հարձակմանը ենթարկվել: Օսմանյան փադիշահական երկրին սահմանակից մի երկրի, օտարների տիրապետության տակ ընկնելուց առաջ, գրավումը նպատակահարմար լինելով, միաժամանակ նկատի առնելով, որ Սուլթանական երկրին սահմանակից վայրերում ապրող ռայաների և մուսուլմանների աննպամբերքը և ինչքը, նրանց ընտանիքն ու երեխաները կողոպուտից ու թալանից պաշտպանելը բարենպատակ մի գործ է, և երբ հաստատվեց, որ Մահմուդ-խանը որոշել է տիրանալ Սպահան մայրաքաղաքին, որոշվեց վերոհիշյալ պայմանների բերումով շրջակայքում գտնվող երկրների և քաղաքների գրավմանը ձեռնարկել 1134 թ. Շաբան ամսին, սահմաններում գտնվող վեզիրներից Բաղդատի վալի Հյուսեին փաշային, Բասրայի վալի Հասան-փաշա-Ջադե-Ահմեդ փաշային, Վանի վալի Քեոփրյուլու-Զադե Աբդուլլահ փաշային, էրզրումի վալի, Իբրահիմ

փաշային, Կարսի, Զըլդրի և Շեհրի-Զորի բեյլերբեյիներին անհրաժեշտ գրավոր հրահանգներ և ցուցմունքներ տրվեցին։ Երկար տարիներից ի վեր երջանկաբախտ Բաղդատի էյալեթի վալին, Վեզիր-Հասան փաշան, որը մշտապես հետևում և ծանոթանում էր Աջեմի երկրի դրության հետ, գրել և հայտնել էր, որ Մահմուդ-խանը հաստատ որոշել է Սպահանին տիրանալ, սակայն հայտնի չէ, թե տիրանալուց հետո ի՞նչ վերաբերմունք պիտի ունենա և ինչպե՞ս պիտի շարժվի։ Մինչև չպարզվի, թե նա [Մահմուդ խանը] ինչպիսի վերաբերմունք պիտի ցույց տա, մինչև որ մենք լրիվ կերպով չծանոթանանք նրա բնավորության և ձգտումներին, անհրաժեշտ է ձեռքերը հեռու պահել Աջեմի երկրից։ Հետևաբար այդ մասին տրված որոշումը պետք է հետաձգել և սպասել։ Վերոհիշյալ վեզիրի այդ մասին արտահայտած կարծիքն ու մտքերը համապատասխանում էին Վսեմաշուք փադիշահի և Նորին Մեծության սադրազամի կարծիքին։ Այդ պատճառով վերոհիշյալ ժողովի [դիվանի] որոշումն անհետևանք թողնվեց (փոփոխվեց) և նրա գործադրությունը հետաձգվեց և որոշվեց այսպես. մինչև սուլթանական դերգահից նոր որոշում ու նշանակում տրվելը, Աջեմի երկրի վրա չհարձակվել. այդ մասին վերևը հիշված մեծ վեզիրներին և բեյլերբեյիներին կայսերական ֆերման հաղորդվեց։ Հետո, ավելի ուշ, Բաղդատի վալին, վերոհիշյալ վեզիրը, սուլթանական երջանիկ դերգահին հայտնեց, որ Մահմուդ-խան-Աֆղանը հարձակվելով Սպահանի վրա, Շահ-Հյուսեինին իր ընտանիքի և երեխաների հետ միասին գերել է, ռաֆըզի և տգետ կըզըլբաշների ապիկարությունն ու թուլությունը պարզապես երևում է։ Եթե Աջեմի երկրին և քաղաքներին սահմանակից մեծ վեզիրները Աջեմի երկիրը նվաճելու և գրավելու համար հրաման է նշանակում ստանան, Բարձրյալն Աստուծո օգնությամբ, Իրանյան երկրի մեծ մասը Օսմանյան փադիշահական երկրին միացնելու մասին կասկած անգամ լինել չի կարող։ Նախապես դիմում կատարվեց բոլոր դժվարությունները լուծող նվիրական Մյուֆթի Աբդուլլահ էֆենդիին՝ այսպիսի հարցով,— վերոհիշյալ ցեղը [աջեմները] Օսմանյան պետության հետ հաշտության պայմանագիր ունի, բացի այդ նրանք արտաքուստ իրենց իսլամ են համարում, այդ պայմաններում նրանց դեմ կռվի և պատերազմի ձեռնարկելու համար շարիաթի կողմից թույլտվություն կա՞։ Հայտնվեց, որ նախապես կնքված հաշտությունից կարելի է հրաժարվել, իսլամական ժողովուրդների և նշանավոր իսլամական շեյխերի ընդհանուր ցուցմունքների և կարծիքի հիման վրա վերո-

հիշյալ ցեղի [աջեմների] հավատքը սուտ է, նրանց անհավատ և ուրացող լինելը պարզ և հայտնի է։ Այս մասին տրված երկու նվիրական ֆեթվայով[1] գոյություն ունեցող կասկածները փարատվեցին և վերոհիշյալ վայրենի ցեղի դեմ ըստ արժանվույն պատերազմի թույլտվությունը և որոշումը հաղորդվեց բոլոր խելացի և դատողության տեր մարդկանց։

Նվիրական ֆեթվայի օրինակը

Ռաֆըզիների երկրին տիրապետող ռաֆըզի շահի անունով և արտոնությամբ, ռաֆըզիներից հայտնի մի ժողովուրդ, եթե իսլամական երկրում իսլամական մի այլ ժողովրդի դեմ բացահայտ կերպով կռիվ մղի, հիշյալ շահը, իսլամների իմամը և Սուլթանների Սուլթանը՝ օսմանյան փադիշահի հետ կնքած խաղաղության պայմանագիրը խախտած կլինի՞ թե ոչ։

Պ ա տ ա ս խ ա ն։

Կլինի. մասնավորապես հիշյալ անիծվածի [շահի] ավազանու ոչնչացումն անհրաժեշտ է։ Իսկապես տեղի ունեցող հաշտությունը, Աստուծո շնորհին սպասելու համար, հարմար տեսնված դինադադարի կնքում է. երբ իսլամական ժողովուրդը ուժ և կարողություն ունենա իսլամներին թույլատրվում է նրանց (ռաֆըզիների) նկատմամբ գործադրել ինչ որ անհրաժեշտ է։

(«Թարիխի Զևլեբի-Ջադե», հատ. VI, էջ 61—65)։

Սիլահդար Իբրահիմ փաշայի սերասքերությունից հեռացումը և Աբիֆի-Ահմեդ փաշայի նշանակումը

Ինչպես վերևում նկարագրվեց, երբ աստվածային հաղթանակի բանալին և իսլամական սուլթանի նվաճմանը ենթարկված Թիֆլիսը կայսերական երկրին միացվեց, հիշյալ երկրի բոլոր գործերը կարգի բերելու պարտականությունը հանձնվեց սերասքեր և էրզրումի վալի՝ Վեզիր-Սիլահդար-Իբրահիմ փաշային։ Բարձրյալն Աստուծո կարգադրությամբ և վեհաշուք փադիշահի բախտավորությամբ նվաճված և գրավված այդպիսի մեծ մի երկրում արդարությունը գործադրելու, բռնությունից ու հափշտակություններից խուսափելու, երկրի գործերը վարելու և ռայաների ու ժողովրդի սիրտը գրավելու պարտականությունը, անհրաժեշտորեն ընկնում էր

սիփահասալարի [զորապետ, սերասքեր] պաշտոնը վարողների վրա։ Սակայն վերոհիշյալ վեզիրը, էրզրումի «Սերդեն կեչտի»* աղաներից Ուզուն-Մուստաֆա-Աղա անունով անձնավորության միջնորդությամբ, վախթանգի կողմից իբրև կաշառք տրված մեծաքանակ հարստությամբ շլացած, Թիֆլիսի կառավարությունը օջաքլըքի կարգով շտապել էր տալ վերոհիշյալ վախթանգի Շահնեվազ անունով որդուն (որը դեռ նոր իսլամական կրոնն ընդունելով, Իբրահիմ անունն էր ստացել), պետությանը տարեկան 40 հազար ղուրուշ տուրք տալու պայմանով։ Հիշյալի թելադրանքով Թիֆլիս մտնելու հաջորդ օրը, դեռ զինվորներին չբնակեցրած և կարգի չբերած՝ իրենց կամքով հպատակություն ցույց տված մի քանի հարյուր Աջեմ վաճառականներին քաղաքից արտաքսեց, նվիրական Ռամազանին քաղաքի կենտրոնում մի շարք խայտառակ և ստոր անձինք խեղճերի ընտանիքների և երեխաների վրա հարձակվելով, նրանց ունեցածը թալանեցին և հափշտակեցին, անգամ բազմաթիվ հարուստ վաճառականների հացի փողի կարոտ թողին։ Նա քաղաքի բանալիները հանձնեց Մուհամմեդ-Կուլի խանին, որը քաղաքը գրավեց առանց կռվի։ Նա խոստացել էր, որ Օսմանյան կառավարության կողմից Թիֆլիսի կառավարումը իրեն հանձնվելու դեպքում կաշխատի Գենջեն, Երևանը և մի քանի այլ Իրանական քաղաքներ, առանց կռվի և սպանության, Օսմանյան պետությանը միացնել, և արշավանքի ծախքերի համար իր հարստությունից իբրև օժանդակություն 300 քիսե ակչե կհատկացնի։ Սակայն նա իր խոստումն ու պարտավորությունը չհարգեց։ Հիշյալ խանը [Մուհամմեդ-Կուլի խանը] որոշ ժամանակից ի վեր Երևանի էյալեթում վալի լինելով, իր ուշիմության և հեռատեսության պատճառով աջեմի խաների շրջանում մեծ պատիվ և հեղինակություն էր վայելում։ Նա իր մատուցած ծառայության փոխարեն Օսմանյան պետության կողմից էլ հարգանքի ու նվերների էր արժանացել և կարող էր ուրիշներին էլ այդ ուղղությամբ իր կողմը գրավել։ Սակայն վերոհիշյալ սերասքերն իր պաշտպանության և հովանավորության տակ վերցրած Շահնեվազի իշխանության մեջ մնալը և ամրապնդվելը կապել էր խանի փախուստի հետ։ Այդ պատճառով էլ հիշյալ խանին ինչպես հասարակ մի մարդու զրկել էր հաճույքի և զրույցի մեջլիսներից, իր շրջանից հեռու էր պահում և դատապարտել էր հասարակ ու բաց մի նեղ վրանում ապրելու։ Մի այդպիսի հարգելի հյուրին,

---

* Սերդեն-կեչտի, տես «Թարիխ-Նայիմայի» ծանոթագրություն 9։

իր պատվին և աստիճանին համապատասխան շուքով և փառքով շրջապատելու փոխարեն, նրան անպատվել էր: Հիշյալ խանը՝ իր համար անսպասելի, նման ստոր և թշնամական վերաբերմունքից զզված լինելով, ստիպված էր գիշերով շտապ փախչել Կախեթի կողմերը, որը շահի կողմից տրված էր իրեն իբրև «օջաքլըք»[5]: Վերահիշյալ վեզիրը, Մուհամմեդ-Կուլի խանի կենդանության օրոք, իրեն նրա կալվածների և հարստության ժառանգ համարելով, իր ագահության և ցանկության պատճառով, այն պահին, երբ Գենջեի, Երևանի խանները և ժողովուրդը հակամետ և պատրաստ էին Օսմանյան պետության պաշտպանության տակ մտնելու և հպատակություն ու հնազանդություն ցույց տալու, իր այդ ընթացքով թե խաններին ու վալիներին, թե ժողովրդին և վաճառականներին երկյուղ և սարսափ էր պատճառում:

Աստուծո օգնությամբ առանց կռվի և արյունահեղության Թիֆլիսը հաջող կերպով գրավելուց հետո, վեզիրը իր տրամադրության տակ գտնվող մեծաթիվ զինվորներով կարող էր շարժվել Աջեմի երկրի այս կամ այն մասի վրա, քանի որ [Աջեմի] ժողովուրդը անկարող էր դիմադրություն ցույց տալ և կռվել: Սակայն նա [վեզիրը] երկիրը ընդարձակելու համար իրեն տրված ծառայությունը բոլորովին մտքից հանել էր և դեռևիկ ագահության բերումով՝ միայն հարստություն ձեռք բերելու համար, 132 օր Թիֆլիսում բոլորովին զուր և դատարկ ապրել, ժողովրդի դրությունը վատացրել, զինվորական մասերին մեծ նեղություն պատճառել, արշավանքի և կռվի ժամանակը իզուր տեղ կորցնելով, զինվորների [սիփահիների] հաղթանակով ամրապնդված բազկին և հերոսությանը թուլություն և անհուսություն էր պատճառել... Նման պատճառներով նրա [վեզիրի] հեռացումը [պաշտոնազրկումը] անհրաժեշտ նկատվելով, Դիարբեքիրի վալին՝ Վեզիր-Արիֆի-Ահմեդ փաշան սերասքերի բարձր պաշտոնին նշանակվեց...

(«Թարիխի Ջելեբի-Զադե», հատ. VI, էջ 68—72):

1136 թ. (1723) դեպքերից

Իրանում Սեֆեվիների իշխանությունը վերջացել էր և երկիրը չորս կողմից ենթարկված էր թշնամիների հարձակումներին: Մահմուդ-խան-Աֆղանը Շահ-Հյուսեինին ընտանիքով հանդերձ գերել և տիրացել էր մայրաքաղաք Սպահանին: Արքայորդի Թահմասքը շահ դառնալու նպատակով Ադրբեջանում անկախության էր ձգտում, սակայն անհրաժեշտ զինվորական ուժեր չունենալու պատճառով դիմել էր Օսմանյան պետությանը: Բայց որովհետև օսմանցիները չէին ուզում Թահ-

մասբին ընդառաջ գնալ, այդ պատճառով նրա ուղարկած պատգամավորը 1136 թ. էրզրումում թողնվեց և նրան Ստամբուլ գալու իրավունք չտրվեց։

Հետո Թահմասբը ներկայացուցիչ է ուղարկում Ստամբուլ, Սուլթանին ուղղված հատուկ գրությամբ, որին պատասխանում է սադրազամը և հայտնում, որ նկատի ունենալով Շահ-Հյուսեինի գերի ընկնելը, Սպահանի գրավումը, Իրանի ներքին և արտաքին վերին աստիճանի ծանր դրությունը, մանավորապես այն, որ Մոսկովի ցարը՝ գրավելով Դերբենդի բերդը՝ առաջ է շարժվում դեպի Գիլան և կարող է ձեռքը երկարել դեպի Իրան և վերջապես նկատի առնելով արքայորդի Թահմասբի դիմադրություն ցույց տալու և կռվելու անկարողությունն ու վտանգի մոտեցումը Օսմանյան պետության սահմաններին՝ միաձայն որոշվեց նախքան թշնամու ձեռն անցնելը, գրավել նախապես օսմանյան երջանկահիշատակ սուլթանների կողմից նվաճված Երևանի, Թավրիզի, ինչպես նաև Ադրբեջանի որոշ բերդերն ու բաղդատի սահմանակից վայրերը։

Սերասքեր Իբրահիմ փաշայի Գենջե գնալը և վերադարձը

Թիֆլիսի շրջանի սերասքեր՝ էրզրումի վալի Սիլահդար-Իբրահիմ փաշան, Կարսի բեյլերբեյի Կարա-Մուստաֆա փաշայի, Ջլդըրի վալի Իսահակ փաշայի և այլ զինվորական մասերի հետ միասին Թիֆլիսից դուրս գալով՝ շարժվեց դեպի Գենջե և հիշյալ ամսի 9-րդ օրը Գենջեի մոտ մի շարք կըզըլբաշ զինվորների հետ կռվելուց և նրանց ոչնչացնելուց հետո, գնաց և Սուլթան-Սելիմ անունով բլրի մոտ վրաններ հիմնեց։ Հաջորդ օրն առավոտյան հաղթական սիփահիներով արագ կերպով շարժվելով, առյուծանման քաջերը ուժեղ հարձակումով քաղաքը մտան և հասնելով մինչև կտավավաճառների շուկան՝ ամբողջովին գրավեցին։ Երբ այս հաղթանակով ոգևորված և ուրախացած էին, [լսեցին] չոգադարի հագուստով մի անիծյալ անկրոնի՝ «Մուհամմեդ-Կուլի խանը բարձր մի վայրից բանակի վրա հարձակվեց և կողոպտեց» աղաղակը, որ թալանով և կողոպուտով զբաղված սիփահիներին զարմանք պատճառեց, շփոթեցրեց և զինվորների զեկավարների հաղթական բազուկները թուլացրեց ու դողացրեց. նրանք [զինվորները] թողնելով ընդանոթները, հեղեղի նման դիմեցին դեպի բանակատեղը։ Երբ սերասքերը տեսավ այդ, իր տեղից շարժվեց և հազար դժվարություններով զինվորներին նորից ուղղեց դեպի քաղաքն ու ընդանոթներն ազատեց։ Հաջորդ օրը, երբ նա ձեռնարկեց հայկական թաղամասը գրավելու, հայ ժողովուրդը (արամենե) հպատակություն հայտնեց։ Նա [սերասքերը] այդ թաղամասում բնակություն հաստատեց և 17 օր շարունակ, երբեմն բանակցություններով և դիտողություններով, երբեմն էլ կռվով և պատերազմով զբաղվելով, հավատ ընծայեց վստաբախտ աջեմների

Կեղծ պայմաններին և խոսքերին և հարմար առիթը փախցրեց։ Ի վերջո բանակի ղեկավարների համաձայնությամբ շարժվելու որոշում տրվեց։ Նույն՝ օրը առավոտյան քաղաքի բնակչության երևելիներից մի քանի մարդ եկան կամուրջի գլուխը և վեզիրի մարդկանց հետ խոսել սկսեցին։ Վերոհիշյալ սերասքերի փոխարեն, սերասքեր նշանակված վսեմ Վեզիր-Ահմեդ փաշան Գենջեի էյալեթը Մուհամմեդ-Կուլի-խանին հանձնեց։ Երբ նա հայտնեց, որ եկել և ստանձնել է կառավարության գործերը, Գենջեից դուրս եկան և մեկնեցին դեպի Թիֆլիս։ Հպատակություն և հնազանդություն հայտնած հայերից (արամենե ցեղից) 3000-ի չափ ռայաների բերին և Թիֆլիսում բնակեցրին։

(«Թարիխի Զելեբի-Ջելե», հատ. VI, էջ 74—75)։

Սոմխեթի բնակչության հպատակությունը

Թիֆլիսի էյալեթին ենթակա Սոմխեթի դավառում (նահիյե) բնակվող հայերը (արամենե ցեղը), հպատակություն և հնազանդություն հայտնելով և ընդհանրապես օրինական տուրքերը ընդունելով, խնդրում էին, որ իրենց համար մի իշխող նշանակվի։ Հիշյալ դավառը ընդունելով իբրև լիվա, այնտեղ մարդահամար կատարվեց և նրանց հարկերն առանձնապես «ջիբայեթ» լինելու պայմանով, Երևանի սերասքեր, վեզիր Ահմեդ փաշայի առաջարկությամբ, օջաքըլըքի կարգով իբրև սանջակ տրվեց և շնորհվեց Վախթանգի եղբորորը՝ Իսա խանի որդուն, որն իսլամական կրոնը ընդունելով Աբդուլլահ բեյ էր կոչվում։*

(հատ. VI, էջ 138)

* * *

*Պատմագիր Զելեբի-Ջադեն 1136 թ. դեկտեմբերի շարքում խիստ մանրամասնորեն կանգ է առնում Թուրքիայի և Ռուսաստանի** միջև 1136 թ. (1724) կնքված հաշտության պայմանագրի վրա, տալով այդ առթիվ տեղի ունեցող բանակցությունները ամենայն մանրամասնությամբ։ Այդ պայմանագրության կնքումը տեղի ունեցավ Ֆրանսիայի միջնորդությամբ։ Ռուսաստանը՝ օգտվելով Իրանում տեղի ունեցող խռովություններից, սկսել էր նվաճումներ կատարել Դերբենդի և Բաքվի շրջաններում, իսկ օսմանցիները նվաճումներ էին՝ կատարում Հայաստանում,*

---

* *Ջիբայեթ-էվկաֆի եկամուտների և առհասարակ բոլոր տեսակի եկամուտների դանձումը։*

* *Թուրք պատմագիրները Ռուսաստան իմաստով գրած են ածում «Մոսկով» բառը։*

վրաստանում և առհասարակ Կովկասում։ Այդ պայմաններում պատերազմի բռնկումը անխուսափելի էր։ Սակայն կողմերը նախընտրեցին հաշտություն կնքել։ Այդ պայմանագրով երկու կողմերը Իրանից գրավված վայրերը պահում էին,—Դերբենդը, Բաքուն և Դաղստանի մի մասը մնում էր Ռուսաստանի տիրապետության տակ, Շիրվանի խանությունը (Շամախի կենտրոնով)՝ Օսմանյան գերիշխանության տակ։ Պատմագիրը տալիս է նաև պայմանագիրն ամբողջությամբ և այդ առթիվ Սուլթանի կողմից տրված հատուկ ֆերմանը (սուլթանական «հրդնամե»)։ Սակայն, ինչպես հայտնի է, այս պայմանագրության պայմանները Իրանի կողմից չընդունվեցին, այդ պատճառով էլ պատերազմական գործողությունները միայն ժամանակավորապես դադարեցին։

Թիֆլիսի վալի վեզիր Ռեջեբ փաշայից ուրախարեր լուրերի ստացվելը

Թիֆլիսի և Գենջեի միջև գտնվող և Օսմանյան պետությանը հնազանդություն և հպատակություն հայտնած կազաք ցեղից (աշիրեթ) Գենջեի ղինվորները և Շեմս-էլ-Դինլին, մտնելով մեր հողը, 30-ի չափ գյուղեր այրել, անասուններն ու բեռնակիր կենդանիները քշել ու տարել, կալերն ու հարդը կողոպտել և ցրել էին։ Այդ մասին հայտնել էին Թիֆլիսի վալի վեզիր-Ռեջեբ փաշային, թե եթե նա շտապ կերպով միջոցներ ձեռք չառնի, կասկած չկա, որ նրանք Ակչե-Կալայի վրա կհարձակվեն։ Այդ պատճառով վերոհիշյալ վեզիրը շտապ կերպով օգնություն ուղարկեց՝ Սվազի և Ջըլդրի ղինվորներին, ենիչերի հեծելազորից 25000-ի չափ ընտրյալ ղինվորների, ինչպես նաև Ջորումի վալի Ալի փաշային և նրա քեթխուդաներին, Լորիի բեյ՝ Գոջ-Ալի բեյին և Ալի-Ջենահիին։ Վերոհիշյալները խիստ արագ կերպով, 18 ժամվա ընթացքում, մոտեցան Թիֆլիսին։ Անհավատ և անկրոն ռաֆըզիները, Թիֆլիսի կողմից ղինվորների գալը անհավանական և աննկար համարելով, անտարբեր և անհոգ քնել էին. [օսմանցիները] պատուհաս անձրևի նման նրանց վրա թափվեցին, հետիոտն ղինվորներին հենց առաջին կռվում փախուստի մատնեցին, իսկ իրենց հիմար եռանդի բերումով կռվի և դիմադրության համառություն ցույց տվող հեծելազորից շատերին օսմանյան հատու սրով ոչնչացրին։ Բռնված կըզըլբաշ գերիների տված ցուցմունքներից պարզվեց, որ Երևանի ժողովուրդը Գենջեից Շեմս-էլ-Դինլիից և Մուհամմեդ-Կուլի խանից օգնություն են խընդրել, որ Մուհամմեդ-Կուլի խանը իր հավաքած լեզգի և վրացի ղինվորներով կենտրոնացել է Ակչա-Կալայում և մտադիր է Երևանին օգնության գնալ։ Բացի այդ, ձեռք բերվեցին Երևանից Գենջեցիին

և Մուհամմեդ-Կուլի խանին ուղղված նամակները, որով ապացուցվեց գերիների բանավոր բացատրությունների ճշտությունը։ Այդ ժամանակ Գորիի բերդի հրամանատարը Յուսուֆ-փաշա-Ջադե-Հասան փաշան էր. բերդապահներից Մուհամմեդ-Կուլի-խան անունով անհավատն ու անկրոնը, քյաֆիրների սուտ հավատքը ընդունելով, վրացի քահանաների (փափաս) կողմից Կոստանդին անունն էր ուռացել և անցել էր կառավարության կողմը։ Նա հագել էր վրաստանի խանության հագուստը, էրիսթավներից, թավադներից և ազնավուրներից ներկա եղողները նրան հպատակություն էին ցույց տվել։ Զորս կողմերում գտնվող վրացի անիծյալները եկել հավաքվել էին հիշյալի մոտ, 10 հազարից ավելի սև վահանավոր (կարակալքան) մարդկանցով և էրիսթավներով Ակչա-Կալայում կրկըլբաշ սիփահիների հետ միացել և մտադիր էին Երևանին օգնության գնալ։ Երբ պարզվեց, որ նրանք պատրաստվում էին Գորիի բերդը գրավել, բերդի վարոշում ապրող հայերից (արամիներ) ծերերը եկան և հայտնեցին. «Ներկայումս բերդը օսմանցիների ձեռքումն է, մեր կարողությունից դուրս է նրա գրավումը, սակայն երբ դուք օսմանցիների դեմ կռվեք, երկու կողմի կռվում չեզոք մնալու պայմանով մենք պատրաստ ենք պատանդ տալ»։ Այս խոստումով նրանք իրենց պատանդները հանձնել էին։ Այդ մասին երեք գրություն էր ստացվել։ Վերոհիշյալ վեզիրը բոլոր զինվորների վրա Ջըլդրի բեյլերբեյի Իսահակ փաշային բաշբուղ նշանակեց և Աստուծո ապավինելով շարժվեց դեպի Թշնամին։ Երբ մոլորյալ Թշնամու զինվորները տեղեկացան, որ իրենց վրա հարձակում է նախապատրաստվում, անցան Գորիի դետը և մի ժամ տարածության վրա, Շահնավազի փախուստի ժամանակ, նրա կենտրոնատեղը եղող Ադենի ձոր կոչված վայրում բարձր լեռներում դասավորեցին հեծելազորն ու հետիոտն զինվորները, իսկ դիմացի և հետևի լեռնանցքներում հրացանաձիգներ նշանակեցին ու այդպիսով բոլոր ճանապարհները փակեցին։ Այն պահին, երբ Թշնամին որսի էր ապաստամ, մեր զինվորները վագրի նման շարժվեցին դեպի լեռները. ձիավորները դուրս եկան Թշնամու հեծելազորի դեմ, իսկ Աֆղան հրացանաձիգների և այլ հետիոտների կռվում մեր ճարպիկ կտրիճները Թշնամու հեծյալ և հետիոտն զինվորների միջև մի անմատչելի պարիսպ կազմեցին։ Որոշ ժամանակ անց, կռվից հետո, Թշնամու հեծելազորը չկարողանալով դիմանալ իսլամական զինվորների հարձակմանը, միացավ հետիոտների հետ և փորձեց դիմադրություն ցույց տալ։ Սակայն Աֆղան հրացանաձիգները նրանց ճանապարհ չտվին, նրանք

սահիպված եղան ետ նահանջել։ Իսլամական բանակի դեմ ամրության վերածած լեռնանցքները, նրանց համար դերեզմոն գարձան ողջ մնացած հետիոտն զինվորների մի մասը սրո ճարակ դարձավ, մի մասն էլ Գորիի ջրում (գետում) խեղդվեց։ Այս կռվում մոտ 3000 անիծվածներ ոչնչացվեցին։ Այս հաղթանակի ուրախտռիթ լուրը և նրան հաջորդող, Սեֆեր ամսի սկզբին, վերոհիշյալ վեզերի կողմից հաղորդված Երևանի գրավման ավետիսը, բոլոր հավատացյալների սրտերը ուրախությամբ և գոհունակությամբ լցրին։

(«Թարիխի Ջելեբի-Զադե», հատ. VI, էջ 195—197)։

Երևանի բերդի և Օրդուբադ ու Նախիջևան բաղաքների գրավումը

Աստուծո կամքով Երևանը Օսմանյան սուլթանական երկրին միացնելը Նորին Վսեմություն փադիշահի ցանկությունն էր. այդ կողմը արշավելու համար նշանակվեցին Դիարբեքիր էյալեթի զեամեթ և թիմարի տերերը, հիշյալ էյալեթի լիվաների մութասարրիֆները, Անադոլուի վալի Վեզիր Օսման փաշան, Կարսի բեյլերբեյին և այդ էյալեթի լիվաների բեյերը՝ իրենց կանոնավոր կափու-խալքի զինվորներով. Կարսի էյալեթի զեամեթ և թիմարի տերերը, աջ ու ձախ զինվորները, Սվազի բեյլերբեյի Ռիզվան-Զադե-Սեյիդ-Մուհամմեդ փաշան՝ կանոնավոր կափու-խալքի զինվորներով և էյալեթի զեամեթ և թիմարի տերերով, Մարաշի էյալեթի զեամեթ և թիմարի տերերը, Խուդավենդիկյար սանջակի նախկին մութասարրիֆ Էբուբեքիր փաշան և Մամալի-Օղլու-Օմեր փաշան, Զորումի սանջակի մութասարրիֆ Ալի փաշան, Ակսարայ սանջակի մութասարրիֆ Արսլան փաշա-Զադե-Մուհամմեդ փաշան՝ կափու-խալքի զինվորներով, Բայազետ սանջակի Մահմուդ բեյը՝ կափու-խալքի զինվորներով, և ցեղերի ու աշիրեթների գլխավորները, ինչպես նաև 1000 մարդ սիփահի և զինակիր (սիլահդար)** և 27 հազար ենիչերի և ենիչերի «սերդեն կեչտի» զինվորներ, 2500 ջեբեջի, բընդանոթաձիգ և բնդանոթի կառապան, ընդամենը 60 հազարից ավելի հաղթական զինվորներ։ Վսեմափայլ վեզիր Արիֆի-Ահմեդ փա-*

---

* *Կափու խալքը կամ կափու-կուլի զինվորները համարվում էին օսմանյան բանակի փադիշահական (արքունական) զորամասերը՝ հեծյալ և հետիոտն։ Ենիչերիական զորամասը կափու-կուլիի զորամասերից առաջինն էր։*

** *Սիլահդար — վեզիրների և այլ պետական բարձրաստիճանավորների զինակիրները։*

չան, որը առաջ Դիարբեքիրի վալին էր եղել և ներկայումս Թիֆլիսի պաշտպանության պաշտոնում էր գտնվում, զինվորների վրա Սերասքեր նշանակվեց։ Վերոհիշյալ վեզիրը Թիֆլիսից շարժվելով, բանակի հետ միասին Արփա-Չայիրի կոչված վայրում կանգ առավ և բնակություն հաստատեց։ Այդ ժամանակ կայսերական զինվորներից Քևմանի-Մուստաֆա-Աղայի միջոցով ստացված ֆերմանով Սուլթանը հրամայել էր անմիջապես մեկնել դեպի նշանակված վայրը և մի օր առաջ Երևանի բերդը գրավել։ Սուլթանական ֆերմանով Էրզրումի բերդից 10 հատ «բալյեմեզ» թնդանոթ, 30 հատ «շահի»[6] թնդանոթ և նրանց մոտ ծառայության նշանակված պատերազմների մեջ կոփված թնդանոթաձիգները, նվիրական շեվվալ ամսի 2-րդ օրը, Աստուծո տպավինելով, այդ տեղից շարժվեցին և 7 մերհելե անցնելով՝ ուղղվեցին դեպի Երևան։ Երբ հասան Քարբան-Սարայ կոչված մենզիլը, մի փորձառու անձնավորության միջոցով Երևան ուղարկեցին ողորմած Սուլթանի՝ Երևանի բնակչության անձի և ինչքի ապահովությունը երաշխավորող, բանակի կազիասքերի կողմից կնքված գրության ու հաստատված կայսերական «Խաթթի-Հյումայունի» օրինակը (պատճենը), ինչպես նաև իրենց կողմից գրված նամակը։ Շրջակայքում և մոտ վայրերում գտնվող բոյբեյիները*, Երևանի բերդի դրոշակակիր Մուհամմեդ-Ջաման բեյը, խալիֆա** համարվող Ուչ-Քիլիսեի*** վարդապետները (փափաս) եկան և հպատակություն հայտնեցին. բոլորն էլ մեծ պատվով և խոստումներով ընդունվեցին։

Հիշյալ ամսի 13-րդ օրը Բայազետի սանջակի մութասարրիֆ Մահմուդ փաշան, Թուփրաք-Կալայի բեյ Խալիլ բեյը և Քուրդիստանի բեյերը միացան բանակին և իսլամական զինվորները մեծ ուժով եկան ամրացան Երևանի բերդի առաջադիր մասերում։ Բոլոր զինվորների, մասնագետների ու ղեկավարների խորհրդակցության դրվեց այն հարցը, թե ո՞ր կողմից է ավելի հարմար բերդի պաշարումը։ Պարզվեց, որ եթե հանգուցյալ դրախտաբնակ Ղազի-Սուլթան Մուրադ խանի անցած կողմից սկսվի [պաշարումը], բանակին ժամանակություն ու պաշար հասցնելու ճանապարհները կտրելու դործում Զանգի ջուրը [գետը] ուժեղ միջոց կլինի, հետևաբար նպատակահարմար նկատվեց պաշարումն սկսել գետի մյուս կողմից։

---

* Բոյբեյլի — ցեղի (աշիրեթի) ատորաբաժանման (օյմաքի) պետը։

** Խալիֆա, ուզում է ասել կաթողիկոս։

*** Ուչ-Քիլիսե՝ բառացի նշանակում է երեք եկեղեցի, էջմիածնի վանքը։

Զեռնարկեցին հիշյալ դեպի մյուս կողմում խրամատներ փորելուն և նույն գիշեր խրամատների մեջ մտնելով՝ թնդանոթի և խումբարեի* համար ամրություններ պատրաստեցին։ Հաջորդ շաբթշաբթի օրը սկսեցին մարտը, որի հետևանքով բազմաթիվ կրզըլբաշներ սպանվեցին և իսլամական զինվորների ավագանիից Թուրնաջի-Բաշի-Աբդուլլահ-Աղայի արծվային հոգին դեպի երկինք բարձրացավ, որով նա արժանացավ նահատակության փառքի նվիրական աստիճանին։ Հիշյալ քաղաքը (Երևանը), մեկը մյուսից 35 քայլաչափ տարածությամբ երկու ամրակուռ և հաստատուն պարիսպներով էր շրջապատված, ուստի նրա պաշարումը անպայմանորեն կապված էր վարոշի** գրավման հետ։ Սակայն վարոշի երկու կողմի քարքարոտ լինելը և դիմացից խիստ ուժեղ թափով հոսող Զանգի գետը, վարոշի նվաճումն ու գրավումը դժվարացնում էին։ Հիշյալ ամսի 5-րդ հինգշաբթի օրը Քուրդիստանի հետևակ զինվորները և սերասքերի Աֆղանական դրոշակները (զորամաս) և հրացանաձիգները կոկորդիլոսի նման հիշյալ գետն անցան, մյուս կողմից էլ ենիչերիների և «սերտեն կեչտի» դրոշակների որոշ մասը, ժողովրդի անցած կամուրջից անցան, մի մասն էլ՝ «Թող ջուրը քեզ տանի՝ բայց մի անցնի նամերդի*** կամուրջից», ասացվածքի (առածի) համաձայն, զինվորական կարգով կոկորդիլոսի նման գետից անցան, երկու ժամվա ընթացքում 10 հազարի չափ կրզըլբաշների սրա ճարակ դարձրին և ամբողջ վարոշը նրանց կեղտոտ մարմիններից ազատեցին և մաքրեցին։ Բացի այդ, ժողովրդից 10 հազարից ավելի ընտանիք և երեխաների գերի վերցրին և. հաղթական զինվորները բազմատեսակ ավարի տիրացան։ Հաղթական բանակի դեպի Երևան գնալը և իսլամական բանակի շարժման ուղղությունը որոշվելուց հետո, վարոշի պարիսպների մոտ գտնվող և նրանց կից տները ամբողջովին հողին հավասարվեցին և շուրջանակի պարսիպների շրջակայքը ազատ հրապարակի վերածվեց։ Այս կերպով հաղթական բանակը կարողացավ վարոշը գրավել։ Վարոշը իբրև հիմք ընդունելով և վերոհիշյալ վայրերում խրամատներ փորելով, այսպես դասավորվեցին՝ Ստամբուլի դռան դիմաց Սերասքեր փաշան, նրա ձախ կողմում՝ Անադոլուի վալի Վեզիր-

---

* Խումբարե կամ կումբարե — երկաթից պատրաստված և մեջը լեցուն թնդանոթի մեծ գնդակ (ռումբ)։

** Վարոշ (հունգարերեն) — ծայրամաս, քաղաքի արվարձանը, շրջակայքը։

*** Նամերդ — ամարտի, խարդ։

Օսման փաշան, նրա մոտ՝ Կարսի վալի Էրու-Բեքիր փաշան և աջ կողմում՝ ենիչերիները։ Բերդի հարավային կողմը քարքարոտ վինելու պատճառով մոտակայքում խրամատներ փորելը անհնար էր։ Ջանգի գետի մյուս կողմում Կարահիսարի-Շարքիի վալի Օմեր փաշան խրամատներ փորելու ձեռնարկեց։ Սերասքերի խրամատներում 4 հատ «բալյեմեզ» թնդանոթ և 10 հատ «շահի» թնդանոթ դրվեց, իսկ Անադոլուի խրամատներում՝ 3 թնդանոթ և 6 հավան*, ենիչերիների խրամատներում՝ 2 հատ «բալյեմեզ» և 3 հատ «շահի» թնդանոթ, Օմեր-փաշայի խրամատներում 2 հատ «հավան» դրվեց և այս ձևով ձեռնարկվեց պաշարման ապահովումը։

Հաջորդ օրը բերդի ներսից մի քանի մարդիկ դուրս գալով, պաշտպանություն և ժամանակ խնդրեցին։ Սերասքեր փաշան փոդիշահական գրությունը (հրովարտակը) ուղարկել էր, սակայն որովհետև անհավատ ռաֆըզիներն իրենց խոստման և պայմանին հակառակ էին վարվել և ենիչերիների թևին միանգամից երկու հազարի չափ հրացաններ էին արձակել, փոդիշահական բանակն էլ սկսել էր կռվել, թնդանոթ և խումբարա արձակել։ Հիշյալ ամսի 17-րդ օրը Անադոլուի վալին՝ Օսման-փաշան էլ իր կափու-խալքի և էյալեթի զինվորներով բանակին միացավ։ Այս հանգամանքը բերդի ներսում գտնվող սատանայական մարդկանց (զինվորներին) մեծ հուզում և սարսափ պատճառեց և ամսի 20-րդ օրը նորից մարդիկ եկան «աման» խնդրեցին, սակայն նրանց խոսքերի բացարձակ սուտ լինելը նույն օրն իսկ պարզվեց։ Հաջորդ օրը Երևանի ժողովրդի պատվավոր անձերից Ջաֆեր բեյը, Ալի-Կուլի բեյը և երեք այլ անձեր եկան և սերասքերի հետ խոսեցին։ Նրանք հաղթական բանակի Թիֆլիսում իրենց խոստման և պայմանադրին հակառակ ընթացքը իբրև օրինակ հիշելով՝ հայտնեցին, որ ժողովուրդը վախենում է։ Բերդի հանձնման իբրև սկզբնական պայման առաջարկեցին ենիչերիների խրամատներից դուրս գալը։ Սերասքերը հայտնելով, որ բերդի ազատագրումից առաջ ենիչերիների շարժումն ու արձակումը կայսերական օրենքին հակառակ է, մերժման պատասխան տվեց։ Նրանք [քաղաքից ուղարկվածները] իրենցից մի քանի կարևոր անձիք թողնելով բանակցության համար՝ դեպի քաղաք շտապեցին։ Սակայն դրանց բանակցությունն էլ երկարատև չեղավ և առաջվա պես կռիվները վերսկսվեցին...

---

* Հավան — խումբարա արձակելու հատուկ կարճ թնդանոթ։

Հիշյալ ամսի 25-րդ օրը նրանց խնդրանքով «ամանի» դրություն ուղարկվեց և հետո Երևանի ավագանիից Նազիր-Մուհամմեդ Մեհդի բեյը, Իմամ-Կուլի բեյը, Մուհամմեդ-Զաման բեյը, Միրզա Մուհամմեդ-Ռիզան և Աբդուլ-Քերիմ բեյը, նախապես եննիչերիների աղայի փոխանորդի, հետո ուղղակի աղայի միջնորդությամբ, արժանացան փաշայի ընդունելությանը: Սրանք էլ եննիչերիների խրամատներից դուրս գալու մասին առաջարկություն արին, իրենցից շատերի եղբայրներն ու որդիները Շահզադե Թահմասբի մոտ պատանդ լինելով, մինչև նրանց որևէ կերպով ազատվելու լուր ստացվելը, իրենց ժամանակ տրվելու մասին անտեղի առաջարկ և խնդրանք ներկայացրին: Այս պատճառով նրանց հետ ուղարկեցին և վերադարձրին դեպի քաղաք: Սերասքերի կարգադրությամբ նորից մի քանի օր կրակը սկսվեց... Կատաղի կռիվներ տեղի ունեցան: Ջիլգադե ամսվա սկիզբը Դաշ-քեոփրյուի դիմաց գտնվող «Թելավոր ամրություն» («Թելլի թաբիյե») անունով մեծ ամրության ներքևում փորված և պատրաստված անցքը (լաղըմ) առավոտ վաղ կրակի տվին, բայց որովհետև կրակը պահեստի վրա չազդեց, ամրության խորտակման ազդեցությունը անզգալի եղավ: «Լաղըմը պայթեց» ասելով հարձակման անցած եննիչերիներից 50—60 հոգի վիրավորվեցին և նահատակվեցին: Հիշյալ ամսի 8-րդ օրը տեղեկություն ստացվեց, որ Շահզադեի կողմից Երևանի խան նշանակված Մուստաֆա-Կուլի խանը բազմաթիվ կըզըլբաշ զինվորներով շարժվում է Երևանի ուղղությամբ: Բայազետի սանջակի մութասարրիֆը՝ Մահմուդ փաշան և Ալաշկերտի բեյը՝Խալիլ բեյը և Քուրդիստանի մյուս բեյերը դուրս եկան նրանց (կըզըլբաշներին) դիմավորելու և Աստուծո օգնությամբ նրանց ոչնչացնելու համար բանակի գլխավորներին զինվորների հետ միասին ուղարկեցին դեպի Նախիջևան: Նույն ամսի 20-րդ օրը նորից լաղըմը պատրաստ էր և ընդհանուր համաձայնությամբ որոշվեց հարձակման անցնել: Լաղըմին կրակ տրվեց, բայց լաղըմի փորողների անփութության պատճառով, այս անգամ էլ նրա ազդեցությունը չնչին եղավ: «Լաղըմը պայթեց» ասելով հարձակման անցած զորագնդերը և Օսման փաշայի կողմից արձակված թնդանոթներով պարսպի վրա բացված անցքով առաջացող ալայ-բեյերի զորամասերից 260-ի չափ կտրիճներ նահատակվեցին, որով ստիպված եղան նորից դեպի խրամատները վերադառնալ: Հաջորդ օրը լուր ստացվեց, որ Բարձրյալն Աստուծո կամքով Նախիջևանը մեկ հարվածով գրավվել է: Օսմանյան սիփահիները շատ ուրախացան, իսկ Երևանի բնակչությունը

գրավման վախից սրտաբեկ եղավ։ Պաշարումը և պատերազմական գործողությունները մոտավորապես մի ամիս շարունակվեցին։ Սերասքերից ստացված հրամանագրում հայտնվում էր, որ ենիչերիների՝ վարոշում երկար ժամանակ զրկված դրության դատապարտված լինելը և երկարատև պաշարումին տոկալը դժվարին գործ է, [զինվորների] մի մասը կորցրել են իրենց հաստատակամությունն ու վճռականությունը և փախուստի դիմելու դիտավորություն են ցույց տալիս, բացի այդ, շատ գործածվելու հետևանքով թնդանոթների ֆալիյենները* բացվում են, ըստ երևույթին պաշարումը երկարատև լինելու պատճառով, ռազմամթերքն ու վառոդը կարող են չբավականանալ, իսկ նորից հայթայթելը անհնար է։ Թեև նման հուսահատական խոսքերը կարող էին այն տպավորությունը թողնել, որ նպատակի իրականացումը մեծ դժվարությունների հետ է կապվում, սակայն կարող և Պլատոնի նման ուշիմ, վսեմ Սերդարը, պատմական և աշխարհագրական բազմաթիվ գրքերի ընթերցումով ծանոթացել էր շրջապատի մելիքների և տարբեր երկրների գործերի և դեպքերի հետ...**։

Այդ ժամանակ լուրեր էին տարածվել, որ Շահզադե Թահմասբի՝ արքայական գահում հաստատ չլինելու պատճառով, Իրանի երկրում խռովությունները ծայր աստիճանի են հասել։ Այդ պատճառով՝ Սերասքերը, որ նախապես հակամետ չէր գործը հեշտ և թեթև համարելու, այժմ մշտապես հետամուտ էր փող և ռազմամթերք ձեռք բերելուն և հաղթական բանակին նոր օգնական ուժեր ապահովելուն։ Նախապես դեպի Թավրիզ ուղարկվելու համար նախատեսված զինվորներին՝ նկատի ունենալով կարևորության և առաջնության աստիճանը, հրամայվում է իբրև օժանդակ ուժ ուղարկել Երևանը գրավելու համար նշանակված բանակին միանալու. 3000 ընտրյալ եգիպտական կտրիճ զինվորներ, Ջիլհիջջե ամսի 4-րդ շաբաթվա օրը հասան և բանակին միացան։ Այս օժանդակ ուժերի տեղ հասնելը, պաշարման երկարատև օրերի և պատերազմական դժվարությունների պատճառով մեծ տանջանքների ենթարկված իսլամական զինվորներին նոր կյանք և մեծ ուժ տվեց... Եգիպտական զինվորները Անադոլուի զինվորների իրամատները մտնելով՝ հերոսաբար կռվել սկսեցին, դիշեր-ցերեկ թնդանոթի և հրացանի պատ-

---

* Ֆալիյե — հին ձևի, բերանից լցվող թնդանոթների բերանը։

** Այստեղ պատմագիրը հիշում է Երևանի շուրջը տեղի ունեցած բազմաթիվ պատերազմները օսմանցիների և պարսիկների միջև։

բաստությամբ զբաղվեցին։ Այդ ժամանակ՝ երկու տեղից փորված և լրացված լաղումների մասին կըզըլբաշները դիտեին, ուստի ստիպված այդ խրամատները քանդեցին և զեկավարները այլ միջոցներ գտնելու համար խորհրդակցություն հրավիրեցին։ Այդ օրը, Զիլհիջջե ամսի 6-րդ օրը, եղանակը խիստ վատ էր, և կուվի ու պատերազմի պատճառով իսլամական զինվորների ենթակա եղած հիվանդությունները և դժվարությունները կառավարության լավ հայտնի և պարզորոշ լինելով, փադիշահական հատուկ գրությամբ նրանց կորով և եռանդ տալու անհրաժեշտություն զգացվեց։ Ստացվեց Վսեմ Սադրազամի չոքադարներից* Բոսթոյ-Հասան-աղայի միջոցով ուղարկված սրտառուչ և ոգևորիչ կայսերական գրությունը և բոլորի ներկայությամբ կարդացվեց։ Ընդհանուր համաձայնությամբ գրի առնված խնդրագրում հայտնում էին. «Վսեմ փադիշահին ի սրտե աղոթք և գովասանք, մենք բոլորս, Նորին Վսեմություն փադիշահի սիրուն, պատրաստ ենք մեր գլուխն ու հոգին տալու. մինչև Երևանը չգրավենք, մի քայլ ոնգամ ետ չենք շարժվի»։ Այս ասելով սկսեցին հողը փորել։ Հիշյալ ամսի 18-րդ օրը Նախիջևանի գրավումով մեծ պատիվ և հռչակ վաստակած Մահմուդ փաշան սերասքերի բայրաքներից, 15 բայրաք զինվորներով Օսման բեյի հետ միասին, Նախիջևանից 20 ժամով դեպի ներս գտնվող Օրդուբադ քաղաքի դիմաց բնակվող և 8 հազար կըզըլբաշ զինվորներով, Երևանին օգնության գնալու նպատակով վրանաբնակ եղող Սիփահսալար Մանսուր խանի, Մուստաֆա-Կուլի խանի և Նախիջևանից փախած անհավատ խանի վրա հարձակվեց։ Մանսուր խանը մոլորյալ սիփահիներով նրան դիմավորեց և մի ժամի չափ կըզըլբաշ զինվորներով մարտեր մղելուց հետո, Աստուծո կամքով, Մանսուրը պարտվեց... Վերոհիշյալ փաշան փախչողներին հետապնդելով՝ քաղաք մտավ։ Քաղաքի բնակիչները կըզըլբաշներին օգնություն ցույց չտվին և դիմելով դեպի հաղթողները՝ հպատակություն հայտնեցին։ Երջանիկ փադիշահի բախտավորության շնորհիվ հիշյալ քաղաքի նվաճման ու գրավման ուրախառիթ լուրը հաղթողներին մեծ հրճվանք և ուրախություն, իսկ պարսպում պաշարվածներին հուսահատություն պատճառեց։ [Պատմագիրը մանրամասնորեն պատմում է Ստամբուլից ուղարկված

---

* Զոքադար — մեծ վեզիրի կամ բարձրաստիճան վեզիրների հրամաններն և կարգադրությունները գործադրող հատուկ պաշտոնյա։

բաղմաթիվ «մասնագետ» և «վարպետ» լաղումջիների, խումբարաջիների և ֆիթիլջիների, ֆալիյէջիների[8] և այլնի մասին]։

...Հիշյալ ամսի 26-րդ օրը եգիպտացիներից 300-ի չափ քաջեր կառուցված ամրության անցքից բերդի վրա բարձրանալով՝ դրոշակ կախեցին և կըզըլբաշ զինվորներին հոգնած և քնած վիճակում գտնելով, սպանեցին երկու աշտարակի պահապաններին։ Իսկ երբ հաղթական զինվորներից մի քանի բայրաք «Սերդեն կեչտի» եննիչերիներ նկատեցին նրանց 3-րդ աշտարակը հասնելը, բարձրաձայն մաղթանքով դեպի բերդը բարձրացան։ Նկատելով նրանց, անիծյալ կըզըլբաշ զինվորները, հարձակվեցին եգիպտացի զինվորների վրա. վերջիններս, այդ բանին անտեղյակ, կըզըլբաշներին դեմառդեմ եկան. կըզըլբաշներից 300-ի չափ զինվորներ սպանվեցին, իսկ եգիպտացի զինվորներից 200 հոգի վիրավորվեցին և նահատակվեցին։ Ամսի 27-րդ օրը Գենջեի շրջանում հավաքված 20 հազար կըզըլբաշ զինվորներ, իրենց դեմ դուրս գալու համար նշանակված Արաբ-Ալի-Աղայի 800-ի չափ քաջարի զինվորների վրա կատարած անսպասելի գիշերային հարձակումով, նրանց երկու սուլթաններին և բանակը ցրեցին։ Այս ցավառիթ դեպքը թուլացրեց կրոնասեր զինվորների հավատքը և ձգձգելով պատերազմը ու ավելի սաստկացնելով դժվարությունները՝ հաղթական զինվորների ամրակուռ բազուկներին խիստ մեծ թուլություն պատճառեց։ Այս պատճառով փադիշահական ֆերմանով հրաման տրվեց Թիֆլիսում գտնվող էրզրումի վալի Վեզիր Հաջի-Մուստաֆա փաշային, որ նախապես ծառայել էր Շիրվանի և Շամախիի շրջանում, անմիջապես իր էյալեթի զինվորներով շարժվել դեպի Երևան։ Վերոհիշյալ վեզիրը մեծ արագությամբ շարժվեց և ամսի 29-րդ օրը իր բանակը հաստատեց կայսերական բանակի շրջակայքում։ Սրանով նա բանակի զինվորների ուժը երկու անգամ ավելացրեց և ուժեղացրեց։ Հիշյալ վեզիրը Սերասքեր փաշայի և եննիչերիների միջև գտնվող խրամատներում ամրանալով, կատարյալ հաստատակամությամբ կռվի և մարտի անցավ։

1135 թ. (1722) նվիրական Մուհարրեմ ամսի 2-րդ օրը, Երևանի ավագանիից Նազր-Մուհամմեդ-Մեհդի բեյը, Մեջնուն բեյ-օղլին և Մուհամմեդ-Ջաման բեյը, ինչպես նաև «Քյասիբների աղան» կայսերական բանակում եննիչերիների աղա Մուհամմեդ-աղայի մոտ գալով, հիշյալ աղայի հետ միասին՝ վերոհիշյալ Հաջի-Մուստաֆա փաշային ներկայացան, հպատակություն հայտնելով «աման» խնդրեցին և բերդը հանձնելու համար 20 օր ժամանակ ուզեցին։

վեզիրը պատասխանեց՝ «Ձեր անձի, ինչքերի և ընտանիքի ապահովությունը բոլորս երաշխավորում ենք, սակայն երեք օրից ավելի ժամանակ տալը կայսերական ընդունված կարգերին հակառակ լինելով, 20 օր տալը անկարելի է։ Միայն կարող ենք սերասքեր փաշայից 5 օրվա ժամանակ խնդրել։ Ըստ հնագույն կարգերի, միայն բերդի վրա սպիտակ դրոշակ բարձրացնելուց հետո բանակցության դուռը բաց կթողնենք»։ Այս միջոցառական պատասխանի վրա հաջորդ օրը նրանք դիմեցին Սերասքեր-փաշային, նա ևս նույն պայմանները առաջարկեց. վերոհիշյալ վեզիրը և ենիչերիների աղան խնդրեցին, որ երկուսական օր ևս ավելացվի։ Սերասքերը՝ «7 օր ժամանակ կտանք, ավելին իրավունք չկա» ասելով խոսակցությանը վերջ տվեց։ Կռիվը նորից սկսվեց։ Ամսի 4-րդ օրը Շեյխ-ուլ-Իսլամ կոչված Հյուսեին էֆենդին, իբրև բոլորի ներկայացուցիչ, առաջարկեց. «Շեհզադեի մոտ գտնվող մեր պատանդները ազատելու համար գոնե 15 օր ժամանակ պետք է տալ»։ Սերասքեր փաշան՝ «7 օրից մի վայրկյան անգամ ավելի իրավունք տալու հնարավորություն չկա» վերջնական պատասխանով նրան հետ վերադարձրեց։

Փադիշահական բանակը՝ եգիպտական զինվորների և էրզրումի վալիի էյալեթի զինվորների գալուց հետո մեծ ուժ և կորով էր ստացել։ Իսկ Երևանի բնակչությունը Շեհզադեից և Գենջեից իրենց սպատած օգնական զինվորների և պաշարի գալուց հուսահատած լինելով, հիշյալ ամսի 8-րդ օրը նորից, պատգամավոր ուղարկեցին հիշյալ Հյուսեին էֆենդիին, Մեջնուն բեյ-օղլիին, Նազիր-Մեհդի բեյին, Մահմուդ-Ջաման բեյին և «Քյասիբների աղային»։ Սրանք Սերասքեր փաշայի և Հաջի-Մուստաֆա փաշայի հետ բանակցեցին և հաշտության պայմանները որոշեցին։ Հաջորդ օրը Սերասքեր փաշան իր ներկայությամբ դիվան կազմեց (հրավիրեց) և կայսերական կառավարության կողմից ստացված փադիշահական ողորմագրի հետևյալ բովանդակությունը ծանուցեց.— Երևանի ժողովրդին անձի, ինչքի և ընտանիքի ու երեխաների ապահովություն է տրվում, բանակի զինվորներին և այլոց թույլ չի տրվում գրավել այգիները, պարտեզները, խանութները, խաները, բաղնիքներն ու ջրաղացները, շահի [իշխանության] ժամանակ վճարված տուրքերից ավելի տուրքեր չպիտի պահանջվեն, Երևանի բնակչությունից ուրիշ վայր գաղթելու և տեղափոխվելու ցանկություն ունեցողներին արգելք ցույց չպիտի տրվի, տեղափոխվելու ցանկություն ունեցողներին իրենց ինչքերը փոխադրելու համար բավականաչափ բեռնակիր կենդանի պիտի տրամադրվի, Ջե-

քարլի, Կաշարլի, Բիյաթլի և քաղաքից դուրս ապրող այլ ցեղերին (աշիրեթ) իրենցից բեյեր պիտի նշանակվեն, եթե նրանք որևէ ոճրագործության տեղիք տան, արժանի պատիժը պիտի ստանան, իսկ հավատարմության և շիտակության ցույց տվողները իրենց տեղում պիտի մնան և պաշտպանության համար մարդահամար տեղի պիտի ունենա։ Մուհարրեմ ամսի 14-րդ օրը կարդացվեց և բոլորին հայտնվեց հիշյալների [պատգամավորների] կողմից՝ բերդը իր թնդանոթի և ռազմամթերքի պահեստներով («Թոփխանե» և «ջեբխանե») միասին հանձնելու, մինչև խոստացված օր իրրև պատանդ ենիչերիների Աղայի փոխանորդի մոտ ապրելու մասին դրի առնված հանձնառությունն ու պայմանագիրը։ Բանակի զեկավարներն ու սպաները իրենց համաձայնությունը և հավանությունը հայտնեցին. վերոհիշյալ պայմանագրի կետերին երդշխավորություն համար-վող պայմանագիրը ստորագրեցին և վերոհիշյալ ամագանին (Երևանի) իրրև պատանդ ենիչերիների Աղային հանձնեցին, որոնք ուղարկվեցին ենիչերիների իրամատը։ Հետո Երևանի խանը՝ Հաջի-Ալի-Կուլի խանը հատկապես իր կողմից Գենջեի և Թիֆլիսի բնակիչներից իրրև հյուր բերդում գտնվողների կողմից խնդրանք և դիմում ներկայացվեց, որով նրանք ամսի 14-րդ օրը Սերասքեր փաշայի հետ տեսակցություն էին խնդրում։ Սերասքեր փաշայի կողմից հատուկ սարքով զարդարված նժույգ ուղարկվեց [խանին]։ Հիշյալ խանը բերդից դուրս գալով, Սերասքեր փաշայի հետ մի քիչ խոսակցելուց հետո, վերադարձավ վարշում հատկապես իրեն համար պատրաստված պալատը։ Հաջորդ օրը՝ Մուհարրեմ ամսի 15-րդ երեքշաբթի օրը, վաղ առավոտյան Երևանի ամագանիից 29 անձինք եկան։ Մեծ վեզիրի և իսլամական դիվոնների պարագլուխների ներկայությամբ, նրանցից Մուհամմեդ-Կասըմ բեյը բերդի բանալիները հանձնեց Սերասքեր փաշային։ Փաշան Մուհամմեդ-Կասըմ բեյին և հիշյալ Հյուսեին էֆենդիին սամույրե մուշտակ, իսկ մյուսներին էլ խալաթներ հագցնելով, պատիվ և հարգանք տվեց։ Սերասքեր փաշան Կափու-խալքի և ենիչերի դիվոններին նշանակեց Ստամբուլի կողմը եղած դռան մոտ բնակվելու։ Հաջի-Մուստաֆա փաշան, Օսման փաշան և ենիչերիների Աղայի փոխանորդը՝ Մուհամմեդ-Աղան իրենց Կափու-խալքի և էյալեթի դիվոններով Թավրիզի դռան մոտ բնակվելու, որոնք հետամուտ եղան պայմանագրի կետերի պահպանմանը։ Այդ բախտավոր օրում, ըստ հնագույն պաշտոնական կարգի, բանակի դիֆթերդարի միջոցով բոլոր ռազմամթերքը հանձնվեց ռազմամթերքի պետի փոխանորդին, 79 հատ

Թնդանոթ՝ թնդանոթապետի փոխանորդին։ Երեք օր, երեք գիշեր քաղաքի բնակիչների իրերն ու ինչքերը կատարյալ ապահովությամբ և առանց կողոպտվելու վտանգի՝ փոխադրեցին դեպի վարոշ։ Ամսի 18-րդ՝ ուրբաթ օրը, հաղթական բանակի բոլոր վեզիրները և զեկավարները մեծ բախտավորությամբ մտան բերդի ներքին մասը և հանգուցյալ զոպի Սուլթան Մուրադ խանի նվիրական ջամիյում, կրոնական ծիսակատարություն կատարելուց հետո, գնացին դեպի խանի պալատը։ Զորամասերին իրամատներից դուրս գալու հրաման տրվեց և վերոհիշյալ Հյուսեին էֆենդուն սամույրե մուշտակ, իսկ մյուս պատգամավորներին էլ խալաթ և այլ պատիվներ տրվեցին... Հետո փառավոր հանդիսավորությամբ գնացին դեպի բանակը և բերդից արձակված ուրախարիթ թնդանոթի որոտը երկինք բարձրացավ։ Նույն օրն ևեթ կայսերական զինակիր Մուստաֆա աղան 6 արծաթյա բանալիները վերցրած մեկնեց դեպի Երջանիկ Ասիթանե...*

Այդ երջանիկ տարվա բախտավոր Սեֆեր ամսի սկզբին Երևան քաղաքի սուլթանական երկրի կազմի մեջ մտնելու ուրախարիթ լուրը ստացվեց վեզիր Սերդարի շրջադարձներից...** միջոցով։ Սարդարը անմիջապես այս փառավոր հաղթանակը շտապեց անձամբ հայտնելու Նորին Վսեմություն փադիշահին...

Հետո պատմագիրը մանրամասնորեն հիշում է Սարդարամի կողմից Երևանի պաշարման և գրավման համար կատարված աշխատանքները՝ օգնական ուժեր ուղարկելու, ռազմամթերք և պաշար հասցնելու, մասնավորապես եգիպտական դինվորներ ուղարկելու ուղղությամբ։ Այդ բոլորը փադիշահին հայտնի լինելով, վերջինիս Սարդարամին պարգևատրում է թահկագին խալաթով և այլ նվերներով... Երբ Երևանի բանալիները բերող կայսերական զինակիր Մուստաֆա-Աղան հասնում է Սկյուդար, նրան դիմավորում են խիստ մեծ հանդիսավորությամբ։ Հաջորդ օրը Սուլթանական պալատում տեղի է ունենում մեծ և փառավոր լուսավառություն։ Պատմագրի ասելով՝ այդ փառավոր և խիստ մեծ հանդիսավորության և լուսավառության կապակցությամբ Ստամբուլում «գործերը դադարեցին և առևտուրը կանգ առավ, որով որոշ մարդիկ վնաս կրեցին...»։ Պատմագրի ասելով նմանը չունեցող այս լուսավորությունը և հանդիսավորությունը 10 օր է տևել։

---

* Պետության մայրաքաղաքը, կենտրոնը՝ Ստամբուլը, կոչվում էր Նաև Երջանիկ Ասիթանե։

** Բնագրում բայ է թողնված, հավանաբար ձեռագրում չի կարողացվել։

Փադիշահը հանդիսավորությունից հետո հատուկ կայսերական գրությամբ («խաթթի-Հյումայուն») իր գոհունակությունն է հայտնում Սերասքերին՝ նրա մատուցած խիստ արժեքավոր և կարևոր ծառայության համար։

Տալիս ենք այդ գրության օրինակը։

Կայսերական գրության («խաթթի-Հյումայուն») պատճենը

«Դու որ Արևելքում իմ Սերասքերը Ահմեդ փաշան ես։ Բարձրյալն Աստուծո օգնությամբ Երևանը գրավվեց և իմ հաղթական բանակին որս դարձավ։ Այս մեծ ավետիսը իմ սրտին խիստ ուրախություն պատճառեց, որի համար բարիքների պարգևողին բազմատեսակ փառք ու գովասանք եմ մատուցել։ Փա՜ռք, հազար փա՜ռք։ Այս բարձր հաղթանակը իմ նվիրական էության գոհունակություն է պատճառել և բարձր մտքին ուրախություն է դրոշմել։ Մեծ Արարիչ Աստծուց խնդրում եմ, որ սրանից հետո էլ նման բազմաթիվ մեծ հաղթանակներ ձեռք բերեք և միշտ կրոնի ու պետության թշնամիներին կրակի մատնեք։ Քեզ և այդ հաղթական արշավանքում կրոնի և իմ պետության սիրուն քարի և հողի վրա պահակած իմ զազի և մյուջահիտ բոլոր կուլերին, բարձրերին, մեծերին և փոքրերին իմ տված հացն ու շնորհքը հալա՛լ լինի։ Դուք բոլորդ հասնեք ձեր ցանկություններին և փափագին։*

Իմ կայսերական ցանկության համաձայն, իմ Արքայական ծառայականության և հավանության համաձայն, ջանք և ուշադրություն դրած դրեք. բոլորդ էլ իմ բարեմաղթ աղոթքին և արքայական պատվին արժանացաք։ Ի սեր իմ կայսրության, հոգով ու սրտով աշխատող բոլոր իմ կուլերի մասին իմ շնորհքն ու ողորմությունը անսպառ է։ Ներկայումս իմ կայսերական բարձր համակրանքով, քեզ՝ հատու սրովդ թշնամուն ոչնչացնողիդ, իմ հատուկ մուշտակներից (քյուրք) ամբողջովին գործածված մի մուշտակով վարձատրելու արժանի համարեցի և իմ կոզբեկչի-բաշի ծառայիս միջոցով ուղարկեցի ու շնորհեցի։ Քո սրամադրության տակ գտնվող էրզրումի վալուն՝ իմ վեզիր Մուստաֆա փաշային և Երևանի պաշտպան Օսման փաշային նմանապես մեկական մուշտակ, և այլ ծառայություններ մատուցողներին մեկական պարծանքի խալաթ ուղարկեցի։ Դուք բոլորդ ձեր նվիրական պարտականությունը կատարեցիք կրոնին, իմ պետությանն ու իմ Սուլթանական պատվին

---

* Նվիրական պատերազմին (ջիհադ) մասնակցողներ։

և նամուսին ըստ արժանվույն ծառայելով և օգնելով. [այժմ] գրավված նվիրական բերդի նորոգության և կարգավորման համար էլ պետք է միասիրտ և միաբան աշխատանք և ջանք գործ դնեք»։

(«Թարիխի Չիլեբի-Զադե», հատ. VI, էջ 222—223)։

Կազախի լիվաճ տրվում է Միր-Ալի բեյին

Կազախի ցեղից Միր-Ալի բեյը մի գործարար և կրոնասեր անձնավորություն էր. փադիշահական խալիֆայությանը հպատակություն և հնազանդություն ցույց տալու համար, Երևանի սերասքեր Ահմեդ փաշան, Կազախի սանջակից ցրված ոայաներին իրենց նախկին տեղերը վերադարձնելու և բնակեցնելու, այդ շրջանը բարեշինելու պայմանով, վերոհիշյալ լիվան նրան էր հանձնել։ Ներկայումս Թիֆլիսի պաշտպան Վեզիր Ռեջեբ փաշայի միջնորդությամբ, վերոհիշյալ պայմաններով, երջանիկ Ասիթանեի կողմից [Կազախի] սանջակը բեյության տիտղոսով հիշյալ Միր-Ալի բեյին շնորհվեց։

(«Թարիխի Չելեբի Զադե», հատ. VI, էջ 248)։

Բեկթաշյաններից* Երևանի Սերասքեր Ահմեդ փաշայի նկատմամբ կատարած լրբություններ

Նախապես Երևանի համար նշանակված եննիչերիական զինվորների աղայի փոխանորդը՝ Շահեն-Մուհամմեդ Աղան, Թավրիզի գրավման ուղարկված բեկթաշյանների խմբին աղա էր նշանակվել։ Այն օրը, երբ նա պետք է մեկներ Թավրիզ, եննիչերիների մեջ գրգիռ և խռովություն է առաջացնում ասելով՝ «եննիչերիներին հատկացված ռոճիկից բացի, Երևանի գրավման ժամանակ Աջեմների կողմից եննիչերի զինվորներին բաժանելու համար Սերասքեր փաշան մեծ գումար է ստացել»։ Այս խոսքերով գրգռում է նրանց ագահությունը, խաբում, խռովության և ապստամբության է մղում։ Վաղ առավոտյան նրանք հարձակվում են Սերասքեր փաշայի պալատի վրա, մտնում նրա ննջարանը, այնտեղ գտնված իրերը թալանում... Սերասքերին երեք տեղից վիրավորում և հետո պալատից տանում են տեղական աղայի բնակարանը և ստիպում, որ իրենց պահանջած գումարը

---

* Բեկթաշի՝ իսլամական կրոնական թարիգաթ (միաբանություն), որի հիմնադիրն է եղել Հաջի Բեկթաշ-Վելին։ Այդ միաբանության պատկանող դերվիշները և անդամները կոչվում էին «բեկթաշյաններ»։

անմիջապես վճարելու համար Երևանի դեֆթերդարին հրամանագիր տա։ Սերասքերը այդ օրը մնում է բանտարկված և ենթարկվում նրանց [խոովարարների] բռնություններին և լրբություններին։ Շիրվանի շրջանում որոշ պետական գործեր կարգի բերելու համար նշանակված և գործի բերումով Երևանում գտնվող փադիշահական դերգահի Կափու-բաշիներից Միր-Ալիմ-Մուհամմեդ-Աղան [իմանալով այդ դեպքի մասին], անմիջապես գալիս է և [խոովարարների] Երևանի դանձարանից վերցրած 100 քիսե ակչեն ուղարկում Աղաների-Կափուն, ասելով, որ այնտեղ սպանների միջոցով պիտի բաժանվի։ Այսպիսով նա ավազակներին ուղարկում է դեպի այդ կողմը ու նրանց զբաղեցնում... Վիրավոր Սերասքերը այդ գիշեր իր մի խումբ մարդկանցով շտապ գնում է դեպի Ուչ-Քիլիսե*։ Հաջորդ օրը վերոհիշյալ աղան [խոովարարների] խմբերի սպաներին ըստ պատշաճի հանդիմանում է և նրանց սիրտը գրավելով, Բեկթաշյանների խմբի մեջ իբրև նվեր բաժանված 100 քիսեից 95-ը հավաքում է և խոովության պատճառ եղող երկու ավազակներին, իրենց սպանների միջոցով գլխատել է տալիս։ Նա ամեն ջանք գործադրում է խոովությանը վերջ տալու համար։ Օջաքների աղաներն ու գլխավորները այդ անկարգության համար դղջում են ու բոլորը միասին գնում, կատարյալ պատվով ու քաղաքավարությամբ վերոհիշյալին [Սերասքերին] տանում և վերահաստատում են իր պաշտոնին։

(«Թարիխ Զելեբի-Զադե», հատ. VI, էջ 251—252)։

1138 թվականի դեպքերից

(1725). Լոռիի և Գենջեի գրավումը

Դժբախտ Աջեմի քաղաքներից... Գենջեի գրավումը աշխարհակալ և բախտավոր փադիշահի ցանկություն էր. (այդ նպատակով նշանակվեցին) Զըլդրի վալի Իսհակ փաշան, Կարահիսարի-Շարբիի մութասարրիֆ Օմեր Ալի փաշան...** հազարի չափ ենիչերիներ և նրանց սպաները, բավականաչափ ջեբեջիներ և թնդանոթաձիգներ... Ախալսխայի, Ազդուրի ու Խերթվիսի բերդերի կամավոր աղաները և զինվորները, ընդամենը 40 հազարից ավելի հաղթական զինվորներ... Սրանց վրա սերասքեր նշանակվեց էրզրումի վալի վեզիր Հաջի-Մուստաֆա փաշան, որը Երևանից դուրս գա-

---

* Ուչ-Քիլիսե (կամ քիլիսե) — Էջմիածին։

** Գատմագիրը հիշում է ըստ սովորականի բազմաթիվ փաշաների և այլոց անուննները՝ իրենց զինվորներով հանդերձ։

ղով՝ Արփա-Չաիր կոչված վայրում դինվորներ հավաքելու և ընդհանրապես ռազմամթերքը և պաշարը լրացնելու համար որոշ ժամանակ սպասեց։ Հետո այդ տեղից, Աստուծո ապավինելով, շարժվեց դեպի նպատակակետը։ Սակայն բանակի ճանապարհի մոտակայքում գտնվող Լորիի ապահովության տեսակետից, ռաֆըզի բնակչությամբ հայտնի ամրակուռ բերդը իր եղած վիճակում թողնել անցնելը աննպատակահարմար համարելով, վերոհիշյալ բերդը պաշարեց։ 3—4 օր թնդանոթով և հրացանով քաջաբար կռվելուց հետո, Բարձրյալն Աստուծո ողորմությամբ, հիշյալ տարվա Զիլգադդե ամսի 4-րդ ուրբաթ օրը [բերդի] բնակիչները գիտենալով, որ չպիտի կարողանան տոկալ հաղթական դինվորների ուժեղ հարվածներին, հպատակություն հայտնեցին, որով բերդը նվաճվեց և կայսերական երկրին միացվեց... Հետո այդտեղից շարժվեցին դեպի նպատակակետը։ Երբ բանակը Գենջե հասավ, ձեռնարկեցին երեք կողմից խրամատներ պատրաստելուն. բնակչությանը կոչ արին իսլամական փադիշահին հնազանդություն ցույց տալ։ Բայց որովհետև [բնակիչները] մերժեցին և կռվի ձեռնարկեցին, այդ օրը մինչև երեկո և երեկոյից մինչև առավոտ ջահերի լույսով կռիվները շարունակվեցին ...Հաջորդ օրը՝ առավոտյան վաղ, վսեմ վեզիրը իր հաղթական զինվորներով հարձակում սկսեց։ Իսլամական բանակի փառապանծ դրոշակը քաղաքում ծածանվեց, առյուծանման ղազիները անհավատ ռաֆըզիների արյունով քաղաքի փողոցներն ու շուկաները ներկեցին և այդ անհավատների շարիաթի սրով թափված արյունը Ջիհուն գետի նման հոսեցրին...

Հետո պատմագիրը երկարորեն խոսում է վերոհիշյալ սերասքերի մեծ հաղթանակների, Թիֆլիսի, Համադանի, Թավրիզի և Երևանի նման իրանական մեծ քաղաքների գրավման համար ցույց տված ռազմական կարողության մասին։ Նկարագրում է Գենջեի գրավման առթիվ Ստամբուլում տեղի ունեցած մեծ տոնակատարությունը և լուսավառությունը։ Այս առթիվ սերասքերը և այլ պետական մեծ նվերների և շնորհների։

(«Թարիխի Ջելեբի-Զադե», հատ. VI, էջ 293—296)։

Երևանի մի քանի գավառների (Նահիյե) բնակչությանը իրենց նախկին հայրենիքում բնակեցվելը

Երևանի գավառներից [Սուրմալու] Սերմելի և այլ գավառներից մեծ ու փոքր 80, Շորագյալ, Աբարան և այլ գավառներից 226 գյուղերի բնակիչները, նրանց երեխաներն ու ընտանիքը պաշտպանե-

լու, ինչքերն ու ապրանքները պահպանելու նպատակով, նախապես, երբ հաղթական բանակը ձեռնարկել էր Երևանի երկիրը գրավելու, իրեն հյուր [ժամանակավորապես] փոխադրվել էին Բայազետ և Քուրդիստանի այլ վիլայեթները, Կարսի էյալեթի գյուղերն ու գյուղաքաղաքները։ Աշխարհակալ փադիշահի շնորհիվ, երբ Երևանի էյալեթը գրավվեց, նրանք [տեղափոխվածները] ցանկություն հայտնեցին իրենց հայրենիքը վերադառնալ։ Սակայն [տեղական] մեծամեծները (այան) և նրանց ընդունողները (մյութեսելլիմ) իրավունք չէին տալիս նրանց վերադառնալու, հայրենիքում նրանց թողած տներն ու ջրաղացները քանդում և ավերում էին։ Վերոհիշյալ գյուղերի քեթխուդաները, Երևանի վալի՝ Վեզիր-Ռեջեբ փաշայի ներկայությամբ հրավիրված օրինական (շերիի) Մեջլիսում բողոք հայտնեցին և խնդրեցին, որ ապահով կերպով իրենց հայրենիքը վերադարձվեն։ Վերոհիշյալ վեզիրը այդ մասին հայտնեց Երևանի կազիին՝ Աբդուլլահ էֆենդիին, որը պատասխանեց. «Դեռ նոր գրավված Երևանի մեծ էյալեթի բարեշինությունն ու զարգացումը պետական նշանակություն ունեցող կարևոր խնդիր է»։ Վերոհիշյալ ռայաներին, իրենց վերաբնակեցված տեղերից ընտանիքով և երեխաներով, անասուններով և ինչքերով միասին՝ ապահով իրենց նախկին հայրենիքը տեղափոխելու, և այդ առթիվ ոչ մի արգելք չհաղորդանելու մասին կայսերական ֆերմանով փադիշահական դերգահի կափուջի-բաշիներից աղաներ Կարս և քուրդիստան ուղարկեցին։

(«Թարիխ Զևլերի-Զադե», հատ. VI, էջ 302—303)։

Օսմանյան երկրում ֆրանսիացի վարդապետների երթևեկության արգելումը

Ֆրանսիացի վարդապետների* ցեղից որոշ սատանայական անձիք, վատթար նպատակներով, Օսմանյան փադիշահական երկրում մեծ և փոքր քաղաքներ շրջելով, այս ու այն կողմ երթևեկելով, հույն և հայ քրիստոնյա ռայաների մեջ ֆրանսիական (ֆրենջի) սնոտի դավանանքն ու անմիտ ծիսակատարությունն էին քարոզում, նույնիսկ որոշ մարդկանց սրտում իրենց կախարդական քարոզնե-

* Ֆրանսիացի, ուզում է ասել կաթոլիկ։

րը «ֆիրենգի ախտի» նման տարածելով (վարակելով), նրանց հեռացնում էին իրենց հին կրոնից և ընդունել տալիս ֆրանսիական կրոնը (էֆրենջի)։ Այսպիսով, նրանք խռովություն և ապականություն էին առաջացնում, սպանություն և խարդախություն սերմանում։ Մի շարք քրիստոնյա ռայաներ այս մասին կառավարությանը պանդատ ներկայացրած լինելով, Ռումելիի և Անադոլուի շրջաններին հրահանգ և հրաման ուղարկվեց, որով արգելվում էր ֆրանսիական վարդապետներին, նախապես տրված կայսերական պայմանագրով որոշված վայրերից բացի այլ վայրերում ապրելը և ռայաների միջև խռովություն տարածելու նպատակով ճանապարհորդությունը կատարելը։ Հակառակ վարվողները տեղում ձերբակալվում ու բանտարկվում են և այդ մասին հայտնվում է կառավարությանը։

(«Թարիխի Զելեբի-Զադե», հատ. VI, էջ 314—315)։

Մուղանի խան՝ Սեֆի-Կուլի խանի հպատակությունը

Գենջեի և Շիրվանի սերասքեր էլջազ-Մուստաֆա փաշան հայտնում և զեկուցում էր, որ Մուղանի խան Սեֆի-Կուլի խանը Օսմանյան պետության հպատակություն հայտնելով, պաշտպանություն էր խնդրել։ Սերասքերը խնդրում էր նրան խանության պաշտոնում պահել։ Ջեմազիյել-ախըրի 18-րդ օրը, իր ծառայության մեջ հավատարմությունը ուժեղացնելու պայմանով Մուղանի խանությունը վերոհիշյալ Սեֆի-Կուլի խանին շնորհվեց։

(«Թարիխի Զելեբի-Զադե», հատ. VI, էջ 339)։

1139 թվականի (1726) դեպքերից.

Գենջեի Սերասներ Հաջի-Մուստաֆա փաշայի Շամախի գնալը, Շիրվանում կարգը հաստատելուց հետո նրա վերադարձը և Սղնախի հայերի ոչնչացումը

Էրզրումի էյալեթի և Գենջեի շրջանի սերասքերը և Շիրվանի գործերի կարդավորման համար նշանակված վեզիր Հաջի Մուստաֆա փաշան, Կայսերական Բարձր հրամանի համաձայն, Մոս-

---

* *Ֆրենգի (ֆրենգի) ախտ — սիֆիլիս։ Այդ հիվանդությունը թուրքերեն լեզվով կոչվում է «ֆրանսիական ախտ» (կամ եվրոպական), այն պատճառով, որ Թուրքիայում մուտք էր գործել Ֆրանսիայից կամ Եվրոպայից (Շեմսեդդին-Սամի, «Կամուսի-Թուրքի», էջ 993)։*

կովի սահմանը որոշողների Գենջե գալուց 14 օր հետո, Գենջեից դաշտից դուրս եկել և իր... զինվորներով* նախորդ տարվա Զիլզադե ամսի 29-րդ օրը ուղղվել էր դեպի Շիրվան։ Զիլհիջջե ամսի 17-ին հասել էր Շամախի։ Երբ ժողովուրդը նորից լսեց և տեղեկացավ սահմանի որոշման մասին, Շամախիի ուլեմաները և ծերերը [ոսիտակամորուքները] հավաքվեցին ջամիյում և «Ինչո՞ւ Մոսկովը այսքան մոտենում է մեզ, ինչո՞ւ մեր կրոնակից եղբայրները պիտի մնան քյաֆիրների մեջ» խոսքերով (իմաստով) դիմում ներկայացրին Օսմանյան պետության և իրենց ուլեմաներից մի քանի մարդ ուղարկելով սերասքերի մոտ՝ հայտնեցին. «Մոսկովի հետ մենք պիտի կռվենք և պատերազմենք»։ Վերոհիշյալ սերասքերը նրանց հուզումը հանդստացնող իմաստալից պատասխան տվեց...։

*Հետո պատմագիրը հիշում է սահմանների որոշման համար կողմերից առանձնացված պատգամավորների կազմը։ Պատգամավորներն սահմանները որոշում են հետևյալ կերպ. Շամախի քաղաքից դեպի արևելք ուղիղ գծով գնում են դեպի Կասպից ծովը (Խազեր), Շամախիից մինչև ծով գնում են 11 ժամ 25 րոպեում, համաձայն կայսերական պայմանագրի՝ դրա $^1/_3$-ը պատկանում է Օսմանյան պետության, իսկ $^2/_3$-ը, Մոսկովին։ Հետո գնում են Մարուր անունով գյուղի մոտ, սահմանի կենտրոն հանդիսացող բլուրը, հաջորդ օրը ուղղվում են դեպի Թեմուր-Կափուս։ Այդտեղ 8-րդ կոնաքում մնում մի քանի օր, հետո ծովեզերքից դեպի ցամաք և այնտեղից դեպի Շամախի և Կասպից ծովի միջև գանվող կենտրոնական կետը և որոշում են սահմանները։ Ժողովրդի կողմից որոշ հակառակություն է ցույց տրվում, բայց հետո կենտրոնից մինչև Արաս գետի գետաբերանը ձգվող սահմանների որոշման հարցում համաձայնություն է կայանում։ Հետո Սերասքերը բավականաչափ զինվորներ է թողնում Շամախիում և ինքը վերադառնում է։ Երբ նա անցնում է Քուր գետից և որոշ գործեր կարգի բերելու համար գնում է դեպի Բարդա (Բերդա) նրան դիմավորում է Շիրվանի խանը՝ Հաջի-Դավիդը և հայտնում է՝

«Տասնհինգ տարուց ի վեր ապստամբության վիճակում գտնվող և իրենց շրջանների կըզըլբաշական գյուղերը ավերող Սղնախի [Սղնախի] հայերը, Գենջեի նվաճումից հետո, չնայած որ հպատակություն էին ցույց տվել և Օսմանյան կառավարության հնարհիվ խաղաղություն և ապահովություն ձեռք բերել, նորից ավազակություն էին սկսել և իրենց շրջանին մոտ գտնվող որոշ վայրերին վնասներ հասցրել։ Երբ վերոհիշյալը [Սերասքերը] Շամախիումն էր գտնվում, նրանք [սղնախցիները] հազարի չափ հեծելազորով եկել էին Սղնախի վրա, անհնազանդություն ցույց

---

* Պատմագիրը հիշում է բազմաթիվ զինվորական խմբերի՝ իրենց պետերով միասին։

տվել և բռնություններ էին գործում։ Այս բանը օրինակ հանդիսացավ Սղնախում մնացած ժողովրդի համար. երկիրը ավերվում և ռայաների վիճակը ծանրանում էր։ Սղնախցիների պարագլուխը, Ավան անունով մի հայ, թնդանոթով և խումբարայով եկել և Սղնախի վրա ամրացել էր։ Հաղթական բանակը իր զեկավարով Սղնախի գնդակի տակ գտնվող Շուշի գյուղը եկավ և հանկարծակի հարձակումով մինչև երեկո մի քանի թնդանոթով գնդակոծեց Սղնախներին։ Այդ գիշերը սղնախցին իր ուրամադրության տակ գտնվող հայերի հետ միասին փախավ։ Հաջորդ օրը իսլամական զինվորները գրավեցին նրանց ինչքերն ու ապրանքները և փախստականներից ձեռք ընկած 400 անկրոն հայերի սպանեցին։ Ջմեռվա վերահաս ցրտերի պատճառով [սերասքերը] սղնախցիներին պատժելուց հետո, շարժվեց դեպի Գենջե և ձեռնարկեց նրա պաշտպանությունը ամրապնդելու գործին։ Հիշյալ սղնախցիների ոչնչացումից հետո այդ շրջանի լեռներում գտնվող նրանց կողմնակիցներից Կարա-Ջորլի քուրդերը, Շահսեվենցիները և ուրիշներ անձնատուր եղան։ Իրենց աշիրեթների մեջ ապրելու և սրանից հետո հայերի (արամենե) հետ չկապվելու պայմանով, սրանց համար հրամանագիրներ գրվեցին և Կարա-Ջորլի աշիրեթի երկրում գրանցում (մարդահամար) տեղի ունեցավ, կայսերական խասերը և միրլիվայի խասերը առանձնացվեցին, ստացված արդյունքի (եկամուտի) կեսը իրենց իբրև ապրուստի միջոց, իսկ կեսը Գենջեի գանձարանին հանձնելու պայմանով, իբրև սանջակ տրվեց Սեկբան-օղլու-Մուհամմեդ բեյին. նրա շրջակայքում գտնվող էրսբարի (?) սանջակը նույն պայմանով տրվեց Իբրահիմ բեյին...

(«Թարիխի Ջելեբի-Զադե», հատ. VI, էջ 420—424)։

Կախեթի էյալեթը տրվում է Մուհամմեդ-Կուլի խանին Միրմիրանի ատիճանով

[Պատմագիրը Թիֆլիսի իշխան Վախթանգի հետ կապված և նախապես մանրամասնորեն նկարագրված դեպքերը համառոտակի կրկնում և հետո շարունակում է]՝

Մուհամմեդ-Կուլի խանը վեզիրի [Սիլահդար-Իբրահիմ փաշայի] իր նկատմամբ ունեցած անսպասելի անարգական վերաբերմունքից մեծապես վշտացած, Թիֆլիսի իշխանությունը հանձնում է Վախթանգի որդուն՝ Շահնեվազին, որը դեռ նոր իսլամությունը ընդունելով Իրրահիմ անունն էր ստացել և փախել Կախեթի կողմերը։

վերոհիշյալ Սերասքերի և այդ կողմերում գտնվող մի քանի մեծ վեզիրների հակառակության պատճառով, որոշ ժամանակ ապրում է իր ժողովրդի և ցեղի շրջանում։ Հետո դիմելով Թիֆլիսի պաշտպան Վեզիր-Խահակ փաշային, հիշյալ երկրի օրինական տուրքերը (ջիզիյե) վճարելու, լեզգիների ոչնչացման հետամուտ լինելու և վստահված գրավները տալու պայմանով, հիշյալ էյալեթի իրեն շնորհվելու մասին քաննից խնդիր էր ներկայացրել։ Հիշյալ վեզիրը այս մասին դիմում է կայսերական Բարձր Դերգահին, հայտնելով, որ նրա [խանի] ցանկությունը համապատասխանում է պետության շահերին։ Վերոհիշյալ երկրի օրինական տուրքերը լրիվ կերպով վճարելու և էյալեթը լեզգիների հարձակումից և վնասներից պաշտպանելու և իր անձն ու հարստությունը պահելու, ինչպես նաև վստահված գրավները տալու պայմանով, հիշյալ ամսի 7-րդ օրը, Կախեթի էյալեթը միրմիրանության աստիճանով, իբրև օջաքլըք, շնորհվեց վերոհիշյալ Մուհամմեդ-Կուլի խանին։

(«Թարիխի Ջևդեթի Ջադե», հատ VI, էջ 459—460)։

Երջանիկ Ասիրաեեում ավազաճիի կողմից աջեմ գերիների գնման ու վաճառման արգելումը

Աջեմի ցեղը (թայֆա), բացի կրոնական [դավանական] տարբերությունից և բարքերի անհամապատասխանությունից, հրեաների նման՝ իսլամական հավատացյալների նկատմամբ թշնամական և վնասակար վերաբերմունք ունեցող մի համառ ազգություն է։ Տղամարդ և կին ավազանիից նրանք, ովքեր աջեմ գերիներին [ստրուկներին] տիրանալու ցանկություն են ունեցել, դրամապես (նյութապես) և մարմնապես մեծ վնասների են ենթակա եղել։ Այդ բանը հաստատված լինելով, սրանից հետո Երջանիկ Ասիրաեեում ավազանիի կողմից արբունքի հասակը անցկացրած աջեմ գերիների գնումն ու վաճառումը ֆերմանով արգելվեց։ Անգիտակցաբար աջեմ գերիների տիրացած մարդկանց կրած դրամական վնասները նկատի առնելով, Անապոլուի երկրում նրանց (աջեմ գերիների) վաճառմաեն արտոնություն տրվեց։ Հիշյալ ամսի վերջը Անապոլուի երկրամասում, Սև ծովի ափում գտնվող կապանների (գալաո) կապիներին և սպաներին, նավահանգիստների պետերին, Կոջա-Կուլի սանջակի մութասարրիֆին և Սկյուդարի կապիին և վերոհիշյալ լիվաների կապիներին [հետևյալ] հրամանը ուղարկվեց. այսուհետև

Ստամբուլում աջեմ գերիների գնումն ու վաճառումը բոլորովին արգելված լինելով՝ նրանց ծովով կամ ցամաքով երջանիկ Ասիթանե փոխադրելը չի թույլատրվում։

(«Թարիխի Զեյլեբի-Զադե», հատ. VI, էջ 602—603)։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Քեոփրյուլու փաշաները.** Ինչպես ցույց են տալիս թուրք պատմագիրները, Սուլթան-Մուհամմեդ IV իշխանության շրջանում Թուրքիայի արտաքին և ներքին դրությունը շարունակվում էր վատթարանալ։ Շարունակվում էր պատերազմը վենետիկցիների հետ, որոնք փակել էին Դանաք-Կալեի նեղուցը, խորտակել օսմանյան նավատորմը և մայրաքաղաքը սովի վտանգին հասցրել։ Թե՛ մայրաքաղաքը և թե՛ էյալեթները վերին աստիճանի խառնակ դրության մեջ էին, ապրատամբական շարժումները մեծ չափերի էին հասել։ Պետության գանձարանը դատարկ էր։ Ստամբուլում «Մեյդան-ազալարի» անունով զորքաների խումբը շարունակում էր իր անհնազանդությունները։ Սադրազամ Բոյնու-Յարալը-Մուհամմեդ փաշան, անկարող լինելով զսպելու այդ ավազակային անկարգությունները, պաշտոնազուրկ եղավ և 1066 թ. սադրազամ նշանակվեց Հայտնի Քեոփրյուլուների գերդաստանից Մուհամմեդ փաշան, որը 90 տարեկան էր։

Թուրք պատմագիրները Մուհամմեդ փաշայի սադրազամ նշանակվելու կապակցությամբ հիշում են հետևյալ հետաքրքիր դեպքը։ Փաշան սադրազամության պաշտոնը ստանձնելու համար շորս պայման է ներկայացնում սուլթանին.

1. Փադիշահը անհապաղ պետք է ընդունի Սադրազամի կողմից ներկայացված բոլոր խնդիրները.
2. Սադրազամը պաշտոնների պիտի նշանակի իր հավանած և վստահած մարդկանց.
3. Սադրազամը անկախ պիտի գործի, վեզիրներն ու նեղիմները չպիտի միջամտեն նրա գործերին.
4. Սադրազամի մասին ներկայացված ամբաստանությունները Սուլթանի կողմից ուշադրության չպիտի արժանանան։

Սուլթան Մուհամմեդ IV ընդունում է Քեոփրյուլուի այդ պայմանները։

Քեոփրյուլու փաշային հաջողվում է հրով և սրով կարճ ժամանակում վերջ տալ ներքին անկարգություններին։ Իր սադրազամության հինգ տարվա ընթացքում նա գլխատել և սպանել է տալիս 36.000 մարդ։ Նրա զոհերից է եղել նաև Կ. Պոլսի հունական պատրիարք Փարթենիոսը, որին Մուհամմեդ-փաշան հրապարակով կախաղան է բարձրացնում պետության դեմ դավաճանության ամբաստանությամբ։

Քեոփրյուլուն վենետիկցիների դեմ ռազմական միջոցներ է ձեռք առնում և նրանց գրաված կղզիներից Բողջան և Լեմնոսը նա է վերցնում։ Նա Ղրիմի խան Մուհամմեդ-Կիրային 200 հազար թաթար զինվորներով ուղարկում է Էրդելի-բեյի վրա ու նրան պարտության մատնում։

Հետո Անադոլուում Աբազա-Հասան-փաշայի սկսած ապստամբական շարժումը լիկվիդացիայի է ենթարկում։ Ռուսները հարձակվում են Ղրիմի վրա. Թուրք պատմագիրների ասելով Քեոփրյուլուին հաջողվում է պարտության մատնել նաև ռուսներին և 120 հազար դինվոր սպանել։ Մուհամմեդ-փաշան անձամբ ղեկավարել է այդ պատերազմները։ Նա մեռել է 1072 թ., Էդիրնեում։ Մեռնելուց առաջ իրեն իբրև հաջորդ առաջարկում է իր որդուն, Շամի վալի Ֆազըլ-Ահմեդ փաշային։ Քեոփրյուլուն եղել է անգրագետ։ Ֆազըլ-Ահմեդ փաշան էլ շարունակում է իր հոր վարած քաղաքականությունը, այսինքն կախաղանի, գլխատման և սպանության միջոցով ատրսափեցնելու և զսպելու քաղաքականությունը։ Պատմագիր Ահմեդ-Ռասիմը իրավամբ ասում է՝ «Արդարև այդ քաղաքականությունը երբեք չի բաժանվել մեզանից»։

Ավստրիացիների դեմ մղած պատերազմում Քեոփրյուլու փաշան իբրև սերդարի-էքրեմ, գնում է Բելգրադ։ Պատերազմը վերջանում է օսմանցիների կատարյալ հաղթանակով։ Ահա այդ ժամանակներում փադիշահը՝ Մուհամմեդ IV Ռումելիում որսորդությամբ էր զբաղված, պատմագիրները ասում են, որ Սուլթանը 20—30 հազար կենդանիներ էր որսացել։

Ավստրիան 1075 թ. ստիպված է լինում հաշտություն կնքել։ 1077 թ. Ֆազըլ-Ահմեդ փաշան ձեռնարկում է Կրետե կղզու գրավմանը։ 25 տարուց ի վեր օսմանյան բանակը զբաղեցնող Կանդիան գրավվում է 1080 թ.։ Հետո Լեհաստանի դեմ սկսած պատերազմը չվերջացած, 1087 թ. Քեոփրյուլուն մեռնում է։

Ահա, համառոտակի, Քեոփրյուլու փաշաների «համբավի» պատմությունը։

2. **Խուրըն** (*խուրըն կարդալ*)—ուրբաթ օրվա և բայրամի օրերի նամազում խաթիբի կարդացած աղոթքը, որի մեջ հիշվում են ղուրանից որոշ այեթներ և որոշ կրոնական խրատականներ, միաժամանակ հիշվում է Նորին Վսեմության խալիֆայի անունը և աղոթք նրա մասին։ «Իր անունով խուրըն կարդալ տալը» և փող կտրելը համարվոր է սուլթանության և անկախության։ Խաթիբ՝ խուրըն կարդացող կրոնական բարձր պաշտոնի տեր անձնավորություն։ Բառացի նշանակում է հռետոր, ճառախոս։

3. **Դրոշակ** (*բայրաք*)—բառացի նշանակում է դրոշակ։ Սակայն հնում գործ էր ածվում նաև իբրև զինվորական տերմին՝ բատալիոն-գումարտակ իմաստով, ինչպես մի դրոշակ (բայրակ) զինվոր, հետևների կամ մի դրոշակ սերդին-կենշաի զինվոր։

4. **Նվիրական ֆեթվա** (*«ֆեթվայի-շերիֆ»*)։ *Տե՛ս Փեչեվիի ծանոթագրության 8-րդ կետը։*

5. **Օջաքլըք** *մի քանի գյուղերի կամ ավանների օրինական տասնորդի եկամուտը, որն հատկացվում էր բերդապահներին, քաղաքների տեղական զինվորներին, օրավարձի փոխարեն՝ իբրև հատկացում։ Հաճախ օջաքլըքը չէր սահմանափակվում միայն տասնորդի եկամուտով, նա վերաբերում էր նաև չիֆլիկի, մետաքսի և մաքսային տուրքերին։*

6. **«Շահի»**—*(թնդանոթ) օսմանցիների պատրաստած և գործածած հին թնդանոթների մի տեսակը։*

7. **Լաղըմջի, խումբարաջի, ֆիրիկջի և ֆալիյեջի:**—*Հայտնի է, որ «չի» կամ «ջի» մասնիկը Թուրքերեն գոյականների վերջում արհեստի, մասնագիտության, զբաղմունքի իմաստն է տալիս (օրինակ՝ տեմիր, տեմիրջի-երկաթ, երկաթագործ)։*

Լաղըմ— *գետի ափակ փորված, վրան վակ, ջրերի հոսելու համար բացված անցք. տեքստում գործածվում է ոռոգմական իմաստով այսինքն՝ ամրությունը կամ պարիսպը պայթեցնելու համար փորված անցք, որը լցնում էին վառոդով և հետո կրակ տալիս ու պայթեցնում։ Լաղըմչիները այդ դործում մասնագիտացած զինվորներ էին։*

Խումբարաջի — *«հավան» անունով ինդանոթներով բշնամու վրա «խումբարա» (մեջը սպանիչ նյութերով լցված երկաթյա մեծ դնդակ) արձակող և այդ գործում մասնագիտացած զինվորներ։*

Ֆիրիլջի— *պատրույգավոր հրացաններ և ինդանոթներ (պատրույգը այրելու միջոցով) արձակող զինվորներ։*

Ֆալիչեջի— *ֆալիչն նշանակում է ինդանոթի հրանցք։ Ֆալիչեջի էին կոչվում ինդանոթների հրանցքը՝ անգործածելի դարձնելու համար, զանազան մեխերով լցնող և փակող զինվորները։ Օրինակ, երբ պատերազմական դեպքերի կապակցությամբ բանակը ստիպված էր լինում իր ինդանոթները թողնել բշնամիներին, ֆալիչեջիները նախապես լցնում էին ինդանոթների հրանցքը (ֆալիչեն), այդ ինդանոթները անգործածելի դարձնելու նպատակով։*

8. **Երջանիկ Ասիրաճե** *(«Ասիթանեի-սեադեթ»), հնում Թուրքերը իրենց մայրաքաղաքը՝ Ստամբուլը, անվանում էին «Դեր-սեադեթ» (երջանկության վայր)։ Ավելի հաճախ գործ էր ածվում Դեր-սեադեթ անունը, որն պահպանվեց մինչև վերջին ժամանակները՝ Քեմալիստական Թուրքիայի շրջանը։ Ներկայումս այդ անունները չեն գործածվում, ընդունված է* Istanbul *անը։*

ՍԻՒՐՀԻ, XVIII ԴԱՐ

Իբրև պատմագիր-տարեգիր հայտնի է Շեհրի-Սուրհի-էֆենդի անունով Փադիշահական Դիվանի՝ պետի՝ Խալիլ-Ֆեհմի-էֆենդիի որդին է։ Շնորհիվ իր բարձր ծագման և կրթութեան, վարել է մի շարք բարձրաստիճան պետական պաշտօններ։ Ի վերջո, իր հոր նման, վարել է փադիշահական Դիվանապետի պաշտօնը։ Տարեգիր է նշանակվել 1152 թ. (1739)։ Մահացել է 1183 թ. (1769)։*

Սուրհիի «Պատմութիւնը» գրված է իր և այլ երկու պատմադիր-տարեգիրների՝ Սամի և Շաքիր բեյերի կողմից։ Այդ պատճառով էլ պատմութիւնը կոչվում է «Թարիխի Սուրհի, Սամի վե Շաքիր» և ընդգրկում է 1143 թ. մինչև 1156 թ. դեպքերը (1730—1743)։

ՍԱՄԻ

*Սամին՝ Մուստաֆա բեյ կամ Արիա-էմինի Ջատե անուններով հայտնի թուրք բանաստեղծներից է, որը Սուլթան Մահմուդ I ժամանակ** տարեգիր է նշանակվել։ Մեռել է 1146 թ.։ Ունի տպագրված բանաստեղծութիւնների դիվան։ Նրա գրած փոքրածավալ «Պատմութիւնը» փոխանցվել է Սուրհիին։*

ՇԱՔԻՐ

Շաքիր բեյը կամ Հիւսեին բեյը տարեգիր է նշանակվել 1146 թ. (Սամիից հետո)։ Մեռել է 1150 թ.։ Շաքիր բեյի փոքրածավալ «Պատմութիւնը» նմանապես փոխանցվել է Սուրհիին։

---

* Շեհրի — բառացի նշանակում է քաղաքացի։ Այս տիտղոսը տրվում էր հատկապես Ստամբուլի բարձրաստիճան անձերին, ցույց տալու համար նրանց ազնվական ծագումը։

** Սուլթան Մահմուդ I, 1144—1160 թթ. (1731—1755)։

* * *

Ինչպես ասացինք, վերոհիշյալ երեք տարեգիրների պատմությունները միացված և տպագրված են երկու ստվար հատորում։ Սուբհին իր «Պատմության» առաջաբանում ասում է, որ ինքը Սամիի և Շաքիրի «Պատմությունները» կարգի է բերել և լրացրել։

Մեր ձեռքի տակ եղած «Թարիխի Սուբհի, Սամի վե Շաքիրը» տպագրվել է Ստամբուլում 1198 թ. (1783), թուրքական տպագրության արվեստի սկզբնական շրջանում (XVIII դարի երկրորդ կեսին) և այդ պատճառով էլ տեխնիկապես շատ պրիմիտիվ է։ Տարեգիրների լեզուն վերին աստիճանի խրթին է, պատմելու և շարադրելու ձևը բարդ, առանց վերնագրերի և բաժանումների։

«Թարիխի Սուբհի, Սամի վե Շաքիրից» թարգմանում ենք մի շարք նյութեր, մեծ մասամբ կրճատված ձևով։

* * *

Սուբհին իր «Պատմության» սկզբում, առանձին հոդվածով մանրամասնորեն խոսում է թուրքական տպագրության արվեստի երկրորդ անգամ նորից վերահաստատվելու և այդ գործում իր ունեցած ակտիվ մասնակցության մասին։

Սուբհին ասում է, թե մի շարք գրքեր տպագրելուց հետո, այդ գործի նախաձեռնողները՝ Իբրահիմ-էֆենդին և նրա գործակիցները երբ մահանում են, Թուրքիայում տպագրության գործը կանգ է առնում։ Այդ ժամանակ Օսմանյան կառավարությունը մի շարք կարևոր հարցերով զբաղված լինելով, այդ գործը մի այլ անձնավորության հանձնարարելու ժամանակ չունեցավ և «մինչև օրս էլ այդ աշխատանքը [տպագրության գործը] բարձիթող վիճակումն է գտնվում... Գրքերի սակավության և կորուստի պատճառով, ներկայումս գրքերը շատ թանկ արժեն...» Տպագրության գործը վերականգնելու համար ինքը՝ վակաա-նյուվիս Սուբհին և փադիշահական Դիվանի պետ՝ Ռաշիդ-Մուհամմեդ-էֆենդին դիմում են ներկայացնում սուլթանին և արտոնություն ու միջոցներ ստանալով, Ստամբուլում տպարան են հիմնում, վերականգնում բավական ժամանակից ի վեր ընդհատված տպագրական գործը։ «Թարիխի Սուբհի, Սամի վե Շաքիր»-ը տպագրվել է Սուբհիի մահվանից 15 տարի հետո։

«ԹԱՐԻԽԻ ՍԱՀԻԲՔՐԱՆ, ՍԱՄԻ ՎԱ ՇԱՔԻՐ»,

تاریخ صبحی، سامی و شاکر

1143 թվականի դեպքերից

Պատմագիր-տարեգիր Սուրհին գրում է պալատական խրթին և փարթամ ըեզվով. ածականների, տիտղոսների, բանաստեղծական մեջբերումների շռայլությունը հաճախ նսեմացնում են պատմական դեպքերի նշանակությունը։ «Թարիխի Սուրհիի» մեր ձեռքի տակ եղած հրատարակությունը պրիմիտիվ բնույթ ունի, կան բազմաթիվ մեջբերումներ դուրանից։ Նկատի առնելով այդ բոլոր հանգամանքները, մենք ավելորդ համարեցինք Սուրհիի մի շարք նյութերի նույնությամբ թարգմանությունը և հաճախ բավականացանք տալով միայն պատմագրի երկարապատում նյութերի բովանդակությունը։

Սուրհին իբրև պատմագիր շարունակում է իրենից առաջ տարեգիր եղող Ջելեբի-Զադեի պատմությունը 1143 թ.։ Սուրհիի պատմության ընդգրկած շրջանի սկզբնական տարիները բնորոշվում են իրանյան-օսմանյան պատերազմական գործողություններով, որոնք սկսել էին 1136 թ. և դադարել միայն ժամանակավորապես։ Այդ պատերազմական գործողությունների մասին տեղեկություններ տրված են Ջելեբի-Զադեի պատմության մեջ (տե՛ս «Ջելեբի-Զադեի պատմության» վերջին նյութերը)։

Այս շրջանում տեղի են ունեցել հետևյալ կարևոր դեպքերը.

Իրանը խառնակ դրության մեջ էր։ Սեֆեվի դինաստիայի վերջին շահը՝ Շահ-Հյուսեինը անկարող էր զսպել երկրում սկսած խռովությունները։ Կանդահարում Աֆղանստանի վալին՝ Միր-Վիսին անկախություն էր հայտարարել, սակայն սպանվել էր քրոջ որդու՝ Միր-Մահմուդի ձեռքով։ Միր-Մահմուդը, գրավելով Իսֆահանը [Սպահան], Շահ-Հյուսեինին բանտարկել էր։ Բայց հետո սա էլ խեղդվել էր իր քրոջ որդու՝ Միր-Էշրեֆի ձեռքով։

Ռուսները, Շահ-Հյուսեինի որդի Թահմասբին Իրանի գահը բարձրացնելու պատրվակով, գրավել էին Իրանի հյուսիսային մի քանի վիլայեթներ։ Օսմանցիները, ի պատասխան ռուսական առաջխաղացման, մտել էին Հայաստան ու Վրաստան. Դաղստանի ցեղերից սյունների դավանանքին պատկանողները Օսմանյան կառավարությանը հպատակություն էին ցույց տվել. նրանցից Դավուդ-խանը նշանակվել էր Շիրվանի խան։

Օսմանցիները, գրավելով Թիֆլիսը, Դադիաններից Շահնեվազին խան էին նշանակել։ Այդ միջոցին ռուսական բանակը գրավեց Դերբենդի և Բաքվի բերդերը։ Երկու կողմից հարաբերությունները այն աստիճան լարվեցին, որ պատերազմը հավանական էր համարվում։ Միայն Ստամբուլի ֆրանսիական դեսպանի ազդու միջամտությամբ կարելի եղավ պատերազմից խուսափել և երկու կողմից գրավված վայրերը պահպանելու պայմանով, 1137 թ. (1724) պայմանագիր կընքվեց։ Սակայն, որովհետև այս պայմանագիրը Իրանի կողմից չընդունվեց, օսմանյան բանակը առաջ շարժվեց և գրավեց Երևանը, Թավրիզը և Համադանը։ Շահ-Հյուսեինի որդին Թահմասբը, իր շահությունը ճանաչել տալու նպատակով, պատրաստ էր այդ գրավված վիլայեթները օսմանցիներին թողնելու։ Այն պահին, երբ այդ առթիվ բանակցություններ էին տարվում, Միր-Էշրեֆը հարձակվեց Օսմանյան

զանակի վրա և նրան պարտության մատնեց։ Միր-Էշրեֆի հաշտության առաջարկը մերժվեց։ Հաջորդ տարում Շահ-Թահմասբը խորասանում Նադիր-Կուլիի հետ միացած շարժվեց Միր-Էշրեֆի վրա և նրան պարտության մատնեց։ Թահմասբը վերադարձավ Սպահան և հետո իր դեսպանին Ստամբուլ ուղարկելով պահանջեցետ վերադարձնել գրավված վիլայեթները, ինքն էլ շարժվեց Թավրիզի վրա։

Ահա այսպիսի կարևոր դեպքերի ժամանակ Ստամբուլում «խռովություն է ծագում», («Ֆիթնե»[3] ըստ թուրք պատմագիրների), որի հետևանքով Սուլթան Ահմեդ III ստիպված է լինում գահից հրաժարվել և նրա փոխարեն գահ է բարձրանում Սուլթան-Մահմուդ I (1143—1730), որը շատ մեծ դժվարություններով կարողանում է ճնշել խռովությունը և ոչնչացնել նրա ղեկավարներին։ Ներքին կարգն ու կանոնը որոշ չափով վերականգնելուց հետո, Սուլթան Մահմուդը զբաղվում է նաև Իրանի հարցերով։ Սուլթան-Մահմուդի հրամանով Իրանի խաներից գերի ընկած Ռյուքաբդար-Հյուսեին-խանը մահվան է դատապարտվում, Իրանի պատգամավորները՝ Ռիզա-Կուլի-խանն ու Վելի-Մահմուդ-խանը կալանավորվում են և Սուլթանի գահակալությունը շնորհավորելու համար շահի կողմից ուղարկված Վելի-Մուհամմեդ խանը իր մարդկանց հետ միասին աքսորվում է Բոզջա կղզին[4] (1144 թ.)։

Այս բոլոր դեպքերը պատճառ եղան Իրանի հետ նոր պատերազմի բռնկմանը։ Պատերազմը հայտարարվեց 1144 թ. (1731)։ Շահ-Հյուսեինի որդին՝ Սեֆեվի Թահմասբ-Շահի բանակը Թավրիզից շարժվեց և Երևանը գրավելու նպատակով անցավ Արաքս գետը։ Բաղդատի վալի Ահմեդ-Փաշան նախապես կիրմանշահի և հետո Արդալանի վիլայեթները գրավում և Համադանի մոտ պարտության է մատնում Շահ-Հյուսեինին։ Այս պատերազմը շատ կատաղի է լինում. երկու կողմից էլ մեծ ուժեր և ռազմական միջոցներ են գործադրվում։ Պատերազմի վայրն է եղել Գուրիջանի դաշտը (գյուղը)։ Իրանյան բանակը խորտակվում է և շահը իր 500 մարդկանցով փախուստի է դիմում... Սպանվածների մեջ կային մի շարք նշանավոր խաներ։ Օսմանցիները մեծ քանակությամբ պատերազմական ավար են ձեռք բերում, գրավում նաև Համադանը։ Բաղդատի սերասքերը այս մեծ հաղթանակի համար փադիշահական ֆերմանով մեծ նվերներ է ստանում։ Թավրիզի օսմանյան սերասքերը գրավում է նաև Ուրմիան և Թավրիզը։ Օսմանցիները անխնա կողոպտում և թալանում են Իրանի քաղաքները։ Շահը ստիպված է լինում հաշտություն խնդրել։ Բանակցությունները տեղի են ունենում Բաղդատի վալի Ահմեդ-փաշայի և Իրանի պատգամավոր Մուհամմեդ-Ռիզա-Կուլի-խանի միջև։ Համաձայնություն կայանում է հետևյալ պայմաններով՝ Ադրբեջանի և Իրանի նախկին սահմանները պահպանվում են, Կովկասում՝ Գենջեի, Թիֆլիսի, Երևանի, Կախեթի, Քարթլի, Շիրվանի, Շամախիի և Դաղստանի էյալեթները, իրենց հարակից բոլոր մասերով պատկանում են Օսմանյան պետությանը, Թավրիզի, Արդալանի, Կիրմանշահի, Համադանի, Լորիստանի էյալեթները պատկանում են Իրանին։

Սակայն Ինջիլիի պալատում[5] պետության բոլոր դեկավարների մասնակցությամբ տեղի ունեցած մեջլիսում Սուլթան-Մահմուդը չի համաձայնում Թավրիզը Իրանին վերադարձնելու պայմանին, որով համաձայնագիրը մերժվում է։ Պատմագիր Սուրհին ամենամանր մանրամասնություններով նկարագրում է այդ մեծ խորհրդակցությունը (Մեջլիսը)։ Վերսկսում են պատերազմական գործողությունները... Փադիշահը, սադրազամին և Շեյխ-ուլ-Իսլամին պաշտոնազուրկ է անում

և Թավրիզի սերասքերը՝ Հեքիմ-Ջադէ-Ալի-փաշային ամրոզամ նշանակում։ Որոշ ժամանակ հետո Շահ-Թահմասբի պետական հավատարմատարը՝ Թահմասբ-Կուլի-խանը հարձակվում է Բաղդատի սահմանի՝ Դերնեի վրա։

Այդ ժամանակ հրապարակ է գալիս Նադիր-Շահը[6], որը Թահմասբ-խանին գահազուրկ է անում, նրա անչափահաս որդուն՝ Աբբաս-Միրզային գահ բարձրացնում և մեծ բանակով Բաղդատը պաշարում է։ Օսմանյան բանակը շարժվում է դեպի Բաղդատ. կռիվը խիստ կատաղի է լինում։ Սուբհիի վկայությամբ պարսիկների կորուստը հասնում է 30—40 հազար մարդու։ Հաղթանակի առթիվ Ստամբուլում մեծ հանդեսներ են կատարվում...

1146 թ. Էրզրումի վալին՝ Բուխալ-Օսման փաշան, Անադոլուի Բարձր-Սերդարի պաշտոնով, Նադիր-Շահի վրա է հարձակվում և նրան պարտության մատնում։ Նադիր-Շահը վիրավորված փախչում է դեպի Թավրիզ։ Օսմանյան բանակը մտնում է Թավրիզ և քաղաքը հիմնահատակ քանդում և ավերում... Այդ «մեծ հաղթանակի» համար Սուլթան-Մահմուդը «Ղազի»[7] տիտղոսն է ստանում...

Բաղդատի գրավումից հետո վալին՝ Ահմեդ փաշան, սերասքեր Օսման փաշային լավ վերաբերմունք ցույց չի տալիս, որի համար փաշան քիչ զորքով հետ է դառնում։ Նադիր-Շահը, վիրավոր դրության մեջ փաշայի հետևից հասնում է Գերքոքի մոտ, ջարդում օսմանյան բանակը և Օսման փաշային էլ նահատակում։ 1147 թ. Իրանի ճակատի սերասքեր նշանակված Քյոփրյուլու-Աբդուլլահ փաշան էլ Երևանի մոտ պարտության մատնվում և նահատակվում է։ Դրանից հետո Նադիր-Շահը գրավում է Գենջեն, Երևանը և Թիֆլիսը, վրաստանը ոտնատակ անում... Այս կերպով Իրանից գրավված բոլոր վայրերը Նադիր-Շահը նո՛ր է վերցնում...

Սրանք են «Սուբհիի պատմության» I հատորի մեզ հետաքրքրող գլխավոր հարցերը։

Այժմ թարգմանաբար տալիս ենք մի շարք հատվածներ [Սուբհիից]։

Բաղդատի վալի սիփահսալար Ահմեդ փաշայի՝ սերասքերի պաշտոնով Թավրիզի շրջանի, Գենջեի ու Երևանի պաշտպանության պաշտոնում վերահաստատվելը

Աջեմի շահի կողմից Երջանիկ Ասիթանե ուղարկված դեսպան-պատգամավոր Ռիզա-Կուլի խանի և նախապես ժամանած դեսպան Վելի-Մուհամմեդ-խանի հայտարարության և խնդրանքի հիման վրա ընդունված և երկու կողմից գրի առնված համաձայնագիրը շահին էր ուղարկված։ Վերջինս գրավոր կերպով հայտնում է, որ համաձայնագիրը ստացել և հաշտության պայմանագիրը ընդունել է։

---

* Սիփահսալար — սիփահ՝ զինվոր, սալար՝ պետ — հրամանատար. Սիփահսալարի կոչումը համապատասխանում էր սերասքերի կոչումին։

Մինչ այդ Օսմանյան երկրի պաշտպանությունը ապահովելու և շահի բանակի կողմից հարձակում տեղի ունենալու դեպքում այն ետ մղելու համար անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկվեցին։ Բաղդատի վալի և այդ շրջանի սիփահսալար Ահմեդ փաշան, ինչպես նաև Կարամանի վալի և Թավրիզի շրջանի սերասքեր Արիֆի-Ահմեդ փաշան վերահաստատվեցին իրենց պաշտոններում. միաժամանակ Ահմեդ փաշային գրավոր կերպով հայտնվեց, որ անհրաժեշտ է լուրջ միջոցներ ձեռք առնել Գենջեի և շրջակայքի պաշտպանության համար. Արիֆի-Ահմեդ փաշային հրամայվեց, որ իր մոտ ծառայող կանոնավոր զինվորներով Ղարաբաղում ձմեռի և Գենջեի, Երևանի և Թիֆլիսի բերդերը ռաֆըզիների հարձակումից պաշտպանելու համար անհրաժեշտ քանակությամբ զինվորներ պահի և ինքն էլ պաշտպանության համար դրսից շարժվելու պատրաստ լինի։ Այդ մասին տրված հրամանը գրի առնվեց։

(«Թարիխի Սուբհի, Սամի վե Շաքիր», հատ. I, էջ 13)։

Ռյուստեմբեյ Հյուսեին խանի մահապատիժը Ալայ պալատի առաջ

Աջեմի Շահը իր սատանայական զինվորներով, Բարձրյալ Աստուծո ապավինած, Երևանը գրավելու նպատակով՝ Թավրիզից առաջ շարժվեց։ Երևանի սերասքերը՝ Վեզիր-Ալի փաշան, կռվի և պատերազմի ընթացքում գերի ընկած, Սեֆեվիների պետության նշանավոր խաներից և Շահի կողմից Երևանի խանության թեկնածու նշանակված Ռյուքաբդար-Հյուսեին խանին, դրության մասին տեղեկություններ ձեռք բերելու համար, նախապես դեպի այդ կողմերը ուղարկված Աբդի փաշա-Ջադե-Ալի բեյի միջոցով երջանիկ Ասիթանե[8] ուղարկեց։ Մի քանի օրվա ընթացքում, Թշնամու նպատակն ու շարժումները պարզելու նպատակով նրան [Հյուսեին խանին] հարցաքննում են... հետո Փադիշահի ֆերմանով, Զիլգադե ամսի 18-րդ օրը, Ալայ պալատի առաջ մահվան դատապարտում։

Աջեմի դեսպաններով կալանավորումը և բանտարկությունը

Ռեյիս-ուլ-Քյութթաբ[9] Իսմայիլ-էֆենդին, Դեֆթեր-էմինի Մուհամմեդ էֆենդիի և Սադր-Ալիի-Մեքթուբջի Խալիլ-Օսման էֆենդիի հետ միասին, մի երկու անգամ խորհրդակցություն ունեցավ հաշտության և խաղաղության մասին բավական ժամանակից ի վեր

---

* Ռյուքաբդար — մեծ մարդկանց ձիու սանձանդակը բռնող աղան։

Երջանիկ Ասիթանեում գտնվող Աջեմի դեսպանները Ռիզա-Կուլի խանի և Վելի-Մուհամմեդ խանի հետ։ Նրանք [խաները] անհիմն կերպով կարծում էին, որ դժբախտության մատնված շահը կկարողանա իր պետության մեջ հաջողություններ ձեռք բերել։ Նախապես, Ռիզա-Կուլի խանը, իր ունեցած լայն արտոնություններով ընդունել էր հաշտության պայմանները և Վելի-Մուհամմեդ խանի հետ միասին մուրհակ ներկայացնելուց հետո, դրժել էր իր խոստումն ու պայմանները, անիմաստ խոսքերով ու անհիմն պայմաններով այնպիսի առաջարկներ էր ներկայացրել, որոնք ոչ մի կերպ չէին կարող ընդունվել Օսմանյան կառավարության կողմից։ Այս մասին մեծ վեզիրների և բարձր ուլեմաների միջև տեղի ունեցած խորհրդակցությունից հետո, վերոհիշյալներին [խաներին] ուղարկեցին Բաղդատի սերասքեր Ահմեդ փաշայի մոտ։ Նկատի ունենալով, որ Ահմեդ փաշան լրիվ կերպով իրազեկ է Աջեմի «մոլորյալ» շահի[10] ուժեղությանը կամ թուլությանը և նրա նպատակներին, նրան [փաշային] առաջարկվեց, որ բանակցություններ վարի վերոհիշյալ խաների հետ՝ Օսմանյան պետության համար նպաստավոր պայմաններով։ Սիփահիների Աղա Մուստաֆա բեյին [դեսպանների] հետ միասին սերասքերի մոտ ուղարկելու համար ֆերման տրվեց և պատգամավորների ճանապարհածախսը և այլ կարիքները կառավարության կողմից ապահովվեցին։ Նվիրական Ռամազան ամսի սկզբին նրանք Սկյուդարից մեկնեցին դեպի Բաղդատ։ Սակայն դեռ Դիարբեքիր չհասած, լուր ստացվեց, որ մոլորյալ շահը Թավրիզից առաջ է շարժվել, Երևանը գրավելու նպատակով անցել է Արաքս գետը և հարձակվելով Օսմանյան պետության սահմանների վրա, թշնամական գործողություններ է սկսել։ Ջնայած այդ բոլորին, շահը, Նորին Վսեմություն փադիշահի գահակալությունը շնորհավորելու համար պատգամավորություն ուղարկելու պատրվակով, իր հիմար կարծիքով և խարդախ մտքերով, Օսմանյան պետության վեքիլներին խաբելու և իր հոռի նպատակը թաքցնելու նպատակով, արտաքուստ ուզում էր ցույց տալ, որ ինքը զբաղված է սահմանի գործերը կարգավորելով։ Սատանայական շահի իրական նպատակը պարզ լինելով, գահակալության շնորհավորանքի պատրվակով ուղարկված պատգամավորները Վելի-Մուհամմեդ-Կուլի խանը իր մի քանի պատվավոր մարդկանց հետ միասին կալանավորվեցին ու ուղարկվեցին Բողջա կղզին։ Իսկ երջանիկ Ասիթանեից մեկնած պատգամավորներին էլ կալանավորեցին Մարդինի բանտում, այդ մասին տրված փադիշահական ֆերմանի համաձայն։

(«Թարիխի Սուրհի», հատ. I, էջ 24)։

1144 թ. (1731) դեպքերից

Աշխարհակալ Վեհափառ փադիշահի կողմից Շիրվանի վիլայեթի իշխողին՝ Սեմերխայ խանին սամույրե խալաթ և կայսերական նվերներ ուղարկելը

Դաղստանի վիլայեթում ապրող իսլամական ազնիվ ցեղերի և հավատացյալ ժողովրդի իշխողը՝ ազնվական ծագումով Սեմերխայ խանը, իր կրոնական եռանդի և բնածին նկարագրի բերումով, չէր կարողանում տանել անկրոն Շահի կողմից սրանից առաջ ուղարկված և բավական ժամանակից ի վեր Շամախի քաղաքում բնակվող Աջեմի դեսպանի անվայել ընթացքը...

...Սեմերխայ խանը իր մարդկանց գլուխն անցած՝ սկսում է Աջեմների նկատմամբ թշնամական քայլեր անել. նա որոշված տուրքերը Գենջեի պաշտպան՝ Վեզիր-Իբրահիմ փաշային ուղարկում և հայտնում է, որ ինքը պատրաստ է Օսմանյան պետության սահմանները պաշտպանել: Վեզիրը նրան շնորհակալություն է հայտնում և այդ մասին զեկույցում է Նորին Վսեմություն փադիշահին: Փադիշահի կողմից Շիրվանի էյալեթը իր բոլոր եկամուտներով, «յուր թլուքի և օջաքլըքի»[11] կարգով, նրան է տալիս [Սեմիրխայ խանին] և շնորհավորում՝ խանության բարձր աստիճանով: Կայսերական հատուկ գրությամբ խանին սամույրե խալաթ է ուղարկում: Հետո Երևանի սերասքեր Վեզիր-Ալի փաշան դիմում է փադիշահին և հայտնում, որ վերոհիշյալ խանը իր 30 հազար կտրիճներով հարձակվել է Աջեմների վրա և կարողացել է նրանց կատարած ոճրագործությունները զսպել և չարագործներին պատժել. հետևաբար խնդրում է փադիշահից զրամական միջոցներով օգնել, խանին Փադիշահի կարգադրությամբ վերոհիշյալ սերասքերի միջոցով Սեմերխայ խանին 150 քիսե—30 հազար ոսկի է ուղարկվում...

(«Թարիխի Սուրհի», հատ I, էջ 24—25):

Կաճաճց անվայել հագուստների արգելումը և պոռնիկների մահապատիժը

Սրանից առաջ պատիժների գործադրության մեջ առաջացած թուլության և կառավարական օրենքների և կանոնների անհաստատ լինելու պատճառով, բարձր դասի մի շարք ցանկասերներ և կանայք իրենց անվայել բարքի համար անպատիժ էին մնացել և անարգել սկսել էին անպարկեշտ կենցաղ վարել: Այսպես, Ստամբուլ քաղաքի

կանացից շատերը, բարձրաստիճան ավագանուն հատուկ քառակուսի և գեղազարդ փաթթոցներից («դեսթար») ավելի երկար «եմենիներ»* էին կապում իրենց գլխարկներին և ֆեսին, երեսի նուրբ բողի և շղարշի տակից նրանց դեմքը երևում էր. երկու արշին երկարությամբ անդուս օձիքով և մուշտակավոր եղերքով կերպասից նեղ ֆերաջեններ էին հագնում: [Նրանք] փողոցներում, շուկաներում և այլ բազմամարդ վայրերում և զբոսավայրերում, իրենց սովորական աշխատանքով զբաղված բազմաթիվ մուսուլմանների, զվխելի սատանաների նման, մոլորեցնում և խաբելով իրենց անձնական կրքին էին ենթարկում: Բացի այդ, ժողովրդի մեջ մի շարք անկարգությունների առաջացման պատճառ էին դառնում: Այդպիսի տաբոռինակ և անպատշաճ հագուստով կանանց տնից դուրս գալը արգելելու համար Հրաման և Ֆերման տրվեց, որից հետո «Շեյթան-էմնիեսի» անունով հայտնի դարձած ստոր արարած պոռնիկը Բաղչե-Կափույում**, Սերգե-Իաքելիսի անուն վայրում, ժողովրդի աչքի առաջ, խեղդամահ արվեց և դեռ կիսամեռ դրության մեջ ծուռ նետվեց: Բացի այդ, մի քանի հայտնի և խոովարար «միջնորդներ» և անվանի պոռնիկներ նմանապես մահվան դատապարտվեցին և ոչնչացվեցին***:

(«Թարիխի-Սուբհի», հատ. I, էջ 34):

* * *

«Ուրմիայի բերդի գրավումը» վերնագրի տակ պատմագիր Սուբհին խիստ մանրամասնորեն նկարագրում է այն կռիվները, որոնք տեղի ունեցան Ուրմիայի դաշտում Ադրբեջանի մայրաքաղաք Թավրիզը գրավելու համար ուղարկված օսմանյան բանակի և պարսիկների միջև: Օսմանցիները ոչնչացնում են պարսկական բանակը և հետո պաշարում Ուրմիայի բերդը, որի շուրջը տեղի են ունենում խիստ կատաղի մարտեր: Բերդի պաշարումը շատ երկար է տևում, բայց ի վերջո գրավվում է օսմանցիների կողմից: Օսմանյան բանակը պատրաստվում է շարժվելու Թավրիզի վրա: Թավրիզն էլ գրավվում է: Պարսիկները առաջարկում են հաշտության կնքել... Այդ հաշտության պայմանագրի մասին խոսել ենք վերևի «ծանոթության» մեջ: Պատմագիր Սուբհին ամբողջ էջեր է հատկացնում այդ հաշտության պայմանագրի առթիվ Փադիշահի ներկայությամբ տեղի ունեցած մեծ խորհրդակցության նկարագրությանը, հիշելով նրա մասնակիցների բոլոր ելույթները մանրամասնորեն: Ինչպես վերևում հիշվեց, այդ խորհրդակցությունը անհետևանք մնաց:

---

* Եմենի — նուրբ և գունագույն շղարշ, որը կանայք իրենց գլխին էին կապում կամ գործ ածում իբրև թաշկինակ:

** Բաղչե-կափու — Ստամբուլում թաղամաս է, մեծ շուկայով:

*** Այս հատվածը թարգմանում ենք իբրև բնորոշ երևույթ այդ ժամանակի Ստամբուլի համար:

Մեծ վեզիր հաճգուցյալ Իբրահիմ փաշայից, Կափուդան-Մուստաֆա փաշայից, Մուհամմեդ-Քեխուդայից և ուրիշներից գրավված փողի գումարը և նրանց բողած իրերի և կալվածքների արժեքը

Թուրքիայում մահացած վեզիրների և այլ բարձրաստիճան պետական անձերի ամբողջ հարստությունը, ընդունված կարգով, արքունիքն էր գրավում։ Սուբհին վերտհիշյալ մեծ վերնագրով արձանագրում է վերև հիշված անձանց հարստության գրավումը արքունիքի կողմից։

...Նախկին սադրազամ՝ հանգուցյալ Իբրահիմ փաշայից գրավվեց 2400 քիսե և 61 դուրուշ, Կափուդան-Մուստաֆա փաշայից՝ 23309 քիսե և 336 ½ դուրուշ, Իբրահիմ փաշայի մարդկանցից և ավազակներից առնված 1327 քիսե և 192 ½ դուրուշը և Աջեմ-օղլուներից գրավված ապրանքները կայսերական ներքին պալատի («էնդերուն[12]») դանձարանին հանձնվեցին։ Բացի Արտաքին դանձարանի գրաված 1509 քիսե և 85 ½ դուրուշից, կայսերական արքունիքում մինչև 44 թվականի [1144 թ.] Ռամազան ամսի վերջը ընդամենը վաճառված ապրանքների արժեքից ստացվեց 1013 քիսե և 280 դուրուշ։ Որով, վերոհիշյալ բոլոր կետերով ստացվեց 29,529 քիսե և 340 դուրուշի գումար։

Թահմասբ-Կուլի խանին պատժելու համար խորհրդակցական Մեջլիսի գումարումը

Իրանի շահ Թահմասբ-Շահի պետության վատահելի անձնավորությունը՝ Թահմասի-Կուլի խանը իր կըզըլբաշ զինվորներով հարձակվել էր Բաղդատի վրա և անապատելի կերպով գրավել Դէրննեն։ Սեիհահալար Ահմեդ փաշան այդ մասին հայտնեց Ստամբուլ։ Փադիշահի մոտ տեղի ունեցավ մեծ խորհրդակցություն, որից հետո սկսվեց ռազմական ուժերի զորահավաքը՝ ամենալայն չափերով։

Պատմագիր Սուբհին ամենայն մանրամասնությամբ հիշում է գրեթե բովանդակ Օսմանյան պետության մեջ բոլոր տեսակի զինվորական մասերի զորահավաքը... հիշում է մեկ առ մեկ բոլոր էյալեթների վեհամեթ և թիմարների զինվորների զորահավաքը... Ի միջի այլոց, Թիֆլիսի էյալեթի արձանագրված 125 զեամեթի և թիմարի տերերի զինվորներին, 53 գյուղերի և սանջակների վեհամեթներին... Ջըլդրի էյալեթում և կազաներում (գավառ) ապրող և հյուր, ուլուֆեով կամ առանց ուլուֆեի ենիչերիներին և կուլ-օղլիներին[13]։

(«Թարիխի Սուբհի», հատ. I, էջ 50).

1146 և 1147 թթ. դեպքերից

Թավրիզի բերդի ավերումը.

Իրանի [Ճակատի] սիփահսալար Մեծ-վեզիր-Օսման փաշան Աջեմների պարտությունից հետո իր տրամադրության տակ գտնվող վեզիրներից Թեմուր-Մուհամմեդ փաշայի և էյալեթի զրդռական աշիրեթներից ու ցեղերից 5000-ից ավելի քաջամարտիկ զինվորներով հետապնդեց Թահմասբ-Կուլի խանին, պատահած փախստականներին սպանելով կամ գերի վերցնելով, հասավ Թավրիզի բերդը։ Բերդում գտնվողները դիմադրություն ցույց տալու անկարող լինելով [օսմանցիները] առանց դժվարության բերդը գրավեցին։ Սերասքերը և մյուս փառապանծ վեզիրները, նկատի առնելով, որ հիշյալ բերդը [Թավրիզը] անպետք է Օսմանյան պետության համար, նրա ավերումը անհրաժեշտ համարեցին և այդ մասին դիմեցին Նորին Վսեմության [փադիշահին]։ Փադիշահական ֆերմանը հատուկ սուրհանդակներով ուղարկվեց, որով Երևանի պաշտպան Վեզիր-Իբրահիմ փաշային հանձնարարվում էր Թավրիզը քանդել և ավերել, բոլոր շենքերից, տաճիքներից և պատերից հետք անգամ չթողնելու պայմանով։

(«Թարիխի-Սուրհի», հատ. I, էջ 57)։

* * *

Հետո պատմագիր Սուրհին մեծադղորդ խոսքերով ու ածականների շռայլությամբ հիշում է փադիշահի «Ղազի» տիտղոսը ստանալու արարողությունները՝ Թավրիզում բարը-բարի վրա չթողնելու և բաղաքը հիմնահատակ ավերելու «Մեծ հաղթանակի» կապակցությամբ։

Դրան հաջորդում է կերբոբում օսմանցիների՝ Թոփալ-Օսման փաշայի պարտության և փաշայի նահատակության լուրը, Երևանի մոտ Քյոփրյուլու-Աբդուլլահ փաշայի պարտությունը և նահատակումը, Գենջեի, Թիֆլիսի և Երևանի գրավումը Աջեմների կողմից։

«ԹԱՐԻԽԻ ՍՈՒԲՀԻ, ՍԱՄԻ ՎԵ ՇԱՔԻՐ»

ՀԱՏՈՐ II

Սուբհիի «Պատմության» II հատորը ընդգրկում է 1148—1156 թթ. դեպքերը։ Այդ դեպքերից մեզ հետաքրքրող հարցերը կարելի է ամփոփել հետևյալ կետերում։

Նադիր-Շահը իր մեծ հաջողություններից հետո, Մուղանում հրավիրում է ընդհանուր Մեջլիս և ստանում այդ Մեջլիսի համաձայնությունը Սեֆեվիների ար-

բայական գերդաստանին շահության իրավունքից զրկելու և շիա դավանանքից հրաժարվելու մասին։ Իսկ 1148 թ. (1735) Նադիրը իրեն շահ է հայտարարում։ Նույն թվականին, Նադիրի դիմումի վրա հաշտության պայմանների բանակցության համար Իրան է մեկնում Գենջ-Ալի փաշան և Մուղանում տեսակցում Նադիր-Շահի հետ։ Գենջ-Ալի փաշան հայտնում է, որ Օսմանյան կառավարությունը սահմանների հարցին իբրև հիմք առաջարկում է Սուլթան-Մուրադ IV ժամանակ Սեֆեվիների հետ կնքված խաղաղության պայմանագիրը, որի համար բանակցություններ տեղի պիտի ունենան Ստամբուլում։ Կրոնական-դավանական և հաջիների ուխտագնացության հարցերի շուրջը, նախնական կարգով, ընդունվում են որոշ պայմաններ, որոնցից ամենակարևորն է «Ջաֆերի դավանանքի՝ իբրև հինգերորդ դավանանք» ընդունելը։ Իրանի պատգամավորությունը մեկնում է Ստամբուլ։ Ուլեմաններից հատուկ մի հանձնաժողով է հրավիրվում դավանական հարցերը քննելու համար։ Ջաֆերի դավանանքի հարցը մերժվում է, իսկ մյուս պայմանները որոշ փոփոխության են ենթարկվում։ 1149 թ. հատուկ փաղիշահական գրությամբ Նադիրի շահությունը ճանաչվում է և կրոնական-դավանական հարցերի մասին էլ համաձայնության հիմք ստեղծվում։ Թուրք պատմագիրները գովաբանում են այդ համաձայնությունը, իբրև «երկու մեծ իսլամական պետությունների դավանական կռվից հրաժարվելու ճիշտ քաղաքականություն», մի կռիվ, որ դարեր է տևել և անչափ արյունահեղությունների և անասհման ավերածությունների պատճառ հանդիսացել...

Նադիր-Շահի այդ զիջողական քաղաքականությունը պատմագիրները բացատրում են նրա աշխարհակալական ցանկություններով և դեպի Հնդկաստան ունեցած ձգտումով։ Արդարև, Նադիր-Շահը իր բանակատեղը Օսմանյան պետության սահմաններից փոխադրում է դեպի Հնդկաստանի սահմանը։

* * *

Սուբհիի պատմության II հատորում շատ կարևոր տեղ են բռնում այն դեպքերը, որոնք կապված են Ռուսաստանի հետ։

Սուբհին ասում է, որ 1123 թ. (1711), սկսած, Ռուսաստանի հետ կնքված Փրուտի դաշնագրից հետո, երկու պետությունների միջև խաղաղության պայմանները պահպանվել էին։ Սակայն 1134 թ. (1721) սկսած ռուսների քաղաքականությունը փոխվում է։ Ռուսները ձգտում էին Հյուսիսային Կովկասում ապրող չերքես և նողայ ցեղերը իրենց հովանավորության տակն առնել։ Օսմանցիները Ղրիմի թաթարական բանակին առաջարկում են օգնել օսմանյան բանակին՝ Իրանի դեմ ելված կռվում (Դերբոզում Օսման փաշայի պարտությունից հետո)։ Կալղայխանը բանակով շարժվում է և Հյուս. Կովկասում Կալմըքի և Կաբարթայի պարագլուխներին իրեն հպատակեցնում։ Ռուսների հետ ունեցած ընդհարման մեջ նրանց պարտության է մատնում։ Սակայն Ստամբուլից Կալղայ-խանին առաջարկում են ետ դառնալ, քանի որ Օսմանյան կառավարությունը չէր փափագում պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ, չնայած որ ռուսները գրավել էին Ուկրաինան և Պոդոլիան, բերդեր էին կառուցել Օսմանյան երկրի սահմանների մոտ և Օսմանյան պետական սահմանը Շիրվանը համարելով, չէին ճանաչում Դաղստանի ժողովուրդների վրա Օսմանյան պետության իրավունքները։ Բացի այդ, կապ հաստատելով Իրանի հետ, Վրաստանի խաներից՝ Վախտանգի որդու Շահնավարի միջոցով

Վրաստանում խռովություններ էին առաջացնում և այլն։ Զրավականանալով վերոհիշյալ քայլերով, ռուսները 1148 թ. հարձակվեցին Էոզի և Ազաք բերդերի վրա։ Վերջապես 1149 թ. (1736—1737) Ռուսաստանին պատերազմ է հայտարարվում։

Պատմագիր Սուրհին այս պատերազմական գործողությունները նկարագրում է ամենամեծ մանրամասնություններով։ Նրա ասելով, ռուսների գլխավոր հարվածը ուղղված էր Ազաքի բերդի դեմ «Փրուտի խայտառակ պարտության արատը մաքրելու համար»։ Ռուսները անակնկալ կերպով հարձակվում են Ազաքի վրա և գրավում այդ կարևոր բերդը, մտնում Ղրիմ, նրա մայրաքաղաքը՝ Բաղչե-Սարայ, Քալանում և այրում նրա պալատները։ Օսմանցիները այս պատերազմին բոլորովին անպատրաստ էին։ Պատմագիրների ասելով, Սադրազամը՝ «սիլահտարությունից մի անգամից սադրազամության բարձրացած անփորձ և պետության վիճակից անտեղյակ» էլսեյտ-Մուհամմեդ փաշան, անկարող էր պետության գործերը ղեկավարել՝ այդ խիստ դժվարին պայմաններում, ռուսական պատերազմին ավելացավ նաև Ավստրիականը... Մոտ չորս տարի տևող այդ պատերազմները ավարտվեցին 1152 թ., (1739) Բելգրադի խաղաղության դաշնագրով՝ Թուրքիայի—Ռուսաստանի և Թուրքիայի-Ավստրիայի միջև։ Բելգրադի խաղաղության պայմանագրից կարևոր ենք համարում հիշել միայն մի քանի կետեր։ Ավստրիայի (Թուրք պատմագիրները «Նեմսե» են անվանում) հետ կնքված պայմանագրում Օսմանյան կայսրությունը («իմփերաթորլուքը») որոշվում և սահմանվում է հետևյալ կերպ. «...Նվիրական Մեքքեի և լուսավոր Մեդինեի, նվիրական Երուսաղեմի («Կուտսի-շերիֆ»), երեք մեծ և նվիրական քաղաքների՝ Սառամբուլի, Էդիրնեի և Բրուսայի... Շամի, Բաղդադի, Հալեպի, Արաբական և Աջեմի Իրաքի, Բասրայի, Լհասայի, Դիլեմի, Ռակայի, Մուսուլի, Շեհրի-Զորի, Դիարբեքիրի, Զյուլկադրիյեի, Վրաստանի (Գյուրջիստանի) և Էրզրումի, Սվազի, Ադանայի, Կարամանի, Վանի վիլայեթների, Մաղրեբի, Հաբեշի, Թունիսի, Թարաբլուսի-Շամի, Կիպրոսի, Հռոդոսի, Կրետեի, Մորայի, Աք-Դենիզի (Միջերկրական) և Սև ծովի կղզիների ու ծովեզերքների, Անադոլուի երկրի, Ռումիլիի երկրի և մանավորապես թաթար երկրների, Կըփչաքի-դաշտի և թաթար էյալեթին վերաբերող շրջաններում գտնվող բոլոր մղեակների և Քաֆեի վիլայեթի ու նրա շուրջը գտնվող բոլոր օյմաքների ու կրկված վայրերի, Բոսնիայի երկրի, Սերբիական կառավարության և նրանում գտնվող բերդերի, ամրոցների ու քաղաքների, Արնաուդլուքի (Ալբանիա) և ամբողջ էֆլաքի ու Բողդանի... Բացի այդ, հիշատակության կարիք չեղող բազմաթիվ քաղաքների և վայրերի Աշխարհակալ Փադիշահը...»։

Ռուսաստանի հետ կնքված հաշտության դաշնագրի 15 հոդվածներից հիշում ենք մի քանի հոդվածներ.

1. Ազաք [Ազով] բերդը ամբողջապես պիտի քանդվի, 1113 թ. (1701) որոշված սահմաններով երկու կողմի տիրապետությունից դուրս պիտի մնա և երկու պետության միջև, ամայի տարածություն պիտի լինի։ Դրա փոխարեն ռուսները Թեն [Դոն] գետի վրա Չերկասքի կողում, օսմանցիները Կուբանի սահմանի Ազաքի ուղղությամբ մեկական բերդ կառուցելու իրավունք են ստանում. ռուսները [իրավունք ունեն] Թեյդան բերդը վերաշինել և Ազաքի ու Սև ծովերում նավեր ունենալ։

2. Մեծ ու Փոքր Կաբարթայ կոչված Կովկասյան էյալեթները ազատ պիտի մնան, այսինքն ո՛չ Օսմանյան պետությանը և ո՛չ էլ Ռուսաստանին չպիտի հպատակվեն։

3. Ռուսական վարդապետներին (հոգևորական) Երուսաղեմ և այլ ուխտավայրեր գնալու հնարավորություն է տրվում. նրանցից ջիզիյեի[15] տուրք չպիտի առնվի։

4. Մոսկովի ցարուհուն «իմփերաթոր» տիտղոսը պիտի տրվի... Սուբհին նշում է, որ այդ դաշնագրի կնքման գործում կարևոր դեր կատարեց Ստամբուլի ֆրանսիական դեսպանը՝ Վիլ-Նովին, որը հատուկ փադիշահական հարգանքի արժանացավ։ Դեսպանը կարողացավ իր երկրի՝ Ֆրանսիայի առևտրական և այլ շահերը ապահովող հատուկ պայմանագիր կնքել Օսմանյան կառավարության հետ։

Հետո պատմագիր Սուբհին վերադառնում է Իրանի դեպքերին։

Այդ ժամանակ Ստամբուլ է գալիս Նադիր-Շահի պատգամավորությունը հաշտության պայմանագրի մասին բանակցություն վարելու համար։ Այդ պատգամավորությունը կազմված էր 3000 մարդուց՝ Հաջի-խանի ղեկավարությամբ և իր հետ էր բերել 10 փիղ և շատ մեծ քանակությամբ ամենաթանկագին նվերներ։ Տարեգրի ասելով, «Նադիր-Շահի նմանը չտեսնված շքեղությամբ և փարթամությամբ պատգամավորության ուղարկումը կասկած արթնացրեց Օսմանյան կառավարության ղեկավար շրջաններում»։ Նույնքան շքեղությամբ և մեծ հանդիսավորությամբ ընդունվեց Իրանի պատգամավորությունը Ճանապարհին և Ստամբուլում։ Տարեգիր Սուբհին ամբողջ էջեր է հատկացնում նկարագրելու համար Իրանի պատգամավորության ընդունելությունը սադրազամի և փադիշահի կողմից։ Իբր թե պատգամավորության գլխավորը՝ Հաջի-խանը, իրեն ցույց տրված շքեղ հարգանքի և մասնավորապես փադիշահի վսեմության և շքեղության ազդեցության տակ, անկարող է լինում շահի կողմից իրեն տրված հանձնարարությունը փադիշահին հայտնել և «Շահըմ» (իմ Շահը) բառից ավելի ոչինչ չի կարողացել արտասանել...

Նադիր-Շահի իսկական նպատակի մասին կասկածները ավելի ուժեղացան այն բանից հետո, երբ պատգամավորությունը կոնկրետ առաջարկներ և նախատես կայացած համաձայնությունը հաստատող գրություն չներկայացրեց։ Այնուամենայնիվ Օսմանյան կառավարությունը հատուկ պատգամավորություն ուղարկեց Իրան։ Շուտով լուր ստացվեց, որ Նադիր-Շահը, դժգոհ այն բանից, որ Ջաֆերի դավանանքի հարցը կրկին մերժվում է Օսմանյան կառավարության կողմից, սկսել է ռազմական պատրաստություններ՝ Երևանի և Գենջեի շրջաններում, միաժամանակ բոնություններ է գործադրում Դաղստանի աշիրեթներից լեզգիների նկատմամբ։

Նադիր-Շահը մի քանի պայմաններ առաջարկեց, հայտնելով, որ դրանց մերժման դեպքում պատերազմ պիտի հայտարարի։ Այդ պայմանները հետևյալներն էին՝ ազատ առևտրի արտոնություն տալ, ճանաչել Ջաֆերի դավանանքը, Նվիրական Մեքկում Ջաֆերիներին նամազի համար հատուկ տեղ հատկացնել և այլն։

Սադրազամ Ահմեդ փաշայի հրավիրած Մեջլիսը որոշեց պատերազմ հայտարարել Իրանին։ Բայց այդ պահին Ստամբուլում նորից անկարգություններ ծայր առան։ Կառավարությունը խիստ միջոցներ ձեռք առավ։

Նադիր-Շահը սկսեց լուրջ պատերազմական գործողություններ, շարժվեց դեպի Իրաք, Քերքուքը գրավեց և Բաղդադը պաշարեց։ Օսմանյան կառավարությունը Նադիր-Շահին «քաղաքական հարված» տալու նպատակով, իրեն՝ Իրանի գահին ժառանգ հայտարարող Հյուսեին-Շահի որդի Սեֆի-Միրզային Իրանի շահ հայտարարեց և նրան ամեն կերպ օժանդակություններ տվեց։ Օսմանցիները պատրաստվեցին բանակ ուղարկել Իրաք, իսկ Նադիր-Շահը 250 թնդանոթով, 30 խում-

բարա-Հավան և այլ ռազմամթերքի հսկայական պաշարով շարժվից Մուսուլի բանակի մի մասն էլ ուղարկեց Բասրա։ Սակայն Մուսուլի պաշարումը անհնտեանք մնաց, Նադիր-Շահը մեծ կորուստներով ետ բաշվեց։ Նադիրը նորից կողմնակից էր հաշտության կնքելու՝ Ջաֆերի դավանանքը ընդունվելու պայմանով։ Իրանի գահի թեկնածու՝ Սեֆի-Միրզան մեծ բանակով Էրզրումից շարժվեց դեպի Իրանի սահմանը։ Նադիր-Շահը շարժվեց դեպի Էրզրում և մոտ երկու ամիս զբաղվեց Կարսի շրջակայքում, բայց չկարողացավ Կարսը գրավել։ 1158 թ. նրա հարձակումը ետ մղվեց օսմանցիների կողմից։ Սերասքեր Եգեն-Մուհամմեդ փաշան, Կարսի և Երևանի միջև պաշարեց Նադիր-Շահի բանակը, բայց ծանր կերպով հիվանդացավ, օսմանյան բանակում Լեվենդի զորամասը[16] ապստամբություն բարձրացրեց և մի գիշեր նրանք՝ «Աչիմները հարձակվեցին» գոչելով՝ բանակում շփոթություն առաջացրին։ Նադիր-Շահը այս առիթից օգտվելով հարձակվեց օսմանցիների վրա և նրանց բանակը խորտակեց։ Եգեն-Մուհամմեդ փաշան վշտից մեռավ։ Նոր սերասքեր նշանակված Հեքիմ-Ջադե-Ալի փաշան արագ կերպով նոր ռազմական ուժեր հավաքելու ձեռնարկեց։ Պատմագրի ասելով, Նադիր-Շահը Իրանում իր նախկին հեղինակությունը կորցնելու վրա էր։ Նա, հաշվի առնելով, որ պատերազմի շարունակությունը նրան նոր դժվարությունների առաջ կարող է կազնեցնել, հրաժարվեց Ջաֆերի դավանանքի մասին իր առաջարկից և նորից հաշտության սրամադրություն ցույց տվեց։ Օսմանցիներն էլ կողմնակից էին խաղաղության դաշնագիր կնքելուն։

1159 թ. (1746) Կերդենում* խաղաղության դաշնագիր կնքվեց Իրանի և Թուրքիայի միջև՝ Սուլթան-Մուրադ IV-ի ժամանակ գոյություն ունեցող սահմանները իրեն հիմք ընդունելու պայմանով։

Ինչպես հայտնի է, Իրանի այդ դաժան և արկածախնդիր Շահը, հաջորդ տարին 1160 թ. (1747) իր վրանում սպանվեց երկու սպանների ձեռքով։

Նադիր-Շահից հետո Իրանի գահը անցավ նրա քրոջ որդի Ալի-Կուլի-խանին, որը գահակալելուց հետո ստացավ Ադիլ-Շահ անունը։ Սա ոչնչացրեց Նադիր-Շահի սերունդը ամբողջությամբ։ Սակայն Իրանի գահին նոր ժառանգներ էլ երևան եկան։ «Երկիրը ներքին խռովությունների կրակի մեջ այրվում էր»։ Այդ խռովությունների հետևանքով Կաջար ցեղի պետը՝ Մուհամմեդ-Հյուսեին խանը րնկճեց իր հակառակորդներին և հիմնեց Իրանի արքայական նոր դինաստիա՝ Կաջարների դինաստիան։

Թուրք պատմագիրները շեշտում են, որ չնայած Իրանի թուլությանը, Օսմանյան կառավարությունը բոլորովին չմիջամտեց Իրանի ներքին գործերին։

Տարեգիր Սուբհին, ինչպես վերև հիշել ենք, իր «Պատմությունը» հասցնում է մինչև 1156 թ., որից հետո տարեգիր է եղել Շեհրի-Իզզի-Էֆենդին[17] (1157—1165)։

1148 թվականի դեպքերից

Մոսկով ցեղի ընթացքը, նրա շարժումների հիշատակումն ու մանրամասնությունները

Այս վերնագրով հատվածում տարեգիր Սուբհին մանրամասնորեն խոսում է 1123 թ. հետո օսմանցիների՝ Մոսկովների հետ ունեցած լավ հարաբերությունների մասին, երկու կողմից խաղաղության պայմանների պահպանման մասին։ Սակայն,

* Կերդեն՝ Կազվինի ու Թեհրանի միջև քաղաք։

ասում է պատմագիրը, ավելի ուշ, Մոսկովների ցարուհին իր երկրի սահմանները ընդարձակելու նպատակով, խախտում է հաշտության պայմանները։ Այսպես՝ Իրանի պաշտպանության անվան տակ, միջամտում է նրա ներքին գործերին, Հյուսիսային Կովկասում միջամտում չերքեզ ցեղի գործերին, մեծ բանակով գրավում Ուկրաինան և Պոդոլիան, Օսմանյան պետության սահմանների մոտ բերդեր է կառուցում ու իր «ցեղից» բերդակալներ նշանակում, Ազաքից բիչ հեռու, Չերքեզկերման բերդը ավերում, նավեր կառուցում, իսլամական կրոնին պատկանող և Օսմանյան պետության հովանավորությունը ընդունած դաղստանցիներին և Շամխալի իսլամներին՝ «նախապես իմ հպատակներն են եղել» ասելով, որոշ գումարներ է հատկացնում իբրև «ոռճիկ» («դօնլութ»)։ Սերխա-յ-խանի իշխանության տակ գտնվող Դաղստանի ժողովրդին կողոպտում, Իրանի շահի հետ թղթակցում, նրան մեր դեմ դրդռում և այլն, և այլն...։

«...Նախապես կայսերական պայմանագրով Վրաստանի երկրի ամբողջովին Օսմանյան պետության տիրապետության ենթարկումը որոշված և սահմանված էր և այդ երկրի բոլոր սահմանները պաշտպանվում էին Օսմանյան պետության իշխողների կողմից։ Սրանից առաջ Մոսկովների կողմը փախած Թիֆլիսի խանը՝ Վախտանգը և նրա որդին՝ Շահնավազը, որոնք պիտի բնակվեին Օսմանյան պետության սահմաններից հեռու վայրերում և Մոսկովի քաղաքներից էլ հեռու տեղերում, վերջերս մտել էին Մոսկովի պինվորների շարքերը և համաձայնագրին հակառակ, մեր սահմաններին մոտ էին եկել. նրանք Շահնավազին որոշ քանակությամբ զինվորներով ուղարկել էին հիշյալ երկիրը [Վրաստանը]՝ վրացիներին գրգռելու և իրենց կողմը քաշելու համար։ Բացի այդ, Կուբանի և Ազաքի կողմերում, Նողայ և Չերքես ցեղերից 20-ից ավելի մարդիկ գերի վերցրել և 15 մարդ սպանել էին։ Միաժամանակ Ակսակ-Իվան անունով կազակ վաճառականի կառքերի վրա հարձակվել և 20 քիսեի արժեքով ապրանքները և իրերը հափշտակել էին. Կուբանի սերասքերը՝ Արսլան-Կիրայ-Սուլթանը պահանջել էր այդ վնասների հատուցումը. նրանք [Մոսկովները] ուրացել և մերժել էին... նման բազմաթիվ ձևերով խախտել էին խաղաղության փադիշահական պայմանները...

Պատմագիրը ասում է, որ Օսմանյան պետությունը զբաղված լինելով Իրանի պատերազմով, չէր ցանկանում Մոսկովների դեմ թշնամական քայլեր անել։ Այնուամենայնիվ, պետության սահմանների պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեցին...։

(«Թարիխի Ռուհի», հատոր II, էջ 74—75)։

Խաբման Օրլիմը Ստամբուլ է ուղարկում Մոսկովի և Աջեմի միջև կնքված դաշնագրի պատճենը

Այդ ժամանակ Խաբման Օրլիմից ստացվում է լատիներեն լեզվով գրություն, որին կցված է լինում Մոսկովի [Ռուսաստանի] Իրանի հետ կնքած դաշնագրի պատճենը՝ 6 հոդվածից բաղկացած։ Ստորին թարգմանում ենք վերոհիշյալ դաշնագիրը։

«Մոսկովի պետությունը Աջեմի Շահի հետ խաղաղությունը և բարեկամությունը ամրապնդելու պատրաստակամ լինելով, երկու պետությունները, ստորև գրի առնված հոդվածներով, հավիտենական լինելու պայմանով, որոշում են՝

Հոդված 1. *Խազերի ծովեզերքում Աջեմի երկրից Մոսկովների կողմից պատերազմի ժամանակ գրավված բոլոր վայրերն ու բերդերը, ինչպես նաև կամավոր կերպով Մոսկովի պետության հովանավորության տակ մտած վայրերը, գրավումից առաջ իրենց ունեցած վիճակով, պիտի վերադարձվեն Աջեմի պետությանը և վերոհիշյալ վայրերի համար թե՛ Մոսկովի ցարուհու և թե՛ նրա հաջորդների կողմից, հետ այսու, ոչ մի պահանջ չներկայացնելու մասին Մոսկովները խոստում են տալիս։*

Հոդված 2. *Աջեմի երկրի մետաքսը ամրողջությամբ, նախապես նշանակված գնից (նարխ) ավելի բարձր չլինելու պայմանով, Մոսկովին պիտի վաճառվի և սրանից հետո այլ ազգություններին չտալու մասին Աջեմի Շահը և իր հաջորդները խոստանում և երաշխավորում են։*

Հոդված 3. *Հիշված առևտրի կարգավորման համար Մոսկովի կողմից Խազերի ծովեզերքում կառուցված բերդը, Աջեմի Շահը Մոսկովին պիտի վերադարձնի և բացի այդ, Սամարղանդի մոտ, Կուր գետի Խազերի ծովը թափված վայրի մոտ, ուրիշ բերդ կառուցելու համար Մոսկովին մի տեղ պիտի հատկացվի։ Վերև հիշված բերդերը Մոսկոլուն* պիտի պաշտպանի, Խազերի ծովում Մոսկոլուն նավեր պիտի ունենա և այդ կերպով առևտուրը պիտի շարունակի։*

Հետևաբար, Մոսկովի ցարուհին խոստանում է, որ վերոհիշյալ բերդերում 500-ական հետիոտն զինվոր պիտի պահի և ընդամենը 1000 զինվոր պիտի ունենա։ Վերոհիշյալ մետաքսը ապահով կերպով Աժդերհան [Աստրախան] փոխադրելու համար Մոսկոլուին թույլ է տրվում պատերազմական նավեր ունենալ Խազերի ծովում։

---

* *Մոսկոլու՝ գործ է ածվում ռուս, ռուսներ իմաստով։*

Հոդված 4. Հունական դավանանքին պատկանող վաճառականներին իրավունք է տրվում իրենց պաշտամունքները կատարել, Աջեմի երկրում, մասնավորապես Մոսկովի կոմիսարներ նշանակված վայրերում, նրանց թույլատրվում է առևտրական շենքեր դնել և իրենց ապրած վայրերում եկեղեցիներ ունենալ՝ Սթոքհոլմ և Դանեսկա քաղաքներում Մոսկովուի ունեցած եկեղեցիների նման։ Իրանի Շահը խոստանում է Աջեմի մայրաքաղաք Սպահանում իր պետության հաշվով մի մեծ տուն կառուցել, որպես ապաստարան՝ ռամի ցեղի մարդկանց։

Հոդված 5. Խալերի ծովի սահմաններում ուշադրությամբ պիտի հետևել, որ այլ ապրանքների պատրվակով մետաքս չարտահանվի։ Առանց Սպահան քաղաքի Մոսկովի կոմիսարի արտոնագրի, այլ երկրների մետաքս գնելու թույլատվություն չպիտի տրվի։

Հոդված 6. Երկու կողմից որոշվում է՝ մինչև որ Օսմանլու [օսմանցի] և Թաթար ցեղերը դուրս չհանվեն Վրաստանի, Աջեմիստանի և Մոսկովի սահմաններից, պատերազմական գործողությունները չպիտի դադարեն։

Աջեմն ու Մոսկովը անհրաժեշտ են համարել այդ մասին դաշնի մի հոդված ևս կազմել և կցել սույն խաղաղության դաշնագրին։

(«Թարիխի Սուբհի», հատ. II, էջ 76)։

1149 թվականի (1736) դեպքերից

Այս տարեթվի դեպքերից պատմագիրը կարևոր տեղ է տալիս Դաղստանի դեպքերին և Ազովի բերդի դեմ ռուսական բանակի ձեռնարկած գործողություններին, որոնք նկարագրում է մեծ մանրամասնություններով։ Հետո վերադառնում է Իրանի դեպքերին, որոնց մասին վերը համառոտակի հիշել ենք։ Սուբհին առանձնապես ծանրանում է Իրանի հետ կատարված հաշտության պայմանների շուրջը տեղի ունեցած բանակցությունների վրա։ Այդ առթիվ տալիս է փադիշահական գրությունը, որը պատգամավոր Վեզիր-Մուստաֆա փաշայի միջոցով ուղարկվեց Աջեմի Շահին, այդ գրությունը վերաբերում է գլխավորապես օսմանցիների և Իրանի կրոնական-դավանական վեհերին։

1150 թ., ինչպես նաև հաջորդ տարիների դեպքերից Սուբհիի «Պատմության» մեջ շատ մեծ տեղ են բռնում Թուրքիայի, Ռուսաստանի և Ավստրիայի միջև տեղի ունեցած պատերազմական դեպքերը, որոնք տրվում են մանրամասն կերպով։ Նա 1154—1156 թթ. դեպքերի շարքում մեծ տեղ է հատկացնում Իրանի հետ վարած հաշտության պայմանների բանակցությունների, պատգամավորների երթևեկության, նվերների ուղարկմանը և այլն, որոնց մասին համառոտակի խոսեցինք վերևում։

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դիվան—*ատյան, հատուկ վայր, ուր հավաքվում էին Թուրքիայի պետության ղեկավարները Մեծ Մեջլիսի, Բարձր Մեջլիսի։ Այս Մեջլիսը գումարվում էր Բաբը-Ալիում Մեծ վեզիրի (Սադրազամի) նախագահությամբ, որին մասնակցում էին վեզիրները, երկու կազեսքերները, որոնք նստում էին Սադրազամի աջ կողմը, երեք գեֆթերդարները և նշանջիները, որոնք նստում էին Սադրազամի ձախ կողմը։ Դիվանի սրահում, Մեծ վեզիրի բազկաթոռի վերևի կողմում, դեպի փադիշահական պալատը բացվող վանդակավոր պատուհանից Սուլթանը կարող էր հետևել Դիվանի աշխատանքին։*

Դիվանում քննության առնվելիք հարցերը Սադրազամին ներկայացնում էին թևզբերեջինները, որոնց առջև կանգնած էր պետության բարտուղարի պաշտոնը կատարող Ռեյիս-էֆենդին (կամ Ռեյիս-ուլ-Քյութթաբը)։

Բացի սովորական Դիվաններից, հրավիրվում էին նաև արտակարգ Դիվաններ, օտար պետությունների դեսպաններին ընդունելու, գինվորներին հանդիսավոր կերպով պարգևներ և ռոճիկ տալու համար և այլն։

Դիվանը կոչվում էր «Փադիշահական Դիվան», որովհետև որոշումները ընդունվում էին փադիշահի անունով։ Փադիշահական Դիվանի գլխավոր բարտուղարը կոչվում էր «Ամեդիի-Դիվանի-Հյումայուն» (Փադիշահական Դիվանի Պետ)։

2. Բանաստեղծական մեջբերումներ—*Թուրք պատմագիրներից շատերը պատմական անձերի և դեպքերի հիշատակության ժամանակ, բացի Ղուրանից և այլ գրքերից կատարված մեջբերումներից, հաճախ բանաստեղծական մեջբերումներ են անում նաև տարբեր բանաստեղծների ստեղծագործություններից (դիվաններից)։ Մի քանի պատմագիրներ այդ սովորությունը չափազանցության են հասցընում, ինչպես պատմագիր Սուբհին։ Այս հանգամանքը դժվարացնում և բարդացնում է պատմական դեպքերի ուսումնասիրությունը, մանավանդ, որ բերված բանաստեղծությունները հաճախ կապ չունեն տվյալ պատմական հարցի կամ անձնավորության հետ։ Պատմագիրը այդ մեջբերումներով ուզում է ցույց տալ իր «հմտությունը» և ծանոթությունը մեծ գրողների երկերի հետ։ Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ թուրք պատմագիր-տարեգրներից շատերը միաժամանակ բանաստեղծներ են եղել և ունեցել են իրենց «դիվանները» և այլ բանաստեղծական երկասիրությունները։*

3. Ֆիրճե—*բառացի նշանակում է խոռվություն, խառնակություն, շփոթ։ Թուրք պատմագիրները առհասարակ «ֆիթնե» բառով են բնորոշում մի շարք խոշոր շարժումներ, որոնց հետևանքով տեղի են ունեցել պետական հեղաշրջումներ, սուլթանների գահազրկություններ և մինչև անգամ սպանություններ։*

Ինչպես մի շարք կարևոր պետական քաղաքական հարցերում, ինչպիսին են Ջելալիական ապստամբական շարժումները, Աբազա փաշայի ապստամբությունը և այլն, «ֆիթնեի» հարցումն էլ թուրք պատմագիրներն առհասարակ բավականանում են նման կարևոր պետական քաղաքական հարցերի սոսկ նկարագրությամբ և փաստերի հիշատակությամբ, առանց վիրլուծելու և երևան հանելու այդ երևույթների պատճառները։

Տարակույս չկա, որ թուրք պատմագիրների «ֆիթնե» անվանած դեպքերը սոսկ խռովություններ չեն, այլ Թուրքիայի ֆեոդալական-բռնապետական ուժիմի թուլացման և քայքայման պրոցեսի արդյունք։ Սուլթանները և վեզիրները անսահ-

մանափակ, հաճախ բմահաճ հրամաններ էին տալիս և կարգադրություններ անում, վեզիրները և փաշաները, մինչև անգամ հոգևորական պետերը, կաշառակերության և այլ միջոցներով հսկա հարստություններ էին կուտակում։ Շռայլությունն ու զեխությունը պետական գնակավար շրջաններում ծայր աստիճանի էին հասել։ Նման երևույթների հետևանքով, բնականաբար, խախտվել էր նաև բանակի, գլխավորապես ենիչերիական զորամասերի նախկին խստագույն կարգապահությունը։ Ահա այդպիսի պայմաններում տեղի ունեցան ենիչերիների ապստամբությունը և անկարգությունները 1143 թ. (1730), որի հետևանքով Սուլթան Ահմեդ III! գահընկեց եղավ։ Նման «ֆիթնե»-ի դեպքեր կրկնվել են շատ անգամներ։

4. Բոզջա-կղզին—էգեյան ծովի կղզիներից (արշիպելագոսից) Թենեդոս կղզին Թուրքերը անվանում էին «Բոզջա» (գորշավուն), Բոզջա են կոչվում նաև այն վայրերը, որոնք անմշակ և մացառուտ են։

5. Ինջիլի պալատը (քյոշկը)—Ստամբուլում Սուլթանի ամառային պալատներից էր։ «Ինջիլի» բառացի նշանակում է մարգարիտներով զարդարված։

6. Նադիր-Շահը բուռ պատմագիր Ահմեդ Ռասիմի, Խորասանի Աֆշարի ցեղի հովվի ընտանիքից է և զբաղվել է հովվությամբ։ Հետո մի շարք բնկերներով, ճանապարհներում կարավաններ կողոպտելով է զբաղվել։ Ավելի ուշ, Նադիրը Աֆղանստանից փախած մարդկանցով իր խումբը ուժեղացնելով (մոտ 6000 մարդ) գրավել է Խորասանը։ Հետո Շահ-Թահմասբին գահընկեց արել, որի հետևանքով վեզիրներն ու էմիրները Նադիրին առաջարկեցին Իրանի գահը, բայց նա մերժեց և միայն 1149 թ., Աբբաս III մահից հետո տիրացավ Իրանի գահին՝ Նադիր-Շահ անունով։ Դրանից հետո սկսվում են Նադիր-Շահի աշխարհակալությունները։ Նա գրավում է Աֆղանստանը, Բելուջիստանը և 1152 թ. մտնում Հնդկաստան և գերի վերցնում Մուհամմեդ-Շահին։ Հնդկաստանից վերադառնալով, շարժվում է դեպի Միջին-Ասիա և գրավում Բուխարան։ Նադիրը գաղանորեն սպանել է տալիս իր որդուն և էմիրներից շատերին։ Նա 1160 թ. վրանում հանկարծակի կերպով սպանվեց իր երկու սպաների ձեռքով*։ Թուրք պատմագիրները շատ վառ գույներով են նկարագրում Նադիր-Շահի «դաժանությունները» և «գազանությունները»։ Պատմագիր Սուբհին մանրամասնորեն նկարագրում է Նադիր-Շահի և Թուրքիայի միջև տեղի ունեցած պատերազմական գործողությունները և դիվանագիտական հարաբերությունները։

7. Ղազի՛—«ղեզա» բառից է ծագում, որը նշանակում է հանուն կրոնի (իսլամական) պատերազմ և հաղթանակ Քշնամու կրոնի դեմ։ Կոչվում է նաև «ջիհադ» (սուրբ, նվիրական պատերազմ)։ Ղեզային կամ ջիհադին մասնակցող իսլամները կոչվում էին «ղազի»։ Ղազի տիտղոսը տրվում էր առանձնապես նման պատերազմներում հաղթանակող փոդիշահներին (սուլթաններին), օրինակ Մուհամմեդ II ստացավ «ղազի» տիտղոսը Ստամբուլը բյուզանդացիներից գրավելու համար (միաժամանակ «ֆաթիհ» տիտղոսը)։ Սուլթան Մահմուդ I «ղազի» տիտղոսը ստանում է նրա համար, որ 1146 թ. Թոփալ-Ահմեդ-փաշան Նադիր Շահին պարտության մատնելուց հետո, Սուլթանի հրամանով, Թավրիզը հիմնահատակ կործանում և քարը քարի վրա չի թողնում...

8. Ասիթանե (պետրակերեն)—շեմք, կենտրոն, մայրաքաղաք, կառավարական կենտրոն։ Նախապես Ստամբուլը կոչվում էր նաև Ասիթանե։ Հաճախ Ասիթանե բա-

---

* احمد راسم: عثمانلی تاریخی، ایکنجی جلد، صحیفه ۲۹—۳۰

ին ավելացնում էին «սաադեթ» (երջանկություն, բախտավորություն—որով սաաց-վում էր «Ասիթանեի-սադեթ»։ Այս ձևից բացի, ավելի հաճախ գործածվում էր «Դեր-սաադեթ» (Դերսաադեթ) տերմինը, որը նշանակում է երջանկության վայր։ Ուրեմն Ստամբուլը կոչվում էր նաև Դերսաադեթ։

9. Ռեիս-ուլ-Քյութթար *(կամ Ռեիս-էֆենդի)—տե՛ս պատմագիր Վասըֆի ծանոթ.1։*

10. «Մոլորյալ» Շահը—Թուրք պատմագիրները դավանական ֆանատիկության բերումով (քանի որ նրանց կարծիքով իրանացիները իբրև «շիա» դավանանքին պատկանողներ՝ համարվում են «մոլորված», «անկրոն»), Իրանի շահերի մասին խոսելիս, գրեթե միշտ, ավելացնում են «մոլորյալ» («քեմրահ») ածականը—«Շահ-հի-քեմրահ»—«Մոլորյալ Շահը»։

11. Յուրթլուխ և օջաքլըխ—*Թուրքիայի ֆեոդալական հողատիրական սիստեմում, պետության սահմաններին մոտ գտնվող շրջանների կառավարությունը, եկամուտն ու հարկերը տրվում էին հատուկ մարդկանց, որոնք պարտավոր էին՝ ա) պետության սահմանները պաշտպանել, բ) օսմանյան բանակի դեպի սահմանները շարժվելիս՝ կովի գնալ Սերասքերի տրամադրության տակ։ Նման հողամասերը կոչվում էին «յուրթլուխ և օջաքլըխ»։ Այդ հողերը ժառանգական կարգով անցնում էին սերնդից-սերունդ։ Տվյալ դեպքում Շիրվանի էյալեթը իբրև սահմանային երկրամաս, իր բոլոր եկամուտներով, «յուրթլուխի և օջաքլըխի» կարգով փադիշահի կողմից շնորհվում է Սեմերխայ-խանին։*

12. Էնդերուն—*բառացի նշանակում է ներքին։ Սուլթանական պալատի ներքին մասը, այսինքն հարեմը կոչվում էր «Էնդերուն» («Էնդերունի-Հումայուն»)։ Էնդերունը ուներ իր առանձին գանձարանը (խազինե)։ Սուլթանական արքունիքը, բացի էնդերունի գանձարանից, ուներ նաև «Արտաքին գանձարան» (Թաշրա-խազինեսի»)։*

13. Կուլ-օղլիներ—*կոչվում էին զերիներից և ստրուկներից կազմված զինվորական մասերը։ Կուլ-օղլիները մի տարի մի օրևից բերդում պահպանության ծառայությունը կատարելուց հետո մտնում էին հետիոտների կամ հեծելազորների օջաքների։*

14. Ջաֆերի դավանանքը—*Իմամ-Ջաֆերի կողմից հաստատված շիաների դավանանքը։*

15. Ջիզիյե *(ավելի լավ՝ Ջիզիյեի-շերիյե)—Օսմանյան պետության մեջ ոչ-մուսուլմաններից առնված գլխահարկը։ Հետագայում XVIII դարի վերջերից, այդ տուրքը կոչվեց նաև, «խարաջ»*, որը գանձվում էր ոչ-մուսուլմաններից իբրև զինվորական ծառայությանը փոխարինող տուրք («բեդելի-ասքերի»)։ Սկզբում բրիտանյա հպատակներից ջիզիյեն գանձվում էր այս կարգով՝ բարձր դասից (հարուստներից) 30 ակչե, միջակներից՝ 20 ակչե, աղքատներից՝ 10 ակչե։ Սուլթան-Մուրադ III-ի ժամանակ խմիչքների վրա ևս տուրք նշանակվեց, բայց ռայաների խնդրանքով այդ նոր տուրքը ավելացվեց ջիզիյեի վրա, որով գլխահարկը բարձրացավ 45,30 և 15 ակչեի։ Պատմագիրների ասելով, այդ գարաշրջանին՝ մի՛ ակչեն հավասար էր 30—40 փարայի, այսինքն մոտ մեկ դուրուշի (կամ լիրայի*

---

* *Տե՛ս* А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар, Москва, 1948, стр. 501.

1/100-րդ մասի)։ Դարձյալ Թուրք պատմագիրների վկայությամբ ջիզիյեի այդ գումարը շուտ-շուտ փոփոխության է ենթարկվել՝ օսմանյան փողային սիստեմի անկայունության և տատանումների կապակցությամբ։ Այսպես, Քեոփրյուլու-Մուստաֆա փաշայի սադրազամության ժամանակ, նորից նրանք կատեգորիայով 48,24 և 12 տիրհեմ արծաթ էր առնվում, հետո 4,2 և 1 ոսկի (ալթուն) առնելու մասին հատուկ օրենք հրատարակվեց։ 1272 թ. (1855)—«ջիզիյե» տերմինը փոխարինվեց «Բեդելի-ասքերի» (զինվորական ծառայության փոխարեն) տերմինով, քանի որ քրիստոնյաները Օսմանյան պետության մեջ ազատվում էին զինվորական ծառայությունից, ուրեմն փոխարենը վճարում էին այդ տուրքը։ Այդ ժամանակ, նույն կատեգորիաներով, 60, 30 և 15 ղուրուշ էր առնվում։ Տուրքը գանձվում էր միայն տղամարդկանցից։ Տուրքից ազատվում էին հոգևորականները, պետական ծառայության մեջ գտնվողների ընտանիքները և ծերունիները։ Այդ տուրքը վերացավ միայն 1908 թ. հայտարարված Օսմանյան Սահմանադրությամբ, երբ քրիստոնյաները նույնպես կանչվեցին զինվորական ծառայության։

16. Լևենդի զորամասը—Լևենդ էին կոչվում օսմանյան նավատորմում ծառայող հրացանաձիգները, որոնց շարքում կային նաև որոշ քանակությամբ քրիստոնյա հայեր։ Սրանք տարբերվելու համար ունեին իրենց հատուկ տարազը։ Ըստ Շ. Սամիի, «Լևենդ» բառը իտալերեն levantino բառի աղավաղված ձևն է, որը նշանակում է արևելքցի*։ Լևենդ էին կոչվում նաև վենետիկցիների վարձկան և թեթևաշարժ զորամասերը։

17. Տաբեգիր Շեհրի-Իզդի-էֆենդի. *Օսմանյան պետության արքունական տարեգիրներից է, որը այդ պաշտոնին նշանակվել է 1156 թ.։ Սրա պատմությունը կոչվում է «Թարիխ—Իզդի» և ընդգրկում է 1157—1165 թթ. դեպքերը**։

---

* شمسی الدین سامی: قاموس ترکی، درسعادت ۱۳۱۷، صحیفه ۱۲٤۸.

** *Տե՛ս «Թարիխ Իզդի»՝ հաջորդ գլուխը։*

ՑՅՈՒԼԵՅՄԱՆ-ԻԶԶԻ, XVIII ԴԱՐ

«ԹԱՐԻԽԻ ԻԶԶԻ» — تاريخ عزى

Պատմագիր Սուբհիից հետո պատմագիր-տարեգիր Ցյուլեյման Իզզին գրել է. «Թարիխի Իզզի» երկհատորյակը, որը բովանդակում է 1157—1165 թթ. դեպքերը (1744—1751)։ Խոջա-Շեհրի-Իզզի էֆենդին, ինչպես անվանվել է պաշտոնապես, տարեգիր (վակաանյուվիս) է նշանակվել 1158 թ.։ Մեռել է 1166 թ.։

Ինչպես առհասարակ մյուս պատմագիրների, այնպես էլ Իզզիի մասին կենսագրական տեղեկություններ գրեթե չկան։

Իզզին իր «Թարիխի Իզզիի» առաջաբանում ի միջի այլոց գրում է, որ Նորին Վսեմություն փադիշահի ցանկության համաձայն այդ ժամանակի Ռեիս-ուլ-Քյութթաբը՝ Ելհաջ-Մուստաֆա-էֆենդին գրելու ընդունակ, մասնավորապես պատմական դեպքերը պատմագիրներից պահանջված կանոններով արձանագրելու կարող և փադիշահական հատուկ ֆերմանի համաձայն Օսմանյան կայսրության մեջ պատմագրության պաշտոնին արժանի, Դիվանի խոջաներից ընդունակ մարդկանց ցուցակը կազմելիս, իրեն էլ ներկայացրել էր այդ ցուցակում՝ Վանեմ Սադրազամին։ «Նվաստիս այդ պաշտոնին արժանի համարելով, 1158 թ. խալաթ հագցրին»։*

*Իզզին առանձին գովասանքով և հարգանքով է խոսում իր նախորդի, պատմագիր Սուբհիի մասին, որը երկար տարիներ ծառայել է այդ բարձր պաշտոնում, վարելով միաժամանակ «Բեքլիքջիի»** պաշտոնը։*

Իզզին իր պատմության սկզբում «Տպագրության արվեստի վերահաստատման մասին» վերնագրով հատվածում գրում է, որ

---

* *Սուլթան Մահմուդ I, 1143—1168 թթ. (1730—1754)։*

** *Բեքլիքջի — կայսերական Դիվանի գրասենյակի պետը։*

«Նորագույն գիտությունների տպագրության արվեստը Օսմանյան կայսրության մեջ հիմնել էր հանգուցյալ Իբրահիմ-էֆենդին, որի մահից հետո նրա աշակերտը՝ Կազի-Իբրահիմ էֆենդին հիշյալ արհեստի պահպանման համար որոշ ջանքեր էր գործ դրել: Նորին վսեմություն, դրախտաբնակ Սուլթան Մուստաֆա խանի սուլթանության ժամանակ առաջացած պատերազմների պատճառով՝ տպագրության արվեստը լքյալ դրության էր ենթարկվել և մինչև վերջին ժամանակներս բոլորովին քայքայվել էր»: Հետո պատմում է, որ ինքը՝ Իզզին, Սադրազամի մեքթուբջին՝ Մուհամմեդ-Ռաշիդը և վակաա-նյուվիս Ահմեդ-Վասըֆը՝ նկատի առնելով հասարակության համար այնքան օգտակար, բազմաթիվ գրքեր ապահովող տպագրության վերահաստատման անհրաժեշտությունը, միասնաբար աշխատեցինք և մեզ հաջողվեց այդ կարևոր արվեստը վերականգնել, որի մասին մանրամասն տեղեկություններ է տվել պատմագիր Սուբհին իր «Թարիխի Սուբհիում»: Վերականգնված տպարանում հրատարակվում է նաև Սուբհիի «Թարիխի Սուբհին» որից հետո՝ Իզզիի «Թարիխի Իզզին»:

Երկրորդ հատորի վերջում Իզզին գրում է. «Նվաստս՝ Սյուլեյման-Իզզին, իմ պաշտոնում մեծ աշխատանք և ջանք գործ դնելով՝ 1157 թ. (1744) Մուհարրեմ ամսից մինչև 1160 թ. (1747) Զիլհիջջե ամսի կարևոր դեպքերը արձանագրեցի առաջին հատորում, իսկ 1161 թ. (1748) սկզբից մինչև 1185 թ. (1771) վերջի դեպքերը՝ երկրորդ հատորում: Աստուծո կամքով և Նորին Վսեմություն փադիշահի ցանկությամբ, ինշալլահ, սրանից հետո իմ կազմելիք երրորդ հատորում գրի եմ առնելու 1166 թ. (1752) Մուհարրեմ ամսից սկսվող դեպքերը»:

Սյուլեյման-Իզզին մահանում է 1166 թ. և նրա այս վերջին ցանկությունը մնում է անկատար:

Իզզին երկու հատորում տվել է լրիվ 9 տարվա պատմություն: Նա, իբրև պատմագիր, վերին աստիճանի ճոռոմաբան է, երկարապատում, ավելորդ կրկնությունների և մանրամասնությունների սիրահար: Լեզուն ծայր աստիճանի խրթին է:

«Թարիխի Իզզիում», պատմական դեպքերի շարքում կարևոր տեղ են բռնում նաև անթիվ նշանակումները, հեռացումները, պարգևատրումները և այլն: Պատմական դեպքերի մեջ կարևոր են Իրանի Նադիր-Շահի իշխանության և նրանից հետո տեղի ունեցող անիշխանության շրջանի դեպքերի մանրամասն նկարագրությունը, ձիոխանակված պաշտոնական գրությունների, կնքված դաշնագրերի

լրիվ տեքստերը, որոնք անտարակույս, զուրկ չեն պատմական արժեքից։

Նկատի ունենալով, որ այդ շրջանի թուրք-իրանական պատերազմները և նրանց հետ կապված իրադարձությունները սերտ կապ ունեն նաև Հայաստանի, հայերի և առհասարակ Անդրկովկասի հետ, մենք բավականին լայն չափով տալիս ենք այդ դեպքերը։ Սակայն ավելորդ համարելով Իզզիի տված նյութերի նույնությամբ թարգմանությունը, հաճախ տալիս ենք դեպքերի համառոտ բովանդակությունը։

Մեր ձեռքի տակ եղած «Թարիխի Իզզին» տպագրված է Ստամբուլում 1199 թ. (1784—1785)։

«ԹԱՐԻԽԻ ԻԶԶԻ»

1157 թվականի (1774) դեպքերից

Նախորդ պատմագիր-տարեգիր Սուբհիի պատմության վերջին մասում, դարձյալ ծանոթության ձևով, խոսել ենք Իրանի Նադիր-Շահի Օսմանյան երկրի նկատմամբ ցույց տված թշնամական գործողությունների և երկարատև պատերազմների մասին։ Այդ գործողությունների մասին մանրամասն խոսում է նաև Իզզին՝ 1157 թ. դեպքերին վերաբերող գլխում։ Իզզին ասում է, որ Նադիր-Շահը Օսմանյան կայսրության նկատմամբ երբեմն թշնամական, երբեմն էլ կեղծ բարեկամական ընթացքը շարունակում էր. նա իրեն հատուկ հպարտությամբ և չարամտությամբ Դաղստանի այուննի դավանանքին պատկանող լեզգի ցեղի նկատմամբ անասելի բռնություններ էր գործադրում։ Այդ լեռնցիները քաջաբար դիմադրում էին Նադիր-Շահին և բանից ոչ նրան պարտության են մատնել։ Իզզիի ասելով, Օսմանյան կառավարությունը, նկատի առնելով «Շահի խարդախությունները ու խորամանկությունները», անհրաժեշտ է գտնում սահմանների ամրացումը և ռազմամթերքներով ապահովելը. Էրզրումի, Կարսի, Երևանի, Դիարբեքիրի և Բաղդադի բերդերը ըստ պահանջի ամրացվելուց և սերասքեր փաշաներին անհրաժեշտ հրահանգներ տրվելուց։ Մինչև 1156 թ. Շահը, երբեմն Դաղստանի կողմերում, երբեմն էլ Շիրվանի և Մոտանի (Մուղանի) կողմերում թափառելուց հետո, անբավասելի կերպով հարձակվում է Մուսուլի և Քերքյոքի վրա, սակայն պարտվում և ստիպված է լինում իր երկիրը վերադառնալ։ Նույն թվականին Կարսի շրջանի սերասքեր, նախկին սադրազամ Ելհաջ-Մուստաֆա փաշայի հաղորդագրությունից պարզվում է, որ Շահը Ջեմազիյել-ախըրի* 14-ին բազմաթիվ զինվորներով անցել է իսլամական երկրի սահմանը՝ Արփա-Չայը, ավերել այդ շրջանի բերդերը և կանգ առել Կարսի մոտ։ Սերասքերը իր բանակով դուրս է եկել Շահի դեմ ու իսլամական հերոսությամբ կռվել է։ Այդ կռիվները տևել են 10 օր, փոփոխակի հաջողություններով։ Իրանցիները ծանր կորուստի ենթարկվելով՝ նորից հաշ-

* Ջեմազիյել-ախըր՝ իսլամական տարեթվերի ամիսներից է։

թության առաջարկ են անում։ Սերասքերը մերժում է իրանցիների առաջարկը։ Շահը կրկնում է իր առաջարկը։ Օսմանյան բանակի որոշ ղեկավարների պնդմամբ, Սերասքերը համաձայնում է ներկայացուցիչներ ուղարկել իրանցիների հետ բանակցելու համար։ Նադիր-Շահը միայն մի անգամ ընդունում է օսմանյան պատգամավորների ղեկավար Ահմեդ էֆենդիին, իրավունք չի տալիս պատգամավորներին վերադառնալու և Ահմեդ էֆենդիին էրզրումի ճանապարհով Ստամբուլ է ուղարկում։ Վերջինս ճանապարհից գրություն է ուղարկում փադիշահին։ Փադիշահը հասկանալով Նադիր-Շահի խորամանկությունն ու չարամտությունը, հրամայում է Սերասքերին ապահովել բանակի միասնությունը, չհավատալ թշնամու խարդախություններին, և հիշյալ Ահմեդ էֆենդիին Սամսոնում բանտարկելու մասին հրովարտակ է ուղարկում։

Կարսի շրջանի զորամասերում լուրեր են տարածվում, որ իբր թե Ահմեդ էֆենդին Ստամբուլ է գնացել հաշտության պայմանագիրը հաստատել տալու համար։ «Լևենդ»-ի զորամասը խռովություններ է առաջացնում, այդ զորամասի զինվորները փախչում են, որով օսմանյան բանակում անկարգություն և խառնաշփոթություն է սկսվում։ Խիստ միջոցներ են ձեռք առնվում բանակի կարգն ու մարտունակությունը վերահաստատելու համար։ Կարսի վարոշը ավելի է ամրացվում, Քշնամին նույնպես պատրաստվում է և շուտով կռիվները վերսկսվում են։ 70—80 օր տեղ մարտերը շատ կատաղի բնույթ ունեին։ Թշնամին, պատմագրի ասելով, ահեղ կորուստներ է կրում և ոչ մի հաջողություն ձեռք չի բերում։*

(«Թարիխի Իզդի», հատ. I, էջ 7—12)։

1158 թ. (1745) դեպքերից

Պատմագիր Իզզին, խոսելով Նադիր-Շահի նախորդ տարում կատարած չարագործությունների մասին, շարունակում է պատմել հաջորդ դեպքերը։

Փադիշահական հատուկ հրամանով կարգադրվում է «Օսմանյան պետության Հավատարիմ» Ղրիմի թաթար զինվորների մի մասն ուղարկել Իրանի ռազմաճակատ։ Այդ նպատակով փադիշահական ֆերման է շնորհվում Ղրիմի խան (կամ Սուլթան) Սելիմ-Կիրային և բուն հնագույն սովորության ուղարկվում՝ 40 հազար զուրուշ «սեքբան ակչեսի»ն և Ղրիմի սերբերդենների համար 40 ձեռք թանկագին խալաթներ։ Ղրիմի թաթար զինվորները նավերով պիտի փոխադրվեին Կիրասունի և Ունիայի նավահանգիստները և այնտեղից՝ դեպի ռազմաճակատ։ Սակայն ծովի փոխադրական պայմանները աննպաստ լինելով, նպատակահարմար է համարվում բանակը փոխադրել ցամաքային ճանապարհով։ Սելիմ-Կիրայի տրամադրության տակ, Կասըմ-Կիրայը (Սուլթանը) 10 հազար թաթար զինվորներով շարժվում է։ Ճանապարհին բանակը երկու մասի է բաժանվում, որոնցից մեկը՝ Կասըմ-Կիրայի ղեկավարությամբ հասնում է Ստամբուլ։ Սուլթան Կասըմ-Կիրային, ըստ սովորության, թանկագին քուրք և 2000 զուրուշ փադիշահական նվեր է տալիս։ Հետո մնացած թաթար զինվորները Նասրեդդին-Սելիմ-Կիրայի ղեկավարությամբ գալիս, նույն կերպով նվերների են արժանանում և բոլորը միասին ուղարկվում են Կարս, Սերասքերի տրամադրության տակ։

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 26).

---

* *Լևենդի զորամասը, տե՛ս պատմագիր Սուբհիի ծանոթագրություն 16։*

Տարբեր ժամանակներում օսմանյան սահմանապահներից ստացված լուրերից պարզվում էր, որ «...Իրանի ժողովուրդը բռնակալ Նադիր-Շահից դժվելով երես էր դարձրել: Իրանի խաներից Մեքրիի իշխողը՝ Մուհամմեդ-Կուլի խանը և նրա եղբայրը՝ Իմամ-Կուլի բեյը, երկու հազարից ավելի ընտանիքով (խանդ) փախել և ապաստանել էին Քյոյ սանջակում: Թավրիզի իշխանը՝ Մուհամմեդ-Կասըմ-խան-Աֆշարը, Խոյի խանը՝ Մյուրթեզա-Կուլի խանը և Դենբելիի բեյը՝ Մուհամմեդ-Թահիրը բոլոր Դենբելի աշիրեթով, Մուհամմեդ-Ալի բեյը, Քերենմոլի Մելիք-Ադան, Ակչե-Կոյունլիի Նուհ-բեյը, Հեկերլուի Հաջի-Ադան, Թուլուլուի Իսմայիլ-Ադան, Թայենլուի Ալի-Ռիզա-բեյը Թութեքլուի աշիրեթներով եկել և ապաստանել էին Վանի կողմերում: Այս աշիրեթներից յուրաքանչյուրը հարմար վայրում բնակեցվեց՝ և նրանց վերոհիշյալ սերքերդենները խալաթներով պարգևատրվեցին և հատուկ ուշադրության արժանացան: Վանի պաշտպանը հատուկ հրամանով հայտնեց նրանց նկատմամբ պետության հովանավորությունը. զանազան կողմերից Աջեմ ռեիսները և սպիտակամորուքները՝ իրենց աշիրեթներով, քոչերով և տներով, խումբ-խումբ գաղթելով՝ իջևանեցին Վանի, Կարսի, Մուսուլի և այլ շրջաններում և ապաստան գտան Օսմանյան պետության հովանու ներքո: Վանի, Կարսի, Մուսուլի և այլ սահմանների պետերը այդ մասին գրեցին և հայտնեցին Ստամբուլ: Բշնամու ուժը կոտրելու և երկիրը ավերելու համար նրանք ձմեռվա ընթացքում, Վանի և Կարսի կողմերում չեթեների միջոցով հարձակվում էին իրենց երկրի՝ Իրանի վրա և մեծ բանակությամբ ավարներով վերադառնում:

Սրանից առաջ Ղրիմից գալով՝ օսմանյան բանակին միացած 10 հազար թաթար զինվորները, Էրզրումից՝ կայսերական բանակի առջևից շարժվելով, Բայազետի սանջակի կողմից մտան Բշնամու երկիրը և Երևանի հողում Ագրը-Դաղ անունով վայրից արագությամբ անցնելով, կոտրեցին Բշնամու դիմադրությունը և ոչնչացնելով նրա ուժերը, գրավեցին Մակուի բերդը և մեծաքանակ ավարներով վերադարձան: Նրանց բարբարոսը, քաջազն Նուրեդդին-Սելիմ-Կիրայ-Սուլթանը այդ մասին հատուկ գրությամբ հայտնեց և ծանուցեց Իրանի սահմանի սերեսքեր Ղևն-Մուհամմեդ փաշային: Սերասքերը այդ ուրախարիթ գրությունը Ստամբուլ ուղարկեց: Ինքը իր տրամադրության տակ եղած քաջարի և զազի զինվորներով, Ջև-

մոլիցել-ախբը ամսի 22-ին դուրս եկավ էրզրումից և Կարսում որոշ ռազմական կարիքներ ապահովելով և այնտեղ մի քանի օր հանգստանալուց հետո, Աստծուն ապավինելով, շարժվեց դեպի վատագույն թշնամու գտնված վայրը, որի մասին պաշտոնապես գրավոր կերպով հայտնել էր: Դիարբեքիրի վալին, վեզիր Զեթիեջի-Աբդուլլահ փաշան ևս Մուսուլի կողմից մտավ թշնամու երկիրը...»:

Զարաբաստիկ Շահի դրությունը խիստ ծանրանում է, երբ փորձերը ապարդյուն են անցնում, ի վերջո Նադիր-Շահը կռիվներից մեկում վիրավորվում է և շտապում փախուստի դիմել, իր ունեցած ամբողջ հարստությունն ու ինչքերը թողնելով օսմանցի զորիներին:

Այս մեծագույն և փառավոր հաջողության և հաղթանակի համար, փադիշահական հատուկ ֆերմանով, ջամիներում և մեսջիդներում աղոթքներ և արարողություններ են տեղի ունենում:

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 26—27):

* * *

Նույն թվականի դեպքերի շարքում, պատմագիրը նորից վերադառնում է Նադիր-Շահին:

Ինչպես նախապես հիշված էր* Իրանի և Թուրքիայի միջև կրոնական բնույթի վիճելի հարցերից էին Ջաֆերի դավանանքը իբրև հինգերորդ դավանանք ճանաչելու և Նվիրական Մեքքեում Ջաֆիրիների համար ևս նամազի վայր (նամազգյահ) տալու հարցերը: Օսմանյան կառավարությունը մերժել էր այդ երկու կետերը, քանի որ ուլեմաների եզրակացությամբ շարիաթը այդ մասին թույլատվություն չէր տալիս:

Այս անգամ Նադիր-Շահը հատուկ պատգամավորների միջոցով գրություն ուղարկելով Սերասքերին, հայտնել էր, որ նա հրաժարվում է իր նախկին պահանջներից (վերոհիշյալ երկու կետերից) ու խոստանում է սրանից հետո հրաժարվել օսմանյան երկրի նկատմամբ թշնամական գործունեությունից: Բացի այդ, Նադիր-Շահը պատգամավորների միջոցով իր կնիքով կնքված երկու գրություն էր ուղարկել փադիշահին:

Փադիշահի հրամանով գումարվում է Պետական խորհուրդ (Էնջյումեննի-Շուրա)[2], որը քննում է Նադիր-Շահի առաջարկները, որոնցով նա հրաժարվում էր կրոնական բնույթի նախկին երկու պահանջներից և պատրաստակամություն հայտնում հաշտություն կնքելու, միաժամանակ ներկայացնելով նոր պայմաններ, որոնք հետևյալ կերպ էին ձևակերպված՝ «Սկզբից ի վեր Օսմանյան պետության մասը կազմող Ադրբեջանի սահմանում, վանում և շրջակայքում եղող Քուրդիստանը, ինչպես նաև Իրաքի երկրի մասը կազմող Բաղդատի և Բասրայի շրջաննե-

---

* Տե՛ս «Թարիխի Սուրխե», նախորդ պատմագիրը:

քը իրեն պետք է տալ»։ Այս տարօրինակ և իրար հակասող պայմանները բովանդակող գրությունից պարզ երևում էր, որ Նադիր-Շահը նորից փորձում է Օսմանյան կառավարութեյանը խաբել և նրան վնասներ պատճառել։

Նադիր-Շահի առաջարկները մերժվում են և փադիշահական հրամանով կարգադրվում է հաջորդ տարվանից Կարսի և Դիարբեքիրի զորամասերը պատերազմի պատրաստել, միաժամանակ հրամաններ են տրվում սերասքեր վեզիր էլ հաջ-Ահմեդ փաշային՝ անհրաժեշտ պարեն և ռազմամթերք ապահովելու մասին։ Միրմիրաններին, սպաներին և զինվորներին տեղեկություն է տրվում դրության մասին և կարգադրվում այժմվանից կազմ և պատրաստ լինել։ Կարգադրվում է նաև Ղրիմի խանին առաջիկա տարվա համար նորից 10 հազար թաթար զինվորներով պատրաստվել, որի մասին հատուկ փադիշահական գրություն է ուղարկվում Սելիմ-Կիրայ խանին։ Նույն կարգով 40.000 դուրուշ «սեքբան ակչեսի», խալաթներ և նվերներ են հատկացնում։ Խանին հրամայվում է հարմար ճանապարհներով (ծովով կամ ցամաքով) միանալ օսմանյան բանակին։

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 34—35)։

Իրանի դեսպանի երջանիկ Ասիթաճե գալը

Նադիր-Շահի հատուկ դեսպանի՝ Ֆեթհալի բեյի 4—5 ամիս առաջ Բաղդատ գալու մասին Բաղդատի վալին՝ Վեզիր-Ահմեդ փաշան հայտնել էր։ Դեսպանի գալու մասին ֆերմանն շնորհվեց։ Դեսպանին դիմավորում են խիստ մեծ պատվով և հանդիսավորությամբ։ Ստամբուլում նրան հատուկ պալատ է հատկացվում, ըստ սովորության մի քանի օր հետո փադիշահը հրամայում է ընդունել։ Տեսակցության ժամանակն էլ նույն ձևի պատիվներ և նվերներ են շռայլվում։ Դեսպանը մեծ հանդիսավորություններից հետո ներկայացնում է Նադիր-Շահի կողմից ուղարկված գրությունը։

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 40)։

1159 թ. (1746) դեպքերից

Խորհրդակցություն Ասեֆի պալատում Իրանի գործերի մասին

Նադիր-Շահը իր գրության մեջ Օսմանյան պետության փադիշահին և իսլամական խալիֆային շռայլ ածականներով և փարթամ արտահայտություններով փառաբանություններ անելուց հետո, հայտնում է, որ հանուն իսլամական միության, և ավելորդ արյունհեղությունների տեղիք շտալու նպատակով, ինքը հրաժարվում է Ջաֆերի դավանանքի մասին իր ներկայացրած պահանջից. նա պնդում է, որ երկու իսլամական պետություններէ միջև խաղաղու-

ֆյունն ու բարեկամությունը պետք է հավիտենական լինի։ Հետո Իրաքի և Ադրբեջանի նկատմամբ իր պահանջների մասին ասում է. «Իրաքի և Ադրբեջանի երկրները վաղ ժամանակից ի վեր թուրքմեն փադիշահներին են պատկանել, և հետո Շահ-Իսմայիլի հշխանության օրոք կիսով չափ մտել են Օսմանյան պետության սեփականության մեջ։ Հիշյալ երկու երկրները—Իրաքն ու Ադրբեջանը, հանուն միության, եթե դրանցից մեկը այս հավատարիմ եղբոր նվիրվի և շնորհվի, մյուսը Օսմանյան պետության համար* ճալալ լինի»։

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 41)։

Իրաճի դեսպան Ֆաթհալի-Թուրմանի բարբիրը

Սադրազամին ուղղված գրության մեջ, դեսպանը, մանրամասն խոսում է անցյալ դեպքերի պատճառների մասին, և հայտնելով Շահի՝ հաշտության և խաղաղության ցանկությունը, ասում է՝ «Քյաֆիր թշնամիների առաջ ծաղրի առարկա չլինելու համար պետք է, որ երկու իսլամ երկրները վերջ տան թշնամությանը և ապրեն հաշտ ու համերաշխ»։

Նորից հրավիրվում է էնջյումենի-Շուրան պետության բոլոր ղեկավարների մասնակցությամբ։ Մանրամասնորեն քննության են առնվում Շահի և նրա դեսպանի գրությունում արծարծված մտքերը։ Դավանական վեճը, որը հանդիսացել էր թշնամության և կռիվների գլխավոր պատճառը, վերացվում է։ Իսկ ինչ վերաբերում է սահմանների փոփոխության մասին Իրանի առաջարկին, միաձայն ընդունվում է, որ հաշտությունը կիրականանա միմիայն նախկին սահմանների պահպանման պայմանով։ Որոշվում է այդ իմաստով փադիշահական պատասխան գրություն ուղարկել Ֆաթհալի-Թուրքմանի միջոցով։

Նորից նույնանման մեծ ու շքեղ հանդիսավորություններով Իրանի դեսպանը ընդունվում է փադիշահի կողմից, որին հանձնում է պատասխան գրությունը։

Պատմագիրն ասում է. Իրանի դեսպանին, բացի բազմաթիվ և թանկագին նվերներից ու նախապես տրված հինգ քիսե դրամից, դարձյալ 30 քիսե, իսկ նրա մարդկանց՝ 6 քիսե է նվիրվում։

Օսմանյան պետության կողմից Իրանի դեսպանի հետ ուղարկվում է, իբրև դեսպան, Դիվանի խոջաներից նախապես Իրանում դեսպան եղած Նազիֆ-Մուստաֆա էֆենդին՝ հատուկ գրություններով։ Սահմանների հարցի մասին շեշտվում է, որ Սուլթան Մուրադ IV-ի ժամանակ կնքված դաշնագրով որոշված սահմանները[3] պետք է մնան անփոփոխ։

---

* «Հավատարիմ եղբայրը»՝ ինքն է, Նազիր-Շահը։

Սադրազամի և Մեշեյխեթի[4] կողմից էլ առանձին գրություն— պատասխաններ են ուղարկվում: Սադրազամի գրության մեջ շեշտվում է, որ պետության բոլոր բարձրաստիճան մարդկանց խորհրդակցության մեջ ընդունված որոշումը հաստատված է Նորին Վսեմություն փադիշահի կողմից:

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 50—51):

* * *

Ինչպես նախորդ հատվածներում նշել ենք, հրաման էր ուղարկված Ղրիմի թաթար զինվորների կրկին անգամ զինման և օսմանյան բանակի տրամադրության տակ առնվելու մասին: Սակայն նկատի առնելով Իրանի հետ տեղի ունեցող բանակցությունները, նպատակահարմար է համարվում հետաձգել զինվորների ուղարկումը:

Հաշտության և խաղաղության լուրի ստացումը Իրանից զուգադիպում է կայսերական ճավատորմի Ստամբուլ վերադառնալու տոնակատարությանը

Ինչպես նախապես հիշվեց, Իրանի շահի հաշտության առաջարկին փադիշահական կառավարությունը համաձայնություն էր հայտնել և այդ մասին դեսպան և գրություն էր ուղարկել, առաջարկելով իբրև հիմնական պայման Սուլթան Մուրադ IV-ի օրոք ընդունված սահմանների անփոփոխ պահպանումը: Դեսպան Նազիֆ-Մուստաֆա էֆենդին փադիշահական կառավարության կողմից լիազորված էր հաշտության պայմանագրի մասին բանակցելու և համաձայնության գալու: Մի շարք ձևականություններից և երկու պետությունների ներկայացուցիչների միջև, տասը օրվա ընթացքում 6—7 անգամ տեղի ունեցած բանակցություններից հետո, ի վերջո համաձայնություն կայացավ, դաշնագիրը կազմվեց և կնքվեց: Համաձայնություն կայացավ նաև Բաղդատում կատարվելիք առևտրի մասին:

Իրանի հետ կնքված հաշտության պայմանագրի Ստամբուլ հասնելուն զուգադիպում է օսմանյան նավատորմի ապահով և հաղթական վերադարձը Ստամբուլ: Այդ կապակցությամբ մեծ հանդիսավորություններ են տեղի ունենում:

Իրան են ուղարկվում մեծամեծ նվերներ:

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 73—75):

Իրան ուղարկված դեսպան Նազիֆ-Մուստաֆա էֆենդիի վերադարձը Ստամբուլ

Պատմագիրը ասում է, որ հիշյալ Նազիֆ-էֆենդին իր ստանձնած պաշտոնը կարճ ժամանակում մեծ հաջողությամբ կատարում և Ստամբուլ է վերադառնում։ Սադրազամը և փադիշահը դեսպանին մեծ պատվով ընդունում են, որը ներկայացնում է Նադիր-Շահի նամակը։ Դեսպան Նազիֆ-Մուստաֆա էֆենդիի այս հաջողությունը հազվագեպ երևույթ է, որի համար նա արժանանում է կայսերական մեծ շնորհների։

Սադրազամին ուղղված փադիշահի ֆերմանը Իրանի հետ կնքված հաշտության մասին

«Դո՛ւ, որ իմ մեծ վեզիրն ու բացարձակ փոխանորդն ես, հայտնում եմ քեզ, որ իմ Բարձր պետության և Իրանի միջև, իմ կայսերական հրամանին համապատասխան, կնքվելիք հաշտությունը, գոհությո՛ւն Աստուծո, շարիաթի օրենքի և իմ փադիշահական ցանկությանը համապատասխան է կնքված։ Այդ նպատակի համար ուղարկված դեսպան Նազիֆ-էֆենդին իր ծառայությունը վերջացրած լինելով, վերադարձել է Ստամբուլ և Շահի կողմից իմ մեծությանն ուղղված գրությունը մատուցել է, որի բովանդակությանը ծանոթանալով հրամայում եմ, մեր քաղաքների և շենների ապահովությանն ու բարեշինությանը նպաստող այդ մեծ ու բարի գործի բովանդակությանը բոլորին ծանոթացնել, որ ինձ համար բարի աղոթքներ անեն»։

(«Թարիխ Իզզի», հատ. I, էջ 50)։

Կայսերական պալատում էնջյումենի խորհրդակցության գումարումը

Սադրազամի, վեզիրների և բոլոր բարձրաստիճանավորների մասնակցությամբ գումարված ժողովը գոհունակությամբ լսում է Իրանի հետ կնքված հաշտության և խաղաղության պայմանագրի մասին, որը հավանության է արժանացել նորին վսեմության փադիշահի կողմից։ Խորհրդակցությունում կարդացվում է դեսպան էֆենդիի միջոցով ուղարկված Նադիր-Շահի գրությունը։

Ինչպես առհասարակ ընդունված էր, Շահի գրության հետ միաժամանակ, Իրանի գահաժառանգ Շահրուխ-Միրզան հատուկ գրություն է ուղարկում Սադրազամին, իսկ Իրանի հոգևորական պետը Մոլլա-Ալին իր կողմից գրություն է ուղարկում Իսլամական Մեշեյխեթին։

Պատմագիր Իզզին տալիս է բոլոր այդ գրությունների թարգմանությունները։*

---

* *Ընդհատ է հիշել, որ հիշյալ Մոլլա-Ալիի գրության կարևոր մասը կազմում են Ղուրանից լեցված թազմաթիվ այեթները և այլ իսլամական աղոթքները (հարկավ արաբերեն լեզվով)։*

1159 թվականին (1746) կնքված հաշտության դաշնագրի պատճեն

Օսմանյան պետության և Իրանի միջև 1159 թ. հաշտության դաշնագրի երկու պատճենները պատմագիր Իզզին բառ առ բառ տալիս է առանձին-առանձին, Սուլթանի և Շահի անունով գրի առնված երկար նախաբաններից հետո։ Այդ նախաբաններում համառոտակի հիշվում են հաշտության կնքումից առաջ տեղի ունեցած բանակցությունների պայմանները։

I

Հիջրի 1159 թ. Շաբան ամսի 17-րդ օրը Սուլթան Մահմուդ-խան IV սուլթանության ժամանակ, էլհաջ-Մուհամմեդ փաշայի սադրազամության օրով, Բաղդատի վալի էլհաջ Ահմեդ փաշայի և Իրանի շահի՝ Նադիր-Շահի ժամանակ Իրանի ավագանիներից Հասան-Ալի խանի միջև կնքված և նույն թվականի Զիլհիջջե ամսի կեսին Նորին Վսեմության (Սուլթանի) կողմից հաստատված է։

«Հիմմ». *Դրախտաբնակ Սուլթան Մուրադ-խան IV երջանիկ ժամանակում տեղի ունեցած խաղաղության [պայմանագիրը] երկու պետությունների միջև համարվում է պահպանված և վերոհիշյալ խաղաղության դաշնագրում հիշված սահմանները նույնությամբ պահպանվելով պիտի հարգվեն և նրանց հիմքերը չպիտի փոփոխվեն կամ խախտվեն։*

«Պայման» (շարք)

Նահանգությունից հետո սուրբ և թշնամությունը վերացված լինելով, այն բոլորը, ինչ որ երկու կողմերի փառքին արժանի է և երկու պետության խաղաղության և բարգավաճման համապատասխան է, բոլոր այդ կետերը (հոդվածները) պիտի պահպանվեն, զգուշանալով խաղաղության և ապահովության շահերին հակառակ բոլոր տեսակի գործերից։

Առաջին հոդված. *Իրանի հաջիները Բաղդատի և Շամի կողմերով պետք է ուղևորվեն դեպի Նվիրական Քյաբեն. ճանապարհի վրա գտնված վալիները և հաքիմները և միր-էլ-հեջաջները, հիշյալների անարգել ու ապահով ուղևորությունը ապահովելով, պետք է ուշադրություն դարձնեն նրանց վիճակին և պահպանեն նրանց։*

Երկրորդ հոդված. *Այս երկու պետությունների բարեկամությունը ամրապնդելու և նրանց միությունը ապահովելու համար, երեք տարին մի անգամ մի անձնավորություն Իրանում կայսերական պետության կողմից և իրանից էլ մի անձնավորություն իմ Բարձր*

Ասիթանեում պետք է նշանակվի և նրանց ծախքերը երկու կողմից պիտի տրվեն։

Երրորդ հոդված. Երկու կողմի գերիները պետք է ազատվեն, չպիտի վաճառվեն և այն գերիները, որոնք ցանկանում են իրենց հայրենիքը վերադառնալ, երկուսաեք արդելքի չպիտի ենթարկվեն։

Հ ա վ ե լ վ ա ծ

Նորին Վսեմություն Սուլթան Մուրադ-խան IV ժամանակ դոյություն ունեցող սահմանները հաստատված լինելով, սահմանների պահպանողները բարեկամության հակառակ եղող ընթացքից պետք է զգուշանան։ Բացի այդ, Իրանի ժողովուրդը Սեֆևիների ժամանակ երևան եկած անվայել գործերից բոլորովին պետք է հրաժարվի և դավանանքի կարգում, այսինքն դավանանքին պատկանողներին, Աշխիդյան խալիֆաներին,— Բարձրյալն Աստված թող նրանցից գոհ լինի,—հարգանքով և մեծարանքով պիտի հիշատակեն։ Սրանից հետո Իրանի ժողովրդից Նվիրական Քյաբե և Լուսավոր Մեդինե և այլ իսլամական քաղաքներ գնացող-եկողներին, ցույց պիտի տալ, ում հաջիներին, ուխտավորներին և այլ իսլամական քաղաքների բնակիչներին ցույց տրվող վերաբերմունքը։ Նրանցից «դուրմա» (կանգ առնել) շարիաթին և օրենքին հակառակ ոչինչ չպիտի պահանջել։ Նմանապես նվիրական վայրերի ուխտավորներից, եթե նրանց ձեռքում առևտրական ապրանքներ չկան, Բաղդատի հաքիմները և մյուբաշիրները նրանցից [ուխտավորներից] տուրք չպիտի պահանջեն, իսկ եթե նրանց ձեռքում առևտրական ապրանքներ կան, հաշվով սահմանված մաքսերը ըստ ընդունված հնագույն կարգի պետք է առնվեն և ավելին չպիտի պահանջեն։ Նմանապես այն կողմից [Իրանի կողմից] իմ պետության վաճառականներին և բնակիչներին նույն վերաբերմունքը պետք է ցույց տալ։ Հաշտության կնքման թվականից հետո, Իրանից դեպի Օսմանյան երկիր և այս կողմից դեպի Իրան փախչողներին հովանավորություն չպիտի ցույց տալ և պահանջված դեպքում պիտի հանձնել պահանջող կողմի վեքիլներին։ Բարձրյալն Աստուծո շնորհիվ, վերոհիշյալ պայմանները երկուստեք հարգվելու դեպքում, սույն բարեկամությունն ու անկեղծությունը այս երկու մեծ պետությունների, նրանց ազնվատոհմ խաների, նրանց հաջորդների ու ժառանգորդների միջև անխափան և հաստատ կմնա»։

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 93)։

Փադիշահի կողմից Նադիր-Շահին ուղարկված մեծամահակ և թանկարժեք նվերները

Այդ դարի պետական սովորույթներին ու բարքերին ծանոթանալու տեսակետից հետաքրքրիր է հիշել Սուլթանի կողմից Նադիր-Շահին ուղարկված մեծաքանակ և թանկարժեք նվերների մասին։

Փադիշահի հատուկ հրամանով պատրաստված այդ նվերները, մեծ հանդիսավորությամբ, Սադրազամի և պետական ու կրոնական բարձրաստիճան մարդկանց ժամանակ ցուցակագրվում են, Սադրազամի կողմից կնքվում և պարկերում ու անդուկներում տեղավորվում։ Իզզին իր պատմության մեջ ամբողջ էջեր է հատկացնում և այդ մասին խոսում ահեղամեծ մանրամասնությամբ, հիշելով նաև նվերների լրիվ ցուցակը։ Նվերների մեջ կային բազմաթիվ զոհաբեղեններ, ոգամանդներ, լալեր, յաղուբներ, ապարանջաններ և ամեն տեսակի զարդեղեն, ոսկեզօծ և արծաթապատ սրեր, դաշույններ և այլ զենքեր, աշխարհի ամեն կողմից ուղարկված թանկագին հագուստեղեն և այլն և այլն։ Պատմագիրը «չի մոռացել» հիշել նաև այդ զարդերից շատերի արժեքը 5—10, 20—30 հազար դուրուշներով, քնդամենը մոտ 400 հազար դուրուշ արժեքով, որն այն ժամանակի համար հսկայական գումար էր ներկայացնում։

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 94—98)։

1160 թվականի (1747) դեպքերից

Սաֆեվի Շահ-Հյուսեինի որդին՝ շեհզադե Միրզա-Սաեֆին ապաստանել էր Օսմանյան երկրում և Օսմանյան կառավարության հովանավորությանն արժանանալով, Ստամբուլում և այլ վայրերում ապրում էր հանգիստ ու ապահով։

1156 թ. դեպքերի շարքում հիշված էր, որ հիշյալ Շեհզադե Միրզան, հակառակ իրեն ցույց տրված շնորհներին, փորձում է թշնամական ընթացք բռնել Օսմանյան պետության դեմ, որի համար իր մարդկանց հետ միասին բանտարկվում է սկզբում Կարահիսար-Շարքիում և հետո Սամսոնում։ Նույն պատճառով Սամսոնում բանտարկված էր նաև Իրանի խաներից՝ Միրզա-Էսամը։

Պատմագրի ասելով Նադիր-Շահի դեպի Հնդկաստան կատարած արշավանքը Օսմանյան կառավարությանը կասկածանքի տեղի էր տվել։ Հակառակ բազմաթիվ դրություններին, հավաստիացումներին՝ Նադիր-Շահի նկատմամբ վստահություն դոյություն չուներ, ուստի նորից սահմանների ու բանակի ամրապնդման համար փադիշահական հրամաններ են ուղարկվում և հրահանգներ տրվում՝ զգույշ և արթուն մնալու։

Իրանից անկարգությունների, բշնամության մասին լուրերի ստացումը

Ռեջեբ ամսի սկզբին էրզրումի վալի Վեզիր-Իբրահիմ փաշայից Ստամբուլում ստացված դրությունից պարզվում էր, որ Գենջեի, Թիֆլիսի և Երևանի կողմերում Աջեմի այաններն և ժողովրդի միջև Իրանին հատուկ թշնամություններ, անկարգություններ և կռիվներ են ծագել, որոնք գնալով ավելանում և ընդարձակվում են։ Այսպես, Երևանի ժողովուրդը Նադիր-Շահի կողմից իրեն արված պանազան առաջարկներին հավանություն չի տվել և մերժել է, դուրս գալով հնազանդության սահմանից՝ ապստամբություն է բարձրացրել, իրենից սերքերդն նշանակել և ամրացնելով Երևանի բերդը, կռվի պատրաստվել։ Երբ Շահը իմանում է այդ բոլորը, որոշում է բերդը [Երևանի] նորից գրավել և բոլորովին ոչնչացնել ժողովրդին։ Հայտնի էմիր-Ասլան խանին մեծ քանակությամբ զինվոր տալով, Շահը ուղարկում է իր այդ նպատակը իրականացնելու։ Հիշյալ խանը Երևանը պաշարում է։ Քաջարի ժողովուրդը, Երևանի համար կյանքը զոհելու պատրաստ, սկսում է կռվել և պատերազմել։ Ներկայումս այդ դրությունը շարունակվում է։ Գենջեի, Թիֆլիսի, Թավրիզի և ընդհանրապես այդ շրջանների ժողովուրդների միջև տարաձայնություններ են առաջացել, խռովություններ ծագել և Նադիր-Շահի պետության խորտակումը նախատեսելով, նրանք դուրս են եկել հնազանդությունից, ապստամբվել։ Այդ բոլորը, որոնք հաղորդվում են Ստամբուլ՝ պետության կենտրոնին, ստացվել են էրզրումի և Կարսի կողմերում երթևեկող վաճառականներից։

Այս հաղորդումների ստացվելուց քիչ հետո, ինչպես ստորև մանրամասն ալիտի հիշվի, Նադիր-Շահի պետության կործանումը հայտնի է դառնում։

(«Թարիխի Իզդի», հատ I, էջ 128)։

* * *

Պատմագիր Սյուլեյման-Իզդին, խոսելով Նադիր-Շահի մահվան մասին, այն հանգրվանն է հայտնում, որ Օսմանյան պետության և իսլամական կրոնին թշնամի Նեմչեի (Ավստրիա) և Մոսկովի ցարուհու «մահվան ճիրաններում ոչնչանալուց հետո, երրորդ թշնամին—Նադիր-Շահն էլ չկարողացավ ազատվել այդ չարաբաստիկ վախճանից»։ Հետո երկարապատում խոսում է Նադիր-Շահի Օսմանյան պետության և իսլամական կրոնին պատճառած բազմաթիվ չարիքների մասին։*

---

*Տե՛ս «Թարիխի Սուբհիի» 6-րդ ծանոթագրությունը։

Նադիր-Շահի մահվան մասին հայտնում է Իրանի դեսպանը՝ Ելհաջ-Մուհամմեդ փաշան, Բաղդատի վալի՝ վեզիր Ահմեդ փաշայի միջոցով։ Հիշելով Նադիր-Շահի բազմաթիվ չարագործությունները նաև Իրանի ժողովրդի նկատմամբ, դեսպանը ասում է, որ Նադիրը շահական (արքայական) ծագումից չէր և իրապես շահ չէր, Իրանի ժողովուրդը նրան չէր հարգում և չէր ցանկանում հնազանդվել նրան։ Նադիրը Իրանի հայոնի այաններին տարբեր առիթներով և պատրվակներով սպանել և ոչնչացրել էր։ Նույն վերաբերմունքն ուներ նաև դեպի բանակի զեկավարները, որի համար բանակումն էլ նրա դեմ խոր ատելություն և թշնամություն էր առաջացել։

Նադիր-Շահի սպանությունից հետո Իրանում գոյություն ունեցող անկարգությունները և խռովությունները ավելի են սաստկանում։ Նույն վիճակին է ենթարկվում նաև բանակը։

Նադիրից հետո Իրանի շահական գահի շուրջ սկսում են տարիներ տևող կռիվներ ու արյունահեղություններ, որոնց մասին տարեգրական կարգով խոսում է պատմագիր Իզզին։

Երբ Ստամբուլում ստացվում է Իրանի դեսպանի պաշտոնական գրությունը, փադիշահը ֆերմանով հրամայում է Սադրազամին, որ բոլոր սահմանապահ զինվորների պետերին, վալիներին, փաշաներին և բոլոր բարձրաստիճանավորներին կարուկ հրամաններ տրվեն՝ Իրանի հետ նախապես կնքված դաշնագրի պայմանները ոչ մի կերպով չխախտելու մասին, միաժամանակ աչալուրջ հետևել Իրանում կատարվող դեպքերի ընթացքին։

Փադիշահական պալատում գումարված էնջյումենի-Շուրայի նիստում շեշտվում է փադիշահի վերոհիշյալ հրամանն ու ցանկությունը, և միաձայն որոշվում է խիստ չեզոքություն պահպանել Իրանի դեպքերի նկատմամբ։ Սահմանների հրամանատարներին հրահանգ է տրվում Իրանից Օսմանյան երկրում ապաստանող փախստականներին ընդունել, տեղավորել հարմար վայրերում՝ ապահովել նրանց անհրաժեշտ կարիքները։

(«Թարիխի Իզզի», հատ. I, էջ 177)։

1161 թ. (1748) դեպքերից

Իրանի դեսպան Մուհամմեդ-Աբդուլ խանի Ստամբուլ գալը

Պատմագիր Իզզին, հիշելով, որ Նադիր-Շահի սպանության հետևանքով Իրանում առաջացած դեպքերը նկարագրված են իր «Պատմության» I հատորում, II հատորում, կանգ է առնում նրա եղբոր որդու՝ Ալի-Կուլի խանի, Ալի-Շահ անունով Իրանի գահը բարձրանալու հետ կապված դեպքերի վրա։ Ալի-Շահին հաջողվում է երկրի տարբեր մասերում ծայր առած ապստամբությունները ճնշել։ Ալի-Շահը հայտարարում է, որ իր նախորդի օրով կնքված դաշնագրերը անփոփոխ պիտի պահպանվեն։ Նա Ստամբուլ է ուղարկում Մուհամմեդ-Աբդուլ-Քերիմ խանին՝ իբրև դեսպան, որն ընդունվում է ընդհանրապես դեսպաններին հատուկ մեծ հանդիսավորություններով և պատիվներով։ Որոշ ժամանակ հետո դեսպանը ընդունվում է վեհաշուք փադիշահի կողմից, ներկայացնելով Իրանից բերած գրությունը։

Ալի-Շահը իր նամակում, որը կազմված է Արևելքի արքունիքներին հատուկ փարթամ, հարուստ ու պատկերավոր ոճով, արտահայտություններով ու մակդիրներով, հավատիացնում է Օսմանյան փադիշահին, որ ինքը անշեղ կերպով պիտի պահպանի երկու իսլամական երկրների միջև ստեղծված բարեկամության և միության կապերը, հավատարիմ մնալով նախկինում կնքված դաշնագրերին։

Նույն ձևով և բովանդակությամբ գրություններ են ստացվում նաև Սադրազամի անունով Ալի-Շահի եղբայր և նրա Պետական Հավատարմատար (Լթիմատ-ուլ-Դեվլե) Իբրահիմ-Միրզա խանի կողմից։

Իրանի դեսպանը որոշ ժամանակ Ստամբուլում մնալուց հետո, նույն պաշտոնական արարողություններով ընդունվում է Փադիշահի կողմից և ստանալով Սուլթանի պատասխան գրությունը, վերադառնում է Իրան։

Սուլթանը իր պատասխանում շնորհավորելով նոր շահի գահակալության, միաժամանակ հայտնում է Օսմանյան կառավարության հաստատակամությունը գոյություն ունեցող դաշնագրերի անշեղ պահպանման և կատարման մասին, դրան ավելացնելով, որ Իրանի կողմից որևէ մեկի ոտնձգությունը Օսմանյան սահմաններին նկատմամբ պիտի պատժվի ամենախիստ կերպով։

Առհասարակ, հաճաձայն ընդունված կարգի, փադիշահից բացի, դեսպանի միջոցով պատասխան գրություն են ուղարկում Սադրազամը և Իսլամական Մնշեխները։

* * *

Իրանում նորից խառնակություններ են տեղի ունենում, որի մասին տեղեկություններն են ստացվում Բաղդադից, Էրզրումից և Ջլդըրից։ Ալի-Շահի եղբայր Իբրահիմ-Միրզան ապստամբություն է բարձրացնում, Շահը նրան պարտության է մատնում։ Իբրահիմ-Միրզան փախչում է և աֆղան ու ուզբեկ զինվորներ հավաքելով՝ Ադրբեջանում անկախություն է հայտարարում, հետո այլ ապստամբ ուժերին իր հետ միացնելով, մեծ բանակով գալիս է Շահի վրա։ Սուլթանիյեի ու Զենջանի միջև գտնվող դաշտում մեծ և կատաղի մարտեր են տեղի ունենում։ Շահի բանակի կարևոր մասը, դավաճանաբար, Միրզայի կողմն է անցնում, որի հետևանքով Շահը պարտվում է և մի խումբ մարդկանցով փախչում։ Միրզան գրավելով Շահի ռազմամթերքն ու թնդանոթները, զինվորներ է ուղարկում Շահին հետապնդելու։ Շահին բռնում և աչքերին միլ քաշելով՝ սպանում են։

Սրանից հետո թշնամություն է առաջանում Միրզայի և իր զինակից Էմիր-Ասլան խանի միջև։ Կատաղի կռիվներից հետո վերջինիս զինվորները Միրզայի կողմն են անցնում։ Միրզան իր բոլոր հակառակորդներին Թավրիզում մահվան է դատապարտում և իրեն հայտարարում է Իրանի շահ։ Որոշ ժամանակ հետո Սնֆնվի-Շահ-Հյուսեինի գերդաստանից Շահրուխ-Միրզան, որն համարվում էր Նադիր-Շահի գահաժառանգը և կարողացել էր տիրանալ նրա հարստություններին, Խորասանի և այլ վայրերի ցեղերից մոտ 60 հազար զինվոր իր շուրջը հավաքելով՝ փորձում է Իրանի գահին տիրանալ։ Այսպիսով, Իրանը ամբողջությամբ խռովությունների և կռիվների աստարենց է դարձնում։

Նման իրադրության մեջ Բաղդադի վալի Էլհաջ-Ահմեդ փաշան ծածկաբար, Նադիր-Շահի ժամանակ դեսպան եղող և այդ ժամանակ Բաղդադում ապրող Մուսաֆա-Խանի կողմից մի գրություն է ուղարկում Սուլթան, որով հայտնում

էր, թե Իբրահիմ-Միրզան իր եղբայր Ալի-Շահին պարտության ենթարկելով՝ ներկայումս Իրանի իրական իշխողն է հանդիսանում և պատրաստ է Օսմանյան կառավարության հետ կնքված դաշնագրերը հարգել։ Այդ մասին Իբրահիմ-Միրզան իրեն լիազորել և դեսպան է նշանակել։ Նա խնդրում էր Օսմանյան կառավարության բարյացակամ վերաբերմունքը և հայտնում, որ ինքը պատրաստ է դեսպանի պաշտոնով Ստամբուլ գալ։

Օսմանյան կառավարությունը, նկատի ունենալով Իրանում շարունակվող դրության անորոշությունը, հրահանգ է ուղարկում Բաղդատ, որ Իրանի դեսպանին առայժմ պետք է Բաղդատում պահել, անհրաժեշտ նյութական օգնություններ և հարգանքներ տալ նրան և սպասել նոր հրահանգի։

(«Թարիխի Իզզի», հատ. II, էջ 184—186)։

1162 թվականի (1752) դեպքերից

Իրանի դեպքերի մասին սահմաններից ստացված տեղեկությունները.

Տարբեր թվականներով Կարսի, Ջլդրի և Էրզրումի վալիներից Ստամբուլ ուղարկված տեղեկություններից պարզվում էր, որ Նադիր-Շահի գլխավոր մունետիկը եղող Ջևշաիր աշիրեթի պետը՝ Սարիչելի-Փենահ անունով անձը, շրջակա աշիրեթներից 10 հազար զինվոր հավաքելով, մտադիր է հեռացնել Թիֆլիսի Թահմուրաս [Թեյմուրազ] խանին, գրավել Թիֆլիսի բերդը և իրեն սերքերդե հայտարարել։ Թեյմուրազ խանը տեղեկանալով այդ մասին, անմիջապես սկսում է պատրաստվել, Կախեթի խանը եղող իր որդուն Հերակլ խանին ուղարկում է Ջարնալեի [Ջարթալե] կողմերը, այդտեղի լեզգի բեյերին նվերներ ուղարկում և նրանցից մեկին էլ իր աղջիկը կնության տալով, լեզգի բեյերին իրեն է ենթարկում։ Բացի այդ՝ Թեմուր-Կափուի (Դերբենդ) կողմը Մոսկովին դիմում ուղարկում և օգնություն է խնդրում։ Թեյմուրազ խանը այս միջոցներով իր գործերը կարգի է բերում։

Այդ ժամանակ Նադիր-Շահին սպանող՝ նշանավոր Կաջար-էֆշար աշիրեթից Նեհիլ-Մուհամմեդ խանը, ապահով չինելով Շահրուխ Շահից և վախենալով, որ նա հոր վրեժը իրենից կառնի, իր բնակավայրից՝ Քերնեյից, խառնակ ցեղերից մարդիկ հավաքելով, Երևանի բերդը գրավելու նպատակով, շարժվում է դեպի այդ կողմը։ Նրա ազգականներից, Շահի ներկայացուցիչը Երևանում՝ Հասան-Ալի բեյը, իր զինվորներով, դուրս է գալիս Երևանից և Ոկուխանլու կոչված վայրում տեղի ունեցած ընդհարումների ժամանակ վերոհիշյալ Մուհամմեդ խանն ևս գալիս միանում է նրան։ Երևանի

թանակը պարտվում և Հասան-Ալի բեյը բռնվում ու բանտարկվում է։ Հաղթողները պաշարում են Երևանը։ Երևանի խան՝ Հյուսեին խանը և պահապան Աբդուլլահ խանը գաղտնի մարդիկ են ուղարկում Թիֆլիսի Թեյմուրազ խանին և նրան 100 հազար ղուրուշ խոստանալով՝ օգնություն են խնդրում։ Թեյմուրազ խանի որդին Հերակլ խանը, մոտ երկու հազար վրացի զինվորներով Թիֆլիսից շարժվում և շտապ կերպով գալիս է դեպի Երևան և հիշյալ Մուհամմեդ խանի դեմ Երևանի տակ կռվի բռնվում։ Մուհամմեդ խանը չկարողանալով դիմադրություն ցույց տալ, իր մեկ-երկու մարդկանցով փախչում է։ Նրա զինվորների մեծ մասը սրի են անցկացվում, նրանց բոլոր ինչքերը կողոպտվում և թալանվում են։ Հերակլ խանը հետապնդում է փախուստի դիմող խանին, նրա բնակավայր Քերնեյում մտնում նրա բնակարանը, ավերում և նրա բոլոր դրամներն ու ինչքերը կողոպտելով՝ վերադառնում է։ Այդ ժամանակ բռնված և բանտարկված Շահի ներկայացուցիչ Հասան-Ալի բեյը ազատվում է։ Այսպիսով, Երևանը այդ փորձանքից ազատվում է թեև, սակայն հիշյալ Թեյմուրազ խանը փորձում է մտնել Երևանի բերդը։ Երևանի Հյուսեին խանը և Երևանի պահապան Աբդուլլահ խանը շտապում են հայտնել, որ առանց Իրանի Շահի՝ Շահրուխ խանի հրամանի չի կարելի Երևան մտնել։ Այս կարուկ մերժողական պատասխանը ստանալով, Թեյմուրազ խանը կանգ է առնում Երևանի և Ուչ-Քիլիսեի միջև Բարդակչի կոչված վայրում և Բեզդեվարի և Արփա-Չայի շրջակայքում Իրեմլու և Թաշենլեր աշիրեթների ժողովրդին կողոպտում և թալանում է։ Աշիրեթների պետերը՝ Հաքվերդի և Նաջաֆ-Ալի խանները դիմադրություն ցույց չտալով՝ փախչում և թաքնվում են։ Թեյմուրազ խանը այդ շրջաններում տեր և տիրական է դառնում, սկսում է Երևանից իբրև սալյանե* դանձել նախապես իրեն խոստացված 100 հազար ղուրուշը։ Այդ ժամանակ Թավրիզի խանը Թեյմուրազին գրություն է ուղարկում և հայտնում՝ «Դու ինչպե՞ս ես համարձակվում այդպիսի վերաբերմունք ցույց տալ, միթե Շահի կողմից ես նշանակված»։

Թեյմուրազ խանը պատասխանում է՝ «երկու պետությունների սահմանների վրա ավազակներ են երևացել, թշնամության և խառնակությունների տեղի չտալու և Իրանի Շահի համաձայնությունը ստանալու համար եմ անում»։ Այս գրությունը ուղարկում է իր մարդկանց միջոցով և առաջվա նման շարունակում է դրամ հավա-

---

* Սալյանե — տաբեկան միանվագ առնված հարկ։

քել և իր իշխանությունը ցույց տալ, ռայաներին և բերայաներին տուգանել:

Այդ ժամանակ, նախապես Երևան եկած և զինվորներ հավաքելով Թիֆլիսին վնասներ պատճառելու նպատակ հետապնդող Սարիչելի-Փենահ անունով անձը, տեղեկանալով Թեյմուրազ խանի այս աստիճան ուժեղանալու և բռնություններ գործադրելու մասին, վախենում է նրանից և իր սկզբնական նպատակից հրաժարվելով, Թեյմուրազ խանին հպատակվելու նպատակով...* հրացաններ և այլ նվերներ է ուղարկում նրան և ինքն էլ անձամբ նրա մոտն է ապաստանում: Ներկայումս Երևանի, Թիֆլիսի, Գենջեի և Շամախիի բնակիչները և իրենց սերքերդենները լիովին ենթարկվել և հպատակվել են Թեյմուրազ խանին և ամեն դեպքում կատարում են նրա հրամանները

Հետո պատմագիրը շարունակում է խոսել Իրանում տեղի ունեցող խառնակությունների, անվերջ կռիվների, շահության բազմաթիվ թեկնածուների և այդ կռիվների հետևանքով տեղի ունեցած ավերումների և կոտորածների մասին:

Օսմանյան պետությունը, տեղեկանալով այդ բոլորի մասին, շարունակում է պահպանել իր նախկին քաղաքականությունը— կնքված դաշնագրերին հավատարիմ մնալու քաղաքականությունը: Այդ մասին նորից խիստ հրամաններ են արրվում, միաժամանակ հիշեցնելով, որ Իրանից Օսմանյան երկրում ապաստան փնտրող ժողովրդին սիրով պետք է ընդունել՝ հարմար ժամանակ նորից իրենց երկիրը վերադարձնելու պայմանով, ժամանակավորապես նրանց բնակավայրեր հատկացնել:

Հետո պատմագիրը առանձին գոհունակությամբ և կարևորությամբ նշում է, որ «վերջին մի քանի տարիներում Ռումելիում և Անադոլուում, առանց զինվորական շարժումների, սիրող հանգստությունը և իսլամական երկու երկրների միջև բարեկամության և հաշտության ապահովումը, նորին վսեմություն փադիշահի** և նրա պետական ղեկավարների իմաստուն և հատուկ քաղաքականության շնորհիվ է ձեռք բերվել»:

(«Թարիխի Իզզի», հատ. II, էջ 210—212):

1163 թվականի (1749) դեպքերից
Իրանի մասին հաղորդից ստացված լուրերը

Պատմագիրը այս հատվածում մանրամասնորեն պատմում է մի շարք դեպքեր, կապված Իրանի անիշխանական և խառնակ դրության հետ Այսպես, Իրանի նախկին դեսպան Մուստաֆա խանը դիմում է Օսմանյան կառավարությանը և առանձնապես ծանրանալով մուկովների (ռուսների) դեպի Գիլան առաջանալու

---

* Անընթեռնելի է:

** Սուլթան Մահմուդ խան՝ 1143—1168 թթ. (1730—1754):

հավանականության վրա, խնդրում է Օսմանյան կառավարության համաձայնությունը և օժանդակությունը, որպեսզի ինքը իր կողմնակից և իրեն հավատարիմ ուժերով գրավի Իրանի մեծ մասը և այդ կերպով արգելը լինի Մոսկովների առաջխաղացման։ Դեսպանի ասելով՝ իրանում արքայական ներուժը վերջացած լինելով, մնացածները անկարող են երկրում խաղաղության և պետական կարգ ու կանոնը վերահաստատել։

Օսմանյան կառավարությունը, նկատի ունենալով, որ դեսպանի առաջարկն ու ցանկությունները նրա անձնական փառասիրության և բախտախնդրության արդյունքն են, որ Իրանի ներքին գործերին Օսմանյան կառավարության միջամտությունը հակասում է գոյություն ունեցող համաձայնություններին և դաշնագրերին, մերժում է դեսպան Մուստաֆա խանի առաջարկը։

(«Թարիխի Ղզլբաշ», հատ. II, էջ 228—230)։

* * *

Իրանի ահմանակից Կարսի, Էրզրումի, Ջըլդրի և Բաղդատի վալիներից ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ Իրանի խառնակ դրությունը շարունակվում է։ 1160 թ. Նադիր-Շահի սպանությունից մինչև 1163 թ. վերջը, երեք տարվա ընթացքում 6—7 անձնավորություն շահական գահը ձեռք բերելու հետամուտ լինելով, անդադար կռիվներով շարունակում էին իրար ոչնչացնել, ժողովրդին կոտորել, կողոպտել, և երկիրը քարուքանդ անել։ Պատմագիրը հեգնանքով է խոսում շահության բոլոր այդ թեկնածու սրկաձախնդիրների մասին, տալով նրանց բնութագիրը և իշխանությունը վերականգնելու նրանց անկարողությունը։ Իրանի շահության թեկնածուների շարքում հիշում է նաև Թիֆլիսի Թնյմուրազ խանին, որը՝ «օգտվելով ժամանակից և ստեղծված դրությունից, իր վրացի զինվորներով հարձակվեց Աջեմի ցեղերի վրա, Երևանը, Գենջեն, Թիֆլիսը և դրանց շրջակայքը իր իշխանությանը ենթարկեց և այդ ժամանակ լեզգի ցեղի հետ իր ունեցած մոտիկության շնորհիվ լեզգիներին էլ իր կողմ շահելով և նրանց օգնությամբ ուժ ու համբավ ձեռք բերելով, հայտարարեց թե՝ «Շահը ես եմ, ուրիշը չկա»։

(«Թարիխի Ղզլբաշ», հատ. II, էջ 235—238)։

1164 թվականի (1750) դեպքերից

Իրաճի մասին Բաղդատից ստացված լուրերը

Բաղդատի և Բասրայի վալի վեզիր Սյուլեյման փաշայի Դերսեադեթ հաղորդած տեղեկություններից պարզվում էր, որ Ազատ խանը Թավրիզի, Ուրմիայի բերդերը գրավելով, ներկայումս գտնվում է Ուրմիայում և մի քանի ամիս առաջ Երևանի բերդը գրավելու նպատակով որոշ քանակությամբ զինվորներով Մուսա խանին ուղարկել է Երևանը պաշարելու։ Երբ վերջինս հասնում է Նա-

խիջևան, լսելով որ Թիֆլիսի Թեյմուրազ խանը մեծ քանակությամբ զինվորներով գալիս է դեպի Նախիջևան, այլևս առաջ չի գնում։ Թեյմուրազ խանը Ազատ խանից օգնություն է խնդրում, սա էլ Ահմեդ խանին մեծ քանակությամբ զինվորներով ուղարկում է վերահիշյալ Մուսա խանի տրամադրության տակ։ Այս կերպով բանակները միանալով ուժեղանում են։ Սակայն Թեյմուրազ խանի ժողովուրդը [բանակը] փոքրաթիվ լինելով, անկարող է դրամ կռվելու, ուստի նա առանց հարձակում գործելու, դրավոր կերպով դիմում է Ազատ խանին և նրա օգնությունը խնդրում։ Ազատ խանը Երևանը գրավելու նպատակով առաջ է շարժվում և Երևանի մոտ միանում վերոհիշյալ Թեյմուրազ խանին, որն իր զինվորներով այդ շրջանին մոտ էր գտնվում։ Նա անսպասելի կերպով հայտնվում է այդտեղ. երկու կողմի առաջապահ զինվորների ընդհարումից հետո Թեյմուրազ խանը խարդախության դիմելով, ցույց է տալիս, թե ինքը պարտվել է և ետ է քաշվում։ Ազատ խանը այսպիսի անսպասելի հաղթությամբ հպարտացած և ինքնավստահ, իր բանակը տեղից շարժում է և փոխադրում ուրիշ վայր և երբ նա դրաղված էր բանակը կարգի բերելով, Թեյմուրազ խանը իր բանակը բաժանելով վեց մասի, տարբեր կողմերից հարձակվում է Ազատ խանի վրա և նրան պարտության մատնում։ Ազատ խանը ստիպված է լինում փախչել, նրան հետապնդում են վեց կոնաք տարածության վրա, նրա զինվորների մեծ մասին սրի են անցկացնում, մնացածներին բռնում և շղթայում են։ Ազատ խանը ապաստանում է իր ծննդավայրում՝ Ուրմիայի բերդում։ Նրա 12 հազարանոց բանակից միայն 4000 զինվոր է մեծ դժվարություններով հասնում հիշյալ բերդը։ Ահա այսպիսի վախճան է ունենում Ազատ խանի անկախություն ձեռք բերելու փորձը։

(«Պարիսի Իզվի», հատ. II, էջ 243)։

Բաղդասից հաղորդված Իրանյան լուրերը.

Բաղդատի և Բասրայի վեզիր Սյուլեյման փաշան Ռամազանամսի 11-ին հաղորդում էր.

Այդ ժամանակ Խորասանից, Իսֆահանից և Իրանի այլ վայրերից Բաղդատ եկած հաջիններից և ուխտավորներից և Իսֆահանից երևելիներից Միրզա-Աբդուլ-Մուհմի ձեռքով Իսֆահանի ուխտանները և այաններն մի դրություն են ուղարկել Բաղդատում ապրող դեսպան Մուստաֆա խանին. դրությունից պարզվում է, որ

Իրանում խառնակ դրությունը շարունակվում է, որ բնակիչները սպրում են ամենածանր պայմաններում, որի համար դիմելով դեսպանին՝ խնդրում են Օսմանյան կառավարությանը, Սեֆեվիների դերդաստանից մեկին շահ նշանակելու գործում օժանդակության ցույց տալ։ Նաև այդ դիմումը ուղարկել էր Երջանիկ Ախիթանն, խնդրելով վանեմ Սադրազամից ներկայացնել այն Նորին Վսեմություն փադիշահին։ Փադիշահը ծանոթանում է հիշյալ դիմումի բովանդակությանը և նրա հրամանով Սադրազամը դեսպանին խրատական իմաստով պատասխան է ուղարկում և հայտնում է, որ անտարակույս՝ Իրանի ժողովրդի դրությունը խիստ ծանր է և ժողովրդի անվերջ տառապանքներն ու տանջանքները Օսմանյան կառավարությանը ևս խոր ցավ և կսկիծ են պատճառում, սակայն վանեմ խանին ևս հայտնի է, որ Օսմանյան կառավարությունը Իրանի հետ կապված դաշնագրերին միշտ հավատարիմ է եղել և շարունակում է մնալ, եթե հիշյալ խնդրագրի համաձայն Օսմանյան կառավարությունը որևէ քայլի դիմի, դրանով իսկ խախտած կլինի իր պարտավորությունները։

Հետո նույն Սյուլեյման փաշայի կողմից հայտնվում է նաև հետևյալը.

Նադիր-Շահից առաջ, Սեֆեվի Շահ-Հյուսեինի իշխանության ժամանակ, Հյուսեին-Միրզա անունով մի անձ, պնդելով, թե ինքը Թահմազ Շահի որդին է, Օսմանյան կառավարությանը ապավինելու համար Բաղդատ է գալիս, բայց նրա շահզադեության մասին ապացույցներ չլինելու պատճառով, իբրև շահզադե չի ընդունվում։ Հետո այդ անձը իր ցանկությամբ գնում է Նվիրական Մեշհեդը։ Այնտեղ բնակվող Իրանի հայտնի խաներից և կրոնավորներից շատ երևելիներ հայտնում են, որ այդ անձը իրապես Շահ-Թահմասի որդին է, որ իրենք տեսել և ճանաչում են նրան, հետո, Նադիր-Շահը Թահմաս-Շահին գահընկեց անելու ժամանակ փախցնում են Մոսկովի կողմերը։ Այս հանգամանքը հաստատում է նաև Բաղդատում ապրող դեսպան Մուստաֆա խանը։

Այս հանելուկային անձի մասին ևս Սուլթանական կառավարությունը, նույն հիմունքներով, իր բացատական պատասխանն է տալիս և Նորին Վսեմություն փադիշահի հանձնարարությամբ Սադրազամը, հատուկ դրությամբ, հանգամանորեն բացատրում է Իրանի ներքին գործերին վերաբերյալ նման հարցում Օսմանյան կառավարության միջամտելու անպատեհությունները։

Միաժամանակ փադիշահի հրամանով հիշյալ «Ենհզադեին» հազար ոսկի և այլ բազմաթիվ նվերներ տալով ետ են ուղարկում Իրան։

(«Թարիխի Իզզի», հատ. II, էջ 255—256)։

* * *

«Թարիխի Իզզիի» առաջին հատորում հիշված էր Իրանի հետ հաշտության և ֆաղաղության դաշնագրի կնքման կապակցությամբ, Նադիր-Շահին ուղարկված մեծաքանակ նվերների մասին։ Այդ նվերները տանում էր Կեսարացի-Ահմեդ փաշան։ Ահմեդ փաշան դեռևս այդ նվերները Շահին չմատուցած, Նադիր-Շահը սպանվում է, որով փաշան ստիպված է լինում նվերներով միասին Բաղդատ վերադառնալ։ Որոշ ժամանակ հետո Ահմեդ փաշան ևս մահանում է և նվերները պաշտոնական ձևականություններով պահվում են Բաղդատում, ապագա Շահին նվիրելու նպատակով։ Բայց որովհետև Իրանում երկար ժամանակ Շահ չի գահակալում, Ստամբուլից արված կարգադրությամբ հիշյալ նվերները ետ են բերվում Ստամբուլ և հանձնվում Աբրթայիկան գանձարանին (Խազինեի Ամիրե)։

* * *

Հաջորդ հատվածում պատմագիրը մանրամասնորեն նկարագրում է Իրանում շարունակվող անիշխանական դրությունը և մի շարք բախտախնդիր խաների շահության ձգտելու կապակցությամբ Իրանի ժողովրդի նկատմամբ կատարված բռնությունները, գազանությունները։ Պատմագիրը այդ բոլորը հիշատակում է խիստ մռայլ գույներով։

1165 թվականի (1751) դեպքերից

Զլդըրից և էրզրումից Իրանի մասին ստացված լուրերը

Շաբան ամսի 25-ին այդ վիլայեթների վալիներից ստացված գրություններից պարզվում էր, որ

«Ներկայումս Թիֆլիսի Թեյմուրազ խանը և նրա որդին Կախեթի խան Էրեկլի [Հերակլ] խանը, վերջերս Իրանում տեղի ունեցած խռովությունների և Շահերի անկայունության հետևանքով՝ առիթից օգտվելով, հարձակումներ են կազմակերպում և իրենց հատուկ դողությամբ և հպարտությամբ այս անգամ վրացի և այլ ցեղերից մեծ թվով զինվորներ հավաքելով, 70—80 թնդանոթներով, զեներեկներով* և այլ ռազմական պատրաստություններով Թիֆլիսից դուրս են եկել։ Վերոհիշյալ խանները Քշնամության մեջ լինելով լեզգի

---

* Զեներեկ — շարժելու և սեղմելու հատուկ երկաթյա աղեղ։

խաներից Շեքիի սանջակի մութասարրիֆ Հաջի-Չելեբի անունով խանի հետ, գնացել են դեպի Գենջե և այդ շրջանում կանգ առել Կարաջա-Դաղի խան Քյոր-Քազիմ խանը, Գենջեի խանը՝ Շահվերդի և Ջավանշիրի հասարակության կառավարիչը՝ Սարիջալի-Փենահ անվամբ անձինք ստիպված են եղել հնազանդության ցույց տալ Թեյմուրազ խանին և վերոհիշյալ Հաջի-Չելեբիից վրեժ լուծելու նպատակով միացել և շտապել են գնալ դեպի այդ կողմը։ Սակայն ջրերի հորդառատ լինելու պատճառով չեն կարողացել Կուր գետն անցնել և կանգ են առել Բերդա կոչված վայրում։ Հաջի-Չելեբիի դեմ հաղթության ձեռք բերելուց անհույս, նրանք այդ նպատակից հրաժարվել են և վերադարձել։ Թեյմուրազ խանը իրեն ենթարկված խաներին ամբաստանելով՝ բոլորին բռնում և բերում է Գենջեի մոտերքը։ Գենջեի բանտում նրանց բանտարկելու նպատակով փորձում է քաղաք մտնել։ Սակայն Գենջեի բնակիչները՝ միանալով, կռվում և Թեյմուրազ խանին հետացնում են։ Այդ մասին տեղեկացնելով հիշյալ Հաջի-Չելեբիին, նրանից օգնություն են խնդրում։ Հաջի-Չելեբին լեզգի զինվորներով և դաղստանցի այլ քաջարի մարտիկներով շարժվում է և Կուր գետի վրա կամուրջ կառուցելով արագորեն անցնում և Գենջեի մոտ, Յուզ-Բինիելի կոչված վայրում անսպասելի կերպով հանկարծակի և ուժեղ հարձակում գործում վրացի զինվորների վրա և կոիվ սկսում։ Երբ առյուծանման լեզգի զինվորների հաղթանակը պարզ կերպով երևում է, Թեյմուրազ խանը և նրա ենթակաները վախից սարսափահար փախուստի են դիմում։ Լեզգիները վրացի զինվորների մեծ մասին սրի են քաշում և իրենց վրեժը լուծում. նրանց բոլոր թնդանոթները, զենքերեքները, վրաններն և այլ ապրանքները կողոպտում և գրավում են. Թեյմուրազի մոտ գերված բոլոր խաներին ազատ են արձակում։ Հաջի-Չելեբին Գենջեի խանությունը նորից Շահվերդի խանին թողնելով, ինքը հաղթականորեն վերադառնում է իր մայրաքաղաքը՝ Շեքիի սանջակը։

Այս իրադարձություններից հետո Թիֆլիսի էյալեթում ապրող թերաքեմե ցեղերը, Թեմուրլիի և Հասանլուի ժողովուրդները իրենց կամքով և ցանկությամբ ենթարկվում են հիշյալ Հաջի-Չելեբիին։ Թեյմուրազ խանը և նրա որդին՝ հաշտվելով իրենց հասած դժբախտության հետ, մի քանի վիրավոր և ընկճված մարդկանց հետ, հազար դժվարություններով և տանջանքներով Թիֆլիս են հասնում և վերջին օրերում, իրենց դառդության և հպարտության պատիժը կրած լինելով, ղջում են։ Վախենալով, որ հիշյալ

Հաջի-Ջելեբին կարող է իրենց վրա հարձակվել, նրանք սկսում են ուժեր հավաքել և պատրաստվել։

(«Թարիխի Իզզի», հատ. II, էջ 275—276)։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սեբրան ակշեսի *(գործածվում է նաև «սեբման»)*—*ենիչերիական բանակի [օջաքի] որոշ մասը կոչվում էր «սեբբան», իսկ դրանց պետը՝ Սեբբան-բաշի։ Սեբբան ակշեսի—սեբբաններին պետական գանձարանից հատկացված գումար։*

2. Էնջյումենի-Շուրա—*Էնջյումեն բառացի նշանակում է մեջլիս, ժողով, ընկերություն, խորհուրդ, Էնջյումենի-Շուրա՝ Պետական խորհուրդ, պետական բարձրագույն խորհրդակցություն, որին հաճախ մասնակցում էր նաև Սուլթանը։*

3. Սուլթան Մուրադ IV *ժամանակ Իրանի և Թուրքիայի միջև կնքված հաշտության դաշնագրի մասին 1049 թ. Մուհարրեմ ամսի 14-ին (1639), որը պատմության մեջ հայտնի է* Kasri—Şirin Muahedesi *անունով, խոսում է նաև պատմագիր Նայիման*։ Կասրի-Շիրինի դաշնագրով Իրանի և Թուրքիայի միջև հաստատված սահմանները գրեթե անփոփոխ պահպանվել են մինչև օրս (ավելի ուշ Իրանը Անդրկովկասում իր գրաված որոշ մասերը վիճել է Ռուսաստանին)։

*Նադիր-Շահի ժամանակ հաճախ կրկնված՝ Սուլթան Մուրադ IV օրոք կնքված դաշնագրով որոշված սահմանների մասին (որոնք 1159 թ. կնքված դաշնագրին** ևս հիմք կազմեցին), որոշակի գաղափար տալու համար, մենք նպատակահարմար ենք համարում այդ դաշնագրի տեքստը տորև բերել նույնությամբ***։*

1049 թ. (1639 թ.) Սուլթան Մուրադ IV սուլթանության ժամանակ Իրանի պետության հետ կնքված կայսերական դաշնագիրը հաշտության, խաղաղության ու սահմանների մասին։

Դաշնագրի սկզբում, ինչպես առհասարակ ընդունված էր այդ ժամանակ, երկարորեն հիշվում են Իսլամական կրոնին և նրա հիմնադրին վերաբերող փառաբանություններ և Ղուրանից վերցված այեթներ, հետո օսմանյան սուլթանների հզորության և հարատևության մասին մակդիրներով շռայլված խոսքերը... Այնուհետև

---

* *Տե՛ս «Թարիխի Նայիմա»-ի վերջին հատվածը։*

** *Տե՛ս «Թարիխի Իզզի» 1159 թվականի դեպքեր վերնագրով հատվածը։*

*** معاهدات مجموعس، ايكنجى جلد، جوزؤ ١، درسعادت ١٢٩٤
صحيفه ٢١٠—٢١٢.

ասված է՝ «Իրանի շահի կողմից Մուհամմեդ-Կուլիի միջոցով ուղարկված նամակը ստացված է և բովանդակությանը ծանոթացված, որից պարզվում է, որ Դուք [Իրանի Շահը] խաղաղություն և հաշտություն եք պահանջում։ Իմ Մեծ վեզիրը, Արևելքի կողմի սերդարը և սիփահսալարը՝ Մուստաֆա փաշան Ձեր կողմից ուղարկված ներկայացուցչի հետ տեսակցելով հաշտության և սահմանների որոշման մասին բանակցել են...

Բաղդատի և Ադրբեջանի կողմերում գտնվող սահմաններից Ջեսարի և Բաղրանի անունով վայրերը պետք է պատկանեն մեր կայսերական կողմին, Միդելջին Կասաբայից մինչև Դերթենգե, Դերթենգե և Սերմիլ կոչված վայրը սահման պիտի համարվի և նրանց միջև գտնված դաշտերը միասին Մեր կայսերական կողմին պիտի պատկանեն։ Դրանց մոտ գտնվող լեռը այն կողմ պիտի մնա. Դերնեն և Դերթենգեն սահմանի սկիզբ ընդունելով, մեր կայսերական կողմին պիտի պատկանեն. Ջան աշիրեթների Զիաեդդին և Հարունի անունով ցեղերը Մեր Մեծության կողմը պիտի լինեն, իսկ Բիրեն և Զերդուլին՝ մյուս կողմը պիտի մնան. լեռան վրա գտնված Զենջիր-Կալասին պիտի քանդվի ու ավերվի և հիշյալ քանդված բերդի արևմուտքում գտնվող գյուղական վայրերը մեր կայսերական կողմին պիտի պատկանեն, իսկ արևելքում գտնվող գյուղական վայրերը՝ մյուս կողմին։ Շեհրի Զորի մոտ՝ Զալեմ-Կալասիի այն կողմը գտնվող լեռան վերոհիշյալ բերդին նայող շրջակայքը մեր կայսերական կողմից պիտի գրավվի, իսկ Օրման-Կալասիի շրջակայքը [ենթակա] գյուղերով միասին մյուս կողմին պիտի պատկանի. Ջղան լեռնանցքը Շեհրի-Զորին իբրև սահման, Գըզլջան և շրջակայքը Մեր կայսերական կողմից պիտի գրավվի, իսկ Մեհրիբանը շրջակայքով միասին մյուս կողմին պիտի մնա. Վանի սահմաններում Կոթուր, Մակու և Կարսի կողմում Մաղազերդի [Մանազկերտ] բերդերը քանդելու մասին երկու կողմից որոշում է ընդունված։ Վերոհիշյալների մասին՝ ըստ վերև հիշված պայմանների և որոշումների, Ձեր համաձայն լինելը և հետ այսու պաշտոնական դաշնագիրն ու պայմանագրությունը պահպանվելով, անհրաժեշտ բարեկամություն և հոգատարություն ցույց տալը և մեր հավատքին հավատարիմ մնալու մասին հավաստիացում եք տալիս և նրա [դաշնագրի] խանգարումից և դրժումից զգուշանալու և խուսափելու մասին Ձեր նամակում բացատրում եք և խնդրում, որ Ձեր Մեծության կողմից ուղարկված կնքված գրությունը Մեր կայսերական կողմից ընդունվի։ Սկզբից ի վեր «Խոստման իրա-

գործումը մեծության [վեհանձնության] ապացույցն է» սկզբունքի համաձայն, հատկապես ժողովրդի ապահովության, երկրի և քաղաքների բարեշինության և հանգստության համար կնքված հաշտությունն ու ընդհանուր խաղաղությունը ընդունված է հետևյալ պայմանով. որոշված և սահմանված շրջանակներում և Մեր կայսերական կողմին, մեր արդարադատությամբ պահպանված երկրներին և քաղաքներին պատկանող վայրերից, դաշտերից և հողերից կրզլբաշները պետք է ձեռք քաշեն [հրաժարվեն], թե բարեշեն և թե Թափուր հողերը, իբրև լիվաններ և ենթակա վայրեր, Մեր վսեմության Բարձր դռան գրավման տակ պետք է գտնվեն: Հիշված հողվածներից բացի, Ախալցխայի, Կարսի, Վանի, Շահրի-Զորի, Բաղդատի, Բասրայի և այլոց սահմաններում գտնվող բերդերը, երկրները և նահյենները, հողերը, դաշտերը, լեռները և բլուրները մյուս կողմի միջամտման և հարձակման ենթակա չպիտի լինեն: Մեր Մեծ նախնիքների երջանիկ ժամանակներից Ձեր նախորդներին ուղարկված պայմանագրի բոլոր պարզորոշ պայմանները պիտի հարգվեն: Ձեր իշխանության տակ գտնվող մի քանի ստոր և անարգ մարդկանց, Աստված մի՛ արասցե, նվիրական շեյխերի և ճրագնավորների և այլ ընտրյալ անձանց և մյուջթեհիդ իմամների մասին անարգական լեզու գործածելու արտոնություն չպիտի տրվի և պիտի արգելվի, ոչ մի կերպ չպիտի թույլատրվի, որպեսզի ընդունված հաշտության պայմանները հավիտյան պահպանվեն և ուժի մեջ մնան, եթե միայն Ձեր կողմից խաղաղության և բարեկամության հակառակ, տարաձայնության և հակառակության պատճառ եղող անպատշաճ ընթացք ցույց չտրվի և երևան չգա: Մեր փառապանծ փադիշահության կողմից ևս վերև հիշված պայմանները պիտի հարգվեն: Ձեր երկրի և ժողովրդի վրա հարձակում չկատարելու համար, Ձեր ուղարկած գրության [պայմանագրին] իբրև պատասխան սույն անկեղծությամբ լի կայսերական գրությունը կազմված և գրի է առնված, որպեսզի մեր միջև Թշնամությունը վերացվի և անկեղծությունն ու բարեկամությունը ամրապնդվի: Ձեր հարգելի սեֆիրը (դեսպանը) արժանացել է մեր փադիշահական տեսակցությանը և իր աղնվականությունն ու կատարելությունը ըստ արժանվույն ապացուցելուց հետո, Մեր Վսեմության թույլտվությամբ Ձեզ մոտ վերադառնալու իրավունք է ստացել: Մեր կայսերական նամակը Ձեզ հաղորդելու համար նշանակված իմ Բարձր և երջանիկ դռան մյութեֆերիբաններից Մուհամմեդ Մյութեֆերիբան

նրա հետ միասին ճանապարհ ընկավ... [սույն գրությունը] գրվեց Շևվալ ամսի սկզբին 1049 թ.։

4. **Մեշեյխներ** — *(շեյխ բառից)* շեյխություն, թեքնի շեյխություններ։ *Առհասարակ գործ է ածվում Մեշեյխեթի-իսլամիյե՝ Շեյխ-ուլ-իսլամության իմաստով։ Սկզբում այս իսլամական-շարիաթական պաշտոնը «Բաշ մյուֆթիլիք» անունով է կազմակերպվել և ի վերջո «Ուլեմա» դասի ամենաբարձր և հեղինակավոր Շեյխ-ուլ-իսլամության աստիճանին է հասել։*

ՎԱՍՄՖ, XVIII ԴԱՐ

«Թարիխ-Վասըֆի» հեղինակը, Ռեիս-ուլ-Քյութթաբ՝ Բաղդադլի-Ահմեդ էֆենդին, թուրք պատմագրության մեջ հայտնի է Վասըֆ անունով։ Ծննդյան թվականը հայտնի չէ*, մեռել է 1221 թ. (1806)։ Վասըֆը, իբրև Ռեիս-ուլ-Քյութթաբ, հասել է պետական բարձր աստիճանի**։ Նա շուրս ութգամ պատմագիր-տարեգիր է նշանակվել և գրել է Օսմանյան պետության պատմությունը 1168 թ. մինչև 1188 թ. (1755—1788) և 1203 թ. մինչև 1209 թ. (1788—1794) այսինքն 26 տարվա պատմություն։ Իբրև տարեգիր («Վաքայեյուվիս») 19-րդ տեղն է բռնում։ Վասըֆի պատմության առաջին մասը (1168—1188) հասնում է մինչև այն թվականը, որից հետո շարունակում է հայտնի թուրք պատմագիր Ջեվդեթ-Փաշան՝ իր 12 հատորից բաղկացած «Թարիխի Ջեվդեթով»։

Թուրքական տարեգիրներից Ջեշմի-Զադե-էֆենդիի (մեռել է 1184 թ.), Մուսա-Զադեի (մեռել է 1186 թ.) և Բեհջեթի էֆենդիի գրի առած պատմությունները (փոքր չափով) փոխանցվել են Վասըֆին։ Այդ երևույթը, այսինքն պատմության որոշ նյութերի փոխանցումը, հաճախ է կրկնվում թուրք պատմագրության մեջ։

Վասըֆը, իր «Պատմության» I հատորի առաջաբանում այդ մասին հիշում է և ասում, որ ինքը ստիպված է եղել իր նախորդների գրի առած պատմությունները, բովանդակության և լեզվի տեսակետից վերանայել, ուղղել և լրացնել։ Սրանով Վասըֆը կազմել

---

* Թուրք պատմագիրների և առհասարակ գրականագետների և պետական բարձր պաշտոնյաների ծննդյան թվականը հաճախ նկատի չի առնվում. հիշվում է միայն մահվան թվականը։

** Վարել է մի շարք կարևոր պետական-դիվանագիտական պաշտոններ՝ 1186 թ. (1772) Բուխարեստում Թուրք-ռուսական խաղաղության կոնֆերենցիայում Թուրքական պատգամավորության քարտուղարի պաշտոնը, 1203 թ. (1788) մասնակցել է Մադրիդի Արտակարգ մխիթարին, 1206 թ. (1791) ռուս-Թուրքական խաղաղության պայմանների բանակցությանը, 1220 թ. նշանակվել է Ռեիս-էֆենդի և այլն։

է իր պատմության I հատորը: Առաջաբանում նա ասում է, որ այդ հատորին իբրև հավելված էնվերի-էֆենդիի գրի առած դեպքերը նորից ստուգել և շարադրել է և այդ կերպով 1183 թ. սկսած իբրև «Վակաա-Նյուվիս» կազմել իր «Պատմության» II հատորը: Վասըֆի իբրև տարեգրի, պաշտոնի ընդմիջումները բացատրվում են նրա այլ պետական պաշտոնների նշանակումով: Թուրք պատմագիր-տարեգիրների շարքում Վասըֆը գրավում է կարևոր տեղ: Նրա լեզուն բավականին խրթին է, պատմությունը՝ տարեգրային: Մեր ձեռքի տակ եղած «Վասըֆի պատմությունը» տպագրված է Ստամբուլում 1243 թ. (1827): Վասըֆն էլ ինչպես թուրք պատմագիրների մեծ մասը, մանրամասնորեն զբաղվում է Օսմանյան պետության եվրոպական մասի դեպքերով, գլխավորապես պատերազմական գործողություններով և շատ քիչ ուշադրություն է դարձնում Արևելքին՝ Անատոլուին:

Վասըֆից թարգմանում ենք մի քանի նյութեր, որոնք որոշ չափով կապված են Անդրկովկասի ժողովուրդների՝ հայերի և վրացիների և կովկասյան այլ ազգությունների պատմության հետ:

«ԹԱՐԻԽԻ ՎԱՍԸՖ» تاريخ واصف

1171 թվականի (1757) դեպքերից

Ռայաների հագուստի կանոնը

Ստամբուլում ապրող հույն, հայ և հրեա ցեղերը (թայֆաները) իրենց հագուստներով անցել էին շարիաթի սահմանը (կարգը խանգարել էին): Այս պատճառով հույն և հայ պատրիարքները և հրեա ցեղի հասարակական պետերը հրավիրվեցին Ջավուշ-Բաշի-Աղացի[2] օդան[3] և նրանց հայտնվեց առաջվա նման հագուստները կարգի բերելու մասին տրված փադիշահական բարձր հրամանը. միաժամանակ հայտնվեց, որ այդ կարգի խանգարումը ենթակա է խիստ պատժի:

1172 թվականի (1758) դեպքերից

Սվազի և էրզրումի էյալեթների լեզգիների մասին տրված պաշտոնը

Լեզգի ցեղը, չնայած որ իսլամական ժողովրդից էր, սակայն ո՛չ Օսմանյան կառավարությանն էր հպատակություն ցույց տալիս և ո՛չ էլ սահմանակից Իրանին: Մշտապես անհնազանդ դրության

մեջ լինելով, գողության առիթներ էին գտնում և այդ կերպով երկու կողմի սահմաններին վնաս պատճառում։ Նրանք կայսերական [երկրի] սահմանների վրա ապրող ռայաների նկատմամբ էլ բռնություններ էին կատարում և թալանում, քշում-տանում նրանց անասունները։ Այս մասին տեղեկություններ էին ստացվում վիլայեթներից։ Այդ երևույթը պետության ղեկավարներին հայտնի էր։ Կարգ ու կանոնի պահպանության անհրաժեշտությունը պետության քաղաքականության հիմքը հանդիսանալով, սահմանների պահպանության և չարագործների հետացման մասին կայսերական հրովարտակով Սվազի և էրզրումի էյալեթներին պաշտոն և Իրանյան երկրի վրա չհարձակվելու մասին ցուցմունքներ տրվեցին։

(«Թարիխի-Վասըֆ», հատ I, էջ 99)։

1173 թվականի (1759) դեպքերից

Զըլդրի դեպքերը

Զըլդրի էյալեթում իշխող Վեզիր-էլհաջ-Ահմեդ փաշան, որը ծագումով Ախալսխացի օջաքներից[4] էր, կարճատև բախտի բերումով, առժամանակ վեզիրության աստիճանով Զըլդրի էյալեթում վալի և ժողովրդի գործերի կարգադրիչ էր եղել։ Ժամանակի ընթացքում [փաշան] իր կարողության [հարստության] քսակը մեծացնելու նպատակով, իր ազահության ցանկությունն ու կիրքը օրըստօրե ավելի ուժեղացնում էր։ Նա, առանց նկատի առնելու գործի վախճանը, բռնել էր ապստամբությունների ճանապարհը իր պետության շրջանակը ընդարձակելու և ավելի մեծ քանակությամբ հարստություն ձեռք բերելու ձգտումով, բանակցության մեջ էր մտել լեզգի ավազակների հետ Վրաստանի վրա հարձակվելու համար։ Նրա այդ վատթար նախաձեռնությունը լեզգի ցեղի ցանկություններին և նրանց նպատակներին ըստ ամենայնի համապատասխանում էր։ Այդ պատճառով էլ նրանք [լեզգիները] ձեռնարկեցին վերոհիշյալին [փաշային] խաբելու և նրան մոլորեցնելու գործին։

Վրաստանի բնակիչները երկար ժամանակից ի վեր Օսմանյան պետության ռայաներ են եղել, հպատակություն և հավատարմություն են ցույց տվել։ Առանց պատճառի նրանց վշտացնելը Նորին Վսեմություն փադիշահի կամքին հակառակ էր։ Վերոհիշյալը [փաշան] մեծաթիվ զորքով նրանց վրա շարժվելով՝ բազմաթիվ մարդիկ

կոտորեց ու ոչնչացրեց և մեծ վնասներ պատճառեց։ Չնայած որ նման քայլեր անելուց հրաժարվելու մասին նրան ցուցմունքներ տրվեցին, սակայն նա մի շարք անհիմն պատճառներ ցույց տվեց։ Երբ նրա օրըստօրե ավելացող խռովարարական [ապստամբական] շարժումները փաղիշահին հայտնի դարձան [էլհաջ-Ահմեդ փաշան] Զըլղրի էյալեթից հեռացվեց և նրա փոխարեն նշանակվեց Դիարբեքիրի նախկին վալին՝ Վեղիր-Իբրահիմ-փաշան։ Պաշտոնազուրկ եղած Ահմեդ փաշային հայտնվեց, որ նրան մի պաշտոն պիտի տրվի և ինքը պետք է գնա դեպի Անատոլու։ [Փաշան] ստիպված եղավ կայսերական բարձր հրամանին ենթարկվել և Ախալխայից դուրս գալով մի քանի կոնաք հեռանալուց հետո, առանց դրծի վախճանը նկատի առնելու, իր երեք մարդկանց հետ փախուստի դիմեց։ Երբ այդ մասին իմացավ նրա մյուբաշիրը* կապուջի-Բաշի-էրդալ-Մուհամմեդ-Աղան, շրջակայքը մարդիկ ուղարկեց և հիշյալին բռնել տալով անմիջապես գլխատել տվեց և նրա կտրված գլուխը ուղարկեց Ասիթանե (Ստամբուլ)։

(«Թարիխի Վասըֆ», հատ. II, էջ III)։

1178 թվականի (1764) դեպքերից

Վրաստանի արշավանքի սկիզբը

Մոսկովները (ռուսները) Գիլանի և Դերբենդի գրավումով արդեն մոտեցել էին Վրաստանին [սահմանակից էին]։ Կրոնի [դավանանքի] ընդհանրությամբ և կենցաղի համապատասխանության բերումով, նրանց միջև համաձայնություն և գործակցություն ստեղծված լինելու փաստը կասկածից դուրս էր։ Բացի այդ, կարիք եղած դեպքում, զորքով, ռազմամթերքով և դրամով օգնելու մասին [ռուսները] խոստումներ էին տվել։ Նրանք պայմանավորվել էին այդ գաղտինքը խիստ կերպով պահել։ Վրաստանի ժողովուրդը մոսկովների [ռուսների] այդ վտանգավոր խոսքերին հավատալով, Զըլղրի վալիներին դիմադրություն էր ցույց տալիս և ամեն տարի իրենց տված [տուրքերը] երբեմն պակաս և երբեմն էլ լրիվ տալով, սկսել էր ձգձգել և ի վերջո տուրքերի վճարումը բոլորովին մերժելով, հրաժարվել էր հնազանդությունից և թշնամական դիրք բռնել։ Սահմաններից ստացված զրույցներով այդ իրողությունը

---

* Մյուբաշիր—պետության հրամանները հաղորդող և գործադրող հատուկ պաշտոնյա։

պարզված լինելով, նրանց այդ գոռոզությունը ղսպելու համար, Տրապիզոնի վալին՝ Վեզիր-Աբդուլ-Ռահման փաշան մեծաքանակ զինվորներով նրանց վրա [վրացիների վրա] ուղարկվեց։ Երբ վերոհիշյալը Վրաստան եկավ, ժողովուրդը փախավ բարձրը և անմատչելի լեռները։ Շատ չանցած ձմեռվա ցրտերը սկսեցին և վերոհիշյալը [փաշան] որոշեց հետ վերադառնալ և մեծ դժվարություններով և նեղություններով կարողացավ հասնել Զըլչըրի էյալեթը։ Վրացիների հետապնդումը և ձմեռվա սաստիկ ցրտերը իսլամական զինվորներին մեծ վնասներ պատճառեցին։

Վերոհիշյալ երկրում [Վրաստանում] առաջացած խռովության վերացումը Նորին Վսեմություն փադիշահի ցանկությունն էր։ Նկատի ունենալով, որ Զըլդրի վալին՝ Վեզիր-Հասան-փաշան այդ երկրին ուրիշներից ավելի լավ էր ծանոթ, միաձայն որոշումով սերասքերությունը նրան տրվեց և այդ մասին տրված փադիշահական հրովարտակը նրան ուղարկվեց։ Միաժամանակ նրա տրամադրության տակ դնելու համար զինվորներ և պաշարեղեն պատրաստվեց և առաջիկա գարնան վերոհիշյալ ցեղի [վրացիների] վրա ուղարկելու մասին էլ փադիշահական հրամանագրում առանձնապես նշվեց։

(«Թարիխի Վասըֆ», հատ. II, էջ 121)։

1181 թվականի (1767) դեպքերից
Սերասքերի շարժումը Վրաստանում

Վերևում հիշատակվեց, որ սրանից առաջ, որոշ խնդրանքների բավարարություն էր տրվել և Վրաստանում կարգը պահպանելու համար Զըլդրի վալի՝ Վեզիր-Հասան փաշայի բոլոր պահանջները բավարարվել և նրան սերասքերության հրովարտակ էր շնորհվել։ Նա, իր տրամադրության տակ եղած հետևակ և հեծյալ զինվորներով և Տրապիզոնի ու Սվազի էյալեթների զինվորներով Զըլդրից շարժվել էր Վրաստան և Հաղթանակի դրոշակը ծածանելով ուղղվել էր Վրաստանի հյուսիսում գտնվող Գուրելի երկիրը [Գուրիա]։ Մի երկու բերդի բնակիչներ ստիպված եղան իրենց հանցանքների համար թողություն խնդրել։ Նրանց խնդրանքը ընդունվեց, իսկ [Իշխանը] իշխողն իր սուր անձը ազատելու համար փախավ։ Հիշյալ բերդերին սահմանակից Յորի բերդի վրա ապստամբական դրոշ բարձրացրած լինելու և բնակչությունը դիմադրության ցույց տալու համար, դրանց մեծ մասը սրի անցկացվեց և

մնացածները գերի վերցվեցին։ Բերդի պահպանության համար բավականաչափ զինվոր նշանակվեց և թնդանոթներով ու այլ ռազմամթերքով ապահովվեց։ Այդ ժամանակ Օղեշի[5] մյութասարրիֆը՝ Դադիանն էլ գլուխ ծռեց և հպատակություն հայտնեց։ Նա, բանակը անհրաժեշտ պաշարներով և պիտույքներով ապահովելու մասին պայման կապեց։ Սրանից հետո վրացիների ամենից ավելի վստահացած և նրանց հենարանը հանդիսացող Սիյանջո բերդը հաղթական բանակի ուժի առաջ խոնհարվեց և նրա պաշտպանությունը հանձնվեց Աչըք-Բաշի իշխող [մելիք] նշանակված Թեյմուրազին։ Գյուղերի բնակիչներն էլ Թեյմուրազին հպատակվեցին և բանակի կործանիչ հարվածից պաշտպանվեցին։ Այս բարեբախտ տարում վերոհիշյալ սերասքերը հաղթանակներով բավականանալով, հաջորդ գարնանը վրացիներին Օսմանյան պետության հզորությունը ցույց տալու նպատակով, այդ շրջանը ձմեռանոց ընտրելու մասին հաղթական բանակի պարագլուխների հետ համախոհ, փադիշահական կառավարությանը խնդիր ներկայացրեց և հավանություն խնդրեց։ Այդ շրջանում ձմեռելու խնդիրը ընդունվեց ու հաստատվեց և այդ մասին տրված արտոնագիրը և կայսերական հրամանը նրան ուղարկվեց։ Գարնան սկզբին Սերասքեր փաշան ձմեռանոցից շարժվեց, իր վրաններր հաստատեց Բաղդադջիկ[6] բերդի առաջ և բանակի զեկավարների [գլխավորների] հետ խորհրդակցելուվ, բանակի բոլոր զեկավարները համաձայն գտնվեցին, որ Վրաստանում կարգ ու կանոնի հաստատման համար անհրաժեշտ է Սալոմանի կողմից որպես ամրակուռ վայր ընտրված Սեվիր[7] բերդի գրավումը և ավազակների ոչնչացումը։ Հետևաբար որոշվեց՝ դեպի այդ կողմը ճանապարհ բաց անել, ճանապարհին վերոհիշյալ ավազակին հպատակվողների տները այրել և նրանց ընտանիքներին ու երեխաներին գերել և տանել, իսկ հպատակություն ցույց տվողների նկատմամբ մեղմություն և օժանդակություն ցույց տալ։

Երբ վերոհիշյալ բերդը հասան, չնայած որ նրա ամրակուռ լինելը պարզորոշ էր և նրա նվաճումն ու գրավումը անհնար էր համարվում, սակայն Աստուծո ապավինելով՝ ձեռնարկեցին նրա պաշարմանը, հարմար վայրերում թնդանոթներ և խումբարներ [կումբարա] դրին, պետության ուժին և հզորության համաձայն ամեն կողմից ռազմական գործիքները գործի դրին և կրակ բաց արին։ Պաշտպանության 29-րդ օրը պարսպի աշտարակի վրա «ամանի»[8] ձայները դեպի երկինք բարձրացան։ Նրանց խնդիրքը ընդունելի

համարելով բերդը հանձնվեց նոր Մելիքին—Թեյմուրազին և բերդի պաշտպանության համար անհրաժեշտ կարիքներ լրացվելուց հետո, հաղթական բանակի համար իբրև հանգստյան վայր ընտրվեց Քութայիսի բերդը*։ Վրացի երևելիները [ավագանին] բերդից մեկ ժամ հեռավորության վրա մի վայրում հավաքվելով, խնդրեցին, որ բանակի կողմից մի քանի մարդիկ ուղարկվեն իրենց խնդիրը լսելու համար։ Սերասքեր փաշան, վրացիների մոտ ուղարկեց բանակում եղող Նորին Վսեմության փադիշահի քեթխուդա Իբրահիմ-Աղային, իր քեթխուդա և Կափուջի-Բաշի էլհաջ-Մուհամմեդ բեյին, բանակի կազի Իսմայիլ-էֆենդուն և բանակի Աղային։ Վերոհիշյալները [վրացիները] բոլորը միաբերան հայտնեցին, որ իրենք ընդունում են հպատակության լուծը և հակառակությունից և ապստամբությունից հրաժարվում։ Սրանից առաջ տեղի ունեցող անախորժ դեպքերի պատճառն այն է եղել, որ իրենք Սալոմանի բռնության տակ ընկճված են եղել, բայց այժմ նրա փախուստով այդ անպատեհությունը մեջտեղից վերացվել է։ Նրանք ասացին՝ «Մենք բոլորս Օսմանյան պետության հավատարիմ ծառաներն ենք։ Եթե մեր կատարած ռճրագործությունը ներման արժանանա, մենք հպատակության սահմանից դուրս չենք գա և այլ կերպ մի քայլ անգամ չենք կատարի. Սալոմանի այս կողմերում երևալը այլևս անհնար է։ Մեր երկրի կարգ ու կանոնին օժանդակելու համար նվաճված Սեվիր բերդը պետք է հանձնել նոր Մելիքին, իսկ երբ իսլամական բանակը այս շրջանից հետ քաշվի, հավանական է, որ նա [Սալոմոնը] մի տեղից դուրս կգա։ Այդ պատճառով անհրաժեշտ է Օսմանյան կառավարական բանակի օժանդակությունը, նրա վրա հարձակվելու համար։ Հետևաբար, միայն այս նպատակով անհրաժեշտ է կարգադրել, որ Ջանիկի մուհասսըլ** էլհաջ-Ալի-Բեյը՝, որոշ բանակության զինվորներով, Քութայիսում ձմեռի։ Ակներև է, որ այդ հանգամանքը պատճառ կհանդիսանա երկրում կարգն ու կանոնը ապահովելու և մեր ուժը դրսևորելու համար»։ Այս իմաստով նրանք իրենց խոսքերը ասացին և այդ խնդրանքը հայտնելու և զեկուցելու համար իրենց գլխավոր վարդապետ-կաթողիկոսին բոլորի կողմից ներկայացուցիչ նշանակեցին և բանակատեղը ուղարկեցին։ Դիվանն կազմվեց և բոլորի ներկայությամբ վերոհիշյալ վարդապետը զեկուցեց իրենց հպատակության ու հնազանդության

---

* Բնագրում՝ «Քութաթեաս» բերդը։

** Մուհասսըլ—պետության եկամուտները հավաքող պաշտոնյա։

մասին։ Բանակի ղեկավարների համաձայնությամբ և թույլատվությամբ նրանց խնդրանքը ընդունվեց և վերոհիշյալ բերդը հանձնվեց նոր Մելիքին։ Այդ խոստումների և պայմանների մասին նրանցից մուրհակներ առնվեցին և վստահության համար հիշյալ Մելիքին պատանդներ տվին։ Նա էլ [Մելիքը] իր կողմից վստահություն ցույց տալու համար, իր ընտանիքն ու երեխաները Քութայիսի բերդում պատանդ տվեց։ Հիշյալ միրը 3000—4000 վինվորներով, Քութայիսի բերդում ձմեռելու համար բնակություն հաստատեց։ Սերասքեր փաշան վերադարձավ իր իշխանության կենտրոնատեղը՝ Ախալսխա։ Հիշյալ մուրհակները հանձնվեցին կափըջիների քեթխուդա Իբրահիմ-Աղային և ուղարկվեցին բարձր կառավարությանը։

Վերոհիշյալ սերասքերին հայտնվեց, որ Սալոմոնի կենդանի մնալը Վրաստանում կարգ ու կանոնի խանգարման իսկական պատճառն է հանդիսանում և փադիշահի վերջնական ցանկությունն է, ինչ ձևով էլ լինի, հիշյալին [Սալոմոնին] ձեռք բերել։ Միաժամանակ հայտնվեց, որ Վրաստանում հաստատված կարգն ու կանոնը առայժմ ընդունելի է և հաստատվում է։

(«Թարիխի Վասըֆ», հատ. II, էջ 181—182)։

1182 թվականի (1768) դեպքերից

Վրաստանի ճախկին իշխան՝ Սալոմոնի ինքնագնդությունը

Վրաստանի երկրում գտնվող մի քանի բերդեր՝ քանդված և ավերված լինելով, դրանց վերականգնման և նորոգության համար Զըլդրի վալին իր քեթխուդային և երկրի երևելիներից մի քանի մարդկանց էր [նշանակել]։ Երբ այդ մարդիկ Բաղդադչիկ բերդը եկան, ապստամբության դրոշակ բարձրացրած և թշնամության և ավազակության անելանելի ճամփու մեջ մոլորված Սալոմոնը եկավ հիշյալների մոտ և հայտնեց, որ իր պապերից սկսած ինքը Օսմանյան պետության ծառան է եղել, նրա գթության և շնորհների համար երախտապարտ է։ Նա միաժամանակ հայտնեց, որ իրեն վերագրված հանցանքների պատճառն է հանդիսանում Զըլդրի վալիի (սպանված Վեզիր-Ահմեդ Փաշայի) անձնական թշնամությունը։ Հայտնելով այդ մասին, նա խնդրեց, որ ըստ առաջնույն, Վրաստանի կառավարությունն իրեն շնորհվի. իր նախորդի ժամանակ տեղի ունեցածի նման, ինքը արգելք չպիտի լինի ստրուկների առևտրին և ամեն կերպ նրանց գոհ թողնելու պատճառներ

պիտի գոնի։ Վրաստանի ռայաներին մոլորեցնող և «էֆրենջի»[10] (ֆրանսիական, կաթոլիկական) ծիսակատարությունները ներմուծելու ջանքեր գործ դնող կաթողիկոսին (անհրաժեշտ է) երկրից հեռացնել և հեռավոր տեղում աքսորել։ Սեվիր բերդը կամ պետք է քանդել, կամ Օսմանյան կառավարության կողմից պիտի պաշտպանվի և կամ թե պետք է թույլ տալ իրեն դրավելու։ Երկրում տեղի ունեցող խռովության կապակցությամբ ռայաներն անկարող են իրենց պարտքերը հատուցանել, դրա համար էլ պետք չէ, որ պարտատերերը իրենց վաշխառուական տոկոսները պահանջեն և ռայաներին նեղության պատճառեն։ [Փաշայի ուղարկած] պաշտոնյաները Սալոմոնի այս պայմանները և նրա հպատակության և հավատարմության խոստումները հայտնեցին վերոհիշյալ վեզիրին։ Նա էլ այդ բոլոր կետերը խորհրդակցության դրեց և երկրի քալանթարների համաձայնությամբ, այդ մասին հայտնեց պետության կենտրոնին։ Որոշվեց Սեվիր բերդը քանդել, Մոսկով վարդապետին բանտարկել Հիսնիքեֆ բերդում և [Սալոմոնի] այլ խնդրանքները ընդունելով, նրան բատ առաջնույն, Վրաստանի իշխան նշանակել։

Այդ մասին նրան փադիշահական հրովարտակ շնորհվեց։

(«Թարիխի Վասըֆ», հատ. II, էջ 202—203)։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռեյիս-ուլ-Քյութթար—հին թուրքական պետական տերմինով հաճախ գործ է ածվում նաև «Ռեյիս-էֆենդի». բառացի նշանակում է քարտուղարներից մեծ (պետական քարտուղար)։ Բարձրագույն դասի մինիստրներից էր, որը վարում էր Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնը։ Հետագայում Ռեյիս-ուլ Քյութթար և Ռեյիս-էֆենդի տերմինները փոխարինվեցին «Խարիջիէ-Նազըրի» (Արտաքին Գործերի մինիստր) տերմինով։

2. Չավուշ-Բաշի-Աղա կամ Չավուշ-Բաշի—Չավուշ էին կոչվում փադիշահի, պետական բարձր հիմնարկությունների և աստիճանավորների արարողության ժամանակ ծառայող համհարգի (հրամանատար սպա) աստիճանով սպաները։ Չավուշ-Բաշի, կամ Չավուշ-Բաշի-Աղա՝ չավուշների պետը, գլխավորը։

3. Օդա—բառացի նշանակում է սենյակ. գործ է ածվում տարբեր իմաստներով—գրասենյակ (առևտրական), պյուղերում հյուրերին ընդունելու հատուկ սենյակ։ Ենիչերիների կազմակերպության մեջ գործ էր ածվում գումարտակի կենտրոնի, զորանոցի իմաստով։ Այդ օդաներում սպաներին հատուկ խոհանոց և առանձին տեղեր կային։ Պատերազմի ժամանակ ենիչերիական օդաները մեծ և կլորաձև վրաններ էին և նրանցից ամեն մեկը ուներ իր գումարտակին կամ վաշտին հատուկ նշաններ։

4. Օջաֆ-*Օջախ, կրակ վառելու տեղ, մեծ ընտանիք, գերդաստան։ Ռազմական իմաստով՝ կանոնավոր զինվորական մաս,— ենիչէրիների օջաքը։ «Օջաքխալքը» էին կոչվում թուրքական հետիոտն զինվորները, իսկ հեծյալները՝ «Բեյլյուք-խալքը»։*

5. Օդեշի—*Մեգրիլիան կոչվում էր նաև Օդեշի։*

6. Բաղդատջիկ — *Արևմտյան վրաստանում Բաղդատի բերդը, որը օսմանցիները անվանել էին Բաղդատջիկ (ջիկ՝ փոքրացուցիչ մասնիկ է)։ Ներկայումս կոչվում է Մայակովսկի։*

7. Սեվիր բեյ—*գտնվում է ներկա Ջիաթուրայից ոչ հեռու։*

8. Ամաճ—*բայսկանչություն է, գործ էր ածվում օգնություն, ներողություն խնդրելու իմաստով։ Երբ պարտվողը «աման»-ով դիմում էր հաղթողին, դա նշանակում էր, որ նա հանձնվում, անձնատուր էր լինում։ Հաճախ գործ է ածվում՝ բերդը «ամանով» հանձնվեց։*

9. Կափըջիների ղեբխուդա—*կափըջի՝ բառացի նշանակում է դռնապան։ Կափըջի Բաշի էին կոչվում վաղիշահական արքունիքի փոքր աստիճանավորները, իսկ կափը-քեթխուդասի կամ կափըջիների-քեթխուդան վիլայեթներում փաշաների գործակատարն էր կամ վաղիշահական գործերը կարգավորող հատուկ պաշտոնյա։*

10. Էֆրենջի—*Հայտնի մարդ բառարանների հեղինակը՝ Շեմսեդդին Սամիի ասելով «էֆրենջ» բառը (որը Franc բառի աղավաղված ձևն է հավանաբար) կազմվել է միջին դարում և գործ է ածվել ֆրանսիացի և առհասարակ եվրոպացի իմաստով. այսպես, «Թարիխի—էֆրենջի», «լիսանի էֆրենջի»—եվրոպական պատմություն, եվրոպական լեզու իմաստով է գործ ածվում։ Նվյալ դեպքում «էֆրենջի ծիսակատարություն» գործ է ածվում կաթոլիկական դավանանքի իմաստով։*

---

* ش. سامی: «قاموسی ترکی»، درسعادت، ۱۳۱۸، صحیفه ۳۶.

ՋԵՎԴԵԹ-ՓԱՇԱ (ԱՀՄԵԴ-ՋԵՎԴԵԹ) — جودت پاشا

XVIII ԴԱՐ

«ԹԱՐԻԽԻ ՋԵՎԴԵԹ» — تاریخ جودت

(1188—1241 pp., 1774—1825 pp.)

Ահմեդ-Ջեվդեթ փաշան, որը հայտնի է նաև Հաջի-Իսմայիլ-Զադե ազգանունով, թուրք պատմագիրների շարքում պրավում է շատ կարևոր տեղ։

Նրա կենսագրական տեղեկությունների մեջ ծննդյան թվականը որոշակի չի ցույց տրվում, սակայն, հավանաբար ծնվել է XIX դարի 2-րդ տասնամյակին, քանի որ նա մահացել է մոտ 80 տարեկան հասակում 1312 թ. (1894)։

Ապրելով և կրթություն ստանալով Ստամբուլում, Ջեվդեթ փաշան, իբրև պետական բարձրաստիճան անձնավորություն, մոտիկից և ակտիվորեն մասնակցում է այդ շրջանի [XIX դարի] Օսմանյան կառավարության պետական-վարչական, քաղաքական-դիվանագիտական, կուլտուր-կրթական աստիճանների բազմատեսակ գործերին։ Միայն նրա ծառայությունների և վարած պաշտոնների թվարկումը ցույց է տալիս, թե որքան ընդարձակ և բազմակողմանի է եղել Ջեվդեթ փաշայի գործունեության պետական ասպարեզը։ Մոտ 50 տարի նա ծառայել է պետական տարբեր բարձր հիմնարկություններում։

Վալիի պաշտոնով ծառայել է Ադանայում, Հալեպում, Մարաշում և Սուրիայում։ Վարել է մի շարք մինիստրություններ՝ հանրային կրթության (4 անգամ), Արդարադատության (4 անգամ), Ներքին գործերի, Առևտրի և էվկաֆի։ Ջեվդեթ փաշայի պետական ծառայությունների մեջ կարևոր տեղ էր բռնում նրա մասնակցու-

թյունը տարբեր վարչական-օրենսդրական հանձնաժողովների և խորհուրդների մեջ՝ երկրում ռեֆորմներ մտցնելու կապակցությամբ («Թանզիմաթի» նախապատրաստությունները):

Այդ բոլոր պատասխանատու աշխատանքները չեն խանգարել նրան զբաղվել նաև գրականությամբ: Ունի բանաստեղծություններ, լեզվի և բերականության վերաբերող հետինակություններ և այլն:

Իբրև պատմագիր, Ջևդեթ փաշան, ինչպես ասացինք, բոնում է խիստ կարևոր տեղ: Նա եղել է պաշտոնական տարեգիր («վակա-նյուվիս») և այդ պաշտոնում ծառայել է 1270—1273 թթ. (1853—1856):

Նրա պատմությունը—«Թարիխի Ջևդեթ»-ը բաղկացած է 12 տևվար հատորից և ընդգրկում է 53 տարվա պատմություն հիջրի 1188 թ. մինչև 1241 թ. (1774—1825), այսինքն XVIII դարի վերջին և XIX դարի առաջին քառորդը: Ըստ կարգի, Ջևդեթ-փաշան 27-րդ տարեգիրն է Օսմանյան կառավարության պաշտոնական տարեգիրների շարքում:

Ջևդեթ փաշայի «Պատմության» ընդգրկած ժամանակաշրջանը զուգադիպում է պատմական խոշոր, համաշխարհային նշանակություն ունեցող դեպքերի, ինչպիսիք են Ֆրանսիական Մեծ ռևոլյուցիան և նրա հետ կապված բազմաթիվ դեպքերը, եվրոպական երկրների, ինչպես նաև Օսմանյան պետության ու Ռուսաստանի միջև տեղի ունեցող պատերազմները և այլն: Այդ բոլոր դեպքերին Թուրքիան այս կամ այն չափով մասնակցել է: Թուրքիան իբրև Մերձավոր Արևելքի խոշոր իսլամական պետություն, այդ ժամանակամիջոցում ապրում էր իր քայքայման և կազմալուծման ամենածանր շրջանը: Պետության Եվրոպական մասում՝ Ռումելիում, նրա «կալվածները» աստիճանաբար կրճատվում էին, բալկանյան ազգությունների մեջ զարգանում էր ազատագրական շարժումը: Թուրքիան ապրում էր կրիտիկական վիճակ: Ենիչերիների անկարգությունները, բանակի լրիվ քայքայումն ու այլասերումը, էյալեթներում, մասնավորապես Արևելքում, վեզիրների, փաշաների, մյութասարրիֆների և այլ պետական պաշտոնյաների հաճախադեպ ապստամբությունները և իրար դեմ մղած պատերազմները, թափառաշրջիկ և անհանգիստ աշիրեթների, ցեղերի անվերջ խլրտումները, թալանն ու կողոպուտները (մասնավորապես քրդաբնակ վայրերում և Իրանի սահմաններում), երկիրը հասցրել էին կործանման վիճակին: Պարզ է, որ ներքին և արտաքին այդ խոշոր և ծանրա-

կշիռ դեպքերը Օսմանյան կայսրության սահմաններում ապրող ազգությունների, մասնավորապես քրիստոնյա ազգությունների (հայեր, հույներ և այլն) դրությունը դարձրել էին կրիտիկական և ահավոր։

Ահա, խիստ ընդհանուր գծերով, այդ շրջանի իրական պատկերը։

Ջևդեթ-փաշան իր «Պատմության» մեջ վերոհիշյալ բոլոր կարևոր մոմենտները տալիս է բավականին մեծ հմտությամբ և պարզությամբ։ Իբրև լիբերալ հայացքների տեր պետական անձնավորություն, նա առանց դուրս գալու իսլամական կրոնի և սուլթանական մոնարխիստական իդեոլոգիայի սահմաններից, փորձում է տալ բոլոր տեսակի դեպքերի անալիզը և քննադատությունը։ Ջևդեթ-փաշայի «Պատմության» մեջ մենք հանդիպում ենք նման բազմաթիվ էջերի, որոնցից առավել բնորոշները թարգմանել ենք տեքստին հարազատ մնալու սկզբունքով։

Իբրև պատմագիր, Ջևդեթ-փաշան բավականին տարբերվում է նախորդ պատմագիրներից։ Դա պիտի բացատրել, ամենից առաջ, նրա ժամանակով, ստացած կրթությամբ և պետության մեջ գրաված դիրքով։ Ջևդեթ-փաշան իր «Պատմության» հսկայածավալ հատորներում պատմական դեպքերը լուսաբանում և վերլուծում է պաշտոնական փաստաթղթերի, պատմական բազմաթիվ աղբյուրների (եվրոպական և իսլամական) հիման վրա։ Նրա պատմության ամեն մի հատորի սկզբում մանրամասնորեն հիշվում են այդ աղբյուրները, իսկ «Պատմության» բուն տեքստի մեջ ցիտատները՝ բազմաթիվ աղբյուրներից։ Պատմագիրը իր հատորների վերջում տալիս է բազմաթիվ փաստաթղթերի պատճենները (խաղաղության դաշնագիրը) պետությունների միջև փոխանակված գրությունները (նոտաները), փադիշահական ֆերմանները, պետական-քաղաքական կարևոր անձերի զեկուցագրերը և այլն։

Քանի որ պատմագիրը իր «Պատմության» մեջ ուսումնասիրում է իրեն համեմատաբար ավելի մոտ ժամանակաշրջանի դեպքերը (մոտավորապես 70—80 տարի) և իր տրամադրության տակ ունեցել է սուլթանական արքունիքի հարուստ արխիվային նյութերը, այդ պատճառով հաճախ պատմական դեպքերը (մանավանդ արքունական և Բարձրագույն Դռան վերաբերյալ նյութերը) տալիս է կարծես սղագրական մանրամասնություններով, գրեթե բոլոր դեպքերում ավելացնելով իր անձնական դատողությունները ու քննադատությունները։ Ջևդեթ փաշան քննադատում է անգամ

սուլթաններին, չնայած որ սուլթանը՝ իբրև իսլամական խալիֆա (Մարգարեի փոխանորդը) սուրբ անձնավորություն է համարվում և անքննադատելի է։ Ջևվդեթ փաշայի լեզուն ու ոճը անհամեմատ պարզ են և կատարելագործված, քան նախորդ պատմագիրների լեզուն։

«Թարիխի Ջևվդեթը» տպագրված է մի քանի անգամ։ Մեր ձեռքի տակ եղածը նրա 2-րդ և 3-րդ տպագրությունն է։ Տպագրությունը տեղի է ունեցել Ստամբուլում պետական տպարանում 1288 թ. և 1302 թ. (1871 թ. և 1884 թ.)։

«Թարիխի Ջևվդեթից» մենք թարգմանել և քաղվածաբար տվել ենք բավականին ընդարձակ նյութեր. առաջին հերթին այն նյութերը, որոնք կապված են Հայաստանի և հայերի հետ։ Նկատի առնելով պատմական ժամանակաշրջանի բացառիկ կարևորությունը, թարգմանել ենք նաև մի շարք նյութեր, որոնք կապված են ռուս-թուրքական, թուրք-պարսկական և թուրք-վրացական հարաբերությունների հետ, առանձնապես այն նյութերը, որոնք կապված են վրաստանի Հերակլ թագավորի երկարատև գործունեության հետ։ Թարգմանել ենք նաև բավականին նյութեր, որոնք վերաբերում են երկրի ներքին դրությանը, քանի որ այդ դրության հետ անմիջական կապ են ունեցել նաև Օսմանյան պետության մեջ ապրող հայերը։

«ԹԱՐԻԽԻ ՋԵՎԴԵԹ» — تاريخ جودت

(Հատ. I)

1190 թվականի (1776) դեպքերից

Իրանի վիճակը և Իրանի դեմ արշավանք սկսելու որոշումը

Պատմագիր Ջևվդեթ փաշան մանրամասնորեն պարզաբանում է Իրանի վիճակը։ Նադիր-Շահը մի որոշ ժամանակ աշխարհակալություն անելուց հետո սպանվում է։ Նրան հաջորդող շահերը չեն կարողանում տևական իշխանություն ստեղծել, բայց այդ, Իրանի խաներից շատերը հետամուտ են լինում անկախություն ձեռք բերելուն։ Այդ խաներից Զենդ-Քերիմ-խանը կարողանում է Իրանի ժողովրդին իր կողմը գրավել, ընկճել մյուս խաներին, նվաճել Ֆարսն ու Իրաքը, Խորասանի երկրի մեծ մասը։ Ադրբեջանի խանները թեև պահպանում են իրենց անկախությունը, սակայն նրանք էլ Քերիմ խանի հետ բարեկամական կապ են հաստատում։

Պատմագրի ասելով՝ Քերիմ խանը, նկատի ունենալով իր ոչ-ազնվական ծագումը (նա Շիրազի շրջանի քոչվոր քրդական ցեղերից էր) շահի տիտղոս չի կրում, բավականանում է «Իրանի վեքիլ» կոչումով։ Նա իր իշխանության մայրաքաղաքը ընտրում է Շիրազը։ Քերիմ խանը և նրա հաջորդները Իրանում քառասուն տարուց ավելի իշխել են Զենդի անունով։ Օսմանյան կառավարությունը պաշտո-

Եապես ճանաչել էր Քերիմ խանի իշխանությունը։ Ջևդեթ փաշայի տակով, չնայած որ Ադրբեջանի խաներն ու ժողովուրդը, դժգոհ լինելով երկարատև ներքին խռովություններից, դիմել էին Օսմանյան կառավարությանը, ցանկություն հայտնել մտնել նրա հովանավորության տակ, սակայն Օսմանյան կառավարությունը, հավատարիմ Նադիր-Շահի ժամանակ կնքված հաշտության պայմանագրին, Իրանի նկատմամբ ոչ մի նվաճողական քայլ չէր կատարել, 1190 թ. սկսած Քերիմ խանը Օսմանյան պետական ատհմանները սկսեց խախտել Բաղդատի և Բասրայի սահմաններում, բացի այդ, նրա եղբայրը՝ Սադըք-խանը պաշարեց Բասրան, և առհասարակ, Քերիմ-խանի զինվորները Օսմանյան սահմանի ժողովրդի նկատմամբ բռնություններ գործ դրին։ Այս առթիվ Բաղդատի վալի՝ Օմեր փաշայի և Իրանի դեսպան, նշանավոր բանաստեղծ Վեհբի-էֆենդիի ներկայացրած զեկուցումներից պարզվում էր, որ Իրանի խաների Օսմանյան կառավարության դեմ պատրաստած զինվորական ուժերի հետ միասին, մեծ վտանգ է ներկայացնում նաև Վրաստանի Հերակլ խանը։ Այս մասին Ջևդեթ փաշան գրում է՝

«Թիֆլիսի խանը՝ Հերակլը Ռուսիայի հետ լավ հարաբերության մեջ էր և Աչըք-Բաշի խանի հետ մոտիկություն էր ստեղծել։ Նա Իրանի ժողովրդի և շրջակայքի այլ խաների հետ կապ էր հաստատել և միացել։ Այդ ժամանակ երկրում երևան եկած հանքերի շնորհիվ իր ուժն ու հզորությունը ավելացնելով, նաև մեկ օրում 20 հազարանոց բանակով ուզած ուղղությամբ շարժվելու կարող՝ ուժեղ մի թշնամի էր դարձել։ Այնպես որ նա կարող էր Քերիմ խանի հետ միանալ, որով նրա [Քերիմ խանի] հարձակումը դառնում էր որոշված և անտարակույս։ Հայտնելով այս մասին, նրանք խնդրում էին ժամ առաջ մեծ քանակությամբ պաշար և ռազմամթերք ուղարկել Բասրան պաշարումից ազատելու և Բաղդատի պաշտպանությունը ապահովելու համար»։

Ըստ պատմագրի, Իրանի հարցը «մեծ և ծանրակշիռ հարցերից էր»։ Այդ պատճառով էլ կառավարությունը լուրջ կերպով զբաղվում է այդ հարցով։ Քերիմ խանը սկզբում հաշտություն կնքելու պատրվակով, կարողանում է թուրք փաշաներին խաբել և հետո առիթից օգտվելով գրավում է Բասրան և կողոպտում։ Ռեբի-ուլ էվվելի 11-ին, Ասեֆի պալատում2 Պետական խորհուրդ է գումարվում և որոշվում է շտապ կարգով Իրանին պատերազմ հայտարարել։ Այդ մասին Ցեթվա է տրվում։

(«Թարիխի Ջևդեթ», հատ. I, էջ 107—114)։

Իրանի դեմ արշավանքի հայտարարությունը

Պատմագիր Ջևդեթ փաշան մանրամասն նկարագրում է Իրանի արշավանքի ռազմական ուժերի, պաշարների և փոխադրությունների նախապատրաստությունը։ Մոբիլիզացվում են ենիշերիական բոլոր տեսակի, վիլայեթների թիմար և զեամեթ-

ների, ինչպես նաև բազմաթիվ աշիրեթների դինված ուժերը։ Կազմակերպվում է սննդամթերքների հավաքումը և փոխադրումը։ Բիրեջիկի[3] նավահանգստում ձևնարկվում է 150 փոխադրանավի կառուցմանը։ Պետության գանձարանից հրահայական գումարներ են հատկացվում։

Ադրբեջանի խաների հետ տեղի ունեցած բանակցությունները

Ամեն կողմից Իրանի վրա բանակ ուղարկելու մասին որոշում էր տրված. Կարսի կողմից շարժվող բանակը ամենից առաջ Ադրբեջանի վրա շարժվելու կարիք պիտի զգար։ Բայց որովհետև պետք եղածի չափ պարզ չէր, թե Ադրբեջանի խանները Քերիմ խանի հետ ինչպիսի հարաբերության մեջ են (նրանք միացած են թե ոչ), այս պատճառով անհրաժեշտ եղավ նախապես պարզել այդ հարցը և ըստ այնմ շարժվել։ Ադրբեջանի ժողովրդին ոտքի տակ չտալու համար, հարմար նկատվեց նախապես դրությունը հայտնել Ադրբեջանի խաներին և պաշտոնապես հարցնել Քերիմ խանի հետ նրանց ունեցած կապի և միության մասին։ Այս պատճառով Սեդարեթի կողմից ամեն մեկ խանին ուղղված հատուկ գրությունները, Կարսի սերասքերության կողմից պատրաստված որոշ քանակության նվերների հետ միասին ուղարկվեցին Ախալխայի և Կարսի սահմանապահների միջոցով։ Վերոհիշյալ գրություններից Երևանի խան՝ Հյուսեին-Ալի խանին ուղղված գրության պատճենը տրվում է գրքի վերջում։ Ադրբեջանի խանները ստանալով վերոհիշյալ գրությունները, շտապեցին Կարսի սերասքեր Ալի-փաշային և Զըղրի վալի վեզիր-Սուլեյման փաշային հայտնել, որ նրանք խնդրում են Օսմանյան բարձր կառավարության պաշտպանությունը և հովանավորությունը։

Այսպես, այդ խանների նշանավորներից Թիֆլիսի Հերակլ խանը, Զըղրի վալին, Երևանի խան՝ Հյուսեին-Ալի խանը և Խոյի խան՝ Ահմեդ խանը Սերասքեր Ալի փաշայի հետ բանակցելով, Օսմանյան կառավարությանը հավատարմություն հայտնեցին։ Վերոհիշյալ Թիֆլիսի խանը, պարսկերեն լեզվով դրված հավատարմության նամակը իր քարտուղարի՝ Միրզա-Գուրգինի [Գուրգեն] միջոցով, Զըղրի վալիի կնքապահի* ուղեկցությամբ ուղարկեց Երջանիկ Սահիանե [Ստամբուլ]։ Այդ նամակի թարգմանական բովանդակությունը հետևյալն է՝

«Ինքը [Հերակլը] մի շարք պայմանների բերումով կարիք է զգացել դիմել Իրանի շահերին, որը տեղի է ունեցել ժամանակի և

---

* կնքապահ — «մոմհյուրզար», կնիք — մոմհյուր բառից։

դրության պատճառով. Ասված մի՛ արասցն՝ որ նա Օսմանյան կառավարության հակառակվելու նպատակով այդ արած լիներ, ոչ էլ գա իրական հակամետության կամ կապի հետևանքով է եղել։ Ներկայումս նորից, ինչպես առաջ, պատրաստ է ծառայելու և հավատարմություն ցույց տալու Բարձր Սուլթանությանը և իրեն սահմանակից՝ Օսմանյան կառավարության հետ դրացիության իրավունքները հարգելու համար չի խնայում ոչ մի ջանք։

Մինչև հիմա, նա, Օսմանյան կառավարության պշնամինների հետ հարաբերություն և միություն չի ունեցել և սրանից հետո էլ չի ունենա։ Սրանից առաջ Օսմանյան պետության և Ռուսիայի միջև տեղի ունեցած անթույլատրելի դրության պատճառը՝ այդ ժամանակվա Չըլդրի վալին՝ Սեյիդ-Նաման փաշան է եղել։ Ներկայումս Չըլդրի վալի՝ Սուլեյման փաշան գնահատում և հաստատում է իր Նորին Վսեմության [Սուլթանի] նկատմամբ ունեցած հավատարմությունը. եթե Նորին Վսեմություն փադիշահի կողմից իրեն որոշ օժանդակություն շնորհվի և թույլ տրվի որոշ քայլերի դիմելու, ինքը պիտի ջանա արգելք հանդիսանալ Ադրբեջանի խաներին Քերիմ խանի հետ կապ հաստատելու և միանալու ձգտումներին»։

Որոշ խնդրանքներ նա հանձնարարել է իր վերոհիշյալ դեսպանին՝ (Գուրգեն-Միրզային) բերանացի հայտնելու համար։ Վերոհիշյալ դեսպանի զեկուցման բովանդակությունը՝

«Իրանի վեզիլը՝ Քերիմ խանը, ազնվականության և անձնական արժանիքի հատկանիշներից զուրկ է, նա խարդախությամբ ձեռք է բերել Ֆարսի, Իրաքի և Աջեմի երկրները, սակայն նրան [Քերիմ խանին] կողմնակցություն ցույց տալու մասին ուղարկված մի շարք գրություններին, թե վերոհիշյալ Թիֆլիսի խանը՝ Հերակլը և թե Ադրբեջանի, Շիրվանի և Խորասանի խաները բացարձակապես համակրանք չեն ցուցաբերել։ Այս պայմաններում Իրանի խաներից ոչ մեկը ցանկություն չունի հարձակում գործել Օսմանյան պետության հողերի վրա [տերիտորիա]. խանի կողմից ուղարկված օգնության նամակներին նպաստավոր պատասխան չի տրված։ Եթե վերոհիշյալ Հերակլ խանի ծառայականությունը Նորին Վսեմություն փադիշահի կողմից ընդունվի, գանձերը միացնելով, առանց Կարսի սերասքերի օժանդակության կարիք զգալու, նա հանձն է առնում Ադրբեջանի խաների հարցը բարեհաջող կերպով լուծելու, և այդ մասին իր ունեցած հավատարմության կապը ավելի ամրապնդելու համար, եթե ցանկություն լինի, Չըլդրի վալիի միջոցով։ Ախալխայի բերդում պահելու պայմանով, նա պատրաստ է իր երկրի

պատվավոր անձերից մի քանի պատանդ տալու։ Շիրվանի խանը, երբեմն Հերակլ խանին նվերներ են ուղարկել և երբեմն էլ տուրքեր տվել։ Սրանից հետո նրանցից ոչ մեկը Քերիմ խանին օգնություն չպիտի տա, իրեն նման նրանք էլ Օսմանյան կառավարության հովանավորությունը իրենց համար փրկություն պիտի համարեն և դրա համար երախտագետ պիտի լինեն։ Եթե փադիշահի կողմից Ադրբեջանի խաներին որոշ ճվերներ, շնորհներ և հրամաններ տրվեն, և եթե բոլորին ցույց տրվի նրանց Օսմանյան պետության հետ կապված լինելը, նա [Հերակլը] վստահեցնում է, որ նրանց կողմից փադիշահական երկրի սահմանների վրա հարձակում տեղի չպիտի ունենա։ Եվ եթե Օսմանյան կառավարությունը վերոհիշյալ խանին [Հերակլին] ճանաչի իբրև իրեն պատկանող խան, և այն դեպքում, երբ Քերիմ խանի հետ խաղաղություն կնքի, նա խնդրում է, որ իր և իր որդիների վտանգներից ազատ և ապահով լինելու հարցը նմանապես պայմանագրության պայմանների մեջ մտցվի։

Ներկա պայմաններում Սեֆեվիների սերնդից զուրկ լինելով՝ Իրանի երկրի Օսմանյան պետության նման հզոր և փառապանծ պետության վրա հենվելը բխում է ժամանակի և պայմանների անհրաժեշտությունից։ Սակայն եթե Սեֆեվիներից մեկը երևան գա և Իրանի սուլթանությունը նրան փոխանցվելու լինի, նա [Հերակլը] նորից Օսմանյան պետության հավատարմությունից չպիտի հրաժարվի, այդ դեպքումն էլ նա պիտի ենթարկվի Օսմանյան կառավարության հրամաններին և որոշումներին, և վերջապես նա խնդրում է, որ ին՛քը և ին՛չ իր զավակները, Աստուծո տնօրինած ժամանակի ընթացքում, Օսմանյան կառավարության շնորհիվ, պաշտպանության և ուշադրության արժանանան»։

Թե նամակի բովանդակությունը և թե նամակաբերի հայտարարությունը Ջլղրի վալիի գրության և նրա կնքապահի զեկուցման համապատասխան լինելով, այս մասին Ասեֆի պալատում մի քանի խորհրդակցություն և ժողով տեղի ունեցավ և նկատի առնվեց, որ այդ հանդամանքը [Հերակլի առաջարկությունը] Օսմանյան կառավարության պատիվն ու փառքը ավելացնելու պատճառ կլինի և մյուս կողմից էլ ոչ մի անպատեհություն չի կարող առաջացնել։ Բացի այդ, վերոհիշյալ խաների Օսմանյան կառավարությանն ապավինելու մասին սրանից առաջ Կարսի սերասքերին ուղղված կայսերական ֆերմանում շեշտված և ցույց էր տրված, որ մինչև հիմա Ադրբեջանի խաների կողմից թշնամության վերաբերյալ ոչ մի շարժում չի նկատվել, եթե սրանից հետո էլ նրանք անպատեհ ըն-

բացքի մեջ չգտնվեն, հանդարտ ապրեն և Օսմանյան կառավարությանն ապավինեն, ամեն տեսակ վնասներից և վտանգներից նրանց պաշտպանելու մասին հատուկ միջոցներ ձեռք կառնվեն։ Այդ կոչմերում այս բոլորը ամենքին հայտնի էր դարձել։ Երևանի խան՝ Հյուսեին-Ալի խանը և Խոյի խան՝ Ահմեդ-խանը, դրանից առաջ կարսի սերասքեր Ալի-փաշայի միջոցով ուղարկած գրության մեջ հայտնել էին, որ նրանք [խանները] սրանից հետո էլ հպատակություն և հնազանդություն են ցույց տալու Օսմանյան կառավարությանը և ինչ ծառայություն, որ իրենց առաջարկվի, Թիֆլիսի խան՝ Հերակլ խանի հետ միացած, պիտի ջանան իրագործել։ Այս գրությունը, Հերակլ խանի ցուցմունքները հաստատում և ցույց էին տալիս, որ նրանց միջև միություն գոյություն ունի։ Այդ պատճառով նրանց [խաների] խնդիրը միաձայն որոշումով ընդունվեց և այդ կապակցությամբ առանձին ֆերմաններ ուղարկվեցին։ Միաժամանակ նրանց տեղեկացվեց, որ եթե Քերիմ-խանը նրանց երկրների վրա հարձակվի, կարսի շրջանի սերասքերը, Տրապիզոնի վալի էլհաջ-Ալի փաշայի կողմից օգնություն պետք է հասցնի նրանց, Թիֆլիսի խանին կարիքի դեպքում օժանդակություն ցույց տալու համար՝ Ջուղրի վալիի տրամադրության տակ պահվելու են բավականաչափ քանակությամբ ընտրյալ զինվորներ։

Փադիշահի կողմից Հերակլ խանին հազար ոսկի, մի սամույրե մուշտակ (քյուրք) և մի զարդարված ձի, Հյուսեին Ալի խանին՝ երկու հազար, Ահմեդ խանին՝ հազար հինգ հարյուր ոսկի և մի սամույրե մուշտակ ևվեր ուղարկվեց։

(«Թարիխի Ջևվդեթ», հատ. I, էջ 122--128)։

* * *

Ինչպես հիշվեց, Քերիմ խանի դեմ պատերազմ հայտարարելու կապակցությամբ, Օսմանյան կառավարությունը մի շարք խաներին, այդ թվում Երևանի խան՝ Հյուսեին-Ալի խանին հատուկ նամակ և ֆերման էր ուղարկել։ Պատմագիր Ջևվդեթ փաշան հատորի վերջում տալիս է այդ երկու գրությունների պատճենը։ Հաշվի առնելով նրանց բովանդակության նույնությունը, թարգմանում ենք միայն ֆերմանը։

Երևանի խանին ուղարկված Բարձր ֆերմանի պատճենը

Ֆերմանում նախապես շեշտվում է Նադիր-Շահի ժամանակ կնքված հաշտության դաշնագրի, այդ «ամրակուռ պատնեշի» հակայական նշանակությունը երկու կողմերի համար, և հետո՝ Օսմանյան կառավարության հավատարմությունը պայմանագրի անխախտ պահպանման նկատմամբ: Այնուհետև մանրամասնորեն հիշվում են Զենդ-Քերիմ խանի Օսմանյան երկրի հանդեպ կատարած թշնամական քայլերը (Բաղդատի և Բասրայի շրջաններում) և Օսմանյան կառավարության նրա դեմ ձեռնարկած ռազմական միջոցառումները[7]:

«...Իմ աշխարհապարփակ ֆերմանում հայտնել եմ, քանի որ Ադրբեջանի խաների կողմից առայժմ թշնամական ընթացք և շարժում չի նկատվել, հետևաբար նրանց երկրների վրա չպետք է հարձակվել: Նրանցից արժանավորին հատուկ նամակներ եմ գրել և արգելել Զենդ-Քերիմի հետ կապ հաստատելը: Եթե նրանք [խանները] իրենց վիճակում ապրեն, մեր նկատմամբ թշնամություն և ատելություն արտահայտելուց հետու մնան, իմ Բարձր Սուլթանությանը հպատակություն ու հնազանդություն ցուցաբերելու դեպքում, նրանց ապահովության և անվնաս կացության մասին ցուցմունքներ և հանձնարարություններ կտրվեն:

Դո՛ւ, որ վերոհիշյալ խանն ես, Քեզ և Թիֆլիսի խան Հերակլ խանին իմ հավատարիմ ադրբազամ և բացարձակ փոխանորդի կողմից ցույց է տրված, որ այս անգամ նախորդ սերտաքերին և իմ Բարձրագույն Դռանը քո ուղարկած գրությունից և խոյի իշխող Ահմեդ խանի ու քո մարդկանց զեկուցումներից երևում է, որ Դուք իմ փադիշահական Դռանը ծառայություն և հպատակություն եք հայտնել՝ ընդունելով այդ ձեզ համար որպես պարծանքի միջոց, միաժամանակ հայտնել եք, որ պատրաստ եք ծառայելու իմ բոլոր հրամաններին. Թիֆլիսի Հերակլ խանի հետ միանալով հոժարություն եք հայտնել՝ անձնազոհ լինելու իմ կայսերական անձի համար: Ներկայումս Թիֆլիսի վերոհիշյալ Հերակլ խանը Ջլդրի վալի և իմ վեզիր Սյուլեյման փաշայի կնքապահի հետ միասին իր վրատահելի մարդկանցից Գուրգեն-Միրզայի ձեռքով իմ կայսերական Բարձր Դռանը խնդրագիր է ներկայացրել, որով նա անկեղծորեն ընդունում է իմ արդարադատ իշխանության նկատմամբ իր պատրաստակամությունը և հայտնում, որ դու, խոյի խանը և Ադրբեջանի մյուս խանները, իսոր և անկեղծ կերպով կապված եք իմ փառապանծ գահին և փադիշահությանը ու իր հետ համախոհ՝ իմ փադիշահական հրամաններին ենթարկվելով, Զենդ-Քերիմից և նրա կողմնակցությունից բոլորովին հրաժարվում եք, որը ձեզ հետ համախոհ

պիտի է իմ արդարադատ Դուռը վերահիշյալ խանին [Հերակլին] կայսերական շնորհներ են տրվել և իր ցանկության ծայրավորության մասին տրվել իմ նվիրական հրամանը։

Դու՛ք, որ հավատարմություն հայտնող վերահիշյալ խանն եւ Արդաբև, երկար տարիներից ի վեր Երևանի կառավարության դլխին եղող իմ փառապանծ Դուռն Կարսի ու Էրզրումի սահմաններում գտնվող մեծ վեզիրների հանդեպ քո ունեցած անկեղծ ցանկությունը և անսահման բարեկամությունը շատ անգամներ փորձված է։ Մանավորապես Ջենդ-Քերիմի կողմից կազմակերպված և դրժողախտությամբ վերջացած խռովարարական ելույթից հետո քո հավատարմության հակառակ ոչ մի անարժան վիճակի մեջ չինելը նկատի է առնված։ Քո ձգտումների և շարժումների նկատմամբ իմ վստահությունը բացահայտ է։ Իրանի խաների շարքում քո ազնվացեղությունը, իմաստությունն ու արժանիքն իմ կայսերական աչքում պարզ և ակնհայտ լինելով, իմ լուսապսպուռ փադիշահական Դուռն կողմից քո խնդիրը ընդունվում է, և իմ կայսերական բարձր պատվով պարգևատրվելու արտոնություն է շնորհվում։ Սրա հետ միաժամանակ այս անգամ քո արժանիքն ու պատիվը բարձրացնելու համար իմ կայսերական գանձարանից, իբրև փադիշահական շնորհ, նվիրում եմ քեզ երկու հազար ոսկի դրամ և, հատուկ արքայական հանդերձարանից, սամույրե մի խալաթ։ Այս վեհաշուք ֆերմանը ուղարկվում է ներկայումս Էրզրումի և Տրապիզոնի վալի ու Կարսի շրջանի Սերասքեր՝ իմ վեզիր Էլհաջ-Ալի-փաշայի միջոցով։ Դու թղթակցիր իմ Բարձր կառավարության հպատակությունը ընդունած այլ խաների հետ, և եթե ձեր կողմից ձեր խոստման և հավատարմության հակառակ որևիցե քայլ և շարժում տեղի չունենա, ձեր երկրներին և հողերին ոչ մի վտանգ չի սպառնա։ Իսկ եթե Ջենդ-Քերիմը ձեզ նեղություն պատճառելու համարձակություն ունենա, վերահիշյալ սերասքերին պատվիրված է պաշտպանել և օգնել ձեզ։ Ձեր հավատարմության մեջ որքան ժամանակ որ հարատև լինեք, ինչպես որ մինչև օրս եղել եք ձեր երկրի կառավարության տերն ու տիրականը, սրանից հետո էլ այդ ձևով կշարունակեք։ Ձեր ապահով, երջանիկ և հանգիստ ապրելու համար իմ կայսերական շնորհները անպակաս կլինեն։ Խոյի խան՝ Ահմեդ-խանին էլ կայսերական նվեր և խալաթ եմ շնորհում։ Թիֆլիսի խան՝ Էրեկլի [Հերակլ] խանին հանձնարարված է, որ քեզ և Ադրբեջանի այլ խաների հետ միացած, հոգ տանի ձեր շնորհապարտ ծառայականությանը։ Այդ էլ քեզ հայտնի թող լինի... Թիֆլիսի

խանի հետ բանակցելով, խաղաղության և միության հետամուտ լինելով՝ ջանացեք ձեր խոստումն ու հանձնառությունը իրագործել։ Կարսի սերասքեր՝ վերոհիշյալ վեզիրին դրված է ձեր հատուկ գործի մասին և հրահանգ է տրված ժամանակի ու պայմանների պահանջի համաձայն օժանդակություն և օգնություն ցույց տալ։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. I, էջ 300—303)։

Առտակարգ դեպք (զարիբե)

Սուլթան Մուստաֆա խանի տիրապետության ժամանակաշրջանում, Ռուսաստանի դեմ տեղի ունեցած պատերազմում, վախենալով, որ Հերակլ խանը այդ ուղղությամբ շարժվելով կարող է Օսմանյան պետության սահմաններին վնաս պատճառել, Քերիմ-խանին նրա դեմ հանելու և հարձակման մղելու նպատակով միջոցներ էին ձեռք առնված ու գրություններ ուղարկված։ Այժմ [Հերակլ խանի] ինքնաբերաբար Օսմանյան կառավարությանն ապավինելով՝ Քերիմ-խանի դեմ օգտագործելու խնդրանքը, Աստվածային կամքի տարօրինակ դեպքերից է [զարիբե]։*

Լրացում

Ինչպես որ վերևը հիշվեց, Ադրբեջանի խաներին հովանավորության իմաստով հրամաններ ուղարկվեցին։ Սակայն նկատի ունենալով, որ նրանց՝ Օսմանյան պետությանն հարելը կարող է Ջենդ-Քերիմի կողմից Օսմանյան կառավարությանը խաթելու մի խորամանկություն լինել, նախազգուշության համար անհրաժեշտ նկատվեց միջոցներ ձեռք առնել։ Այդ պատճառով Կարսի շրջանի սերասքերին տեղեկություն տրվեց և հրամայվեց իր տրամադրության տակ գտնված զինվորական ուժերով կամաց-կամաց դեպի Կարս շարժվել և զինված ուժերով այդ կողմերում սարսափ տարածել։ Բացի այդ՝ նրան հանձնարարվեց իր կողմից հատուկ մարդիկ նշանակել և ստուգել Ադրբեջանի խաների վիճակը, նրանցից վատահության մուրհակներ վերցնել և առհասարակ ամեն կերպ նախազգուշական միջոցներ ձեռք առնել։

---

* *Սուլթան Մուստաֆա III, 1171—1203 թթ. (1757—1786)։*

Ադրբեջանի խաների դրության մասին (լրացում)

Ինչպես վերևում հիշվեց, Ադրբեջանական խաներին կայսերական նվերներ և պատվերներ ուղարկվեցին: Այս անգամ Զըլդրի վալիից ստացված դրության մեջ հայտնվում էր, որ Թիֆլիսի խան Հերակլը փադիշահական նվերները դիմավորելիս, իջել է ձիուց համբուրել փադիշահի կողմից նվեր ուղարկված ձիու սանձը, հետո հեծել նրան և փադիշահական շքախմբի հետ առաջ շարժվել, մեծ հանդիսավորությամբ թնդանոթներ է արձակել տվել և իր կենտրոնատեղը հասնելուց հետո՝ Դիվան կազմել, իր ժողովրդի ավագանու ներկայությամբ կարդացել փադիշահական դրությունը և այնուհետև փադիշահի կողմից շնորհված խալաթը հագնելով՝ համբուրել է տվել նրա փեշը իր ավագանուն ու հայտարարել իր հպատակությունը Օսմանյան պետությանը: Իսկ Երևանի Հյուսեին-Ալի խանը իր ավագանու հետ արգելել է այդպիսի փառավոր հանդիսավորություն կատարելը:

Երբ հասկացվեց, որ Ադրբեջանի խաների Օսմանյան կառավարության բարձր հովանավորություն խնդրելը տեղի է ունեցել պայմանների բերումով, որոշվեց, որ նրանց չի կարելի լրիվ կերպով հավատ ընծայել: Նկատի առնվեց, որ Կարսի սերասքերին ոչ թե երկիրը ընդարձակելու, այլ երկրի սահմանները պաշտպանելու պաշտոն է տրված: Նմանապես նկատի առնվեց, որ առանց պատճառի մի շարք կանանց ու երեխաների, ինչպես նաև աղքատների ոտնատակ լինելը հակառակ է արդարության և խղճի կանոններին: Վերոհիշյալ սերասքերին հայտնվեց, որ նա դուրս գալով էրզրումից, ձիերը մարզապետիներում արածացնելով շարժվի դեպի Կարսի կողմերը և ուշիմորեն ուսումնասիրի այդ կողմերի դրությունը: Եթե Ադրբեջանի խաների կողմից թշնամական շարժում նկատի, այդ դեպքում, փոխադարձ հասուցման կարգով պետք է անմիջապես հարձակվի նրանց վրա:

Սակայն որոշ ժամանակ անցնելուց հետո, Հերակլ խանի քարտուղարը՝ Գուրգեն-Միրզան, նորից Զըլդրի վալիի կնքապահ ուղեկցությամբ Ստամբուլ եկավ և հայտնեց, որ Հերակլ խանի խելացի միջոցառումներով Խոյի, Գենջեի, Երևանի, Ղարաբաղի և Շիրվանի խաներն էլ վերջերս հակված են դեպի Օսմանյան կառավարության կողմը, նրանք էլ սրանից հետո Օսմանյան կառավարության ծառայականություն ընդունելու, կայսերական սահման-*

---

* *Բնագրում «Դերսեադեթ» (երջանկության վայր, տեղ): Թուրք դրականության մեջ հաճախ «Դերսեադեթ» կոչումը գործ է ածվում Ստամբուլի փոխարեն:*

Ներին վատ աչքով չնայելու մասին դրավոր խոստումներ են տվել, որ Հերակլ խանն էլ իր կողմից մի երաշխավորական գրություն է ուղարկել։ Հերակլ խանի կողմից Սեդարեթին, Քեթխուդա-բեյին և Ռեյիս-էֆենդիին իրրև նվեր բերել է մուշտակ, կերպաս, շալ և այլն։ Թե Գուրդեն-Միրզային և թե կնքապահին խալաթներ հագցընելուց հետո, նրանց իրրև բնակավայր տրվեց Ջրլդրի վալիի Կափու-Քեղխուդայի բնակարանը։ Անմիջապես Ռեիս-էֆենդիի կողմից Բեքլեքչի*-հայրի էֆենդին դնաց և նրանց հայտարարությունները դրի առավ։

Նրանց զեկուցման համառոտ բովանդակությունը այս է՝ Հերակլ խանը կայսերական գրությունն ու նվերները ստացած օրից սկսած, Օսմանյան կառավարությանը հավատարմություն և հպատակություն ցույց տալը, և այդ կերպով վանեմաշուք սուլթանության ծառաների շարքում ընդունվելը, իր համար մեծ շնորհ և պարծանք է համարում։ Սրանից հետո ինքը, իր հավատարմության և ծառայականության մեջ հաստատակամ մնալով հանդերձ, Ադրբեջանի խաներին էլ իր նման Օսմանյան պետության հավատարմության շրջաններում առնելու ջանադիր պիտի լինի։ Այսպիսով, այդ շրջանները լինելով ամբողջապես Օսմանյան կառավարության լրացուցիչ մասերը, Օսմանյան կառավարությունը ոչ ոքի կալվածքին և ինչքին աչք չունի և նրա շուքին ապավինողները, որքան որ երջանիկ և բարեբաստիկ լինեն, պետք է հաստատ հավկանան և ըմբռնեն, որ այդ միայն վանեմ սուլթանության շնորհիվ է տեղի ունեցել։ Սրանից հետո հրաժարվելով Ռուսաստանից և ամբողջովին Օսմանյան կառավարությանը ապավինելով՝ հպատակություն է հայտնել Նորին Վսեմություն փադիշահի Բարձրագույն Դռանը։

Փադիշահի կողմից Հերակլ խանին քուրք, ձիու սարք և ապամանդապարդ ժամացույց շնորհվեց։

(«Թարիխի Ջևդեթ», հատ. I, էջ 128—130)։

1192 թվականի (1778) դեպքերից

Կաթոլիկ պատրիարքի ընտրության արգելումը

Օսմանյան պետության քրիստոնյա հպատակներից հայ ազգը, հույն** և կաթոլիկ դավանանքներից տարբեր, հատուկ ծիսակատարություն է ունեցել և մինչև 1040 թ. (1630) նրանց [հայերի] միջև

---

* Բեքլեքչի — կայսերական Դիվանի պրոտեներակի պետը։

** Բնագրում «ռում» բառը գործ է ածվում հունադավան, օրթոդոքս իմաստով։

այլ դավանանք հայտնի չի եղել։ Սակայն ֆրանսիացի (ֆրենգ) հայտնի վարդապետները շրջելով հայերի մեջ, կարողացան նրանց մի մասին ընդունել տալ Հռոմում՝ Պապի հոգևորական իշխանության տակ գտնվող կաթոլիկական դավանանքը [ընդհանուր դավանանք իմաստով]։ Հույների և հայերի հոգևորական պետերը՝ պատրիարքները, գտնվում են Օսմանյան պետության մեջ, իսկ կաթոլիկ եկեղեցին օտար հոգևորական պետի է հպատակվում։ Արևմտյան պետությունների մեծ մասը պատկանում են այդ դավանանքին [կաթոլիկականը]։ Արևելյան երկրներում ֆրենգությունը մեծ համբավ վաստակած լինելով, Օսմանյան պետության հպատակներից մի փոքր հասարակության այդպիսի մի օտար եկեղեցու հպատակությունը քաղաքական խոովություն է համարվում։ Բուն հայերը, ֆանատիկական տեսակետից, կաթոլիկ դարձած հայերին խիստ թշնամի լինելով, նրանց [կաթոլիկ հայերի] դեմ մի շարք ամբաստանություններով և դրպարտություններով խլացնում էին կառավարության ականջները։ Երբ այս խնդիրը զեկուցվեց վեհ Սուլթան Մուրադ IV-ին, նրա հրամանով ռայաների մեջ նման խոովություն ստեղծելու համարձակություն ունեցողներին համապատասխան պատժով պատժեցին։ Այդ հարցը նորից երևան եկավ 1147 թ. (1774), Հեքիմ-Զադե-Ալի փաշայի սեդարեթության ժամանակ։ Նկատի առնելով այդ երեսյթի քաղաքական վնասակարությունը, վերոհիշյալ խմբից [կաթոլիկ հայերից] մի քանի հոգի մահվան դատապարտվեցին. բացի այդ, հայոց պատրիարքներին պաշտոնական հրաման տրվեց, որով հայտնվում էր, որ ֆրենգ եկեղեցիներ գնացող և կաթոլիկ դավանանք ընդունող ռայաներ հայտնաբերելիս, պետք է հայտնել դատավորներին։ Նրանք անմիջապես տաժանակիր աշխատանքի (քյուրեք) պիտի ենթարկվեն. բացի այդ, իրենց [հայերի] դավանանքին և ռայաների կարգ ու կանոնին հակառակ ընթացքի մեջ գտնվողներին դաստիարակելու և պատժելու մասին նրանց կողմից ուղարկված և կնքված խնդրագրերը նկատի պիտի առնվեն և ամեն կերպ չպիտի մերժվեն։

Սակայն չնայած որ հարցը այդ ձևով պարզված էր, որոշ ժամանակից ի վեր այդ խնդրին անհրաժեշտ չափով ուշադրություն չէր դարձվում. այդ պատճառով էլ ռայաներից որոշ թվով հարուստներ կաթոլիկություն էին ընդունել, և նրանց օգնությամբ մի քանի կաթոլիկ վարդապետներ պապի կողմից կնքված թղթեր ձեռք բերելով, շրջագայելով գյուղերն ու քաղաքները ռայաներից շատերին խաբել և իրենց դավանանքն էին ընդունել տվել։ Նախապես հայոց պատ-

րիարքներին տրված հրամաններում, կաթոլիկական դավանանքը ընդունողներին պատժելու հետ միասին նրանց մեղյալներին չվերցրնելու մասին հատուկ մի կետ էլ կար։ Այդ ժամանակ տեղի ունեցած մեծ ժանտախտի համաճարակի ընթացքում հայոց պատրիարքը արգելում էր կաթոլիկների դագաղները վերցնել։ Կաթոլիկները չխոսելով այդ երևույթի իսկական պատճառի մասին և այն միայն դավանական հակառակության հետ կապելով, պատրիարքի չարամտության մասին գանգատ հայտնեցին և դիմում ներկայացնելով Նորին Վսեմության փադիշահին, խնդրեցին, որ իրենց համար առանձին պատրիարք նշանակվի։ Խնդրագիրը ուղարկվեց Բարձրագույն Դուռը[4]. այդ մասին վեքիլների միջև խորհրդակցության տեղի ունեցավ, որի ընթացքում Ռեիս-էֆենդին՝ Արիֆ-Զադե Օմար-Վահիդ էֆենդին այս հարցի մասին ընդարձակ բացատրական գրավոր մի զեկուցում ներկայացրեց, որի պատճենը տրվում է ստորև համառոտակի կերպով։

Ռեիս-էֆենդիի[5] զեկուցման բովանդակությունը

*Օսմանյան պետության ռայաներից ամենաբազմամարդը հայ ժողովուրդն է։ Նրանց հայ անունը [կոչումը], նախապես իրենց ապրած Իրանյան երկրներից Ադրբեջանի Արմեն երկրամասից է առաջացել։ Իսկ Արմենիա անունը [տերմինը] այդ երկրի իշխողի՝ Արմենյարի (?) մայրաքաղաքից է առաջացել**։

Մինչև 600-ական թվականը Արմենիան [կազմված էր] Փոքր Արմենիայից—Անթաքիայի, Վանի, Էրզրումի և Սվազի էյալեթները և Մեծ Արմենիայից—Ադրբեջանի կողմերը, որոնք ունեին իրենց անկախ իշխողները. նրանց մայրաքաղաքը Կոնիան էր։ Սելջուքյան սուլթաններից Սուլթան-Ղայաս-էդդինի ժամանակ, որանց երկիրն ու հայրենիքը նվաճվում է, նրանց իշխողները բնաջինջ են լինում և իրենք [ժողովուրդը] ռայա են դառնում։ Ավելի ուշ, վերոհիշյալ երկիրը [Արմենիան] Օսմանյան երկրի տիրապետության մեջ է մտնում, այդ ժամանակից մինչև վերոհիշյալ Սուլթան Մուրադ IV-ի իշխանության շրջանը, վերոհիշյալ ցեղի [հայերի] դավանանքը բոլոր քրիստոնյա ազգությունների դավանանքից տարբեր լինելով, միասնական մի դավանանքով և իրենց վիճակով հանգիստ ապրում են։ Սրանք [հայերը] զարդամիտ մի ժողովուրդ էին։ Էֆրենջ

---

* *Այս նախադասությունը, հավանաբար, պճատված է։*

[Ֆրանսիացի] ցեղը Օսմանյան պետության նկատմամբ չարաշահական խռովություններ իրականացնելու առիթներ ստեղծելու հետամուտ լինելով, ինչպես որ ռուսները պատերազմի ժամանակ հույներից օգտվեցին խռովարարական նպատակներով, նրանք էլ [ֆրենգները], ինչպես վերևը հիշվեց, հայերի մեջ կաթոլիկական դավանանքը տարածելով, հետամուտ էին իրենց դավանակիցների թիվը ավելացնելուն։

Հետևաբար, ինչպես վերևը հիշվեց, երկու անգամ այդպիսի խռովություն կազմակերպելու հանդգնություն ունեցողները, համաձայն օրենքի, մահվան էին դատապարտվել։ Ներկայումս էլ հայերի և կաթոլիկների միջև այն աստիճան թշնամություն գոյություն ունի, որ մեկի մարթածը [կենդանին] մյուսը չի ուտում, մեկի ոչնչացումը մյուսի կողմից փրկություն է համարվում։ Բուն հայերը ցանկանում են Օսմանյան պետության հաղթանակը, իսկ կաթոլիկները [կաթոլիկ հայերը], բնական է, որ ցանկանում են եվրոպական (էֆրենջ) երկրների հաղթանակը։ Մոտիկ անցյալում ռուսական արշավանքի [պատերազմի] ժամանակ, ռուսների և հույների միջև երևան եկած հայանի հարաբերությունը այս պնդումի համար բավականաչափ փաստ է հանդիսանում։ Իրենց նախնիների և պապերի դավանանքին հավատարիմ հայերը չեզոք մնալով ցույց տվին, որ նրանք հավատարիմ են Օսմանյան կառավարությանը, մինչդեռ կաթոլիկ դավանանքին պատկանողները, Եվրոպայում մի եկեղեցի դնելով, հարուստները իրենց որդիներին ու մոտիկներին կրթելու համար այդ եկեղեցին են ուղարկում, պուխներին շլյապա (շապկա) ծածկում, եվրոպական հագուստներ հագնում և այս կերպով իրենց բուն կրթությունը [կենցաղը] փոխում են. բացի այդ, նրանցից ոմանք, սարրաֆության[6] և վաճառականության դիմակի տակ, [պետության] ավազանու և ազնվականների բնակարաններում ապրած եղած ժամանակ, մոտենում են նրանց ու հետամուտ լինում պետության գաղտնիքները կորզելուն։ Կաթոլիկ վարդապետները կաթոլիկ հայերից խլում են մահացողների ժառանգությունը [ունեցվածքը] և այդպիսով ամեն տարի շուրջ հազար քիսեի հարստություն Ֆրանսիա է ուղարկվում։ Ասված մի՛ արասցե, եթե սրանց թուլատրվի, կասկած չկա, որ Ռումելիում և Անատոլուում ապրող բոլոր ռայաները կաթոլիկ կդառնան։

Վերոհիշյալ պեկուցադրի վերևում՝ «Ռեիս-էֆենդիի կարծիքն է» խոսքերով ծանոթություն տրվեց և Սեդարեթության կողմից Նորին Վսեմություն փադիշահին ներկայացվեց։ Այդ մասին շնորհված

կայսերական հրամանի համաձայն, օրենքին հակառակ, հայ ռազմականներին խաբող և մոլորեցնողներին պատժելու մասին հայոց պատրիարքին ուղղված մի հրամանագիր (բույրուլթի) գրվեց, որով առաջարկվում էր՝ առանց անձնական ատելության և թշնամության խնդրագրեր ներկայացնել, կաթոլիկ մեռյալներին մեջտեղ չթողնել, առանց ընդունված կարգը խախտելու մեռյալներին թաղել, վեճերին և թշնամությանը վերջ տալ։

Ա.ճկախ խորհրդաժողով

Քրիստոնեական կրոնը բաժանված է բազմաթիվ ճյուղերի։ Ամենագլխավորները հետևյալներն են՝ առաջին՝ Արևմտյան, Լատին և կաթոլիկ եկեղեցին, որը Հռոմի պապի հոգևորական իշխանության տակ գտնվող դավանանքն է։ Երկրորդ՝ Ստամբուլի հույն պատրիարքին ենթակա Արևելյան եկեղեցի կոչված դավանանքն է։ Երրորդ՝ Արևելյան եկեղեցու մի ճյուղը լինելով, սակայն հույն պատրիարքի իշխանությունը չճանաչող, ինչպես որ նախապես հիշվեց, առանձին պատրիարքի ենթակա հայկական դավանանքն է։ Չորրորդ՝ ոչ մի հոգևորական իշխանություն չճանաչող բողոքականություն կոչված դավանանքն է։ Օսմանյան կայսրության սահմաններում գտնվող հյուսիսային և արևելյան քաղաքներում նախապես գոյություն ունեին միայն հույն և հայ եկեղեցիները. այնպես որ կայսերական կառավարությունը իր քրիստոնյա հպատակների համար ճանաչել էր միայն այս երկու եկեղեցիները և նրանց մի շարք առանձնաշնորհումներ տվել (շնորհվել էր)։ Էլ-Շամում, Բոանիայի գերմանական սահմանի վրա և Միջերկրական ծովի կղզիներում լատինական (կաթոլիկ) դավանանքին պատկանող փոքրաթիվ ռայաներ էին ապրում, սակայն թվով շատ աննշան լինելով, դրանք ինքնուրույն դավանանք և ազգություն չէին համարվում։ Այդ դավանանքի վարդապետները մեծ մասամբ օտարահպատակներից են և առհասարակ կաթոլիկ դավանանքին պատկանողներին նայում էին իբրև օտարների։ Բողոքականությունը [մեր երկրում] բոլորովին անծանոթ էր։ Ամենուրեք, մանավանդ Արևելյան երկրներում դավանանքի և ազգության վրա միևնույն աչքով է նայվում. այդ պատճառով հպատակներից որոշ մարդկանց, մինչև անգամ հոգևորական լինելու դեպքումն էլ, օտար կառավարության հետ հարաբերություն ստեղծելը, քաղաքականապես վնասակար գործ է համարվում։ Արդարև, պապական կա-

ռավարությունը [պետությունը] սկզբից իր կրոնական պաշտոնը ազդեցության միջոցի վերածելով, Եվրոպայում խիստ շատ վեճերի և աղմուկների պատճառ է եղել, բազմաթիվ կռիվներ և պատերազմներ է առաջացրել: Սակայն բավական ժամանակից ի վեր, մասնավորապես ներկա պայմաններում, պապական կառավարությունը ոսկ կրոնական մի իշխանության է վերածվել, այսինքն՝ նրա արտաքին իշխանությունը սահմանափակվել է կաթոլիկական դավանանքի հոգևորական ղեկավարության սահմաններում և հիշյալ դավանանքին պատկանող քրիստոնյաների Պապի հետ ունեցած կապը, միայն կրոնական և դավանական-բարոյական նշանակություն ունի: Այնպես որ այդ կապը այլևս քաղաքական և պետական վտանգ չի ներկայացնում: Այն կարծիքը, թե կաթոլիկական դավանանքով տարված հպատակները այդ դավանանքին պատկանող պետությունների հաղթանակն են ցանկանում, բոլորովին ճիշտ տեսակետ չէ, որովհետև պետության հպատակությունից գոհ եղող և նրա պաշտպանությանը և արդարադատությանը վստահ եղող և հանգիստ ապրող հպատակները, միմիայն դավանական տարբերության պատճառով շատ դժվարությամբ կարող են օտար պետության հակամետություն ցույց տալ: Հետևաբար, որոշ թվով հայերի (արամեներ) կաթոլիկական դավանանքն ընդունելն արգելելու համար այդ աստիճան խիստ և կոպիտ միջոցների գործադրությունը, պարզ է, որ չի համապատասխանում արդարության և խելամտության սկզբունքներին: Մինչև անգամ, եթե այն ժամանակ ենթադրված անպատեհությունները իրոք որ տեղի ունենային, նրանց արգելումը նման ճանապարհով հնարավոր չէր լինի, մի բան, որ փորձով պարզված և ապացուցված է: Անձանոթ քրիստոնեական դավանանքներին մասին եղած հարցերը կառավարությունը ստուգում է ճանաչված մարդկանցից. իսկ սրանք իրենց հակառակորդներին կառավարության աչքում ամբաստանում են իրենց ուզածի պես: Երբ բողոքականները հավատացած են, որ իրենք առաջնորդվում են Աստվածաշնչի և Ավետարանի իսկական իմաստով, իրենց աղոթարաններից պատկերներն ու զարդարանքները վերացրել և այլ դավանանքների մի շարք վատ սովորությունները ոչնչացրել են, դրանով, նրանք [բողոքականները], կարող է պատահել, որ իսկական հավատացյալի բնույթն են ստացել: Մինչդեռ նրանց բոլորովին այլ կերպ են ցույց տալիս իսլամների աչքին: Եվ կամ հայերը, իրենցից բաժանելով կաթոլիկություն ընդունողներին, Օսմանյան պետության մեջ քաղաքականությամբ զրաղվելու և կամ այլ ծանր հանցանքնե-

րով են ամբաստանում նրանց։ Սարսափելիքով և կամայ ըրպոմունքներով ձեռք բերված ապրեցությունը օգտագործում են նրանց [կաթոլիկների] դեմ, որի համար մի շարք խաուրյուններ են տեղի ունեցել կաթոլիկների նկատմամբ և երբեմն առաջացրել կառավարության ուժեղ պայրուցքը։ Սակայն ամեն բանում, մասնավորապես հավատքի գործերում ինչքան խաուրյուն և արգելք տեղի ունենա, կրքերը այնքան ավելի կուժեղանան։

Հայերի կողմից տեղի ունեցած ծայրահեղ միջոցները օտար միջամտության պատճառ եղան, որի մասին պիտի հիշվի 1194 թ. դեպքերի շարքում։ Դրանք պատճառ եղան պատրիարքի պաշտոնազրկության և ավելի ուշ՝ կաթոլիկների իբրև մի առանձին ազգի ձև ընդունելուն։

(«Թարիխ Ջևդեթ», հատ. I, էջ 159—163)։

1194 թվականի (1780) դեպքերից
Հայոց պատրիարքի պաշտոնազրկության հանգամանքները

Ինչպես որ հիշվեց 1192 թ. դեպքերի շարքում, հայոց պատրիարքը՝ Զաքարիա եպիսկոպոսը, իր ունեցած պաշտոնի և իրավունքի հիման վրա, հայերից կաթոլիկական դավանանք ընդունել ցանկացողներին արգելք էր լինում։ Թեև այդ ընթացքը միջոց էր հանդիսանում ռայաներին պատակտումից և բաժանումից պաշտպանելու, սակայն այդ ուղղությամբ կարիք եղածից ավելի խաուրյուն էր ցույց տալիս և մինչև անգամ կաթոլիկների հետ շփում ունեցող ռայաների մեռելները թաղելն արգելվում էր և մեռելների դարշահոտության պատճառ դառնում։ Բացի այդ, [պատրիարքը] նույնիսկ արգելում էր դեպի Եվրոպա ճանապարհորդությունը։ Նման ծայրահեղությունները որոշ անպատեհություններ և մասնավորապես օտարների դժգոհության պատճառ եղան։ Այսպես, որոշ ժամանակ առաջ Ալստրիայի՝ (Նեմչեի) պլխավոր մինիստրից մի նամակ էր ստացվել, որի մեջ խոսելով վեճի առարկա կաթոլիկական հարցի մասին, ասում էր, թե հայոց պատրիարքը արգելում է վաճառականներին Տրիեստեի նավահանգիստը երթևեկելը և պահանջում էր նրա [պատրիարքի] պաշտոնազրկումը։ Այդ ժամանակ հարցի քննությունը հետաձգվեց մինչև Ալստրիայի դեսպանի Ստամբուլ գալը և այդ խմաստով պատասխան գրվեց։ Հետո Աբդուլ-Ռզակ փաշայի նախագահության ժամանակ Ալստրիական դեսպանը Ստամբուլ եկավ, նրա հետ տեսակցեց և հայտնեց, որ իր կառավարությունը պահանջում է հայոց պատրիարքի

պաշտոնազրկումը։ Նա հասկացրեց, որ այդ պահանջը վերջնական է։ Դրան Աբդուլ-Ռզակ փաշան պատասխանեց. «մենք պարտավոր ենք պատրիարքի առնտրական գործողություններին արգելք լինելու հանգամանքը ասուգել»։ Դրանից հետո Ավստրիական դվխավոր Բարգմանը երկու օրը մեկ անգամ Ռեիս-էֆենդու մոտ գալով, երբեմն պահանջում էր այդ կետի գործադրությունը իբրև պայմանային հոդված, երբեմն էլ՝ իբրև բարեկամական պահանջ։ Ռեիս-էֆենդին պատասխանեց՝ «Ձեր այդ պահանջը չի կարող համապատասխանել պայմանագրային կետերին. հայոց պատրիարքը հազարավոր փաղիշահական ռայաների պաշտոնյան է և նրա պաշտոնազրկումը օտար պետության պահանջով մեր վարչական գործերն ու ռայաների գործերը խանգարելու բնույթն ունի. բարեկամ մի կառավարություն իրեն չպիտի թույլ տա և չպիտի պահանջ իրեն բարեկամ երկրի օրենքների խախտումը»։ Դրան Ավստրիական դեսպանը պատասխանում է՝ «իմ կառավարությունը պահանջում է այդ և պնդում»։ Այս հարցը մի քանի անգամ վեքիլների մեջլիսում քննության առնվեց և որոշվեց. եթե Ավստրիական դեսպանի այդ մասին վիեննա գրելուց հետո, դվխավոր մինիստրից այդ առթիվ պնդող գրության ստացվի, այն ժամանակ վեճը մեջտեղից վերացնելու համար, պատրիարքին պաշտոնազուրկ պետք է անել. սակայն նկատի առնելով, որ ամեն կողմ լուր կարող է տարածվել, թե Օսմանյան կառավարությունը ստիպված է եղել պատրիարքին հրաժարեցնել, ինչ որ իբրև վատ օրինակ այլ պետություններին, մասնավորապես մեր ռայաների և նրանց եկեղեցիների գործերին միջամտելու պատրվակ որոնող Ռուսաստանին առիթ կտա նման հարցերի մեջ խառնվելու. մյուս կողմից էլ նկատի առնելով, որ Ավստրիային ընդառաջելով հայոց պատրիարքին հրաժարեցնելը անխուսափելիորեն մի շարք անպատեհություններ կարող է առաջացնել,— լուծման երկու հավանական ձև քննության դրվեց՝ կամ առայժմ կաթոլիկական դավանանքը ընդունող հայերի գլխավորներից [պատվավորներից] մի քանիսին ձերբակալել և պատժել, իսկ պատրիարքին ասել՝ «Դու չես կարողացել փադիշահի կողմից քեզ հանձնարարվածի համաձայն, պահանջված կերպով կարգի բերել քո ժողովրդի գործերը, այդ պատճառով էլ ռայաների գործերը խանգարվել են ու դրա հետևանքով բազմաթիվ հայեր կաթոլիկական դավանանքին են հարել», այդ ամբաստանությամբ պատրիարքին հրաժարեցնելով, վեճը մեջտեղից վերացնել, և կամ Ֆրանսիական դեսպանին դաղտնի հայտնել, թե Ավստրիական կառավարությունը ի՞նչ իրա-

վանքով այդպիսի մի առաջարկ է ներկայացրել, դա թուլատրե՞լի բան է արդյոք. Յրանսիական դեսպանը կարող է պատասխանել, որ դա անպատեհ է. իր կողմից [դեսպանը] կարող է Ավստրիական դեսպանին դիմել և Վիեննայի Յրանսիական դեսպանին այդ մասին գրություն ուղարկել, որով մինչև պատասխան ստացվելը, գործը կարող է հետաձգվել:

Այս երկու հավանական ձևերից մեկը նախընտրելու համար երկար խորհրդակցություն և քննություն տեղի ունեցավ և վերջապես նախապատվությունը տրվեց առաջին հավանականությանը: Նկատի առնվեց ավստրիացիների համառ պնդումն ու պահանջը, մանավանդ, երբ այդ մասին Ավստրիայից գրության ստացումը հավանական համարվեց: Բայց, որովհետև, սոսկ Ավստրիայի պահանջի հիման վրա պատրիարքին հրաժարեցնելը, ինչպես վերևում հիշվեց, վտանգավոր երևույթ էր, այդ պատճառով Ռեիս-էֆենդին այսպիսի մի խելացի առաջարկ ներկայացրեց՝ մի քանի օր հետո կաթոլիկ դավանանքը ընդունողներից մի քանիսին պատժել և պատրիարքին էլ այդ խնդրում անհոգություն ցույց տալու ամբաստանությամբ՝ պաշտոնազուրկ անել: Ահա այսպիսով հայոց պատրիարքի պաշտոնազրկության հարցը վճռվեց: Որոշ ժամանակ հետո պատրիարքը պաշտոնազուրկ արվեց և Բրուսա աքսորվեց: Նրա փոխարեն Բրուսայի մետրոպոլիտը՝ Հովհաննես վարդապետը հայոց պատրիարք նշանակվեց: Սակայն Հովհաննես պատրիարքը իր նախորդին բոլորովին հակառակ այդ խնդրում շատ թույլ վարվեց և չկարողացավ ժողովրդին լավ վերաբերմունք ցույց տալ: Ժողովուրդը հարձակվեց պատրիարքի վրա և նրան պաշտոնից հեռացրեց: Այնպես որ տարին չլրացած նա հեռացվեց և նրա փոխարեն Զաքարիա եպիսկոպոսը, Բրուսայից հետ կանչվելով, նորից պատրիարք նշանակվեց:

(«Թարիխ Ջևդեթ», հատ. I, էջ 210—212):

«ԹԱՐԻԽԻ ՋԵՎԴԵԹ», ՀԱՏ. II

1197 թվականի (1782) դեպքերից

Էրեկլի [Հերակլ] խանի Ռուսաստանի հովանավորություն ընդունելը

Ռուսաստանի հովանավորության ինչ աստիճան վտանգավոր և վնասաբեր լինելը Շահին—Կրայի[7] դեպքից ամենքին հայտնի պիտի լիներ: Սակայն սրանից առաջ Օսմանյան կառավարության հո-

վանավորության տակ մտած Վրաստանի իաններից Քարթալինայի և Կագեթի [Կախեթի] իշխանը՝ Թիֆլիսի խան Թեյմուրազի որդին Հերակլիոս խանը, որը 1190 թ. (1776) դեպքերի ժամանակ Օսմանյան կառավարության հովանավորությունն ու հպատակությունը խնդրող նույն Հերակլ խանն է, Պատյոմկինի նվերներով շլացած, սույն 1197 թ. Ռամազան ամսի կեսերին Ռուսաստանի հովանավորության տակ մտավ և Եկատերինային մի մուրհակ (դոկումենտ) տվեց, որով հայտնում էր, թե սրանից հետո այլ պետության հպատակությունից հրաժարվելով, կարիք եղած դեպքում պատրաստ է Ռուսաստանին օգնել, իսկ Ռուսաստանը հանձնառու է լինում նրան հովանավորելու և նրա երկրները պաշտպանելու։ Դրանից հետո ժառանգաբար իր փոխարեն խան եղող անձնավորությունը, նախապես այդ մասին պետք է հայտնի Ռուսաստանին, նրա կողմից արտոնագիր, դրոշակ և թուր ստանալուց ու կաֆթան հագնելուց հետո, պետք է Ռուսաստանի կողմից ցույց տրված եղանակով երդվի՝ ընդունելով նրա հովանավորության և իշխանության տակ գտնվելը։ Առանց սահմանում գտնվող Ռուսական հրամանատարի և դեսպանի գիտության, վերոհիշյալ խանը չպետք է բանակցություններ ունենա շրջակա իշխանների հետ. Ռուսաստանի, Օսմանյան կառավարության և այլ պետությունների հետ կնքելիք պայմանագրերը, Հերակլ խանի երկրին և ժողովրդին պետք է վերաբերեն, և վերոհիշյալ Քարթալինա և Կախեթի երկրների գլխավոր եպիսկոպոսը՝ Ռուսաստանի ութերորդ աստիճանի մետրոպոլիտի հետ համաստիճան պիտի համարվի։ Այս պայմանագիրը կնքված է հավիտենապես ուժի մեջ լինելու պայմանով։

Թեև Հերակլ խանը ընդունել էր Ռուսաստանի հովանավորությունը, բայց իր երկիրը Ռուսաստանին չէր միացրել։ Սակայն նրա մահվանից 17 տարի հետո, ռուսները, հովանավորությունը պատրվակ համարելով՝ գրավեցին Հերակլ խանի իշխանության տակ գտնված երկիրը և կցեցին Ռուսաստանին։

Ռուսները, նույն ձևով ուզեցին Մեգրելի, այսինքն՝ Աչըք-Բաշի խան՝ Սոլոմոն խանին էլ իրենց հովանավորության տակն առնել։ Վերջինս քաջարի անձնավորություն լինելով, չցանկացավ անմիջապես Ռուսաստանին գլուխ ծռել. սակայն ռուսները նվերներով և պարգևատրությամբ փորձեցին նրան իրենց կողմը գրավել և իրենց ենթարկել։

Հերակլ խանին և Սոլոմոն խանին ռուսների կողմը գրավելու և իրենց ենթարկելու լուրերի հետ միասին, սահմանի վալիներից

Ստամբուլ ուղարկված պրուիյուններից պարզվեց, որ Երևանի շրջանն ուղարկված ռուս երկրաչափները այդ կողմերում երթևեկելով, ուսումնասիրել են Երևանի երկիրը [շրջանը], որտեղ Ռուսաստանի մարդիկ Երևանի խան՝ Հյուսեին խանի կողմից դոհունակությամբ են ընդունվել։ Այդ շրջաններում պրուիյուն ուսումնասիրելու պաշտոն ունեցող լրտեսների տված տեղեկություններից պարզվում էր, որ Ռուսաստանը՝ այս ձևով Օսմանյան կառավարության հետ ունեցած պայմանագրությունը խախտելու դեպքում, նպատակ ունի Հերակլ և Սալոմոն խանների աոաջնորդությամբ այդ կողմերում հարձակվել փաղիշահական սահմանների վրա։ Իսկ եթե Օսմանյան կառավարության հետ ունեցած հաշտության պայմանագրությունը իր ուժի մեջ մնա, նա [Ռուսաստանը] մտադիր է գրավել Գիլանի և Մազանդարանի շրջանները և հավանաբար, Աջեմի [Իրանի] անխուսափելի հեղաշրջման հետևանքով, վտանգավոր միտումներ ունի գրավելու և նվաճելու բովանդակ Իրանը։ Այս պատճառով ձեռնարկեցին Արևելյան սահմաններն ուժեղացնելու աշխատանքներին և Սեդարեթի կողմից հատուկ գրություններ ու հրամաններ ուղարկվեցին սահմանային վալիներին՝ ուշադիր և արթուն լինելու մասին։ Բացի այդ, Բաղդատի վալի Սուլեյման փաշային գրվեց և առաջարկվեց, որ գրության վտանգավորության մասին Իրանի խաներին տեղեկություն տա և նրանց արթուն պահի։ Իսլամական կրոնին պատկանող Դաղստանի մի շարք խաներին էլ հատուկ նամակներ ուղարկելով հայտնեցին, որ եթե Ռուսաստանը նրանց երկրների վրա հարձակվի, նրանք պետք է իրենց զինվորները հավաքեն և քաջաբար դիմադրություն ցույց տան։ Այդ մասին անմիջապես Ստամբուլ տեղեկություն հաղորդելու դեպքում, կրոնական նկատառումներով, անհրաժեշտ ժամադակությունը չպիտի խնայվի...

Նկատի առնելով, որ նախապես Հերակլ խանի Օսմանյան պետության հովանավորության տակ մտնելը տեղի է ունեցել Զուղղերի վալի Սուլեյման փաշայի միջոցով և ներկայումս Հերակլի՝ Ռուսաստանի հովանավորությունն ընդունելու հանգամանքը պետք եղածի պես չի ապացուցված, Հարցի կարևորության պատճառով, Նորին Վսեմության Սադրազամի կողմից հատուկ լրացում տրվեց Սուլեյման փաշային ուղղված գրությանը, որի պատճենը տրվում է ստորև։

Սադրազամը իր լրացուցիչ գրության մեջ կրկնում է Հերակլ խանի մասին վերևում հիշված կասկածները՝ նրա Ռուսաստանին հարելու և հետևաբար Օսմանյան կառավարության նկատմամբ ու-

նեցած հավատարմությունը խախտելու մասին ստացված տեղեկությունները։ Եվ այդ պատճառով առաջարկում է Սյուլեյման փաշային հանգամանորեն ստուգել այդ հարցը և արդյունքն անմիջապես հայտնել կառավարությանը։ Միաժամանակ առաջարկում էր՝ «ջանալ ամրապնդել վերջինիս հավատարմությունը Օսմանյան կառավարության նկատմամբ, միջոցներ ձեռք առնել նրան Օսմանյան կառավարության կողմը գրավելու համար, որը կամրապնդի Հերակլ խանի նախասեռ մեր նկատմամբ ունեցած կապը»։ Սակայն քիչ ժամանակ անց, էֆլաքի վոյեվոդան գրավոր կերպով հայտնեց մեր կառավարությանը, որ նա [Հերակլը] վերևում հիշվածի պես, հավատարմագիր է տվել։

(«Թարիխի Ջևդեթ», հատ. II, էջ 122—124)։

«ԹԱՐԻԽԻ ՋԵՎԴԵԹ», ՀԱՏ. III

Պատմագիր Ջևդեթ փաշան իր պատմության III հատորում շատ մեծ տեղ է տալիս Արևելքին—Եգիպտոս, Արաբիա և Կովկաս (Դաղստան, Վրաստան և Չերքեզիստան)։ Մասնավորապես Կովկասի մասին պատմագիրը ասում է՝

«Դաղստանն ու Գյուրջիստանը (Վրաստանը) Կովկասյան երկրների կարևոր մասն են կազմում։ Նրանց վերաբերյալ դեպքերի և նրանց [այդ երկրների] պատճառով Օսմանյան և Ռուսական պետությունների միջև տեղի ունեցող վեճերի իսկական պատճառը հասկանալու համար, անհրաժեշտ է ծանոթանալ՝ Կովկասի աշխարհագրական դիրքի և պատմության հետ»*։

Պատմագիրը նույն նպատակով, գրքի երրորդ մասը հատկացնում է «Կովկասյան լեռների մեծ մասը բռնող» Չերքեզիստանին։

Հետաքրքիր են պատմագրի տված տեղեկությունները (առանց աղբյուրների հիշատակության) Կովկասյան ժողովուրդների թվի մասին։ Այսպես Հյուսիսային Կովկասում՝ Չերքեզիստանում ապրող չերքեզների թիվը, ըստ պատմագրի, 100 հազար տնից (խանե) ավելի է։ Չերքեզիստանի և Դաղստանի միջև, Թերեք գետի ակունքներում ապրող Կաբարթայ, Նեղալ, Կարա-Բուլաք, Օս և Նողալու ցեղերի թիվը՝ 60.000 տուն է։ Դաղստանը բազմացեղ և բազմալեզու մի երկիր է, որը բաժանվում է 3 մասի՝ Հյուսիսային, Միջին և Հարավային Դաղստանի։ Հյուսիսային Դաղստանում (Կասպից ծովի ափերում, Կովկասյան լեռների լանջերում) ապրում են գլխավորապես թուրքեր և լեզգիներ՝ մոտավորապես 100 հազար տուն։ Միջին Դաղստանում ապրում են բազմաթիվ ցեղեր, նույնպես մոտ 100 հազար տուն։ Հարավային Դաղստանում (Ջարո, Փիլեքան, Իլիսու, Շեքի, Էրս [Արեշ], Շիրվան, Բաքու և Սալյան)— 70 հազար տուն։ Սալյան և Բաքու քաղաքներում ապրում են 10 հազար տուն շիաներ և 10 հազար տուն հայեր։

---

* «Թարիխի Ջևդեթ», հատ. III, էջ 141։

Վրաստանի սահմաններն են՝ արևելքից Դաղստանը, հարավ-արևմուտքից՝ Կանըք գետը[9], հարավից՝ Բորչալու կոշված իսլամական Ղրոնին պատկանողները, Կազախի աշիրեթները, Դյումրիի և Ախալխայի սանջակները, Աջարա լեռը, արևմուտքից՝ Սև ծովի եզերքը, հյուսիսից՝ Կովկասյան լեռների Չերբեզիատանին կից մասերը։ Վրաստանում ապրող ազգություններն են վրացիները, ռուսները, օսերը, ավանները և հայերը։

Վերջերս որոշ թվով ռուսներ և գերմանացիներ են այստեղ բնակեցված։ Ամբողջ ազգաբնակչության թիվը հասնում է 100 հազար տան։

Վրաստանի և Դաղստանի հարավային կողմը Հայաստանն է, որը բաժանվում է երկու մասի, մեկը՝ Էրզրումի և Վանի շրջանները, որ Օսմանյան պետությանն են պատկանում, երկրորդը՝ Գենջեի, Ղարաբաղի և Երևանի շրջանները մտնում են Իրանյան երկրի մեջ. սակայն Աջեմում [Իրանում] տեղի ունեցած հեղափոխությունների պատճառով ամեն մեկ շրջանը մնացել է մի անկախ խանի ձեռքում։ Ինչպես I հատորում հիշվեց, նրանք 1190 թ. (1776) ստիպված եղան Օսմանյան կառավարությանը հարկ։

Վրաստանն էլ երկու մասի է բաժանվում, մի մասը՝ Աչըք-Բաշի, Մենգրելի, Գուրելի (Գուրիա) դաշիանությունները*, այսինքն՝ բեյությունները, որոնք ձգված են Սև ծովի եզերքում։ Քութայիս, Բաղդադջըք և Օզուրգեթ քաղաքները այս մասի մեջ են մտնում։ Այս մասը վաղուց ի վեր կցված է Օսմանյան պետությանը, իսկ մյուս մասը՝ բուն Վրաստանը Թիֆլիսի էյալեթն է, որի մայրաքաղաքը Թիֆլիս քաղաքն է։ Այս մասը երկար ժամանակ կցված է եղել Իրանյան երկրին, սակայն ինչպես առաջին հատորում հիշվեց, Թիֆլիսի Հերակլ խանը 1190 թ. ընդունել էր Օսմանյան կառավարության հովանավորությունն ու հպատակությունը։ Ռուսները, տեղավորվելով Կաբարթայի կողմերը, սկսեցին առաջանալ դեպի Վրաստան և հետո այդ կողմերում խռովություններ սերմանել։ Ինչպես հիշվեց II հատորում, Հերակլը խաբվեց Ռուսաստանի դավերով ու խորամանկություններով և իր փրկության ու ապահովության միջոց հանդիսացող Օսմանյան բարձր կառավարության հովանավորությունը թողնելով, 1197 թ. (1782) մտավ Ռուսաստանի հովանավորության տակ։

Կովկասի ժողովուրդների մեծ մասը իսլամներ են։ Նրանք հյուսիսից և հարավից ենթարկվել են աջեմների և ռուսների հարձակման, սակայն ընդհանրապես արժանացել են Օսմանյան պետության բարձր հովանավորությանը և ճանաչելով իսլամական խալիֆայությունը, հակամետ են եղել Նորին Վսեմություն Սուլթանական կառավարությանը։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. II, էջ 144—145)։

Դաղստանի և Վրաստանի դեպքերից

Այս գլխում պատմագիր Ջեվդեթ-փաշան այդ երկու երկրների մասին տալիս է համառոտ պատմական տեղեկություններ և հետո ծանրանում այն դեպքերի վրա, որոնք անմիջական կապ ունեն այդ շրջանի ռուս-օսմանյան հարաբերությունների հետ։

---

* Թիֆլիսի իշխողը կոչվում էր խան, Հյուսիսային Դաղստանում պրակնվող Բոյնաք երկրի իշխողը՝ շամխալ, իսկ Աչըք-Բաշի, Գուրելի և Մենգրելի իշխողներին դադիան անունն էին տալիս։

Նորին Վեհափառություն Օմարի խալիֆայության 22-րդ տարում, արաբները նվաճեցին Իրանը, իսլամական սերդար Սերակեյին-Օմրուն գրավեց Ազարբայջանը [Ադրբեջան]. Բեքիր Բին-Աբդուլլահը և Աբդուրրահման-Բին-Ռեբիյեն նշանակվեցին Ալբանիան գրավելու։ Այդ ժամանակ Դաղստանի կողմերը Ալբանիա էր կոչվում։ Աբդուրրահմանը, Բեքիր-Բին-Օմրուին առաջապահ նշանակելով, ինքն էլ նրա հետևից շարժվեց դեպի Ալբանիա։

Երբ մոտեցան Շիրվանին, այդ ժամանակ Ֆարսի մելիքներից Շիրվանի իշխողը՝ Շեհրիյարը, եկավ և Կովկասյան լեռների հյուսիսային կողմում ապրող Ալան և Խազեր անունով թուրքական ցեղերի դեպի այս կողմ հարձակվելն արգելելու պայմանով՝ «աման», խնդրեց։ Այս մասին հայտնեցին Սերակեյին, որն այդ նպատակահարմար համարեց և զեկուցեց նորին Վեհափառություն Օմարին, որի կողմից հավանություն շնորհվեց և այդ պայմանով Շեհրիյարին «աման» տրվեց։

Սերակեյի մահից հետո, նրա տեղը նշանակվեց Աբդուրրահման-Բին-Ռաբիյեն, որը գրավեց Դաղստանի մի շարք վայրերը և ժողովրդին ընդունել տվեց իսլամական կրոնը։ Նա Վրաստանի իշխաններից ջիզիե առնելով, նրանց հետ խաղաղություն կնքեց։

Երբ Դաղստանում կատարված այս նոր նվաճումները հայտնի դարձան, Դերբենդի մի սուրբ [նվիրական] վայրի մասին որոշ ավանդություններ տարածվեցին. բացի այդ, Դերբենդի գրավումը նպաստեց հարավային երկրների ապահովության ու վստահության, որի հետևանքով բարեգործ մարդիկ սկսեցին մեծ խմբերով գնալ դեպի այդ կողմը։

«Ջիհաննումայում»[10] գրված է, որ էմիյեյի[11] դարում Մյուսելմե-Բին-Աբդուլ-Մելիքը ուխտի գնալով այդ երկիրը, ժողովրդին իսլամության կրոնը ընդունել տվեց. նա, գրավելով Դերբենդը, նրանից դեպի հյուսիս մի շարք վայրեր նվաճեց, մինչև անգամ Բեհրամ-Չուփինի ցեղից Մուհամմեդ-Բին-Բեզիդը Շիրվանի և Թեմուր-Կափուլի վալի դարձավ և իր իշխանությունը տարածվեց մի ամսվա [ճանապարհի] տարածության վրա։ Սակայն հիջրեթի 180 թ. (796) խազերի ցեղը Դերբենդը գրավելով՝ իսլամներին պարտության մատնեց։ Այդ ահռելի կռվում 140 հազարի չափ մուսուլմաններ «շեհիդ» (նահատակ) եղան և իսլամի [պատմության] մեջ չտեսնված այսպիսի մի դեպք տեղի ունեցավ։ Խազերը [խուզար] թուրքական մեծ ցեղերից մեկն է, որը երկար ժամանակ իշխել է իր անունով կոչված խազերի ծովի եզերքում։ Ծովը իր ափերին ապրող

ցեղերի անունով է կոչվել—Կասպից ծով («Բահրի-Կասպի»), Բուլղարական ծով («Բահրի-Բուլղար»), Դիլեմի ծով («Բահրի-Դիլեմ»)։ Ի վերջո, ինչպես վերը հիշվեց, խազերի ցեղի անունով կոչվեց՝ Խազերի ծով*։

Այս խազերի ցեղը մի մեծ ազգ է, որը երկու հարյուր տարուց ավելի պատերազմել է արաբների դեմ։ Սակայն ի վերջո արաբները հաղթել են։ Այսպես՝ հիջրեթի 200-րդ տարում Կուբեյշի[12] ցեղից և Նորին Վսեմություն Համզեի որդիներից՝ Շեյխ-էբու-Խահակը և Աբբաս-Բին-Աբդուլ-Մաթլեբի ցեղից Շեյխ-Մուհամմեդը իրենց որդիներից և ազգականներից երկու հազար մարդկանցով Հարեմեյնի-Շերիֆեյնից** մեկնելով և մի աո ժամանակ Շամի և Եգիպտոսի կողմերում թափառելով, ի վերջո հասան այդ ժամանակ պատերազմի վայր հանդիսացող Չերքեզների երկիրը, բազմաթիվ պատերազմներից հետո սպանեցին Չերքեզների բեյ Էմիր-Ազային, հափշտակեցին նրա կալվածները և ընտանիքին ու որդիներին գերի վերցրին։ Հետո Դաղստանի երկրամասից Կրյաթաքի էմիր Ազենֆեյին սպանելով, նրա ժողովրդին իսլամական կրոնը ընդունել տվին։ Այդ զորիները գրավեցին նաև Կոմուքների[13] երկիրը և այդպիսով Դաղստանի հյուսիսում և հարավում գտնվող խազեր ցեղի պյուղերի և քաղաքների մեծ մասը ավերեցին։ Նրանց [արաբական ցեղերի] հաջորդները գրավեցին նաև Ղրիմը։ Վերջապես Դաղստանից մինչև Ղրիմ տարածված երկրները կամ պատերազմով և կամ խաղաղությամբ նվաճվելով ընդունեցին իսլամական կրոնը։ Այսպիսով, Չերքեզական ցեղերից Կաբարթայ ու Բեսնի ցեղերը իսլամական կրոնին հարեցին։

Այս ձևով արաբների իշխանությունը շարունակվել է Կովկասյան երկրներում մինչև հիջրեթի 420 թ. (1029)։ Աբասյան խալիֆաների[14] դարում այդ շրջաններում իշխում էին Ադրբեջանի և Հայաստանի վալիները։

Հետո 454 թ. Սելջուկյան դինաստիայից, բազմաթիվ նվաճումներով իր իշխանությունն հզորացնող և ընդարձակող Մելիք Շահը, հետևելով իր պապերի և հայերի օրինակին, գրաված երկրներում, ապստամբությունից և խռովությունից ապահով լինելու համար, թե Անադոլուի երկրամասում և թե Վրաստանի սահմաննե-

---

* Խազերը երկու «զ»-ով արտասանելը սխալ է (Ծանոթ. հեղ.)։

** Հարեմեյնի-Շերիֆեյն՝ երկու նվիրական քաղաքներ՝ Մեքքե և Մեդինե։

րից սկսած մինչև Խազերի ծովեզերքը՝ բազմաթիվ թուրքական ցեղեր բնակեցրեց։

Այսպիսով, Անատոլուում, Շամում և Իրանի կողմերում 200 տարուց ավելի իշխանություն վարող Սելջուկյան դինաստիան (խանեդան) ոչնչացնող Մոնղոլների՝ այսինքն թաթարների երևան գալուց մոտավորապես հարյուր տարի առաջ, Մենուչեհր-Շահը հարավային Դաղստանում գտնվող Շիրվանի երկրի կենտրոնը հանդիսացող Շամախի քաղաքը մայրաքաղաքի վերածելով՝ անկախություն ձեռք բերեց և թաթար վեհապետների օրինակով «Մեծ խան» (արքայից արքա) տիտղոսով հռչակվեց։ Նրանից հետո Սելջուկյաններից մեկ հյուղը և «Շիրվանի-Շահեր» անունով հայտնի Շիրվանի սուլթանները երևան եկան, որոնք Հայաստանի որոշ մասերն էլ Հարավային Դաղստանին միացնելով տիրապետեցին։ Այդ ժամանակ Դաղստանի հյուսիս-արևելքն ու հարավը մտնում էին Շիրվանի մեջ, իսկ Դաղստանի Միջին և Հյուսիս-արևմտյան մասը կազմող երկրներում Ավար և Զեչեն ցեղերն էին բնակվում, որոնք դեռ Շիրվանի-Շահերին չէին հպատակվում, սակայն իսլամական միության հավատարիմ՝ պատերազմներում միշտ միասին էին լինում։

Այդ ժամանակ Վրաստանի վեհապետները, երբեմն Շիրվանի-Շահերին, երբեմն էլ Կոնիայի սուլթաններին էին հպատակություն ցույց տալիս։ Մոնղոլներն ու թաթարները հարավից և հյուսիսից թուրքերի վրա հարձակումներ կատարելու ժամանակ, և հետո՝ թուրքմենների Ադրբեջանում և Հայաստանում անկախություն ձեռք բերելու շրջանում, թե Շիրվանի-Շահերը և թե Վրաստանի վեհապետները, սրանց հետ երբեմն պատերազմում, երբեմն էլ Կոնիայի սուլթանների օրինակով, որոշ նվերներ տալով՝ հաշտ ու խաղաղ հպատակություն էին ցույց տալիս։ 800-ական թվականին Շիրվանի սուլթանը՝ Նեչիս-Իբրահիմ-Բին-Սուլթան-Մուհամմեդը, մի շարք պատերազմներում Թիմուրի հետ միասին է եղել։ Այսպիսով, Շիրվանի-Շահերի մոտ չորս հարյուր տարվա իշխանությունից հետո, Հիջրեթի 942 թ. (1535) Շահրեհ-Բին-Սուլթան-Ֆերեխրին-Նեչիս շահի անչափահաս տարիքում Շիրվանի շահության գահում գահակալելու ժամանակ, Ակ-Կոյունլիների շեյխ, Ադրբեջանում էրդեբիլ քաղաքում շիաների դավանանքը տա-

ցածելով, իր մյուրիդինների հետ, ցույց էր տալիս, թե ինքը 12 իմամների հետևորդն է։ Իրենց գլխին կարմիր շալից գործված 12 փեշտավոր գերվիշական թագ դնելով՝ «կըզըլբաշ» անունը վաստակած Սեֆեվի-Շեյխ-Հեյդարի որդիներից Շահ-Թահմասբ առաջինը, օգտվելով Շիրվանի դահը անչափահասի ձեռքում լինելու հանգամանքից, բանակը շարժեց դեպի այդ երկիրը և Դաղստանի ժողովրդի դեմ բավական երկար ժամանակ կռվելուց հետո, ի վերջո հաղթեց, Շահրեխին և նրա աղնվականներին սպանեց, մեծ քանակությամբ դանձեր ու հարստություն ձեռք բերեց։ Այսպիսով Շիրվանական սուլթանությունը կործանվեց։

Թեև Շիրվանի շահերի ցեղից որոշ անձնավորություններ Միջին և Հյուսիսային Դաղստանում անկախորեն իշխող Կըյթաքի, Ասլարի և Կումուքի խաներից օգնություն ստանալով, մի առ ժամանակ պատերազմել են, սակայն հաջողություն չեն ունեցել և Հարավային Դաղստանը մոտ 41 տարի կըզըլբաշների իշխանությանն է ենթարկվել։

Թաթարական հարձակումների ժամանակ Հյուսիսային Դաղստանն էլ ավերվել է, սակայն նրա ժողովուրդները վերջ ի վերջո իրենց անկախությունը վերականգնել են։ Երբ Ջինգիզ-խանը գրավեց Կըփչաքի-Դաշտն[15] ու Մոսկովի երկիրը, ավելի ուշ Իրանյան երկիրը ամբողջապես, նկատի ունենալով, որ Կըփչաքի-Դաշտի և Մոսկովի կարգավորումը Թեմուր-Կափուլի գրավման և նվաճման հետ է կապված, նա [Ջինգիզ խանը] ձեռնարկեց նրա գրավմանը։ Թեև Թեմուր-Կափուլի բնակչությունը դիմադրություն ցույց տվեց և կռվեց, սակայն Ջինգիզ-խանը իր անդրանիկ որդուն՝ Ջուջային ատրների չափ անթիվ թաթարական զինվորներով այդտեղ ուղարկեց։ Ժողովրդին ընդհանուր կոտորածի ենթարկեց, նրանց տեղում բազմաթիվ թաթարներ բնակեցրեց և Ջուջային նրանց վրա խան նշանակեց։ Հարյուր տարի հետո, երբ Թիմուրը երեվան եկավ, սա գրավելով Թեմուր-Կափու բերդը, հանձնեց իրեն հավատարիմ և մոտիկ Թոկաթմեշ խանին։ Որոշ ժամանակ հետո Թոկաթմեշ խանը Թիմուրի դեմ ապստամբություն բարձրացրեց, Թիմուրը Թավրիզի և Շիրվանի կողմերում պատերազմներով էր զբաղված և մի քանի անգամ Թեմուր-Կափուլի վրա ուղարկված

---

* Մյուրիդ՝ բառացի նշանակում է աշակերտ։ Իսլամական շեյխերին հետևող և աստվածաբանական սկզբունքները ուսումնասիրող անձինք կոչվում էին «մյուրիդ»։

թաթարական զինվորները պարտության մատնվեցին։ Երբ Թիմուրը Թավրիզի և Շիրվանի դժվարությունները հարթեց, կռվելով Վրաստանի իշխողների դեմ, նրանց էլ պարտության ենթարկեց, եկավ և Թոկաթմեշին բռնեց, գահազուրկ արեց և նրա փոխարեն նշանակեց իր վստահած խաներից մեկին, իսկ Թավրիզի ու Գիլանի և մի քանի այլ Իրանյան երկրների իշխանությունը տվեց իր որդուն՝ Միրզա-Միրանշահին և Թեմուր-Կափույի շրջանն էլ նրան միացրեց։

Միրանշահի հաջորդները մի որոշ ժամանակ այդ կողմերում իշխեցին. հետո, ինչպես վերևը հիշատակվեց, Ակ-Կոյունլինները երևան եկան և Դաղստանի սահմաններում աշխարհակալական քայլեր կատարեցին, որով Թիմուրի որդիների իշխանությունը այդ կողմերում խորտակվեց և Հյուսիսային Դաղստանի ժողովուրդները անկախության հրացան։ Սակայն սրանք Ջինգիզի դինաստիայից իրենց համար մի խան նշանակեցին, որը կոչվեց Շամխալ։ Սուլթան-Մուրադ III-ի ժամանակ, երբ Աջեմի դեմ պատերազմ հայտարարվեց, Սադրազամ Մուստաֆա փաշան կայսերական բանակով շարժվեց Իրանի վրա և իր տրամադրության տակ գտնվող Օղ-Դեմիր փաշային առանձին բանակով ուղարկեց Դաղստանի կողմերը։ Օսման փաշան գնաց, գրավեց Շամախի և Բաքվի շրջանները։ Շիրվանշահերի դինաստիայից Սուլթան-Բյուրհանը նշանակվել էր Շիրվանի շահ, որը սակայն անկախություն և ազդեցություն չունենալով՝ հեռվել էր Օսմանյան կառավարությանը և հպատակվել նրան։ Օսման փաշան հյուսիսային կողմերումն էլ ազդեցություն ձեռք բերեց և ամուսնանալով Շամխալի աղջկա հետ, Դերբենդը նորից Շամխալին թողեց։ Լեզգիները Օսման փաշայի այդ շրջաններում ունեցած ազդեցությունը չէին տանում, այդ պատճառով էլ երբեմն պատերազմներ էին տեղի ունենում։ Վերջապես Օսման փաշայի և Շամխալի միջև խաղաղության պայմանագիր կնքվեց հետևյալ պայմաններով. խուբբեն* պիտի կարդացվի Ալ-Օսմանի անունով, Աջեմի դեմ պատերազմելիս Դրբենդի խանի կողմից ուղարկված 30 հազար թաթարական զինվորներին թույլ պիտի տրվի իրենց երկրից անցնել և Օսման փաշային միանալ։ Օսմանյան կառավարության կողմից դենքը և պաշար

---

* Ուրբաթ և բայրամի օրերին հատուկ ընթերցողների (խաթիբ) կողմից կարդացված իսլամական կրոնի որոշ հոդվածները և այնքանները, ինչպես նաև խալիֆայի անվան և ազդքի հիշատակումը կոչվում է խուբբե կարդալ։ Ալ-Օսմանի անունով խուբբե կարդալ—նշանակում է ընդունել նրա կրոնական և քաղաքական իշխանությունը։

տալու պայմանով՝ նրանք պետք է օսմանյան զինվորներին օգնեն, նրանց ընկերանան և առաջնորդեն. բան իրենց վաղեմի սովորության, նրանց ընտրած Շամխալներին ոչ ոք չպիտի միջամտի, իսկ եթե փադիշահը ցանկանա, նրան (Շամխալին) թուղ, դրոշակ, թուր և կաֆտան պիտի ուղարկվի. Օսմանյան պետության երկրում երթևեկող վաճառականներից մաքս, բաջ և այլ տուրքեր չպիտի առնվեն: Երկու կողմերը վերոհիշյալ պայմանները հարգելով, Աբդ-Ուլ-Կիրայ խանը 30 հազար թաթարական զինվորներով Դաղստանից անցել և դաղստանցիների ընկերակցությամբ Օսման փաշայի մոտ էր եկել: Հետո, վերոհիշյալ Սուլթան-Բյուրհանը մեռավ և նրա տեղը անցավ իր որդին՝ էրու-Բևքիրը: Այդ ժամանակ Անապոլուում երեվան էին եկել Ջելալինները*, Օսմանյան կառավարությունը զբաղված էր այդ խռովությունը ճնշելով: Իրանի շահը՝ Շահ-Աբբասը, օգտվելով առիթից, դաղստանցիներին խաբել և մոլորեցրել էր, այդ պատճառով էլ օսմանյան զինվորները ստիպված էին այդ կողմերից հետ քաշվել: Դրանից հետո Շահ-Աբբասը Հյուսիսային Դաղստանի ժողովրդին իր կողմը գրավելու համար, ամեն տարի նրանց խաներին և բեյերին նվերներ և խալաթներ էր ուղարկում: Այսպիսով, Աջեմները գրավելով Դաղստանը, այն իրենց երկրի մի մասը համարեցին: Իսկ դաղստանցիները նրանց այդ նվերների վրա նայում էին իբրև տուրքի**, իբրև մի տեսակ տուրքի. և երբ [այդ նվերները] չէին ուղարկվում, նրանք կողոպտում էին Իրանյան երկրները: Երբ Աֆղաննների երևան գալով Աջեմների դրությունը վատացավ, դաղստանցիները Շիրվանի և Երևանի էյալեթների վրա հարձակվեցին, ասելով՝ «Այս տարի մենք մեր տուրքն չստացանք». բացի այդ նրանք կողոպտել և թալանել էին մի շարք ռուս վաճառականների ապրանքները: Աջեմի խռովությունների ժամանակ, ռուսները առաջացան դեպի Թեմուր-Կափուի կողմերը և ի վերջո Թահմասբ Շահի հետ կնքված հաշտության պայմանագրությամբ, Դերբենդ բերդը, Բաքուն, Գիլանի, Մազանդարանի և Էսթերաբադի էյալեթները ռուսների ձեռքն անցան: Ռուսների դեպի այդ կողմերն առաջանալը Օսմանյան կառավարության համար

---

* Ջելալինների մասին տես «Թարիխի Նայիմայից» մեր թարգմանած նյութերը:

** Սուլթանի կողմից ամեն տարի խալամական տուրք քաղաքներին (Մեքքե և Մեդինե) ուղարկված դրամական և այլ նվերները - տուրքն էին կոչվում: Առհասարակ դրամական նվերի իմաստով է գործածվում:

վտանգավոր լինելով՝ ինչպես նախապես հիշված է այս գրքում, Սուլթան Ահմեդի իշխանության ժամանակ, Օսմանյան կառավարության կողմից ձեռնարկվեց Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս բերդի գրավմանը: Միաժամանակ Շիրվանի երկրի մայրաքաղաք Շամախու վրա Օսմանյան կառավարության կողմից իշխող նշանակվեց և այդ շրջանի ժողովրդին որոշ չափով օժանդակություն տրվեց: Սև ծովի եզերքի ուսումնասիրության համար հատուկ երկրաչափներ և պաշտոնյաներ ուղարկվեցին և ծովեզերքի որոշ կետերում բերդեր կառուցելու անհրաժեշտություն զգացվեց, մասնավորապես կառուցվեց Ֆաշի բերդը[16] և այնտեղից ճանապարհ բացվեց մինչև Թիֆլիս, այնպես որ ծովով Ֆաշ ուղարկված ռազմամթերքը Թիֆլիս և Դաղստան փոխադրելու ճանապարհը ապահովվեց: Սակայն հետո Նադիր-Շահը թե՛ Օսմանյան կառավարության և թե՛ Ռուսաստանի կողմից գրավված վայրերը ետ խլեց: Կովկասյան ժողովուրդներից ամենից ավելի խիզախն ու քաջարին Դաղստանի ժողովուրդն է և Նադիր-Շահը Դաղստանում չկարողացավ իր ուզածի պես իշխանություն և ազդեցություն ձեռք բերել. վերջում նա ծանր պարտություն կրեց:

Նադիր-Շահից հետո, երբ Աջեմի խռովությունները ավելի սաստկացան, Դաղստանի ժողովուրդները, բնականաբար, Օսմանյան կառավարությանն ապավինեցին:

Սուլթան-Մահմուդ I օրով* ծրագրվեց Դաղստանի գրավումը: Սակայն այդ ծրագիրը մինչև Սուլթան-Համիդի իշխանության շրջանը, շարունակվեց մնալ միայն մտքերում: Ուշ կամ շուտ, Կովկասյան ցեղերին ներգրավելու և նրանց Ռուսաստանի դեմ որպես ուժ օգտագործելու հարցը թեև քննության առնվեց, սակայն ժամանակն ու պայմանները դրան չնպաստեցին: Բացի այդ, այն ժամանակի վեզիրները (պետության գեկավարները) զուրկ էին այդպիսի մի մեծ նպատակի իրականացման համար անհրաժեշտ դիտելիքներից և ակտիվությունից:

..Օսմանյան պետության վեզիրների՝ երկար ժամանակ անփութության քնո մեջ ընկղմված և քաղաքական-վարչական դիտելիքներից հետու լինելու հետևանքով ռուսները այդ կողմերում բայլ առ քայլ առաջացան և Կաբարթայների երկիրը գրավելուց հետո, սկսեցին ձեռք երկարել դեպի Անապոլու և առհասարակ Օսմանյան պետության սահմանները և սկսեցին խռովություններ առա-

---

* Սուլթան Մահմուդ, 1143—1168 թթ. (1738—1754):

ջացնել։ Այս պատճառով երկու պետությունների միջև վեճերը շարունակվում էին և վերջ ի վերջո ուսանները՝ Դրիմը և նրա շրջակայքը հափշտակելուց հետո, Թիֆլիսի խանին էլ խաբեցին և իրենց հովանավորության տակ առնելով, փորձեցին նրա միջոցով, մի կողմից Իրանի խաներին, իսկ մյուս կողմից Աչըք-Բաշի խան Սոլոմոնին իրենց կողմը գրավել։ Եվ որովհետև Օսմանյան կառավարությունը Անապոլուի սահմանների ապահովությունը Կովկասի լեռնական ժողովուրդներին Ռուսաստանի դեմ որպես ուժ օգտագործելու մեջ էր տեսնում, աշխատեց մի կողմից չերքեզներին և մյուս կողմից Դաղստանի ժողովուրդներին իր կողմը գրավել։ Եվ առհասարակ Չերքեզիստանի կողմերում բավականին հաջող գործեր կատարվեցին։ Սակայն այդ ժամանակի վեքիլների [մինիստրների] անմիաբանության պատճառով, գործի կարևորության չափ անհրաժեշտ միջոցներ չգործադրվեցին. այնպես որ, ինչպես հիշվեց երկրորդ հատորում, այս նախաձեռնությունն էլ թերի մնաց և մյուս կողմից բանակի և պաշտոնյաների ոչ մեղմ վերաբերմունքը Աչըք-Բաշիի՝ Ռուսաստանի կողմը հարելուն պատճառ դարձավ։

Թեև Աչըք-Բաշի իշխանը՝ Սալոմոնը [Սոլոմոն], քաջարի և վեհանձն անձնավորություն լինելով, մի անգամից Ռուսաստանին չհպատակվեց, սակայն Ռուսաստանի կայսրուհի Եկատերինան և գեներալ Պատյոմկինը, նրան հաճախակի նվերներ ուղարկելով, մասնավորապես ոսկյա գոտի, թագ և նման խիստ թանկագին նվերներ ուղարկելով վերջ ի վերջո նրա հաստատակամությունը թուլացրին։ Որոշ ժամանակից հետո, երբ Սոլոմոնը մեռավ, նրա որդին՝ Դավիթ-խանը, իր հոր կյանքի վերջերին բնորոշ մոլորյալ ճամփով գնաց և Ռուսաստանի հովանավորության հակամետ եղավ։ Այս մասին հիշատակում են նաև որոշ եվրոպական պատմագիրներ։ Հերակլ խանի 1197 թ. (1782) Ռուսաստանին հպատակություն ցույց տալուց մի տարի հետո, արդարև, Սոլոմոնն ևս որոշ չափով Ռուսաստանին հակամետություն ցույց տվեց, իսկ նրա որդին լրիվ Ռուսաստանին հարեց։

Սակայն, ըստ մեր պատմագիրների, նրանց դեպի Ռուսաստանն ունեցած հակամետության մեջ, Օսմանյան կառավարության հետ նրանց ունեցած հարաբերությունն էլ որոշ դեր է կատարել, ինչպես այդ պարզ կերպով երևում է հետևյալ դեպքերից։

Այդ ժամանակ Չեչեններում Մանսուր անունով մի անձնավորություն ապստամբություն էր բարձրացրել և այդ ցեղի ժողովուրդները մեծ հուզմունքով Ռուսաստանի երկրների և Վրաստանի վրա

էին հարձակվելու։ Այն պահին, երբ ուսանները այդ բանից դժգոհ, զբաղված էին կռիվներով, լաղերի և վրացիների միջև նույնպես կռիվներ էին տեղի ունենում։ Ինչպես գրում է Վասըֆը* 1198 թվականի դեպքերի ընթացքում, Զըլդրի էյալեթում ապրող աջարացիները, որոնք վաղուց հայտնի էին իրրև քաջարի, համարձակ և հաստատակամ մի ժողովուրդ, անդադար արշավանքներ և հարձակումներ էին կատարում իրենց սահմանակից Վրաստանի վրա։ Վերոհիշյալ Սոլոմոնը բանից գանգատ ներկայացնելով Զըլդրի վալիին, խնդրել էր այդ պատուհասը միջոցից վերացնել։ Սակայն որովհետև վերոհիշյալ աջարացիները ապրում էին անառիկ վայրերում, նրանց կարգ ու կանոնի ենթարկելը դժվարին գործ էր. բացի այդ, նրանց պատճառած վնասները Իսլամական երկրներին չէին վերաբերում։ Նկատի առնելով, որ դերինների առևտրից էլ օգուտ է սացվում, այդ խնդիրը որոշ չափով անուշադրության մատնվեց։ Միայն թե նկատի առնելով ժամանակն ու պայմանները, ինչպես նաև Սոլոմոնին իրենց կողմը ներդրավելու անհրաժեշտությունը, Զըլդրի վալին միայն արտաքուստ էր ցույց տալիս, թե աջարացիների հարձակումների առաջն առնում է։ Սոլոմոնը աջարացիների այդ ավերիչ հարձակումներից արտարեկ և ձանձրացած, վրեժխնդրության համար, Օսմանյան կառավարության դիմելու որոշումն ցույց տվեց։ Երբ սահմանապահները տեղեկացան այդ մասին, նրանք հայտնեցին Ծաշի [Բերդի] հրամանատար Վեզիր-էրեյլիլի-Խալիլ փաշային և Գունիայի նահանգի հրամանատար՝ և այդ շրջանի բոլոր դեպքերին ու պայմաններին լավ իրազեկ միրմիրաններից՝ Արապա-Մուհամմեդ փաշային։ Սրանք խոստացան օգնություն ցույց տալ։ Նրանք սկսեցին այն ձևով բանակցություն տանել, որ հետևից նկատելի լինի։ Բացի այդ, նրանք պայմանավորված էին, որ Ծաշից թնդանոթներ պիտի արձակվեին։ Աջարայի ժողովուրդը իր բնածին քաջարիության բերումով, պարզ էր, որ թշնամուց աչք չպետք է հեռացներ։ Սոլոմոնը տեղյակ լինելով, որ նրանք [աջարացիները] արիություն և զգույշ են, համարձակություն չունեցավ դիշերային հարձակում գործելու։ Երբ իմացվեց, որ նա մտադիր է հարձակվել Գունիային մոտ գտնվող

---

* Վասըֆ, Բուրք պատմագիր (տարեգիր), գրել է 1166—1188 թթ. և 1207—1209 թթ. դեպքերի վերաբերյալ պատմություն։ Պատմագիր Ջևդեթ փաշան շարունակում է Վասըֆի «պատմությունը»։ Տե՛ս «Թարիխ Վասըֆ» գլուխը։

Ջաիո* գյուղաքաղաքի վրա, այդ վայրի բնակիչները իրենց ընտանիքները, երեխաները և ունեցվածքը փախցրին դեպի լեռները։ Սոլոմոնը 1198 թ.** Հնհանիցելու ամսվի 17-ին, բավականաչափ զինվորներով հարձակվեց հիշյալ գյուղաքաղաքի վրա, ինչ որ գտավ՝ կողոպտեց և կրակի տվեց։

Ինչպես նախապես պայմանավորված էին, Ցաշի բերդից թնդանոթներ արձակելով, դրությունը շրջապատին ծանուցվեց։ Այդ շրջանում գտնվող մյուսահիոնները, մասնավորապես Արտպա-Մուհամմեդ փաշան մի քանի հարյուր բաջամարտիկներով վրա հասավ և մի նեղ տեղում նրանց անցնելու ճանապարհը փակելով, վրացի զինվորներին պարտության մատնեց։ Սոլոմոնի քեթխուդան էլ սպանվեց։ Այս սոսկալի պարտության հետևանքով Սոլոմոնը շատ ապրվեց և վշտից ու հուսահատությունից մահացավ։

Այս մասին Ջրլդրի վալին տեղեկացրեց Ստամբուլ, իսկ Ցաշի հրամանատարը պատերազմական դեպքերի մասին մանրամասն տեղեկություն հաղորդեց։ Դրանից հետո իրեն հյուր Ստամբուլում գտնվող Լիվանի որդին՝ Քեչխուդեվը, նշանակվեց Աչբ-Բաշի իշխան և ուղարկվեց Էրզրումի վալի՝ Ջանիկլի-Հաջի-Ալի փաշայի սրամադրության տակ, հանձնարարելով նրան, որ իր գահի վրա նստեցնի Ալի փաշան իր քեթխուդայի 8 հազար զինվորներով Քեչխուդեվին ընկերակցեց և ուղարկեց Աչբ-Բաշի երկիրը։

Այդ ժամանակ Թիֆլիսին վերաբերող կարևորության արժանի մի քանի դեպքեր էին տեղի ունեցել։ Այսպես, Թիֆլիսի իշխանը Հերակլ խանը, բավական ժամանակից ի վեր մտադրված էր նվաճումներ կատարել Իրանում։ Սահմաններում գտնվող հրամանատարներն ու սպաները հայտնել և տեղեկացրել էին Ստամբուլ, որ նա [Հերակլը] այդ նպատակով ուզում է նախապես գրավել Ցաշն ու Բաթումը։ Իսկ Ջրլդրի վալին, Էրզրումի շրջանում սահմանների գործերին հսկելու պաշտոնով այդտեղ գտնվող Էլհաջ-Մուստաֆա Էֆենդիին ուղարկած գրության մեջ հայտնում էր, որ Հերակլ խանը իր նպատակը իրագործելու համար, որոշ խոստումներով կաշառել է իր կողմը շահել մի պետական անձնավորություն։ Այս պատճառով այդ կողմերի ամրացման և մասնավորապես Ցաշի և Բաթումի շրջաններում որոշ քանակությամբ զինվորական ուժեր ու-

---

* Ջաիո — Ջակվա։

** 1198 թ. հիջրի—1783 թ.։

զարկելու մասին Ջանիկլի-Հաջի-փաշային հրամաններ և ցուցմունքներ տրվեցին...

Հաջի-Ալի փաշան պատասխանում է, որ առանց փողի և մթերքի զինվորներ ուղարկելու հնարավորություն չկա։ Հետո նպատակահարմար է համարվում այդ գործը հանձնարարել իր քաջությամբ և ազդեցությամբ հայտնի Գունիացի Մուստաֆա-բեյին, որին 1198 թ. շնորհվում է միրիմիրանության աստիճան և 15 հազար ղուրուշ փող է տրվում։

Հերակլ խանի և Ռուսաստանի համաձայնության և միության հիման վրա, Թիֆլիսում գտնվող ռուսական գեներալը Իրանի և Դաղստանի խաներին նամակներ էր ուղարկել և հայտնել, որ Ռուսաստանը Օսմանյան կառավարության հետ նորից խաղաղության պաշնագիր է կնքել. Հերակլ խանն էլ իր պայմանագրությունը նոքոգել է, իր որդիներին իբրև պատանդ Ռուսաստան է ուղարկել և իր նպատակը ապահովել։ Դուք էլ Հերակլ խանին հպատակվելով, ձեր որդիներից և ազգականներից մի քանի անձինք նրա մոտ պետք է ուղարկեք։ Այս սարսափեցնող տեղեկությունը վերոհիշյալ խաներին վիշտ և դժվանք պատճառեց։ Որովհետև Իրանում անկախ մի շահ գոյություն չուներ, ուստի Իրանի խանները իրենց տիրապետության տակ գտնված երկրներում առանձին-առանձին իշխում էին. մինչդեռ թշնամուն դիմադրելու համար, անհրաժեշտ էր մի ընդհանուր իշխանություն։ Սուսկ իսլամական միության բերումով, նրանք՝ հենվելով միայն Օսմանյան պետության վրա, վերոհիշյալ գեներալի գրության մերժողական պատասխան տվին և դիմում ներկայացնելով Օսմանյան կառավարությանը հայտնեցին, որ Օսմանյան պետության կողմից իրենց օգնություն շնորհվելու դեպքում, նրանք պատրաստ են մինչև վերջին մարդը թշնամուն դիմադրություն ցույց տալ և պահել իրենց անձը։ Այս խնդրագիրը հատուկ անձնավորության միջոցով ուղարկեցին Զըլդրի վալիին, որը հիշյալին ուղարկեց Դերսնադեթ։

Ռուսները ինչպես որ Շահին—Կիրային խռովության գործիք դարձնելով, Թաթարստանի վրա հարձակվեցին, այնպես էլ Հերակլ խանին խաբելով, ուզում էին գրավել Դաղստանն ու Վրաստանը։ Այս պատճառով Դաղստանում գտնվող բազմաթիվ իշխաններին օգնություն ցույց տալը Շարյաթի օրենքով կրոնական պարտավորություն էր։ Բացի այդ, Ռուսաստանի դեպի այդ կողմերը ձեռք երկարելը, Օսմանյան կառավարության համար վնասակար էր և թերևս փադիշահական երկրի Արևելյան սահմանները վտանգի

ենթարկելու բնույթն ուներ։ Այս պատճառով անհրաժեշտ էր այդ մասին ամեն տեսակ ջանք գործ դնել։ Սահմանների վրա գտնվող վալիներին և սահմանապահ սպաներին տեղեկություն հաղորդվեց և հրամայվեց, որ աչալուրջ լինեն ու հսկեն։ Իրանի և Դաղստանի խաներին էլ հայտնվեց, որ թշնամու արտաքուստ քաղցր, սակայն իրականում թույն սերմանող խոսքերին չպետք է հավատք ընծայել, պետք է օրինակ առնել թաթար և լեհ ժողովուրդների նկատմամբ նրանց [ռուսների] վերաբերմունքից, պետք է զգույշ լինել և չխաբվել նրանց խարդախություններից և որոգայթներից, կարիք եղած դեպքում կատարյալ միաբանությամբ և լրիվ ջանքերով հաստատակամությամբ դիմադրություն ցույց տալ. չպետք է թույլ տալ, որ թշնամին մոտենա Իրանին և Դաղստանին։ Օսմանյան կառավարությունը ամեն դեպքում և ամեն կերպ պիտի օգնի և օժանդակի իր կրոնակիցներին։ Այս մասին կայսերական հրամաններ տրվեցին և նրանց [խաներին] սիրաշահելու և գրավելու համար, Սուլթան Ահմեդի և Սուլթան Մահմուդի ժամանակ ուղարկված նվերների նման, ամեն մեկին հարմար նվերներ ուղարկվեցին։ Օսմանյան կառավարության այս նախաձեռնությունը, պարզ էր, որ արդելք պիտի լիներ Ռուսաստանի խաբեբայական հնարքներին։ Այդ ժամանակ Դաղստանի ժողովուրդը հարձակումներ էր գործում Թիֆլիսի շրջանի վրա։ Ռուսները, օգտվելով այդ պատեհությունից, սկսեցին գանգատներ ներկայացնել։ Այսպես, ռուսական դեսպանը տեսակցություն ունենալով Ռեիս-էֆենդիի հետ, խոսեց Վրաստանի վրա կատարված հարձակման մասին։ Ռեիս-էֆենդին իր պատասխանում ասաց՝ «Վրացի և Մեգրել ցեղերը Օսմանյան պետության ռայաներն են, և ամեն մի պետություն իր ռայաների գործերը վարելու մեջ անկախ է, ուստի Ռուսաստանի՝ նրանց տիրանալու ձգտումը, ուրիշների գործերին միջամտելու բնույթ ունի»։

Նկատի առնելով, որ անհրաժեշտ է այդ հարցը մի անգամ էլ քննության առնել Պետական խորհրդում, երեք-չորս օրից հետո, այսինքն՝ 1190 թ. Սեֆեր ամսի 10-ին Մեջլիսում եգիպտոսի հարցին առընթեր, այդ հարցն էլ քննության դրվեց։ Մեջլիսում ներկաներին հարց տրվեց՝ ըստ պայմանագրի Ռուսաստանը իրավունք չունի միջամտելու Վրաստանի գործերին՝ սակայն նա որոշ պատրվակներով առարկություններ է անում. ի՞նչ պատասխան պետք է տալ ռուսական դեսպանին՝ դաղստանցիների Թիֆլիսի վրա կատարած հարձակման մասին ի՞նչ պետք է ասել Աչըք-Բաշիի հարցի

մասին։ Այս հարցերի առթիվ, ռուսական դեսպանին, պատասխանելու համար հետևյալ որոշումները տրվեցին։ Թիֆլիսի խանի Ռուսաստանին հպատակություն ցույց տալը վճռականապես չի ընդունվում, վրացի ցեղը Օսմանյան պետության ռայաներից է, Թիֆլիսի խանը չպետք է հարձակվի իսլամական երկրների և մանավորապես մեր պաշտպանակից [կրոնակից] Դաղստանի ժողովրդի վրա։ Օսմանյան կառավարությունը հնուց ի վեր իր ընդունած և գործադրած վերաբերմունքը չի փոխելու։ Մեգրել ցեղը Օսմանյան պետության այլ ռայաների կարգին է պատկանում. նրանց [մեգրելների] ապահովության համար, սրանից առաջ նախատեսնված Քեյխոսրեվի պահակալության հակառակություն ցուցադրելու դեպքում, չպետք է պնդել, և եթե նրանք Դավիթի նշանակումն են պահանջում, ըստ հնագույն սովորության, նա պետք է պահակալի, այդ դեպքում նրան Օսմանյան կառավարության կողմից մենշուր* կտրվի, իսկ եթե ժողովուրդը նրան էլ չի ուզում, այդ դեպքում մի ուրիշի մասին որոշում կտրվի և կհայտնվի այդ հարցի լուծման համար նշանակված մարդկանց։

Սակայն Քեյխոսրեվի հարցը հնարավոր չեղավ լուծել։ Դավիթ խանը իշխանությունը հափշտակեց։ Եվ որովհետև ռուսները այդ շրջանի գործերին միջամտելու համար փնտրում էին ամենափոքր պատրվակներն անգամ, օգտվեցին այդ դեպքից և Դավիթ խանին իրենց կողմը գրավեցին։

Ինչպես որ հիշված է 1193 թ. դեպքերում, Իրանում Զենդական իշխանությունը թուլացել էր. ամեն կողմից խաները անկախություն էին ձգտում։ Օրեցօր ուժեղացող Աղա-Մուհամմեդ-խանի[18] իշխանությունը դեռևս պետք եղածի չափ ամրապնդված չէր։ Իրանյան երկիրը մոտ էր հեղաշրջման։ Այդ ժամանակ Իրանի Զենդ վեքիլը՝ Ալի-Մուրադ խանը, խորտակելով Իրանի տարբեր մասերում տիրող խանների ուժն ու իշխանությունը՝ հետամուտ էր անկախություն ձեռք բերելու։ Այդ նպատակով նա, Թիֆլիսի խանի միջոցով, Ռուսաստանից օգնություն էր խնդրել։ Քանի որ ռուսները պատրվակ էին փնտրում ձեռք երկարել Իրանին, որոշ պայմաններով այդ օգնությունը խոստացան։ Ալի-Մուրադ-խանի կողմից դեսպանության պաշտոնով Ռուսաստան ուղարկված Միրզա-Մուհամմեդը, բարձրաստիճան մի անձնավորության ուղեկցությամբ և թանկարժեք նվերներով ետ ուղարկվեց։ Սակայն ռուսա-

---

* Մենշուր — սահիճանի շնորհման մասին փաղիշահական հրովարտակ։

Իան դեսպանը դեռևս Շիրազ չհասած, Ալի-Մուրադ խանը մեռավ։ Երբ դեսպանը իմացավ, որ Իրանի իշխանության գլուխն է անցել Ջաֆեր խանը, առանց իր դեսպանության պաշտոնը կատարելու Թիֆլիս վերադարձավ։

Իրանի խաներից բավականին ուժեղ և Օսմանյան կառավարության հարող Խոյի-խան Ահմեդ-խանը սույն 1199 թ. իր դիվանի քարտուղարի միջոցով, Էրզրումի վալի Հաջի-Ալի փաշային ուղարկած նամակում հաղորդելով տեղի ունեցած դեպքերը, հայտնում էր, որ Իրանի հետ հաշտության պայմանագիր կնքելով ռուսների նպատակն է՝ իրենց սահմաններին մոտ որոշ վայրեր ձեռք բերել, հետո բանակ ուղարկելով դեպի Ադրբեջան, Իրանյան երկիրն ամբողջապես գրավել, ինչպես բռնությամբ ու խարդախությամբ արվել էր լեհացիների նկատմամբ, ապա Օսմանյան պետության վրա հարձակվելով՝ իրականացնել իրենց հետին նպատակը։ Դիվանի քարտուղարը բանավոր խնդրեց, որ ելնելով իսլամական միության անհրաժեշտությունից՝ Օսմանյան կառավարությունը օժանդակի և պաշտպանի իրանցիներին։ Իսկ եթե այդ պաշտպանությունը չտրվի, ասաց, Թշնամին կոչնչացնի անսահման թվով իսլամներ։ Ներկայումս Թիֆլիսում գտնվող բազմաթիվ մարդկանց, իբրև փոխարինություն, եթե Օսմանյան կառավարությունն էլ մեկերկու հազար մարդ, թնդանոթներ և որոշ քանակությամբ ռազմամթերք ուղարկի Ահմեդ-խանին, եթե վերջինիս ուրիշներից գերադասելու համար մի աստիճան տրվի և եթե խանը այս ձևով արժանանա Օսմանյան կառավարության շնորհին և պատիվներին՝ Իրանյան ժողովուրդը վստահություն ձեռք կբերի և Թշնամու երևան գալու ժամանակ, Ահմեդ-խանը քաջարար դիմադրություն ցույց կտա և կկռվի։

Այս բոլորը Ալի-փաշան հայտնեց և տեղեկացրեց Ստամբուլ։ Իրանի նկատմամբ Ռուսաստանի վատ նպատակները հայտնի և պարզ էին։

Սրանից առաջ Իրանի խաներին հատուկ գրություններ և Ահմեդ խանին կայսերական նվերներ և պատիվներ էին ուղարկվել և օգնություն խոստացել։ Թեև այդ խոստման իրագործումը անհրաժեշտություն էր, սակայն նկատի առնելով, որ ժամանակից առաջ զինվորներ ուղարկելը և նրանց աստիճաններ տալը կարող էր տեղի տալ որոշ անպատեհությունների, առայժմ Ահմեդ-խանին հուսահատության չենթարկելու համար, միայն թնդանոթ և որոշ չափով ռազ-

մամբերք ուղարկվեց և ամեն պարագայի զգուշությամբ վարվելու մասին Ալի-փաշային փադիշահական հրաման տրվեց։

Այսպիսով, Իրանի, Դաղստանի խանների և Հերակլի միջև թշնամություն առաջացավ, որը պատճառ դարձավ Օսմանյան կառավարության և Ռուսաստանի միջև գոյություն ունեցող սառնության ուժեղացմանը։ Այսպես, Խալիլ-Համիդ-փաշայի սերդարության ժամանակ, Զըլդրի վալի Սյուլեյման փաշայի գրությունից պարզվում էր, որ Թիֆլիսի Հերակլ խանը նոր ճանապարհը նորոգելով և լայնացնելով, 3 հազար ռուսական զինվորներ էր բերել տվել։ Հերակլ խանի իսլամական քաղաքների վրա հարձակումը հավանական համարելով, Սյուլեյման փաշային հրաման և ֆերման տրվեց գիշեր-ցերեկ արթուն հսկել, կրոնասիրությամբ, հաստատակամությամբ և քաջարիությամբ հռչակված Դաղստանի ժողովուրդներին սիրաշահելու և գրավելու համար, այդ ժողովրդի պարագլուխներին երջանիկ Ասիթանեից ուղարկված փադիշահական նվերներն ու կայսերական շնորհները հանձնել, հիշյալ ժողովրդին պատերազմի և Ջիհադի կոչ անելու և հրավիրելու մասին տրված բարձր հրամանները նրանց հասցնել և հիշյալ ժողովրդի կողմից դեպի Զըլդր եկած ղազիներին և մյուջահիդներին նվերներով պարգևատրել։ Սյուլեյման փաշան այդ հրամանի համաձայն շարժվեց, որի շնորհիվ վերոհիշյալ ցեղերը, այդ պատիվներից և շնորհներից ուրախացած, սկսեցին խումբ-խումբ դեպի Զըլդր գալ։ Զնայած որ նրանց բնակավայր և հագուստ տրվեց, սակայն հիշյալ ցեղերը, առանց որոշված ժամանակին ապստելու, իրենց բնածին հակումների բերումով, սկսեցին թալանով և կողոպուտով զբաղվել։ Նրանց արգելք հանդիսանալը դժվար և վտանգավոր էր, իսկ թույլտվություն տալը խաղաղության պայմաններին հակառակ. ուստի Սյուլեյման փաշան տատանվում էր այդ երկու միջոցների ընտրության մեջ։ Ավելի ուշ, երբ այդ մասին գրեց Ստամբուլ, Սադրազամ Խալիլ-Համիդ փաշան արդեն հրաժարեցված էր, իսկ նոր Սադրազամը Ալի-փաշան՝ դեռևս գործերին անտեղյակ, պատասխանը հետաձգեց մինչև նա Ստամբուլ եկավ։ Այդ ժամանակ Բաթումի կողմից մի նամակ եկավ. Զըլդրից և Թիֆլիսից նորություններ ստանալու համար Կափուդանին Բաբի-Ալիի կանչեցին և հարցաքննեցին։ Նա հայտնեց, որ Ախասխայում հավաքված լեզգի ցեղից և այդ կողմերում գտնվող իսլամներից 5 հազարի չափ մարդիկ, քրիստոնյաների կարմիր ձվի օրերին (զատիկ), հարձակվելով Թիֆլիսի երկրի վրա, բավականաչափ ունեցվածք են կողոպտել։ Սա-

կայն վերադառնալու ժամանակ, Թշնամին, նրանց ճանապարհի վրա մեծաթիվ զինվորներ և ենդանոթներ դնելով, անակնկալ կերպով հարձակվել է իսլամական բանակի վրա. իսլամների մի մասը նահատակվել, մի մասն էլ գերի է ընկել, իսկ փոքրաթիվ քանակությամբ զինվորներ էլ այդտեղից հոսող գետն են թափվել և խեղդվել։ Կենդանի մնացածները կուվելով հասել են Ախասխա։ Այդ հաղորդումն ստուգվեց և հաստատվեց այլ աղբյուրներից ստացված տեղեկություններով, թեև Սյուլեյման փաշայից այդ մասին դեռևս տեղեկություն չէր ստացված։ Ջնայած առկա էր խնդրի ճիշտ կամ սխալ լինելու հավանականությունը, սակայն ակներև էր, որ Թիֆլիսի խանի և Ռուսաստանի միջև համաձայնություն և միություն էր կնքված։ Սյուլեյման փաշայից տեղեկություն պահանջվեց՝ այդ խնդրի մասին՝ իրականության իրազեկ լինելու և Թշնամուն պատասխան պատրաստելու համար։ Սյուլեյման փաշան պատասխան դրության մեջ՝ մինչ այդ իր ուղարկած մի այլ գրության պատասխանի ուշացումն արձանագրելուց հետո, վերևում հիշված դեպքի մասին հաղորդում էր հետևյալ տեղեկությունները. Ջլդրի սահմանամերձ գավառներում ապրող լեզգի զինվորներից հազար մարդ, էրզրումի և Կարսի շրջաններում գտնվող անօթևան մարդիկ, ինչպես նաև անանուն ու բնակավայրերն անհայտ որոշ թվով ձիավորներ իրար հետ միանալով, առանց արատնության, հարձակվել են Թիֆլիսի բերդի վրա՝ մեծ քանակությամբ գերիներ են վերցրել և կողոպտել։ Նախքան վերադառնալը թուլլերին, կողոպտված իրերն ու ապրանքները ուղարկել են, իսկ կուվի և պատերազմի ընդունակներն ավելի դանդաղ քայլերով շարժվել են նրանց հետևից։ Նրանց անցած ճանապարհի վրա, մի նեղ անցքում, ռուս և վրացի զինվորները թաքստոցից, անսպասելի կերպով, հարձակվել են կողոպտված ապրանքներն ու գերիները փոխադրող մարդկանց վրա։ Սկսվել է ուժեղ ճակատամարտ, սակայն Թշնամու բազմաթիվ լինելու պատճառով, իսլամական զինվորների մի մասը նահատակվել, մի մասը ջրում խեղդվել և մի մասն էլ գերի է ընկել։ Սակայն երբ Թշնամին գերի ընկածներին ուղարկել է կուվի դաշտին մոտ գտնվող, Սուրեն* կոչված վայրը, հետևից եկող իսլամական զորամասերը վրա են հասել և բոլորը մի անգամից իրենց սրերը մերկացնելով, կուվի են մտել և Թշնամուն պարտության մատնել։ 40—50-ի չափ գերի վերցնելով, անցել են հիշյալ նեղ անցքը և եկել

---

* Հավանաբար պիտի լինի Սուրամ։

հասել են այդտեղ: Այս պատերազմում խալամների կորուստների մասին հարցվեց լեզգիների պարագլխին, որը պատասխանեց, թե լեզգիներից և այլ մարդկանցից սպանվածների և գերի ընկածների թիվը 40—50 է: Այս ճակատամարտում կայսերական կանոնավոր բանակից մի զինվոր անգամ չի եղել...

Ջլղրի վալիի դրության հիման վրա, հարցը վեքիլների ժողովում քննության առնվեց և որոշվեց հետևյալը. Թիֆլիսի խանի վերքից և ընթացքից երևում է նրա վատ մտադրությունը. հետզհետե դեպի Ջլղր եկող Դաղստանի զինվորների առանձնացումը հակառակ է զգուշության կանոնին. ռուսների հետ նրա [Թիֆլիսի խանի] կնքած նոր պայմանագրի պայմանների համաձայն, երբ Թշնամին երևան դա, ռուսները պարտավոր են օգնել նրան և պաշտպանել նրա երկիրը. նկատի առնելով, որ ռուսները Դաղստանի զինվորների Թիֆլիսի վրա հարձակվելը Օսմանյան կառավարության են վերագրում և դրանով հաշտության պայմանագրի խախտման հարց պիտի հարուցեն, որոշվեց՝ զինվորական ուժերի պատրաստության և պայմանագրի պահպանման նկատմամբ երկկողմանի ընթացք բռնել: Այս իմաստով, Ջլղրի վալիին պրավոր ցուցմունքներ տրվեցին: Այդ ժամանակ Ռուսաստանի դեսպանը բանակցելու ցանկություն հայտնեց: Նա, Ռեիս-էֆենդիի հետ տեսակցելիս՝ Թիֆլիսի խանի հետ կնքված պայմանագրության մասին հիշեցրեց և հայտնեց, որ Ջլղրի վալին դաղստանցիներին դրդռելով ստիպել է նրանց հարձակվել Թիֆլիսի վրա: Դեսպանը պահանջեց, որ վալին պաշտոնազուրկ լինի և միաժամանակ խնդրեց, որ Օսմանյան կառավարությունը չհովանավորի հիշյալ ցեղին և հեռացնի նրանց Թիֆլիսի երկրից: Ռեիս-էֆենդին պատասխանեց հետևյալը. լեզգի ցեղը վաղուց պատերազմում է Թիֆլիսի խանի դեմ, հետևաբար այս անգամ ըստ առաջնության տեղի ունեցած պատերազմը Ջլղրի վալիին վերագրելը անիմաստ է. Թիֆլիսի խանը երբեք հանգիստ չի մնում, առիթը գտնելիս հարձակվում է լեզգիների վրա, կողոպտում և թալանում է, բացի այդ նա ևս չի մնում նաև Իրանի ժողովրդին ճնշելուց և նեղելուց. ապացուցված է, որ նա, մասնավորապես Ադրբեջանում ճնշել և նեղել է Գենջեի երկիրը: Մինչդեռ, քանի որ, թե՛ Դաղստանում և թե՛ Իրանում ապրողները իսլամական կրոնին են պատկանում, իսլամների խալիֆան հանդիսացող մեր վեհափառ փադիշահը պետք է նրանց օգնության ցույց տա: Այս հարցերի շուրջը բավականին երկար վիճաբանություն տեղի ունեցավ [Դեսպանի և Ռեիս-էֆենդիի միջև]: Այս առթիվ Ջլղրի վալիին Սեդարեթի կողմից նա-

քից հատուկ գրություն ուղարկվեց հաշտության պայմանագրին հաջառակ ընթացքից և շարժումներից զգուշանալու մասին։

Ռուսների հիմնական նպատակն էր զրավել Իրանի որոշ մասերը։ Այդ նպատակը իրականացնելու համար, նրանք միջոց էին գտնում Թիֆլիսի խանին, իսկ նա խաբվելով ռուսների խարդախություններից և խորամանկություններից, ընդունել էր Ռուսաստանի հովանավորությունը և մի շարք խոստումներով և նվերներով աշխատում էր Դաղստանի և Ադրբեջանի խաներին էլ Ռուսաստանի կողմը գրավել։ Սակայն այդ խանները իսլամ լինելով, հասկացել էին Ռուսաստանի խոովարարական նպատակները, բոլորովին համակրություն ցույց չէին տալիս և վճռականապես մերժողական դիրք էին բռնել, այնպես որ Թիֆլիսի խանը նրանց սիրաշահելու և գրավելու գործում հուսահատվել էր։ Նա, Ռուսաստանի օժանդակությամբ խաներին բռնի կերպով ենթարկելու և հպատակեցնելու համար միջոցներ էր ձեռք առել։ Խանները Օսմանյան կառավարության տպավինելով, օգնություն էին խնդրում։ Օսմանյան կառավարության կողմից նախապես նրանց օգնություն ցույց տալը խոստացված էր, մինչև անգամ նրանցից մի քանի երևելի և գործունյա խաների՝ կայսերական հրամաններ էին տրվել, մասնավորապես Դաղստանի ժողովրդին փադիշահական նվերներ և պարգևներ էին շնորհվել. այդ մասին տեղեկություն էր հաղորդված այդ կողմերում գտնվող վեզիրներին։

Այդ շրջանում ապրող ցեղերից ամենից ավելի մարտունակները դաղստանցիներն էին։ Սրանք ի բնե կռվի հակամետ և սիրահար էին։ Նրանք հասկացել էին, որ թշնամու [ռուսների] իսլամական երկրի վրա կատարած բռնությունները, վերջ ի վերջո իրենց էլ պիտի հասնի։ Թիֆլիսի խանի կողմից եղած հպատակության առաջարկը վիրավորել էր նրանց ցեղային արժանապատվությունը. նրանք սպասվող վտանգին գործիք հանդիսացող Թիֆլիսի խանին ասպարեզից հեռացնելու համար խոստում էին տվել, իրենցից ամենաքաջարի և հպատակամ անձնավորությունը՝ Ավարի իշխան՝ Ումմե-խանին, ամբողջ Դաղստանի պինվորների բաշբուղ նշանակելով, հանիս ամսին իրենց տեղից մեկնել էին և մի արագընթաց նամակով տեղեկացրել էին Ջլղրի վազիին, թե ուղիղ Թիֆլիսի վրա շարժվելու պատրաստ են։

Վերոհիշյալ վեզիրը՝ նկատի առնելով, որ Թիֆլիսի խանի կողմից իսլամական երկրների վրա հարձակում տեղի ունենալուց առաջ, դաղստանցիների հարձակման սկսելը տեղի պիտի տա

թշնամու առարկությանն ու բողոքին, անմիջապես վերոհիշյալ ցեղի բաշքուղին գրությամբ հայտնեց՝ «մինչև ձեր խնդրագրի հետ Ասիթանե ուղարկված Ջենգե-թայի իշխող՝ Ահմեդ-խանի վերադարձը, պետք է ձեր տեղում մնաք»: Սակայն այս գրությունը ստանալուց առաջ, հիշյալ ցեղը շարժվել և իջևանել էր Ջարու-Թալա կոչված վայրում: Նրանք իրենց կատարելիք հետագա գործողությունների մասին հրամանի և ֆերմանի էին սպասում: Այդ մասին Ջըլդրի վալին հայտնեց և տեղեկացրեց Ստամբուլ: Այն պահին, երբ պատրաստվում էին հիշյալ վեպիրին դրել և հայտնել, որ խաղաղության ժամանակ վերոհիշյալ զինվորների Թիֆլիսի վրա հարձակումը հարմար չէ և անհրաժեշտ է նրանց հետ վերադարձնել, էրզրումի և Ջըլդրի վալիներից ստացված նոր գրությունից պարզվեց, որ դաղստանցիները արդեն անցել են Կանըք գետը և հարձակվել Թիֆլիսի վրա. այդ մասին հիշվում էին հետևյալ մանրամասնությունները: Դաղստանցիները անցնելով հիշյալ գետը, առանց հապաղելու շարժվում էին ուղղակի Թիֆլիսի վրա: Թիֆլիսի խանը և իր տրամադրության տակ եղած ռուսական հրամանատարը, իրենց ունեցած պատրաստի զինվորներով և թնդանոթներով, դիմադրություն ցույց տալու համար, շտապում են դեպի Կախեթի կողմերը: Սակայն, երբ տեսնում են, որ դաղստանցիները գետի նման հոսում և գալիս են, հասկանում են, որ դիմադրությունն անիմաստ է և շտապում են ապաստանել իրենց ամրակուռ և ապահով բերդերում: Դաղստանցիները պատրաստվում են հարձակվել Թիֆլիսի վրա. սակայն բերդը գրավելու համար անհրաժեշտ թնդանոթներ և ռազմամթերք չունենալու պատճառով, առանց Թիֆլիսի բերդի կողմը գնալու, գնում են դեպի Թիֆլիսի մոտ գտնվող արծաթի հանքերը*, այն գրավելու նպատակով: Դիմադրության պատրաստված թշնամուն մի հարվածով պարտության մատնելով՝ հիշյալ հանքերը գրավում և բազմաթիվ երեխաների և կանանց գերի են վերցնում: Բացի այդ՝ նրանց (դաղստանցիների) մի մասը, գնում են Թիֆլիսից չորս ժամ հեռավորության վրա գտնվող Լոռիի բերդը գրավելու: Առավոտյան բերդից մեծ քանակությամբ վրացի զինվորներ դուրս գալով՝ մտնում են դաղստանցիների բանակը: Սոսկալի մարտեր են տեղի ունենում և վերջը դաղստանցիները հաղթում են: Այս մարտում դաղստանցիներից միայն 400 հոգի շեհիդ են եղել և 700-ի չափ վիրավորվել են: Իսկ թշնամու սպանվածների թիվը անսահման է եղել:

---

* Գատմպիրը հավանաբար նկատի ունի Ախթալայի պղնձի հանքերը (տե՛ս ծանոթ. 1):

Այս ահավոր պարտությունը Թիֆլիսի խանին մեծ վիշտ պատճառեց. նա իր հարստությունն ուղարկեց մայրաքաղաք, բերդը և երկիրը պաշտպանելու համար զինվորներին անհրաժեշտ վայրերում տեղաբաշխեց, իսկ ինքը անձամբ ձեռնարկեց Թիֆլիսի բերդի պաշտպանությանը: Դաղստանցիները Թիֆլիսի բերդը գրավելու նպատակով՝ Ախալքալաքի դաշտում կանգ առան և Ջրլդրի վալիին դիմումներ ուղարկելով՝ թնդանոթ և ռազմամթերք խնդրեցին: Ջրլդրի վալին շփոթվեց և վախենալով, որ առանց պետության համաձայնության և արտոնության Թիֆլիսի վրա կատարվելիք հարձակման համար ինքը պատասխանատվության պիտի ենթարկվի, անձամբ գնաց Ախալքալաքի դաշտը և ասաց. «Ձմեռվա օրերը մոտենում են, իսկ բերդի [Թիֆլիսի] գրավումը ժամանակ է պահանջում. շնայած Թիֆլիսի գրավումը, ներկայումս Օսմանյան կառավարության ցանկությունն է, սակայն առայժմ ձեր հայրենիք վերադառնալը ավելի նպատակահարմար է». այսպես փորձեց համոզել, սակայն ապարդյուն: Նրանք պատասխանեցին և պնդեցին՝ «Ձմեռվա ցրտերը մոտ լինելու, մեր մեջ հիվանդների և վիրավորների թիվը մեծ լինելու պատճառով մեր երկիրը վերադառնալը դժվար է: Այս տարի մուսուլմանների իմամի* երկրում կձմեռենք»:

Այդ դրությունը թուլլերին ու աղքատներին մեծ վնաս պիտի պատճառեր, բացի այդ, փադիշահական երկրում պաշարի և անհրաժեշտ սննդամթերքի պակասության պատճառ պիտի լիներ: Նման դժվարությունները նկատի առնելով՝ վերոհիշյալ վալին նրանց որոշ բանակությամբ նվերներ և խալաթներ տալով, [դաղստանցիների] զեկավարների միջև պատակտում առաջ բերեց. հետևանքն այն եղավ, որ Ակ-Կոշայի կազին և Ջար-Թալայի պարագլուխները 4—5 հազար զինվորներով վերադարձան իրենց վիլայեթը:

Սակայն Ումմե-խանը և Ալի-Սուլթանը վերադարձին համաձայն և հոժար չէին: Հազար ու մի դժվարություններով հաջողվեց հեռացնել նրանց կայսերական երկրի սահմաններից: Թիֆլիսի և Աչքբաշի սահմանների վրա գտնված Դահան անունով վրացական բերդի գրավման նպատակով, նրանք իրենց գտնված տեղից շարժվեցին և մեծ արագությամբ գնացին դեպի այդ կողմը: Եվ հավանական է, որ այդ պահին** նրանք արդեն գրավել էին հիշյալ բերդը:

---

* Մուսուլմանների իմամ — գոթ է ածվում իսլամների խալիֆա ֆամատով:

** Պատմագիրը նկատի ունի իր այդ գեպքը գրի առնելու ժամանակը:

Թիֆլիսի խանի ընտրյալ զինվորները բաժան-բաժան եղան, այդ պատճառով նա թուլացավ ու չփոթության մեջ ընկավ։ Թիֆլիսի ռայանները ցրվեցին Երևանի և Կարաբաղի կողմերը և 4 հազար տնից (խանե) ավելի փոխադրվեցին Կարսի սահմանները։ Սակայն որովհետև այդ շրջանում ապրող աշիրեթները թալանում էին նրանց անասուններն ու ունեցվածքը, այդտեղ էլ չկարողացան մնալ և Կարսի սահմաններից շարժվեցին դեպի Զըլդրի կողմերը։ Այդ մասին Զըլդրի վալին տեղեկագիր ուղարկեց, կատարված դեպքերի կապակցությամբ այդ տարի խիստ մեծ ձախքերի ենթարկված լինելը հայտնելով, կառավարությունից մեծ դումարի օժանդակություն խնդրեց։ Սակայն, գանձարանը ծանր դրության մեջ լինելով՝ հնարավոր չեղավ նրա պահանջը լրիվ կատարել։ Սադրազամ Ալի փաշան, իր կողմից առայժմ 5 հազար դուրուշ կանխիկ դրամ և որոշ քանակությամբ հագուստեղեն ուղարկեց։ Միաժամանակ այդ հարցի մասին Ռուսաստանի դեսպանի հետ տեղի ունեցած բանակցությունների պատճենը և խաղաղության պայմանների պահպանման ու Դաղստանի զինվորների ցրման ու հեռացման մասին ցուցմունքներ տվող բարձր հրաման ուղարկեց։

Դրանից անմիջապես հետո, Զըլդրի վալիից մի գրություն ստացվեց, որով հայտնում էր որ՝ սրանից առաջ կայսերական երկրից հեռացված Ալարի իշխողը Ումմե-խանը և Ալի-Սուլթանը իրենց ճանապարհի վրա գտնվող Դահանի բերդը պաշարելով գրավել են այն և բերդում գտնվող թշնամուն խորտակել և ոչնչացրել են, սակայն պատերազմական դեպքերի բերումով, իրենք էլ շատ վիրավորներ են ունեցել և այդ պատճառով հնարավոր չի եղել իրենց երկիրը վերադառնալ։ Բացի այդ, ձմեռը վրա է հասել, ուստ և վրացի զինվորները թնդանոթներով ճանապարհները փակել են, որի համար նրանք ստիպված են եղել Զըլդր վերադառնալ։ Հետևաբար խնդրում են, որ իրենց, որպես հյուր, մինչև գարնանամուտ այնտեղ ապրելու արտոնություն տրվի։

Վերոհիշյալ զինվորների հեռացումը դժվար լինելով հանդերձ, մեծաթիվ զինվորների երկար ժամանակ այդ տեղում ապրելն էլ ծանր և անտանելի պիտի լիներ սահմանի ռայանների համար։ Մեջլիսում քննության առնվեց փաշայի զեկուցումը և խնգիրը, հավանություն տրվեց մինչև գարուն մնալ այդ տեղում, բայց որպեսզի աղքատներին ծանր բեռ չլինեն, առայժմ, էրզրումի վալիի փողերանոցի (զարբխանե) ունեցած պարտքից 50 հազար դուրուշ հատկացվեց և Զըլդրի վալիին հրաման ուղարկվեց՝ 3—4 օրվա ըն-

թացքում այն փոխադրելու մասին։ Դրանից հետո Ալի փաշան հեռացվեց և Սադրազամ նշանակվեց Յուսուֆ փաշան։ 1200 թ. կեսերին նորից Զըլդրի վալիից գրություն ստացվեց, որով հայտնում էր, թե սրանից առաջ Դաղստանի զինվորների կողմից Թիֆլիսի էյալեթի վրա կատարված հարձակման մասին Ռուսաստանում տեղեկություն ստացվելիս, այդ դեպքը վերագրելով սահմանում գտնվող Օսմանյան կառավարության պաշտոնյաների թուլլտվությանն ու թելադրությանը, Թիֆլիսին ենդանոթ և զինվորներ են հայթայթել։

Այդ ժամանակ Պետերբուրգի ֆրանսիական դեսպանը Ստամբուլում գտնվող դեսպանին ուղղված նամակում հայտնում է, որ երբ Թիֆլիսի խանին ինքը տեղեկացրել է ռուսների ռազմական օգնություն ցույց տալու մասին, անմիջապես տեսակցություն է ունեցել Ռուսաստանի Մեծ մինիստրի հետ և հարցրել՝ «Այն պահին, երբ ձեր և Օսմանյան կառավարությունների միջև պահպանվում են խաղաղության պայմանները, ի՞նչի համար է կարիք զգացվել Թիֆլիսի խանին զինվորներ ու ռազմամթերք ուղարկել»։ Մեծ վեզիրը դեսպանից թաքցրել է իրականությունը։

Նկատի առնելով ռուսների վաղուց ի վեր ունեցած ընթացքն ու ջարժումը, անհրաժեշտ համարվեց աչալուրջ լինել և նախապատրաստական միջոցներ ձեռք առնել։ Անմիջապես Զըլդրի վալիին հանձնարարվեց, որ այդ շրջանում ապրող ցեղերին ու աշիրեթներին պատրաստ պահի, իսկ էրզրումի վալիին հրաման տրվեց, որ հիշյալ էյալեթից 4000 զինվոր հավաքագրի. միաժամանակ էրզրումի վալիին հրամայվեց և ֆերման տրվեց, որ արթուն մնա, եթե Թշնամու կողմից կայսերական երկրի վրա հարձակում տեղի ունենա, անմիջապես էրզրումից դուրս գա և համապատասխան պաշտոնյաների հետ բանակցելով, Թշնամուն վանելու ջանադիր լինի։ Կասթեմունիի մյութեսելլիմին՝ Ալթի-Քուլաջ-Զադեին հայտնվեց, որ եթե նա 500 զինվորով Բաթումի բերդի պաշտպանությունը ապահովելու լինի, ապա իրեն Կափուջի-Բաշիլիք պիտի շնորհվի։ Այդ մասին նրան հատուկ գրություն ուղարկվեց։ Իսկ Ջաշի բերդի պաշտպանության համար, Տրապիզոնի շրջանում 500 հետևազոր զինվեց և հարկ եղած դեպքում զինվորներին բաժանելու նպատակով, նախապես պատրաստված պաշարից բացի, որոշ քանակությամբ հացահատիկ հայթայթվեց և ուղարկվեց։ Բացի այդ, շրջանի բերդապահ զինվորների մի տարբա ռոճիկը կանխիկ վճարելու նպատակով էրզրումի մաքսատնից փող փոխադրվեց։

Ռուսները, դաղստանցիների շարժումը Ջլղրի վալիի գրգռմանը վերագրելով, դեռ անցյալ տարվանից սկսած պահանջում էին նրա պաշտոնազրկումը։ Այսպիսով, ռուսները Թիֆլիսի խանին իրենց պետության գլխավորներից, իսկ նրա երկիրը՝ իրենց երկրի բաղկացուցիչ մասը համարելով, տեղի ունեցած վնասներն ու ավերումները նույնպես իրենց վնաս էին համարում։ Ռուսական դեսպանի հետ ունեցած տեսակցություններից մեկում Ռեյիս-ուլ-Քիթաբ* Աֆտուլլահ-Բեյ էֆենդին ակնարկել էր, որ հավանական է ռուսները մտադիր են Ջլղրի էյալեթի վրա հարձակվելու։ Դեսպանը այդ մասին մի նոտա էր ներկայացրել։ Խոսակցության ընթացքում Աֆտուլլահ-Բեյ-էֆենդին դեսպանին այսպես էր պատասխանել՝ «Թե Ջլղրի վալին, թե՛ այլ սահմանապահներ, եթե խաղաղության պայմաններին հակառակ ընթացքի մեջ գրանվեն, Օսմանյան կառավարությունը չի թերանա և չի վարանի նրանց պատժել՝ առանց ուրիշների թելադրության կարիք զգալու։ Սակայն դաղստանցիների և վրացիների միջև գոյություն ունեցող թշնամությունը, նոր երևան հկած խնդիր չէ, նրանք վաղուց ի վեր իրար հարվածում և կողոպտում են։ Թիֆլիսի նկատմամբ Ռուսաստանի հովանավորության պահանջը, Օսմանյան կառավարությունը չի ընդունում։ Իսկ եթե ռուսները, իրենց հպարտության և պարծենկոտության բերմամբ, ուրիշների երկրում տեղի ունեցած խռովությունը պատրվակ բռնելով, հարձակման ձեռնարկեն, Օսմանյան կառավարությունը պիտի հետևի փոխադարձ հատուցման սկզբունքին և այդ դեպքում պայմանագրության խախտման հանցանքը կընկնի ռուսների վրա, որով Ռուսաստանը միջազգային տեսակետից հանցավոր և դատապարտելի կհամարվի։ Խաղաղության պայմանները խախտողների գործերն ու վախճանը միշտ էլ ողբերգական է եղել»։ Նա, Ռուսաստանի դեսպանին այս բովանդակությամբ նոտա ներկայացրեց։

Սակայն ռուսների հարձակման այս հարցի կենսագործումը, կամ Դաղստանի բնակչությունն էլ, թաթար ժողովրդի նման, սկզբում մի շարք խոստումներով և խաբեբայություններով իր կողմը գրավելուց հետո, նրանց երկիրը հափշտակելը հավանական և փորձով ապացուցված խնդիրներից էր։ Այդ պատճառով 1200 թ. (1785) վերջում կայսերական գրությամբ դրությունը Դաղստանի ժողովրդին բացատրվեց և այդ ժողովրդին սիրաշահելու և գրավելու

---

* Ռեյիս-ուլ-Քիթաբ, տե՛ս ծանոթ. 51

նպատակով նրանց փոդիշահական նվերներ ուղարկվեց: Իսկ սահմանի պաշտոնյաներին աշխուժ և զգույշ լինելու մասին, նորից ամեն մեկին պատվերներ բովանդակող կայսերական հրամաններ ուղարկվեցին:

Դրանից հետո, ռուսները Վրաստանի հարցը գանգատի խնդիր դարձրին և 1201 թ. այդ հարցի առթիվ ռուսական դեսպանի հետ բավականին վիճաբանություններ տեղի ունեցան, և ինչպես որ ներքևում հիշվում է, պատերազմի հայտարարության գլխավոր պատճառներից մեկը դարձավ Վրաստանի հարցը: Ռուսները այդ կողմում տեղի ունեցող հարձակումներն ու վնասարարությունները վերացնելու, գերիների առուծախը դադարեցնելու մասին իրենց պահանջներն էին առաջ քաշում: Իսկ Օսմանյան կառավարությունը ռուսների՝ Հերակլ խանի նկատմամբ ցուցաբերվող հովանավորության մասին արված պնդումները բոլորովին մերժում և չէր ընդունում: Այդ պատճառով էլ վեճը շարունակվեց և վերջ ի վերջո հանձնվեց սրի վճռական որոշմանը:

Պատերազմի հայտարարությունից անմիջապես հետո, Զըլդրի վալի Սյուլեյման փաշային բարձր հրաման ուղարկվեց և նրան հանձնարարվեց, որ Դաղստանի և Ադրբեջանի խաներին միության շրջանակի մեջ առնի և Հերակլ խանին բոլորովին մեջտեղից վերացնի: Դաղստանի խաներից ամենից ուժեղ և հաստատակամը՝ Ավարի խան՝ Ումմե-խանը, պետք է արշավանքի դուրս գար Ռուսական երկրի Կըզլյար-Կալասի բերդի կողմը: Վերոհիշյալ խաներին իրազրությունը բացատրող առանձին կայսերական հրամաններ ուղարկվեցին: Փոդիշահական ընդունելություն պատրաստվեց. արքունի պինակիցներից Մուհամմեդ Սալիհ-Աղան հատուկ պաշտոնով Դաղստան ուղարկվեց: Կաբարթայի էմիրներին էլ կրոնական պատերազմին մասնակից դարձնելու համար, կայսերական հրամաններ գրվեցին: Բուխարայի կողմից Ռուսաստանի վրա հարձակում կազմակերպելու համար, Վանի բերդապահ՝ Թեմուր փաշայի միջոցով Բուխարայի խանին կայսերական գրություն ուղարկեց: 1202 թ. (1786) սկզբին Զըլդրից ստացված գրությունից պարզվում է, որ թեև Դաղստանի և Ադրբեջանի խանները Օսմանյան պետությանը հպատակություն են հայտնել և նրա թշնամու դեմ պատերազմելու խոստում և հավաստիացում տվել, սակայն նրանց մեջ ներքին անհամաձայնություն և հակառակություն գոյություն ունի: Բացի այդ, խաներից մի քանիսի Հերակլ խանին կողմնակից լինելու հետևանքով՝ նրանց միջև կռիվները շարունակվում են: Այս բոլորից հետո

պարզվեց, որ պահանջվող լիարժեք միության ստեղծումն անհնար է։ Ումմե-խանի կարծիքով Վրաստանի արշավանքին մասնակցելը, դեպի Ռուսաստան ասպատակություն կատարելն ու ռուսների դեպի Վրաստան բաց արած Անանուրի ճանապարհը քանդելը հեշտ գործեր են։ Սակայն որովհետև իրեն դեպի Կրզլյար արշավելու հրաման է տրված, որը Չեչեննների կողմում գտնվող լեզգիների հետ բանակցությունների մեջ մտնել կպահանջի, դրա համար անհրաժեշտ էր երեք ամիս առաջ տեղեկություն տալ։ Այդ մասին նա բանավոր հրահանգ էր տվել Սալիհ բեյին և գրել Այուբեյման փաշային։

Այուբեյման փաշան Վրաստանի վրա արշավանքի պատրաստվող բանակը ուժեղացնելու համար, Ումմե-խանին Չըլդր էր հրավիրել։ Ումմե-խանը հայտնել էր, որ 30 հազարից ավելի զինվորներով գալու է, հետևաբար պետք է օգնել իրեն դրամով և պաշարով։ Քիչ անց Սալիհ բեյն իրեն ենթակա մարդկանց կողմից սպանվեց. նրա մարդկանցից մի քանիսի սուլթ թվականի կեսերին բանտարկվելու և քննության ենթարկվելու մասին մի քանի փաստաթղթեր կան պահված։ Կովկասյան լեռները Ռուսաստանի և Անապոլուի միջև ամրակուռ պատնեշ են։ Սակայն նկատի ունենալով, որ Վրաստանի դեմ ռուսների կատարած ոտնձգությունները խանգարում են Անապոլուի ապահովությունը՝ Հերակլ խանի աջակցությունից վերացնելը՝ գոնե նրան Ռուսաստանից բաժանելու նպատակով, անհրաժեշտ էր։ Եթե Ումմեխանի երրորդ առաջարկը ընդունվեր և վերահիշյալ [Անանուրի] ճանապարհը քանդելով Ռուսաստանի օգնությունն ու օժանդակությունը արգելվեր, եթե Հերակլ խանը առանձին թողնվեր և ամեն կողմից ճնշման ենթարկվեր, այդ ժամանակ, վտանգը կվերանար և պաշտպանողական շարժումը հարձակողական շարժումից ավելի կարևոր և գերադաս կլիներ։ Սակայն Ումմեխանին դեպի Կրզլյար ուղարկելը ժամանակի և պայմանների համապատասխան միջոցառում չի եղել։

Այդպիսի կարևոր դեպքերում հիմնական խնդիրը առաջ քաշելով, հետագա բոլոր գործողությունները անհրաժեշտ էր ծառայեցնել դրան, սակայն Կրզլյարի կողմերում ասպատակություն կազմակերպելու և նման ցուցադրական և հանդիսավոր գործերով տպավորություն առաջացնելու ցանկությունը, հիմնական նպատակից շեղեց։ Այս և սրա նման մի շարք սխալների պատճառով, ներկա պատերազմում, Վրաստանի որոշ մասերի վրա ասպատակություն կատարելուց և մի քանի գերիներ վերցնելուց բացի, պետության համար իրապես օգտակար գործ չկատարվեց։

Արշավանքի [պատերազմի] սկզբում, Շեյխ-Մանսուրի[19] մարդկանց ականջներում հնչող հուշակի աղմուկը դեռևս չդադարած, պատերազմի դռները բացվեցին և դեպի երկինք հասնող թնդանոթների և հրացանների որոտը, նրա [Շեյխի] հուշակի աղմուկը հանգցրեց։ Հաջորդ մասում [գրքի] ցույց կտանք, որ նա [Շեյխ-Մանսուրը] չկարողացավ ժողովրդի սպասածի աստիճան գործեր կատարել։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. III, էջ 141—168)։

* * *

Ջևվդեթ փաշայի «Պատմության» III հատորի 2-րդ մասը ամբողջովին հատկացված է Չերքեզիստանին և չերքեզներին։ Պատմագիրը մեծ մանրամասնություններով տալիս է այդ երկրի և ժողովրդի մասին աշխարհագրական, պատմական, կենցաղային կարևոր տեղեկություններ։ Հետո ծանրանում է մասնավորապես այն ժամանակաշրջանի վրա, երբ չերքեզները ենթարկվում են Օսմանյան պետությանը և ընդունում իսլամական կրոնը՝ գլխավորապես Ֆերեհ-Ալի փաշայի Չերքեզիստանում պաշտոնավարության շրջանում։

Ֆերեհ-Ալի փաշայի շինարարական աշխատանքներից է նաև Անապա բերդի կառուցումը։ Այդ առթիվ պատմագիրը տալիս է նաև մի փոքրիկ տեղեկություն հայերի մասին՝ «Անապայում հայկական թաղամասի շինությունը» վերնագրով։

Անապայում Հայկական թաղամասի շինությունը

Գնչուների կարգավորումը խելացի կերպով վերջացնելուց հետո, հերթը եկավ քրիստոնյաներին։ Մի քանի պատենտատեր արհեստավորներ, փաշայի գաղտնի հանձնարարությամբ, կանչելով դերձակների, մուշտակագործների և սարրաֆների գլխավորներին՝ ասացին. «Մի՞թե դուք կրոնական արժանապատվություն չունեք. գնչուներից չե՞ք ամաչում։ Դուք մեր փաշա-էֆենդիին այնքան ծառայություններ եք մատուցել։ Այս վայրը մի նոր վիլայեթ է. դուք էլ խմբվեցեք, բերդից դուրս առանձին մի թաղամաս և եկեղեցի կառուցելու համար, խնդրագիր ներկայացրեք, մենք էլ ձեզ համար կբարեխոսենք և մեր էֆենդին ձեզ իրավունք կշնորհի»։

Հայերը անմիջապես խնդրագիր ներկայացրին և ստանալով իրավունք՝ ինչպես որ վերևը հիշվեց, հայկական թաղամաս և եկեղեցի կառուցեցին, որով Անապայի բարեշինությունը օրեցօր ավելացավ։ Եթե մի բերդի վարոշում քրիստոնյա ռայաներ լինեն,

այդպիսի տեղում անհրաժեշտ դործերի կարդավորումը դժվար կլինի։ Այնպես որ այդ հարցի լուծման համար Ալի-փաշան շնորհակալություն և գոհունակություն հայտնեց։ Այդ մասին պատմում է Հաշիմ-էֆենդին [պատմագիր]։

(«Թարիխի Ջևվդեթ», հատ. III, էջ 228)։

1201 թվականի (1786) դեպքերից*

Պատմագիր Ջևվդեթ-փաշան 1201 թ. դեպքերի շարքում, առանձնապես ձանրանում է ռուս-թուրքական պատերազմին նախորդող դեպքերի վրա։ Կրկնությունից խուսափելու համար, քաղվածաբար կտանք այդ դեպքերից միայն որոշ նյութեր։

Ջևվդեթի «Պատմության» IV հատորը ամբողջությամբ և V հատորի կարևոր մասը հատկացված է ռուս-թուրքական և ավստրո-թուրքական պատերազմների հետ կապված դիվանագիտական և ռազմական հարցերին՝ 1201 թ. մինչև 1206 թ. (1786—1791), մինչև Յաշում կնքված խաղաղության դաշնագիրը։

Օսմանյան պետության ներքին՝ վարչական և տնտեսական բայքայված դրության պայմաններում, ընդարձակ և երկարատև պատերազմը, երկրի տարբեր մասերում, մինչև անգամ մայրաքաղաք Ստամբուլում՝ հացի և անդամքերքների ծանր և կրիտիկական դժվարություններ էր առաջացրել։ Երկրի շատ մասերում սով էր, կառավարությունը անկարող էր այդ չարիքների առաջն առնել, մանավանդ որ կառավարության ֆինանսական դրությունը կատաստրոֆիկ աստիճանի էր հասել։ Փող ճարելու համար ձեռք առնված զանազան միջոցները (հափշտակություն, տուրքերի ավելացում, արտաքին փոխառություն) դրեթե ոչ մի արդյունք չտվին։ Պատմագիրը այդ բոլորի մասին տալիս է խիստ բնորոշ և հետաքրքիր մանրամասնություններ։

«...Կայսերական բանակը շատ նեղ դրության մեջ լինելով, մեծ Սերդարը օդնության կոչով դիմել էր փադիշահական Դռանը, անմիջապես 3—4 հազար քիսե փող ուղարկելու մասին։ Սակայն որովհետև ոչ մի կերպ կարելի չեղավ փող ճարել, Սերդարին պատասխանվեց փադիշահական ֆերմանով։ Ահա այդ պատասխանը. «Իմ մեծ վեզիրս և բարձր Սերդարս! Ձեր դրամական նեղությունը ինձ հայտնի եղավ։ Անմիջական կերպով 3—4 հազար քիսե փող եք խնդրում, եթե լիներ, ասված վկա՛, իմ ծախքի փողից անգամ կուղարկեի։ Այսպիսի ժամանակ կարելի՞ է մերժել։ Սակայն դանձարանի դրությունը Ձեր վսեմությանը հայտնի է։ Այս դրամի հարցը

---

* *Ջևվդեթի «Պատմության» (տարեգրության) մեջ 1197 թ. մինչև 1201 թ. դեպքերը տրված են մի ընդհանուր տեսության մեջ, որը թարգմանել ենք դրեթե ամբողջությամբ։*

պիշեր ցերեկ իմ հանգիստը վրդովել է... երբ նոր տարվա Զբեխլուն բացվելու լինի, դուցե պատերազմական ծախքերի համար միջոց կլիներ... գոնե առաջիկա տարվա ջիզիեների բույրուլթիները եթե ստանայինք, մի քիչ փող կարելի կլիներ հայթայթել... Բարձրյալն Աստվածը Օսմանյան պետությանն օգնության հասնի[1]...»։

Փող հայթայթելու միջոցներ գտնելու համար մի քանի անգամ վեզիրների ժողով է գումարվում։ Բայց միջոց չի գտնվում ...ի վերջո որոշում են, որ վեզիրներից ամեն մեկը 15—25 հազար ղուրուշի «օգնություն» ցույց տա...։ Պատմադիրը գառնությամբ ասում է «...այս ձևի օգնությունից սպասվածը չնչին լինելով, պետության դարդին դարման» չէր կարող անել. երկար տատանումներից հետո որոշվում է փող հայթայթել արտաքին փոխառության միջոցով։

* * *

Պատմագիր Ջևդեթ փաշան շատ տխուր գույներով է նկարագրում նաև երկրի ներքին քաղաքական-վարչական վիճակը։ Նա ասում է՝ «...որոշ ժամանակից ի վեր բռնությունների ու անիրավությունների ամեն սահմանը անցել էր և Օսմանյան կայսերական երկրում ռայաները մեծ թշվառության էին ենթարկվել, իրենց երկիրն ու հայրենիքը թողնելով՝ ցիր ու ցան եղել։ Դրանով երկիրն ավերվել՝ ագռավների ու բուերի բնի էր վերածվել։ Այդ պատճառով Օսմանյան կառավարությունը պատերազմական գործերում անկարող էր դարձել, զրկվել հաղթանակից... Երկրի այս աստիճան ավերվածության պատճառը միայն պատերազմական շարժումները չէին. երկրի ավագանիների, կափների, նայիբների և այլ պաշտոնյաների կողմից, իրենց օգտին, պատերազմական տուրքերից մի քանի անգամ ավելի գումարներ աղքատների վրա բաժանելով, բռնությամբ և դաժանությամբ գանձումը և նման բռնությունները թերևս ավելի մեծ տեղ էին բռնում։ Այսպես, վեզիրներից մեկին մի էյալեթ տրվելիս [նշանակվելիս], օրինական, տուրքերից բացի, սպրազամներին և այլոց մի բան տալը սովորություն էր դարձել. բացի այդ, մեծ էյալեթներից փողերանոցի [զարբխանե] համար որոշ քանակությամբ [փող] էր ստացվում։ Վալիները շուտ-շուտ հեռացվում էին, այնպես որ, մի էյալեթ մի տարվա ընթացքում երկու և երբեմն երեք անգամ մեկից-մյուսին էր փոխանցվում, վեզիրները Ռումելիից Անադոլու և Անադոլուից Ռումելի էին փոխադրվում, նրանց ճանապարհածախսը ծայրահեղորեն մեծ էր լինում, որի համար էլ պարտքի մեջ թաղվում էին և շատերի դրությունը խիստ ծանրանում էր։ Երկրի շինարարությունը, կամ ռայաների բարօրու-

թյունը միտք անգամ չբերելով, նրանք իրենց ծախքերը հանելու և իրենց դրությունը բարելավելու համար աղքատների ձեռքից խլում էին նրանց ունեցվածքը, վաճառել տալիս նրանց անասուններն ու կենդանիները, հովանավորում ու քաջալերում ավազանինների բռնությունները, սրանք էլ մյուս կողմից կողոպտում էին աղքատներին։

· Ավազանինների բռնություններն ամեն սահման անցնում էին, իսկ ամրակուռ կրոնի սյունը հանդիսացող բարձր ուսման էլ, փոխանակ ժողովրդի մեջ արդարության և իրավունքի հիման վրա դատ ու դատաստան անելու, նպաստում էր դրան։ Այսպիսով, մի շարք տգետ մարդիկ իրենց արտաքինն ու հագուստը փոխելով, կազի էին դարձել և այդ ճանապարհով մեծ կազիի փոխանորդության արժանանալով, նվիրական շարիաթի հիմքերը խանգարել։ Բացի այդ, տարին մի քանի անգամ աղքատների վրա բաժանված սալիյաններից, «դեֆթեր-ախչեխի»*. անվան տակ, կարևոր մասը առնում ու յուրացընում էին, աղքատների բերքերը զանազան խարդախ միջոցներով հափշտակում էին, դրանով էլ չդոհանալով, խառնվում էին քաղաքների քեթխուդաների նշանակումներին և «խարջի-հյոջջեթ»** անվան տակ, նրանցից մեծ դումար կորզում։ Իսկ նրանք [քեթխուդաները] իրենց տված ծից ավելին ժողովրդից էին առնում։ Տեղի ունեցող բռնություններից մեկն էլ «իլթիզամի» հարցն էր։ Զեամեթի, թիմարի և մուքաթաայի տերերը և էվքաֆի մյութևելիները կենսամթերքի գների բարձր լինելու, ծախքերի շատության և այլ պատճառներով պարտքերի տակ էին ընկնում և կամ ազահության բերմամբ, իրենց տրամադրության տակ գտնված թիմար, զեամեթ, թեվլիյեթ և մուքաթաաները, մի տարի առաջ, բարձր գնով և իլթիզամի կարգով սարրաֆներին են տալիս, վերջիններս էլ տոկոսը ավելացնելով մյուլթեզիմներին տալիս. ասելով՝ «Դու այս վարձքը գանձի՛ր, եթե ռայաների կողմից գանգատողներ լինեն, ես այսինչ մարդու հետ լավ կապեր ունեմ, զսպել կտամ և առաջիկա տարին քեզ համար շատ ավելի մեծ իլթիզամ առնել կտամ»։ Բացի սարրաֆներից ուրիշ հենարան չունեցող և ծառայության չվիջանող մյուլթեզիմները՝ սնանկացած և կոպիտ մարդկանց այդ խումբը, դուրս գալով նահանգները, իլթիզամի տուրքերը մեծ ավելացումով գանձելու համար աղքատներին չարչարում էին։ Այս ձևով բոլոր իլթիզամների վարձ-

---

* Դեֆթեր-ախչեխի՝ պաֆթարի փող, վճար։

** Խարջի-հյոջջեթ, խարջ՝ ծախք, վարձք, հյոջջեթ (կամ հուջջեթ)՝ շերիի դատարանի որոշումը հաստատող վճռագիրը։ Խարջի-հյոջջեթ՝ վճռագրի համար վճարվելիք վարձք։

քը ավելանում էր, 20 տարի առաջ հինգ հազար դուրուշով իլֆիզամի տրված մուքաթաաթը, ամեն տարի քիչ-քիչ ավելանալով, 25 հազարի հասավ։ Մյուս կողմից էլ ջիզիեջինները, նվիրական շարիաթին հակառակ, ռայաներից, մինչև անգամ օրորոցի երեխաներից ջիզիե էին առնում և աղբատների վրա շատ մեծ բռնություններ էին գործ դնում։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. IV, էջ 235—238)։

Պատմագիր Ջեվդեթ-փաշան բազմաթիվ էջեր է հատկացնում նման փաստերի արձանագրմանը։ Նա հիշում է, որ Սուլթան Աբդուլ Համիդ I մահից հետո, 1203 թ. նրան հաջորդող Սուլթան Սելիմ III «լուրջ միջոցների» է ձեռնարկում՝ Երկրում արմատացած այդ չարիքները վերացնելու համար։

Այդ շրջանի Օսմանյան բանակի ռազմական և բարոյական բնույթը ցույց տալու համար, «Թարիխի Ջեվդեթի» IV հատորի վերջում բերված պաշտոնական փաստաթղթերից թարգմանում ենք Սուլթան-Սելիմ III Սեղարեթի Դոան ուղարկած «Խաթթի-Հյումայունը»։

Խաթթի-Հյումայունի պատճենը

Կայմակամ փաշա։ Այս պատերազմի վիճակը ի՞նչ պիտի լինի։ Օսմանյան կայսրության օջաքների զինվորները, կրոնական ոգևորությամբ օջաքների նամուսը պաշտպանելու համար, թշնամուց երես չդարձնելով, որքա՜ն երկրներ են գրավել, որոնք արձանագրված են պատմության մեջ։ Հիմա օջաքներում այդ ոգին գոյություն չունի, ուր պետք է ուղարկվեն, շատ քչերն են գնում, [մեծամասնությունը] խայտառակորեն փախչում է։ Միրի կոչված և բանակին ավելացված զինվորները, կարգ ու կանոն չիմացող մի խումբ «յաղմաջիներ» են, որոնք բանակում և ճանապարհներում, մասնավորապես թշնամու դեմ ամեն տեսակ խայտառակություններ են կատարում։ Այսպիսի պատերազմ կլինի՞։ Թշնամուց վրեժ լուծելու համար այսպե՞ս պետք է աշխատել։ Ափսո՜ս, հազար ափսո՜ս, որ ոչ ոքի մոտ կրոնի ոգի (ղայրեթ) չի մնացել։ Անցյալում այնքան հաղթանակների տիրացողները [արժանացողները] մարդկային ցեղից չէ՞ին։ Ի սեր կրոնի հավատարմաբար ջանք գործ դնողներին, թո՛ղ Աստված երկու աշխարհումն էլ ապահովություն շնորհի, իսկ դավաճանություն անողներին՝ թո՛ղ պատժի ու ոչնչացնի։ Սրանից հետո բոլորին պետք է զգուշացնեք, որ թմրությունից արթնանան և պետք է միջոցներ գտնեք վրեժ լուծելու համար։ Իմ ցանկությունը և գիշեր-ցերեկ Բարձրյալն Աստծուց իմ խնդրանքն այն է, որ Աստուծո օգնությամբ թշնամուց վրեժ լուծած՝ սուրը

պատյան չպիտի դնենք: Ինշալլա՛հ, երկու աշխարհի արեգակը՝ մեր փեյղամբեր-էֆենդին, ի պատիվ Ամենակարող Աստուծո, իմ նպատակին կհասցնի: Ներկայումս ջանք և հոգատարություն է պետք: Ինձ պետք չեն հանգստություն և համբավ, միայն վրեժառություն է պետք:

...Այժմվանից բանակի համար անհրաժեշտ հացահատիկը և այլ կարիքները հոգալու, օջաքների համար անհրաժեշտ ռազմամթերքը պատրաստելու գործում՝ ոչ մի թերություն չպետք է լինի: Եթե ինձ էլ պատերազմ գնալու կարիք լինի՝ անձամբ կգնամ: Գործերը ըստ այնմ պետք է կարգի բերել: Պետք է կարգի բերել նաև ճանապարհներն ու էդիբնևի պալատը: Նստելու ժամանակ չէ: Մեր վիճակը տեսնողը կկարծի, որ պատերազմ չկա: Աստված մի՛ արասցե, եթե մեր պետությունը քայքայվի, դա ոչ միայն ինձ, այլ բոլորին կվերաբերի: Եթե դուք մեր բարեկեցությունը ապահովելու համար աշխատեք, ես էլ իբրև ձեզանից մեկը, միասին կաշխատենք: Այս պատերազմի [համար] լրիվ ջանք գործ դնենք և թշնամուց, Աստծո օգնությամբ, վրեժ լուծենք: Ես գիշեր-ցերեկ Բարձրյալն Աստծուց խնդրում, գիշեր-ցերեկ լալով աստւմ եմ՝ «Ով Աստված, ինձ աշխարհի մեջ այսպես խայտառակ մի՛ անի, քյաֆիրի հանդեպ պարտության և կործանման ենթարկվելուց առաջ, իմ ժամանակում և [իշխանության] շրջանում Մուհամմեդի ժողովրդի այսպիսի քայքայումը տեսնելուց առաջ, դու ինձ մի երկու օր շուտ մեռցրու և կյանքս ու մարմինս հող դարձրու... Դուք էլ Աստծուն ապավինելով, ջանք և եռանդ գործ դրեք, կրոնի թշնամու առաջ այդպես խայտառակ լինելը՝ մեր պետության և կրոնի պատվին արժանի չէ: Ես ամաչում եմ աշխարհին նայելուց...»:

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. IV, էջ 300):

Ռուս-թուրքական պատերազմին վերաբերող դոկումենտներից, որոնք տրված են Ջեվդեթ-փաշայի պատմության մեջ, թարգմանում ենք պատերազմի հայտարարման կապակցությամբ պետություններին ուղղված հայտարարագիրը, որի մեջ Օսմանյան կառավարությունը ցույց է տալիս պատերազմի պատճառները:

Ռուսաստանին պատերազմ հայտարարելու առթիվ Օսմանյան կառավարության կողմից հրատարակված հայտարարագրի Պ ա տ ճ ե ն ը

Օսմանյան կառավարության և Ռուսաստանի միջև 87 թվականին կնքված հաշտությունը բարձր էր գնահատել երկու կողմի ռա-

յանների հանգստությունը և բարօրությունը: Սակայն ռուսական կառավարությունը մի շարք շինծու առաջարկներ անելով, մինչև անդամ Կայնարջայի խաղաղության համար իրրև հիմք ընդունված Ղրիմը, խաղաղության պայմանագրի պայմաններին հակառակ, անպատճառի կերպով դրավեց, չնայած տվյալ փաստաթղթերում պարզ կերպով արտահայտված էր տարաձայնությունները վերացնելու և վստահություն ստեղծելու, երկուստեք իրար նկատմամբ, գաղտնի կամ բացահայտ, թշնամական ընթացք չունենալու հարցը: Ռուսները գրգռում էին Օսմանյան պետության հպատակության հրովարտակ ունեցող Թիֆլիսի խանին, Թիֆլիսի մեջ ռուսական զորքեր պահելով ու վերահիշյալ խանին տեր կանգնելով, խախտում Վրաստանում և շրջակայքում գտնվող մեր սահմանները: Երբ այս մասին [նրանց] հայտնվեց, նրանք մերժողական պատասխան տվին: Չնայած, որ Էոզիի բերդի[20] բնակիչների կողմից Ղրիմի աղալճերից աղ արտահանելու քանակը առհասարակ պայմանավորված էր, սակայն [ռուսները] սահմանամերձ ժողովրդին զանազան նեղություններ և դժվարություններ պատճառելով, արգելք հանդիսացան: Իսկ երբ առաջարկվեց պայմանագրի իրագործումը, դրանից էլ խուսափեցին: Նրանց [ռուսների] հյուպատոսը պրինցի աստիճան ունեցող Բոգդանի[21] վոյևվոդային խաբելով իրենց երկիրը փախցրեց. երբ ըստ պայմանագրի պահանջվեց, որ հետ վերադարձվի, նրանց [ռուսների] դեսպանը՝ «Մեր պետությունը չի վերադարձնի» ասելով, վճռականապես մերժողական պատասխան տվեց և այդպիսով պայմանը դրժեց ու ոչնչացրեց: Մեր նման մի շարք պայմաններն ուշած իմաստը տալով, նրանք ցույց տվին իրենց չար նպատակները: Էֆլակում, Բոգդանում, Կղզիներում և իսլամական ժողովրդի համար վտանգավոր այլ վայրերում, առանց կարիք լինելու՝ հյուպատոսություններ հաստատեցին, [այդ վայրերի] Օսմանյան պետության բոլոր ռայաներին մոլորեցրին, ոմանց իրենց երկիրը փոխադրեցին և ոմանց էլ աշխատեցնում էին նավային և այլ ծառայությունների մեջ: Մասնավորապես համառորեն պահանջելով իրենց ոչ-ձեռնտու վալիների, հաքիմների, սպանների, ամիլների,* էմիրների, մինչև անդամ Ջըլղըրի վալիի, էֆլակ և Բոգդանի վոյևվոդաների հրաժարեցումն ու պատժումը, այդ ձևով միջամտեցին մեր վարչական կարգերին: Ռուս վաճառականներին Օսմանյան երկրներում ապահով և ան-

---

* Ամիլ — կոչվում էին արաբների ժամանակ վարչական պաշտոնյաները — վալի, գավառապետ և այլն:

վտանգ առևտուր անելու և ապատ իրենց ցանկացած տեղերը երթևեկելու իրավունք տալով, Օսմանյան կառավարության մարդասիրությունը հայտնի էր դարձել ամբողջ աշխարհին։ Չնայած պայմանով նախատեսված էր փոխհատուցման կարգով, Օսմանյան պետության վաճառականներին ևս նույնպիսի վերաբերմունք ցույց տալ, սակայն առևտրական գործերը միայն իրենց վերապահելու նպատակով, Օսմանյան վաճառականներից ռուսների առած մաքսային հարկը, այլ պետությունների վաճառականներից առնվածից հարկից մի քանի անգամ ավելի էր։ Ռուսական քաղաքներում իրենց ունեցած պահանջի փողերը գանձելու ցանկություն հայտնող մեր վաճառականներին իրավունք չեն տալիս իրենց երկրում երթևեկելու և այդպիսով արգելք լինում նրանց պահանջների գանձմանը, շատերին վնասով և հուսահատ վերադարձնում և ոմանց էլ սպանում են։ Օսմանյան կառավարության առևտրական նավերին՝ մոտալուտ փոթորկի, կամ ջուր վերցնելու նման անհրաժեշտ կարիքի դեպքում, ռուսական նավահանգիստներին մոտենալիս, գնդակոծում են և թույլ չեն տալիս մոտենալու։ Նման պայմաններում երթևեկող [ռուսական] նավերի վրա Սողոմոնաքից թնդանոթ արձակելու հարցը և մասնավորապես Թիֆլիսի խանի հարցը, պարզապես այլ պայմանների մեջ մտցնելով՝ պնդում են՝ «Եթե կամավոր կերպով մի մուրհակ կտաք, լավ կլինի, հակառակ դեպքում այդ պայմանների իրագործման համար դեներալ Պատյոմկինը 60—70 հազար զինվորներով նշանակվել է սահմանների վրա և ռուսական կայսրուհին էլ [ցարուհին] պիտի գա», այս բոլորը ռուսական դեսպանը պաշտոնապես հայտնեց Օսմանյան կառավարությանը և պատերազմի հրավիրեց։ Գեներալ Պատյոմկինի սահմանի վրա նշանակվելու փաստը, ճիշտ ու ճիշտ նմանում է Ղրիմի դրավման ժամանակ նրանց [ռուսների] ցույց տված ընթացքին։ Այդ պատճառով նրանց նախկին թշնամական ընթացքի վրա ավելացած նոր փաստերը մեջտեղից ամբողջապես վերացրին ապահովությունը և ապացուցեցին նրանց չարամտությունը։

Ապահովության խանգարման հիմնական պատճառը, Ղրիմի Ռուսաստանի տիրապետության տակ մնալն է։ Այդ պատճառով էլ, Օսմանյան կառավարությունը այս հարցը խաղաղության նոր պայմանագրի հետ կապելով, ցանկություն հայտնեց ամրապնդել բարեկամությունն ու Ղրիմն իր նախկին վիճակին վերադարձնել։ Ռուսաստանի դեսպանը՝ «Այդ խնդիրը պետք է դրեմ իմ կառավարությանը, սակայն դրելուց էլ օգուտ չի ստացվի, իմ կառավար-

թյունը Ղրիմից չի հրաժարվում» ասելով, վճռական պատասխան տվեց։ Նման դաղտնի ու հայտնի մի շարք պատճառներով, Օսմանյան կառավարության և Ռուսաստանի միջև պատերազմելը անխուսափելի դարձավ։

Այս իրողությունը հանձնելով մեր բարեկամների խղճամիտ և արդարադատ դատողությանն ու խորհրդածությանը, մեր անկեղծ բարեկամ Վսեմաշուք քրիստոնյա պետություններին ծանուցելու համար տրվում է սույն հայտարարագիրը։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. IV, էջ 280—281)։

«ԹԱՐԻԽԻ ՋԵՎԴԵԹ», ՀԱՏՈՐ V

Այս հատորը բովանդակում է 1205—1209 թթ. դեպքերը, որոնք մեծ մասամբ վերաբերում են Թուրքիայի Եվրոպական մասին [Ռումելիին]։ Պատմագիրը թե այս հատորում և թե առհասարակ իր ողջ «Պատմության» մեջ բավականին մեծ տեղ է հատկացնում նաև Օսմանյան կառավարության ներքին, վարչական, տնտեսական և զինվորական խնդիրներին և այդ կապակցությամբ Սուլթան-Մելիմ III նախաձեռնությամբ կատարված ռեֆորմներին։

1206 թվականի (1719) դեպքերից

Հերակլ խանից ստացված գրությունը

1206 թ. (1719) Յաշում կնքված խաղաղության պայմանագրում Վրաստանի հարցը ձևակերպվեց հատուկ հոդվածով։

Այդ առթիվ Ջևդեթ փաշան ասում է.

«Այս խաղաղության մեջ Ռուսյալուն [Ռուսաստանը] նախկին խաղաղության պայմանագիրը հաստատելուց բացի, Արևմտյան օջաքների և Կուբան գետից այն կողմ գտնվող ցեղերի կողմից հարձակում տեղի ունենալու դեպքում, Օսմանյան կառավարության կողմից վնասների հատուցումը և Թիֆլիսի էյալեթին վնաս չպատճառելը նույնպես մոցրից հաշտության պայմանագրի մեջ և Թուրլե[22] գետից սահմանը որոշելով, էոզին և նրա շրջակայքը իր երկրին կցեց։ Ինչպես հիշվեց, Թիֆլիսին վնաս չպատճառելու հարցը մոցված էր խաղաղության պայմանագրի մեջ։ Սակայն Հերակլ խանը, միշտ դրծը երկու կողմից բռնելով, Ռուսաստանի հովանավորության վրա հենվելով հանդերձ, Օսմանյան կառավարության հետ իր կողմնակցությունը [կապը] բոլորովին ձեռքից չթողեց։ Այդ ժամանակ,

պատմում էին, որ Կարաբեթայի[23] վրայով դեպի Վրաստան բացված ճանապարհները, երկրաշարժի պատճառով քանդվել էին, այնպես որ ռուսական զինվորները սպատ չէին կարող Վրաստան գնալ: Իսկ Դաղստանի էմիրները, պարզ էր, որ գաղտնի կապ բացահայտ, Օսմանյան կառավարության մեկ ակնարկով Թիֆլիսին վնաս պիտի պատճառեին: [Այս պատճառով] Հերակլ խանը Օսմանյան կառավարությանը իր անկեղծությունը արտահայտելուց հետ չմնաց: Խաղաղության կնքումից հետո, իր պատվավոր մարդկանցից մեկի միջոցով Ստամբուլ ուղարկած և Սեդարեթի Դոան ներկայացրած խնդրագրում հայտնում էր, որ սրանից հետո Ռուսաստանի հետ իր հարաբերությունը խզելով՝ չպիտի թերանա Օսմանյան կառավարությանը անկեղծ հպատակություն ցույց տալ և խնդրում է, որ առաջիկայում էլ արժանանա Օսմանյան կառավարության շնորհներին և ողորմությանը:

(«Թարիխի Ջևվդեթ», հատ. V, էջ 27—28):

Զլդրի դեպքերը

Երկար տարիներից ի վեր Զլդրի վալի Սյուլեյման փաշայի և Հերակլ խանի թշնամություն ու նրանց պայքարը պատրվակ բռնելով, ռուսները պահանջել էին նրա [վալիի] պաշտոնազրկումը: Իսկ այդ [պահանջը] Բարձր Սուլթանության պատվին և անկախության սկզբունքին հակառակ լինելով, փաշայի պաշտոնազրկմանը համաձայնություն չէր տրված: Այնպես որ Ռուսաստանի դեմ պատերազմի պատճառներից մեկն էլ այդ հարցն էր: Դեռևս փադիշահական բանակը Ստամբուլից դուրս չեկած, պատերազմի հայտարարությունը որոշ շրջաններում պարզապես պղջում էր առաջացրել, և երբ պատճառ հանդիսացողները հանդիմանության և պարսավանքի ենթարկվեցին, այն ժամանակ վերհիշյալ Սյուլեյման փաշայի բռնություններն ու չարագործությունները, ինչպես նաև հնազանդության կանոններին հակառակ, նրա վարքը նկատի առնելով, ծրագրվեց պաշտոնազուրկ անել նրանց: Սակայն պատերազմի ընթացքում նրա [փաշայի] այդ կողմերից հեռացնելը նպատակահարմար չհամարվեց: 1205 թ. Ջեմազիյել-ախըր ամսին 284, վերոհիշյալ Սյուլեյման փաշան մահացավ, Զլդրի էյալեթը իսլամական կարևոր և ուշադրության արժանի սահմաններից լինելով, Ստամբուլում հատուկ Մեջլիս գումարվեց և այդ հարցը քննության առնվեց...

Ջլդրի վալիության համար մի շարք թեկնածուներ են նկատի առնվում և ի վերջո վալի են նշանակում Ջլդրի նախկին վալի Հասան փաշայի որդի Ֆահակ փաշային։ Այս առթիվ պատմագիրը հիշում է հետևյալ հետաքրքիր նկատառումը՝ վալիի նշանակման հարցում։ Այդ ժամանակ ընդունված կարգով՝ մեռնող վեզիրների ունեցվածքը [հարստությունը] անցնում էր կառավարությանը (մրիին)։ Սյուլեյման փաշայի որդու՝ Շերիֆ-Մուհամմեդ բեյի վալիության թեկնածությունը մերժում են այն պատճառով, որ նա, վալի նշանակվելիս՝ իր հոր հարստությունը երևան չի հանում... իսկ նոր վալիին՝ Ֆահակ փաշային նշանակում են՝ Սյուլեյման փաշայի հարստությունը երևան հանելու պայմանով...

(«Թարիխի Ջևդեթ», հատ. V, էջ 185—187)

«ԹԱՐԻԽԻ ՋԵՎԴԵԹ», ՀԱՏՈՐ VI

1210 թվականի (1795) դեպքերից

Դեպքերը Իրանում և Չերքեզիստանում

Ինչպես հիշվեց, Ռումելիի կողմերում երևան եկած խռովությունները վերացնելու համար, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվեցին, միաժամանակ տեղի ունեցավ Իրանի սահմաններն ամրացնելու անհրաժեշտ նախապատրաստություններ։ Ինչպես ցույց տրվեց I և II հատորներում, Իրանի Շահը՝ Աղա-Մուհամմեդ խանը, Ռուսաստանի նկատմամբ որոշ անարգական վերաբերմունք էր ցույց տալիս, որի պատճառով Կատերինան [Եկատերինան] նրանից վշտացել էր, սակայն այդ ժամանակ զբաղված լինելով Ղրիմի նվաճմամբ, դրա վրա աչք էր փակել, թաքցրել իր թշնամությունը, և Իրանում մի շարք խռովություններ առաջացնելով, բավականաչափ աշխատանք էր տարել Աղա-Մուհամմեդ խանի դեմ, բայց ապարդյուն։ Իսկ Աղա-Մուհամմեդ խանը՝ Ֆարսի, Իրաքի և այլ շրջանների իր մրցակիցներին պարտության մատնելուց, Ադրբեջանը և Դարաբաղը դրավելուց հետո, շարժվել էր դեպի Վրաստան, ավերել ու կողոպտել Թիֆլիսը։ Այնուհետև գնալով Գենջեի վրա՝ հպատակեցրել էր Շիրվանի և Շեքիի երկրները։ Այսպիսով բոլոր կողմերում հաղթանակ էր ձեռք բերել և Իրանում նրան հակառակորդ չէր մնացել։ Նա [Աղա-Մուհամմեդ խանը] Ռուսաստանին պատերազմ հայտարարելու համար մի պատրվակ էր փնտռում և թշնամական արտահայտություններ ցուցաբերում նրա նկատմամբ։ Այն ժամանակ, երբ պարզվեց, որ Դաղստանի խաներից ոմանք միացել են Իրանին և աշխատում են սահմանակից էյալեթի իշխողներին գրգռել Ռուսաստանի դեմ, Կատերինան [Եկատերինան] Աղա-Մու-

համմեդից վրեժ լուծելու, ինչպես և խապերի ծովեղերքում մի քանի իրանական երկրներ գրավելու և կողոպտելու համար, սույն 1210 (1795) թ. իր սահմանները պաշտպանելու պատրվակով պատրաստի զինվորներին Դաղստան ուղարկեց և նվաճեց Դերբենդի բերդը։ Բերդը ռուսական զեներալին հանձնեց Փեթրոսի [Պետրոս Մեծ] ժամանակակից այդ բերդի պաշտպանը՝ 120 տարեկան մի ծերունի։ Երբ այս լուրը Աղա-Մուհամմեդին հասավ, նա մեծաթիվ զորքով շարժվեց դեպի այդ կողմը, հարձակվեց դիմադրության համար բերդից դուրս եկած ռուսական զինվորների վրա, պարտության մատնեց նրանց և ստիպեց դեպի բերդը նահանջել։ Կուբանի կողմերում գտնվող ռուսական բանակը օգնության համար ուղարկվեց դեպի Աջեմի երկիրը։ Այդ շրջանում Ռուսաստանի և Իրանի միջև տեղի ունեցող դեպքերի համառոտ բովանդակությունը վերոհիշյալն էր։

Սակայն անցյալ 1209 թ. վերջում Երևանի և Ղարաբաղի խաները, Ջեյնալ և Աբդուլլահ-Ջելեբի կոչված անձանց միջոցով ուղարկած գրությամբ՝ հաշվի առնելով Աղա-Մուհամմեդ խանի դեպի Ադրբեջան ուղևորվելու լուրերի տարածումը, խնդրում էին կարիք եղած դեպքում, Օսմանյան պետության սահմանների վերներից և միրմիրաններից զինվորական օգնություն տրվի, այդ շրջանների ժողովուրդը՝ Օսմանյան երկիր փախչելու և ապաստանելու դեպքում, ընդունելության և օգնության արժանանա, վերահաստատվի այն բերաթը, որով նորին Վսեմություն Աբդուլ-Համիդ խանի ժամանակ տեղի ունեցած պատերազմում, Անապոլուի բեյլերբեյության տիտղոս է շնորհվել Երևանի խանին։ Այս հարցը վեքիլների ժողովում քննության դրվեց և նկատի առնելով, որ ներկա պայմաններում Աղա-Մուհամմեդ խանին վշտացնելն անհարմար է, և միաժամանակ ապաստանողներին ընդունելն էլ պետության պատվին չհամապատասխանում, որոշվեց՝ պայմանների պահանջի համաձայն, խելացիորեն շարժվել, և եթե այդ շրջանի աշխարհների ռայաներից դեպի այս կողմը փախչող ու ապաստանողներ լինեն, առաջին դեպքում չընդունել, իսկ դարձից հետո էլ վերադառնալ ցանկացողներին արգելք հանդիսանալ։ Այս մասին գրվեց սահմանի պաշտոնյաներին, իսկ Երևանի և Ղարաբաղի խաներին հայտնվեց, որ Օսմանյան կառավարության Իրանի հետ կնքած խաղաղության պայմանագիրը, Շահին և խաներին հատուկ չլինելով, տարածվում է Իրանյան բոլոր երկրների և ժողովուրդների վրա։ Եվ մինչև նրանց [իրանցիների] կողմից պայմանագրին հակառակ

շարժում տեղի չունենա, Օսմանյան կառավարությունը ոչ մի դեպքում իրանցիներին վնաս պատճառելու թույլտվություն չի տա, Իրանյան երկրների վրա ոտք չի դնի և հաշտության պայմանագիրը լրիվ կերպով հարգի։ Վերոհիշյալ պատճառներով բոլոր իրանցիների նման հովանավորությունը անհրաժեշտ է։ Մանավորապես վերոհիշյալ խանների նման Օսմանյան կառավարության հավատարմություն հայտնածների խնդիրը, ընդունելության և թույլտվության է արժանացել և այդ մասին սահմանների պաշտոնյաներին տրվել է անհրաժեշտ հրահանգ։ Այս իմաստով Սեդարեթի կողմից պատասխանագիր գրվեց, Սրևանի խանի տիտղոսի բերթը վերանորոգվեց և ուղարկվեց նրանց մարդկանց միջոցով։ Հետո էրզրումի վալին՝ Զիյա-Յուսուֆ փաշան գրություն ուղարկեց Ստամբուլ և հայտնեց, որ Աղա-Մուհամմեդ խանը Սրևանի բերդը գրավելուց հետո հարձակվել է Թիֆլիսի վրա, տները այրել և ժողովրդին գերել է. 15 օր հետո վերադարձել է Թիֆլիսից 8—9 ժամ հեռավորության վրա գտնված Սընըք-Քյոփրու* կոչված վայրը։ Ըստ այդ տեղեկության այնպես պետք էր հասկանալ, որ Աղա-Մուհամմեդ խանին Ադրբեջանի կողմերում այլևս անելիք չի մնացել։ Օսմանյան կառավարության կողմից անհրաժեշտ նկատվեց զգուշության միջոցներ ձեռք առնել, բայց այդ մասին ոչինչ չգրել և չհայտնել, միայն որոշ քոչվոր աշիրեթների և ավազակների կարգի բերելը, իբրև պատրվակ ցույց տալ։ Համապատասխան պաշտոնյաներին գրվեց, որ կարիք եղած դեպքում, երբ լուր տրվի, նրանք պատրաստ լինեն։ Այդ մասին պատրաստված հրահանգը քննության առնելու համար, Ռեբի ուլ-ախըր ամսին Շեյխ-ուլ-Իսլամի բնակարանում Մեջլիս հրավիրվեց։ Նախապես քննվեց էրզրումի վալիին սերասքերության պաշտոն տալու, նախազգուշության համար անհրաժեշտ նախապատրաստություններ տեսնելու գործը նրան հանձնարարելու հարցը։ Սակայն քանի որ Աղա-Մուհամմեդ խանն այս կողմերի նկատմամբ որևէ շարժում հանդես չի բերում և նման պատրաստությունների ձեռնարկումը Աղա-Մուհամմեդ խանին կարող է կասկածի ենթարկել, այս խորհրդածությամբ որոշվեց թողնել սերասքերության տալու հարցը, միայն գրել էրզրումի վալիին՝ Իրանի նկատմամբ ուշադիր, արթուն և զգույշ լինել, իսկ սահմանի պաշտոնյաներին՝ հրահանգ տրվեց՝ առաջնորդվել նրա [վալիի] կամքով և հրամաններով։ Հետո Շաբան ամսին Զիա փաշայից գրություն ստացվեց,

---

* Սընըք-քյոփրու, բառացի նշանակում է կոտրված կամուրջ։

տրով նա հայտնում էր՝ թե Աղա-Մուհամմեդ խանի ժամանակ դեպի այդ կողմն անցած իրանցի ռայտները իրենց պահանջի վրա չեն այնդում:

Հերակլ խանի միջնորդությամբ բավականաչափ ռուսական զինվորներ էին եկել և սպասում էին նոր ուժերի ժամանելուն. դրությունը ուսումնասիրելու համար Թիֆլիսի շրջանը ուղարկված լրտեսի տված տեղեկություններից պարզվում էր, որ այդ [ռուսական] զինվորները իրենց խոսակցության մեջ ասել են՝ «Մենք Օսմանյան կառավարության արտոնությամբ և համաձայնությամբ Թեմուր-Կափույի կողմից անցնելով, գնալու ենք Աղա-Մուհամմեդ խանի վրա»: Քանի որ այս խնդրում անհրաժեշտ է զգուշությամբ գործել, հետևաբար, Աղա-Մուհամմեդ խանին ներգրավե՞լն է նպատակահարմար, թե՞ Ռուսաստանի կողմը բռնելը: Այս խնդրի մասին պետք է անհապաղ ցուցմունքներ տալ, երևույթների արտաքինից կարելի է եզրակացնել, որ Աղա-Մուհամմեդ խանը մտադիր է առաջիկա գարնանը շարժվել դեպի Երևանի կողմը և հարձակվել Օսմանյան պետության սահմանների վրա: Գարունը մոտ է, հետևաբար նկատի առնելով ազետի երևան գալու հնարավորությունը, անհրաժեշտ է Ստամբուլից Բարձր հրաման ուղարկել ամրապնդելու համար այն հրահանգը, որտեղ առաջարկված է Սիվասի և Մարաշի թիմարի և զեամեթի տերերին՝ նեվրուզին էրզրումի դաշտում ներկա լինել:

Անապայի պահապանը՝ Սեյիդ-Մուստաֆա փաշան իր գրության մեջ հայտնում էր, թե Չերքեզիատանի մի մասը կցված է Դաղստանին: Անհրաժեշտության դեպքում, Դաղստանցի Չերքնայի իշխողը՝ Ումմ [Ամմ]-խանին ներգրավելու համար, ինքը միջոցներ է ձեռք առել: Ում-խանի և Չերքնայի [Չյոքնայի] կապի և Մուհամմեդ բեյ անունով անձնավորության կողմից Աղա-Մուհամմեդ խանի հետ կապված լուրերի մասին արաբերեն լեզվով գրված նամակը Ստամբուլ է ուղարկում: Դաղստանից և շրջակայքից եկողների տված տեղեկություններից երևում է, որ Դաղստանի ժողովրդի որոշ մասը և Կաբարթայի կողմից կումուք, չեչեն և իմաուն ցեղերը դրոշակ բարձրացնելով, հպատակվել են Աղա-Մուհամմեդ խանին, իսկ ոմանք էլ գործի վախճանը մոտ են համարում: Աղա-Մուհամմեդ խանը մտադիր է այս ձմռանը շարժվել Ռուսաստանի ձեռքում գտնվող Կըզլյար-Կալասի բերդի վրա, և այդ պատճառով էլ Կուբան գետի մյուս կողմը գտնվող ռուսական բանակն աստիճանաբար ուղարկվում է դեպի Կըզլյար-Կալասի բերդը: Ռուսները Կաբարթայի ժողովրդից 3 հազարի չափ հեծյալ զինվոր են պահանջել, իսկ կա-

բարթայցիները հրաժարվելով, պատասխանել են՝ «Մենք պատրաստ ենք, որ կողմը պարտվի՝ նրան էլ կկողոպտենք»։ Եթե Ագա-Մուհամմեդ խանը Կրզլյարի կողմը գալու լինի, Կաբարթայցիները նրան հպատակություն կհայտնեն։ Կուբանի մյուս կողմում, ռուսական սահմանին վնաս պատճառելու արգելքի տակ գտնվող չերքեզական ժողովուրդները մտադիր են Կուբան գետն անցնել և ռուսներին վնասել։ Այս փաստը հաստատվում է նրանց խոսակցությունից։ Անապայից մինչև սահմանի գլուխը՝ Հաջիլար բերդը, 120 ժամվա տարածությամբ սահմանների պաշտպանությունը հնարավոր չէ։ Պետք է գարնանից առաջ ցուցմունքներ տալ, թե ինչպես պետք է վարվել այդ խնդրում։

Պետության ղեկավար վեզիրները այս մասին խորհրդակցություն ունեցան և եկան այն եզրակացության, որ եթե Ռուսաստանին կողմնակցություն ցույց տրվի, դա կնշանակի վտանգի և փորձանքի առաջացումը արագացնել և Անապոլուի բանալիները թշնամուն հանձնել։ Եթե Հերակլ խանը Ռուսաստանի հովանավորությամբ և պաշտպանությամբ ուժեղանա, նորից այդ կողմում ուժեղ մի թշնամի երևան պիտի գա և թերևս ժամանակավորապես Ռուսաստանին այդ կողմերը հրավիրի։ Այդ բոլորը պարզ լինելով, բոլորովին նպատակահարմար չէ Ռուսաստանին կողմնակցություն ցույց տալ։ Նմանապես Ագա-Մուհամմեդ խանի կողմնակցությունն էլ, Ռուսաստանի համար խոսակցությունների, հարց ու պատասխանի պատրվակ պիտի լինի, մինչդեռ Օսմանյան կառավարությունը դեռ նոր պատերազմի ազդեցներից ազատված, ձեռնարկել է իր ներքին գործերի կարգավորմանը։ Այնպես որ այս կամ այն կողմին համակրանք ցույց տալը աննպատակ է կացության և ժամանակի տեսակետից։ Այս խնդիրները բացատրվեցին Զիա փաշային, հրահանգ տրվեց չեզոքություն պահպանել, Ագա-Մուհամմեդ խանից վրատահացում ստանալով՝ միջոցներ ձեռք առնել ետ ուղարկելու այս կողմն անցած իրանցի ռայաներին։ Ագա-Մուհամմեդ խանի վրա Ռուսաստանի հարձակմանը Օսմանյան կառավարության կողմից իրավունք և համաձայնություն տալու մասին տարածված լուրերը ղրպարտություն և խաբեբայություն են՝ հորինված ռուս սպաների կողմից. փաշայի խնդրանքի համաձայն Սվապի և Մարաշի վինվորների շարժման հարցը Ստամբուլի կողմից ընդունումը պիտի նշանակեր այդ անմիտ ստերը հաստատել։ Հետևաբար որոշվեց այդ հարցը մեջտեղից հանել։ Սակայն հրաման տրվեց էրզրումի կողմերում առիթներ գտնելով՝ արագացնել միջոցների ձեռ-

164—19

նարկումը։ Գալով Անապայի մութասարրիֆի դրության, մինչև Հաջիլար բերդը 100 ժամվա ճանապարհի երկարություն ունեցող և ժողովուրդը ամբողջությամբ աշիրեթներից և ցեղերից կազմված սահմանի Անապայի մութասարրիֆի կողմից պաշտպանությունը անկարելի նկատվեց։ Սակայն, որովհետև խաղաղության վերջին դաշնագրում, իրրև պայման էր ընդունված վերոհիշյալ ցեղերի կողմից Ռուսաստանին պատճառված վնասների հատուցումը, նկատի առնվեց, որ բացի պաշտպանության համար միջոցներ դրտնելուց, ուրիշ ճանապարհ չկա։ Հետևաբար պետք է հիշյալ ցեղերը կարգ ու կանոնի մեջ պահել և պայմանագրին հակասող դեպքերի տեղիք չտալ առաջիկայում։ Այնուամենայնիվ վերոհիշյալ ցեղերին մեր կողմը գրավելու համար պետք է ջանադիր լինել։ Այդ խնդիրը հարմարագույն ձևով [լեզվով] նրանց էմիրներին, պարագլուխներին, սիփահիներին և այլ գիտակից մարդկանց հասկացնելու մասին, հրահանգներ և ցուցմունքներ տրվեցին և Անապայի մութասարրիֆին ուղարկվեցին։

* * *

Այդ ժամանակ Օսմանյան կառավարությունը Ռուսաստանից զգուշանում էր. միաժամանակ զգուշանում էր Իրանից, հիշելով Նադիր-Շահի հայտնի արարքը ու վերաբերմունքը։ Նադիր-Շահից հետո տեղի ունեցող անընդհատ խռովությունների պատճառով Իրանն ամբողջությամբ քայքայվել էր, ժողովրդի մեծ մասը ոչնչացել և Իրանի նախկին ուժն ու բարեշինությունը չէր մնացել։ Աղա-Մուհամմեդ խանի իշխանությունը աշիրեթական բնույթ ուներ և քոչվորական ձևով էր կազմված։ Երկրի շինարարության և կառավարության ամրապնդման համար ոչինչ չէր կատարվում։ Եթե մինչև անգամ նման աշխատանքներ կատարվեին, Նադիր-Շահի ժամանակվա ուժն ու հզորությունը ձեռք բերելու համար շատ երկար ժամանակ կպահանջվեր։ Հետևաբար, Իրանյան պետությունն այդ ժամանակ զուրկ էր սպառնալի լինելու վտանգից։ Սակայն այդ ժամանակի Օսմանյան պետության վեքիլները, այլ պետությունների ներկա վիճակի հետ լավ ծանոթ չլինելով, որոշումներ էին կայացնում միայն պատմական տեղեկությունների հիման վրա։ Օսմանյան կառավարությունը պատերազմից նոր էր ազատվել և զրաղված էր իր ներքին բարենորոգումներով։ Իսկ Ֆրանսիական ռևոլյուցիայի հետևանքով առաջացած Եվրոպայի խառնակ վիճակը, ամեն րոպե մտահոգության տեղիք

էր տալիս։ Թեև Օսմանյան կառավարությունը չեղոք էր, սակայն պատրաստություններ էր տեսնում։ Այդպիսի պայմաններում Իրանի հարցի ստեղծումը, ինքնուրույնության մտահոգության առարկա էր դառնում։ Աղա-Մուհամմեդ խանը աշխարհի դեպքերից բոլորովին անտեղյակ էր։ Այդ ժամանակ գրված մի քանի գրքերի [բրոշյուրների] վկայության համաձայն, մինչև սույն 10,11 թվականները* Աղա-Մուհամմեդ խանը դեռևս անտեղյակ է եղել Ֆրանսիական ռևոլյուցիային և այդ պատճառով Եվրոպայում ծագած խառնակություններին։ Երևան գալով Իրանում, նա իր տարած հաղթանակով հպարտացած, Ռուսաստանին էլ հաղթելով՝ Կովկասյան երկրները գրավելու և դեպի Աժդերհան [Աստրախան] շարժվելու հիմար ցնորքներով տարված, Ռուսաստանի դեմ պատերազմ էր սկսել։ Մինչդեռ ռուսները, Դերբենդ բերդը գրավելուց հետո, բազմաթիվ բանակներ կազմելով, սկսել էին հարձակվել Իրանյան երկրի վրա։ Աղա-Մուհամմեդ խանը՝ այդպիսի մի վտանգավոր թշնամուն իր դեմ հանել տալով, փորձանքի մեջ էր ընկել, որի համար զղջացել էր։ Ռուսաստանի դեմ Օսմանյան կառավարությունից օժանդակություն խնդրելու համար, հատուկ պաշտոնյաներ էր ուղարկել Ստամբուլ։ Սակայն, ինչպես վերևը հիշվեց, վերջին պատերազմից դեռ նոր ազատված, էոզի բերդը կորցրած, Չերքեզիստանի սահմաններում աշխրեթների ու ցեղերի կողմից Ռուսաստանին պատճառված վնասների հատուցման ծանր ու դժվարին պայմանների տակ ճնշված՝ Օսմանյան կառավարությունը զգուշացավ Ռուսաստանի դեմ թշնամությունից և Աղա-Մուհամմեդի վերոհիշյալ դիմումը անհետևանք թողեց։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. VI, էջ 178—184)։

1211 թվականի (1796) դեպքերից

Իրանի ճամակաբերների գալն ու վերադարձը

Այդ ժամանակ Սեդարեթի Դուռը, Իրանի Շահը՝ Աղա-Մուհամմեդ խանից, նրա էմիրներ՝ Մուհամմեդ-Սաղըք խանի և Ջաֆեր-Կուլի խանի միջոցով, երկու նամակ ստացավ, որոնց բովանդակությունը հետևյալն էր՝ Աղա-Մուհամմեդ խանի կողմից Խորասանը գրավվել է, լեզգի ցեղերից ոմանք Ռուսաստանի հետ միանալով, Դերբենդի կողմերում չարագործություններ և ավազա-

* Ուզում է ասել 1210—1211 թթ. (1795—1796)։

կություններ են կատարում, այդ պատճառով Աղա-Մուհամմեդ խանը շարժվել է Ռուսաստանի վրա։ Հայտնելով այդ մասին, նա ինդրում էր, որ կրոնական միության հիման վրա, բարենպաստակ ջիհադին և նվիրական կռվին մասնակցելու համար, Օսմանյան կառավարությունն էլ [Ռուսաստանին] պատերազմ հայտարարի։

Արդարև, եթե Օսմանյան կառավարությունը և Իրանը միանալով պատերազմեն Ռուսաստանի դեմ, երկու կողմից էլ կարող են օգտվել։ Սակայն այն ժամանակ, երբ Օսմանյան երկիրը դեմառդեմ կանգնած էր Ռուսաստանի և Ավստրիայի նման երկու ուժեղ թշնամիների հանդեպ, Իրանի կողմից ոչ մի վերաբերմունք ցույց չտրվեց։ Իսկ հիմա, երբ Օսմանյան կառավարությունը, հազիվ պատերազմի աղետներից ազատված, զբաղված է իր ներքին գործերը կարգի բերելով, չէր կարող պատերազմ սկսել։ Բացի այդ՝ էրզրումի վալին՝ Զիյա փաշան, իր ուղարկած գրության մեջ հայտնում էր՝ Աղա-Մուհամմեդ խանը հաղթելով Հնդկաստանի Զաման խանին և Բուխարայի խանին, հիմա էլ զբաղվում է Դաղստանով. Դաղստանը գրավելուց հետո, նա՝ Նադիր-Շահի նման որոշ պատճառներ ստեղծելով, նպատակ ունի հարձակվելու Օսմանյան կայսերական երկրի վրա։ Վերոհիշյալ փաշայի կողմից հայտնված մտքերը ոչնչացնում էին ամեն տեսակի վստահությունը, հետևաբար Աղա-Մուհամմեդ խանին չէր կարելի վստահել։ Այս պատճառով Սեդարեթի կողմից ներողամտության խնդրով [մերժողական] պատասխան դրվեց և Սադըք խանի ու Ջաֆեր-Կուլի խանի միջոցով ուղարկվեց։ Այդ ժամանակ Կատերինայի [Եկատերինայի] մահվան հետևանքով, նրա որդու՝ Պավլո-Պետրովիչի [Պավել] Ռուսաստանի կայսր լինելու լուրը Ստամբուլում ստացվեց Ջեմազիյել-ախըրին։ Պավելը կայսերական գահի վրա գահակալելուց անմիջապես հետո, Իրանի հետ խաղաղության պայմանագիր կնքեց և այդ կերպով Արևելյան հարցը փակվեց։ Մի քանի ամիս հետո ստացվեց Պավելի՝ Սուլթան-Սելիմին ուղղած նամակը՝ Ստամբուլի ռուսական դեսպանին իր պաշտոնում թողնելու և վերահաստատելու մասին։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. VI, էջ 215)։

Աղա-Մուհամմեդ խանի մահը

Ինչպես որ վերևը հիշվեց, Աղա-Մուհամմեդ խանը, երբ Դաղըստանում պատերազմով էր զբաղված, Սադըք խանին ուղարկել էր Շուշիի վրա։ Այնուհետև անձամբ Շուշիի բերդը գրավելուց հետո,

ինչ-որ առիթով իր մի քանի ծառաների և մոտիկների վրա գայրացած ասել էր՝ «Վաղը սրանց սպանել կտամ», ու երդվել էր։ Սակայն նրանք [ծառաները] ավելի շուտ շարժվելով, Զիլհիջջե ամսի 20-րդ գիշերը Աղա-Մուհամմեդ խանին, անկողնում քնած ժամանակ, սպանեցին և նրա ունեցած թանկագին գոհարեղենները վերցնելով ապաստանեցին Սադըք խանի մոտ։ Մի քանի պատմագիրների վկայությամբ՝ Սադըք խանը այդ մասին նախապես տեղյակ է եղել։ Ինչ որ է, Սադըք խանը Իրանի վեհապետությանը տիրանալու նպատակով իր բանակով առաջ շարժվեց։

(«Թարիխի Ջևդեթ», հատ. VI, էջ 238)։

Ջևդեթ փաշան իր պատմության VII, VIII և IX հատորներում, որոնք ընդգրկում են 1212 թ. մինչև 1226 թ. (1797—1811) դեպքերը, մանրակրկիտ կերպով խոսում է գլխավորապես Նապոլեոնի, Եգիպտոսի և Արաբիայի դեպքերի մասին։ Այդ հատորներում շատ կարևոր տեղ են բռնում նաև Ռուս-Թուրքական պատերազմի 1221 թ. (1806) դեպքերը, որոնք նույնպես տրվում են մեծ մանրամասնություններով։

1219 թվականի (1804) դեպքերից

1219 թ. Ռուսաստանի և Իրանի միջև պատերազմ է տեղի ունեցել։ Իրանի գահաժառանգը (Շեհզադե) մեծաթանակ զինվորներով շարժվել է Թիֆլիսի վրա։ Սակայն ռուսների կանոնավոր և վարժեցրած բանակի դեմ ոչինչ չի կարողացել անել։ Ռուսաստանի այդ կողմից առաջ շարժվելը Օսմանյան կառավարությանն առանձնապես անհանգստություն պատճառող խնդիր էր, այդ պահին Օսմանյան կառավարությունը այդ հարցին առանձին ուշադրություն էր դարձնում, և սպասում էր պատերազմի արդյունքին։

(«Թարիխի Ջևդեթ», հատ. VIII, էջ 32։)

1222 թվականի (1808) դեպքերից

Սուլթան Սելիմ խանի իշխանության վերջին օրերին ռուսները հարձակվեցին Ախալքալաքի բերդի վրա. սակայն խիստ պարտություն կրելով և շատ մեծ թվով սպանվածներ տալով հետ նահանջեցին։ Արևելքի սերասքերը և էրզրումի վալին՝ Զիա-Յուսուֆ փաշան իրենց բանակով, դուրս եկան ռուսների դեմ։ Սերասքերը՝ Կարսի վալի Մուհամմեդ փաշան մի զորամասով առաջից ուղարկվեց։ Այդ ժամանակ Շորապյալի կողմը գտնված ռուսական բանակը ավելի ամրապ շարժվելով, անսպասելի կերպով հարձակվեց և Մուհամմեդ փաշայի բանակը ոչնչացրեց։ Այն պահին, երբ Զիա փաշան լուր առա-

ցավ ոտանների հարձակման մասին և պատրաստվում էր առաջ շարժվել, Սուլթան Սելիմի գահազրկության սարսափելի լուրը հասավ և այդ պատճառով շփոթված, ինչ անելը չիմանալով, փորձեց մի պատրվակով բանակը հետ քաշել։ Սակայն այդ խառնակության մեջ իսլամական բանակը պարտվեց, մի քանի հարյուր մարդ նահատակվեց և մի քանի հարյուր գերի ընկավ։

Մուհամմեդ փաշան ամբաստանվեց իբրև այդ պարտության պատճառ և դխատվեց։ Նրա գլուխը Ռեջեբ ամսի 18-ին ուղարկվեց Ստամբուլ։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. VIII, էջ 270—271)։

Շիրվանի շրջանում մեծ քանակությամբ հանքեր[24] կային. այս շրջանը գտնվում էր Վանի և Դիարբեքիրի էյալեթների միջև։ Աղդաբնակությունը մասամբ եզդիներից և լեռնցիներից և մասամբ էլ ապստամբ վայրենիներից կազմված լինելով, հնարավոր չէր այդ հանքերը մշակել։ Երբ պարզվեց, որ միրմիրանությունից «Տորթլուքի և օջաքլըքի» կարգով Մուշի մութասարրիֆ, Մուրադ փաշան կարող է այդ շրջանի ցեղերին զսպել և հանքերը մշակել տալ՝ Ռումելիի բեյլերբեյության աստիճանով Դիարբեքիրի էյալեթը տրվեց նրան։ Երբ վերոհիշյալը իր պաշտոնի մասին տեղեկություն ստանալով՝ պատրաստվում էր գործի անցնել, մահացավ և այդ հանքերի մշակման աշխատանքները մնացին նախկին վիճակում։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. VIII, էջ 272)։

1224 թվականի (1809) դեպքերից

«Փադիշահական բանակի գործողությունները» հատվածում պատմագիրը տալիս է ռուս-թուրքական պատերազմի վերաբերյալ մի շարք դեպքերի նկարագրությունը։ Այդ պատերազմական գործողությունները տեղի էին ունենում գլխավորապես եվրոպական մասում։ Պատմագիր Ջեվդեթ-փաշան հիշում է նաև մի քանի, համեմատաբար փոքր դեպքեր Անատոլուի ռազմաճակատից։

«Ինչպես հիշվեց, Ռումելիի սահմանի ամրապնդման հետ միաժամանակ, ջանքեր էին գործադրվում Անատոլուի կողմի պաշտպանության համար։

Էրզրումի վալի և Արևելյան ճակատի սերասքեր Ֆերհատ փաշային հրամայված և հանձնարարված էր՝ ձմեռելու համար անհրաժեշտ վայրերում բավականաչափ պինդորներ թողնելուց հետո, անձամբ գալ Կարս և հատուկ ուշադրություն նվիրել սահմաններին

պաշտպանության գործին։ Նրա տրամադրության տակ Անադոլուի դավառներից մեծ թվով զինվորներ հավաքվեցին, որոշ քանակությամբ զինվոր ուղարկվեց Զորումի կողմից՝ Անապայի[25] պաշտպանության համար։

Լուր ստանալով, որ ռուսները ծովից ու ցամաքից հարձակվել են Ֆաշի վրա, Տրապիզոնի վալի, Սև ծովի Անադոլուական եզերքի սերասքեր Շերիֆ-Մուհամմեդ փաշան անմիջապես որոշ քանակությամբ զինվորներով օգնության գնաց։ Բացի այդ, Ռիզեի ավազանից Թուզջու-Օղլուն մեծ բանակով ուղարկվեց դեպի Ֆաշ։ Այդ պատճառով Քշնամին հետ քաշվեց, սակայն հետո նորից կըրկնեց իր հարձակումը։ Գունիայի սանջակի* մութասարրիֆ և Ֆաշի պաշտպան՝ Բաթումլի-Զադե-Էմին բեյին աչալուրջ լինելու մասին խիստ հրամաններ տրվեցին և Բաթումի նավահանգստի պաշտպանության համար էլ առանձին բանակ ուղարկվեց։ Վրաց ցեղից Գուրիալ անունով օյմաքի պետը պիմելով վերոհիշյալ Շերիֆ փաշային, հայտնել էր, որ եթե Օսմանյան կառավարության կողմից իրեն սերքերդեության տրվի, հավատարմությամբ պիտի ծառայի և չպիտի թույլ տա ռուսներին մոտենալ Ֆաշի շրջանին։ Շերիֆ փաշան խոստացել էր, եթե Քեմհալը ռուսներից կարողանա ազատել, ինքը կդիմի Փադիշահական Դռան և նրա համար սերքերդեության ֆերման կստանա։ Սրա վրա հիշյալ պետը ձեռնարկեց Քեմհալի ետ գրավման և ազատագրման գործին։ Ահա այդպիսի դժվարին պայմաններում, այդ կողմերի [սահմանի] վեզիրների ու պաշտոնյաների միջև երկպառակություն և թշնամություն առաջացավ։ Մասնավորապես վերոհիշյալ Զըլդրի վալիի և Վեզիր-Շերիֆ փաշայի միջև եղած թշնամությունը ավելի սաստկացավ։ Երբ Շերիֆ փաշան շարժվեց, Սելիմ փաշան քաշվեց դեպի Աջարայի կողմերը և Զըլդրի էյալեթը մնաց առանց զինվորի։ Այդպիսի պատերազմական օրերում, Շերիֆ փաշայի՝ իր անձնական հաշիվներով զբաղվելը հատակ էր փադիշահական կամքին. անմիջապես նա պաշտոնազուրկ եղավ և Տրապիզոնի էյալեթը տրվեց Ալայիե սանջակի մութասարրիֆ Ալի փաշային. իսկ Սելիմ փաշային հրամայվեց՝ գնալ Զըլդր և վալիության կենտրոնում մնալով, ուշադրություն նվիրել պաշտպանության գործերին։

Դրանից հետո Ֆերհատ փաշան էլ հեռացվեց և նրա փոխարեն նշանակվեց Հալեբլի-Իբրահիմ փաշան, որը վերահաստատվեց վեզիրության մեջ, ստացավ Տրապիզոնի վալիությունը և Արևելքի ներաոքերությունը։ Մինչև նրա տեղ հասնելը, էյալեթի կարգ ու

* Տե՛ս ծանոթագ. 17։

կանոնի պաշտպանության և էրզրումում հավաքված բանակի ղեկավարության համար մյութեսելիմ նշանակվեց էրզրումի մաքսապետը՝ վեյս-Զադե էմին-Ագան։

Նման քաշքշուկների պատճառով սահմանների պաշտպանության գործը խանգարվում էր։ Իսկ ռուսները այդ առիթից օգտվելով, անմիջապես Ցաշի վրա շարժվեցին և գրավեցին բերդը։ Այս պատճառով Սուխումի բերդի պաշտպանության հարցը դժվարացավ և ավելի մեծ կարևորություն ստացավ։ Դեպի վերոհիշյալ բերդը ռազմամթերք ուղարկվեց, իսկ նրա պաշտպանությանը հսկելու համար, բերդի պահապան Քեշեշ-բեյ-Զադե-Արսլան-բեյին՝ կայսերական հրաման։

* * *

Այդ ժամանակ Իրանի Շահն էլ Ռուսաստանի հետ պատերազմի մեջ էր։ [Շահի] որդին և գահաժառանգը՝ նշանավոր Աբբաս-Միրզան, իբրև Իրանի բանակի գլխավոր սերդար, անձամբ ռուսական սահմանումն էր գտնվում։ Կրոնական միության պահանջով երկու իսլամական պետությունների՝ միասին թշնամու դեմ դուրս գալը պարտադիր լինելով, հիշյալ գահաժառանգի սահմանի վրա գտնվող պաշտոնյաներին, մոտիկության և միաբանության համապատասխան վերաբերմունք ցույց տալու մասին, Արևելքի սերասքեր Զըլդըրի Վալիին, Վանի, Կարսի և Բայազետի մութասարրիֆներին կայսերական հրամաններ ուղարկվեցին։ Աբդուլ-Ռզաքի «Իրանի պատմության» մեջ գրածի համաձայն, այդ ժամանակ Ռուսաստանի կողմից Իրանին առաջարկված հաշտության պայմանների մեջ այսպիսի մի կետ կար,— եթե Իրանն իր երկրի որոշ մասերը Ռուսաստանին տալու լինի, այդ դեպքում Ռուսաստանը համաձայնություն է տալիս Իրանին, դրա փոխարեն գրավելու Օսմանյան երկրի որոշ մասերը՝ ինչպես էրզրումն ու Բաղդատը։ Սակայն Աբբաս-Միրզան դրանով չխաբվեց և մերժեց այդ հիմար առաջարկը։

(«Թարիխի Ջեվդեթ», հատ. IX, էջ 174—176)։

1225 թվականի (1810) դեպքերից

Բանակցություններ Իրանի հետ միություն կազմելու համար

...Օսմանյան պետությունը բազմաթիվ ներքին դժվարություններով զբաղված լինելով հանդերձ, պատերազմում էր Ռուսաստանի նման մեծ թշնամու դեմ։ Տարօրինակ է, որ այդ ժամանակ Իրանը

էլ Ռուսաստանի հետ պատերազմի մեջ լինելով, երկու իսլամական երկրները չէին միացած և իրար չէին օգնում։ Իրանի Շահի դահաժառանգը՝ Աբբաս-Միրզան, որին հանձնված էր Իրանի պետության վարչական և զինվորական իշխանությունը, Իրանի գործերի վարիչ Հաջի-Հյուսեին Աղայի միջոցով, սույն 1225 թվականի Մուհարրեմ ամսին Ստամբուլ ուղարկած գրության մեջ, խոսելով Օսմանյան պետության և Իրանյան պետության միջև, իսլամական կապի անհրաժեշտությամբ ամրապնդված փոխադարձ բարեկամության և անկեղծության մասին, գովում էր Զըլդըր վալի՝ Սելիմ-Սաբիթ փաշայի՝ թշնամու դեմ պաշտպանվելու գործում ցույց տված ջանքն ու եռանդը, գանգատվում էր նրա հակառակորդի՝ Շերիֆ փաշայի Օսմանյան կառավարությանը ցույց տված անհավատարմությունից։ Սեդարեթի կողմից պատասխան գրվեց և հայտնվեց, որ Շերիֆ փաշան Տրապիզոնից պաշտոնազուրկ է եղել և նրա փոխարեն նշանակել է Չերխեջի-Ալի փաշան, նախորդ էմիր-Ուլ-Հաջ-Իբրահիմ փաշային տրվել է Արևելքի ճակատի սերասքերությունն ու էրզրումի էյալեթը։ Կրոնական ուժեղ կապի հիման վրա, մեր ընդհանուր թշնամու՝ Ռուսաստանի դեմ համատեղ կռվելը անհրաժեշտություն է։ Այդ հարցը առաջ տանելու համար, իբրև դեսպան Իրան պիտի ուղարկվի մեծ մոլլաներից՝ Յասինի-Աբդուլ-Վեհաբ էֆենդին։

...Յասինի-Զադե-Աբդուլ-Վեհաբ էֆենդին նշանակված էր դեսպան Իրանի Ֆաթհալի-Շահի մոտ, սակայն նրա ուղևորությունը 7—8 ամսով ուշացավ։ Վերջապես նվիրական Ռամազանի վերջում, պատրաստված փառիշահական նվերները նրան հանձնվեցին և, Աբբաս-Միրզային ուղղված խառիշահական նամակով, նա նվիրական տոնից հետո Ստամբուլից մեկնեց դեպի Իրան։

* * *

Փադիշահի կողմից Աբբաս-Միրզային ուղղված նամակի պատճենը տրված է Ջևդեթ-փաշայի «Պատմության» 9-րդ հատորում։ Արևելյան պալատական լեզվով, փարթամ և շքեղ տիտղոսներով, ածականների և խոսքերի տարափով հարուստ այդ նամակում, Սուլթանը հայտնում է, որ իր դեսպանը լիազորված է Իրանի Շահի և կառավարության հետ բանակցելու երկու պետությունների միջև փոխադարձ և ուժեղ կապ ստեղծելու հարցի շուրջը։ Դեսպանը՝ Յասինի-Զադեն 1226 թ. հասնում է Իրանի մայրաքաղաքը՝ Թեհրան։ Իրանին հատուկ սովորության համաձայն, դեսպանը մեծ պատվի է արժանանում, ընդունվում է Ֆաթհալի-Շահի կողմից և մատուցում նվերները։ Օսմանյան կառավարության կողմից դեսպանը առաջարկում է՝ 1) Բաբան-փաշաներին, մասնավորապես Աբդուլ-Ռահմանը

փաշային, Իրանի կողմից տիրություն ցույց չտալ, 2) Ախալխայի և Կարսի կողմերում գտնվող Օսմանյան կառավարության պաշտոնյաներին, կարիք եղած դեպքում, օգնություն ցույց տալ։ Դրա փոխարեն Ֆաթհալի-Շահը առաջարկում էր, 1) Շևրի-Զորի էմիրներին նշանակել Իրանի կառավարության համաձայնությամբ. 2) Բաղդատի վալիները պետք է գործեն Իրանի կառավարության հետ համաձայնության գալով։ Հետո դեսպանը գնում է Թավրիզ և բավական երկար ժամանակ մնում Աբբաս-Միրզայի մոտ։ Պատմագիր Ջևդեթ փաշան այսպիսի դնահատական է տալիս այդ բանակցություններին՝ «երկու իսլամական պետության ընդհանուր թշնամու՝ Ռուսաստանի դեմ, միացած կերպով դուրս գալու հիմնական նպատակը, Իրանի անտեղի, Օսմանյան պետության ներքին գործերին միջամտելու բնույթ ունեցող առաջարկներով՝ անհետևանք մնաց»։

(«Թարիխի Ջևդեթ», հատ. IX, էջ 262—263)։

1226 թվականի (1811) դեպքերից

Դեպքերը Վրաստանում

Այն ժամանակ, երբ օսմանցիներն ու իրանցիներն իրար հետ վեճով էին զբաղված, ռուսները երկու կողմից առաջ էին շարժվում, Դաղստանի ու Վրաստանի երկրներում իրենց ազդեցության շրջանակն ու տիրապետությունը ընդարձակում։ Անցած 1225 թ. ռուսական հրամանատար Տորմոսովը, իր բանակով Թիֆլիս եկած ժամանակ, Աշըք-Բաշի խան Սոլոմոնին բարեկամաբար Թիֆլիս էր կանչել. նա էլ եկել էր։ Տորմոսովը, Սոլոմոն խանին բանտարկելով, իր մարդկանց հրաման էր տվել նրան Պետերբուրգ ուղարկելու համար։ Սակայն Սոլոմոնը կռահելով այդ՝ իր մի քանի մարդկանց հետ Թիֆլիսից գիշերով փախել եկել էր Ախալխա, իր դիվանի քարտուղարին ուղարկել Շահի մոտ, իսկ Քեչխուարեվ և Դավիթ անունով սեյդարներին՝ Ստամբուլ։ Սոլոմոնի փախուստի հետևանքով (Թիֆլիսից), ռուս գեներալը նրա ազնաուրներին, այսինքն՝ էմիրներին և զեկավարներին աքսորեց տարբեր կողմեր։

Ռուսները, վրացիներին հովանավորելու պատրվակով, նախապես Թիֆլիսի էյալեթը գրավելուց հետո, այս անգամ էլ, ինչպես վերևը հիշվեց, Աշըք-Բաշի վիլայեթը բռնի իրենց իշխանության տակ առան։ Վրացիները, ռուսների վատ վերաբերմունքից վշտացած էին։ Երբ Սոլոմոն խանը Ախալխա եկավ, բավականաչափ բաջեր նրա շուրջը հավաքվեցին և սկսեցին կռվել ռուսների դեմ։ Քեչխուարեվն ու Դավիթը Ստամբուլ գալով և հայտնելով, որ իրենք վաղուց Օսմանյան կառավարության հպատակներ են, օգնություն խնդրեցին։ Պատերազմական այդ օրերին այս հանգամանքը [օգ-

նությունը] Օսմանյան կառավարության կողմից վրացիներին Ռուսաստանի դեմ օգտագործելու յավագույն պատրվակ լինելով, 1226 թ. Ռեբիուլ-էվվել ամսին Սոլոմոն խանին կայսերական բարձր ֆերման գրվեց, խալաթի հետ միասին այն նրան հանձնելու համար, Էրզրումի վալի և Արևելքի սերդար էմին փաշայի հետ ուղարկվեց. միաժամանակ վերոհիշյալ վրացի սերդարներին էլ ետ ուղարկեցին: Սոլոմոնի միջոցով վրացի ցեղերին Ռուսաստանի դեմ օգտագործելու մասին, Ջըլդրի վալի Շերիֆ փաշային ցուցմունքները տրվեցին:

(«Թարիխի Ջևվդեթ», հատ. IX, էջ 267—268):

«ԹԱՐԻԽԻ ՋԵՎԴԵԹ», ՀԱՏՈՐ X, XI, XII

1228 թվականի (1813) դեպքերից

Պատմագիր Ջևվդեթ փաշան, հիշելով, որ Իրանի կառավարությունը դժգոհ էր մնացել Օսմանյան կառավարության Ռուսաստանի հետ կնքած Բուքրեշի հաշտության դաշնագրից, այդ հարցը քննում է բազմակողմանի կերպով: Նա հիշում է 1226 թ. Օսմանյան կառավարության և Իրանի միջև տեղի ունեցած և ապարդյուն անցած բանակցությունները: Հետո հիշում է, որ չնայած Օսմանյան կառավարության բարյացակամ վերաբերմունքին, Իրանը խախտել էր բարեկամական կապերը: Եվ այդ կապակցությամբ հիշում է նաև հետևյալ դեպքը:

«...Իրանցիները, խախտելով վանի սահմանը, Օսմանյան կառավարության հպատակ եղող հայերից մեծ թվով գերիներ էին տարել: Աբդուլ-Վահաբ էֆենդիի դիմումի հիման վրա, Աբբաս-Միրզան փոխանակության կարգով ազատել էր նրանց [գերիներին] Իրանյան զինվորների ձեռքից: Այսպիսի դեպքերի պատճառով, Օսմանյան կառավարությունն իրավունք ուներ պանգատվելու. մինչդեռ իրանցիների պանգատը անտեղի էր: Օսմանյան կառավարության Ռուսաստանի հետ կնքած խաղաղության պայմանագրի առթիվ, Իրանի կառավարությունը պանգատվել էր Իրանի Անգլիական դեսպանին. դեսպանը, հայտնելով Օսմանյան կառավարության արդարացի լինելը, հանձնարարել էր Իրանին Ռուսաստանի հետ նույնպես խաղաղություն հաստատել...: Բացի այդ, հայտնի է, որ Բուքրեշի բանակցությունների ժամանակ, Օսմանյան կառավարության պատվիրակներն աշխատել էին Իրանի ներկայացուցիչներին ևս մասնակից դարձնել այդ բանակցություններին: Թեև դա նրանց չհաջողվեց, սակայն այդ մասին խաղաղության դաշնագրի մեջ մի նախադասություն մտցրին, և այդ կերպով ջանք գործ դրին երկու

իսլամական երկրների կապը ամրապնդելու ուղղությամբ։ Սակայն խաղաղության պայմանագրի նորից մի առժամանակ հետաձգելը նպատակահարմար չէր»։

Հետո պատմագիրը 1231 թ. դեպքերի շարքում հիշատակում է Վանի նկատմամբ իրանցիների կատարած ոտնձգությունների մանրամասնությունը։

«...Երբ Վանի սահմանների վրա կատարված հարձակման մասին հարցում արվեց, նրանք [իրանցիները] պատասխանեցին՝ «Մենք տեղեկություն չունենք. Մուհամմեդ-Ալի-Միրզան Բաղդատի, իսկ նոյն իսկ Վանի կողմերում իրենց կատարած ասպատակություններով, դավաճանություն են գործել. մենք համաձայն չենք»։ Երբ այս մասին Բաբա փաշայի կողմից տեղեկություն ուղարկվեց Ստամբուլ, այնտեղ, նկատի ունենալով, որ այն պահին, երբ Անատոլուի ամեն կողմերում խառնակուվյունները շարունակվում են՝ Իրանի դեմ պատերազմ ձեռնարկելը նպատակահարմար չէ։ Սահման խախտողներն ասպատակներ են, հետևաբար չպետք է Իրանի սահմանի վրա հարձակում գործել։ Միայն մեր կողմն անցնել փորձողներին պետք է զսպել։ Այդ իմաստով Բաբա փաշային պատասխան գրվեց։ Եվ, երբ ստացված գրությունից պարզվեց, որ Աբբաս-Միրզան Ռևանդուզը[25] գրավելու համար խոշոր ռազմական պատրաստություն է տեսնում, Բաբա փաշային և սահմանի այլ պաշտոնյաներին զգուշության մասին կայսերական հրաման տրվեց։

(«Թարիխի Ջևդեթ», հատ. X, էջ 222—223)։

1229 թվականի (1814) դեպքերից

[Հայ] կաթոլիկների ապստամբությունը

Ջևդեթ փաշան իր «Պատմության» XI հատորում նորից խոսում է հայ կաթոլիկների մասին։ Թարգմանում ենք ամբողջությամբ։

...Այդ ժամանակ սկսվեց Ստամբուլաբնակ կաթոլիկների հեռացումն ու աքսորը։ Հիջրի 1195 թ. (1780) սկսած կաթոլիկ վարդապետները շրջապատելով փադիշահական երկրում, աշխատում էին հայերին կաթոլիկ դարձնել։ Իսկ հայոց պատրիարքը, փադիշահական ֆերմանով իրեն տրված իշխանությամբ և իրավունքով, կաթոլիկ դավանափոխների («դյոնմե») նկատմամբ խստություն էր ցույց տալիս։ Կաթոլիկները բնդհանրապես Օսմանյան երկրում անկախ եկեղեցիներ չունեին և նրանց մեռելները, հայոց պերեզմանատուն-

ում չընդունվելու պատճառով, հաճախ անթաղ էին մնում և գարշահոտում. նրանք ստիպված էին վինում մեռելները թաղել իրենց տների բակերում: Սակայն [հայ կաթոլիկները] խղճի բռնադատության ենթարկվելով, ավելի էին ուժեղանում և կաթոլիկական դավանանքը նրանց մեջ, օրըստօրե ավելի էր տարածվում: Պապի կողմից մի եպիսկոպոս եկավ Ստամբուլ և գաղտնի կաթոլիկական դավանական մտքեր տարածեց. կարճ ժամանակամիջոցում հայ կաթոլիկների թիվը զգալի չափով մեծացավ: Այդ ժամանակ ամենահայտնի սարրաֆներից Թանդըր-Օղլու Ակոբը և Դավիթ-Օղլու Անտոնը նույնպես կաթոլիկություն էին ընդունել և աշխատում էին կաթոլիկներին հայերից անջատել. [կաթոլիկների] առանձին մի համայնք ստեղծելու նպատակով, նրանք բացահայտ մտքեր էին տարածում ու այդ հարցում վեքիլներին համոզելու ջանքեր գործ դնում: Այդ իսկ պատճառով Թանդըր-Օղլին աքսորվեց Լիմնի [կղզին], իսկ Դավիթ-Օղլին՝ Հռոդոս [կղզին]:

Այդ ժամանակ որոշ վեքիլներ՝ «քրիստոնյա ռայաները ինչ դավանանք ուզում են ընդունել, թող ընդունեն, մեր ինչի՞ն է պետք» ասելով՝ ուզում էին [այդ խնդիրն] անուշադրության մատնել: Իսկ մի քանի վեզիրներ՝ «կաթոլիկները, Պապին Քրիստոսի փոխանորդն (խալիֆան) համարելով կապված են արտասահմանի հետ և Օսմանյան երկրում խռովություններ են առաջացնում» ասելով, պատճառ էին թե առաջներում պապերի պատճառով ինքչա՞ն արյուն է թափվել: Դավանական խնդիրների մեջ պետության միջամտությունը անիմաստ լինելու պատճառով, սկզբում վեքիլների առաջին կարծիքը նախընտրելի թվաց: Սակայն նկատի ունենալով, որ սարրաֆների մեծ մասը հայ դավանանքում մոլեռանդ են՝ երկրորդ կարծիքը ընդունվեց: Բացի այդ, այն ժամանակ Օսմանյան կառավարությունը ճանաչում էր միայն օրթոդոքս և հայ համայնքները [եկեղեցիները]: Օրթոդոքսների կրոնական պետը Ստամբուլի հույն պատրիարքն էր: Կարիք եղած դեպքում, հունադավանները նրա միջոցով էին կըրթվում և կրոնական պետեր նշանակվում և կամ հեռացվում:

Հայերի կրոնական պետը, սկզբից ի վեր գտնվում էր Իրանյան երկրում, Երևանի էյալեթում՝ էջմիածնի եկեղեցում [վանքում]: Սակայն, բացի դրանից [հայերը] երկու ընդհանուր պետեր էլ ունեին— մեկը Կոզանում՝ Սիս կոչված վանքում, իսկ մյուսը Վանի վիլայեթում՝ Աղթամարի վանքում: Ստամբուլում գտնվող հայոց պատրիարքին, հունաց պատրիարքի չափ իրավունքներ էին տրված և նրա միջոցով հայ համայնքի գործերը վճռվում էին պետության

ցանկության համաձայն։ Իսկ կաթոլիկները, որովհետև կապված էին պապի հետ, նրանց եպիսկոպոսների նշանակումն ու հեռացումը նրա կամքից էր կախված։ Միաժամանակ կաթոլիկ դավանափոխների, այսպես կոչված «ալա-ֆրանգա»* ճանապարհով գնալը՝ ազատությունից ու անկախությունից ձառելը, ուշադրություն էր գրավում։ Շանի-Զադեն** իր «Պատմության» մեջ հիշատակում է, որ հայ կաթոլիկներից մեկը, կիսահարբած վիճակում, իր բաժակակից մուսուլմանին ասել էր՝ «Ո՛վ սուլթանս, կգա ժամանակ, երբ մի առավոտ զարթնելիս պիտի տեսնենք, որ ձեր դռան առաջ երկու գինվոր է կանգնած. դրանից ձեզ, հյուրերի շափ անգամ նյութական ու բարոյական վնաս չի լինելու, մենք կազատվենք ձեր բռնությունից, միասին ազատ և հավասար կլինենք, ինչ խոսք, որ այդ բոլորիս համար էլ լավ կլինի»։

Այս և նման խորհրդածություններն էլ պատճառ դարձան երկրորդ կարծիքի ընդունվելուն։

Թևև Առնավուդլուքում*** ապրող լատինները կաթոլիկներ էին, սակայն սկզբից ջիղիե և այլ բազմաթիվ հարկերից ազատված էին և նույնիսկ պետության գինվորական ծառայության մեջ էին ընդգրկված։ Սակայն այդ ժամանակ դեռևս՝ լատինն ի՞նչ է, կաթոլիկն ի՞նչ է, հարցերին Բաբ-Ալին հարկ եղածին պես ծանոթ չէր։

Կաթոլիկների նկատմամբ նման խիստ վերաբերմունք ցույց տալը, Ավստրիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի նման կաթոլիկ պետությունների դժգոհության պատճառ դարձավ։ Անգլիացիները, որ բողոքականներ են, կողմնակից են անհատի խղճի ազատության, նրանք նույնպես դրան [կաթոլիկների հալածանքին] հավանություն չտվին։ Իսկ ռուսները ամեն կերպ ցանկանում էին Օսմանյան կառավարությանը Եվրոպայի աչքում ատելի դարձնել, միայնակ թողնել, դավանական հարցերին միջամտել։ Կաթոլիկների նկատմամբ նման խիստ միջոցների դործադրության աննպատակահարմարությունն ու ժամանակին անհամապատասխան լինելը, կառավարությանը ավելի ուշ գիտակցեց, որը և պատճառ դարձավ նախապես ընդունված երկրորդ կարծիքից հրաժարվելու։

(«Թարիխի Ջևդեթ», հատ. XI, էջ 45—46)։

— — —

* Ալա-ֆրանգա — (ֆրանսերեն՝ à la France) — ըստ եվրոպականի (ֆրանսիականի)։

** Շանի-Զադե, պետական պաշտոնական տարիքեր։

*** Առնավուդլուք — կոչվում էր Թուրքիայի Իսլիանյան թերակղզու կալվածներից Ալբանիան (Առնավուդ — Ալբաներեն բառից)։

Պատմագիր Ջևդեթ փաշան մանրամասնորեն նկարագրում է երկրի տարբեր մասերում հետզհետե ավելի լայն չափեր ստացած խռովարարական, ապստամբական և ավազակային շարժումները, որոնք հաճախ ընդգրկում էին ամբողջ էյալեթներ և սանջակներ։ Խռովարարները հաճախ խոշոր բանակներ կազմած պատերազմում էին իրար դեմ, կողոպտում, ավերակ դարձնում ամբողջ շրջաններ, իսկ Օսմանյան փադիշահական կառավարությունը անկարող էր զսպել այդ չարագործ վալիներին, վեզիրներին, յեղապետներին և նման ավազակային տարրերին։

Այդպիսի շարժումներ են նաև Վանի և Դիարբեքիրի շրջաններում տեղի ունեցած գեպքերը, որոնց վերաբերող հատվածները թարգմանում ենք ամբողջությամբ։

Դեպքեր Վանում և Դիարբեքիրում

Վանի բերդապահ՝ Մուհամմեդ-Դերվիշ փաշան, Մուշի սանջակի մութասարրիֆ միրմիրան Սելիմ փաշայի դեմ ունեցած թշնամության պատճառով, նրանից վրեժ լուծելու համար, անցյալ տարի Սեքքի աշիրեթը նրա դեմ էր դրդռել, Վանի էյալեթից որոշ մարդկանց և Իրանին հպատակ մի քանի աշիրեթներ իր շուրջն հավաքել և Սեքքի-Աբդուլլահ-Օղլու-Սյուլեյմանին բազմաթիվ քրդերով Մուշի սանջակի Բուլանըղ կոչված վայրն ուղարկել ու այդ շրջանները կողոպտել էր տվել։ Սելիմ-փաշան էլ փոխադարձաբար «Զըփլաք-Շեյխ» անունով անձի ղեկավարությամբ բազմաթիվ քուրդ ինվազիաներով կողոպտել էր Վանի էյալեթին ենթարկվող Ադիլջեվազի գավառը։*

Չնայած դրանք պետության պաշտոնյաներ էին և երկրի պաշտպանության ու բնակիչների հովանավորության պարտականություն ունեին, սակայն նրանք իրարից վրեժխնդիր լինելու համար համարձակվում էին կայսերական երկիրը ավերակի վերածել և իրարից դանգատվել։ Այս հանդամանքը պարզվել էր էրզրումի վալի Ահմեդ փաշայի զեկուցումից, նախապես պաշտոնով էրզրում, Մուշ և Վան գնացած և այդ ժամանակ արդեն Ստամբուլ վերադարձած Սեյդա էֆենդու տեղեկագրից և Վանի բերդի ձախ թևի աղա Դերվիշ փաշայի ձևոքից Ստամբուլ փախած Աբդուլլահ Աղայի բանավոր տեղեկություններից։ Էրզրումի նախկին վալի Ջելալ-էդդին փաշայի կողմից Դերվիշ փաշայի դեմ տրված ցուցմունքներն էլ հաստատում էին վերոհիշյալ տեղեկությունները։ Բացի այդ, Դերվիշ

---

* Զըփլաք-Շեյխ՝ բառացի նշանակում է մերկ շեյխ։

փաշան ամբողջովին տարբեր ընթացք ընդունելով, համարձակվել էր վանում «մանղր» փող կարել։ Այդ փողերից չորս հատ Սեյդա-էֆենդին Ստամբուլ էր բերել և հանձնել։

Դերվիշ փաշան Իրանի կողմերումն էլ բռնություններ էր կատարել, որի հետևանքով իրանցիները սահմանն անցնելով Սեղ-Մաթեղ բերդը ավերել էին։ Նրա պաշտոնազրկության և հեռացման մասին էրզրումի վալի Ահմեդ փաշայից էին տեղեկացել։ Իր պատասխանում փաշան հայտնում էր՝ Սելիմ փաշային կարելի է օգտագործել Դերվիշ փաշայի դեմ, սակայն, որովհետև նրա զինվորները կողոպտիչներ են, մինչև անգամ եթե նա խոստանա հանկարծակի կերպով վան մտնել, հավանական է, որ վանի ժողովուրդը, պատվի [նամուս] կռվի անվան տակ, ստիպված կլինի Դերվիշ փաշային հպատակություն ցույց տալ։ Վանի բնակչությունը ներկայումս Դերվիշ փաշայից երես է դարձրել, իսկ դրսում գտնվող Հեքարիի, Խիզանի, Բոհթանի աշիրեթների բեյերը բայքայված են և եթե կարիք եղած դեպքում, նրան հաջողվի Սերքի աշիրեթից և մի քանի այլ աշիրեթներից փոքրաթիվ զինվորներ հավաքել, դրանց պարտության մատնելը դժվար չի լինի, մանավանդ, որ ներկայումս, Դերվիշ փաշային թշնամի աշիրեթները միանալով, տարբեր կողմերից հարձակվել են վանի վրա և քաղաքից կես ժամ հեռավորության վրա եղած բոլոր կամուրջները դրավել և դրանով իսկ արգելել հացամթերքի փոխադրությունը։ Նրան պատժելու ամենահարմար ժամանակն է։ Իսկ եթե հետաձգվի, ապա նկատի ունենալով քրդերի հայտնի բնավորությունն ու խառնվածքը, նրանց միջև գոյություն ունեցող սառնությունը կարող է երկար չտևել և փոքր առիթով կարող է նորից միության վերածվել։

Այդ պատճառով էրզրումի նշանավոր մարդկանցից Խափանաքչի-Զադե անունով հայտնի Մուստաֆա-փաշա-Զադե-Իբրահիմ բեյը և Ահմեդ փաշայի զինակից՝ Կափուջի-Բաշի-Ալի-Աղան մեծաթիվ զինվորներով վանի վրա ուղարկվեցին և որոշվեց, որ այս գործում մասնակից դարձնեն նաև Մուշի մութասարրիֆ Սելիմ փաշային։ Դերվիշ փաշայի Իրան փախչելու հավանականությունը նկատի ունենալով, նրան չընդունելու և չօգնելու մասին Իրանի գահաժառանգ՝ Աբբաս-Միրզային և Երևանի սերդարին նամակներ գրվեցին։

Ռեբիով-ախըրի սկզբում անհրաժեշտ պատրաստություններ սկսվեցին։ Սակայն Ջեմազիյել-էվվելի սկզբում Ահմեդ փաշան օրհասական մահով մեռավ և էրզրումի էյալեթն ու վանի սերասքերությունը Զըլդրի վալի՝ Հաֆիզ-Ալի փաշային, իսկ Կըր-Շեհիրի սան-

ջակը Դերվիշ փաշային տրվեց, Վանի բերդապահությունը՝ միրմիրանության աստիճանով, վերոհիշյալ Էմինի բեյին հանձնվեց։ Դերվիշ փաշային Վանից բռնությամբ դուրս հանելու համար նշանակվեցին Մուշի մութասարրիֆ՝ Սելիմ փաշան և այլ մարդիկ։ Հանգուցյալ Ահմեդ փաշայի զինակից Ալի-Աղան միրմիրանության աստիճանով այս գործում նշանակվեց։

Երբ Հաֆըզ-Ալի փաշան պատրաստվում էր Վանի արշավանքին, Դերվիշ փաշան փադիշահական հրամանին հպատակված լինելու համար, թեև Վանից դուրս էր եկել, սակայն իր պաշտոնավայրը չդնաց, այլ գնաց Խոյի կողմը և Վանից վեց ժամ հեռավորության վրա գտնվող մի վայրում կանգ առավ։ Կըր-Շեհրի սանջակի եկամուտը իր շրջանը կառավարելու համար անբավարար համարելով՝ մի ուրիշ պաշտոն խնդրելու մասին Հաֆիզ-Ալի փաշայի հետ բանակցություն սկսեց։ Հաֆիզ-Ալի փաշան իր կողմից նրան մխիթարեց, հավաստիացրեց և հայտնեց, որ Սադրազամի կողմից էլ իր նկատմամբ տարբեր վերաբերմունք ցույց չի տրվելու։ Այսպիսով, Էմինի փաշան մտավ Վան և ձեռնարկեց քաղաքի պաշտպանության գործերին։ Դերվիշ փաշան Վանում իրեն կողմնակից ավազակների հետ գաղտնի բանակցելով, նրանց իր կողմը գրավեց, իր շուրջը հավաքած քուրդ զինվորներով ևս վերադարձավ, անսպասելի կերպով քաղաք մտավ ու Վանի բերդը գրավեց. ժողովուրդը ստիպված նրան հպատակություն ցույց տվեց։ Երբ Ստամբուլում լուր ստացվեց, որ Էմինի փաշան, իր ծայր աստիճանի հուզմունքից ու արժանապատվությունից դրդված, ռազմամթերքի պահեստը կրակ տալով, իր մարդկանց հետ միասին անձնասպան է եղել, փադիշահի զայրույթը բորբոքվեց։ Անմիջապես Իշելի մութասարրիֆ՝ Սերթ-Մահմուդ-փաշան Վանի պաշտպան, իսկ Էրզրումի վալի Հաֆըզ Ալի փաշան Արևելքի սերասքեր նշանակվեցին և նրանց տրամադրության տակ Ստամբուլից Թնդանոթաձիգ (Թոփջի), արաբաջի և խումբարաջի զինվորներ ուղարկվեցին։ Բացի այդ, այնտեղ ուղարկվեցին Ախալխայի զինվորները և Ջըլդրի բեյլերբեյի՝ Ալի-փաշան, Բայազետի և Ալաշկերտի մութասարրիֆը և Էրզրումում գտնվող բոլոր կովի ընդունակները, ինչպես նաև շրջակայքում գտնվող ավազանին և աղաները։

Տրապիզոնի վալի Խուսրեվ փաշան, կայսերական հանքերի վարիչը, Բողոքի մյութասարրիֆ Նուրուլլահ փաշան, Սիվասի վալի Լութֆի փաշան, Մարաշի վալի Հյուսեին փաշան, Ռեկայի

164—20

և Դիարբեքիրի վալի Բահրամ փաշան մեծ քանակությամբ զինվորներ հավաքեցին։

Երբ նրանք զբաղված էին այսպիսի մեծ չափի պատրաստություններով, խռովություն առաջացավ նաև Դիարբեքիրում. կարիք եղավ Վանի համար պատրաստված ուժերի մի մասը առանձնացնել և ուղարկել Դիարբեքիր։ Դիարբեքիրի էյալեթը, Ռեկայի էյալեթի հետ միասին՝ գտնվում էր Բահրամ փաշայի իշխանության տակ։ Այդ ժամանակ նա [փաշան] Դիարբեքիր էր գնացել և Դիվան կազմելով՝ խալաթ հագել։ Դիարբեքիրի ազդեցիկ մարդկանցից Շեյխ-Զադեի թոռը՝ Մուհամմեդ բեյը, մյուֆթին՝ Մեսուդ էֆենդին, երևելիներից Կարա-Խոջա-Օղլուն և Սերդարը, չցանկանալով վալիի ներկայությունը, Դիարբեքիրում պահանջում էին, որ մյութեսելլիմության ձևով այն կառավարվի և այդ պաշտոնը հատկացվի իրենց։ Այդ նպատակով նրանք աշխատում էին խռովություն առաջացնել։ Բահրամ փաշան տեղեկանալով այդ մասին, թեև [խռովության] առաջն առել էր, սակայն ինչպես վերևը հիշվեց, զբաղված էր Դիարբեքիրից հապար զինվոր պատրաստելու և էրզրումի վալիին ուղարկելու գործով, իսկ մյութեսելլիմ Գորանի-Զադե Ալի-Աղան էլ պատրաստվում էր գնալ իբրև բաշբուղ, այնպես որ վերոհիշյալ Մուհամմեդ բեյը իր կողմնակիցներին դրդելով, ժողովրդին ոտքի հանեց և ատիպեց հարձակվել փաշայի տան վրա։ Փաշան դռները փակելով՝ ինքնապաշտպանության դիմեց։ Ներսից-դրսից հրացանաձգություն սկսվեց. ճանապարհները պաշտպանելու համար փաշայի դրսում թողած զինվորները հետզհետե դեպի Դիարբեքիր գալով՝ փաշայի ուժերը ավելացրին։ Նա գլխատված ապստամբների գլուխները Ստամբուլ ուղարկեց։ Սակայն, որովհետև շուկան ժողովրդի ձեռքում էր, սննդամթերքի նեղություն էր զգացվում։ Բահրամ փաշան այս դեպքերի մասին տեղեկագիր ներկայացնելով, ասում էր անհրաժեշտ է, որ հանքերի կառավարիչ՝ Աբդուլլահ փաշայի կողմից քիչ քանակությամբ զինվոր և հացահատիկ ուղարկվի, որովհետև Դիարբեքիրի ժողովուրդը իր մի քանի ելույթների համար անպատիժ էր մնացել և շփանալով այս անգամ այսպիսի մի խռովություն է հարուցել. անհրաժեշտ է Շեյխ-Զադեի թոռ Կարա-Խոջա-Օղլուին և Սերդարին մահվան դատապարտել, իսկ Նայիբին և Մյուֆթիին էլ աքսորել։ Առանց այդ պատիժների հնարավոր չ՚ լինի խռովությունը վերացնել։ Նա այս մասին անհրաժեշտ կայսերական հրամանն էր խնդրում։ Փաշայի դրությունը Ստամբուլում ստացվեց Շեվվալ ամսի կեսին և անմիջապես դրան համապատասխան հրամանի տըր-

վեց։ Նախապես Վան ուղարկելու համար Հալեպի, Ադանայի և Սիվասի շրջաններում հավաքված զինվորներին Դիարբեքիր ուղարկելու մասին նույնպես Բարձր հրաման տրվեց։

...Վերադառնանք Վանի հարցին։ Սերասքեր Հաֆիզ-Ալի փաշան և իր սրամադրության տակ եղած պաշտոնյաները՝ Վանի պահապան Սերթ-Մահմուդ փաշան և ուրիշները, երբ Վանի շրջակայքը հասան, Դերվիշ փաշան հակառակորդների օգնությամբ գրավեց [պարբսպի դռները], և երբ Մահմուդ փաշան Վան մտավ, Դերվիշ փաշան ծպտված փախավ, սակայն հետապնդման և հետախուզության շնորհիվ, թե ինքը և թե իր մի քանի կողմնակիցները բռնվեցին և զնհատվեցին։ Նրանց գլուխները Ստամբուլ ուղարկեցին։ Զիլկադե ամսի սկզբին այդ գլուխները ուրիշներին օրինակ հանդիսանալու համար, ցուցադրության դրվեցին։

(«Թարիխի Ջևվդեթ», հատ. XI, էջ 64—65)։

1235 թվականի (1819) դեպքերից

Պատրիարքի դեմ դուրս եկած հայերի պատժվելը

Ինչպես հիշվեց անցյալ 1233 թ. դեպքերի շարքում, կաթոլիկական դավանանքը Օսմանյան երկրում բավականաչափ տարածված էր. կառավարությունը միջամտելով այդ խնդրում, կաթոլիկների պարագլուխներից մի երկուսին աքսորել էր և դրանով խնդիրը փոքր ինչ մեղմացել էր։ Հայ կաթոլիկների մի մասը տատանողական դրության մեջ էին, նրանք մասնակցում էին թե՛ հայկական և թե՛ կաթոլիկական կրոնական աւարտղություններին։ Հայոց պատրիարքը այս երկու համայնքի միջև հակառակություն պատճառող խնդիրները մեջտեղից վերացնելով, հայերին և կաթոլիկներին միացնելու հիմար մտքերով էր տարված։ Նրա մեջ արտագրավ խոսքերով այդ մտքերն արթնացնողները՝ խորամանկ և խարդախ, գաղտնի կաթոլիկություն ընդունած վարդապետներն էին։ Սրանք պատրիարքին այնպիսի մտքեր էին ներշնչում, որոնց հետևանքով բոլոր հայերը աստիճանաբար կարող էին կաթոլիկ դառնալ. իսկ պատրիարքը տգիտաբար այդ պայմանները առաջարկում էր հայերին՝ իբրև խրատական միջոց։

Սույն 1235 թվականի Զիլկադեի 11-րդ կիրակի օրը, հայերը՝ «Դու մեզ վերջ ի վերջո կաթոլիկ պիտի դարձնես, այլևս ի՞նչ պիտի լինի», ասելով, պատրիարքի վրա հարձակվեցին։ Պատրիարքը շատ դժվարությամբ կարողացավ նրանց ձեռքից ազատվել և փախչել։

Այդ իրարանցման ժամանակ վրա հասան ոստիկանական պաշտոնյաները և մինչև որ կարողացան հավաքվածներին ցրել, մի քանի մարդիկ վիրավորվեցին և մի քանի ազդեցիկ և խոսքի տեր մարդիկ էլ ձերբակալվեցին: Կատարված քննության հետևանքով խռովարարների պարագլուխները երևան հանվեցին: Այդ ժամանակ նման հանրապետական բնույթի խմբակցությունները գրավում էին կառավարության ուշադրությունը, մտահոգություն և անհանգստություն պատճառում նրան: Այդ պատճառով խռովության մասնակիցներից մի քանիսը աքսորվեցին և բուն խռովության պարագլուխներից չորսը, մահվան դատապարտվեցին:

(«Թարիխի Ջևդեթ», հատ. XI, էջ 81—89):

1236 թվականի (1820) դեպքերից

Իրանի դեպքերը

Իրանցիները Օսմանյան կառավարության զբաղված լինելուց օգտվելու առիթի էին սպասում: Երբ Հունաստանի խնդրով, Օսմանյան կառավարության դժվարություններն ավելանում էին, նրանց [իրանցիների] կիրքն ու ագահությունը նմանապես ավելանում էր և փոխվում նրանց ընթացքը: Այն ժամանակ, երբ Օսմանյան կառավարությունը հունական ապստամբների դեմ ծովից և ցամաքից մարտեր մղելով էր զբաղված, Իրանի սահմաններում շարունակվում էին պատերազմական պատրաստությունները: Մանրամասնությունը հետևյալն է: Սահմանի վրա գտնվող որոշ աշիրեթներ, մի կողմում ձմեռում, իսկ մյուս կողմում ամառանոց էին գնում. երբեմն Օսմանյան կառավարությանը երբեմն էլ Իրանին էին հպատակվում: Այսպիսի անորոշ հպատակությամբ այդ աշիրեթները հաճախ երկու պետության միջև խոսակցության և վեճի առարկա էին դառնում: Այդպիսի աշիրեթներից էր որոշ ժամանակից սկսած Մուշի, Մանազկերտի և Արճեշի սանջակներում, երբեմն էլ Իրանում ձմեռող Հեյդերանլի աշիրեթի աղան՝ Մահմուդ-Աղան, որը 500 տնով Մուշի սանջակումն էր ապրում, նրա եղբայրը՝ Կասըմ-Աղան, նմանապես եկել և բնակվել էր Մուշի ու Մանազկերտի սանջակներում: Երբ սրանք մերժեցին իրենց եկած տեղը վերադառնալ, Երևանի սարդարն ու Խոյի խանը պատրաստվեցին մեծաթիվ զինվորներով նրանց վրա գնալ և դեպի Իրան քշեցնել: Այս մասին Իրանից գրավոր կերպով հայտնվել էր Կասըմ-Աղային: Այդ ժամանակ կայսերական երկրի սահմանների պաշտոնյաներից ստացված զեկուցումներից

պարզվում էր, որ Երևանի Սերդարը պատրաստվում է Մուշի մութասարրիֆ Սելիմ փաշային իր եղբոր բաշբուղությամբ դեպի Մուշի շրջանն ուղարկել երկու թնդանոթ, 12 զենբերեք* և բազմաթիվ զինվորներ. Իրանի հպատակներից մի շարք քրդեր, Իրանյան զինվորների հետ խառն, հարձակվել էին Կարսի էյալեթի Կաղզվան ուանջակի վրա, հակառակ խաղաղության պայմանագրին, ժողովրդի անասուններն ու ունեցվածքը կողոպտել, թալանել և Իրան էին տարել. Բայազետի բնակիչներից որոշ մարդիկ իրենց ապրանքներով և ինչքերով կարավանով երբ էրզրում են գնում, Երևանի էյալեթում, Հաջի-Բայիր անունով գյուղի մոտ, Զեյնալլու Հասան-Աղան, 300-ից ավելի ձիավոր, հետևակ և փոքր թվով իրանցի հեծելազորի հետ միասին, հարձակվում է կարավանի վրա, մի քանիսին վիրավորում, սպանում է, և հափշտակելով ըստ դաֆթարի քանակությունը հայտնի ապրանքներն ու անասունները՝ երեք բեռ ապրանք փոխադրում է Երևանի բերդը. Ջելալի ցեղը Ինջե-Սու, Օրթա-Քեոյ, Բոզ-Քեոյ և այլ 6 գյուղի բնակիչների կենդանիները քշում տանում է. Վանի էյալեթի Մահմուդի սանջակում, Աբաղա Նահիեյում ապրող եզդի աշիրեթից Զոբան-Օղլու-Աբդի-Աղան և եղբայրը ներկայումս եկել են Մուշի կողմերը:

Հեյդերանլու աշիրեթը նախապես ապրում էր Դիարբեքիրի էյալեթի Մեֆարկին սանջակում և երկու նալիրական քաղաքներին ենթակա ավազակային մի աշիրեթի օյմաքն էր. սրանք նախապես, որոշ ժամանակով, եկել էին դեպի Մուշի, Մանազկերտի և Էրջիշի սանջակները: Մուշի նախկին Մութասարրիֆ Մուրադ-փաշայի ժամանակ, 10 տարուց ավելի ձմեռել էին այդ սանջակներում: Հետո որոշ ժամանակ գնացել և մնացել էին իրրև հյուր: Եզդի աշիրեթը ապրում էր Վանի էյալեթի Մահմուդի սանջակի Աբաղա գավառակում: Սրանից առաջ որոշ թվով տներ, դարձյալ իբրև հյուր, գնացել էին դեպի Իրան, սակայն հետո, ետ էին եկել: Հետևաբար սրանց մասին Իրանը որևէ պահանջ ներկայացնելու իրավունք չուներ: Սակայն, սրանից առաջ իբրև դեսպան, Իրան գնացած և վերադարձած Սուլեյման-Հաղի էֆենդիին Իրանի շահը հայտնել էր, որ Օսմանյան երկրի սահմանների վրա կատարված հարձակումներին ինքը բոլորովին համաձայնություն չի տվել, և թե պետությունների միջև կնքված խաղաղության պայմանների շարունակումը և պահպանումը

---

* Զենբերեք — բառացի նշանակում է գոպանակ, ռազմական իմաստով՝ շարժելու և ճնշելու հատուկ երկաթության ագեղ:

իր հիմնական պահանջն է և նա այդ մասին սահմանների պաշտոնյաներին անհրաժեշտ հրահանգներ է տվել։ Ջնայած դրան, նման բռնություններ տեղի էին ունենում. այդ շրջանները Աբբաս-Միրզայի իշխանության տակ լինելով, նման անցանկալի դեպքերի առաջն առնելու և այս անգամ Կարսի շրջանում կողոպտված և հափշտակված ապրանքներն ու ինչքերը խաղաղության պայմաններին համաձայն, վերադարձնելու անհրաժեշտության մասին, Սեդարեթի կողմից, Մուհարրեմի սկզբին, Աբբաս-Միրզային գրություն ուղարկվեց։

Այդ ժամանակ Իրանի պետության վիճակը շատ տարօրինակ էր։ Իրանի շահը «խաղաղության պայմանների գործադրությունը իմ հիմնական նպատակն է», ասում էր դեսպանը՝ առատ խոստումներ էր տալիս։ Սակայն ի՞նչ օգուտ, որ սերդարների և վալիների գործերը ոչ մեկին չէին համապատասխանում և այդ պատճառով էլ Օսմանյան կառավարությունը Իրանի նկատմամբ իր վստահությունը կորցրած լինելով, Էրզրումի վալի Խուսրեվ փաշային տվեց Արևելքի սերասքերությունը և նրան հրավարտակ ուղարկվեց։ Միաժամանակ այդ շրջանների վիճակին և դեպքերին ուշադրություն նվիրելու մասին ցուցմունքներ տրվեցին։ Սրանից առաջ Իրանի քրդերից որոշ թվով ավազակներ, սահմանը խախտելով մտել էին Կարսի մոտ գտնվող Քյոռ-Օղլի բերդը և այնտեղ ապրում էին։ Սրանք այդ շրջանի գյուղերի վրա հարձակվելով կողոպտում և բռնություններ էին գործ դնում։ Սահմանների պաշտոնյաներին հրաման տրվեց վռնդել այդ ավազակներին՝ առանց Իրանի սահմանն անցնելուս Հետո ավազակները անցան դեպի Բայազիտի սանջակը և հարձակվելով Դիադինի գավառի մի շարք գյուղերի վրա՝ նրանցից մի քանիսը այրելով՝ առաջ անցան և Բունջելու գյուղում բանակ հաստատեցին։ Մուշի մութասարրիֆը, որ ուներ Ռումելիի Բեյլերբեյիի տիտղոս, Սելիմ փաշայի բանակի դեմ կռվելով՝ եկավ և հասավ Սելիմ փաշայի, Մուշի դաշտում գտնվող բնակավայրը՝ Չեվրիմա կոչված վայրից մեկ և կես ժամ հեռավորության վրա։ Երբ այդ մասին տեղեկություն ստացվեց, սերասքեր Խուսրեվ փաշան, անմիջապես, Սելիմ փաշային անհրաժեշտ ռազմամթերքով և զինվորներով, երեք հատ թնդանոթով և 1000 ձիավոր զինվորներով օգնություն ուղարկեց։ Այս մասին Բարձրագույն Դռանն էլ տեղեկացրած լինելով, վանի բերդապահ՝ Աերի-Մահմուդ փաշային և Բայազիտի մութասարրիֆ Աբդուլ-Համիդ փաշային գրավոր հրամաններ տրվեցին ավազակներին վռնդելու և անհրաժեշտ զինվորներ հավաքելու և պատրաստ պահելու մասին։ Այդ ժամանակ Սե-

ֆի-Մահմուդ փաշան, տեղեկություն ստացավ, որ իրանցիները Վանի էյալեթի Հեքարի գավառում, բուն Վանից 12 ժամ հեռավորության վրա գտնվող Ջարի բերդը պաշարել են։ Անմիջապես Վանի ժողովրդին և պատրաստի զինվորներին իր քեթխուդա Իսմայիլ բեյի գլխավորությամբ ուղարկեց։ Սակայն սրանք դեռևս ճանապարհի կեսին էին, երբ լուր ստացվեց, որ վերոհիշյալ բերդի բնակիչները հպատակվել են իրանցիներին...

Հեքարիի այլ բերդերն էլ, Ջարի բերդի օրինակին են հետևում. Օսմ. կառավարությունը բավականանում է նոր զինվորական ուժեր հավաքելու մասին հրահանգներ տալով։

Պատմագրի ասելով՝ կառավարությունը Հունաստանի խնդրով զբաղված լինելով, Իրանի հետ ևս բախվելու կողմնակից չէր։ Քննադատելով աշիրեթների և ապստամբների նկատմամբ կառավարության քաղաքականությունը, Ջևդեթ-փաշան ասում է՝

«...Նահանգներում բոլոր ազդեցիկ ու կարող մարդիկ, իրավանիրավ, մի-մի պատրվակով սպանվում կամ աքսորվում էին։ Այս հանգամանքը աշիրեթների և ցեղերի բեյերին ու աղաներին վախեցնում էր և Իրանի սահմանի վրա գտնվող բոլոր աշիրեթները Իրանի կողմն էին անցել։ Ընդամենը այդ ժամանակ Իրանի դրությունը ավելի խառն և վարչությունը ավելի քայքայված էր, սակայն աշիրեթի բեյերն ու աղաները Իրանի վերաբերմունքից ավելի գոհ էին, որովհետև իրանցիները նրանց նվերներ էին տալիս. բայց հետո տվածից մի քանի անգամ ավելին, բեյերի և աղաների միջոցով աշիրեթներից առնում էին. պարտզուխները այդ բանից գոհ էին։ Նրանք աշիրեթներից թեև ոչինչ չէին պահանջում, բայց պետության անունով իրենց պահանջածը կարողանում էին առանալ։ Այս պատճառով աշիրեթները Իրանի պաշտոնյաներից, վերջիններն էլ աշիրեթներից գոհ էին։ Աշիրեթային և ցեղային ժողովուրդները միշտ իրենց պետերին են հետևել։ Իրանի սահմանի վրայի աշիրեթներից շատերի հպատակությունը կասկածելի լինելով, անհրաժեշտ էր նրանց պետերին սիրաշահել և օգտագործել։ Այս մասին Բաբը-Ալին, Իրանի մերձանների շափ խելացիորեն շարժվել չէր կարող»։

Այդ ժամանակ Բայազիտի շուրջը փաշաների միջև երկարատև արյունալի կռիվներ են տեղի ունենում, որի ժամանակ քրդական աշիրեթներն էլ օգտագործվում են։ Իսկ աշիրեթները առիթից օգտվելով՝ կողոպտում ու թալանում են ժողովրդին։ Այդ դեպքերը մանրամասներն հիշված են Ջևդեթ-փաշայի «Պատմության» մեջ։

Իրանի սահմանի վրա շարունակվող դեպքերը գնալով ավելի ուժեղանում և ի վերջո երկու պետության մեջ պատերազմի բորբոքման պատճառ են դառնում։

...Հետո իրանցիները հունական ուղղության ուժեղացումը նպաստավոր առիթ համարելով, սկսեցին ավելի բարձրից խոսել։ Այսպես, Աբբաս-Միրզան էրզրումում գտնվող իր պաշտոնյա Ալի-Բեյին տեղեկացրել էր, որ տեղի ունեցած բռնությունների պատճառով, այս տարի Իրանի հաջիների հաջ* գնալը և վանին հացահատիկ տալը Իրանի կառավարությունը արգելում է։ Հայտնելով Ալի-Բեյին այդ կարգադրությունը, նրան շտապ կերպով Իրան վերադառնալու հրաման էր տվել։ Էրզրումի վալի և Արևելքի սերասքեր Խուսրեվ փաշան, Բաբը-Ալիին տեղեկացնում էր, որ իրանցիները որոշ ժամանակից ի վեր, խաղաղության պայմաններին հակառակ, կայսերական երկրի սահմանների վրա հարձակվում, կողոպտում և թալանում են։ Նրանց բարեկամությանը չի կարելի վստահել։ Այս պատճառով Բաբը-Ալիի սահմանում գտնվող վալիներին և մութասարրիֆներին կայսերական գրություն ուղարկվեց և հայտնվեց, որ իրանցիները, հունական խռովության կապակցությամբ, կարող են միանալ Ռուսաստանի հետ Օսմանյան կառավարության դեմ։ Նկատի առնելով այդ, ըստ այնմ պետք է արթուն և զգույշ լինել։

Իրանցիները, ինչպես հիշվեց, հարաբերությունները խզելով սկսեցին մի շարք վայրերում հարձակվել Օսմանյան երկրի սահմանների վրա։ Այն պահին, երբ Օսմանյան կառավարությունը, Հունաստանի հոգսերով էր զբաղված, անսպասելիորեն ծագեց Իրանի պատերազմը։ Բաղդատի թևում իրանցիները պարտվեցին, սակայն էրզրումի կողմում հաղթությունը նրանց կողմը մնաց։ Աբբաս-Միրզան Զիլհիջջեի 12-ին իր շերխեջին** Հասան-խան-Կաջարին Թավրիզից դեպի Խոյ ուղարկեց, և ինքն էլ շարժվեց նրա հետևից։ Հասան-խանը անսպասելի կերպով եկավ և Թոփրաք-Կալան գրավեց։ Աբբաս-Միրզան էլ եկավ և գրավեց Բայազիտը։ Էրզրումում բանտարկված Փեհլևան փաշան փախավ Բայազիտ և ստիպված եղավ Աբբաս-Միրզային հպատակություն հայտնել։ Աբբաս-Միրզան Բայազիտը նրան հանձնեց։ Հետո Ալաշկերտի պաշտպանությունը հանձնեց Աբդուլ-Համիդ փաշային և ինքը շարժվեց դեպի Էրզրում։

---

* Հաջջ — նվիրական Մեքքե քաղաքում ուխտի գնալը, այդ ուխտին մասնակցողը՝ Հաջի է կոչվում։

** Զերխեջի — բանակի առաջից շուրջանակի շարժվող և կռվող թեթև զորախումբ։

Բայազիտի առանց կռվի գրավումը իրանցիների կողմից, շրջակայքում սարսափ սարսածեց։ Այդ շրջանի պաշտպանության համար նշանակված Ջեչեն-Ջադե-Հասան փաշայի բանակը քայքայվեց և ինքն էլ ստիպված եղավ նահանջել դեպի Էրզրում։ Թոփրաք-Կալայի կողմում, դեռևս հավաքման մեջ եղող Օսմանյան զինվորները նույնպես նահանջեցին։ Հեյդերանլի աշիրեթը Դիարբեքիրի շրջանում էր։ Նրանց հետևից շարժվող իրանական մեծաթիվ բանակը, այդ շրջանում մի շարք վայրեր ավերեց և կործաննեց, բազմաթիվ անասուններ կողոպտեց և Օսմանյան պետության բազմաթիվ ռայաններին գերի վերցրեց։

Այդ ժամանակ իրանցիները գրավեցին նաև Բիթլիսը։ Մուշի մութասարրիֆ՝ Սելիմ փաշան իրանցիներին հակամետություն ցույց տվեց, Աբբաս-Միրզան նրան սպահովության բույրուլթի ուղարկեց և խանության աստիճան տվեց։ Աբբաս-Միրզայի կողմից մի ուրիշ զորամաս, Սեֆեր ամսի կեսերին գրավեց Էրջիշի բերդը։ Ձմեռը վրա հասնելով, Աբբաս-Միրզան իր բանակով Թավրիզ վերադարձավ։ ...Ռեուֆ-փաշան Էրզրումի վալի և Արևվելքի սերասքեր նշանակվեց... Գարնանը Արևելքի սերասքեր Ռեուֆ փաշայի կողմից Ջաբբար-Ջադե-Մուհամմեդ-Ջելալեդդին փաշան շերխեջի նշանակվեց և Մուշի մութասարրիֆ Սելիմ փաշան նրա տրամադրության տակ դրվեց։ Ջելալեդդին փաշան Թոփրակ-Կալայի վրա հարձակվեց և բերդը պաշարեց։ Աբբաս-Միրզան Շաբանի վերջերին իր բանակով դուրս եկավ Թավրիզից և հասնելով Խոյ քաղաքը, շարժվեց Ջելալեդդին փաշայի վրա։ Երբ նրան մոտեցավ, խիստ ուժեղ հարձակում գործեց։ Ջելալեդդին փաշան սկզբում կարողացավ նրա հարձակումները հետ մղել. սակայն Աբբաս-Միրզան, Իրանի բոլոր աշիրեթները հավաքելով և Օսմանյան կառավարության հպատակ քրդական աշիրեթների մեծ մասը իր կողմը գրավելով, հսկայական բազմությամբ հարձակման անցավ և վերջ ի վերջո Ջելալեդդինի բանակին պարտության մատնեց։ Մուշի մութասարրիֆ Սելիմ փաշան, ինչպես հիշվեց, իրանցիների կողմը հակված լինելով, նրա տրամադրության տակ եղած 8 հազարի չափ քուրդ ձիավորները, իրենց նիզակներին կոթնած, հանդիսատես մնացին և Ջելալեդդին փաշային չօգնեցին... Տարօրինակ է։ Աբբաս-Միրզան, Թոփրակ-Կալայում Շերխեջի-փաշայի զորամասը խորտակելու ժամանակ, նրա բանակում սոսկալի խուճապի հիման-

դուքյուն առաջ եկավ, այնպես որ իրանցիները, իրենց մեռելները թաղելու ժամանակ չէին գտնում։ Այդ ժամանակ այս շրջաններում խոլերայի հիվանդության մասին դաղափար անգամ չունեին։ Այդ հիվանդության անսպասելի կերպով երևան գալը, սարսափ տարածեց, իրանյան բանակը քայքայվեց և Աբբաս-Միրզան ստիպված եղավ նահանջել։

Շատ չանցած հաշտության բանակցությունները սկսվեցին։

Հետո պատմագիրը խոսում է Բաղդատի ճակատի պատերազմական գեպքերի մասին։ Պատերազմական գործողությունները շարունակվում են փոխադարձ հաջողությամբ։ Խոլերան այստեղ էլ մեծ ավերումներ էր գործում։ Ճակատի հրամանատարությունն, այստեղ էլ, Աբբաս-Միրզային է տրվում։ Պատմագիրը ասում է՝

«...Իրանցիները՝ խախտելով խաղաղության պայմանները, հարձակման անցան։ Օսմանյան կառավարությունը Իրանի վաճառականներին ամեն տեղ իր հպատակների նման հովանավորում էր, մինչև անգամ Ստամբուլում գտնվող Իրանի վաճառականների իրավունքները պաշտպանելու համար, Կապի-Զադե-Թահիր-էֆենդիին խնամակալ և վերահսկիչ նշանակեց, որը Իրանի վաճառականների գործերը շարիաթի օրենքներով և առանց ծախքի էր վարում։ Սակայն պատերազմի պատճառով, անխուսափելի կերպով, առևտրական գործերը վնասվում էին, այդ պատճառով իրանցի վաճառականները խնդրագիր ներկայացնելով Իրանի Շահին՝ հայտնեցին հետևյալը. «Երբ Օսմանյան կառավարությունը, ապստամբության բարձրացրած հունական ավազակների ոչնչացման համար մի շարք ուղղություններով զինվոր ուղարկելով էր զբաղված, իսլամական ընդհանուր միության պահանջի համաձայն, փոխանակ մենք նրան օգնելու, առանց պատճառի հաշտության դաշնագիրը խախտելով, նրա դեմ պատերազմում ենք, դա միանգամայն հակառակ է շարիաթին։ Բացի այդ, առևտրական հանապարհները փակվել և իրանցիների ապրուստի միջոցները ոչնչացվել են։ Այնուամենայնիվ, Օսմանյան կառավարությունը, իրեն հատուկ գթությամբ, մեր ապրանքները իր վաճառականների ապրանքներից ավելի է պաշտպանում և մեզ իր շնորհներին է արժանացնում»։

Նրանք [Իրանի վաճառականները] իրենց կառավարությանը կոչ էին անում՝ հաշտություն կնքել։ Օսմանյան կառավարությունը զբաղված լինելով Հունաստանի հարցով, կողմնակից էր մի քանի առաջ վերջ տալ Իրանի հետ ունեցած պատերազմին։ Շատ չանցած

Երկու կողմից պատգամավորներ նշանակվեցին և բանակցություն սկսեցին: Հետևանքի մասին կխոսենք առաջիկա տարվա դեպքերի շարքում:

(«Թարիխ Ջևվդեթ», հատ. XII, էջ 3—13):

1238 թվականի (1822) դեպքերից

Հաշտության կնքումը Օսմանյան պետության և Իրանի միջև

Ինչպես որ ցույց տվինք անցյալ տարվա դեպքերում, Աբբաս-Միրզան Թոփրակ-Կալայից Թավրիզ վերադառնալուց հետո, նրա և Յրևելքի սերասքեր Ռեուֆ փաշայի միջև որոշ բանակցություններ տեղի ունեցան: Երկու կողմերն էլ հաշտության հակամետ լինելով, ուշն 1238 թ. կեսին, Օսմանյան կառավարության կողմից սերասքեր Ռեուֆ-փաշան պատգամավոր նշանակվեց, իսկ Իրանի կողմից՝ Իրանի Շահի որդու և գահաժառանգի՝ Աբբաս-Միրզայի արտոնագրով, խաղաղություն կնքելու համար պատգամավոր նշանակվեց Միրզա Մուհամմեդ-Ալին, որը Ջևվալ ամսի 13-ին Էրզրում եկավ. հաջորդ օրը սերասքեր փաշայի հետ տեսակցելուց հետո, կառավարության շենքում, ինքը և իր քեթխուդան՝ Միրզա-Ահմեդը Արևելքի բանակի դեֆթերդարը՝ Հաջի-Սեյդ-էֆենդիի ներկայությամբ բանակցություններ սկսեցին:

Խաղաղության պայմանագրի հիմք ընդունվեց 1159 թ. Նադիր Շահի հետ կնքված հաշտության պայմանագիրը, որով հարցերի լուծումը հեշտանում էր: Սակայն երբ Իրանի դեսպանը՝ Սեբեքլի և Հեյդերանլի աշիրեթների Իրանի հպատակներ լինելու մասին խոսեց և նրանց վերադարձը պահանջեց, վիճաբանությունը երկարեց: Բանակցությունները հասան խզման աստիճանին: Վերջապես մի քանի պայմաններով աշիրեթների հարցի լուծումը գտնվեց: Հաշտության պայմանագիրը պատվիրակների կողմից ստորագրվեց և Ստամբուլ ներկայացվեց: Ստամբուլում, ընդունված կարգով փադիշահի կողմից հաստատվեց: Ջիլհիջջեի 5-րդ օրը Անադոլուի մուհասեբիջի՝ Մուհամմեդ-Նեջիբ-էֆենդին, իբրև երկրորդ պատգամավոր Էրզրում ուղարկվեց և հաստատված պայմանագրերը փոխանակվեցին: Այս ձևով Իրանի հետ սկսված վեճը լուծվեց:

(«Թարիխի Ջևվդեթ», հատ. XII, էջ 88):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լոռիի աւծաբաճաճմերի մասին *խոսելիս, պատմագիրը նկատի ունի Ախթալայի և Ալահվերդու պղնձահանքերը, որոնցից ստացվում էր նաև որոշ քանակությամբ արծաթ: Այդ հանքերը հայտնի էին «Միսխանե» (միս-պղինձ) անունով:*

2. Ասեֆի պալատը *(«Սարայի-Ասեֆի»), «ասեֆ»՝ վեզիրներին հատուկ տիտղոս է: Ասեֆի-Սարայ կոչվում էր վեզիրների պալատը, ուր հավաքվում էին վեզիրները և քննում պետական հարցերը: Հետագայում «Բաբը-Ասեֆի», Սարայի-Ասեֆի» կոչումը փոխարինվեց «Բաբը-Ալիով» (տե՛ս ծանոթություն 4):*

3. Բիրեջիկ — *նախկին Հալեպի վիլայեթի Ռաֆայի սանջակում գավառական կենտրոն է և Եփրատ գետի ափին նավահանգիստ:*

4. Բաբը-Ալի՝ *բառացի՝ Բարձր, Բարձրագույն Դուռ: Ստամբուլում համանուն պողոտայի վրա Օսմանյան պետության կառավարական տունն է, ուր գտնվում էին Մինիստրների խորհուրդը և մի քանի կարևոր մինիստրություններ: Բաբը-Ալին եվրոպացիները տառացի թարգմանությամբ անվանել են* La Sublime Porte, *իսկ ռուսերենը՝* „Блестательная Порта“:

5. Ռեիս-էֆենդի — *հնում այդպես էին կոչվում Օսմանյան կառավարության այն վեզիրները, որոնք փաստորեն կատարում էին Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնը: Այդ ժամանակ գործ էր ածվում նաև «Ռեիս-ուլ-Քյութթաբ» տիտղոսը, որը հետագայում, XIX դարում, փոխարինվեց «Նազիրիյե-Նազիրի» (Արտաքին Գործերի մինիստր) կոչումով:*

6. Սարրաֆ (սեղանավոր) — *Թուրքիայում այդպես էին կոչվում դրամական և ֆինանսական գործերով և զանազան կոմբինացիաներով զբաղվող սեղանավորները, որոնք հսկայական հարստության տիրանալով, մեծ ազդեցություն էին ձեռք բերել: Կառավարությունը հաճախ փոխառության կարգով սարրաֆներից մեծ տոկոսով գումարներ էր վերցնում: Սարրաֆները, ինչպես հիշված է Ջևդեթ փաշայի «Պատմության» մեջ, մեծ դեր էին կատարում նաև պետական հարկերը «իլթիզամի» կարգով տալու գործում և առհասարակ այդ տիպի վաշխառուական գործողություններում: Սարրաֆների մեծ մասը հայեր, հույներ և հրեաներ էին: Հույն սարրաֆները Թուրքիայի պատմության մեջ հայտնի են «Ֆեներլի» անունով, («Ֆեները» — Ստամբուլի թաղամասերից է, ուր կենտրոնացած էին հույն սարրաֆները): «Ֆեներլիները» մեծ դեր են կատարել նաև Թուրքիայի պետական գործերում:*

7. Շահին-Կիրայ — *Ղրիմի «Կիրայ» անունով հայտնի իշխողներից (խան) է. Շահին — Կիրայեն թուրք պատմագիրները համարում են գործիք «Ռուսական պետության ձեռքում» և «Օսմանյան պետության դավաճան»: Դեպքը համառոտակի հետևյալ կերպով են տալիս թուրք պատմագիրները:*

Շահին-Կիրայը իր մի շարք նորմուծություններով և բռնություններով գայթույթ էր առաջացրել Ղրիմի ժողովրդի (թաթարների) մեջ: Մասնավորապես Եկատերինա կայսրուհուց ասպիճան խնդրելը, նրա կողմից ուղարկված շքանշանի կրելը և ռուսական հովանավորության կողմնակիցներ լինելը, իր դեմ հանեց նաև իր եղբայրներին՝ Բահադիր-Կիրային և Արսլան-Կիրային: Շահին-Կիրայի դեմ կազմակերպված հարձակման հետևանքով, նա ստիպված եղավ Կերչ փախչել: Նրա փախուստից հետո իշխանության գլուխն է անցնում Բահադիր-Կիրայը:

Սակայն Շահին-Կիրայը հանդիսա չի նստում և Ղրիմում կողմնակիցներ է շահում։ Շահին-Կիրայի հարցը դիվանագիտական բանակցությունների առարկա է դառնում Օսմանյան կառավարության և ռուսական դեսպանի միջև։ Ռուսների կողմից Ղրիմը գրավելուց հետո, Շահին-Կիրայը նորից իշխանության գլուխն է անցնում։ Սակայն հետո Ռուսաստանի կողմից լքվում է և ստիպված է լինում ապաստանել Օսմանյան երկրում։ Աքսորվում է Ռոդոս կղզին և այնտեղ մահվան դատապարտվում։

8. Էֆլաք (Valachie) և կամ Ուլահ կոչվում էր Ռումինիայի այն մասը, որը գտնվում է Կարպատյան լեռների և Դանուբ գետի միջև։ Օսմանցիները Սուլթան Յըլդըրըմ-Բայազետի ժամանակ 791—804 ԹԹ. (1389—1402) գրավեցին նաև Վալախիան (Էֆլաքը)։ Էֆլաքը կառավարվում էր Օսմանյան կառավարության կողմից նշանակված հատուկ իշխանների միջոցով (Վոյեվոդա)։ Ռումինիայի մյուս մասը, Օսմանյան պատմության մեջ հայտնի է Բողդան (Moldovie) — Մոլդավիա անունով (հիմնադիրը եղել է Բողդան անունով վոյեվոդան)։ Այս երկու երկրները կոչվում էին նաև «Մանլեթենյն» (բառացի՝ երկու երկիր)։ 1859 թ. այս երկու երկրները, Օսմանյան կառավարության հովանավորության տակ ստացան ինքնավարություն և Յան-Կոզա անունով իշխանի կողմից կառավարվում ու կոչվում էին «Ռումինիա-Փրինսիփի» (Ռումինական պրինցություն)։

9. Կանըմ գետ—պարսիկներն ու թուրքերը Իորա գետը (Կուր գետի ձախ վտակը) անվանում էին Կանըր գետ։

10. «Ջիհաննյումա» — Թուրքիայի հայտնի պատմագիր և գիտնական Քյաթիբ-Չելեբիի կողմից գրված «Աշխարհագրություններ», որը պարունակում է Օսմանյան երկրների և Ասիական երկրների մեծ մասի աշխարհագրություն։

11. Էմիյն (խալիֆայի-էմիյն)—իսլամական խալիֆայական դինաստիա։ Այս անունով երկու իսլամական պետություն է գոյություն ունեցել. առաջինը՝ Շամ (Դամասկոս) մայրաքաղաքով, 102 տարվա ընթացքում իր իշխանության տակն է առել գրեթե բոլոր իսլամական երկրները, ունեցել է 14 «մյուլուք», որոնք կոչվում էին «Մյուլուքի-Էմեվիյե»։ Երկրորդը, որը կարելի է համարել առաջինի ճյուղը կամ շարունակությունը, հիմնվել է Անդալուզիայում (Իսպանիա) և 264 տարվա ընթացքում ունեցել է 11 «Մյուլուք»։

12. Կուբեյշի ցեղ («կաբիլե»)—Կուբեյշը՝ Հիջազի արաբական հայտնի ցեղերից էր, որն իր հերթին բաժանվում էր մի շարք ճյուղերի և սերունդների։ Որովհետև Արաբիայի կարևոր կենտրոնի՝ Մեքքեի նվիրական սրբավայրը՝ Քյաբեն գտնվում էր Կուբեյշի ցեղապետների հովանավորության տակ, այդ պատճառով Կուբեյշի ցեղը մեծ հռչակ և հեղինակություն էր վայելում բովանդակ Արաբիայում։ Կուբեյշի իշխանության ուժեղացմանը նպաստել է նաև Մուհամմեդ մարգարեի այդ ցեղին պատկանելը։

13. Կոմուխ — Հյուսիսային Կովկասում փոքր ցեղ, որն ապրում էր Խազերի արևմտյան ծովեզերքում՝ Թերեքի գետաբերանի և Դերբենդի միջև։ Կոմուխները կոչվում էին նաև «Ղազիկոմուխներ»։

14. Աբբասյան խալիֆաներ—(«Խալիֆեի-Աբբասիե»).—Աբբասյանները, կամ «Բենի-Աբբաս», Ռաշիդյան խալիֆաներից հետո կազմակերպված երկու մեծ խալիֆայական դինաստիաներից երկրորդն է, որը Աբբասի ցեղին պատկանելու պատճառով, կոչվում է «Աբբասյան»։ Բաղդադի Աբբասյան խալիֆաները իշխել

են 132—658 թթ. (749—1259) և ունեցել են 24 խալիֆա։ Իսկ Եգիպտոսի Աբբասյան խալիֆաները (թվով 17) իշխել են 659—923 թթ.։

15. Կզլչակի դաշտը («Դեշտի-կզլչակ»).—Կզլչակ ցեղի անունով, Կզլչակները Թուրքական ցեղերից էին, որոնք հնում ապրել են Ուրալյան լեռների և Վոլգա գետի միջև ընկած տարածության վրա։ Այդ պատճառով էլ այդ հարթավայրը կոչվում էր Կզլչակի դաշտ։ Այս ցեղը հետագայում ցրվել և խառնվել է այլ Թուրքական ցեղերի։

16. Ֆաշի բերդ («Ֆաշ-Կալասի»)—ժամանակակից Փոքր Նավահանգիստը։ Ֆաշի բերդը Օսմանյան սիրապետության ժամանակ կարևոր դեր է կատարել։ «Ֆաշ» բառը հնագույն Faris-ի աղավաղված ձևն է։

17. Գունիա — (Քունիա) — հին բերդաքաղաք Մև ծովի եզերքում, ներկա Աջարիայի սահմաններում։ Գունիան այդ ժամանակ առնջակի կենտրոն է եղել։

18. Աղա-Մուհամմեդ խան (Թուրքերը ասում են նաև Ագա-Մուհամմեդ խան)։ Իրանական «Կաջար» (Կաշար) դինաստիայի հիմնադիրն է։ Իրանի հյուսիսում՝ էսթերաբադում ապրում էր Թուրքմեն ցեղերից «Կաջար» աշիրեթի պետը՝ Մուհամմեդ-Հասան խանը։ Նադիր-Շահի հաջորդը՝ Ադիլ-Շահը գերի վերցնելով ցեղապետ Մուհամմեդ խանի երկու որդիներին, մեծին՝ Աղա-Մուհամմեդ-խանին, ութ տարեկան հասակում ներբինիացրել էր. Աղա-Մուհամմեդը մեծացավ արքունական պալատում, սակայն Շահի մահից հետո իր հոր մոտ վերադարձավ։ Հայրը սպանվեց Իրանի գահը հափշտակող Քերիմ-խանի կողմից, իսկ Աղա-Մուհամմեդ-խանը տարվեց Իրանի մայրաքաղաքը՝ Շիրազ։ Քերիմ խանի արքունիքում Աղա-Մուհամմեդը կարևոր դիրք էր գրավում, բայց իրավունք չուներ պալատից հեռանալու։ Նրա կենսագիրների տեղով, Աղա-Մուհամմեդ խանը դեռ փոքր հասակից մոտդրվել էր Իրանի գերիշխողը դառնալ։ Չենդ դինաստիայի նկատմամբ ունեցած նրա թշնամությունը այդ միտքը ավելի ուժեղացրեց։ Օգտվելով Քերիմ-խանի մահամերձ վիճակից 1193 թ. (1779) իր հավատարիմ 17 ձիավորներով փախավ Մազանդարան և այդ շրջանում ապրող իր ցեղակից, ինչպես նաև Գիլանի աշիրեթներին իր շուրջը հավաքեց և բնակություն հաստատեց Թեհրանում։ Աղա-Մուհամմեդ խանը կարճ ժամանակում իր իշխանության տակն առավ Մազանդարանի, Գիլանի և Ադրբեջանի շրջանները և պատրաստվեց իր իշխանությունը տարածել դեպի Իրաքի-Աջեմը և Ֆարսը։ Բավական երկարատև և դժվարին կռիվներից հետո Աղա-Մուհամմեդ խանը խորտակում է նաև Լութֆ-Ալի-Շահի բանակը։ Աղա Մուհամմեդ խանը խաբեբայությամբ իր կողմն է գրավում նաև ուժեղ աշիրեթներից «Աֆշար» անունով հայտնի աշիրեթը։

Աղա-Մուհամմեդ խանը վրաստանի արշավանքից վերադառնալուց հետո 1210 թ. (1795) դևխին թագ է դնում և իրեն Իրանի իշխող հայտարարում։ Երկրորդ անգամ վրաստանի (Անդրկովկասի) վրա արշավելու ժամանակ սպանվում է իր ծառաների ձեռքով։

19. Շեյխ-Մանսուր, 1199—1201 թթ. (1784—1786), Հյուսիսային Կովկասյան լեռնցիների շարժումների մեջ իբրև կարևոր դերակատար հիշվում է նաև Շեյխ-Մանսուրի անունը։ Շեյխ-Մանսուրը, ինչպես ասում է պատմագիր Ջևդեթ-փաշան, վարագուրված է ինչ որ մարգարեական, հրաշագործ և սուրբ անձնավորության կիսառասպելական հատկություններով և համբավով։ Շեյխ-Մանսուրը, ըստ թուրք պատմագիրների, Չեչենական գյուղերից մեկում հովիվ է

եղել, հետո զբաղվել է նաև երկրագործությամբ և առևտրական գործերով։ Հետո իբր թե մարգարեի (փեյղամբերի) կողմից իրեն առաջարկված է եղել քարոզել իսլամական կրոնը և մոլորվածներին ուղիղ ճանապարհի բերել։ Այսպիսով նա ժողովրդի մեջ մեծ համբավ և հեղինակություն է ձեռք բերել։ Պատմագիրների ասելով այս հեղինակությունն ու համբավը տարածվում էր նաև մի շարք իսլամական երկրներում։ Միանալով Կոմուրի բեյերի հետ, նա մեծ բանակով երկու անգամ արշավում է ռուսների ձեռքում եղած Կզլյար բերդի վրա, սակայն նրան չի հաջողվում բերդը գրավել։ Ռուսները կաշառելով Կոմուրի բեյերին, բանակը ցրում են։ Շեյխ-Մանսուրի շուրջը հավաքված լեռնցիները շարունակում են կողոպտել ու թալանել ռուսական տիրապետության տակ գտնված շրջանները։ Շեյխ-Մանսուրը մհկուսանում է և զբաղվում աղոթքով ու կրոնական հարցերով։

20. Էոզյու (Özü) — *Դնեպր գետը թուրքերը անվանում էին Էոզյու-Սույի, կամ Եքշի-Սու (Դառն գետ)։ Էոզյուի Սև ծով թափված վայրում գտնվում էր բերդաքաղաք, որն հայտնի էր «Էոզյու-Կալասի» անունով։ Օսմանյան տիրապետության որոշ շրջանում Էոզյուն եղել է էյալեթի կենտրոն (Էոզյու էյալեթի)։*

21. Բոգդան, *տե՛ս ծանոթ. 8, էֆլաք։*

22. Թաուրլե գետ—*Դնեստր գետը թուրքական պատմագրության մեջ կոչվում է Թաուրլե (հնագույն անունն է Թուրասի)։*

23. Կաբարբայ (*Կաբարթի, Կըբարթա*)—*Կովկասյան լեռների հյուսիսային մասում, Թերեք գետի ակունքում, Դաղստանի և Չերքեզիստանի միջև եղած երկրամասը կոչվում էր Կաբարթայ։ Այստեղ ապրում էին Չերքեզական ցեղերից կաբարթայները, նուղայները, կարաբուլակները և այլն։ Կաբարթայը բաժանվում էր երկու մասի—Մեծ Կաբարթայ և Փոքր Կաբարթայ։ Այս երկիրը 1187 թ. (1774) Կայնարջայի խաղաղության պայմանագրով Օսմանյան պետությունից անցավ Ռուսաստանին։*

24. Շիրվանի հանիերը. (*Կոչվում է նաև Շերվան*)։ *Շիրվանը չպետք է շփոթել Անդրկովկասի Շիրվանի հետ։ Շիրվանը գտնվում է Բիթլիսի վիլայեթի Սըղերդ սանջակում և գավառական քաղաք է եղել։ Գավառի կենտրոնում և շրջակայքում կային վաղուց հայտնի ոսկու, պղնձի, կապարի և այլ հանքեր, որոնք նախապես շահագործվել էին։ Շիրվանի շրջակայքում ապրում էին ընդհանրապես քրդական աշիրեթներ։*

25. Անապա — *Բերդաքաղաքի Սև ծովի հյուսիս-արևելյան ծովեզերքում։ Վենետիկցիների ժամանակ կոչվում էր Նափն։ Հետագայում գրեթե բոլորովին քայքայվել և ավերվել է։ 1199 թ. (1784) օսմանցիների կողմից նորից վերաշինվում և ամրացվում է։ Անապան կարևոր դեր է կատարել Չերքեզիստանի նվաճման գործում՝ Ֆերհհ-Ալի-փաշայի իշխանության ժամանակ։ 1245 թ. Էդիրնեի խաղաղության դաշնագրով Անապան անցավ Ռուսաստանին։*

26. Ռևանդուզ — *Մուսուլի վիլայեթում, Շեհր-Զոր սանջակում գավառական կենտրոն է, բնակիչները քուրդ են։*

РЕЗЮМЕ

Настоящее издание является первой книгой из подготовляемой для публикации Сектором востоковедения Академии наук Армянской ССР серии восточных источников об истории советских народов. В нем публикуются материалы турецких источников в XVI—XVIII вв. (летописи султанского двора, труды историков, путешественников, официальные документы и т. д.), касающиеся Армении, армян и других народов Закавказья. Побликуя эти материалы, мы не ставили своей целью их изучение и анализ. Здесь они приводятся лишь в том виде, в каком изложены в самих источниках.

Во введении даются сжатые сведения о турецкой историографии, в особенности о придворных (султанских) летописях. Официальная историография в Турции началась в1000 г. по гиджри (1591), когда в Османской империи составление летописей стало государственной службой, а летописцы « vakaa nüvis» начали назначаться указом султана. Они назначались из числа высокопоставленных придворных, духовных лиц, поэтов и т. д. и писали в основном о событиях, касающихся султанского двора (назначения, отстранение от должности, смертные казни и т. д.). Вопросам внутреннего положения страны, ее экономического и культурного состояния уделялось очень мало внимания. Зато отводилось немало места войнам султанской Турции и, в частности, ее захватнической политике в отношении Армении и Закавказья. В сборник включено немало материалов из жизни братских народов Закавказья — азербайджанского и грузинского.

Вполне естественно, что события охватываемого настоящей публикацией периода в турецкой историографии освещаются с феодально-классовой и османской шовинистической позиции, и поэтому во введении анализируются некоторые вопросы, имеющие важное значение в истории Турции XVI—XVIII вв., например продолжительные и опустошительные турецко-иранские войны, войны за покорение народов Кавказа, крестьянские восстания, известные в истории под названием движения «джелали». От этих войн особенно пострадал армянский народ, так как территория Армении оказалась основной ареной военных действий.

В основу настоящего издания взят хронологический принцип публикаций текстов турецких источников XVI—XVIII вв. Вся публикация разбита на несколько глав, каждая из которых посвящена отдельному автору. В начале каждой главы даются краткие биографические сведения о данном историке-летописце и характеристика его трудов. В целях соблюдения исторической взаимосвязи между материалами, приводимыми в выдержках, в работе даются необходимые пояснения. В конце каждой главы даются необходимые комментарии к тексту.

Настоящая публикация охватывает отрывки из трудов следующих турецких историков-летописцев:

1. **Печеви-Ибрагим** — историк XVI—XVII вв. В своем «Тарихи-Печеви» историк излагает события современного ему периода и, в частности, историю завоевания турецким султаном Сулейманом и его преемниками городов-крепостей Западной Армении (Вана, Ерзинга, Ахлата, Адильджеваза, Арджиш и др.). Особого интереса заслуживает описание Печеви-Ибрагимом вторичного захвата крепости Ван в 955 г. (1549) и обстоятельств превращения Ванской провинции в бейлербейство (эйалет). Автор весьма подробно излагает историю ирано-турецких «священных» войн, имевших якобы лишь цель вернуть «заблудившихся» иранцев-кызылбашей к истинному исламу. Но описываемые им события не оставляют сомнения, что не в религиозных спорах было дело. Описывая события в Грузии, Печеви отмечает, что поднявшееся здесь восстание вынудило османскую армию идти войной на Грузию и захватить Тортум, Акча-кала и 15 других крепостей, большая часть

которых была сравнена с землей. Позже были захвачены Чылдыр, Хертвис и Тифлис. Османская армия заняла также азербайджанские города Шеки, Шамахи, Эрш (Ареш), в Дагестане — Дербент и т. д. Захваченные города были подвергнуты невероятным опустошениям, грабежу и разбою. При описании похода султана Сулеймана в 961 г. (1558) историк подробно говорит о разбоях и грабежах, учиненных в Ереване, Нахичевани и на территории Карабаха. Немало внимания автор уделяет значению крепости Ереван в турецко-иранских войнах, являвшейся яблоком раздора между этими двумя государствами. «Ереван,— пишет он,— был душой аджемов». Далее следует описание истории захвата турками Еревана в 961 г. (1553), когда были преданы огню имевшиеся здесь прекрасные дворцы и сады.

Вслед за этим походом турок в 986 г. (1578) последовал второй их поход, когда Ереван вновь подвергся разрушению. Более 20 тысяч женщин и детей было взято в плен. Говоря о Шорагяле (Ширак), Печеви пишет: «Эта страна была очень благоустроена, имела много сел с обработанными землями, которые полностью были разрушены и сравнены с землей...». Вот как описывается вторжение османской армии в пределы Карабаха: «Неожиданно страна покрылась пылью, светлый день превратился в темную ночь... на двадцать седьмой день войска доходят до Нахичеванской равнины; от страха перед победоносной армией города, села, дома и населенные местности опустели и превратились в совиные и вороньи гнезда». Историк цинично описывает захват и пленение «юношей, имеющих серебристые тела, нежных молоденьких девушек, невиданно дивных, красивых молодых невест, подобных розам». И далее: «Ни в одном походе турецкая армия не имела таких богатых трофеев... не было ни одного шатра, в котором число любовников и любовниц было бы менее трех, а шатры с 5—10 пленниками были бесчисленны».

При описании событий, касающихся Грузии, Печеви останавливается на фактах, связанных с движением Георгия Саакадзе (Маграв-бека), которого он считает «большим князем, верным помощником Шах-Аббаса». Историк останавливается на причинах восстания грузинского народа против сефевид-

ской тирании и, в частности, отмечает тот факт, что побужденный враждой между Грузией и Ираном и стремясь отомстить кызылбашам за их злодеяния на родной земле, Георгий Саакадзе убил иранского хана Карчгая и бежал в османскую армию, надеясь с помощью турок захватить Ширван и Грузию. Печеви подробно повествует о движении Георгия Саакадзе, вплоть до его трагической смерти. Из изложения Печеви видно, что он был очевидцем этих событий.

2. **Наима** — историк-летописец XVII в. В своих четырех томах «Тарихи-Наима» описывает историю Османской империи с 1000 до 1071 г. (1591—1660). Этот период совпадает с процессом разложения и ослабления Османской империи (волнения и восстания янычар, повстанческое движение «джелали», восстание Абаз-паши и т. д.) и характерен турецко-иранскими продолжительными и изнурительными войнами и беспрерывными захватническими войнами османцев в Румелии.

Наима был очевидцем событий двух последних десятилетий, описываемых им в своей «Тарихи-Наима». Он упоминает о турецких историках Печеви и Кятиб-Челеби (трудами которых он пользовался), а также об арабских историках.

Ադրիանուպոլիս — آدرنه — *Ադրիանիա*, Ադրիանուպոլսեցի *ադրիանացի:*

Ասես — سسعد — *Դիշերապահության և հսկողության կատարող հատուկ պաշտոնյա: Դիշերապահ.* Ասես-Բաշը՝ *դրանց պետը:*

Ավամ — عوام — *Հասարակություն. հասարակության ցածր դասեր, անհատներ.* Ավամ ադամ՝ *ստոնց կրթության մարդ:*

Բ

Բաբ باب — (հոպ. եբվաբ). *Դուռ, մուտք, անցք, լեռնանցք: Բարձր հիմնարկություն:*

Բաբ-էլ-եբվաբ — باب الابواب — *Դերբենդ քաղաքի անուններից մեկը:*

Բաբը-Ալի *կամ* Բաբալի — باب عالى — *Բարձրագույն Դուռ, կ. Պոլսում սադրազամության և մի շարք մինիստրությունների պետական շենքը: Հաճախ գործ է ածվում Օսմանյան կառավարության իմաստով:*

Բաբը-Ֆեթվա — باب فتوى — *և* Բաբը-Մեշեյխեթ — *իսլամական Շեյխ-ուլ-իսլամի հիմնարկությունը:*

Բաբը-Սերասքերի — باب سر عسكرى — *Զինվորական բարձր հրամանատարությունը: Սերասքերության (տե՛ս սերասքեր) Դուռը:*

Բաբ-ուլ-Սեադե — باب السعادة
Բաբ-ուլ-Շերիֆե — باب الشريفه
} *Սուլթանական հարեմ:*

Բաբը-Հյումայուն — باب همايون — *Կայսերական պալատի (սարայ) մեծ և պաշտոնական Դուռը:*

Բալթաջը — بالطجى — *Թագավորական պալատի հատարակ ծառայողներից:*

Բաշ-վեքիլ — باش وكيل — *Գլխավոր մինիստր: Վեքիլ (փոխանորդ) էր կոչվում, որովհետև նա փոխարինում էր փադիշահին և համարվում էր նրա բացարձակ լիազորը: Բաշ-վեքիլը կոչվում էր նաև Ռեյիսի-վյուքելա՝ Մինիստրների խորհրդի նախագահ,* Սադրազամ *(տե՛ս Սադրազամ):*

Բաշ-Բուղ — باش بوغ — *Հրամանատար, գլխավոր, ոչ կանոնավոր զինվորական խմբերի հրամանատար,* Սերքեսաև *(տե՛ս Սերքեսաև):*

Բաշ — باش — *Գլուխ, գլխավոր, պետ։ Բարդություններում՝* Բաշ-վեքիլ, Բաշ-Քյաթիբ, Բաշ-չավուշ։

Բաջ — باج — *Տուրք, հարկ, մաքս։ Տեղափոխվող ապրանքների և մթերքների համար վճարված մաքս, տուրք։*

Բալեմեզ — بالیمز — *(ճիշտը՝ Բալիկեսիկի), այդ անունով մի խաչակրաց կողմից հինված հին տիպի թնդանոթ։*

Բեդիստան — بدستان *Փակ շուկա, որտեղ վաճառվում էին թանկագին կերպասներ, գոհարեղեն և զենքեր։*

Բեդելի-ասկերի — بدل عسکری — *Թուրքիայում մինչև 1908 թ. Սահմանադրության հրատարակումը ոչ-մուսուլման հպատակների զինվորական ծառայության փոխարեն վճարած հարկը։*

Բեդելի-էսասեթ — بدل اساسات — *Տե՛ս Փենշիք բառը։*

Բեյ — بك — *Բեկ, էֆենդի, հարուստ և առաջավոր մարդ։ Բարդություններում՝* Աշիրեթ-Բեյի, Ալայ-Բեյի, Կարա-Դաղ Բեյի և այլն։

Բեյլիք — بلك — *Բեկության աստիճան, պետականություն։ Մի բեկի իշխանության տակ գտնված երկիր, երկրամաս, էյալեթ։ Պետական, կառավարական սեփականություն։ Անատոլուի բեյլիքներ։*

Բեյլերբեյի — بكلربكی — *Վեզիրից և միրմիրանից հետո քաղաքացիական բարձր աստիճան։ Էյալեթների կառավարիչը։*

Բեկթաշի, Բեկթաշիլիք — بكتاشی، بكتاشيلك — *Հաջի Բեկթաշ-Վելիի կողմից հիմնված դերվիշական միաբանություն։*

Բեկլեքջի — بكلكجی — *Կայսերական Դիվանի գրասենյակի պետը։*

Բերաթ — برات — *Փադիշահի կողմից տրված աստիճանների, շքանշանների և արտոնությունների ֆերման։*

Բերիյե — بريه — *(հոգ. բերայա) Ռայա չհղող մարդիկ. հասարակություն։*

Բոստանջի — بوستانجی — *Փադիշահական պարտեզի (խաս-բաղչե) ծառայողներ ու պահապաններ։ Ավելի ուշ ժամանակում կայսերական պալատի պաշտպանության գործում ծառայող որոշ դասի զինվորներ։ Բոստանջի-Բաշը՝ այդ դասի զինվորների պետը, որը միաժամանակ հսկում էր քաղաքի կարգ ու կանոնի պահպանության գործերին։*

Բեոլյուկ — بلوك — *Վաշտ, հեծելավաշտ։*

Բեոլյուկաբբ-էրբաա — بلوكات اربعه — *(Տե՛ս էրբաա)։*

Դանիշմենդ — دانشمند — *Ուսման և գիտության տեր, գիտուն, հնում Նայլբի տրամապրության ներքո, նրա օգնականի պաշտոնը կատարող անձ:*

Դալ-Կըլըչ — قلیچ دال — *Սուրը պատյանից հանած, սուսերամերկ: Ենիչերիական բանակում հատուկ զինվորների խումբ:*

Դար-ուլ-Սուլթանե — دارالسلطانه — *Սուլթաններին բնակավայր, մայրաքաղաք: Դար՝ վայր, բնակավայր, տուն, օրինակ՝ Դար-ուլ-Ֆյունուն՝ համալսարան, Դար-ուլ-Մուալիմին՝ ուսուցչական ինստիտուտ, Դար-ուլ-հարբ՝ պատերազմի երկիր, վայր:*

Դեբաղ — غباد — *Մաղախորդ, կաշիներ մաքրող և դոնազան տեսակի կաշիներ պատրաստող արհեստավոր, դաբաղ:*

Դերգյահ — درگاه — *Դուռ, դռան ճակատը, մեծ մարդկանց դուռը, որին պետք է դիմել խնդրանքով:*

Դերգյահի-Ալի — درگاه عالی — *Փադիշահական բարձր Դուռը:*

Դերբենդ — دربند — *Նեղ անցք, լեռնանցք, սահմանի վրա նեղ և դժվարանցանելի տեղեր: Դերբենդ քաղաքը (բերդը)՝ Կասպից ծովի ներքում, հայտնի իր նեղ անցքով:*

Դերսեադեթ — دارسعادت — *Երջանկության, բախտավորության վայր, այսպես էր կոչվում Ստամբուլը:*

Դեֆթեր — دفتر — *Տետր, ցուցակ, մատյան, հաշվեմատյան, դաֆթար:*

Դեֆթերխանե — دفتر خانه — *Կալվածների և հողերի արձանագրության և նրանց վերաբերյալ գործողությունները հսկող կառավարական հիմնարկություն:*

Դեֆթերդար — دفتردار — *Պետության եկամտի և ծախքերի մատյանները կազմող և նրանց վրա հսկող բարձր պաշտոնյան: Այս պաշտոնը համապատասխանում էր ֆինանսների մինիստրի պաշտոնին: Ավելի ուշ վիլայեթների ֆինանսներին հսկող պաշտոնյանները նմանապես դեֆթերդար կոչվեցին, իսկ գանձակներին (լիվա)՝ մուհասեբեջի, կազաներին (գավառ)՝ մալ-մյուդիրի:*

Դեվշիրմե — دوشیرمه — *Ժողովել, հավաքել, մանկաժողով: Ենիչերիական բանակի համալրման համար քրիստոնյա ազգությունների երեխաների (ագանների) բռնի հավաքը:*

Դիզդար — دزدار — *Բերդապահ:*

Դերիք — كير — *Անհրաժեշտ անասնք, ոռճիկ, վարձք, ապրուստի միջոց:*

Դինար — دينار — *Հին ոսկեդրամ, որը մոտավորապես $^1/_4$ լիրայի արժեքն ուներ:*

Դիրհեմ *(միրհամ)* — درهم ،درم — *Պարսկերեն դիրհեմի արաբականացած ձևը: Դիրհեմը ժանրության կշռի չափ է, որը հավասար է* օկկայի *400 մասից մեկին: Օկկան 400 դիրհեմ է:*

Դիվան — ديوان — *Մեծ Մեջլիս, Բարձ Մեջլիս, ատյան: Բանասեղծի երկերի ժողովածուն: Դիվանի-Ալի՝ փադիշահական Բարձր Դիվան. Դիվանի-հարբ՝ պատերազմական, զինվորական ատյան:*

Ե.

Ենիչերի — يرچكى — *Ենիչերի, նոր զինվոր, ենիչերիական բանակի զինվոր. Ենիչերի-Աղասը՝ ենիչերիական բանակի հրամանատարը:*

Երի-Կուլու — يرلى قولى — *Տեղական, նահանգային զինվոր:*

Զ.

Զադե — زاده — *Որդի, զավակ: Ընդհանրապես գործ է ածվում մի անձի ծնունդն ու ծագումը ցույց տալու համար: Օրինակ՝* Ռասուլ-Զադե, Թուրսուն-Զադե:

Զադեգյան — زاكزاده — *Ազնվական, ազնվական ծագումով, երևելի, արիստոկրատ: Զադեգյան-սընըֆի՝ արիստոկրատիա:*

Զարրազան — ضربزان — *Մի տեսակ հին թնդանոթ՝ բերդեր ռմբակոծելու համար:*

Զարրխանե — خانه ضرب — *Փողերանոց, դրամ կտրելու վայր: Զարրխանեի-հյումայուն՝ կայսերական փողերանոց:*

Զենգ — زنج — *Զրադաշտական կրոնի հիմնադրի նվիրական գիրքը, որը կոչվում է «Զենդավեստա»: Զենդավեստան գրված է իրանական հնագույն լեզվով, որը կոչվում է* Զենդ լիսանի *(լեզու):*

Զերնիշան — زرنشان — *Ոսկյա նշան, արծրի և այլ իրերի վրա փորագրված: Զերնիշանջի՝ այդ արհեստով պարապող վարպետ:*

Զենջիր — زنجير — *Շղթա, Զենջիրբենտ՝ շղթայակապ:*

Զեյլ — ذيل — *Հավելված, ծանոթություն, լրացուցիչ գրված (պատմական և այլ երկերի):*

Զեքյաթ — ﺯﻛﺎﺕ — *Շարիաթական օրենքով ապրանքի և դրամի մաքրությունն ու հալալությունը ապահովելու համար տարեկան քառասունից մեկն (1/40) — մեսջիտին (մզկիթ) տրված տուրքը:*

Զըրա — ﺫﺭﺍﻉ — *Երկարության չափ, արմնկաչափ, արմունկից մինչև միջնամատի ծայրի երկարությունը, արշին:*

Զիմմի — ﺫﻣﻲ — *Իսլամական պետության հպատակ ոչ-մուսուլմաններ. ռայաներ:*

Զիլկադե — ﺫﻭﺍﻟﻘﻌﺪﺓ — *Արաբական տոմարի լուսնային տարվա 11-րդ ամիսը:*

Զիլհիջջե — ﺫﻭﺍﻟﺤﺠﺔ — *Արաբական տոմարի 12-րդ ամիսը:*

Զըլլ — ﻇﻞ — *Սովել, շուք, պաշտպանություն. հովանավորություն. Զըլլ-Ուլլահ՝ Աստուծո սովել, իսլամական խալիֆաներին (և սուլթաններին) տրված տիտղոններից մեկը:*

Է.

Էզան — ﺃﺫﺍﻥ — *Մուսուլմաններին նամազի և պաղթքի հրավիրող մինարեից մյուեզզինի կարդացած պաղթքը (աե՛ս* միճարե *և* մյուեզզին):

Էլ — ﺃﻝ، ﺃﻴﻞ — *Ժողովուրդ, մարդիկ, ցեղ, աշիրեթ: Երկիր, երկրամաս, վիլայեթ, օրինակ՝* Ռումելի, Կոջաելի:

Էհլ — ﺃﻫﻞ — *Տեր, տիրացող, ունեցող:* Էհլի սերվեր՝ *հարստության տեր,* Էհլի-ճամուս՝ *պատվո տեր: Բնակող, բնակիչ:*

Էհլի-Իսլամ — ﺃﻫﻞ ﺍﺳﻼﻡ — *Իսլամական կրոնին պատկանող մարդիկ:*

Էհլի-սյունճեթ — ﺃﻫﻞ ﺳﻨﺔ — *Իսլամական կրոնին պատկանող, Մուհամմեդին հավատացող և նրա կողմից հիմնված սկզբունքներով առաջնորդվող մարդիկ:*

Էյալեթ — ﻭﻻﻳﺔ — *Նահանգ, երկրամաս: Օսմանյան կայսրության վարչական մեծ միավորը: Ավելի ուշ էյալեթի փոխարեն սկսաց գործ ածվել* վիլայեթ *տերմինը:*

Էվկաֆ — ﺃﻭﻗﺎﻑ — *(վակֆի հոգնակին), Բարեգործական նպատակով ջամիններին նվիրված կալվածներ, հող, խանութ և այլն:*

Էվկաֆի-հյումայուն՝ *Փադիշահի կողմից շնորհված վակֆներ:*

Էվկաֆ-ճեզաեթի՝ *վակֆների մինիստրություն:*

Էմիր — أمير — *Երկրի և ժողովրդի գլխավորը, պետը, բարձր դասի և գերդաստանի պատկանող անձ: Հոգ.* ումեյա:

Էմիր-ուլ-ումեյա — امير الامرا — *Արաբական խալիֆաների ժամանակ զինվորական գործերի և կարգ ու կանոնի պահպանության հսկող անձանց տրված տիտղոսը: Իբրև քաղաքացիական տիտղոս տրվում էր մերձիրանությունից ցածր աստիճան ունեցողներին:*

Էնջյումեն — انجمن — *Ժողով, ընկերություն, ինստիտուտ:* Էնջյումենի-Դանիշ՝ *ակադեմիա:* «Թարիհի Օսմանի Էնջյումենի»՝ *Օսմանյան Պատմության Ընկերություն:*

Էջել — أجل — *Մահվան ժամ. մահ, օրհաս, նախախնամության կողմից սահմանված մահվան ժամ, որից չի կարելի խուսափել:*

Էրբաա — اربع — *Ջորս.* Չիհարի-էրբաա՝ *հորիզոնի չորս կողմերը:* Բեհյուզարի-էրբաա՝ *չորս վաշտերի զորամասեր, աջ ու ձախ ուլուֆեջիներ (տե՛ս), աջ ու ձախ ղարիբներ (տե՛ս):*

Էսնաֆ — اصناف — *Դաս, խմբակցություն, արհեստավորների, խանութպանների ու ծառայողների ըստ համքարության կազմակերպված միություններ, օրինակ* Բաքըրջիներ էսնաֆի. Զեռեքչիներ-էսնաֆի *(պղնձագործների, հացագործների համքարություններ):*

Էսնաֆ Վեքխուդասը — اصناف كتخداسى — *Էսնաֆի կողմից ընտրված և կառավարության կողմից հաստատված էսնաֆի գործերի վարիչը:*

Էրքան — ارکان — *(նշ. Բյուրքն), Հիմք, հենարան, կառավարության հիմքը կազմող բարձր պաշտոնյաներ (վեզիրներ, կադիաքիռներ և այլն).* Էրքանի դեվլեթ. Էրքանի-հարբիյե՝ *զինվորական շտաբ:*

Էֆրենջ, Էֆրենջի — افرنج، افرنجى — *(Ֆրանսերեն* France *բառից): Միջին դարերում Էֆրենջի էին կոչվում եվրոպական և մասնավորապես ֆրանսիական ժողովուրդները: Էֆրենջի, եվրոպացիներին, այսինքն ֆրանսիացիներին հատուկ: Թարիխի-Էֆրենջի՝ եվրոպական պատմություն:*

Ը.

Ըյդ — عيد — *Տոն, բարեբաստիկ օր, նվիրական օր:*

Ընդհան — عديد — *Տոնական, բայրամի առթիվ մատուցված նվեր. նվիրաբերություն:*

Թ.

Թաբակա — عبق — *Ամպ, շարք, դաս, սահիճան:*

Թարիկաթ — طريقات — *Մուսուլմանական դերվիշների միաբանություն:*

Թայինաթ — تعينات — *Որոշում, նշանակում, պինվորներին կամ պաշտոնյաններին տրված հատկացում (ռոճիկ, մթերք և այլն):*

Թարիխ — تاريخ — *Պատմություն,* Թարիխի-օսմանի, Թարիխի-սիյասի, Թարիխի-ումումի՝ *ընդհանուր պատմություն.* Թարիխչի՝ *պատմագիր, պատմաբան: Տե՛ս մյուվերրիխ:* Թարիխի՝ *պատմական:*

Թահրիր — تحرير — *Գրել, գրություն, գրանցում:* Թահրիր-դեֆթերի, *գրանցման մատյան:*

Թահրիրի-էմլաք — تحرير املاك — *Կալվածների հաշվառք:*

Թահրիրի-նուֆուս — تحرير نفوس — *մարդահամար:*

Թախսիսաթ — تخصيصات — *Հատկացում, դրամական միջոցների հատկացում:*

Թանզիմաթ — تنظيمات — *Կարգավորում, բարենորոգում,* Թանզիմաթի-խայրիյե՝ *Սուլթան Աբդուլ-Մեջիդի իշխանության օրոք (1839 թ.) Ռեշիդ փաշայի նախաձեռնությամբ հրատարակված բարենորոգումների հռովարտակը, որը հայտնի է «Գյուլխանեի խաթթը-հյումայուն» անունով:*

Թեզքերե — تذكره — *Տոմսակ, գրություն, գրությունների փոխանակում:*

Թեզքերեջի — تذكرهجى — *Դատավարության նյութերը և բովանդակությունը արձանագրող պաշտոնյա:*

Թեշրիֆաթ — تشريفات — *Հանդիսավոր և պատվավոր ընդունելություն:*

Թեշրիֆաթջի — تشريفاتجى — *Արքունական պալատում, Սադրազամությունում և այլ պետական բարձր հիմնարկություններում պետական ատենաբանավորներին և օտար պետությունների ներկայացուցիչներին ընդունող անձը:*

Թիմար — تيمار — *Հիվանդին (մարդ կամ կենդանի) խնամող,*

ծառայություն: Թուրքիայում ֆեոդալական հողամաս, որը տրվում էր սիպահիներին (տե՛ս), որի փոխարեն սիպահին պարտավոր էր որոշ թվով զինվորներ տալ: Սիպահին իրավունք ուներ այդ հողամասի (թիմարի) օրինական տանտերը (աշար) և այլ հարկերը ստանալ:

Թուման — تومان، تومن — 10 հազար ակչեի արժեքով իրանական ոսկեդրամ (50 դուրուշ): Հնում գործ էր ածվում նաև զորամաս իմաստով, մի թուման (ֆըրկա) զինվոր (տե՛ս ֆըրկա):

Թերսանե — تر سانه — Նավաշինարան (ռազմական), Թերսանեի-Ամիրե՝ ռազմածովային գործերի վարչություն:

Թեքալիֆ — تکالیف — Շարիաթի սկզբունքներով կամ պետական օրենքներով նշանակված հարկեր, Թեքալիֆի-Շերիյե՝ շարիաթական հարկեր:

Թեքֆուր — رتکفو — Իշխող, տիրող, Անապոլուի և Ռումելիի պրավման ժամանակ իրենց նախկին իշխանությունը պահպանող որոշ իշխաններ Թեքֆուր էին կոչվում:

Թեքիյե — تکیه — Մի շեյխի հովանավորության ներքո դերվիշների ապրելավայրը և բնակավայրը, իսլամական մենաստան, վանք:

Թեվկիի — توقیعی — կամ Թեվկիջի՝ փադիշահական ֆերմաններին և հրամանագրերի (հյուքմ) վրա Թեվկիի կոչված հատուկ սուլթանական նշանը դրոշմող և նկարող բարձր պաշտոնյա:

Թեվլիյեթ — تولیت — Փոխանորդություն: Մի վակֆի մյութեվելի նշանակելը (տե՛ս մյութեվելի): Մյութեվելիություն:

Թեվեքքյուլ — توکل — Ճակատագրին հավատալով իր գործերը նախախնամության հանձնել:

Թուղ — توغ — կամ غوط — Հնում փաշաներին, բուն իրենց աստիճանին տրված հատուկ նշան, որը պատրաստվում էր ձիու պոչի մազերից: Թուղը լինում էր 1, 2 և 3 հատ, այդ պատճառով էլ փաշաները կոչվում էին մեկ, երկու կամ երեք թուղով փաշա:

Թուղրա — طغرا — Սուլթանի անունը բովանդակող բարդ և հատուկ նշան, որը դրոշմվում էր փադիշահական բոլոր գրություններին վրա (ֆերման, հրաման և այլն):

Թուղթաքեշ — شكرغب — *Թուղթալի նշանը պրոշմող հատուկ բարձրաստիճան պաշտոնյա:*

Թյուֆեկչի — تفكجى — *Հրացանագործ: Զինվորական մասերում հրացանները կարգավորող և նորոգող զինվոր կամ սպա: Փադիշահական պալատում հսկողություն կատարող պաշտոնյա:*

Թյուֆեկչի-Բաշը — باشى تفكجى — *Էյալեթներում կարգ ու կանոնին հսկող պաշտոնյանների պետը, որը փոխարենն Ալայբեյիի պարտականությունն է կատարում:*

Թոփչի — جپوط — *Թնդանոթաձիգ, Թոփչի-բաշը՝ թնդանոթաձիգների պետը:*

Թոփխանե — هانجپوط — *Թնդանոթաձիգ զինվորների կենտրոնական վարչություն:*

Ի.

Իբն — ابن — *Որդի, պավակ. օրինակ՝* Ահմեդ-իբն Հասան: *Գործածվում է նաև Բեն ձևով:*

Իլթիզամ — التزام — *Կարիք, պարտավորություն, կողմնակցություն: Կառավարական տուրքերի և եկամուտների որևէ ճյուղը (գնահատելու պետական հարկերը) նախապես վճարելու և երաշխավորելու պայմանով կապալով վերցնելը:*

Իլթիզամջի *կամ* մյուլթեզիմ՝ *կապալով, այսինքն իլթիմազով վերցնող անձը:*

Իհթիսաբ — احتساب — *Էնաֆների չափերի և կշեռքների վրա հսկող հիմնարկություն, որը փոխարենն քաղաքապետության և ոստիկանության պաշտոնն ուներ: Այդ հիմնարկության կոզմից սահմանված տուրքը:* Իհթիսաբ-Աղասը՝ *Իհթիսաբի հիմնարկության պետը:*

Իգիբ, Իգիբ-Բաշը — ايكيت، باش ايكيت — *Ձաղ, արի, կարճամարդ:* Իգիբ-բաշը՝ *Էնաֆների լուծայի գործադիր պաշտոնյա:*

Իրադե — اراده — *Հրաման, հրամանագիր, ֆերման (փադիշահի):* Իրադեի-ալիյե՝ *սադրազամի հրամանը:* Իրադեի-Սենիյե՝ *արքայական, փադիշահական Բարձր Հրաման:*

Իմարեթ — عمارت — *Շինարարություն, բարեշինություն, բարեգործական հիմնարկություն՝ աղքատանոցին կից բակուր տալու համար:*

Լ.

Լաղըմ — لغم ،لغم — *Վրան ծածկած առուներկրյա անցք. կեղտոտ ջրերն հոսելու համար շինված անցք: Բերդեր և ամրություններ պայթեցնելու համար տակից փորված անցք:* Լաղըմջի՝ *նման անցքեր փորող բանվոր: Թշնամու բերդը պայթեցնելու համար անցք փորող զինվոր:*

Լեվենդ — لوند — *(իտալերեն* Levantino *բառից աղավաղված է), արևելյան, արևելքցի: Վենետիկցիների մոտ առճիկով ծառայող թևթևաշարժ զինվոր: Թևթևաբարո, ճարպիկ, կոկիկ հագնված երիտասարդ:*

Լիվա — لیوا — *Վարչական բաժանման երկրորդ միավորը՝ էյալեթից կամ վիլայեթից հետո: Լիվան կոչվում էր նաև սանջակ՝ մյութասարրիֆի վարչության ենթակա: Զինվորների բրիգադա, որի հրամանատարը կոչվում էր Միր-Լիվա:*

Խ.

Խաթուն — خاتون — *Կին, պատվավոր կին, տիկին, խանում:*

Խաս, խասս — خاص — *Հատուկ, ոչ թե հասարակության այլ ընտրյալ դասին պատկանող: Փադիշահին պատկանող, օրինակ* խաս-օդդու՝ *փադիշահական զորաբանակ,* խաս-բաղչե, խաս-օդա: *Փադիշահական խասսեր՝ փադիշահին պատկանող հողեր, կալվածներ:*

Խան, խանլըք — خانلق ،خان — *Արևելքում վեհապետներին և իշխողներին հատուկ տիտղոս: Օսմանյան սուլթաններն ևս կրում էին Խան լրացուցիչ տիտղոսը:* Խանլըք՝ *խանության, խանի իշխանության ներքո գտնված երկրամասը, օրինակ, Երևանի խանությունը, Դրիմի խանությունը:*

Խանեդան — خاندان - *Մեծ գերդաստան, ցեղ, արքայական դինաստիա:* Խանեդանի Ալ-Օսման՝ *Օսմանյան սուլթանների դինաստիան:* Խանեդանլըք՝ *մեծ գերդաստանի պատկանելիություն:*

Խանե — خانه — *Տուն, բնակարան, շինություն: Բարդություններում՝* քիթաբխանե՝ *գրադարան,* էջզախանե՝ *զենքատուն,* խասաախանե՝ *հիվանդանոց,* Թոփխանե՝ *թնդանոթ ձուլելու արհեստանոց:*

Խազեր դենիզի — خزر دکیزی — *Ծովերի ծով, կասպից ծով:*

Խազինե — خزينه — *Գանձարան, անդուկ, պետական գանձարան։ Խազինեի-խասան՝ փադիշահական կալվածների, գույքերի, եկամուտների և ծախքերի վարչության։ Խազինեդար՝ գանձարանի պաշտոնյա։*

Խաթիբ — خطيب — *Հռետոր, ճարտասան, ճառախոս, ջամիններում խուրբեն (ուր՛ա) կարդացող պաշտոնյա։*

Խարաջ — خراج — *Հարկ, գլխահարկ, ոչ-իսլամ հպատակներից պինվորական ծառայության փոխարեն առնվող գլխահարկը (տե՛ս ջիզիյե)։*

Խաթթը-հյումայուն — خط همايون — *Փադիշահական ֆերման, որը հանդիսավոր կերպով կարդացվում էր Բաբը-Ալիում (Բարձրագույն Դուռ)։ Կոչվում էր նաև Խաթթը-շերիֆ։*

Խալիֆե — خليفه — *Փոխանորդ, հաջորդ, տեղակալ, Մուհամմեդի հաջորդն ու փոխարինողը, որը համարվում էր աշխարհի բոլոր մուսուլմանների իմամն ու շարիաթի հովանավորողը։*

Խալաթ — خلعت — *Փադիշահի և վեզիրների կողմից իբրև վարձատրություն և հարգանքի նշան նվիրված կաֆթան, խալաթ։*

Խալիջ — خليج — *Ծոց, ծովածոց, ներուց, ջրանցք, Խալիջի-Կոնսդանդինին՝ Ստամբուլում դեպի Բոսֆորան երկարած ծոցը, որը հայտնի է Ոսկեղջյուր անունով։*

Խումս — خمس — *Մեկ հինգերորդ մասը։*

Խումսու-Շերիի — خمس شريعى — *Շարիաթական $^1/_5$, Շարիաթական օրենքով պատերազմական ավարի և գերիների $^1/_5$ մասը փադիշահին և պետությանն էր պատկանում։*

Խոջա — خواجه — *Էֆենդի, ապա, չելեբի, ուսուցիչ, դաստիարակ, փաթթոցավոր (սարըքլի) էֆենդի, Խոջա Էֆենդի։*

Խաջեգյան — خواجكان — *Հնում Բաբը-Ալիի գրասենյակի էֆենդիներին հատուկ ատոիճան, կայսերական Դիվանի խաջեգան։*

Խան — خوان — *Երգիչ, կարդացող, Ղուրան-խան՝ Ղուրան կարդացող, Դուա-խան՝ ազոթք կարդացող, Շահնամե-խան՝ Շահնամե կարդացող։*

Խանենդե — خوانندە — *Երգիչ, գեղեցկաձայն երգիչ։*

Խումբարա — خمبره — *Երկաթից շինված, մեջը ապանիչ նյութերով լեցված մեծ գնդակ, որն արձակվում էր «Հավան» անուն մենպանովից։ Խումբարաջի՝ խումբարա արձակող զինվոր։*

Կաբիլե — قبيلة — *Ցեղ, աշիրեթ: Միևնույն ցեղից ծնունդ առած և միևնույն ցեղապետի իշխանության ներքո գտնվող հատուկ տոհմերն, միատեղ քոչվորության ապրող ցեղեր:*

Կազա — قضا — *Վարչական բաժանման մեջ տանջակի ստորաբաժանումը, գավառ:*

Կազասքեր — عسكر قضا — *Օսմանյան կայսրության մեջ շեյխ-ուլ-իսլամից հետո բարձրաստիճան հոգևորական անձ: Կազասքերներից մեկը կոչվում էր* Ռումելիի կազասքեր, *մյուսը* Անատոլուի կազասքեր:

Կազը (կամ կադը) — قضى — *Շարիաթի համաձայն դատարանում որոշում տվող դատարանի նախագահ: Կազը կամ Կադը էֆենդի:*

Կանուն — قانون — *Օրենք, կարգ, կանոն, պետության կողմից գործադրվող ընդհանուր օրենքներ:* Կանունի-թիջարեթ՝ *առևտրական օրենք,* կանուննամե՝ *օրենքների ժողովածու, օրենսգիրք:*

Կանունի — قانونى — *Օրինական, օրենքին համապատասխան:* Օրենսդիր, Կանունի-Սուլթան Սուլեյման:

Կալֆա — خلفة — *Աշակերտ, արհեստավորի աշակերտ: Գրասենյակում առաջավոր քարտուղար,* Հաջի-կալֆա՝ *Քյաթիբ-Չելեբիի երկրորդ անունն է:*

Կալե — قلعة — *Բերդ, բերդաքաղաք, ամրություն.* Հասան-Կալե, Թոփրուք-Կալե, Սուխում-Կալե:

Կամուս — قاموس — *Բառարան, բառագիրք, Ֆիրուզի-Աբադիի տրաբերեն լեզվով կազմած բառարանը կոչվում էր «Կամուս»: Այդ անունը երբեմն հատուկ անուն (բառարան իմաստով) տարածվեց բոլոր բառարանների վրա:*

Կամուս-թուրքի — قاموس ترکى — *Հայտնի բառարաններից հեղինակ և բառարանագետ՝ Շեմսեդդին Սամիի Թուրքերեն մեծ բացատրական բառարանը կոչվում է «Կամուսի-թուրքի» (2 հատոր, 1575 էջ, Ստամբուլ, 1317 թ. (1899—1900):*

Կամուս-ուլ-ալեմ — قاموس الاعلام — *Նույն հեղինակի էնցիկլոպեդիական (պատմության և աշխարհագրության) բառարանը, վեց հատոր, 4820 էջ, Ստամբուլ, 1306—1316 թթ. (1888—1898):*

Կասըմ-գյունը — قاسم كونى — *Կասըմի օրը: Տարին երկու հավասար մասի բաժանող նոյեմբեր ամսի 26-րդ օրը, որը համարվում է ձմեռվա սկիզբը: Կոչվում է նաև* Ուզի-խըզըր:

Կափը — قپۆ — *Դուռ (սենյակի, տան, պալատի, բերդի),* Փաշա-Կափըսը՝ *Սադրազամի պաշտոնավայրը, նահանգներում կառավարական տուն,* Աղա-Կափըսը՝ *Ենիչերիների Աղայի պաշտոնավայրը:* Կափը-Օղլանը՝ *պատրիարքարանների և դպրոցների հատուկ ծառայող, որի պարտականությունն էր կառավարական պաշտոնավայրերի հետ կապ պահպանել:* Կափը-Բեխայասը՝ *վիլայեթների կառավարական հիմնարկների գործերի կառավարիչը.* Կափը-Զուգադարը՝ *այդ քեխայասի տրամադրության տակ ծառայող:*

Կափըջը-Բաշը — قپوجى باشى — *Փադիշահական ապահնդակի կամ Դուռն գլխավոր դռնապանը:* Կափըջի-Բաշիի *պաշտոնը համարվում էր բարձր և պատվավոր պաշտոն:*

Կափը-Խալքը — قپو خلقى — *Փադիշահի անմիջական տրամադրության ներքո գտնվող հատուկ զինվորների խումբը:*

Կափը-Կուլու — قپو قولى — XVI—XVII *դարերում Կափու-կուլու կոչված զինվորական մասերը, Ենիչերիներից հետո կազմում էին Օսմանյան պետության կանոնավոր բանակի հիմնական զորամասը, որն ուներ 7 հետևակ օջաքներ և վից հեծյալ վաշտեր:*

Կափուդան *(Կափտան)* — قپودان — *Նավապետ.* Կափուդանը-Դերյա *կամ* Կափուդան փաշա՝ *հնում ծովային մինիստրի պաշտոնը կատարող փաշա:*

Կբլե — قبلە — *Նամազի ժամանակ երես դարձած կողմը: Բոլոր իսլամների համար պարտադիր է երեսը դարձնել Նվիրական Քյաբեի կողմը (տե՛ս Քյաբե): Հարավային քամի, հարավ:* Կբլեգյահ՝ *Կբլեի կողմը, կբլեի վայրը:*

Կբրաա *(կբթա)* — دعبة — *Ցամաքամաս, երկրագնդի ցամաքամասերից ամեն մեկը: Բանաստեղծական գրվածք, որն առնվազն երկու տուն ունի և որի առաջին տունը անհանգ է:*

Կբւբջ — چبۆق — *Սուր, թուր:* Կբւբջդան Կեչիրմեք՝ *որի անցկացնել:* Կբւբջ *էր կոչվում նաև ֆեոդալական հողամասերից (թիմար և զեամեթներից) ստացված եկամուտը:*

Կբյե — دبۆ — *Տե՛ս օկա բառը:*

Կըշլաք — قیشلاق — *Ձմեռանոց, ձմեռվա արոտավայր, կըշլագ*

Կըշլա — ایشلا — *Ձորանոց: Այս բառը ծագում է* կըշլաք *բառից, այսինքն գինվորների պատերազմը դադարած ձմեռվա ամիսներին ձմեռած վայրը: Հետագայում գործածվել է ընդհանրապես զորանոց իմաստով:*

Կուլ — لوق — *Ստրուկ, ծառա, պատերազմում կենդանի բռնված և վաճառքի հանվող գերի:* Թաղրը-կուլու՝ *Առուծո ծառա.* Կուլ-օղլու՝ *գերիների որդիներից կազմված զորամաս, որը բանակում ծառայություն էր անում:*

Կուլաչ — چلاق — *Երկարության չափ: Բացված և երկարած երկու ձեռքերից մեկի ծայրից մինչև մյուսը եղած տարածությունը, որը հավասար է մոտավորապես երկու արշինի:*

Կոնաք — قونق — *Կառավարական շենք, պետական հիմնարկություն: Մեծ տուն, իջևան, պետրանոց: Երկու իջևանի միջև եղած տարածությունը (մեկ օրվա ճանապարհ) նույնպես կոնաք է կոչվում:*

Կուբբե — قبه — *Կամար, գմբեթ:*

Կուբբե-ալթը — آلتی قبه — *Օսմանյան սուլթանների մասնակցությամբ Բարձր Մեջլիսի գումարման և այլ հանդիսավորությունների հատուկ վայրը, որը կամարավոր շինություն էր:*

Կուբբե վեզիրլերի — وزیرلری قبه — *Այդ կամարավոր շինության մեջ, կամարների տակ հավաքված վեզիրները կոչվում էին կամարի վեզիրներ կամ* կամարում ապրող վեզիրներ *(Կուբբե-նիշին):*

Կուրբան — قربان — *Զոհ, զոհաբերություն: Աստուծո ողորմությունը խնդրելու նպատակով, շարիաթով մեսը ուտելը թույլատրված կենդանիների զոհը:*

Կուրբան-Բայրամը — قربان بایرامی — *Տե՛ս Բայրամ:*

Հ.

Հադիս — حادث — *Նոր երևան եկած, նորաստեղծ, արարած:*

Հաքիմ — حاکم — *Իշխող, տիրող, հափշտակիչ: Շարիաթի կանոնների գործադրությանը հակող կազի (կադի), դատավոր:*

Հաքիմ — حکیم — *Իմաստուն, գիտուն, փիլիսոփա, բժիշկ:*

Հավան — هاوان — *Սանդիկ, հավապիկ:*

Հավան թոփու — هاوان طوپی — *Ատամբարա արձակող հին տեսակի թնդանոթ (տե՛ս Ատամբարա)։*

Հաքիմիյեթ — حاکمیت — *Գերիշխանություն, պետական իշխանություն։*

Հաջջ — حاج — *Զիլհիջջե ամսում մեծ հանդիսավորությամբ նվիրական Քյաբեի (Մեքքե) ուխտագնացությունը (տե՛ս Քյաբե)։ Այդ ուխտագնացության մասնակցողները հաջի են կոչվում։*

Հարեմ — حرم — *Ուսքը ամենքին չմուտքատրված վայր, հարեմ, իսլամական կանանոց, Հարեմ-Աղասը՝ հարեմի ագան. Հարեմի-հյումայուն՝ Սուլթանի հարեմը։*

Հարեմեյնի-Շերիֆեյն — حرمین شریفین — *Իսլամական նվիրական երկու քաղաքները — Մեքքե և Մեդինե։ Ընդունված է այդ քաղաքները անվանել՝ Մեքքեի մյուքերրեմե (Նվիրական Մեքքե) և Մեդինեի Մյուներվերրե (Լուսավոր Մեդինե)։*

Հյուքմ — حکم — *Հրաման, հրամանագիր, վճիռ, կանոն, օրենք։*

Հիջրեթ — هجرت — *Գնալ, գաղթել, տեղափոխվել. Մուհամմեդ մարգարեի Մեքքեից Մեդինե փախուստը, որից սկսվում է Հիջրեթի թվարկությունը (տարեթիվը)։*

Հիջրի թարիխ — تاریخ هجری — *Հիջրեթի տարեթիվը։*

Հեյեթ — هیئة — *Կազմ, համաժողով. մի օրգանի բոլոր անդամները միասին վերցրած։ Մխիթա, դելեգացիա։*

Հեյեթի-վյուքելա — وکلای هیئة — *Մինիստրների խորհուրդը։*

Ղ.

Ղազի — غازی, ղեզա — غزا *բառից, որը նշանակում է պատերազմ հանուն կրոնի, հանուն իսլամական կրոնի հաղթանակի։ Այդ նվիրական պատերազմին (Ջիհադ) մասնակիցներն ու այդ պատերազմում հաղթողները տոանում էին ղազի տիտղոսը։*

Ղարիբ — غریب — *Պանդուխտ, հայրենիքից հեռացած, օտարության մեջ ապրող (հոդ. ղուրբեթա)։*

Ղարիբլեր, Ղարիբլեր-բեյուլյու — غریبلر، غریبلر بلوکی — *Օսմանյան պետության Կափը-կուլու (տե՛ս) կոչված հեծյալ զորախմբերի վեց վաշտերից մեկը կոչվում էր Ղարիբների վաշտ, որն իր հերթին բաժանվում էր Աջ և Ձախ ղարիբների վաշտերի (Եմին և Եասար)։*

Ղարիբե — غريبه — *Չվարճալի պատմվածք, տարօրինակ, չլսված դեպք:*

Մ.

Մավերաի-ուլ-նեհիր — ماوراء النهر — Մավերա՝ *անդր, այն կողմ (Մավերաի-Կաֆկաս — Անդրկովկաս),* Մավերաի-ուլ-նեհիր՝ *գետից այն կողմ, Ջիհուն գետի այն կողմի երկրամասը:*

Մաճղըր — مخزن — *Հին դրամական միավոր, փոքր պղնձյա դրամ, որի չորսը հավասար է մեկ ակչեի:*

Մյուբաշիր — مباشر — *Դատական կատարածու, պրիստավ: Կառավարական հրամաններըը պատկանյալին հայտնող և կատարող պաշտոնյա:*

Մեթերիս — مترس — *Արդատա, թշնամու գնդակներից պաշտպանվելու համար շինված հողապատնեշ: Ժամանակավոր ամրություն:*

Մյութեվելլի — متولی — *Վակֆի կառավարիչը, որ էվկաֆի մինիատուության հրամանների և ցուցմունքների համաձայն իրավունք ունի վակֆի եկամուտները ծախսել:* Վակֆ-մյութեվելիսի *(տե՛ս Թեվլիյեթ):*

Մյութեսելլիմ — متسلم — *Տուրքահավաք: Մի վարչության կողմից տուրքերն ու հարկերը հավաքելու պաշտոն ունեցող անձ:*

Մեջլիս — مجلس — *Ժողով, հավաք: Պետական գործերի քննության և որոշման համար գումարված ժողով:* Մեջլիսի-մեբուսան՝ *պարլամենտ, պատգամավորների ժողով,* Մեջլիսի-Ալիյե՝ *Գերագույն ժողով:*

Մյուջահիդ — مجاهد — *Զանազան, անձնազոհաբար հանուն իսլամական կրոնի մղվող պատերազմում (տե՛ս ջիհադ) կռվող անձ, մարտիկ:*

Մեջելլե — مجلة — *Ժողովածու, հավաքածու: Դատական օրենքների ու կանոնների ժողովածու: Օրինագիրք:*

Մյուհիբեսիր — مشهر — *Քաղաք ներմուծվող և վաճառվող մթերքներից և իրերից տուրք ստացող պաշտոնյա, ինքնապետ: Աբբասիների ժամանակ քաղաքի կարգապահության և կշիռների ու չափերի ճշտության հսկող պաշտոնյա, շահնա, տուբաշը:*

Մուհասեբիջի — جي‌ه‌سجه‌ — *Հաշվապահ, տանջակի ֆինանսական գործերի պաշտոնյա:*

Մուհասսիլ — لصجه‌ — *Պետական եկամուտները հավաքող պաշտոնյա, Թահսիլդար:*

Մուհաբրեմ — مرجه‌ — *Արաբական տոմարի լուսնային տարվա առաջին ամիսը:*

Մյուդերրիս — سرلمه‌ — *Դասախոս: Ջամիներին կից մեդրեսաներում աստվածաբանություն և այլ կրոնական դասախոսություններ կարդացող անձ:*

Մեդրեսե — ه‌سرلمه‌ — *Դպրոց: Աստվածաբանական և այլ կրոնական գիտելիքների դասավանդության համար ջամիներին կից հատուկ իսլամական դպրոց:*

Մյուրթեդ — تدرم — *Կրոնափոխ: Իսլամական կրոնից հրաժարվելով այլ կրոն և դավանանք ընդունող անձ:*

Մերհելե — ه‌لحرم — *Իջևան, մեկ օրվա ճանապարհ. երկու իջևանի միջև եղած տարածություն: Համանիշներ՝ մենզիլ, կոնաք (տե՛ս):*

Մեզառ — دازم — *Ածուրդ, ածուրդով վաճառք: Ածուրդի շուկա: Գործ է ածվում նաև* սեվքի-սուլթանի *(տե՛ս սեվք):*

Մեսջիտ — دجسم — *Տե՛ս ջամի:*

Մյուշիր — ريشم — *Մարշալ: Զինվորական աստիճանում մյուշիրը վեզիրին հավասար աստիճան ուներ և համարվում էր ամենաբարձրը:*

Մյուֆթի — يتفم — *Ճեմփա տվողը, շարիաթական հարցերի վերաբերյալ տրված հարցերին, առանց անունը տալու, շարիաթի սկզբունքների համաձայն պատասխանող անձ: Տե՛ս Ֆեթվա: Մյուֆթիլիք — մյուֆթիության պաշտոնը:*

Մուկաթաաթ — تعطقم — *Նախկին վակֆային հողերից, այգիի և պարտեզի վերածվածներից, իբրև տասանորդ, միանվագ ստացված վարձքը:*

Մուկաթաալը — لعطقم — *Տասանորդային տուրքը միանվագ վճարելու պայմանով անփականության վերածված կալվածք:*

Մեքթուբի, Մեկթուբջի — مكتوبى، مكتوبجى — *Մի հիմնարկության կամ վիլայեթի գրավոր գործերը պեկավարող բարձր պաշտոնյա, գրասենյակի պետը:*

Մեքթում — موتكم — *Պահված, թաքնված: Զորակոչից փախչելու*

նպատակով մարդահամարի մատյանում չարձանագրված անձ։ Պետական տուրքերը չվճարելու համար չարձանագրված կալվածներ և եկամուտներ։

Մելիք — ملك — *Մելիք, իշխող, իշխան։*

Մյուլք — ملك — *Կալված, սեփականություն, անշարժ կալվածք, (հոգ. էմլաք)։*

Միճբեր — منبر — *Ջամիներում խոսքեր (տե՛ս) կարդալու համար աստիճանավոր ամբիոն։*

Միճարե — مناره — *Մինարե։ Ջամիներում մյուեզզինի էզան կարդալու հատուկ բարձր աշտարակ։ (Տե՛ս էզան)։*

Մեճիտ — مسجد — *Հրապարակված, հայտարարված։ Փաղիշահի կողմից վիզիրության և այլ բարձր պաշտոններ և աստիճաններ շնորհող ֆերման։*

Մյուհյուր (մեռիր) — مهر — *Կնիք, դրոշմ։*

Մյուհյուրդար — مهردار — *Մեծ մարդկանց կամ բարձր հիմնարկների կնիքը պահող և պաշտոնական գրությունները կնքելու իրավունք ունեցող անձ։ Կնիքապահ։*

Մյուեզզին — مؤذن — *Մինարեում էզան կարդացող հատուկ պաշտոնյա։*

Մյուվերրիխ — مورخ — *Պատմագիր, պատմություն գրող։ Թարիխչի։*

Մոլլա — ملا — *Իսլամական բարձր հոգևորականներին տրված «մեվլանա» տիտղոսից։ Մեծ կապի։ Աստվածաբանություն և կրոնական գիտելիքները ուսումնասիրող անձ։*

Մեվլեվի — مولوی — *Դերվիշական միաբանություն՝ հիմնված հայտնի Ջելալեդդինի—Ռումիի կողմից։ Մեվլեվի-դերվիշի։*

Մեվլեվիյեր — مولویت — *Մեծ կապիի, այսինքն մոլլայի կրոնական աստիճանը և նրա կապիության շրջանը (քաղաքամասը)։*

Միլադ — ميلاد — *Քրիստոսի ծննդյան տարեթիվը։ Քրիստոնեական տարեթիվը։*

Միլադի — ميلادی — *Քրիստոնեական տարեթվով հաշված։ Թարիխի-միլադի։*

Միրիմիրան — ميرميران — *Քաղաքացիական աստիճան՝ փաշայից հետո, էյալեթի վարչության պետը, վալի։*

Միրլիվա — ميرليوا — *Երկու գնդից (պոլկ) կազմված զորամաս*

հրամանատարը, այդ հրամանատարության հատուկ աստիճան, որը փաշայից հետո երրորդն է համարվում:

Միրախոր — مير آخور — *Կայսերական հատուկ ախոռի պետը: Խասս ախոր՝ փադիշահի կենդանիների հատուկ ախոռ:*

Միրի — ميرى — *Պետական, կառավարական գանձարանին հատուկ:*

3.

Յավեր — ياور — *Օգնական, հրամանատարի սրամադրության ներքո աշխատող սպա: Առանց պաշտոն ունենալու փադիշահի կողմից Յավերի սիրտոսը ստացած անձ: Սեր-Յավեր՝ փադիշահի յավերների գլխավորը:*

Յավուզ — زواى — *Խիստ, ուժեղ, դաժան, ահարկու: Յավուզ-Սուլթան Սելիմ:*

Յայա — ياية — *Օսմանյան առաջին հետիոտն բանակը:*

Յուք — كوى — *Բեռ, ծանրություն: Դրամի չափ, հինգ հարյուր հազար դուրուշը համարվում էր մեկ յուք:*

Յուրուք — كوى — *Ոչ-նստակյաց, քոչվոր հասարակության, ցեղ, աշիրեթ, բեդևի, վրանաբնակ: Այդպես էին կոչվում Անատոլուում մի շարք թուրքմեն աշիրեթները:*

Յորթլուք և օջաքլըք — قلاجو و قلورى — *Պետության սահմանների վրա գտնված հողերը, հաճախ անջատվում և Յորթլուք-Օջաքլըք անունով իրենց սեփերին էին թողնվում: Նրանք կառավարում էին այդ հողերը և նրանց տասանորդը ստանում, որի փոխարեն պարտավորվում էին պաշտպանել երկրի սահմանները և դեպի սահման բանակ ուղարկվելիս՝ ծառայել բանակում:*

Ն.

Նահիյե — ناحية — *Վարչական բաժանման միավորը, գավառի (կազա) տարաբաժանումը, գավառակ:*

Նազըր — نظر — *Նայող, հսկող, մինիստր, նախարար: Մալիյե նազըրը՝ ֆինանսների մինիստր:*

Նեզարեթ — نظارة — *Հսկողություն, մինիստրություն: Դախիլիե-նեզարեթի՝ Ներքին (գործոց) մինիստրություն:*

Նամե — نامه — *Նամակ, գրություն, բարդությունների մեջ—համբր-*

նամե՝ հրամանագիր, թալխմնամն՝ հրահանգ, սալնամն՝ տաբելցույց, շնահալթնամն՝ վկայական:

Նայիբ — نائب — *Փոխանորդ, կոգիի փոխանորդը: Արքայքի (տե՛ս) կարգով վերցված մի գավառի փոխանորդաբար կոգիալթյուն անող շարխաթական պաշտոնյա:*

Նեդիմ — ندیم — *Ուսակից, գործախաս, ծառայող: Մեծ մարդկանց գնդեցիկ խոսքերով և արտասանութթյուններով գվարճացնող անձ: Նեդիմի-խաս՝ արքունական նեդիմ:*

Նարխ — خرج — *Կառավարութթյան կողմից նշանակված գին: Սընընդամթերքների (հաց, միս և այլն) վաճառման համար կառավարութթյան կողմից նշանակված գին:*

Նիշանճի — نشانجی — *Նշանի գրառնդակի պետը: Փադիշահական նշանը նկարողը: (Տե՛ս* բուղրեքեշ *և* թեվկիի *բառերը):*

Նազմ — نظم — *Ուսանավոր, ոչ-արձակ գրվածք: Հանգավոր և չհանգավոր գրվածք:*

Նաքիր — نقیب — *Ցեղի կամ ժողովրդի պետը կամ նրա փոխանորդը և մարդկանց տոհմաբանութթյան մասնագետը: Թևքիեում շեյխին փոխարինող տարից դերվիշ:*

Նեվրուզ — نوروز — *Նոր օր, նոր տարի: Հին իրանական տոմարով տարեգլուխ և գարնան սկիզբը համարվող մարտ ամսվա 9-րդ օրը:*

Նեվրուզ բայրամը՝ — نوروز بایرامی — *Նեվրուզի տոնը, բայրամը:*

Նամազ — نماز — *Նամազ: Իսլամական կրոնի համաձայն օրվա ընթացքում հինգ անգամ որոշյալ ժամերին նամազի արտոնութթյունը: Նամազ-կըլմաք:*

Նեմչե — آلمان — *Ավստրիա, Գերմանիա, գերմանական լեզու:*

Նեմրուդ — نمرود — *Ըստ ավանդութթյան Բաբելոնում իշխող արքաններից մեկը, որը կառուցել է Բաբելոնի աշտարակը: Պընդաստիրտ, դաժան, համառ անձնավորութթյուն:*

Շ.

Շամ — شام — *Դամասկոս, հնում Սիրիական երկրամասը նայնպես Շամ էր կոչվում:*

Շահ — شاه — *Արքա, թագավոր, հատկապես Իրանի շահը, որը կոչվում է նաև Շահնշահ, Արքայից-արքա:*

Շահի — شاهی — *Իրանական փոքր դրամ: Հին թնդանօթների մի տեսակը:*

Շահնամե — شاهنامه — *Վեհապետի, շահի, սուլթանի կենսագրութիւնն ու գործունեութիւնը ներբողող ոտանաւոր, գիրք: Ֆիրդուսիի հայտնի գիրքը՝ «Շահնամե»:*

Շահնամեխան — خوان‌شاهنامه — *Շահնամէի ասող: Այդպես էին կոչւում Օսմանեան պետութեան հիջրի 1000 թ. առաջ արքունական պատմագիրները, որոնք սուլթանների պատմութիւնը գրում էին Շահնամեի ձեւով:*

Շարիաթ — شریعت — *Ուղիղ ճանապարհ: Աստուածային կանոններ: Մի երկրի կառավարութեան համար աստուածային հրամաններ և պատուիրանների վրա հիմնված նոյնական կանոններ: Մահամմեդի կողմից տեղծված շարիաթը կոչւում է շարիաթի-իսլամիե:*

Շերի — شرعی — *Շարիաթին հատուկ, օրինական, բան շարիաթի:*

Շերիֆ — شریف — *Ազնիւ, պատուաւոր, ազնուացեղ, նոյնական, օրինակ՝ Ջամիի-շերիֆ: Մահամմեդի ազնուացեղ գերդաստանին պատկանող: Շերիֆի-Մեքքե:*

Շերաֆեթ — شرافت — *Ցեղում, գերդաստանում ազնուութիւն (շերիֆութիւն) ունենալը: Շերիֆի իշխանութեան ենթակա երկիր: Շերիֆութիւն: Երկու նոյնական քաղաքների — Մեքքեի և Մեդինեի իշխանութիւնները, Օսմանեան պետութեան վարչական բաժանման մեջ կոչւում էին շերիֆութիւն:*

Շաբան — شعبان — *Արաբական տոմարի լուսնային տարվա 8-րդ ամիսը:*

Շեվվալ — شوال — *Արաբական տոմարի լուսնային տարվա 10-րդ ամիսը:*

Շեհիդ — شهید — *Հանուն իսլամական կրոնի պատերազմում զոհված իսլամը: Նահատակ:*

Շեհզադե — شهزاده — *Արքայորդի, արքայական ծագում ունեցող, Օսմանեան սուլթանների որդիները կոչւում էին շեհզադե:*

Շահսուվար — شاهسوار — *Վարպետ և ճարպիկ ձիավոր, ձի հեծնող:*

Շեյխ — شیخ — *Հասակավոր, պատուավոր ծերունի մարդ: Դերվիշների*

շական օրդեննելի (կարգ, միաբանության) պետը, թեքքեի շեյխը: Արաբական ցեղերի (աշիրեթ) պետը:

Շեյխ-ուլ-իսլամ — شيخ الاسلام — Օսմանյան պետության մեջ շարիաթական գործերին հսկող բարձրաստիճան իսլամական պետավար, որը շարիաթի գործերում համարվում էր պետության պետավարներից և սադրազաններից հետո ամենաբարձր աստիճանավոր անձը:

Շիա — شيعه — Իսլամական կրոնում Շիա դավանանքը (Ալիին հետևողները), Շիի՝ Շիա դավանանքին պատկանող անձ:

Ո. Ու

Ուլեմա — علما — (Ալիմի հոգ.) գիտնականներ, իմաստուններ, գիտության և կրոնական գործերով զբաղվող մարդիկ, որոնք ունեին իրենց հատուկ սարազն ու աստիճանը:

Ուլուֆե — عوفه — Զինվորներին տրված ռոճիկը, ըստ Շ. Սամիի «Ուլուֆե» բառացի նշանակում է կենդանիների կեր:

Ուշր — عشر — Տասից մեկը, տասանորդ (հարկ): Աշար: Ուշրիշերիի՝ Շարիաթական չտասանորդ:

Ուլուս — اولوس — Ժողովուրդ, հասարակություն, Ուլուսի առաբաժանումները՝ Իլ, Օյմաք, Ուրուք:

Չ.

Չավուշ — چاوش — Դիվանում և այլ պետական հիմնարկներում և կամ արքունիքում ծառայող փոքր սպա: Չավուշ-բաշը՝ չավուշների պետը:

Չուրուք — چوچ — Երկար փայտ, ծխախոտ ծխելու հատուկ ծխափող: Չուրուքչի՝ չուրուքի և ծխախոտի գործերին հսկող ծառա: Չուրուք շինող արհեստավոր:

Չըրաք — چراچ — Արհեստ սովորելու համար վարպետի ձեռքի տակ աշխատող երիտասարդ աշակերտ:

Չերխեջի — چرخچی — Բանակի առաջապահների մասում շրջադարձ շարժումով կռվող թեթև զինվորական մաս:

Չելեբի — چلبی — Ազա, էֆենդի, գրագետ և պատվավոր էֆենդի: Այս տիտղոսը տրվում էր սուլթաններին: Սուլթաններից Մուհամմեդ I-ը նամանավես Չելեբի է կոչվել:

Չուքադար — چوقادار — Բրդից գործված կերպասե, չուխայի հա-

գուսանով կամ չուխայից վարպուլրի առաջ հրամանի սպասող ծառա, որը այդ դարերին առանձին դաս էր կազմում։ Կափըչուքադարի՝ *վեզիրների հատուկ հանձնարարությունները կատարող պաշտոնյա։*

Զիֆթլիք — كلنڤيچ — *Ագարակ, մեծ անտեսություն, որն ուներ մեծ տարածությամբ հողեր, արոտավայրեր, անտառներ, շինություններ և այլն։ Այստեղ աշխատում էին վարձու աշխատողներ —* չիֆթչիներ *և կիսարբներ, որոնք ապրում էին այդ անտեսության մեջ։*

Զըղ — غيچ — *Սարերից իջնող ձյան հյուս։*

Զամի — جامع — *Իսլամական տաճար, մինարեով (տե՛ս մինարե) և մինբերով (տե՛ս մինբեր) մեծ մեչեթ, որի մեջ խութբե (տե՛ս խութբե) է կարդացվում։* Զամիի-շերիֆ։

Զեբեջի — جبه‌جى — *Օսմ. բանակի զրահավոր դասի զինվոր։* Զեբեջի-բաշը՝ *այդ դասի զինվորների հրամանատարը։*

Զեբելու — ولە‌جى — *Թխամորի տերերի կողմից տրված զինված ու զրահավոր հետիոտն զինվոր (տե՛ս Թխամոր)։*

Զիզիե — جزيه — *Օսմանյան պետության ոչ-իսլամ հպատակներից առնված անձնական տուրք, գլխահարկ (տե՛ս խարաջ)։*

Զելալի — جلالى — *Ապստամբ, ըմբոստ, ավազակ։ Թուրքիայում գյուղացիական ապստամբական շարժում XVII դարում։*

Զեմազիել-էվվել — جمادى الاول — *Արաբական տոմարի լուսնային տարվա 5-րդ ամիսը։*

Զեմազիել-ախըր — جمادى الاخر — *Արաբական տոմարի լուսնային տարվա 6-րդ ամիսը։*

Զիհադ — جهاد — *Պատերազմ հանուն կրոնի՝ իսլամական կրոնը տարածելու համար։*

Զիհանգիր — كرجهان — *Աշխարհակալ, հոգեթանտկող.* Զիհանգիրլիք՝ *աշխարհակալություն։*

Զիհաննյումա — نمانجهان — *Աշխարհի տեսքը, երկրագնդի նկարագրություն, աշխարհագրություն։ Հայտնի պատմագիր-աշխարհագրագետ Քյաթիբ-Չելեբիի «Աշխարհագրությունը»։*

Ռաֆըզի — رافضي — *Իսլամական շիա դավանանքի ռաֆըզի անկատին պատկանող: Ռաֆըզիական դավանանքը, ռաֆըզիություն:*

Ռեբի-ուլ-էվվել — ربيع الاول — *Արաբական տոմարի լուսնային տարվա 3-րդ ամիսը:*

Ռեբի-ուլ-ախըր — ربيع الاخر — *Արաբական տոմարի լուսնային տարվա 4 րդ ամիսը:*

Ռեջեբ — رجب — *Արաբական տոմարի լուսնային տարվա 7-րդ ամիսը:*

Ռեայա — رعايا — *Հոտ, արածող կենդանիների հոտը: Իսլամական վեհապետի (սուլթանի) իշխանության հպատակ և տահմանված տուրքերը վճարող ոչ-իսլամ հասարակություն: Ռայա: (Տե՛ս բերայա):*

Ռեսմի-բիդա՛թ — رسم بدعت — *Նորություն, նոր երևան եկած, իրերի կամ մթերքների համար վճարված տուրք: Ապօրինություն:*

Ռիսալե — رسالہ — *Նամակ, գրքույկ, բրոշյուր, մոնոգրաֆիա:*

Ռյուքն — ركن — *Հենարան, հիմք, կազմ: Էրքան՝ պետության կարևոր և բարձրաստիճան անձերից յուրաքանչյուրը: Էրքանի-դեվլեթ՝ պետության դեկավարները, Էրքանի-հարբ՝ պատերազմի ժամանակ ռազմական բոլոր գործերը դեկավարող գինվորական մարմին:*

Ռամազան — رمضان — *Արաբական տոմարի լուսնային տարվա 9-րդ ամիսը: Ռամազան ամսում իսլամների ծոմը (օրուջ):*

Ռենջբեր — رنجبر — *Հողագործ՝ օրավարձով աշխատող երկրագործական բանվոր:*

Ռուզնամե — روزنامہ — *Օրագիր, ամենօրյա ժախսերի և եկամուտների արձանագրության հատուկ մատյան. ամենօրյա դեպքերը արձանագրող թերթիկ: Օրացույց: Ռուզնամիջի՝ օրացույց կազմող անձը:*

Ռում — روم — *Նախապես «ռում» անունը տրվել է հռոմեացիներին, հետո բյուզանդական կայսրության տահմաններում ապրող ժողովուրդներին. հույն:*

Ռումելի — روم ايلى — *Օսմ. պետության եվրոպական մասը:*

Ռումի — رومی — *Հունական։ Լիսանի-ռումի՝ հունական լեզուն։ Հնում «ռում» էին կոչվում նաև Անատոլուի և Ռումելիի ահմաններում ապրող ժողովուրդները։*

Ռեիս — رئیس — *Նախագահ, գլխավոր, մեծ, պետ։* Ռեիսի-ջումհուր՝ *հանրապետության նախագահ, պրեզիդենտ,* Մահքեմեռեիսի՝ *դատարանի նախագահ։*

Ռեիս-էֆենդի — رئیس افندی — } *Օսմ. պետության XVI—*
Ռեիս-ուլ-Քուբբար — رئیس الکتاب — }

XVII դարերում արտաքին գործերի մինիստրի պարտականությունները կատարող անձը այդպես էր կոչվում։

Ս.

Սալար — رالار — *Պետ, գլխավոր հրամանատար։* Սալարի բայֆա՝ *ցեղապետ։*

Սիփահիսալար — رالاسپاہ — *Զինվորական մեծ հրամանատար, սերդար, սերասքեր, սիփահսալար։*

Սալյանե — عالیالار — *Հպատակներից տարեկան մի անգամ միանվագ առնված տուրք։ Օսմ. պետության հպատակ որոշ երկրները միանվագ* սալյանե *էին վճարում, որոնք կոչվում էին* սալյանեով կառավարվող երկրներ, *օր. Եգիպտոսը, Հարեշստանը և այլն։*

Սիփահի — سپاہی — *Օսմանյան պետության մեջ հատուկ հեծյալ զորամասեր, որոնք հավաքագրվում էին թիմարի և զեամեթի տերերից։ Սիփահիները պատերազմի էին գնում իրենց ձիերով ու կառավարական զենքերով։* Սիփահի-օջաղը։

Սեբիլ — لبس, Սեբիլխանե — عالیخانہ — *Ճանապարհ, ուղի։ Բանզրծական նպատակով ճանապարհների և հրապարակների վրա կառուցված հատուկ շենք, որի պատուհաններում անցորդների համար միշտ պետք խմելու ջուր էր լինում։* Սեբիլջի՝ *վակֆների կողմից բարեգործական նպատակով փողոցներում խմելու ջուր բաժանող անձը։*

Սիջիլ — سجل — *Հիմնական տոմար, մայր տոմար, որի մեջ արձանագրվում էին դատարանի վճիռները, դոկումենտները և պայմանագրերը։* Սիջիլլի՝ *Սիջիլի մատյանում արձանագրված։*

Սարայ — سرای — *Պալատ, արքունիք։* Սարայի-հյումայուն՝ *Փառքի շահական, սուլթանական արքունիք։*

Սերդար — ردار — *Զինվորների պետը, հրամանատարը։* Սերդարի-էքրեմ՝ *Գերագույն հրամանատար։ Օսմանյան բանակի գերագույն հրամանատարը պատերազմի ժամանակ հաճախ նշանակվում էր սադրազամը՝ փադիշահի կողմից։*

Սերասքեր — عسكر — *Զինվորների և բանակի հրամանատարը։ Հնում սերասքեր էին կոչվում նաև որոշ ուղղությամբ ուղարկված բանակի հրամանատարները։*

Սերքերդե — كركر — *Պետ, ցեղապետ, ոչ-կանոնավոր զինվորական մասերի պետը։*

Սերդեն-Գեչդի — كچدن — *Ենիչերիական բանակի մի գրաքսումբը, որի զինվորները պատերազմի ժամանակ բացառիկ հերոսությամբ և անձնազոհությամբ հարձակվում էին թշնամու բանակի և բերդերի վրա՝ հաճախ իրական մահը աչքն առած։*

Սիլահդար — سلاحدار — *Զինակիր։ Վեզիրների և այլ բարձրաստիճան անձանց զենքերը պահող և կառավարող պաշտոնյան։*

Սուլթան — سلطان — *Վեհապետ, կայսր, փադիշահ, Օսմանյան պետության սուլթաններ։* Սալթանաթ՝ *Փադիշահություն, վեհապետություն, սուլթանություն։*

Սաճջակ — سنجق — *Դրոշակ, դրոշ։ Վարչական բաժանման մեջ էյալեթի կամ վիլայեթի ստորաբաժանումը (լիվա)։*

Սաճջակ-բեյի — سنجق بكى — *Սանջակի բեյը, կառավարիչը։*

Սաճջակի-շերիֆ — سنجق شريف — *Նվիրական դրոշակ։ Իսլամական կրոնի խորհրդանիշը եղող հատուկ դրոշակ, որը դուրս էր բերվում պատերազմի ժամանակ, բացառիկ ծանր պայմաններում։*

Սաճջակտար — سنجقدار — *Դրոշակակիր։ Համանիշներ՝* բայրաքդար, ալեմդար։

Սեքբան — شبكى — *Մեծ անասում (վիզիրների, փաշաների և այլն) որսորդական շներին հսկող և կառավարող ծառան։ Ենիչերիական օջաքին կցված զինվորների դասը։*

Սեքբան բաշը — شبكى باشى — *Այդ զինվորների գլխավորը, պետը։*

Այուճի — يوز — *Մահմեդական կրոնի այուննի դավանանքին հետևողները, որոնք կոչվում էին* Էհլի-այուճիներ։

Սեվք, Սեվքի-սուլթանի — سوق ؛سوق سلطانی — **Սեվք՝** *շուկա,* **Սեվքի-սուլթանի՝** *ածուրդով վաճառքի շուկա:*

Սեդարեթ تراصد — *Նախապահութիւն. Օսմանեան պետութեան սադրազամի կոչումն ու պաշտօնը:*

Սադրազամ — مظعم راصد — *Վեզիրների և վիքիլների պետը, Սադրազամ, որը համարւում էր փադիշահի բացարձակ տեղակալը:*

Սաֆեր — رفص — *Արաբական տոմարի լուսնային տարվա 2-րդ ամիսը:*

Սաֆիհ, սուլեհա — حلص ،حلاص — *Իրավասութիւն և իրավունք ունեցող, կրոնի հրամանների և ցուցմունքների համաձայն շարժվող անձինք: Աստվածավախ, աղոթքով ու ծոմապահութիւնը ապրող հավատացյալներ:*

Սուրբե — ورص — *Փողի քսակ: Սուլթանի կողմից ամեն տարի մեծ հանդիսավորութիւնը նվիրական քաղաքներին (Մեքքե և Մեդինե) ուղարկված մեծ նվեր:* Սուրբեի-հյումայուն:

Սոմար — رامص — *Հացահատիկի չափ, հավասար է 16 փթի:*

Սոլաք — قالص — *Հանդիսավոր օրերին փադիշահի սոպանդակին ծառայող պինովորների խումբը:*

Սուբաշը — ىشابوص — *Ոռոգման և խմելու ջրերի բաժանման հսկող պաշտոնյա: Ներկրի կարգ ու կանոնի պահպանութեան հսկող անձ:*

Վ.

Վ.ադուշ — ءاشروا — *(հունգարիներեն), Քաղաքների բնդրի պարիսպներից դուրս խաղամաս, ուր մեծամասամբ ապրում էին քրիստոնյա հպատակները:*

Վ.ալի — یلاو — *Վիլայեթի կառավարիչը, կուսակալ, նահանգապետ:*

Վ.եզիր — ریزو — *Փադիշահի տեղակալն ու փոխանորդը համարվող բարձրաստիճան անձ, վեզիր: (Հոգ. վյուզերա):*

Վ.եզիրի-ազամ — مظعا ریزو — *Մեծ վեզիր, սադրազամ:*

Վ.ակա-ճյուվիս — سیونعقو — *Պատմագիր, տարեգիր: Երկրի դեպքերը և գործերը ըստ տարիների գրի առնող տարեգիր, որը նշանակվում էր փադիշահի կողմից:*

Վ.ակֆ — فقو — *(հոգ. էվկաֆ). Շարիաթի սկզբունքներով բա-*

բեգործական նպատակով ջամիներին նվիրված կալվածներ և այլ սեփականություններ:

վ.եքիլ — وكيل — *Փոխանորդ, փոխարինող, օր. նազըր-վեքիլի, ռեիս-վեքիլի: կառավարության դեկավար անձինք (վեքիլներ): Բաշ-վեքիլ՝ Սադրազամ, Հեյեթի-վյուքելա՝ Մինիստրների Խորհուրդը:*

վ.իլայեթ — ولايت — *Նահանգ, վարչական բաժանման մեծ միավորը (տե՛ս էյալեթ):*

վ.իրա — وير — *Հանձնվել, բերդի «վիրայով» հանձնումը:*

վ.եսսելամ — !واسلام — *Ահա՛ այլևայլ, ահա՛ բոլորը, վերջացավ:*

Փ.

Փաչավրա — پاچاولى — *Սեղանը, ամանները և այլն մաքրելու համ տաք իրերը բռնելու համար գործածված հին կտոր:*

Փադիշահ — پادشاه — *Վեհապետ, կայսր, սուլթան, արքա: Ալ-Օսմանի փադիշահները՝ սուլթանները: Փադիշահություն, Փադիշահի՝ կայսերական, փադիշահական, փադիշահին հատուկ:*

Փարե — پارە — *Մաս, կտոր, հատ, իբրև փող՝ պուրուշի (տե՛ս) քառասուն մասից մեկը, որը հավասար էր երեք ակչեի:*

Փաշա — پاشا — *Ըստ Շ. Սամիի «բաշ» և «ապա» բառերից: Թուրքիայում վեզիրներին և այլ բարձրաստիճանավորներին սրված տիտղոս (թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական):*

Փաշալըք — پاشالق — *Փաշայական տիտղոսը: Մի փաշայի իշխանության տակ գտնված երկրամասը, էյալեթ և այլն:*

Փաշա-կափըսը — پاشا قپوسى — *Բարձրագույն Դուռ, Բաբի-Ալի:*

Փեճջիկ — كيجنى — *Թուրքիայում հնում ընդունված կարգով պատերազմական ավարի $^1/_5$-ը («խումս-շերի») փադիշահին էր պատկանում: Պատերազմական գերիները նամանավանդ ենթակա էին այդ կանոնին: Գերին գնահատվում էր 125 ակչե. այդ գումարը վճարելիս գերին ազատվում էր գերությունից: Այդ գումարի $^1/_5$-ը «փենջիկ» անունով պետական գանձարանին վճարելուց հետո տերուկի տերը կունենար իրավական լրիվ իրավունք իր տերուկի վրա: Վերոհիշյալ գումարը համարվում էր «բեդելի-հասլեթ»՝ գերության գին:*

Փայե — پایە — *Ընդհանրապես գիտության անձանց տրված աստիճան, կարգ:*

Փիր — پیر — *Ծերուն, հատկապես մարդ. մի սեկտի հիմնադիրը՝ էնտաֆնների խմբերի դեկավարը (փիրը):*

Փոյրազ — زایر — *(Հուն.) Ուխտավոր պատ քամի:*

Ք.

Քյաֆիր — کافر — *Չհմացող, անտեղյակ, ապերախտ: Անհավատ, ոչ-մուսուլման, (հոգ.) քյուֆերա, սովորական լեզվով՝ «գյավուր». (որն ըստ Շ. Սամիի «քյաֆիր»-ից է առաջացել):*

Քեխուդա — کدخدا. *(«Քևհյան» այս բառից է առաջացել): Տանուտեր, մի հիմնարկության կամ վարչության գործերը վարելու վստահված անձ, վեզիրների քեղխուդա, Սուլթանի քեխիուդա, էնտաֆնների քեխիուդա—քեհյա: Քյոյ-քեղխուդասը՝ գյուղի մուխթարը:*

Քուրսի — کرسی — *Աթոռ, նստարան, ամբիոն, պաշտոնավայրը, հռետորի կամ ճառախոսի բարձրադիր ամբիոն: Կենտրոն:*

Քիլար رلبق — *Հացահատիկի և աննդամթերքի ամբար, շտեմարան:*

Քիլե — قلبق — *Հացահատիկների չափ. հավասար է մոտ 40 լիտրի:*

Քյաբե — کعبہ — *Նվիրական Մեքքե քաղաքում այն սուրբ վայրը, որը ըստ ավանդության, հիացել է Աբրահամից և համարվում է բոլոր մուսուլմանների ուխտագնացության վայրը և կըբլեի կողմը (տե՛ս կըբլե):*

Քիսե, քեսե کیسہ — *Փոքր տոպրակ, դրամապարկ, քսակ: Դրամի քեսեն բովանդակում էր 500 դուրուշ:*

Քիսեդար — کیسہ دار — *Մեծ մարդկանց դրամի քսակը բռնող և հարկ եղած ժամանակ դրամ տվող մարդը: Կոչվում էր նաև վեքիլխարջ:*

Օ.

Օթաք, Օթաղ — اوتاق — *Պադիշահին և այլ բարձրաստիճան անձանց հատուկ բարձր և զարդարված վրան: Օթաղի-հյումայուն՝ կայսերական վրան:*

Օջաք — اوجاق — *Օճախ, կրակ վառելու տեղ, ծխնելույզ: Հան-*

քերի և քարերի հանման փոս կամ հոր: Մեծ ընտանիք, գերդաստան: Ենիչերի-Օջաղի՝ *ենիչերիների զինվորական կազմը:*
Օջաք-խալքը:

Օջաքլըք — اوجاقلق — *Հին ժամանակ՝ հետիոտն զինվորներ: Մեկին ժառանգական կարգով տրված կալվածք կամ պաշտոն:*

Օրդու — اوردو — *Բանակ, զինվոր, սիփահ:* Օրդուի-հյումայուն՝ *Փադիշահական բանակ: Զորամաս:*

Օդա — اطه — *Սենյակ, գրասենյակ, կաբինետ, բյուրո, պալատ:*

Օբա — ابه — *Մի քանի մասի բաժանված մեծ և երկար շարժական վրան: Վրանաբնակ, քոչվոր հասարակություն:*

Օկկա — اقه — *Ծանրության չափ, որը բաժանվում է 400 դրհեմի (տե՛ս դիրհեմ): Օկկան կոչվում է նաև կիյե, հավասար է 1 կիլ. և 225 գրամի:*

Օյմաք — اویماق — *Ցեղ, աշիրեթ, ուղուսի ստորաբաժանումը:*

Օսմանլը — عثمانلی — *Օսմանյան, օսմանցի:* Օսմանլըլըք՝ *օսմանցիություն:* Օսմանի՝ *օսմանյան երկերին, լեզվին և պատմության վերաբերյալ, օրինակ՝* Թարիխի-Օսմանի:

Փ.

Փափհի — فاتح — *Հաղթող, նվաճող, աշխարհակալ: Օսմ. պետության սուլթաններից Մուհամմեդ II-ը կ. Պոլիսը գրավելու համար ստացավ «Փաթհի» մականունը: Գործ է ածվում նաև Էբու-էլ-Փեթհ՝ Փաթհինների հայրը:*

Փալիե — فالیه — *Ներքնից լցվող հին ձևի թնդանոթների հրանցքը:*

Փալիեջի — فالیه جی — *Թնդանոթների հրանցքը գործածող մասնագետ զինվոր:*

Փիրրեք — ترفه — *Միջխլհանություն. թագավորի կամ սուլթանի իշխանության ընդհատված շրջանը: Օրինակ, Սուլթան Ելդըրըմ Բայազիտի և Չելեբի Մուհամմեդի իշխանության ընդհատված շրջանը միջխլհանությունը կոչվում է «Դեվրի Փիրրեթ»:*

Փիրցե — فترة — *Խռովություն, խառնակություն, ապստամբություն:*

Փեթվա — فتوا. ئوتف — *Մի հարցի կամ դատական գործի մասին, շարիաթի սկզբունքների և ցուցմունքների համաձայն,*

մյուֆթիի կողմից՝ առանց անունը հիշելու տրված գրավոր պատասխանը: Առհասարակ կոչվում է Ֆեթվայի-շերիֆ:

